штемп.
Т32—
164

Т32
164

ПОЛНЫЙ
РУССКО-АРМЯНСКІЙ СЛОВАРЬ

СОСТАВЛЕННЫЙ

ДОКТОРОМЪ ФИЛОСОФІИ

А. С. ДАГБАШЯНОМЪ.

ԼԻԱԿԱՏԱՐ
ԲԱՌԱՐԱՆ ՌՈՒՍԵՐԷՆԻՑ-ՀԱՅԵՐԷՆ

ԿԱԶՄԵՑ

Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆ

ТИФЛИСЪ. | ԹԻՖԼԻՍ
Скоропеч. Мнацакана Мартиросянца | *Արագ. տպար. Մն. Մարտիրոսեանցի*
(Первая часть словаря (А—З) напечатана въ типографіи Константина Мартиросянца.)
1906.

ГОСУДАРСТВ. ПУБЛИЧНАЯ ИСТОРИЧЕСКАЯ БИБЛИОТЕКА
993305

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Ռուսերէնից հայերէն լիակատար բառարանիս մէջ այբբենական կարգով զետեղել ենք ռուսերէն լեզուի լիակատար բառամթերքը։ Լիակատար բառամթերք ասելով մենք հասկացել ենք ոչ միայն ռուսերէն, այլ և այն բազմաթիւ օտար բառերը, որոնք արդէն ընդունուել և գործածական են դարձել ռուսերէնի մէջ։ Օտար բառերի մօտ նշանակուած է նոցա ծագումը, որով ընթերցողին միջոց է տրւում պարզ կերպով ըմբռնելու այն սերտ կապը, որ ռուսերէն լեզուն դարերի ընթացքում հաստատել է ուրիշ, գլխաւորապէս հարևան քաղաքակիրթ ազգերի լեզուների հետ։

Ամփոփելով բառարանիս մէջ ռուսերէնում գործածական բոլոր բառերը, մենք միևնոյն ժամանակ առաջ ենք բերել ամէն մի բառի բոլոր կարևոր նշանակութիւնները։ Այս բառարանի լիակատարութեան երկրորդ անհրաժեշտ պայմանն է։ Իւրաքանչիւր բառին կցել ենք անհրաժեշտ քերականական ցուցումները։ Բառարանս ունի լիակատար շեշտադրութիւն. եթէ շեշտը բառի փոփոխուելով փոխուում է, այդ ցոյց ենք տուել։ Բառի հոլովական խոտորումները ցոյց են տրուած։ Գրեթէ բոլոր բայերը խոնարհել ենք [1]) առաջ բերելով անկատար ձևի բայի ներկան [2]), հարկաւոր դէպքում նաև անցեալ անկատարն և հրամայականը, իսկ կատարեալ ձևի բայի ապառնին [2]), հարկաւոր դէպքում նաև անցեալ կատարեալն և հրա-

---

[1]) Աւելորդ ենք համարել խոնարհել օր. дѣлать, мѣня́ть, говѣ́ть, вы́сохнуть և նման բայերը, որոնց խոնարհումն ոչ մի դժուարութիւն չէ կարող առաջացնել (дѣлаю -ютъ; мѣня́ю -ютъ; говѣ́ю -ютъ; вы́сохну -нутъ)։ Սակայն հարկաւոր դէպքում միանուագ բայի անցեալը առաջ ենք բերել (օր. вы́сохъ -хла, о).

[2]) Միայն եզակի առաջին և յոգնակի երրորդ դէմքերը, որոնց օգնութեամբ, ինչպէս յայտնի է, շատ հեշտ է կազմել միւս դէմքերը (յոգն. երրորդ դէմքի **ю**-ն և **у**-ն փոխելով **е**-ի, իսկ **я**-ն և **а**-ն՝ **и**-ի։

մայականը։ Հարկաւոր դէպքում բայի խնդրառութիւնը նշանակուած է։ Իւրաքանչիւր նախդրից յետոյ նշանակուած է նորա հոլովառութիւնը։ Ռուսերէնի ընթերցանութիւնը հեշտացնելու համար բառարանում գետեղել ենք այս կամ այն բառի դժուար ձևերը, ցոյց տալով թէ որտեղ պիտի որոնել նորանց բացատրութիւնը։ Կենդանաբանական, բուսաբանական, հանքաբանական և բժշկական բառերից յետոյ առաջ ենք բերել նոցա լատինական տէրմինները, որովհետև այդ արդի գիտութեան պահանջներից մինն է համարուում։

Բացի այս բոլորից իւրաքանչիւր բառին հետևում են նորան վերաբերող ոճաբանական օրինակները։ Երբեմն ռուսերէն բառի դիմաց դրած հայերէն թարգմանական բառերն ունենում են մի քանի, նոյն իսկ փոխաբերական նշանակութիւններ։ Այստեղից ընթերցողի համար առաջանում է մթութիւն, որ միանգամայն վերանում է առաջ բերած ռուսերէն կտրուկ օրինակներով. Տեղ խնայելու համար միայն ռուսերէն դժուար օրինակներն ենք հայերէն թարգմանել, որովհետև հեշտերն ընթերցողը ինքը կարող է թարգմանական բառերի օգնութեամբ թարգմանել։ Որոշ դէպքերում թարգմանական բառերից յետոյ անհրաժեշտ համարեցինք հանրագիտական բացատրութիւն ևս առաջ բերել՝ բառի իմաստն կամ գործածութիւնը լաւ պարզաբանելու համար։

Բառարանագրական գործի դժուարութիւնը ընթերցող հասարակութեանը լաւ յայտնի է։ Այստեղ կըցանկանայի խօսել յատկապէս այն առանձին դժուարութեան մասին, որին հանդիպում է ռուսերէնից հայերէն բառարան կազմողը։ Դժուարութեան պատճառը արդի աշխարհաբառի պարզ և անզարգացած դրութիւնն է. Լեզուն ժողովրդի կեանքի աստիճանացոյցն է. որքան մի ժողովրդի կեանքը բարդ և բազմակողմանի է, այնքան էլ նորա լեզուն տեսնում ենք բարգաւաճուած ու զարգացած և ընդհակառակն։ Արդ՝ ռուս ազգը աշխարհիս ամենամեծ և քաղաքակիրթ ազգերից մէկն է։ Նորա կեանքը բարդ և բազմակողմանի է և այդ բարդութիւնն և բազմակողմանիութիւնն արտայայտուել են և արտայայտուում են նորա լեզուով, որովհետև նորա լեզուն գործ է ածուում և՛ ժողովրդի մէջ, և՛ պետական բոլոր հիմնարկութիւններում, և՛ գիտութեան ու արուեստի բոլոր ճիւղերում։ Լեզուի այս բազմադիմի գործածութիւնը նըպաստել է նորա զարգացմանն և կանոնաւորութեանը. ռուս ազգը հետզհետէ իւր հարևան ազգերից փոխ է առել բազմաթիւ բառեր և դարձուածքներ, որոնք այնպէս գործածական են դարձել, որոնք ռուսի ականջին ամենևին խորթ չեն հնչում։ Ընդհակառակն, ինչպէս հայ ազգի կեանքն պարզ է և անբարգաւաճ, այնպէս էլ նորա լեզուն մնացել է

պարզ և անզարգացած։ Ուստի և ռուսերէն լեզուի լիակատար գանձը հայացնելու դէպքում բառարան կազմողը պատահում է մեծամեծ դժուարութիւնների։ Օրինակ՝ անհամեմատ դիւրին է կազմել ռուսերէնից գերմաներէն, ֆրանսերէն կամ անգլիերէն, քան թէ ռուսերէնից հայերէն բառարան, որովհետև յիշեալ ազգերի կեանքն նոյնքան բազմակողմանի և լեզուն նոյնքան զարգացած է, որքան և ռուսերէնը։ Արդ՝ մեր գործի ընթացքում մենք աշխատել ենք հայացնել այն բոլորն, ինչ որ հնարաւոր էր հայացնել։ Բայց պատահեցան բառեր, որոնց հայացման խնդիրն աւելի լաւ համարեցինք ապագային թողնել, քան թէ բառեր թխել։ Յաճախ դիմել ենք ժողովրդական լեզուին և գաւառաբարբառներին, որովհետև կան ռուսերէն բառեր, որոնց համապատասխան հայերէն գրական խօսք չկայ, բայց ժողովրդական և գաւառական խօսք կայ։ Այսպիսի դէպքերում ժողովրդական և գաւառական բառերից չենք խորշել։ Յաճախ գրական բառերից յետոյ դրել ենք ռամկականն և գաւառականը, ցանկանալով ընթերցողի գործը դիւրացնել, որովհետև կան ընթերցողներ, որոնց ռամկական և գաւառական բառերն աւելի հասկանալի են, քան թէ գրական բառերը։

Մեր գործը կազմելիս բազմաթիւ բառարաններ քրքրելուց գերադասեցինք արդի ռուսերէնի և հայերէնի բառարանագիտական ուսումնասիրութիւնը։ Երեք տարի նուիրեցինք այդ նախապատրաստական աշխատանքին, զուգընթացաբար կարդալով արդի ռուս և հայ գրականութիւնն և մեր գործի համար նիւթեր հաւաքելով։ Այս բառարանը կազմելուն ձեռնարկելով, շարունակեցինք և շարունակում ենք նոյն ճանապարհով ընթանալ։ Այսպիսով մեր բառարանն աւելի կենդանի և ինքնուրոյն դուրս եկաւ, քան այն բառարանները, որոնց կազմողները աշխատում են շատ բառարաններ քրքրել։

Այս տաժանելի և պատասխանատու գործին մենք ձեռնամուխ եղանք համեմատաբար երիտասարդ հասակում՝ մեր անձնական ոյժերով և միջոցներով։ Աշխատակիցներ ունենալու համար հարկաւոր էին ահագին միջոցներ, որ մենք չունէինք, այնպէս որ մենք ենք բառարանիս և՛ կազմողը, և՛ արտագրողը, և՛ սրբագրողը և՛ հրատարակիչը։ Քաղցր պարտականութիւն եմ համարում իմ սրտագին շնորհակալութիւնը յայտնել պ. Յովհաննէս Սպենդիարեանին, որ իմ ծանր գործում ինձ խրախուսել և աջակցել է։ Այստեղ ես չեմ կարող չարտայայտել իմ խորին կսկիծը և վիշտը մի անձի վաղաժամ մահուան համար, որը բառարանիս գործում մեծ մասնակցութիւն է ունեցել։ Այդ անմոռանալի անձը Լևոն Խան-Աղեանն է. սկզբում Խան-Աղեանին ես միայն ճանաչում էի նորա «Գիւղատնտեսա-

կան գործիքներ և մեքենաներ» գեղեցիկ գրքով և, ինչպէս մի քանի մարդկանց, Լ. Խան-Ազեանին ևս այցելեցի և խորհուրդ հարցրի բառարանիս մասին։ Բանից դուրս եկաւ, որ Լ. Խան-Ազեանը ոչ միայն բառարանագրական գործին սիրահար էր, այլ և առաջ ինքը ձեռնամուխ էր եղել ռուսերէնից հայերէն բառարան կազմելուն։ Իմ բառարանի առաջին տպագրական թերթը տեսնելով նա այնպէս հաւանեց, որ խոստացաւ սրբագրութեան մէջ օգնել և ինձ պարտաւորեցրեց բոլոր սրբագրական թերթերն էլ իրան տանել։ Այդ օրից Խան-Ազեան անձնազոհ աշխատակից է հանդիսացել իմ բառարանին, հետաքրքրուել է նորանով ինչպէս իւր սեպհական գործով. բառարանի ամեն մի յաջողութիւնը նորան անկեղծ ուրախութիւն էր պատճառում, որովհետև Լ. Խան-Ազեանը վերին աստիճանի ազնիւ սրտի և բնաւորութեան տէր մարդ էր։ Նա սրբագրութեան ժամանակ արել է միշտ իւր գնահատելի նկատողութիւնները։ Միայն ամառները անկարելի էր լինում բառարանիս բոլոր սրբագրական թերթերն էլ ուղարկել Լ. Խան-Ազեանին, որովհետև Լ. Խան-Ազեանն ապրում էր Ջալալօղլու մօտ գտնուող իւր սեպհական կալուածքում և պօստը միշտ չէր հասցնում ծրարները։ Եւ ահա յանկարծ ինձ հասնում է նորա անակնկալ մահուան գոյժը։ Հանգիստ ոսկերացդ, ով ազնիւ բարեկամ։ Դու վաղաժամ փոխուելով յաստեացս 'ի սուգ համակեցիր քո ազնիւ ընտանիքն և բարեկամներին, սակայն քո յիշատակը յաւիտեան անմոռաց կը մնայ մեր սրտերում։

Աղբիւրների նկատմամբ մենք հետևել ենք Պլինիոս Կրտսերի խօսքին, թէ „multum, non multa“ *և լատիներէն առածին, թէ* „multa nocent“. *Մեր ձեռնարկած գործը սաստիկ ընդարձակ, տաժանելի և հոգեմաշ էր։ Ուստի և յուսահատութիւնից վախենալով, մենք վճռեցինք օգտուել միայն միքանի ամենանորագոյն և ամենաընտիր աղբիւրներից, որոնք և այստեղ առաջ ենք բերում.* Словарь русскаго языка, составленный вторымъ отдѣленіемъ Императорской Академіи наукъ, выпуски I—VII (А - Закрѣплять), С. Петербургъ, 1891—1900. Русско-нѣмецкій словарь И. Я. Павловскаго, изданіе третье, Рига 1900 г. Полный русско-французскій словарь, состовленный Н. П. Макаровымъ, изданіе девятое, С. Петербургъ 1900 г. Справочный словарь орѳографическій, этимологическій и толковый русскаго литературнаго языка, составленный подъ редакціею А. Н. Чудинова, С. Петербургъ 1901 г. *Կենդանաբանութիւն, Բուսաբանութիւն և Հանքաբանութիւն 'ի Հ. Գաբրիէլ վ.-է Մէնէվիշեան, Վիեննա* 1897 *թ. և բազ-*

մաթիւ ուրիշ մանր երկեր, որոնք աւելորդ ենք համարում այստեղ առաջ բերել։ Բառարանիս մէջ առաջ բերած ռուսերէն օրինակներն վերցրել ենք գլխաւորապէս Ակադէմիական, Մակարովի և Պավլովսկու բառարաններից։ Սակայն ռուս հեղինակներից ևս օրինակներ կան առաջ բերուած։ Աչքի առաջ ենք ունեցել նաև հետևեալ բառարանները. Բառարան 'ի ռուսաց լեզուէ 'ի հայ, աշխատասիրեալ 'ի Գաբրիէլէ Երեցփոխեանց, Տփխիս, 'ի 1854 ամի։ Բառարան ֆրանսերէնից հայերէն պ. Նորայր Բիւզանդացու, Կ. Պօլիս 1885 ամի։ Բառագիրք գերմաներէն-հայերէն, աշխատասիրեաց Հ. Աւետիք վ. Կոյլու, Վիեննա 1889 թ. Շատ ուշիւ կարդացել ենք նաև պ. Աբրահամ Յովհաննիսեանի Ռուսերէնից հայերէն բառարանը, որովհետև այս բառարանի սխալները ոչ միայն անհանդուրժելի, այլ և անթիւ անհամար են։ Մեր օգտուելը վերոյիշեալ բառարաններից գլխաւորապէս կայացել է նրանում, որ մեր բառարանն ինքնուրոյն կազմելուց յետոյ մի մի անգամ կարդացել ենք յիշուած բառարաններն և այս կամ այն բառը աւելացրել ենք։

Մինչև այսօր այսպիսի բարդ և դժուար տեխնիկայով և այսպիսի հսկայական ծաւալով ռուսերէնից հայերէն բառարան տպուած չէ։ Տարաբաղդաբար սկզբից չկարողացանք նախատեսել գործի բարդութիւնն և բառարանիս առաջին երեք պրակները չտպուեցան այնպէս, ինչպէս մեզ ցանկալի էր։ Սակայն հետևելով «Լաւ է ուշ, քան երբէք» առածին, մենք ուղղել ենք տպագրութեան տեխնիկական թերութիւնն, այնպէս որ չորրորդ և հետևեալ պրակների տիպը սքանչելի է։ Այսօր չորրորդ պրակի հետ մեր բաժանորդներին ուղարկելով բառարանիս նախաբանը, խորհուրդ ենք տալիս առաջին երեք պրակները միասին կազմել տալ։ Իսկ հետևեալ պրակները, որոնց թուղթն ևս ուրիշ է, առանձին պիտի կազմել տալ։

Յ. Դաղբաշեան

Թիֆլիս, 1-ն օգոստոսի 1903 թ։

А.

А, а, ձայնաւոր է և շեշտի տակ հնչուում է ինչպէս հայոց ա տառը. իսկ а-ն առանց շեշտի անորոշ արտասանութիւն ունի: Մանաւանդ նկատելու է, որ а-ն առանց շեշտի շշականերից (ж, ч, ш, щ) յետոյ բառի սկզբի և միջի վանկում հնչուում է գրեթէ ինչպէս е. օր. жалѣть (жел—), щадить (ще—). несчастли́вый (—счестл—); իսկ բայերի յոգն. 3 դէմքում հնչուում է ինչպէս у: օր. держатъ (—жутъ). слышатъ (—шутъ) та́щатъ (—щутъ).

А. I. շ. այլ, իսկ, բայց. не верти́сь, а говори́ пра́вду—այլ ասա ճշմարտութիւնը. я зна́ю, что́ я говорю́, а ты не лги— իսկ դու սուտ մի խօսիր. а то́ այլապէս, եթէ ոչ. не смѣ́йте итти́ за мной, а то я разсержу́сь— եթէ ոչ ես կը բարկանամ. а не և ոչ թէ. хозя́инъ я, а не ты — և ոչ թէ դու. а вѣдь չէ՞ որ. а вѣдь я его́ вида́лъ гдѣ-то! II. ձյ. արտայայտում է 1, հարցում. хорошо́ вѣдь и это? А?—չէ՞, այնպէս չէ՛ а? это вы?—այդ դո՞ւք էք, հա՞. 2, վիշտ, բարկութիւն, զայրոյթ, դուշակութիւն. а! тепе́рь ви́жу мо́ю поги́бель ո՛հ, այժմ տեսնում եմ իմ կորուստը. а! бо́льно! а мнѣ не бо́льно? ա՛հ, քեզ ցաւ է պատճառում, հապա ինձ չէ՞ պատճառում. а! тепе́рь понима́ю ահա՛, հիմայ հասկանում եմ. а! вы вое́нный! ահա՛, դուք ուրեմն զինուորական էք. 3, կոչին ուժի կերպ է տալիս. дѣ́душка! а, дѣ́душка! պապիկ, ա՛յ պապիկ:

Аа ձյ. արտայայտում է յանդիմանութիւն, հեգնութիւն, սպառնալիք. аа! впередъ не ста́нешь лгать հախը է, տեսա՞ր, այլ ևս սուտ չես խօսիլ:

Аaро́нова борода́ տ. Аронова борода́:

Аба́ ի. արաբ. 1, հաստ սպիտակ մահուդ. 2, այդ մահուդից կարած պատմուճանը:

Абажу́ръ ա. (ֆր.) աբաժուր. 1, լուսակալ, լուսարգել, լուսամփոփ (հովանոցի նման ծածկոց, որ դնելով լապտերի վերայ՝ լոյսը անդրադարձնում են սատրկայի վերայ). 2, ճարտ. առանձին կազմութեամբ պատուհան, որ սենեակը պաշտպանում է արեգակի կիզիչ ճառագայթներից, անձրևից, անցուդարձ անողների հետաքրքրութիւնից և միևնոյն ժամանակ սենեակին օդ և լոյս է մատակարարում:

Абаза́ ի. 1, ռ—ք. Կովկասի հիւսիսում բնակուող աբազա ցեղը. 2, Սև ծովի վերայ խոտաշունչ, փոտնդաւոր արևելեան քամի:

Аба́‖зъ ա. աբասի (20 կոպէկանոց արծաթէ դրամ:

Аба́ка ի. (լտ.) աբակոս. 1, աւազով կամ փոշիով ծածկուած հաշուետախտակ, որի վերայ հին մաթեմատիկոսները երկրաչափական պատկերները էին նկարում և զանազան հաշիւներ էին անում. 2, մի տեսակ հաշուեգործիք, գործածական արևմտեան Եւրոպայում. 3, ճարտ. քառանկիւնի սալը, որ անմիջապէս սիւնի գլխին է դրուում:

Аба́съ տ. абазъ:

Аб‖ба́тикъ նւզ. տ. Абба́тъ; **-бати́сса** ի. աբբայուհի, կաթոլիկ կուսանոցի մայրապետը. **-ба́тскій** ած. աբբայի, աբբայական. **-ба́тство** չ. աբբայութիւն. 1, կաթոլիկ վանք իւր կալուածներով. 2, աբբայութիւն, վանահայրութիւն. **-ба́тъ** ա. (յն.) 1, աբբահայր, կաթոլիկ վանքի վանահայր. հմմ. Авва; 2, աբբայ (մի պատուանուն յորջորջում կաթոլիկ եկեղեցու հարազատի):

Аб‖дикаціо́нный актъ հրաժարագիր (իշխանութի.) **-дика́ція** ի. (լտ.) հրաժարական,—րում (իշխանութիւնից):

Абевега ի. այբբեն, այբբենական ցուցակ, ցանկ:

Аберра́ція ի. 1 ֆիզ. միևնոյն կէտից դուրս եկած ճառագայթների փոխուանների շեղումը, խոտորումը միմեանցից. 2, աստղ. լոյսի շեղումը, խոտորումը շնորհիւ այն հանգամանքի, որ ա, երկիրս արեգակի շուրջը պտտում է, կանգնած չէ, և բ, աստղի լոյսի հեռադիտակի մի ծայրից մինչև միւսը հասնելը ժամանակ է անցնում, ուստի և մենք աստղը տեսնում ենք ոչ թէ իւր իսկական տեղում, այլ խոտորուած, շեղուած երկրիս շարժման ուղղութեամբ:

'Абза́цъ ա. (գերմ.) 1, պարբերութիւն, նոր տող. 2, պատի մէջ ներս պրծած տեղը, խոռոչը:

Аби́нный ած. արաբ սպիտակ մահուդից. а—ая спанча́.

Абисси́‖нецъ,нца, ա. **-нка** ի. հաբէշցի, եթովպացի այր, կին **-нскій** ած. հաբէշի, եթովպիայի:

Абитурі́ентъ ա. (լտ.) շրջանաւարտ, ընթացաւարտ, ուսումնաւարտ (միջնակարգ ուսումնարանի):

Аблака́тъ ռմկ. տ. Адвока́тъ.

Аболиціони́стъ ա.(լտ.) աբօլիցիօնիստ. 1, պատմ. նա, որ ձգտում էր Հիւս. Ամերիկայի Միացեալ Նահանգներում ստրկութիւնը ոչնչացնելու. 2, առհասարակ նա, որ ձգտում է փոխելու մի և է օրէնք (օր. մահուան պատիժը), սովորութիւն և այլն:

Або‖неме́нтный ած. կանխավարձի. **-неме́нтъ** ա. (ֆր.) աբոնիմէնտ, կանխավճար, կանխավարձելը (օր. թատրոնական աթոռի, օթեակի, որի համար որոշ զեղչ է լինում.) **-не́нтъ** ա. կանխավարձող, բաժանորդ. **-ни́рова́ніе** չ. կանխավարձելը, բաժանորդ գրուելը, նախօրօք բռնելը. **-ни́рова́ть,** (-ни́ру́ю - ютъ) ն. կանխավարձել, որոշ զեղչով նախօրօք վարձել, բռնել (տեղ թատրոնում և այլն); **-ся**** 1, ատչր. կանխավարձել, կանխագրուել, որոշ զեղչով կանխօրէն

բաժանորդ, մասնակից գրուել. а. на театръ, на концертъ, на газету; 2, նր. կանխավարձուիլ, որոշ դեղջով, նախօրօք վարձով տրուիլ. -нировка ի. կանխավարձելը, —ձուիլը, կանխավարձում։

Абор||дажный ած. կռփամարտի. а—ое сраженіе կռփամարտ (որի ժամանակ թշնամի նաւերը նախ միմեանց կռփում, ճանկում են). -дажъ ա. կռփամարտ (ծովի վերայ). -дировать** (-рую-ютъ) ն. (ֆր.) ծովմ. թշնամու մարտանաւը կռփելով ճակատամարտ տալ։

Аборигены ա. յ. բուն բնիկներ, մի երկրի նախնական բնակիչները, ՙբնաշխք՚։

Абор||тивный ած. վիժեցուցիչ, վիժում, վաղահաս ծնունդ առաջացնող. а—ое средство, -тъ ա. (լտ.) բժ. դատս. վիժում, վիժուած։

Абракадабра ի. աբռակադաբրա (կախարդական խօսք, բանդագուշանք, որ գրելով թղթի կտորի վերայ, կրում էին մարմնի վերայ, հաւատալով որ նա մարդուն այլ և այլ ցաւերից, մանաւանդ ջերմախտից պաշտպանում է)։

Абревіатура ի. (լտ.) 1, կրճատում, յապաւում (գրելու ժամանակ՝ խօսքերի). 2, երաժշտական նոտաների մէջ գործածական յապաւման նշան։

Абрекъ ա. աբրեկ (կովկասեան երդուեալ, քինախնդիր լեռնաբնակ)։

Аб||рикосный, -рикосовый ած. ծիրանի, — նից. рикосовка ի. ծիրանից պատրաստած օշարակը. -рикосъ ա. բս. Prunus armeniaca ա, ծիրան, բ, ծիրանենի։ [նկար յատակագիծ։

'Абрисъ ա. (հոլ.) շրջագիծ, ուրուագիծ, ուրուա-

Абсентеизмъ ա. (անգլ.) մշտական բացակայութիւն հայրենիքից կամ կալուածից, հայրենամոռացութիւն։ [լատած օղիից ըմպելիք։

Абсентъ ա. (ֆր.) օշինդրօղի, օշինդրից պատ-

Абсиды ա. Апсида.

Абсо||лютизмъ ա. 1, (ֆր.) բացառիկ, անպայման լինելը. 2, անսահման, միահեծան, բացարձակ իշխանութիւն. արձակապետութիւն։ 3, փիլ. անսահմանականութիւն, անսահմանականութեան վարդապետութիւն -лютистъ ա. (ֆր.) 1, բացառիկ պահանջներ անող. որ ոչ մի բացառութիւն, զիջում չէ անում։ 2, անսահման, միահեծան, բացարձակ իշխանութեան կողմնակից. -лютность ի. անպայմանականութիւն, կատարելութիւն. բացառիկ լինելը։ -лютный ած.(լտ.) բացարձակ, անպայման, բացառիկ, կատարեալ. а—ая высота мѣста տեղագր. մի տեղի բարձրութիւնը ծովի մակերևոյթից. а. вѣсъ բուն, իսկական քաշը, կշիռը. հակառակը տ. удѣльный вѣсъ; а—ое большинство голосовъ въ коллегіальныхъ собраніяхъ— գեռակշիռ հակառակ կողմի վերայ թէկուզ մէկ ձայնով։ -лютъ ա. փիլ. ամենից անկախ, ինքնուրոյն, ինքնեկը, ամեն երևոյթների սկզբնապատճառը։

Абстра||ктный ած. (լտ.) վերացական, մտաւոր. -ктъ ա. 1, վերացական առարկայ, վեր. գաղափար. 2, երժ. երաժշտական գործիքի, երգեհոնի մէջ խուփ, որի բացուելով օդը խողովակներն է մտնում. -кція ի. աբստրակցիա. 1, առարկայի յատկութեանց, յատկանիշների վերացականացնելը, ընդհանրացնելը 2, վերացականութիւն։

Абсурдъ ա. (լտ.) անհեթեթութիւն, անտեղի, անճառ բան, խօսք։

Абулія ի. (յն.) 1, անկամութիւն, կամքի, կամեցողութեան բացակայութիւնը. 2, հոգբժ. կամազրկութիւն, կամենալու կարողութիւնից զրկուիլը։

'Абцугъ ա. (գերմ.) 1, թղթխ. խաղաթղթի աջուձախ բաժանելու ժամանակ խաղաքանշլիր զոյգը. 2,* съ перваго абцуга հէնց սկզբից, ըսկզբից և եթ, առաջին քայլից։

Аб||шидъ ա. (գերմ.) 1, հրաժարական, արձակում պաշտօնից. 2, արձակման, պաշտօնաթողութեան գիր, վկայական.-шнитъ ա. (գերմ.) տ. Ретраншементъ.

Абызъ ա. (թաթ.) աբիզ, թաթարական մոլլա։

Аван||гардный ած. առաջապահ, առաջխաղաց զօրքի. а—ое сраженіе, -гардъ ա. (ֆր.) ռազմ. 1, առաջապահ, առաջխաղաց զօրք, ջոկատ, որ գլխաւոր զօրաբանակը թշնամու անակնկալ յարձակումներից պաշտպանում և նորա մասին տեղեկութիւններ է հաւաքում, 2, նաւատորմիղի առաջ գնացող նաւերը, -зала ի. -залъ ա. (ֆր.) նախադահլիճ. -постный ած. առաջակայ ջոկատի. а—ая цѣпь առաջակայ պահապանների, ժամապահների շղթան, շարքը. -портъ ա. նախածոց, նախախորշ։ -постъ ա. (ֆր.) 1, ռազմ. առաջակայ զօրք, ջոկատ, պարեկադունդ, որ բանակատեղը թշնամու անակնկալ յարձակումներից պաշտպանում է. 2, առհ. գլխաւոր տեղ, նախավայր.-сировать (-рую -ютъ) ն. կանխօրէն վճարել, ընձեռնել. -совый ած. ավանսի, կանխավարձի. а—ыя деньги.-сцена ի.(ֆր.)թատր.նախաբեմ, բեմի առաջի մասը, վարագոյրի և օրկէստրի մէջ գտնուող տարածութիւնը։ -съ ա. (ֆր.) ավանս 1, կանխավճար, կանխադրամ. 2, авансы յ. հաշտութեան, բարեկամութեան, մտերմութեան առաջին քայլերը։

Аван||тажный ած. յարդ, առաւելութիւն ունեցող. տեսքով. а. видъ, а—ая наружность; -тажъ ա.(ֆր.) առաւելութիւն, յարդ, յարդանք, գերազանցութիւն. շահ, օգուտ։

Авантюри||нный ած. ավանտյուրինի. а. блескъ; -новый ած. ավանտյուրինի,—նից. а—ая табакерка, —печать; -нъ ա. (ֆր.) 1, արուեստ. ավանտյուրին արուեստական քարը։ 2, հնք. ավանտյուրին հանքը, կուարցը, ոսկեկայծը։

Аван||тюристъ ա.(ֆր.) -тюристка ի.արկածախնդիր —դրուհի, բաղդախնդիր, դրուհի։

Авар||ійный ած. ծովային արկածի, դժբաղդութեան, վնասի. а—ыя деньги;—рія ի. (իտ.) ծովգ. I. 1, ծովային արկած, ծովի վերայ կամ նաւահանգստում նաւին կամ նորա բեռանը հասած վնասը, կենը, կորուստը. 2, վնասուած նաւի ապատելու ժամանակ կրած վնասները, կորուստը։ II, (գերմ.) այն մաքսը, որ նաւահանգիստը մտնող նաւերից վերցնում են։

'Авва ա. (արմ.) հայր, աբբահայր, վանահայր. Богъ послалъ въ сердца ваши Духа Сына Своего, вопіющаго: 'Авва, 'Отче! —որ աղաղակէ աբբա, Հայր (Թուղթ առ Գաղատաց. 4, 7)։

Аввакумовщина ի. Յովակիմեան աղանդը, ռուս եկեղեցու ռասկօլի մի ճիւղը։

Ав||гитовый ած. հրատեայ. а. камень; -гитъ ա. հնք. augite, հրատ։

Авгуръ ա.(լտ.) հաւահարց, հաւահմայ, հաւադէտ, (հին Հռովմէացիների քրմերը, որոնք թռչունների ձայնից և թռչելու եղանակից գուշակութիւններ էին անում). * խաբեբայ, կեղծ մարդ։

Августи||нецъ, нца ա. -нка ի. Օգոստինեան վարդապետ, օգոս. կոյս. -нскій ած. Օգոստինեան։

'Авгу||стовскій ած. օգոստոս ամսի. а—ая книжка журнала; -стъ ա. (լտ.) օգոստոս, հին հայոց

նաւատորդ ամիսը. -стѣйшій ած. օգոստափառ (մակդիր, որ տրւում է արքայական տան անդամներին). А. Покровитель.

Авдиторъ տ. Аудиторъ.

Авдотька ի. 1, կնդ. Oedicnemus crepitans, մեծ, կարմրոտն ճահճային կտցարը, 2, կնդ. Upupa Epops, յոպոպ, 3, յաճխ. յ. Авдотьки բս. Trollius europaeus, ձկլի:

Аверсъ ա. (լտ.) մեդալի կամ դրամի առաջին (պատկերազարդ) երեսը. հակառակը տ. Реверсъ.

Аверьянъ ա. տ. Валерьяна.

Авиважъ ա. (ֆր.) 1, գիպակեղէնին վառ, կենդանի գոյն տալը. 2, հայերս համար ամաչ՝գամա պատրաստելիս անաղեայ թելթերի սըրելը, մաքրելը սպիկել:

Ави‖зо ա. անհ. (իտ.) հնչ. բանբեր, համբաւաբեր. տեղեկատու նաւ (նաւատորմի մէջ, որ թեթեւ է, ծառայում է հրամանատարի պատուէրները, կարգադրութիւնները հաղորդելու).-зъ տ. Адвизъ.

Авось‖ 1, մ. կարելի է, թերեւս. 2, իբր գոյակ. չ. և ա., պատահմունք, բաղդ, դէպք. авось-либо տ. Авось; -ка հոդ. -никъ ա. թեթեւամիտ, անյուսալի, 'բօշ' մարդ. նա որ յաճախ իւր յոյսը դէպքի, պատահմունքի վերայ է դնում կամ յաճախ авось բառը գործ է ածում. авосьники обдокуры (առծ.) 'բօշ' մարդիկ դժբաղդութիւն են բերում. -ничать չ. յոյսը դէպքի, պատահմունքի վերայ դնել, 'բօշութիւն' անել:

Авраамово дерево բս. Vitex agnus castus, կուսութեան, ողջախոհութեան կմ Աբրահամեան ծառը (2—3 մետր բարձրութեամբ թուփ, որի դառն, պղպեղահամ սերմերը, ինչպէս ասում են, մարդուս սեռական տենչը զսպում, ամոքում են):

Авра‖лить (-лю -лятъ) չ. համրութեամբ, բոլոր ուժերով գործ կատարել. -лъ ա. (անգլ.) ծվց. համուր, բոլոր ուժերով կատարուող գործ, նաւի վերայ այնպիսի գործ, վարժութիւն, որին բոլոր նաւաստիներն էլ մասնակցում են. -льный ած. 1 համուր, ընդհանուր, հասարակաց. а—ая работа նաւի վերայ ընդհանուրի ձեռքով կատարուող գործը. 2, հեգն. անհանգիստ, երերուն, դանդաչուն:

Аврамьевщина ի. Աբրահամեան տօնը (Աբրահամ վարդապետի անունով), որը հաւատում է նեռի գալստեանը մարմնաւոր կերպարանքով:

Авранъ ա. բս. Centaurea jacea, կարմիր տերեփուկը. а. дикій տ. Благодать 5.

Аври‖кула ի. բս. Primula auricula, արջականջ, ,ճնարբուկ. -пигментъ տ. Аурипигментъ.

Аврора (լտ.) արշալոյս, արեւածագ, 'ծէգ':

Ав‖рынъ ա. բս. Lemna, ջրոսպր. -сень տ. Овсень.

Авскультантъ ա. (լտ.) հնգ. կրտսեր անդամ ուսումնական և դատական ընկերութեանց:

Австерія ի. (լեհ.) հիւրանոց, ակմբանոց, ժողովարան, որ Պետրոս Մեծը հիմնում էր, որպէսզի նոցա մէջ ռուս հասարակութիւնը ծանօթանայ եւրոպական կենցաղին: |(լտ.) հարաւային:

Австра‖лійскій ած. աւստրալիական. -льный ած.

Авст‖ріецъ, рійпа ա. -рійка ի. աւստրիացի, —րիուհի -рійскій ած. աւստրիական. -ріякъ, -ріячка տ. Авст‖ріецъ. -рійка.

Авто‖біографическій ած. ինքնակենսագրական. -біографія ի. (յն.) ինքնակենսագրութիւն. -графическій ած. նոյնագրութեան, նոյն գրութեան վերարտագրութեան. а—ая бумага; -графія ի. (յն.) 1, նմանահանութիւն, նոյնագրութիւն, հեղինակի գրութեան ճիշտ վերարտադրութիւնը. 2, միևնոյն գրութեան մի քանի օրինակը արագ ստանալու միջոցը, եղանակը. -графный տ. Автографическій; -графъ ա. 1, ինքնագիր, սեփական ձեռք. 2, հեղինակի իսկ, հարազատ ձեռագիրը. բուն բնագիր. 3, ինքնագիր, ինքնիրան գրող, ընդօրինակող, կաղապարող մեքենայ:

Автодафе տ. аутодафе.

Авто‖дидактическій ած. ինքնուսի. -дидактъ ա. (յն.) ինքնուս. -кефальный ած. (յն.) ինքնագլուխ. а—ая церковь; -кратія ի. (յն.) ինքնակալութիւն, անսահման, միահեծան ինքնապետութիւն. -кратъ ա. ինքնակալ, միահեծան, անսահման միապետ, ինքնապետ. -матизмъ ա. ինքնաշարժութիւն, մեքենայաբար շարժուելու ընդունակութիւնը. -матическій, -матный ած. ինքնաշարժ, ինքնաբերական, մեքենայական. -матъ ա. (յն.) ինքնաշարժ մեքենայ (մարդու կամ կենդանու կերպարանքով): -мобиль ա (յն.-լտ.) ինքնաշարժ նորահնար կառք մի:

Автомедонъ ա. կտկչ. կառապան, կառավար:

Автомолитъ ա. հնք. Automolit, աւտօմոլիտ, ցինկային շիկաքար:

Авто‖номія ի. (յն.) ինքնավարութիւն, ինքնօրինութիւն, ինքնուրոյն վարչութիւն. 2, փիլ. կամքի ազատ ընտրութիւնը, որոշումը, ազատութիւնը. -номный ած. ինքնուրոյն, ինքնավար, ինքնօրէն. -псія տ. Аутопсія.

Авторите‖тный ած. հեղինակութիւն, կշիռ ունեցող, ազդու, ազդեցիկ. э. голосъ; -тъ ա. 1, հեղինակութիւն, ազդեցութիւն, նշանակութիւն, 2, հեղինակութիւն ունեցող, հեղինակաւոր անձ:

'Авто‖рскій ած. հեղինակի. а—ое право, вознагражденіе; -рство չ. հեղինակութիւն. -рствовать,(-ствую, -ютъ) չ. հեղինակել, շարադրել. -ръ հոդ. 1, հեղինակ, բանասէր, գրող այր, կին. 2, մի բանի սկզբնապատճառ, հեղինակ:

Автохтоны տ. Аборигены. |գայ, տէր, մեծաւոր:

Ага I. ձյ. ահա, ահա թէ ինչ. II. ա. (թրք.) ա-

Агава ի. բս. Agave americana, ամերիկական ագաւին, պերճածաղիկը (սովորաբար հարիւրամեան հալուէ): |կերաքար:

Агальматолитъ ա. հնք. agalmatolithe, պատ-

Агапы ի. յ. (յն.) ագապ, սիրոյ սեղան, որ սարքում էին նախնի քրիստոնեաները:

Агарикъ ա.(լտ.) ագարիկոնը, ծակքաւոր սունկը:

Агаряне, -янъ ա. յ. հագարացիք, առհ. մահմետականներ:

Ага‖тный ակատէ, ակատակերպ. -товый ած. ակատէ, ակատից, а. сосудъ; -тъ ա. հնք. agate, ակատ, «свѣтлые чёрные глаза настоящій а.»

'Аггелъ ա. եկղ. չար ոգի, դեւ:

'Аген‖тскій ագենտի, գործակալի, -վարի а—ая контора; -тство չ. -тура ի. (գերմ.) ագենտութիւն գործակալութիւն. -тъ ա. (գերմ.) ագէնտ. 1, լիագոր, հաւատարմատար, գործակալ, -կատար. 2, որ և է տէրութեան դիպլօմատիական, պատերազմական կամ վաճառականական գործերի ներկայացուցիչը մի այլ պետութեան արքունիքում:

Аги‖таторъ ա. (լտ.) ագիտատոր. 1, յօգուտ որ և է գաղափարի պայքար մղող, հասարակութիւնը պատրաստող. 2, խռովարար, աղմկիչ, գրգռիչ. -тація ի. (լտ.) ագիտացիա, 1, պայքար, պայքար մղելը յօգուտ որ և է գաղափարի, ձեռնարկութեան. 2, խռովարարութիւն. -тировать (-рую. -ютъ) չ. (լտ.) պայքար մղել[ով] հասարակու-

թիւնը յօգուտ որ և է գաղափարի, գործի նախապատրաստել]:

Агiа́сма ի.(յն.) եկղ. 1, а. великая ջրօրհնէքին (Աստուածայայտնութեան տօնին կամ նախատօնակին) օրհնած ջուրը. 2, մանկանց մկրտութեան համար օրհնած ջուրը:

Агіо|біогра́фія ի. (յն.) սրբերի կենսագրութիւնը, վարք սրբոց. -гра́фія ի. (յն.) սրբագրութիւն. խրատական գրուածք. -ло́гія ի. (յն.) սրբախօսութիւն, սրբերի մասին գիտութիւն, տեղեկու-[թիւններ:

'Аглицкій հնց. ռմկ. տ.'Англійскій.

Агломера́тъ ա. 1, հնք. agglomérat, շեղջաքար, կուտակաքար. 2, առհ. այլայլ մասերից բաղկացած կոյտ, կուտակում, շեղջ:

'Аг|нецъ, нца ա. եկ. ու. 1, գառն. 2, պատարագի հացից հանած քառանկիւնի օրհնած նշխարը 'А. Бо́жій Գառն Աստուծոյ (Յիսուս)'А. непоро́чный տ. Авраа́мово де́рево: -ница ի. եկ. ու. 1, էգ գառն, որոջ. 2, եկղ. այսպէս կոչւում են Աստուածածինը և նահատակ կոյսերը:

'Агновы вѣтви ի. յ. վարսաւոր կամ բարեխնական կամ պաղեստինեան, Երուսաղէմեան ուռենու (Salix babylonica) ոստերը, ճիւղերը:

Аго́нія ի. (յն.) մահուան ճգնաժամ, մահուան տագնապ, հոգեվարք:

Агра|ма́нтный,-ма́нтовый ած. երիզազարդի. -ма́нтъ ա.(ֆր.) երիզազարդ, ցանցակերպ հիւսուածք, ժապաւէն, որ իբրև զարդարանք կարում են կանանց զգեստի փէշերին, վարագոյրների եզրներին և այլն:

Агра́|рій ա. (գերմ.) ագրարիէր (Գերմանիայում այն քաղաքական կուսակցութեան անդամը, որ պաշտպանում է հողատէրերի և գիւղատնտեսների շահերը). -рный ած. հողատիրական, կալուածատիրական. գիւղատնտեսական. а. вопро́съ, — строй.

Агра́фъ ա. (ֆր.) ագրաֆ. 1, կարթ, ճարմանդ, շիղ, ճանկ, գլխարկի կոկարդը. 2, ճրտրպ. թաղի, կամարի միջին քարը, որով նա ամրափակւում է: [թիւն, խառնուածք, կազմուածք:

Агрега́тъ ա. (լտ.) շեղջ, կիտուածք, կուտակու-

Агресси́вный ած.(լտ.) յարձակողական, նուաճողական. а—ая поли́тика.

Агрикуль|ту́ра ի. (լտ.) երկրագործութիւն, հողագործութիւն. -ту́рный ած. երկրագործական, հողագործական. а—ая те́хника.

Агро|номи́ческій ած. հողա||գիտական,—գործական. -но́мія ի. (յն.) հողագիտութիւն, հողագործական ուսումը, գիտութիւնը. -но́мъ ա. ագրոնոմ. 1, հողագէտ, ուսեալ հողագործ, երկրագործ. 2, ուսեալ, փորձուած գիւղատնտես:

Агу́|-леньки, -нечки, -нюшки ձյ. ագու агу́, не плачь.

Ада́жіо, (իտ.) եղժ. 1, ճ. հանդիստ, կամաց, մեղմ. 2, ահհ. պիէսայն, որ հանդիստ և ազատ եղանակով երգւում է:

Ада|ма́нтовый ած. 1, ադամանդէ. а — ая твёрдость; 2,*խիստ կարծր, անողոքելի а—ое се́рдце; -ма́нтъ հնք, adamas, ադամանդ, ալմաստ:

Адама́шка ի. հնց. դամասկոսեան մետաքսէ կերպաս, որ առաջ ներածւում էր Ռուսիա:

Ада|ми́ты ա. յ. Ադամեանք, Ադամորդիք (մերկակեաց աղանդաւորներ, որոնք ցանկանում էին նախահօր դրախտային անմեղութիւնը վերականգնել. ցոփակեաց, հանրակին էին և ժխտում էին եկեղեցին և իւր ծէսերը). -мовщина ի.տ.Ада́мова кость; -мовъ, а, о, ած. Ադամի, Ադամա—(մակդիր, որով այլ և այլ արուեստագիտական անուններ են կազմում, օր.) Ада́мова борода́, 1, բս. Asclepias, մետաքսաբոյս (խոտ). 2, բս. Centaurea scabiosa, բարտ տերեփուկը կամ նաշտր: Ада́мова голова́ 1, Ադամագլուխ (գագաթի նկարը վերան երկու խաչաձև ոսկորներով, օր. խաչելութեան նկարում) 2, բս. Cypripedium calceolus, մուղածաղիկը: Ада́мова кость հիւսիս. Ադամոսկր կոչուած քարացած ծառը: Ада́мова смо́ква բս. Musa paradisiaca կամ Ficus indica, մաւզը (մոզ.Ադամախնձոր). Ада́мово де́рево բս. Catalpa bignonioides, սիկամածառ: Ада́мово я́блоко 1, բս. Citrus limetta, քաղցրահամ կիտրոնը, տես և Ада́мова смо́ква: 2, բս. Pyrusmalus paradisiaca դրախտախնձորին: 3, կզմկ. Cartilago thyreoidea խոչափոչի վերին, դուրս ցցուած մասը:

Адансо́нія ի. տ. Баоба́бъ.

Ада́тъ ա. ադաթ, կովկասեան լեռնաբնակների հնաւանդ սովորութիւնները, որոնք օրէնքի նշանակութիւն են ստացել: [а-ое рече́ніе.

Адвербіа́льный ած. (լտ.) քերկ. մակբայական.

Ад|ви́зный ած. ծանուցագրի, հաղորդագրի. -ви́зъ ա.(իտ.) վճռկ. ծանուցագիր, հաղորդագիր, (որ մուրհակը կամ ապրանքը արդէն ճանբուած է:)

Адво|кати́шко ա. նխտ. ողորմելի փաստաբան. «а. былъ дрянно́й. и всѣ по́воды касса́ціи упусти́лъ.» -ка́тскій ած. փաստաբանի.—նական -ка́тство. փաստաբանութիւն -ка́тствовать,(-ствую.-ютъ) չ. փաստաբանութիւն անել, փաստաբանութեամբ պարապել. -кату́ра ի. (գերմ.) 1. տ. Адвока́тство; 2, հիմնարկութիւն քրէական գործերը պաշտպանելու, իսկ քաղաքական գործերի համար բարեխօսելու. -ка́тъ ա. (գերմ.) ադվոկատ, փաստաբան.

Аделаи́да ի. բաց կապոյտ գոյն, կապոյտ մանուշակի գոյն: [տութիւն, -բանութիւն:

Аденоло́гія ի. բժ. խլխխօսութիւն, գեղձագի-

Аде́птъ ա. (լտ.) 1, կատարելութեան, -յաջողութեան հասած ալքիմիկոս. 2, որ և է վարդապետութեան գիտակ, աշակերտ, հետևող:

А|де́хъ ա. -диге́ ահհ. չերքէզ (տեղական յարջորջում):

Адина|ми́ческій ած. անուժութեան, անզօրութեան, թուլութեան, ուժասպառութեան. -мія ի. (յն.) 1, անզօրութիւն, ուժասպառութիւն, թուլութիւն. 2. բժ. անուժութիւն, կատարեալ ուժասպառութիւն, որ պատահում է գրդոլց միջոցներ:

Администра|ти́вный ած. (ֆր.) կառավարչական, վարչական. а—ая власть կառավ., վարչ. (և ոչ դատաստանական) իշխանութիւն. а—ая маши́на; вы́слать кого́ въ а—омъ поря́дкѣ, а—ымъ поря́дкомъ աքսորել մէկին վարչական (և ոչ դատաստանական) ճանապարհով. -то́рскій ած. կառավարչական, վարչական. а — ыя спосо́бности; -то́ръ ա. (լտ.) 1, առհ. կառավարիչ, վարիչ, վարչական անձ. 2, կառավարութիւնից կարգուած պաշտօնեայ, մատակարար, յանձնիչ, որին յանձնուած է որ և է կալուածական գործ. 3, սրբութի կալուածների կառավարու (հիւսիս արևմտեան, հարաւ արևմտեան և բալթեան նահանգներում). 4, իրք. վաճառականական սնան խճճուած գործերը կարգադրելու համար նշանակուած վարչութեան անդամը.

-ціо́нный ած. վարչութեան, կառավարչութեան. -ція ի. (լտ.) 1, առհ. կառավարչութիւն, վարչութիւն. 2, ալրունական մարմնի (միայն ոչ դատաստանական կամ օրէնսդրական) վարչութիւն. 3, իրք. օտար կայքի վարչութիւն, հոգաբարձութիւն, կապալառութիւն, մատակարարութիւն. 4 առանձին հիմնարկութիւն, որ քննում և կարգադրում է վաճառատան խճճուած գործերը:

Адми‖ралте́йскій ած. ծովային վարչութեան, а. флагъ; а ая игла́ Պետերբուրգի ծովային վարչութեան շինութեան վերայ գտնուող սրածայր սիւնը. -ралте́йство չ., 1, ծովային գինարան, ուր նաւատորմին վերաբերեալ բոլոր գործերը կատարւում են, նաւերը շինւում կամ կարկատւում են. 2, ծովային, նաւատորմային վարչութիւն. адмиралте́йствъ - колле́гія ծովային, նաւատորմի վարչութիւն (Պետրոս Մեծի ժամանակ). адмиралте́йствъ—сове́тъ ծովային վարչութեան խորհրդարան:-ралте́йцъ ա. հնց. մարտանաւեր շինութեան գլխաւոր վերակացուն (Պետրոս Մեծի օրով).-ра́лъ ա.(հոլ).1,ծովակալ. նաւատորմի հրամանատար. ծովային զօրքերի սպարապետ. 2, կնդ. Vanessa Atalanta, ծովակալ թիթեռը. 3, կնդ. Conus admiralis, ծովակալ խեցին. -ра́льскій ած.ծովակալի. а. чинъ; а. часъ կատկ. նախաճաշելու ժամ, ժամանակ. -ра́льство չ. ծովակալութիւն -ра́льша ի. ծովակալի կինը:

Адона́й ա. (եբր.) Ադոնայի,Ադոնա, Տէր (Աստծու անունը). «А. есть и́мя сотвори́вшаго мі́ръ».

Адовъ, а, о ած. տ. Адъ.

Адони́съ ա. բս. Adonis, ադոնիս, Ադոնիսի վարդակը, սատանայի աչքը (խոտ դորտնուկներից Ranunculaceae).

Ад‖реса́тъ ա. (գերմ.) նա, որի անունով նամակը կամ մի այլ թուղթ, պատուէր հասցէագրած է. -ресный ած. հասցէի, հասցէա—а́. столъ հասցէատուն, ուր կարելի է մի քաղաքում գտնուող բոլոր մարդկանց հասցէները իմանալ. а́—ая книга հասցէամատեան. а́. билетъ (առաջ) վաւերագիր, որ տրւում էր մասնաւոր ծառայողներին և արուեստաւորներին.-ресова́ніе չ. հասցէագրելը. ցոյց տալը. -ресова́ть ** (-су́ю-ютъ) ն. 1, что куда́ կամ кому́ հասցէագրել, նամակի, պատուէրի, մուրհակի վրայ ստացողի հասցէն գրել. ուղղել. 2, кого́ куда́ կամ къ кому́ մէկին մի հասցէ, ճանապարհ յայտնել, ցոյց տալ, մէկին մի տեղ, մի մարդու մօտ առաջնորդել.-ся** 1, անդր. къ кому́ կամ куда́, դառնալ, դիմել մէկին կամ մի տեղ. 2, կր. հասցէագրուիլ, ուղղուիլ. пи́сьма адресу́ются въ конто́ру; -ресъ ա. (фр.) ադրէս. 1, հասցէ. 2, մուրհակի վերայ այն անձի անուան մակագրութիւնը, որին պարտապանը պէտք է դրամը վճարէ. 3, ուղերձ, ձօն. շնորհակալութեան, շնորհաւորութեան, ցաւակցութեան թուղթ. խնդրագիր, որ շատ սահմանադրութիւններում մէկին ուղարկւում է, а́дресъ-календа́рь հասցէամատեան (ամբողջութեան բոլոր հիմնարկութեանց, պաշտօնեաներին):

Адріано́польскій ած. Ադրիանուպոլսի. а—ая кра́ска, а. цвѣтъ ամենահաստատուն և սիրուն կարմիր ներկը, որ տորոնից ստացւում է և որով ներկում են բամբակեայ թելերն և գործուածները:

Адря́съ ա. (թաթ.) բամբակեան և պարսկական կիսամետաքսեայ գործուածք, ճոթ:

'Адски Ն. ինչպէս դժոխքում, սոսկալի, զարհուրելի կերպով.-дскій ած. դժոխային, անդրաշխարհական, զարհուրելի, անտանելի. а́—ія си́лы,—му́ки, а́—ая рабо́та,—ску́ка. 'А - ая маши́на, դժոխային մեքենայ, սոսկալի, բռնկուող նիւթերով լցրած ա, գործիք. բ, նաւ: 'Адскій ка́мень քիմ. Lapisinfernalis, դժոխաքար, խարկիչ քար:

Адуля́ръ ա. հնք. adulaire ադուլար[ադաժ-գոյն, թափանցիկ, բիւրեղացեալ դաշտային սպաթ]ը:

Адъ. ա. 1, դժոխք, սանդարամետ. 2, դժոխային ոյժեր. 3, դժոխային տանջանքներ, չարչարանքներ. 4, չփոթութեանց, խառնակութեանց վայր, տեղ: 'Адовъ, а, о ած. դժոխային-а́довы си́лы, а́—о отро́дье.

Адъюн‖ктскій ած. ադիւնկտի.-ктство չ. ադիւնկտութիւն. -кту́ра ի. ադիւնկտի պաշտօնը, ծառայութիւնը. -ктъ ա. (լտ.) ադիւնկտ. 1, ակադեմիաներում և բարձրագոյն ուսումնարաններում կրտսեր ուսումնական. (առաջ) ակադեմիկոսի կամ պրոֆեսորի օգնականը. 2, բազդրական պաշտօնի օգնականը:

Адъ‖юта́нтскій ած. ադիւտանտի. а - ая до́лжность; -юта́нтъ ա. (գերմ.) ադիւտանտ. սպայ, որ մեծաւորի այնպիսի պատուէրներն կատարում է. полково́й, батальо́нный а.; генера́лъ-а. և фли́гель- а. գեներալ և սպայ, որոնք կայսեր թիկնապահներն են, անմիջապէս նորան ծառայում են. -юто́ръ ա. (լտ.) օգնական:

Адэ‖ква́тный ած. փիլ. ճիշտ համապատասխան (համեմատութիւն, գաղափար). -кватъ ա. (լտ.) փիլ. ադէքվատ, ճշտութիւն, ճշգրտութիւն, համապատասխանութիւն (առարկաների գաղափարների):

Адюльте́ръ ա. (фр.) 1, ցոփութիւն, շնութիւն, ամուսնական հաւատարմութեան խախտումը. 2, ցոփ, շնացող. անհաւատարիմ ամուսին:

'А‖жіо չ. անփ. (фр.) աժիօ (այն դումարը, յաւելումը, որ վճարում են տարբեր տեսակ դրամներր, արժեթղթերը միմեանց հետ փոխելիս).-жіота́жъ ա.(фр.) դրամաճարակ. որ հիմնւում է դրամաթղթերի կուրսի փոփոխութեան վերայ. առհ. մեծ գործերի առուտուր, սակարկութիւն. -жіотёръ ա. դրամաճարակով պարապող, մեծ գործեր անող, ծախող:

'Ажно չ. ռմկ. այնպէս որ, մինչև անգամ:

Ажу́рный ած. ծակծկած, ծակոտկէն, ցանցկեր, նօսր, թափանցիկ. а — ое шитьё, а—ые чулки́:-ръ ա. անփ. (фр.) 1, անդին քարերի ոսկով և արծաթով այնպէս շրջանակելը, որ միայն նոցա եզրերն են ներփակւում մետաղից. 2, առհ. թափանցիկ, նօսր, բարակ, ցանցաո գործ. чулки́, перча́тки а.

Ажъ տ. 'Ажно.

Аза́лія ի. բս. Azalea, լեռնավարդ:

Аза́р‖тность ի. կրակոտութիւն. տաքարիւնութիւն, յանդգնութիւն. -тный ած. 1, պատահական, պատահմունքից, բաղդից կախուած. игра́ть въ а—ыя и́гры բաղդախաղի բռնուիլ. 2, կրակոտ, տաքարիւն, յանդուգն ժայռն. -тъ ա. (фр.) խանդ, կրակոտութիւն. տաքարիւնութիւն, բորբոքում, սրտմտութիւն, յուզմունք:

Азбе́стъ տ. Асбе́стъ.

'Азбу‖ка ի. 1, այբբեն, այբուբեն. 2, այբբե-

նարան, տետրակ. 3, * ոք և է գիտութեան, արուեստի տարրերը.-кóвникъ ա. հին ռուս դպրութեան մէջ մեկնական բառարան, մեկն. եկեղեցական. որի մէջ բառերը այբբենական կարգով դասաւորուած և բացատրուած էին. -чка նւզ. տ. 'Азбука; -чный ած. այբբենական, սկզբնական, *տարրական:

Ази||мýтный ած. ազիմուտի,-տային, -мýтъ ա.(արբ). ազիմուտ. 1, հորիզոնի այն մասը կամ աղեղը, որ գտնւում է որ և է աստղի բարձրութեան և միջօրէի մէջ. 2, աստղր. աստղի բարձրութեան և միջօրէի միջի անկիւնը, =0—360°:

А||зiáтецъ, тца ա.,-зiáтка է. ասիացի, ասիուհի. -зiáтскiй ած. ասիական,* վայրենի, բիրտ, կոպիտ. -зiáтчина է. 1, ասիականութիւն, ասիական, բիրտ սովորութիւն, վարք ու բարք. 2, տ. Азiáтъ 2;- -зiáтъ ա. 1, տ. Азiáтецъ; 2, նխտ. բիրտ, կոպիտ, անկիրթ մարդ.-зiйскiй բնստ. տ. Азiáтскiй.

Азó||тистый ած. ազոտեայ, բորակածին պարունակող. - тúческiй, - тновáтый. - тный, - товый ած. բորակածնային, բորակային. азóтная кислотá; 'թէզաբ' -тъ ա. (ֆր.) քիմ. բորակածին,մահածին:

Азýръ ա. 1, կապոյտ գեղ, ներկ 2, հնք. Lapislazuli, լաջուարթ (լաճվարդ, լաժուարդ):

Азъ, á ա. 1, ազ, այբ. եկեղ. սլաւոնական այբբենի առաջին տառը, *սկիզբ, տարերք. азá въ глазá не знáсть ոչնչէն ոչինչ չէ հասկանում. твердúть, повторúть азú—տարերքը, տարրական գիտելիքը կրկնել 2. եկ. սլ. դէ՞ր. ես (գործ է ածւում կատակով, օր. и азъ грѣшный, —многогрѣшный. [վերարկուն]:

Азя́мъ ա. ազեամ, ռուս գիւղացու ամառնայ

Ай ա. ահն. (Ay-ի անունով) փրփրացող, եռա-

Айдъ ա. դժոխք, սանդարամետ: [ցող գինի:

'Аиръ ա. բս. Acorus calamus, խունկեղէգը (Ակիր?):

'Аи||стникъ ա. բս. Pelargonium, Պել՚արգոնը. -стовый ած. արագիլի.а. носъ տ. 'Аистникъ; -стъ ա. կնդ. Ciconia, արագիլ, 'լակլակ' бѣлый а. Cic. alba, սպիտակ արագիլ (տառեղ):

Ай I,ա.կնդ. Bradypus tridactylus, այր, ծոյլը, յամրուակը: II. ձյ. ա՜յ, վա՜յ ո՜յ, ո՜ւհ. ай, ай, ай, что надѣлали! Ай-ай տ. Рукопóжка.

'Ай||вá. է. բս. Cydonia vulgaris, սերկեւիլ և սերկեւլենի .-вóвый ած. սերկեւիլի,—լից. айвóвое варéнье. [հեռացիր:

Айдá ձյ. (թաթ.) հայդա՜, հէյդա՜, գնա՜նք. գնա՜

Айдéсскiй ած. դժոխքի, -խային, սանդարամետի, -մետային:

Аймáкъ, á ա. հորեան, արիւնակից ցեղ, ազգ:

Айрáнъ ա. (թաթ.) խնոցու թանը (իբրև զովացուցիչ ըմպելիք). մածնաթան, ագուխ:

Ака||дéмикъ տ. 1, ակադեմիկոս, ակադեմիայի անդամ. 2, առհ. ուսումնական, ուսումնասէր. 3, զինուորական ակադեմիայի շրջանաւարտ, աշակերտ.-демúстъ ա. հաղեար կամ գեղարուեստների ակադեմիայի աշակերտ, ուսանող ճեմարանական. -демúческiй ած. 1, ակադեմիայի, ակադ. а. устáвъ.—трудъ. 2, ակադեմիկոսի, ուսումնական. լուրջ. а. годъ ուսման, ուսումնական տարի (համալսարանում. նաև այլ ուսումնական հիմնարկութեանց մէջ). а—ая фигýра մերկ մարդու պատկեր. պատկեր. а—iя пóзы ակադեմիական, կեցուածք դասական, կարծեցեալ գեղարուեստական դիրքեր, ձևեր. 3. * դատ տեսական, վերացական. -дéмiя է. (յն.) ակադեմիա.1. ուսումնական հիմնարկութիւն, որի նպատակն է գիտութեանց, գրականութեան կամ գեղարուեստից մշակութիւնը. а. наýкъ,—худóжествъ գիտութիւնների, գեղարուեստների ակ. 2, բարձրագոյն մանկավարժական դպրոց, ճեմարան а. духóвная,—воéнная, — инженéрная,—морскáя. 3. *նկարչական ուսումնարաններում՝ մերկ մարդկանց պատկերներ մարդկային մարմնի միանային կազմը ուսումնասիրելու համար:

'Ака||ла, հոգ.-льщикъ ա.. այբամոլ, որը (ինչպէս օր.մոսկուացին) անշեշտ о—ն а է արտասանում:

Акáнтъ ա. ականթ. 1, բս. Acanthus, ականթ, արջամագիլ (բոյս. որի կտրատուած տերևները արջի մագիլներին նման են). 2, ճրտրպ. սյն բոյսի տերևի ձևով զարդ, զարդարանք:

'А||канье չ. այբամոլութիւն (անշեշտ о-ի а արտասանելը). -кать չ. շշեշտուած о—ն а արտասանել, ինչպէս անում է մոսկուացին:

Акáтъ ա. կնդ. Himantopus, խաղընակը (կըռացոններից):

Акáцiя է. բս. Acacia, ակացիա. жёлтая а. caragana arborescens, լորենի, հակակ. бѣлая а., Robinia pseudoacacia, փուշկեղևը (սպատ՝ ակացիայ):

Акáеи||стникъ ա. յանկայս լսելի օրհներգութեանց գիրքը. -стъ ա. (յն.) ակաթիստ, յոտնկայս լսելի օրհներգութիւն, գովաբանութիւն ՚ի փառս Փրկչին, Աստուածածնին կամ սրբերի:

Аквамари́||нный,-новый ած. ծովագոյն, ծովակնագոյն. -нъ ա. հնք. Aigue-marine, ծովակն (գոճազմ ?):

Аква||релúстъ ա. ջրանկարիչ.-рéль է. (ֆր.) 1, ջրանկարչութիւն, ջրային գեղերով նկարչութիւն. 2, ջրանկար, ջրային գեղերով նկարած պատկերը, ջրաներկ նկար. -рéльный ած. ջրանկարչական. а—ая живопись; а. рисýнокъ ջրանկար:

Аквá||рiй,-рiумъ ա. (լտ.) աքվարիում. 1, աւազան, ջրկալ, որի մէջ բուծանում են ջրային բոյսեր և կենդանիներ. 2, ծովային թանգարան, հիմնարկութիւն ալեայ բաժանումներով, որոնց մէջ գտնւում են ամեն տեսակ ջրային բոյսեր և կենդանիներ:

Аква||тúнта է. (իտ) աքվատինտա (պղնձի կամ պողպատի վերայ փորագրելու արուեստը.)-фóрта. է. (իտ) աքվաֆորտա (պղնձի վերայ բորակաթթուով փորագրելու արուեստը). -фортúстъ աքվաֆորտիստ, պղնձի վերայ բորակաթթուով փորագրող:

Акве||дýктъ,-дýкъ ա. (գերմ. ֆր.) 1, կամուրջ, կամրջանման շինութիւն, որի վերայով ջուրն անցնում է, ջրակամուրջ. 2, ջրմուղ, ջրանցք:

Аквилéгiя. է. տ. аклéй.

Аквилóнъ ա. (լտ.) հիւսիսային քամի, հողմ:

Акклимати||зáцiя է. (գերմ.) կլիմայավարժութիւն (օտար երկրի բոյսերի և կենդանիների). -зúровать,** (-рую-ютъ), -зовáть** (-зýю -ютъ) ն. (գերմ.-ֆր.) կլիմայավարժել, օտար երկրի բոյսը կամ կենդանուն մի այլ կլիմայի ընտելացնել.-зúроваться** 1, անդր. կլիմայավարժվել, օտար երկրի կլիմային ընտելանալ. 2, չ. կլիմայավարժուիլ, օտար երկրի կլիմային ընտելացնուիլ: [կագիծ ({). 2. տպագր. փակագիծ:

Акколáда է. (իտ) 1, երժ. միաւորիչ նշան, փա-

Аккомодáцiя է. (լտ.) 1, յարմարեցնելը, պատ-

շտճելը, համաձայնեցնելը. 2, *Ֆիզ.* տեսողութեան գործարանի (աչքի) յարմարումը (շնորհիւ իւր բիւրեղային ոսպի)։

Аккомпа||немéнтъ *ու.* (ֆր.) երգակցութիւն, նուագակցութիւն, երաժշտական գործիքի վերայ մէկի երգին կամ խաղին ուղեկցելը.-**ниро-вáніе** *չ.*, -**нирóвна** *ի.* *երժ.* երգակցութիւն, նուագակցութիւն, -**нировáть**, (-нирýю-ютъ) *ն.* кого́, что *և* *չ.* кому́ на чёмъ (ֆր.) *երժ.* երգակցել, նուագակցել երգողին, կամ ածողին երաժշտական գործիքի վերայ ուղեկցել. -**ніá-торъ** *ու.* -**ніáторша** *ի.* ուղեկցող, նուագակցող, երգակցող (խաղով՝ երգողին կամ ածողին) այր, կին։

Аккóрдъ *ու.* (լտ.) ակորդ, ներդաշնակութիւն ձայների. երկու կամ աւելի երաժշտական տոների միահաղոյն, ներդաշնակ առումը. брать на піанино а—ы.

Аккреди||тóвывать. -товáть (-тýю-ютъ)*ն.* (ֆր.) 1. *դիպլոմ.* հաւատարմաթուղթ տալ, հաւատարմաթղթով հաստատել, հաւատարմացնել դիպլոմատիկական անձին. 2. *վճռկ.* կամիսիոներին վաճառականական գործերի համար վարկ տալ, -ся 1, *ներգ.* իւր հաւատարմաթուղթը օտար պետութեան պետութեան ներկայացնել. 2, *չ.* հաստատուիլ, վաւերացնուիլ դիպլոմատիկական պաշտօնի մէջ։

Аккумуляторъ *ու.* (լտ.) ակումուլատոր ելեկտրահաւաք գործիք, որ ելեկտրականութեամբ լցնելով, պահում են իբրև պաշար ելեկտրական հոսանքի համար։ [տապան, բաբեխէրձ։

Аккурáт||ность *ի.* ճշտապահութիւն. -ный *ած.* ճըշ-

Аклей *ու.* 1, *բս.* Aquilegia vulgaris, հասարակ արծուածաղիկ, 2, *Սիբ.* մի տեսակ բազ։

Аколи́тъ *ու.* (յն) ուղեկից, հետևորդ։

Аконитъ *ու.* *բս.* Aconitum, ականիտոնը կամ ընձախոտը (բէշ)։

Акосми́змъ *ու.* (յն.) *փիլ.* իրական աշխարհի գոյութեան ժխտումը։

Акри́ды *ի.* *յ.* (յն.) *ածշ.* մարախ, մորեխ։

Акроаматическій *ած.* (յն.) առանց ընդհատման, առանց հարցի լսելի, ունկնդրելի, անընդմիջելի. հկձր *ա.* катехизическій.

Акробáтъ *ու.* (յն.) լարախաղաց, լարադնաց, պարանախաղաց,—դնաց, ‹բեանդրբազ›, ‹չամբազ›։

Акрó||поль *ու.* (յն.) միջնաբերդ, վերնաբերդ, ծայրաքաղաք, ակապոն (հնւոյն յունական քաղաքներում). -(о)сти́хъ *ու.* (յն.) բանաստեղծութիւն, տաղ, ոտանաւոր, որի իւրաքանչիւր տան տողերի սկզբնատառերը մի և է խօսք են կազմում. -**тéрій** *ու.* (յն.) *ճրտրպ.* հորինուածական ամեր, պատուանդաններ շինութեան ճակատի գագաթին և ծայրերին, որոնց վերայ դնում են անդրի, կիսարձան և այլն։

Акръ *ու.* ակր (հողային չափ, որ զանազան սեղութեանց մէջ տարբեր մեծութիւն ունի)։

Ак||самитный *ած.* ակսամիտի.-**самитъ** *ու.* (յն.) ակսամիտ, թաւշեայ կամ ատլասեայ փարչ, դիպակեղեն. խիտ, խաւոտ ոսկեայ կամ արծաթեայ գործուածք։

Аксельбáнтъ *ու.* (գերմ.) *ա.* աքսէլբանդ (ոսկեայ, արծաթեայ կամ այլ թել, ժապաւէն, որ ամանք զինուորականներից ուսերի վրայից կրում են)։

Аксессуáръ *ու.* (ֆր.) լրացուցիչ, երկրորդական, կողմնակի առարկայ, մաս (մնաց. գեղարուես-տական իրք). *առհ.* երկրորդական, կողմնակի իր, հանգամանք, պարագայ։

Аксинитъ *ու.* *հնք.* տապարաքար։

Аксіóма *ի.* (յն.) աքսիոմա. 1, ամենայայտնի, ապացոյցի կարօտութիւն չունեցող ճշմարտութիւն. 2, *փիլ.* ճշմարտութիւն, որ չէ ապացուցւում, բայց բոլոր ապացոյցների հիմքն է կազմում։

Аксіосъ *ու.* *տհկ.* (յն.) «արժանի է» (գործ է ածւում հոգևոր աստիճանները տալու ժամանակ)։

Актёрка *ռմկ.* *ա.* актри́са; -рничать *ա.* актёрствовать; -рскій *ած.* դերասանի. -рство *չ.* 1. դերասանութիւն. 2, դերասանական ձևեր, շարժումներ, վարմունք. -рствовать (-ствую-ютъ) *չ.* 1, դերասանական ձևեր, շարժումներ անել. 2, *կեղծաւորութիւն անել, կեղծաւորել. -ръ *ու.* (ֆր.) 1. դերասան, զուսան (գր.) 2, կեղծաւոր, խաղամանկ, քսու մարդ։

Ак||тивность *ի.* գործունէութիւն, գործող, գործունեայ լինելը. -тивный *ած.* գործող, գործունեայ, իրական, а—ая служба,— помощь; -ти́въ. *ու.* (լտ.) *վճռկ.* հաշուեկշիռ։

Актино||метрія *ի.* (յն.) ճառագայթաչափութիւն (ֆիզիկայի մի մասը, որ ճառում է արեգակի ճառագայթների չերմութեան ազդեցութեան մասին). -метръ *ու.* արեգակի ճառագայթների ջերմութիւնը չափելու գործիք, ճառագայթաչափ։

Актовый *ած.* ակտի. 1, տարեկան հանդիսի (դպրոցի, համալսարանի) а—ая зáла; II, վաւերագրի,-թղթի. á—ая бумáга,— книга.

Актриса *ի.* (ֆր.) դերասանուհի։

Ак||туáріусъ *ու.* *հնց.* գործավար, ատենադպիր, քարտուղար, որ մի և է պաշտօնատան գործերը, գրութիւնները վարում և պահպանում է, -тъ *ու.* 1, (լտ. actus) ակտ. 1, գործ, գործողութիւն. 2, մի և է ուսումնական կամ հասարակական հիմնարկութեան տարեկան հանդէսը. 3, գործողութիւն, արարուած. трагéдія, комедія въ пяти актахъ. II, (լտ. actum) ակտ, գործ, գրուածնտ, վաւերագիր, գրաւոր յիշատակարան, а. домáшнін ընտանեկան կտակագիր, раздѣльный á. имѣнію կտակագիր, որով ընտանիքի հայրն իւր կալուածքը, կայքը բաժանում է իւր որդիկերանց մէջ, а к т ы *յ.* *ա*, թղթեր, գործեր, վաւերագրեր, որոնք օր. հնագրաններում պահւում են. և, ուսումնական ընկերութիւնների հրատարակած գործերը, թեր-[թերը։

Акула *ի.* *կնդ.* Squalus շնաձուկ։

Акули́нка *ի.* *բս.* Verbascum lychnitis գեղանախոտը, վառելու եղնիզակին։

Акулиновщина *ի.* մի տեսակ ազանց, որ քահանաներ չէ ընդունում։

Акýлій, лья, лье, *ած.* շնաձկան. а—ья пасть.

Акупунктура *ի.* (լտ.) *բժ.* ասղաբուժութիւն որ կատարւում է մարմինը նուրբ, սուր ասեղներով ծակոտելով)։

Аку||стика *ի.* (յն.) ձայնախօսութիւն (գիտութիւն ձայնի և նորա տարածման մասին լսողութեան վրայ). -стическій *ած.* ձայնախօսական а—ая зáла, դահլիճ, որ շինած է ձայնախօսական պահանջներին համապատասխան։

Акуше||рка *ի.* մանկաբարձուհի, ծնուցիչ կին, ‹տատմայր› -рскій *ած.* մանկաբարձի,-ձական. а—ая практика, а—ая школа; -рство *չ.* մանկաբարձութիւն, մանկաբարձական գիտութիւն, -ръ *ու.* (ֆր.) 1, մանկաբարձ, ծնուցիչ. մանկա-

բարձ-բժիշկ. 2, акушёръ-жаба կնդ. Alytes obstetricans, կրէտագորտ, ծնուցիչ գորտ:

Акцен||товáть (– тýю-ютъ) ն. շեշտել. շեշտելով, շեշտ դնելով արտասանել. **-туáція** ի. շեշտելը, շեշտադրութիւն. շեշտելով արտասանելը, առոգանելը. **-тъ** ա. (լտ.) 1, շեշտադրութիւն. 2, շեշտ, շեշտի նշանը. 3, առոգանութիւն, արտասանութիւն (օտար լեզուի). говори́ть что-либо съ францу́зскимъ, нѣме́цкимъ, áнглійскимъ а—омъ.

Акцеп||тáнтъ,-тáторъ ա. վճռկ. ընդունող (պարտամուրհակի) **-тáція** ի., **-товáніе** չ. ընդունելը (պարտամուրհակի). **-товáть** ** (-тýю-ютъ) ն. (լտ.) ընդունել (պարտամուրհակը.) **-ція** տ. акцептáція: [շարժ կալուածքի).

Акцéссія ի. (լտ.) իրւբ. յաւելում, աճում (ան-

Акцидéнція ի. (դերմ.) 1, հատոյթ, արդիւնք. 2, կաշառք, 'քոլթամ' 3, վճռկ. մաքսային տուգանք, որ օրէնդիրքը առհմանում է բուն մաքսի 10%-ի չափ այնպիսի զանցառութեանց համար). 4, փխլ. իրի պատահական, ոչ էական յատկութիւնը.

Ак||ци́зный ած. ակցիզի,-գային,հարկի,մաքսի. а. сборъ, а ое управлéніе; **-ци́зъ** ա. (ֆր.) ակցիզ, տէրութիւնից նշանակուած հարկ, մաքս այնպիսի կենսական պիտոյքների վերայ. а. на вино, на табáкъ, на спи́чки.

Ак||ціонéрный ած. ակցիոներական, բաժնետիրական, **-ціонéрскій** ած. ակցիոների, բաժնետիրոջ. а. взносъ; **-ціонéръ** ա. (ֆր.) ակցիոնէր, բաժնետէր (արդիւնաբերական ընկերութեան).**-ція** ի. 1, ակցիա բաժնեթուղթ. 2, áкціи, ій յ. համբաւ, հաշիւ, վարկ. егó áкціи повы́сились; 3, հնց. պատերազմ, ճակատամարտ:

Акшаметъ ա. ակշամեա կապալների զգեստը:

Алабан||ди́змъ,-ди́нъ ա. հնց. 1, տ. альманди́нъ; *գեղարուեստական անճառնի քարծ. 2, հնք. Ալաբանդեան ազնիւ քարը(սուրբին արժէքի).

Ала||бáстеръ, стра, **-вáстръ** ա. (յն.) նկղ. ալաբաստր. 1, իւղի, անուշահոտ իւղի անօթ, մեռոնաման, 2, հեղուկների չափ. 3, տ. алебáстръ. [չերմաւոր նաշխը:

Алагрéкъ մհ. (ֆր.) ալագրեկ ուղղանկիւն

Алá||джа տ. алáча; **-дья** տ. олáдья. [համ բան:

Алалá ի. բարբաջանք, անհեղեղ, անմիտ, ան-

Алалы́ка ի. հոք. թոթով, թլուատ մարդ:

Аламáн||скій язы́къ հնարավի, պայմանական, բօշայական լեզու. **-щикъ** ա. ձիաւոր աւազակ, 'պաշար' կողոպտիչ, թալանիչ:

Алáр||ма ի. (արտ. аля́рма) (ֆր.) սկւ. զործծ. խարանդում, շփոթ, յուզմունք, խռովութիւն. **-ми́стъ** ա. **-ми́стка** ի. վրդովարար, վրդովեցուցիչ,խռովեցուցիչ լուրեր տարածող այր,կին:

Алáчá ի. մետաքսէ կամ կիսամետաքսէ շերտաւոր պարսկական գործուածք, կերպաս:

Албá||нецъ,нца ա. **-нка** ի. ալբանացի,—նուհի:

'Алгеб||ра ի. ալգեբրա, հանրահաշիւ, գրահաշիւ. **-раистъ, -ри́стъ** ա. ալգեբրագէտ. **-раи́ческій, -ри́ческій** ած. ալգեբրական. а—ая задáча.

Алгори́ѳмъ ա. (յն.) որ և է հաշուի ժամանակ գործածած բոլոր թուերը, նշանները:

Алдебарáнъ ա. առաջնակարգ մեծութեան աստղերից մէկի անունը: [խառնըը:

Алдермáнъ ա. (անգլ.) աւագ, համայնքի գըլ-

Алебáстренникъ ա. բս. Gypsophila muralis, որմնաքոյս ցմակը կամ ցմախոտը:

Алебá||стровый ած. 1, ալաբաստրէ,—րից. 2, * ալաբաստրի պէս սպիտակ. **-стръ** ա. հնք. ալա-

Алéй տ. олéй. [բաստր, լեռնակուճ,սպիտակ կիճ:

Алек||сандрéйка,-сáндрика ի. կարմիր բամբակեայ գործուածք, որից գիւղացիք շապիկներ են կարում, **-сандри́нскій** ած. Ալէքսանդրայի. А. теáтръ (Պետերբուրգում). **-сандри́тъ** ա. հնք. Ալէքսանդրիտ անդրին քարը (ասուաց Ալէքսանդր Բ. կայսեր անունով .**-сандрі́йскій** ած. 1. Ալէքսանդրեան. 2, Ալէքսանդրիական,—դրիայի: А—ая бумáга խիտ, ազնիւ թուղթ գրելու և նկարելու համար. а—ая шкóла Ալէքսանդրիական դպրոց. а. листъ բժ. աճայի կամ սինէմէքի (Cassia lenitiva) և այլ բոյսերի տերևները, որոնք բժշկութեան մէջ գործ են ածում իբրև լուծողական, մաքրողական: а—іе стручки́ կասիանի (Cassia fistula) պտուղը, որ գործ է ածւում իբրև լուծողական, մաքրողական. а. стихъ Ալէքսանդրեան տաղաչափութիւն. А. столпъ Ալէքսանդրեան կոթողը, սիւնը (Պետերբուրգում). **-сáндровскій** ած. Ալէքսանդրի:

Алéкторъ ա. 1, (Crax alector) հոկկօ հաւու Ամերիկեան հաւը. 2, ատեար. աքաղաղ:

Алембикъ ա. քիմ. զտելու անօթ, արաղի պղինձն իր սարքով:

'А||ленькій ած. փղքշ. ալ կարմիր. **-лéнько** մ. ալ. կարմիր կերպով. **-лёхонекъ, -лёшенекъ**, лька, о ած. բոլորովին ալ, միանգամայն կարմիր:

'Али, аль շ. հնց. ռմկ. տ. и́ли:

'Алиби մ. և գոյ. չ. իրւբ. այլուրեք, ուրիշ տեղ լինելը. այլուրեքութիւն. մեղադրուողի բացակայութիւնն այն տեղից, ուր կատարուած ոճրագործութիւնն իրան է վերագրուում) засвидѣтельствовать своё á վկայել, հաստատել, որ ինքն ուրիշ տեղ էր (ոճրագործութեան տեղից բացակայ էր.:

Алидáда ի. շարժուն քանոն անկիւններ չափելու (գործծկ. հողաչափութեան մէջ):

Али||зари́новый ած. ալիզարին,—րինի. а—ыя крáски; а ыя черни́ла մութ կապոյտ կանաչ թանաք, որ գրելուց յետոյ սևանում է. **-зари́нъ** ա. (խպ.) ալիզարին գունաւորիչ կարմիր նիւթը, որ ստացւում է վայրի տորոնի (марéна) արմատից:

Аликáнтъ ա. ալիքանտ սպանիական գինին:

Аликвóтная часть մաթմ. բաժանարար, որի վերայ մի թիւ առանց մնացորդի բաժանւում է. 5 есть а—ая часть числá 15.

Али́||фа, -фить տ. оли́||фа,– фить.

Алкá||ли մհ. չ. ալկալի կիզիչ մարմինը, հմմ. Кáли; **- лизáція** ի. ալկալիացում, կալիորում, **-лизи́ровать** (-рую-ютъ) ն. քիմ. ալկալիացնել, կալիորել. **-ли́ческій** ած. ալկալու, կալու: **-лóидъ** ա. ալկալօիդ կալեկերպ նիւթը:

Ал||кáніе չ. 1, քաղց, քաղցածութիւն. 2, տենչ, խիստ մեծ ցանկութիւն, փափագ. 3, հնց. պահք, պաս. **-кáтель** ա., **-кáтельница** ի քաղց զգացող,քաղցող այր կին. **-кáть** (-кáю-ютъ և áлчу,-—чуть) взал—, չ. 1, հնց. քաղցել, խիստ քաղց զգալ. 2, *чегó խիստ ցանկանալ, տենչալ, փափագել, ձգտել, նկրտել. а. тиши́ны,—богáтства.

Алкіóна ի. (յն.) աստղը. Յուլ աստեղատան մէջ (Եօթնաստեղանք-Pleïades) ամենավառ (երրորդ մեծութեան) աստղը (շշփոթել Альціóна բառի հետ):

Ал‖коголиза́ція ի. ալկոհոլիզացիա. 1, քիմ. ալկոհոլ, ոգիոտ, ոգի զտելը. 2, ամենամանր, ամենափոքրակ փոշի դարձնելը. -коголи́змъ ա. ալկոհոլականութիւն, արբեցողութիւն. ալկոհոլը 'ի չարը գործածելուց առաջացած հիւանդութիւնը. -коголизовать ն. (-зую-ютъ) 1, ալկոհոլացնել, ալկոհոլ խառնել ուրիշ հեղուկի հետ. 2, ամենամանր, ամենափոքրակ փոշի դարձնել. -кого́ликъ ա. ալկոհոլամոլ, արբեցող, գինեմոլ. նա որի առողջութիւնը հարբեցողութիւնից քայքայուել է. -коголистый ած. ալկոհոլով, ալկոհոլ պարունակող. -коголическій ած. ալկոհոլի. -коголометръ ա. ալկոհոլաչափ, ոգիաչափ, ոգու զօրութիւնը չափելու գործիք. -коголь ա. ալկոհոլ, գինու բարկ ոգի, ալկիլ:

Алкора́нъ ա. Ղուրան:

Ал‖ла ա. անհ., -ла́хъ ա. (արբ.) Ալլահ, Աստուած:

Аллеба́р‖да ի. (գերմ.) կացնաւոր, տապարաւոր նիզակ, տէգ (միջնադարեան զէնք). -дникъ ա. բս. Jris, հիրիկ (թրատերև բոյս). -дщикъ ա. հէլլէբարդակիր հետակ զինուոր:

Алле‖горическій ած. այլաբանական, այլախօսական. -горія ի. (յն.) այլաբանութիւն, այլախօսութիւն:

Ал‖легре́тто չ. անհ. (իտ.) երժ. չափաւոր-արագ (նուագելու եղանակ); -легри չ. անհ. (իտ.) ալլեգրի (զինակոչական, զբօսանքները վերջացնող). -легро չ. անհ. (իտ.) երժ. ալլեգրո. 1, ցոյց է տալիս, որ պիեսը կամ նորա մասը արագ պէտք է խաղացուի, աշխուժ. 2, արագ աշխոյժ, խաղացող պիեսը կամ իր մասը:

Аллейный ած. ծառուղու. а—ая дорога ծառուղի:

Аллема́ны ա. յ. Ալեմանացիք (հարաւային գերմանացիք):

Аллея ի. (ֆր.) ծառուղի, ծառամէջ ճամբայ, պուրակ:

Аллига́торъ ա. կնդ. ալլիգատոր Ամերիկեան կոկորդիլոսը, մշկառնեան:

Аллилуія ի. և չ. (եբր.) ալէլուիա, գովաբանեցէք Տէրը (Եհովային, Աստծուն):

Ал‖лодіальный ած. սեպհական, բուն, հայրենական, պապենական, ժառանգական. -ло́дъ ա. (գերմ.) բուն, հայրենական, ժառանգական, պապենական կալուածք:

Аллоку́ція ի. (լտ.) հանդիսաւոր բանախօսութիւն, ճառ (մանաւանդ որ պապը ուղղում է կարդինալների ժողովին):

Аллонжъ ա. (ֆր.) 1, քիմ. թորանօթի (արագի պղնձէ) կոնաձև կոթը. 2, վճռկ. մուրհակին կցած կամ կպցրած թերթը, յաւելուածը:

Алло‖патическій ած. այլաբուժական. -па́тія ի. (յն.) այլաբուժութիւն (այն եղանակը, որով մի հիւանդութիւն բուժում են այլաբնոյթ միջոցներով, որոնք հիւանդութեանը հակառակ ազդեցութիւն են առաջացնում. հակառակը տ. Гомеопа́тія); -патъ ա. այլաբոյժ. այլաբուժութեան հետևող:

Аллохро́итъ ա. (յն.) վառանների կարկեհան, նռնաքար, որից շինում են թեթև վազաներ, սկահակներ և զարդի այլ առարկաներ:

Аллю‖віа́льный ած. ողողային, ալիքից առաջացած, 'ջրաբերական'. а. наносъ; -вій ա. (լտ.) երկրբ. ողողում, ալիքից առաջացած հողը, շերտը, նստուածքը:

Аллю́зія ի. (լտ.) ակնարկութիւն:

Аллюръ ա. (ֆր.) ձիու գնացքը, ընթացքը, քայլուածքը, 'երիշը':

Алляно́й ռմկ. տ. Льняно́й.

Ал‖ма́зецъ, зца, -ма́зикъ ա. նւզ. ադամանդիկ, ալմաստիկ. -ма́зникъ ա. ադամանդավաճառ, ալմաստավաճառ. -ма́зный ած. 1, ադամանդի,—դէ, ալմաստի,—տէ. а. шпатъ, а—ая прозра́чность; 2, ականակուռ, ադամանդներով զարդարուած. а—ая табаке́рка; -ма́зчикъ ա. ալմաստագործ, ականագործ, գոհարավաճառ. -ма́зъ ա. հնք. ադամանդ, ալմաստ, գոհար, շողակն:

Алмандинъ տ. Альманди́нъ.

Алогизмъ ա. փիլ. այլատրամ, հակատրամաբանական դատողութիւն:

Алозоикъ ա. կնդ. Loxia leucoptera, կարմրափուշիկ խաչկտուցը:

Ал‖ои տ. Алоэ; -лоиный ած, հալուէի. а—ое де́рево, а. сокъ.

'Алость ի. ալութիւն, կարմրութիւն, բաց, պայծառ կարմրութիւն:

Ало́э չ. անհ. (յն.) բս. Aloë, հալուէ, սաբր:

Алтабасъ ա. հնք. ալտաբաս ոսկեթել կամ արծաթաթել փարչան, դիպակեղէնը:

Ал‖та́рный ած. 1, բագնի, զոհարանի. 2, սեղանի, բեմի. а. о́бразъ, а—ое украше́ніе, а—ая прегра́да; -та́рь, я ա. (լտ.) 1, զոհարան, բագին (կռապաշտների). 2, եկեղեցու բեմն իր սեղանով կամ զոհարանով. 3, *առհ. եկեղեցի, սրբավայր, կրօն. служитель а—я́ քահանայ, եկեղեցական պաշտօնեայ. принести́ же́ртву на *а. оте́чества.

Ал‖тей ա. բս. Althaea oficinalis, տուղտ.- -тейный ած. տուղտի. а. ко́рень տ. Алте́й.

Алты́‖нникъ ա. 1, տ. Алтынъ; 2, (алты́нница ի.) ժլատ, դծուծ, վաշխառու այր, կին.—нничать չ. դծուծութիւն անել, դծուծ ճանապարհով, ժլատութեամբ դրամ կուտակել, դրամ շահել. ագահաբար դրամ դիզել, կորզել. -нный ած. ալտընի, երեք կոպէկանոց. *շնչին, աննշան. -нщикъ, -нщица տ. Алтын‖никъ,—ница; -нъ ա. 1, հնք. ալտըն (3 կոպէկանոց հին ռուսական դահեկան). 2, առհ. աղքատիկ, խեղճուկ վաստակ, աշխատանք:

Алуа́тъ տ. Горла́чъ 2.

Алуча́ տ. Алыча́.

Аль‖фави́тный ած. այբբենական. -фави́тъ ա. (յն.) ալփաբէթ, այբբեն:

Алхи‖микъ ա. ալքիմիկոս. -ми́ческій ած. ալքիմիական. -мія ի. ալքիմիա (մետաղները ոսկու փոխելու կեղծ, կարծեցեալ արուեստը):

Алч‖ба́ ի. 1, քաղց, քաղցածութիւն, ուտելու տենչ. 2, *ընչաքաղցութիւն, անզուսպ տենչ, փափագ շահելու, հարստանալու, ագահութիւն, անյագութիւն. -ничать չ. ագահել, ընչաքաղց, շահախնդիր լինել. -ность ի. чего́, къ чему ագահութիւն, ընչաքաղցութիւն, անզուսպ շահախնդրութիւն. -ный ած. ագահ, անկուշտ, ընչաքաղց, խիստ շահախնդիր:

'Алый ած. (մաթ.) ալ, կարմիր, բաց կարմիր, պայծառ կարմիր:

Алы́‖ра, -ря հոր. կեղեքիչ, հարստահարիչ, գըրփիչ, ուրիշին թալանող, զրկող մարդ. որկրամոլ, խաբեբայ մարդ. -рить -рю-ря́тъ, չ. 1, խաբել, որկրամոլութիւն անել. -рникъ ա. ռմկ. -рница, -рщица ի. տ. Алы́ра.

Алыча́ ի. բս. Prunus instititicia, Անդրկովկասեան ալուչա կոչուած սալորը, որից բանջար են եփում:

Аль տ. 'Али.

Альбатро́съ ա. կնդ. Diomedea exulans, ձկընկուլ, դիոմեդ, ջրկոթան (թռչ.)

Аль‖бини́змъ ա. (լտ.) բժ. լնամորթութիւն սպիտակամաշկութիւն (մորթի և մազերի անբնական սպիտակութիւն հէնց ծննդից 'ի վեր). -бино́съ ա. -бино́ска ի. ալբինոս,—նոսուհի, լնա-

մարթ այր, կին:

Альби́тъ ա. Հնք. albite, ալբաքար, սպիտակա- [քար, նատրոնի ֆելդսպաթ:

Альбіо́нъ ա. Ալ՚բիոն (Մեծ Բրիտանիայի կամ Անգլիայի բանաստեղծական անունը). кова́рный А.

Аль|бо́мный ած. ալ՚բոմի. а—ые сти́шки ալբոմի համար նշանակուած, թեթև, կարճ ոտանաւորներ. -бо́мъ ա. (ֆր.) ալբոմ. 1, յիշատակամատեան, տետրակ, որի մէջ իբրև բարեկամական յիշատակ մարդիկ գրում են իրենց անունները, նկատողութիւններ, թեթև ոտանաւորներ, նկարներ. 2, մատեան, որի մէջ հաւաքում, ամփոփում են նկարներ, լուսանկարներ. 3, Հնց. ցուցակ ուսանողների (մեւդ համալսարանի ուսանողների անուանացուցակը):

Аль|бу́минный, -буми́новый ած. ալբումինի. а—ая бума́га առանձին տեսակ լուսանկարչական թուղթ. -буми́нъ ա. (լտ.) ալբումին, սպիտ, ձուի սպիտակուցը, ձուի սպիտակուցի նիւթը, ՚ընտ- [սպիտակ':

Альбу́мъ տ. Альбо́мъ.

Альвеоля́рные звýки (լտ.) ատամնափոսայքի, ատամնախորշային հնչիւններ (որոնք գոյանում են, երբ լեզուն հպւում է ատամների արմատների փոսիկներին):

Альгвази́ль ա. ալ՚վազիլ (ոստիկանական պաշ- [տօնեայ Իսպանիայում):

'Аль|ги է. յ. (լտ.) տ. Во́доросль.

Альдебара́нъ տ. Алдебара́нъ.

Алька́дъ ա. (արբ.) ալկադ (Իսպանիայում առանձին պաշտօնական անձ, պաշտօնեայ:)

Аль|ко́вный ած. ալքովէնի. -ко́въ ա. (արբ.) ալքովէն. 1, սենեակ, պատի մէջ շինած քունջ, խորշ, ուր դնում են մահճակալը. 2, մեծ սենեակը, դահլիճի առանձին, շքեղ վանդակապատով անջատած մասը, որ իբրև ննջարան է ծառայում:

Альмави́ва է. (իսպ.) ա՛լմավիվա ընդարձակ պատմուճանը, որ անցեալ դարի առաջին քառորդում գործածական էր:

Альмана́|хъ ա. (ֆր.) ալմանախ, տարեցոյց (գրականական շքեղ ժողովածու բազմազանի բովանդակութեամբ). -шникъ ա. ալմանախի հրատարակող. ալմանախի աշխատակից. -шный ած. ալմանախի,—խայի:

Аль|манди́новая шпинéль տ. Шпинéль; -манди́нъ ա. Հնք. grenat almandin, ազնիւ (արևելեան) կարկեհան, նռնաքար:

Альпака́ չ. անհ. ալպակա. 1, մի տեսակ ոչխար, որ խիստ ընտիր բուրդ ունի. 2, այդ ոչխարի բրդից պատրաստած դիպակը, որից կանանց շորեր են կարում:

Альпа́ри չ. (իտ.) 1 չ. անհ. վճռկ. թղթադրամի, արժեթղթերի շուկայական և խսկական գնի համահաւասարութիւնը. 2, ն. հաւասարութեամբ, համահաւասար գնով. платить а.

Аль|пі́йскій ած. Ալպեան, բարձր լեռնային. а—ая флóра; альпі́йская рóза բս. Rhododendron hirsutum, թաւոտ մրտավարդը. -пы ա. յ. 1, առհ. բարձր,—աբերձ լեռներ. 2, Ալպեան լեռները, Ալպ. լեռնաշղթան:

Альсе́кко չ. անհ. և ն. (իտ.) չորային պատանկարչութիւն (երբ ջրային գոյներով նկարում են ծեփած, բայց չորացած պատի վերայ. հակը. տ. Альфре́ско.)

Альта́нъ ա. (լտ.) բալկոն, պատշգամբ (երկենն [կտեր վերայ յօրինած):

Альтернати́ва է. (ֆր.) երկուսից մէկի ընտրութիւ]ը. двѣ а—ы երկու միջոց, եղանակ, ճանապարհ, որոնցից մինը ընտրելի է:

Альти|ме́трія է. (լտ.) բարձրաչափութիւն (գործնական երկրաչափութեան մի մասը). -ме́тръ ա. բարձրաչափ:

Аль|ти́стъ ա. -ти́стка է. 1, ալտ ձայնով երգող, ալտերգու, ալտերգչուհի. 2, ալտահար, ալտ մեծ ջութակի վերայ ածող այր, կին:

Альтруи́змъ ա. (ֆր.) փիլ. այլապաշտութիւն, այլասիրութիւն (հակը. տ. Эгои́змъ).

Альтъ, á և a (альты, óвъ յ.) (իտ.) երժ. ալտ. 1, թաւ ձայն, իգական կամ մանկական ցածր ձայն. 2, մեծ, խոշոր ջութակ:

'Альфа է. (յն.). ալֆա. 1, յունարէն այբը, *սկիզբ. 2,* (Յովհաննու Յայտնութեան մէջ) Յիսուս Քրիս- [տոս:

Альфави́тъ տ. Алфави́тъ.

Альфре́ско չ. անհ. և ն. (իտ.) խոնաւային պատանկարչութիւն (երբ ջրային գոյներով նկարում են ծեփած, բայց դեռ չչորացած, խոնաւ պատի վերայ, հակը. տ. Альсе́кко.)

Альціо́на է. (յն.) ալկիոն առասպելական թռչունը, որ խաղաղութեան, անդորրութեան նշանակն է. ծովի (Համ. Гальціона).

Алѣ́ть| չ. 1, կարմրել, կարմիր գոյնով պատուիլ, ալանալ. 2, տ. Алѣ́ться; -ся չ. հեռուից կարմրին տալ, կարմիր երևալ:

Алю|мині́й,-ми́нъ,-мі́й ա. Հնք. Aluminium, ալումինիոն, պաղլեղածին, պաղլեղեկ, բնալեղիկ. -ни́тъ ա. (ֆր) Հնք. Alun, պաղլեղ, պաղլեղաքար:

Аля́|поватость, -поватый փ. Оляпова|тость, —тый.

Ама|зо́нка է. (յն.) ամազոն. 1, առսպ. պատերազմիկ կանայք, որոնք ըստ առասպելի ապրում էին Սև ծովի ափերին առանձնացած. 2, առհ. պատերազմիկ, քաջ կինմարդ, հերոսուհի. քաջ ասպետուհի. 3, երկար զգեստ, որ ձի հեծնող կանայք հագնում են: -зо́нскій ած. ամազոնի,—նեան. а—ое пла́тье. Амазо́нскій ка́мень ֆելդսպաթ կամ կանանչ օրթոկլազ (ուղղահերձ քար):

Амаль|га́ма է. 1, ամալ՚գամա, սնդկադող, սնդիկի զանգուածն այլ մետաղի հետ. 2, * առհ. խառնուրդ. -гама́ція, -гамиро́вка է. սնդկադողելը, սնդկադողութիւն. -гами́ровать (-рую-ютъ) ն. 1, սնդկադողել, սնդկադող առաջացնել. սնդիկը այլ մետաղի հետ զանգել. 2, *առհ. խառնել, շաղախել:

Амана́тъ ա. (արբ.) ամանաթ, պատանդ:

Ама́нъ անհ. 1, (Թուրքիայի և Ասիայի կողմերում) խնայողութիւն, ողորմութիւն, ներում. 2, ժըլատ, գծուծ մարդ:

Амара́н|товый ած. աղուեսապոչ անթառամի. -тъ ա. բս. Amarantus, աղուեսապոչ անթառամը:

Амате́ръ ա. (ֆր.) սիրող, մի բանի սիրահար:

'Амба է. (լտ.) 1, լօտօյի և վիճակախաղի մէջ միանգամից երկու համարների դուրս գալը. 2, թղթախաղի ժամանակ միմեանց յետևից երկու [անգամ տանելը:

Амба́рго տ. Эмба́рго.

Ам|ба́рецъ, рца, ա. -ба́рикъ նւզ. պստիկ ամբար, շտեմարան. -ба́ришко ա. նկտ. մի վատթար, անպիտան ամբար, շտեմարան. -ба́рище ա. յւել. մի ահագին ամբար, շտեմարան:

Амбар|ка́ція է. (ֆր.) ռզմ. զօրքի տեղաւորելը նաւի վերայ, զօրքերի նաւ հանելը. հրետանու և այլ ռազմամթերքների նաւի վերայ բարձելը -ки́ровать (-рую-ютъ) ն. (ֆր.) ռզմ. զօրքերը նաւ հանել, նաւի վերայ տեղաւորել:

Амба́рникъ ա. մանրածառ (2—3 վերշօկ տրամագծով մատղաշ ծառերով) անտառ:

Ам'бáрный ած. ամբարի, շտեմարանի,—նական. амбáрное, аго չ. տ. Амбáрщина; **-бáрушка** ի. **-рчикъ** ա. Ռւզ. պստիկ շտեմարան, ամբար **-бáрщикъ** ա. 1, շտեմարանատէր, շտեմարանի վերակացու. 2, շտեմարաններ վարձով տուող. **-бáрщина** ի. Ռւզ. ըշտեմարանավճար, վճար, մաքս, որ շտեմարան վարձողից վերցնում էր. **-бáръ** ա. (պրսկ.) 1, ամբար, շտեմարան. хлѣбный а.; 2, տանին իրերի, ապրանքների պահեստարան, մթերանոց:

Амби||ціóнный ած. ռմկ. պատուախնդիր, զգայուն. **-ція** ի. պատուախնդրութիւն, պատուասիրութիւն, անձնասիրութիւն, ինքնասիրութիւն. вломиться въ а—ію վիրաւորուիլ, նեղանալ:

Амбóнъ ա. տպգր. ալթառ, որի վերայ շարած գրերը դնում են, որպէսզի դրաշարը սրբագրած թերթերն ուղղէ:

'Амбра ի. յամպար 1, կաշեղոտ ձկան ժայթքած ձիւթակերպ և անուշաբոյր հիւթը, որ լողում է ծովի երեսին. 2, *անուշահոտութիւն, անոյշ բուրմունք. отъ него́ пáхнетъ а—ой նորանից անոյշ հոտ է բուրում:

Амбразу́||ра ի. (Фр.) 1, Ճրտրգ. պատուհանի խոռոչը (սենեակի ներսի կողմից). 2, ամրոցկ. հրապատնէշի, ամրոցի պատի մէջ ծակ, անցք, որի մէջ դրած է հրաղէնը. 3, ծովգ. պտոյտ եկող աշտարակի մէջ ծակ, անցք հրաղէնի համար. **-рный** ած. ամբրազուրի,- զուրային:

Ам||брé չ. անհ. 1, վճռկ. յամպար անուշահոտ խոր, օծանելիք. 2, ռմկ. առհ. անուշահոտութիւն, բուրմունք. **-бровый** ած. յամպարի, անուշահոտութեան:

Амбро||зи́ческій, -зія տ. Амвро||зи́ческій,-зія.

Амбулатó||рія ի. 1, հիւանդանոց երթեւեկ հիւանդների համար. 2, վերոյիշեալ հիւանդանոցի բժշկութեան եղանակը. **-рный** ած. 1, շարժուն, փոխադրելի. 2, բժ. երթեւեկ հիւանդների. а—ая лѣчéбница; 3, * амбулатóрныя фóрмы болѣзней հիւանդութեանց այնպիսի ձևեր, որոնցով բռնուածները չեն պառկում, այլ յաճախում են հիւանդանոցը:

Амбушюръ ա. (Фр.) 1, ծայր, բերան (փողի, սրինգի և այլն). 2, փողի, նուագելու գործիքի բերան առնելու եղանակը:

Ам||вóнный ած. ամբիոնի, բեմի. **-вóнъ** ա. (յն.) 1, եկեղեցու ամբիոնը, բեմը 2, առհ. բարձր տեղ, բարձրութիւն, բարձր նստարան. сáни съ высóкимъ а—омъ, բարձր տաշտով (փորով) [սահնակ:

'Амвра տ. 'Амбра.

Ам||врози́ческій ած. ամբրոսիայի, ամբրոսեան. **-врóзія** ի. (յն.) ամբրոսիա. 1, դիցաբ. ամբրոսիա աստուածների կերակուրը. 2, անուշահոտ խէժ, բալասան, օծանելիք (հների). 3, բս. Ambrosia, տ. Козы́ль-травá.

Америкá||нецъ, нца ա. **-нка** ի. ամերիկացի,—կուհի. **-ни́змъ** ա. ամերիկականութիւն (այն առանձնայատկութիւնը, որ ստացել է անգլիական լեզուն Ամերիկայում). **-нскій** ած. Ամերիկայի,—կական: Америкáнскіе орѣхи Բերթոլէնի (Bertholletia excelsa) ծառի պտուղները, ‘Բրազիլեան ընկոյզներ‘, Ամերիկեան ընկոյզներ:

Аме||ти́стовый ած. ամեթիստի, մեղեսիկի. **-ти́стъ** ա. Ֆր. améthyste, մեղեսիկ, ամեթիստ:

Амигдали́нъ ա. քիմ. նշիտ, դառն նշի մէջ գտնուող բիւրեղածնային նիւթը:

Ами́нь Ե. 1, ամէն, ճշմարիտ, ճշմարիտ է. 2, (խրխ անէծք.) Ами́нь, ами́нь, разсы́пься չքացիր, կործանուիր. 3, ами́нь, ня ա. ռմկ. վերջ, վախճան. отдавáть а. ամէն ասել, ամէն պատասխանել:

Аміáн||товый ած. ամիանտի, կտաւաքարի. **-тъ** ա. Ֆր amiante, ամիանտ, կտաւաքար, լեռնակտաւ:

'Амка ի. մանկկ. շուն, շնիկ:

Аммiá||къ, -чный տ. Аммоніá||къ,—чный.

Аммони́ты ա. յ. 1, հնէաբ. Ammonites, քարածոյ խոյեղջիւրներ, ամոնեղջիւրներ, 2, ամոնիտ կակղամորթերը:

Аммо||ніáкъ ա. (յն.) քիմ. ամմոնիակ, անուշադրակ, աւշակ, օշակ. **-ніáчный** ած. ամմոնիակի, օշակի, անուշադրի. **-ній** ա. քիմ. աւշակածին:

Амни́стія ի. (յն.) ամնիստիա. 1, ընդհանուր մոռացում, ներում, թողութիւն քաղաքական յանցանքների. 2, մոռացման, ներման թուղթը. 3, փոխադարձ հրաժարում պատերազմից յետոյ հաշտուած ազգութեանց՝ այն բոլորից, ինչ կարող է առաջուայ թշնամական գործողութիւններից հետեւնել:

Амортизáція ի. (լտ.) հանգցնելը, մարելը. а. дóлга, докумéнта պարտքի, թղթի ոչնչացնելը:

Амор||фи́змъ ա. Ֆր. անձեւութիւն, կանոնաւոր բիւրեղացեալ ձևի բացակայութիւնը. (հակը տ. Кристаллизáція). **-фи́ческій, -фный** ած. Ֆր. և քիմ. անձև, ոչ բիւրեղացեալ. а. порошóкъ.

Амплификáція ի. (լտ.) Ճրտս. ճոռոմաբանութիւն, ‘ընդլայնումն‘:

Амплуá չ. անհ. (Фр) դերասանական դերերի ընտրութիւնը, տեսակը. а. старикóвъ.

Ампу||таціóнный ած. անդամահատական,—հատութեան. **-тáція** ի. (լտ.) վիրբ. անդամահատութիւն. **-ти́ровать** (-рую-ютъ) ն. (Фр.) վիրբ. անդամահատել, մարմնի վիրաւոր կամ փտակուած անդամը, մասը կտրել:

Амулéтъ ա. (լտ.) ամուլէտ, թալիսման, պահպանողական հմայք, ‘գիր‘:

Амуни́||ція ի. (գերմ.) զմկգ. զինուորական պիտոյքներ, սպառազինութեան, զինամթերութեան իրեր (շորեղէն, հրաղէն. մաղախ, պատրոնդաշ և այլն). **-чикъ** ա. զինամթերութեան իրերի պահեստարան. **-чный** ած. զինամթերութեան իրերի. а—ыя вéщи,—дéньги.

Аму́||риться (-рюсь-рятся) ժղվ. հեգն. փոխադարձաբար սիրահարուիլ, փոխադարձ սիրով, խանդով կապուիլ միմեանց հետ. **-рный** ած. 1, սիրային. 2, аму́рное я́блоко, բս. Solanum lycopersicum, ոսկեխնձոր (սիրախնձոր, տոմատ, լոլիկ, ոսկեմրուկ, տճկ. թամաթէս). **-рчикъ** ա. Ռւզ. 1, Կուպիդոն սիրային աստծու մանրանկար պատկերը. 2, սիրուն մանուկ. **-ръ** ա. (Фр.) 1, Կուպիդոնի պատկերը, սիրոյ նշանակը. 2, սիրային աստուած, սէր. սիրային յարաբերութիւն, սիրահարութիւն. «Клáра велá себя примѣрно..., аму́ровъ никаки́хъ..., да и гдѣ съ ея гóрдостью!» 3,* խիստ գեղեցիկ, սիրուն անձ: [դանի:

Амфи́бія ի. կնդ. Amphibia. երկակենցաղ կեն-

Амфи||бóлія ի. տրմբ. երկմտութիւն, երկդիմութիւն, տարակուսանք, (դատողութիւն, որ առաջանում է միենոյն խօսքի այլեայլ նշանակութեանը գործածելուց) **-бóлъ** ա. Ֆր. amphibole, ամփիբոլ (հնմաքար, երկաքար?)

Амфи||брáхій, -врáхій ա. (յն.) տաղչփ. եռվանկանի ոտն, որի միջի վանկը երկար է (շեշտուած է). ◡—◡, օր. По нѣбу||полу́но||чи áнгелъ||летѣлъ,

Амфи||театрáльный ած. ամփիթատրոնական. а—

оe устройство; -театръ ա. (յն.) ամփիթատրոն. 1, հների կրկէսը, շրջանաձև կամ կիսաշրջանաձև շինութիւնը յաջորդաբար բարձրացող աստիճաններով, որոնց վերայ տեղաւորւում էին հանդիսականները. 2, թատրոնի, դահլիճի (կիսաշրջանաձև) յետևի մասը միմեանից յետևից աստիճանաբար բարձրացող աթոռների շարքերով:

Амфитріонъ ա. (Ամփիտրիոնի անունով) հիւրասէր, ադուհացով մարդ. հիւրընկալ, ասպնջական:

'Амфора ի. (լտ.) ամփորա (երկու ունկերով նեղ ճտով. մեծ անօթ, որի մէջ հները գինի, իւղ և այլ հեղուկներ էին պահում):

Ана||баптизмъ ա. կրկնակնունքների աղանդը. -баптистъ ա. (յն) կրկնակնունք (աղանդաւոր, որ ընդունում է հասակաւորների կրկնակի մկրտութիւնը):

Анабасъ лазящій կնդ. Anabas scandens, մագլցող վերելուկը, ցամաքաձուկը (որ երկար ապրում է ցամաքի վերայ և, ինչպէս ասդում են, մինչև անգամ ծառերի վերայ է ելնում):

Ана||грамма ի. (յն.) անագրամա, տառափոխութիւն նոյն բառից մի ուրիշ բառ ստանալու համար, օր. Римъ և миръ. Ѣсть և сѣть. -грамматистъ ա. տառափոխող, անագրամաներ շինող:

Анаколутія ի. (յն.) ճրտս. անհետևողականութիւն, անկապ, առանց կապակցութեան, յօդաւորութեան լինելը:

Ана||креонтикъ ա. Անակրէոնեան բանաստեղծ, Անակրէոնի հետևորդ. (Անակրէոնը հելլէն քնարերգու բանաստեղծ էր, որ գլխաւորապէս գրում էր սիրոյ և գինու մասին երգեր). -креонтическій ած. Անակրէոնեան. քնարերգական, ուրախ. а--ая ода, а—іе стихи.

Аналавъ ա. (յն.) անալաւ, կրծկալ (քառանկիւնի պաստառ, որի վերայ նկարած են Փրկչի խաչելութիւնն և չարչարանքները և որը կրում են կուսակրօնները իրենց կրծքերի վերայ):

Анал||гезія, -гія ի. (յն.) անզգայութիւն, ցաւ զգալու անընդունակութիւնը, ընդարմացում:

Аналекты ա. յ. ծաղկաքաղ, գրականական, մատենագրական ժողովածու, հատընտիր քաղուածք:

Ана||лизировать** (-рую-ютъ) ն. (ֆր.) 1, վերլուծել, բնալուծել, ամբողջն իր բաղադրիչ մասերի վերածել. 2, վերլուծել, քննել, հետազօտել, իմանալ, հասկանալ. -лизъ ա. (յն.) անալիզ. 1, վերլուծում, բնալուծում, բաղալուծում, տարրալուծում. а. химическій; 2, տրմբ. անալիզ (մտածողութեան եղանակ, որով բարդ երևոյթները վերլուծելով հանում են պարզին, ընդհանուրից հանում են մասնաւորին. հակադր. տ. Синтезъ). 3, վերլուծութիւն, քննութիւն. զննութիւն. грамматическій. логическій. психологическій а. -литика ի. անալիտիկա 1, մաթմ. հնդ. ալգեբրայի գործադրութիւնը երկրաչափութեան մէջ. 2, տրմբ. մտածողութեան տարրերի և օրէնքների վերլուծութիւնը. 3, քիմ. որ և է նիւթի տարրալուծութիւնը, բնալուծումն. -литикъ ա. վերլուծող, տարրադատող, վերլուծական եղանակին, մեթոդին հետևող. -литическій ած. վերլուծական, վերլուծող, տարրադատող. а—ая геометрія,— химія.

Анало||гическій ած. 1, հանգիտական, նման, համապատասխան. а—ое содержаніе; 2, հանգիտութեան, նմանութեան, միօրինակութեան մեթոդի վերայ հիմնուած. -гичный ած. տ. Аналогическій 1.

Аналогій ա. (յն.) եկղ. գրակալ:

Ана||логія ի. (յն.) անալոգիա, հանգիտութիւն. 1, նմանութիւն, նմանօրինակութիւն, համապատասխանութիւն (առարկաների, երևոյթների). 2, տրմբ. նմանութեան, համապատասխանութեան մեթոդով եզրակացութիւն, - փակում, սահմանափակում:

Аналой տ. Аналогій.

Анаморфозъ ա. (յն.) այլատարազ, այլանդակ պատկեր, նմանութիւն:

Ана||насный, -насовый ած. անանասի, արքայախնձորի. -насъ ա. բս. Ananassa sativa, անանաս, արքայախնձոր:

Ана||пестическій ած. անապեստի. -пестъ ա. (յն.) տաղչփ. անապեստ, եռվանկանի ոտն. որի վերջին վանկը երկար է (շեշտուած է). ◡ ◡ —, օր. я увялъ|| и увялъ||. навсегда||, навсегда.

Анаподиктическій ած. (յն.) տրմբ. անապացուցանելի, որ չէ կարելի ապացուցանել. а—ія положенія.— заключенія.

Ан||архистъ ա. -архистка ի. անիշխանական,—ուհի. -архическій ած. անիշխանական, անիշխանութեան. -архія ի. (յն.) անիշխանութիւն, խառնաշփոթութիւն:

Анастомозъ ա. (յն.), կզմխ. խառնումն, բերանակցութիւն (անօթների, երակների):

Ана||томикъ տ. Анатомъ; -томировать (-рую-ютъ) ** ն. 1, դիահատել (դին, դիակը գիտնական նպատակով ճղել, բացել, կտրատել). 2, *գիտնականօրէն վերլուծել, քննել. -томить (-млю-мятъ) տ. Анатомировать, -томическій ած. դիահատական,—հատութեան. а. кабинетъ,—музей.—препаратъ; а. театръ դիահատարան. -томія ի. (յն.) անատոմիա, կազմախօսութիւն, անդամազննութիւն գործարանաւոր մարմինների. մեզ կենդանիների ներքին կազմութեան գիտութիւնը. микроскопическая а. տ. Гистологія; патологическая а. հիւանդաբանական անատոմիա. пластическая а. թանձրացեալ անատոմիա (գեղարուեստագէտների համար) -томъ ա. կազմախօս, անդամագէտ.

Анахоретъ ա. (յն.) միայնակեաց, անապատակեաց,—կան, ճգնաւոր:

Анахро||низмъ ա. (յն.) 1, ժամանակագրական սխալ, վրիպակ. «վերաժամանակութիւն». 2, *ապաժամ, իր ժամանակի ոգուն անհամապատասխան, ներհակ գործ, երևոյթ. -ническій ած. ապաժամ, իր ժամանակի ոգուն անհամապատասխան, հին, փտած:

Ана||ѳема ի. (յն.) 1, անաթեմա, նզովք, բանադրանք (եկեղեցական). 2, առհ. անէծք, նզովք. предать кого а—ѣ նզովել, անիծել: Ахъ, ты! а.! ռմկ. ա՜յ դու նզովեալ, անպիտան. -ѳематствовать, -ѳемствовать, (-ствую-уютъ) չ. նզովել, անիծել, բանադրել. -ѳемскій ած. անպէտք, անպիտան, զզուելի, նողկալի, զզուելին, նզով- [քի արժանի:

Анбаръ Հնդ. տ. Амбаръ.

Анвелопа ի. (ֆր.) ամրոցև. նախապատնէշ, գլխաւոր պատնէշը պաշտպանող առաջին շէնքը:

Анга||жементъ ա. (ֆր.) 1, հրաւէր, հրաւիրելը. վարձելը (դերասանի՝ թատրոնական բեմի համար). 2, առաջարկութիւն, հրաւէր (օրիորդին պարելու). -жировать** (-жирую-ютъ) ն. (ֆր.) 1, հրաւիրել, վարձել (դերասանին՝ թատրոնական բեմի համար). 2, պարահանդէսին օրիորդին առաջարկել, հրաւիրել պարելու:

Ан||гелика ի. բս. Angelica, խմի (բոխնի?),

հրեշտակարմատը. -гелóчекъ, чка ա. նւզ. հրեշտակիկ, սիրելի, պաշտելի. -гелъ ա. (յն.) 1, հրեշտակ. 2, *հրեշտականման, սիրելի, պաշտելի, սրանչելի, երկնային անձ եմ իր. á. кротости — доброты,— невинности հեզութեամբ, բարութեամբ, անմեղութեամբ հրեշտակի նման. անզուգական. 3, մէկին համանուն սուրբ կամ սրբուհի, պատրոն. день á—а кого-либо այս ինչ մարդու անուանակոչութեան օրը. поздрáвить съ á—омъ մէկի անուանակոչութեան տօնը շնորհաւորել; áнгелъ тьмы չար, խաւարային ոգի. морскóй á. կնդ. Squatina angelus, շնաձկան մի տեսակը. -гельскій ած. հրեշտակային, *սրանչելի. հիանալի. áнгельскія сйлы երկնային զօրութիւնք. զուարթունք. á. óбразъ ա. վարդապետութիւն. կուսակրօնութիւն. բ. կուսակրօնի սքեմը. á—ое ймя մկրտութեան անունը. -гельчикъ տ. Ангелóчекъ.

Ангидрйдъ ա. հնք. anhydrite, 1, անհիդրիտ, ջրաքար. 2, քիմ. անջուր, ջրային տարրերից զուրկ նիւթ:

Ангіолóгія ի. բժ. անօթաբանութիւն.—խօսութիւն:

Анг‖лéзъ ա. (ֆր.) (որ ամեն կոչ. Françoise) հնց. պար, որ պարում էին ձեռքին բռնած ուսապան կամ մարակ. -лизйровáть (-зйрую-ютъ) ** ն. (սեռ.) 1, անգլիացնել, անգլիականացնել (բառ անգլիական ձեւ տալ, տուտը չինել. սարքել). 2, ձիու ձիու, շան ագին ետրել, ինչպէս անում են անգլիացիք. -ликáнскій ած. անգլիկանական. а—ая цéрковь, а. пáсторъ; -лицйзмъ ա. (ֆր.) անգլիաբանութիւն. -личáнинъ ա. 1 (յ. англичáне,-áнъ) 1, անգլիացի. 2, անգլիական գործածած լոգայի նաւ. -личáнка ի. անգլուհի. -личáночка նւզ. սիրուն, սիրահար անգլուհի. -лійскій ած. անգլիական, Անգլիայի. áнглійская болѣзнь բժ. ա. rhachitis, ռախիտեքութիւն, ոսկրախտեքութիւն. բ, քաղաքթաղ ջերմախտ. á—ая соль անգլ. աղ (որ գործ է ածւում բժշկութեան մէջ իբրև լուծողական). á шрифтъ տպագր. անգլ. գիր (որ գործ է ածւում յառաջաբանների և այլ երկրորդական մասեր շարելու ժամանակ). -ломáнія ի. անգլիամոլութիւն. -ломáнъ ա. -ломáнка ի. անգլիամոլ այր, կին. -лосаксóнскій ած. անգլօսաքսոնական. -лосáнсы ա. յ. անգլօսաքսոններ,—սաքսոնացիք. -лофóбство չ. ատելութիւն դէպի անգլիացիները:

Ангóрская козá կնդ. Capra angorensis, Անգորեան այծ. а кóшка, կնդ. Catus angorensis, Անգորեան կատու:

Ан‖дáнте չ. ածհ. և Տ. (իտ.) երժ. 1, յորդոր, չափաւոր, հանդիստ, ոչ արագ նուագելը, նուագելու եղանակը. 2, այդպիսի եղանակով նուագելի տիեստն. слýшать прекрáсное а., -дантйно չ. ածհ. փոքր ինչ աւելի արագ, քան Андáнте-ն է:

Анд‖рéева травá, -рéевка ի. բս. Veronica spicata, համկաւոր բերենիկէն (կաղ, կաղի ծաղիկ). рéевскій ած. Անդրէասի. А. óрденъ սուրբ Անդ. նահատակի շքանշանը. А. крестъ ա. զգմզ. ռուսական և անգլիական պատերազմական դրօշակը, բ. ատղձգ. խաչաձև (×) շրջանակ. -рéевщина ի. անքահանայականների աղանդի մի տեսակը. -рéевъ крестъ, -рéй-травá տ. Андрéева -травá; -рéцъ, á տ. Ондрéцъ; -рéяновщина ի. անքահանայականների աղանդի մի տեսակը:

Андрогйнъ ա. (յն.) 1, երկսեռ, կրկնասեռ, արու և էգ անհատ (որ թէ՛ արական և թէ՛ իգական գործարաններ ունի). 2, կանացի, կնոջ պէս:

Андромéда ի. աստղ. Անդրոմեդ հիւսիսային համաստեղութիւնը. 2, բս. Andromeda, Անդրոմեդը, Լուղանոնը (Հաւամգիներից):

Андрóнъ ա. 1, ջուր հանելու աման, անօթ, թիակ. 2, андрóны. овъ յ. անդրոն եռկանիւ սայլը յետևից ձողիներով, որոնց վերայ խուրձ, խոտ են բարձում. *подпускáть а—ы. սուտ խօսել, պարծենալ. *а—ы ѣдутъ (ասում են, երբ մէկը անտեղի վիճում, հայհոյանում է):

Ан‖дрофáгъ ա. (յն.) մարդակեր. -дроцéй ա. (յն.) բս. ծր և է բոյսի տեսակն փոշանօթների միաւորութիւնը, միախին անեյր:

Аневрйзмъ ա. (յն.) բժ. շնչերակի ընդլայնումն:

Анек‖дóтецъ. тца ա. նզ. պատիկ անեկդոտ, զրուցախօսութիւն, մանրավէպիկ. -дотйстъ ա. անեկդոտներ պատմող, զուարճախօս. -дотйческій ած. անեկդոտի, զուարճախօսութեան. -дóтъ ա. (յն.) 1, անեկդոտ, պատիկ. հետաքրքիր պատմութիւն. զուարճախօսութիւն, մանրավէպ. 2, երևակայական, մտացածին, հնարովի դէպք, պատմութիւն:

Ане‖мйческій ած. սակաւարիւնութեան, արեան սակաւութեան -мйчный ած. սակաւարիւն. արեան պակաս -мія ի. (յն.) բժ. անարիւնութիւն, սակաւարիւնութիւն. արեան սակաւութիւն:

Ане‖мографъ ա. (յն.) ֆիզ. հողմագիր. հողմաչափ (գործիք, որ ինքնաբերաբար նշանակում է քամու ուղղութիւնը, արագութիւնը, ույժը). -мометръ ա. (յն.) հողմաչափ. քամաչափ. -мóнъ ա. բս. Anemone, պուտ (ծաղկաբուկ, պառւկ կատուի ծաղիկ):

Анеройдъ ա. (յն.) ֆիզ. մի տեսակ ծանրաչափ:

Анесте‖зія ի. (յն.) բժ. անզգայութիւն. -тйческій ած. անզգայութեան. а—ія срéдства անզգայացնող, ընդարմացնող միջոցներ:

Ани‖лйновый ած. անիլինի. а—ыя крáски: -лйнъ ա. քիմ. անիլին նիւթը, զուգութիւնը, որ ստացւում է քարածխային ձիւթից և գործ է ածւում այլևայլ ներկերի վերայ:

Ани‖мйзмъ ա. (Ֆր.) փիլ. հոգեականութիւն (վարդապետութիւն, ըստ որի հոգին է կեանքի աղբիւրը և մարմնի բոլոր գործողութեանց պատճառը). -мйстъ ա. հոգեական. նա որ կեանքն և մարմնի բոլոր գործողութիւնները հոգուն է վերագրում. мóзо Տ. (իտ.) երժ. անիմօզօ (նշանակում է խիստ եռանդուն կերպ):

Анй‖сный, -совый ած. անիսոնի. -совка ի. 1, անիսոնի օղի. 2, մի տեսակ դեղձակ. բայց համաւէտ և անոյշ խնձոր. -съ ա. բս. Pimpinella Anisum, անիսոնը:

Ан‖йтъ բս. Anethum graveolens. սամիթ:

'Анка ի. կնդ. Corvus monedula. ճայեակ:

'Ан‖керные часы́ խարսխաւոր ժամացոյց (խարսխի ձև ունեցող սարքերով, որը ճօճանակի շարժողութիւնը ետանաւորում է). -керокъ, рка նւզ. ծովգ. պատիկ տակառ 3—10 վեդրօ պարունակութեամբ, որի մէջ իւղ. օղի. քացախ, այլ լցրած մնում. և այլ ապշարեղէններ են տանում. իսկ պատիկ նաւերի վերայ խմելու ջուր են պահում. -керочный ած. 1, խարսխի. 2, անկեր տակառիկի. -керштóкъ ա. (գեռմ.) ծովգ. խարսխաձող (որ խարսխի կոթի հետ ուղիղ անկիւնով, խաչուելով, թոյլ չէ տալիս, որ խարիսխը իր երկու թաթերով էլ տափակ նստի յատակի վե-

բայ)։ -керъ ա. 1, (հոլ.) 1, տակառիկ, պատիկ տակառ. 2, հնգ. հեղուկների, մնւղ. գինու չափ ($2\frac{3}{4}$—$3\frac{1}{4}$ վէդրօ). 3, ժամացոյցի մէջ խարսխաձև գործիք, որ ճօճանակի շարժողութիւնը կանոնաւորում է. 4, այդպիսի գործիքով ժամացոյց։ II, որմախարիսխ, որմակապ, կամարակապ (երկաթի ձող, նիգ, երկու ծայրերին ծակերով, որը անցկացնելով պատերի եւ կամարների միջից և ծայրերի ծակերը փակիչներ դնելով, պատի, կամարի մասերը միմեանց հետ ամրացնում են)։

'Анкилóзъ ա. (յն.) բժ. ոսկրազօդութիւն (ոսկրների միմեանց հետ կպչելը, աճելը, որով մարմնի անդամներն անշարժ են դառնում)։

Ан||нали́стъ ա. (ֆր.) տարեգիր. -нáлы ա. յ. (լտ.) տարեգրութիւններ։

Аннéксія ի. (լտ.) միացնելը, ձուլելը (նուաճած երկրի)։

'Аннинскій ած. Աննայի. 'А. óрденъ, 'А—ая лéнта.

А||нóдный ած. անօդի. -нодъ ա. ֆիզ. անօդ (դրական ելեկտրական հոսանքի ուղին, հակակը. տ. Катóдъ).

Аномá||лія ի. (լտ.) անկանոնութիւն, արտառոցութիւն, այլատարազութիւն, տարօրինակութիւն. -льный ած. անկանոն, տարօրինակ, այլատարազ, արտասովոր։

Ано||ни́мный ած. անանուն, ծածկանուն, առանց ստորագրութեան. а—ое письмó, а. áвторъ: -ни́мъ ա. 1, անանուն, ծածկանուն անձ. 2, գիրք, որի հեղինակի անունը անյայտ է։

Анормáльный ած. անբնական, տարօրինակ, անկանոն, արտասովոր։

Ансáмбль ա. (ֆր.) ներդաշնակութիւն, համերաշխութիւն (մնւղ. բեմական խաղի, դերի մէջ)։

Антаблемéнтъ ա. (ֆր.) ճրտրպ. սեան խոյակի վերայ կառուցած շէնքը, որ բաղկացած է երեք մասից. բովթարից (архитрáвъ), ծոփորից (фризъ) և պսակից (карни́зъ.)

Антаго||ни́змъ ա. (յն.) անտագոնիզմ (հակառակ էութիւն, հակամարտում, հակառակ, թշնամական ներգործութիւն, ազդեցութիւն.) -ни́стъ ա. հակառակորդ, ախոյեան, ոսոխ։

Антá||лъ ա. անտալ (մաջառական գինու տակառ 60 շիշ պարունակութեամբ.) -льный ած. անտալի։

Антанаклáзъ ա. (յն.) ճրտս. ձև, դարձուածք, որի մէջ միևնոյն խօսքը տարբեր նշանակութեամբ կրկնուած է։

Антáпка ի. հրացանի խողովակակալը (ղօնդաղի) տակից օղակներ, որոնցից կապուած է փոկը (пéревязь).

Ант||аркти́ческій ած. (յն.) հակարջային, հարաւային, հարաւային բևեռի մօտ գտնուող (հակակը. տ. Аркти́ческій); -éки ա. յ. (յն.) հակաբնակներ (որոնք միևնոյն միջօրէի տակ և հաւասարաչափ հեռու հասարակածից, բայց հակառակ կիսագնդերում են բնակւում)։

Антери́дій ա. բս. բեղմնաւորութեան գործարանը, ամանը։

Антецедéнтъ ա. (ֆր.) 1, նախընթաց, յառաջընթաց դէպք, սովորոյթ, հանգամանք, որ կարող է եզրակացութեանց հիմք ծառայել. 2, փիլ. որ և է գործի նախընթաց պատճառը, շարժառիթը։

Анти́|| նխդ.(յն.) հակա—. -дилювiáльный ած. անջրհեղեղեան, փտած, հնացած. а—ыя мысли; -дóръ ա. (յն.) եկղ. օրհնած հաց, նշխար, որ սուրբ պատարագից յետոյ ժողովրդին բաժանում են. -дóтъ ա. (յն.) 1, հակաթոյն. 2, Եկատերինէ կայսրուհու յայտնի շարադրութեան վերտառութիւնը (ուրեմն 'եղծ', 'հերքում')։

Анти́||ква ի. (լտ.) սովորական տպագրական գիրը. -квáрій ա. (լտ.) 1, հնաժողով, հնախոյզ, հնագէտ. 2, հնավաճառ, հին գրքեր վաճառող. -квáрный ած. հնավաճառի. а—ая книжная торгóвля հին գրքերի առուտուր։

Анти||клерикáлъ ա. հակակղերական. -клерикáльный ած. հակակղերական. -кри́тика ի. (յն.) հակառակ քննադատութիւն, ընդդիմախօսութիւն. -кри́тикъ ա. հակառակ քննադատ, ընդդիմախօս. -крити́ческій ած. 1, ընդդիմախօսութեան,—խօսական. 2, հակաքննադատական, քննադատական օրէնքներին հակառակ. 3, բժ. անկայած ճգնաժամին հակառակ (երևոյթ). ճգնաժամին հակառակ, խոչնդոտ (գործողութիւն). -культýрный ած. հակակուլտուրական, հակաքաղաքակրթական. -санитáрный ած. հակառողջական. а—ое состоя́ніе.

Анти́къ ա. (լտ.) 1, հնութիւն (մնւղ. դասական դեղարուեստական, ինչպէս արձաններ, կիսարձաններ, քանդակագործութիւն, վազա, դրամ և լն.) 2, առհ. հին, հնացած բան. 3, հնամօլ, փտած գաղափարների տէր մարդ (այս մտքով արտաս. áнти́къ). 4, գունաւոր քարի վերայ փորագրած դասական պատկեր։

Анти||лóпа ի. -лóпъ ա. կնդ. Antilope, քարայծ, լեռնայծ, այծեղջերու։

Антимакассáръ ա. անտիմակասար (պատիկ սփռոց, որ մաքրութեան համար փռում են բարձի և կահկարասիների վերայ)։

Антими́нсъ ա. (յն.) եկղ. փոխ-սեղան (քառանկիւնի օրհնած պաստառ, վերան նկարած Փրկչի թաղումը, առանց որի նոյն իսկ եկեղեցում չէ կարելի պատարագ մատուցանել, մինչդեռ նորանով բացօթեայ էլ կարելի է պատարագ մատուցանել)։

Анти||мóній ա. տ. Сурьмá; -монный ած. ծարրաքարի, ծարիրի, а—нное винó փսխողական գինի։

Антинóмія ի. (յն.) 1, հակասութիւն (դատական կամ յայտնի, որ նկատւում է միևնոյն օրէնսգրքի զանազան յօդուածների մէջ). հակաօրինութիւն. 2, փիլ. անտինոմիա (այն բնական և անխուսափելի հակասութիւնները, որոնց ըստ Կանտի հանդիպում է տեսական բանականութիւնը, հէնց որ փորձում է բնութեան բոլոր երևոյթներն ըմբռնել իբրև ամբողջութիւն. այսպէս անսահմանականութեան գաղափարին հակասում է սահմանափակութեան գաղափարը, ազատութեան գաղափարին հակասում է անհրաժեշտութեան գաղափարը, ևյն։)

Анти||пáпа ա. հակաթոռ, ապօրինի պապ. -пáсха ի. (յն.) Նոր կիւրակէ, կրկնազատիկ, յետզատկեան շաբաթ (Θоми́на недѣ́ля).

Анти||пати́ческій, -пати́чный ած. անհամակրելի, անդուրեկան, հակակրելի, անհաճոյ. -пáтія ի. (յն.) 1, հակակրանք, դարշանք, զզուանք. 2, անհամակրելի, անդուրեկան, անհաճոյ, զզուելի բան, առարկայ. это моя а; -пири́нъ ա. (յն.) բժ. անտիպիրին (ջերմութիւնը ամոքող, պակասեցնող միջոց.) -(и́)пóды ա. յ. (յն.) հակոտնեաներ, երկրագնդի ճիշտ միմեանց հակադիր կողմերի բնակիչները (որոնց ոտքերն ուրեմն իրար դէմ են ուղղուած, քանի որ երկիրս գնդաձև է). -поэти́ческій ած. հակաբանաստեղծական. -септи́ческій ած. (յն.) բժ. հականեխական, որ փտելուն, և-

տալուն արդեւք է լինում. a. спо́собъ лѣче́нія; -симити́змъ ա. հակասեմիտականութիւն, հակահրէականութիւն. -сими́тскій ած. հակասեմիտական, հակահրէական. сими́тъ ա. հակասեմիտական, հակահրէական. -скіи, іевъ ա. յ. (յն.) հակաստուերաւորներ (որոնց ստուերներն ուղղուած են հակառակ կողմեր, -դէպի հարաւ և դէպի հիւսիս, որովհետև նրքա ապրում են հասարակածի հակառակ կողմերում). -(и)строфа́ է. (յն.) փոխադարձ ստրօֆա (հելլենական խօրի մի մասի պարերգը, որ ճիշտ համապատասխանում էր строфа́-ին). առանձին բաժանմունք հին հելլենական քնարերգական բանաստեղծութեան մէջ: -(и)теза է. (յն.) հակաթեզիս, հակադրութիւն. 1, երկու հակառակ մտքեր ներկայացնող, միմեանց հակադրող ճարտասանական դարձուածք, պարբերութիւն. 2, փիլ. հակառակ դատողութիւն. դատողութիւն, որ թէզիսին հակառակ, ներհակ է (հէգէլ.) -фебри́нъ ա. (յն.) բժ. հակատենդային միջոց. -фо́нный ած. փոխի, փոխերգի. -фо́нъ ա. (յն.) եկղ. փոխ, փոխերգ, փոխասացութիւն. -хло́ръ ա. անտիխլոր, հակախլոր (մի և է նիւթ, որ ծառայում է տարկայի վերայ մնացած խլօրը ջնջելու):

Анти́христъ ա. (յն.) եկղ. 1, նեռ, սուտ Քրիստոս. 2, առհ. չար, հակառակող Քրիստոսի վարդապետութեանը, աւետարանին:

Антихто́ны, ա. յ. (յն.) հակաերկրայիններ, հակաբնակներ (նրքա, որոնք լայնութեան համապատասխան ատրճաններ տակ, բայց հակառակ կիսագնդերի վերայ են ապրում):

Антиципа́ція է. (լտ.) 1, իրւ. վաղաժամ վճար, պայմանագրի վաղաժամ 'ի կատար ածելը. 2, փիլ. կանխակալ դատողութիւն, կանխ. հասկացողութիւն տարկայի մասին. 3, երժ. տ. Предъёмъ.

Ан||ти́чность է. հնութիւն, դասական հնութիւն, դասակ. հնութեան փայլ, գեղեցկութիւն. -ти́чный ած. հին, դասական. *չքնաղ. չնաշխարհիկ, [պատուական, հիանալի:

Антіа́ръ տ. Анча́ръ.

Анто||логи́ческій ած. ծաղկաքաղի, — ղակն. a—ое стихотворе́ніе հելլենական ծաղկաքաղութեան ոգով գրած պատիկ բանաստեղծութիւն. -ло́гія է. (յն.) ծաղկաքաղ,—ութիւն, 1, X դարում հին յունական բանաստեղծների երկերից կազմած ծաղկաքաղը. 2, առհ. փոքրիկ, ընտիր (քնարական) բանաստեղծութիւնների ծաղկաքաղ, ժողովածու:

Анто́||ніева, -ніевская пи́ща (Անտոն ճգնաւորի անունով) Անտոնեան կերակուր, աղքատիկ պասուց կերակուր, չորաքեկ հաց. -новка է. -новское я́блоко չ. միտեսակ խնձոր, կանանչ-դեղնագոյն խնձոր. -новъ ого́нь (ֆր.) բժ. Անտոնեան հուր, խլրդենի, կեղցաւ:

'Антра́ксъ ա. 1, չարաչար, քայքայող պալար, կուճղ, ուռեցք, խոց. 2, ածշ. (տես Եզեկ. 10,9) կարկեհան:

Антра́ктъ ա. (ֆր.) անտրակտ. 1, թատր. երկու արարուածի կամ պիեսաների մէջ տեղի ունեցող ընդմիջումը, ժամանակամիջոցը. 2, երժ. երաժշտական պիեսաներ, որոնք երգւում են անտրակտի ժամանակ. 3, առհ. ընդմիջում, ընդհատում, за э́тимъ послѣ́довалъ a.

Антра||це́нъ ա. քիմ. քարածուխի ձիւթի մէջ գտնուող ածխաջրածինը. -ци́тный, -ци́товый ած. անթրացիտի. -ци́тъ ա. (յն.) հնք. անթրացիտ ածխածնաշատ քարածուխը:

Антраша́, չ. անհ. (ֆր.) ոտքերը խաչելով, միմեանց խփելով վեր թռչելը, վեր ցատքելը:

Антре́ ա. անհ. (ֆր.) մուտք (թատրոնի, խոհանոցի):

Антре||ко́тъ ա. (ֆր.) անտրէկոտ, 'կողամէջ', (արջառի կողքից պատրաստած տապակած). -прене́ръ ա. (ֆր.) նախաձեռնող, ձեռնարկող, մասն. թատրոնական գործի. -при́за է. (ֆր.) թատրոնական ձեռնարկութիւն, նախաձեռնութիւն. -со́ль է. և ա. -со́ли յ. (ֆր.) անտրեսոլ, կիսայարկ (խիստ բարձր սենեակները տախտակով երկու յարկերի են բաժանում, որոնցից ներքինը կոչւում է entresol). «тётушка отда́ла весь антресо́ль въ моё распоряже́ніе.» -со́льный ած. անտրեսոլի, կիսայարկի:

Антреша́ տ. Антраша́.

Антропо||логи́ческій ած. մարդաբանական,—խօսական. -ло́гія է. (յն.) մարդաբանութիւն,—խօսութիւն. -оло́гъ ա. մարդաբան,—խօս. -метри́ческій ած. մարդաչափական. -ме́трія է. (յն.) մարդաչափութիւն. -морфи́змъ ա. (յն.) փիլ. մարդացնում, մարդակերպում, մարդկային կերպարանք, յատկութիւններ վերագրելը (թէ բնութեան երևոյթներին, առարկաներին և թէ մնաց. աստուածութեանը). -морфи́ческій ած. մարդակերպութեան, -пати́змъ ա. (յն.) մարդակրութիւն (աստուածութեանը մարդկային կրքեր վերագրելը). -фа́ги ա. յ. (յն.) մարդակերներ:

Антура́жъ ա. (ֆր.) իրը շրջապատող պարագաները:

'Анты ա. յ. (ֆր.) 1, ճրտր. հին շինութեանց պատերի քառանկիւնի սիւները. II, (ըստ VI -VII դարու բիւզանդական և լատինական մատենագիրների) անտեր (արևելեան սլաւոններ):

Анфи||ла́да է. (ֆր.) 1, սենեակների երկար շարք, որոնց դռները կամ կամարները միևնոյն գծի վերայ են գտնւում. 2, ռզմգ. կրակ, թընդանօթաձգութիւն թշնամու ամրութեանց կամ զօրքերի շարքերի վերայ. войска́ подве́рглись a—ѣ непрія́тельской батаре́и—ենթարկուեցան թշնամու մարտկոցի լայնատարած, լայնաձիգ կրակին. -ла́дный ած. լայնաձիգ, լայնատարած, թշնամու ամրութեանց, զօրագծի վերայ ուղղուած. a. ого́нь, — вы́стрѣлъ. -ли́ровать (-рую -ютъ) ն. (ֆր.) ռզմգ. թշնամու ամրութեանց կամ զօրքերի շարքը ռմբակոծել, հարուածել:

Анча́ръ ա. բս. Antiaris toxicaria, l'Upas de Java, ուպասենի:

Анчо́||усный, -усовый ած. անձրուկի. -усъ ա. կենդ. Engraulis encrasicholus, անձրուկ, (տճ. անչաբալըղը):

'Аншефъ ա. (ֆր.) սպարապետ, վերին հրամանատար (ըստ Պետրոս մեծի կանոնադրութեան), տ. Генера́лъ-аншефъ.

'Аншлагъ ա. (գերմ.) պաշտօնատուն, ուսումնարանի ևուրիշ հիմնարկութիւնների մէջ կախած ազդը, յայտարարութիւնը:

'Аншпугъ ա. (հոլ.) ծովգ. փայտէ լծակ, տախտակ, որոնցով ծանրութիւն են բարձրացնում:

Анъ շ. բայց, սակայն. «Косноязы́ченъ: хо́четъ одно́ сло́во промо́лвить, анъ выхо́дитъ друго́е».

Аню́тины гла́зки բս. Viola tricolor, եռերգունեան մանուշակը:

Ан||ѳоло́гіонъ ա. (յն.) ժամագիրք տօնի (յոյն եկեղեցու). -ѳра́ксъ տ. Антра́ксъ.

Аони́ды է. յ. Աոնեան քոյրերը (մուսաներ): A.

Карамзина Կարամզինի 1796—99 թ. հրատարակած գրականական ժողովածուն (ալմանախը):

Аористъ ա. (յն.) քերկ. աորիստ, անցեալ կատարեալ (պատմական):

Аорта ի. կզմխ. մայր շնչերակ. -тáльный, -тный -товый ած. մայր շնչերակի:

Апагогическое доказательство չ. փիլ. կողմնակի, միջնորդական ապացոյց (որ ցոյց է տալիս, թէ գլխաւոր, ապացուցանելի առաջարկութեան ժխտելով կատարեալ անհեթեթութեան կը յանգենք):

Апанажъ ա. (ֆր.) ապանաժ (անշարժ կալք, կալուածք, որ ուղղութեամբ նշանակուած է արքայական տան անդամներին):

Апартаментъ ա. (ֆր.) 1, սենեակ. 2, տան բնակարանի մէջ շքեղ կահաւորուած սենեակներ:

Апатитъ ա. հնք. apatite, ապատիտ (լաբրու-սեղ քար):

Апатическій, -тичный ած. անզգայ, անտարբեր, թմրած, սառը, ծոյլ, դանդաղ: Апатически մ. անզգայաբար, ծուլութեամբ, անտարբեր կերպով. -(а)тія ի. (յն.) անզգայութիւն, թմրութիւն, անտարբերութիւն, սառնութիւն, ծուլութիւն:

Апеллировать (-рую-ютъ) չ. (ֆր.) 1, բողոքել, գանգատուել, բողոք, գանգատ տալ (բարձրագոյն դատաստանական ատեանին ընդդէմ ստորինի). 2, *դառնալ, դիմել մէկին, մի բանի, բան առաջ հաստատելու. կգայ կանչել. а. къ здравому смыслу; -лянтъ, -ляторъ ա. գանգատաւոր, -ляціонный ած. 1, բողոքող, գանգատաւոր, 2, որի դէմ բողոքել, գանգատուել կարելի է. а—ая просьба, — жалоба գանգատ, բողոք բարձրագոյն (ատեանի ընդդէմ ստորինի). а. судъ դատարան, որի դէմ բողոքել կարելի է. -ляція ի. (լտ.) բողոք, գանգատ, որ ներկայացնում են բարձրագոյն դատաստանական ատեանին ընդդէմ ցածրագոյնի:

Апель ա. (ֆր.) 1, զգմգ. նշան, կոչ, որ փողի կամ թմբուկի միջոցաւ զօրքին տրւում է հաւաքուելու. 2, պայմանական խօսք կէզել խաղալու ժամանակ. 3, առ. կոչ, կանչ. «приучите собаку дома къ послушанію, къ апéлю, къ слову: назадъ!».

Апельсиновый ած. նարնջի,—ջից. նարնջենու. а. вкусъ,—сокъ,—компотъ; а—ое дерево նարնջենի. -синчикъ ա. պստիկ նարինջ, -синщикъ ա. նարնջավաճառ. -синъ ա. բս. Citrus aurantium, նարինջ: [սում, բուրացնում:

Аперцепція ի. (լտ.) փիլ. գիտակցական ըմբռ-

Апланатъ ա. լուսնկ. ապլանատ (օբեկտիւ մի):

Аппликатура ի. երժ. մատնաշարժութիւն, մատնադրութիւն (երաժշտական գործիքի վերայ մատները շարժելու, խաղացնելու արուեստը):

Апплике չ, անհ. (ֆր.) ապլիքէ. 1, հասարակ մետաղից արծաթով պատած կամ ոսկած իր, առարկայ. 2, այս նպատակին ծառայող արծաթը:

Аплодированіе չ. ծափահարութիւն, — հարում. -ровать (-рую-ютъ) չ, кому (ֆր.) ծափահարել. а. актеру, оратору; -сменты ա. յ. (ֆր.) ծափահարութիւն,—թիւններ:

Апломбъ ա. (ֆր.) ինքնավստահութիւն, անձնապաստանութիւն, խիզախութիւն:

Апогей ա. (յն.) աստղ. 1, տարեկէրութիւն (լուսնի շրջանառութեան մէջ ամենահեռաւոր կէտը երկրագնդից). 2,* գագաթնակէտ, ծայրայեղ, բարձրագոյն աստիճան. быть въ а—ѣ своей славы, своего величія; болѣзнь достигла своего а—я.

Аподиктическій ած. փիլ. համոզիչ, անկասկածելի, անհերքելի, անժխտելի, անդրաժեշտ. а—ое сужденіе (հկդր. տ. Проблематическій).

Апокалипсисъ, -липсъ ա. Յայտնութիւն Յովհաննու. а—липсъ лицевой կամ въ картинахъ նկարազարդուածները մէջ խորտ յարգի գրքը. -липтическій ած. Յովհաննու Յայտնութեան:

Апокрифическій ած. 1, պարականոն. а — ія книги; 2, սուտ, սնայօդ, կեղծ, անհարազատ, անվաւեր. -(о)крифъ ա. (յն.) պարականոն գիրք (Աստուածաշնչի մէջ). առ. անվաւեր, առասպելական պատմութիւն, սրբազրութիւն:

Аполлоновка ի. կնդ. Acredula caudata, երկայնապոչ երաշտահաւը:

Апологетика ի. (յն.) եկղ. ջատագովութիւն. -логетическій ած. ջատագովութեան,—գովական. -логетъ ա. ջատագով. -логистъ ա. ջատագովող, խօսքով կամ գրչով ուրիշին պաշտպանող. -логія ի. ջատագովութիւն, պաշտպանութիւն խօսքով կամ գրչով. Тертулліанова а. христіанства; -(о)логъ ա. (յն.) վէպական (կենդանիների մասին) առակ, այլաբանական պատմութիւն:

Апоплексія ի. (յն.) բժ. կաթուած, հարուած. -плектикъ ա. 1, կաթուածահար. 2, տրամադիր կաթուածահարութեան: -плектическій ած. կաթուածական,—ծահարութեան. а. ударъ.

Апортъ I. ա. օպորտօ խոշոր խնձորը. II. մջ. (ֆր.) բեր (ասում են շանը):

Апостазія ի. (յն.) ուրացութիւն, հաւատուրացութիւն, ուրացողութիւն, -постатъ ա. ուրացող, հաւատուրաց, ուրացօղ:

Апостеріорный ած. (լտ.) փիլ. փորձառական, փորձից, փորձառութիւնից առաջ եկած. а—ое понятіе,—сужденіе, — знаніе (հկդր. տ. Апріорный).

Апостолъ ա. (յն.) 1, առաքեալ Յիսուսի Քրիստոսի: 2, եկղ. գիրք, մատեան, որ պարունակում է Գործք Առաքելոց և առաքեալների թղթերը. ճաշոց. 3, առ. առաքեալ, օտար երկրում, միջակայքում քարոզող. -льникъ ա. եկղ. գոյների քօղը, գլխի ծածկոցը, որ յետեւից և առջեւից մինչև գօտկատեղն է հասնում. -льскій ած. առաքելական. а—ая проповѣдь; а—ая скатерть ուռած, քամուց փքուած առագաստ, -льство չ. առաքելութիւն:

Апострофа ի. (յն.) ճրտս. դարձուածք, խօսք, որով ճարտասանը դառնում է մի և է բացակայ անձի կամ առարկայի. -фъ ա. ապոստրոֆ նշանը ('), որ ցոյց է տալիս ձայնաւորի յապաւումը, օր. д'Аламберъ, Іоанна д'Аркъ:

Апофеегма ի. (յն.) հակիրճ, սրամիտ և իմաստալից խօսք, ասացուածք:

Апоѳема ի. (յն.) մաթմ. ապոթեմա (ուղղահայեաց, որ շրջանի կենտրոնից թողած է նորա մէջ նկարած բազմանկիւնու մի և է կողմի վերայ):

Апоѳеоза ի., -зъ ա. (յն.) 1, աստուածացնում, աստուածների շարքը դասելը, դիցակարգութիւն (որ հները անում էին նշանաւոր մարդկանց հետ). 2, հնց. հանդիսաւոր գովաբանութիւն, ներբող, դրուատիք (անձի կամ դէպքի). 3, թատր. հեղինակի յիշատակին նուիրուած բեմական վերջին տեսարանը, պատկերը:

Аппаратъ ա. (լտ.) ապարատ, գործիք. *а. кри-

тическій որ և է քննադատական հրատարակութեան վարիանտները, բացատրութիւնները եւ ժողովածուն, մասը։ [թեք կողմը։

Апп|арéль ի. (ֆր.) ամրոցի. հողապատնէշի

Аппель տ. Апéль.

Ап|петúтный ած. ախորժակ գրգռող, քմահաճ, ախորժելի, դուրեկան, գրաւիչ, հրապուրիչ. -петúтъ ա. (ֆր.) 1, ախորժակ, ուտելու տենչ, ցանկութիւն, ‹իշտահ›. 2, փխբ. առհ. ձգտում, նկրտում, մեւր. զգայական։

Апрáкосъ ա. անհ. (յն.) ըստ աւուր պատշաճի դասաւորուած աւետարանը կամ ճաշոցը։

Апріо|ристúческій, -рный ած. (լտ.) փխբ. փորձից, փորձառութիւնից անկախ, կանխական, ընկղնական. а- -рныя понятія, — идéи,— суждéнія,— знáнія (հկռկը. տ. Апостеріóрный).

Апро|бáція ի. (լտ.) հաճութիւն, հաւանութիւն. -бовáть (-бýю-ютъ)** ն. (լտ.) հաճութիւն, հաւանութիւն տալ, հաստատել, վաւերացնել։

Апрóши, ей ի. յ. (ֆր.) ռզմկ. մերձենալու անցքեր, ճանապարհներ, խրամներ, որ. պաշարող թշնամին փորում, շինում է աստիճանաբար խըրնամու ամրոցին մօտենալու նպատակով։

Ап|рѣль ա. (լտ.) ապրիլ, հին հայոց ահեկան ամիսը. -рѣльскій ած. ապրիլի,—լեան. а—ая погóда ապրիլեան *անհաստատ եղանակ։

Апсúда ի. 1, աստղբ. այն երկու միմեանց հակադիր կէտերից իւրաքանչիւրը, որոնք որոշում են. ա, երկրագնդին ծայրայեղ հեռաւորութիւնը կամ մօտաւորութիւնը արեգակից. բ, լուսնի ծայրայեղ հեռաւորութիւնը կամ մօտաւորութիւնը երկրագնդից. 2, ճրտրպ. շինութեան կիսաշրջանաձև դուրս պրծած մասը, օր. հայոց եկեղեցիների յետևի մասը, որի մէջ շինած են բեմն և սուրբ սեղանը։

Аптé|ка ի. դեղատուն, դեղարան. -карскій ած. դեղագործի. а. счётъ հեգն. երկար, ‹գոլամայ› հաշիւ. -карша ի. դեղագործի կինը. դեղատան տիրուհի. -карь ա. դեղատան տէր, դեղատուն պահող կամ դեղագործ. դեղատան կառավարիչ. -чка ի. նւզ. պստիկ (շարժուն) դեղատուն. -чный ած. դեղատան. а. фунтъ դեղատ. գրուանքայ (=84 մսխալի)։

Ара|бéска ի., -бéскъ ա. (յաճխ. յ. арабéски, -сокъ և -сковъ) 1, արաբական նաշխեր, նկարներ, մանրանկարներ, քանդակներ, ‹արաբէնկք›, որոնցով արաբները զարդարում էին իրենց շինութիւնների պատերը, առաստաղները, կամարները և որոնք խառնիխուռն ներկայացնում էին տերևներ, ծաղիկներ, բոյսեր, մարդիկ, կենդանիներ և այլն. 2, *պստիկ ժողովածու, յօդուած բազմազիմի բովանդակութեամբ. -бúзмъ ա. արաբաբանութիւն. -бúстъ ա. արաբաբան, արաբագէտ. -бка ի. սև. զործծ. տ. Аравúтянка; -бскій ած. արաբական. а. языкъ, а—ая лóшадь, а—ія цúфры; -бъ տ. Аравúтянинъ.

Арáва տ. Орáва.

Аравúтянинъ ա. (յ. аравúтяне,-нъ), -вúтянка ի. արաբացի,—բուհի. -вíйскій ած. Արաբիայի, արաբական. аравíйская кáмедь, gummi arabicum, արաբական խէժ։

Арá|ковый ած. արաղի. а. зáпахъ. -къ ա. արաղ, Արևելեան Հնդկաստանում բրնձից և այլ պտուղներից քաշած օղին։

Арáлія ի. բս. Araliа, արալենի (բաղեղ)։

Арамéйскій ած. արամական, ասորական, Ասորեքի, Ասորոց Միջագետքի. а. языкъ, а—ая литератýра.

Аранжи|ровáть ** (-жúрýю-ютъ) ն. (ֆր.) 1, սարքել, յարդարել, կազմել, կարգաւորել. 2, երժ. աւելի բարդ երաժշտական պիեսան պարզի վերածել, դաշնակել. -рóвка ի. երժ. դաշնակելը (երաժշտական պիեսայի առանձին զործիքի համար մշակելը, յարմարացնելը)։

Арá|пка տ. Негритянка; -пникъ ա. (լեհ.) հարապնիկ որսի մտրակը. -пскій ած. մավրի, նեգրի. -(á)пчéнокъ, нка ա. (յ. арáпчáта,-тъ) պըստիկ մավր, նեգրի տղայ. -пчикъ ա. նւզ. 1, պըստիկ մավր, նեգր. 2, սևագոյն ազաւնի. 3, մի տեսակ սևամորթ, լերկ, անսապ շուն. 4, մի տեսակ պստիկ, կարճը, մուգ-կանանչ խնձոր. 5, հոլանդական ոսկի. մաշուած, սըբուած ոսկեդրամ. -пъ ա. -пка ի. մավր,—ուհի, նեգր,—ուհի, մավրիտանացի այր կին։

Арахнолóгія ի. (յն.) սարդաբանութիւն, գիտութիւն սարդերի մասին։

Арбá ի. (յ. áрбы, áробъ) (թրք.) արաբա (երկանիւ սայլ մի)։

Ар|балéта ի. -балéтъ ա. (ֆր.) ռզմկ. հնց. արբալետ աղեղը, աղեղնաղէսը (միջնադարեան, նետաձիգ քարաձիգ կմ գնդակաձիգ)։

Ар|битрáжъ ա. (ֆր.). 1, վճռկ. շահագիտական հաշիւ, ընտրութիւն. 2, *դատաստան, իրաւարարութիւն. подвéргнуть вопрóсъ междунарóдному а—у; -бúтръ ա. (ֆր.) միջնորդ, հաշտարար, իրաւարար, դատաւոր (ոչ դատական ընտրութիւն ունեցող գործերի)։

Ар|бýзецъ,зца, -бýзикъ ա. նւզ. պստիկ ձմերուկ, մեղրապատիկ. -бýзишко ա. նխտ. վատ, անպիտան ձմերուկ. -бýзище ա. յւել. մի ահագին ձմերուկ, մեղրապաղ. -бýзный ած. ձմերուկի, մեղրապաղի. -бýзъ ա. բս. Cucurbita citrullus, ձմերուկ, մեղրապաղ։

Арга|лéй ա. -лú ա. անհ., կնդ. Ovis argali, արգալի ասիական վայրենի ոչխարը։

Арга|мáкъ,á ա. (թուրք) 1, արգամակ խոշոր և արագընթաց նժոյգը. 2, * (аргамáчúха ի.) բաձրահասակ, նիհար ու անճոռնի տղամարդ, կինարմատ. -мáчій, чья, чье ած. արգամակ նժոյգի. -мáчникъ ա. 1, հնց. արգամակ նժոյգի տէրը, պահողը. 2, (այժմ) արգամակի սիրահար. ձիու վաճառող, շահագէտ. -мáчный ած. արգամակի. а—ая побѣжка. [կեան արծաթ, ճենարծաթ։

Аргентáнъ ա. (լտ.) հնք. նոր արծաթ, ալպա-

Аргонáвтъ ա. 1, արգոնաւորդ. 2, կնդ. Argonauta Argo արգոնաւորդ գլխոտանին։

Аргу|ментáція ի. պատճառաբանութիւն, փաստաբերութիւն. -мéнтъ ա. (լտ.) տրմբ. և ճրտս. ապացոյց, ապացուցութեան պատճառ, հիմք։

'Аргу|съ ա. (յն.) 1, առսպ. Արգոս հարիւրաչքանի պահապանը. 2, *արթուն, անքուն, անվրէպ դէտ, պահապան, հսկող. 3, կնդ. Argus giganteus, հսկայ փասիանը. 4, կնդ. Lycaena argus, արգոս թիթեռնիկը. -совый ած. *խիստ հսկող, արթուն, աչալուրջ. а. надзóръ.

'А|редское дѣло, չար, սատանայական, դիւային գործ. -редъ ա. զառամեալ, գաժան, զազրալի ծերուկ. գծուծ, անտանելի մարդ. չար կախարդ. разсыпься á—омъ, да не доставáйся скáредамъ (առած) թող կորչի իմ ստացուածքը, միայն թշնամուն չմնայ. 'Аредовы вѣки երկարակեցութիւն։

'Аредь ի. հնց. քոր, քոս։

Арéна ի. (լտ.) 1, հին հռոմէական ամփիթատրոնի կամ կրկէսի միջավայրը, որ ծածկուած էր աւազով և որի վերայ տեղի էին ունենում սուսերամարտութիւններն և այլ ներկայացումներ. կռուանոց, մրցարան. 2, առհ. ասպարէզ, հրապարակ. գործելու, մրցելու ասպարէզ:

Арен||да ի. 1, կապալ. отдáть въ а—у կապալով տալ, 'իջարով' տալ. взять въ а—у կապալով, 'իջարով' վերցնել. 2, կապալավճար, կապալագին. 3, աքրունական կալուածք, հող, որ թագաւոր կայսրը բարեհաճում էր որեւէ ժամանակով մէկին յանձնել. **-дáрь,я** ա. արենդատ. նոյն. սև. գործ. տ. Арендáторъ; **-дáторскій** ած. կապալառուի. **-дáторъ** ա. կապալառու, 'իջարադար'. **-дный** ած. կապալի,— յային. а—ая плáта կապալավճար. а. доходъ, а—ыя дéньги, а—ое производство աքրունական հողի, կալուածքի արդիւնքը, որ թագաւոր կայսրը բարեհաճում է որեւէ ժամանակով մէկին յանձնել. **-довáніе** չ. կապալով տալը կամ վերցնելը. **-довáть** (-дýю-ютъ), заар-, ն. կապալով, 'իջարով' տալ կամ վերցնել:

Ареóмéтръ ա. հեղուկների տեսակարար կշիռը չափելու գործիք, անօթաչափ:

Ареопáгъ ա. (յն.) 1, Արիսպագոս, Աթէնքի հնագոյն բարձրագոյն դատաստանական ատեանը, որ նիստում գումարւում էր Արէսի Աստուծոյ նուիրուած բլուրի վերայ. 2, առհ. դատարան, դատաստանական ատեան:

Аре||стáнтскій ած. կալանաւորի, ձերբակալուածի. а—ія рóты տ. Дисциплинáрныя рóты; а р е с т á н т с к а я, ой ի. բանտատուն, կալանք, արգելանոց. **-стáнтъ** ա. **-стáнтка** ի. կալանաւոր, ձերբակալուած, արգելական այր, կին. **-стный** ած. կալանաւորութեան, ձերբակալութեան. а. домъ; **-стовáніе** չ. կալանաւորելը, ձերբակալելը. **-стовáть** (-стýю-ютъ)** заар—, ն. 1, կալանաւորել, ձերբակալել. 2, խօս. կայքը գրաւել, 'վեր դրել', կնքել, բռնել. **-стъ** ա. (լտ.) 1, կալանաւորութիւն, ձերբակալութիւն. находиться подъ а—омъ կալանաւորութեան մէջ գտնուիլ, посадить подъ а. կալանաւորել. выпустить изъ-подъ а—а կալանաւորութիւնից արձակել. 2, խօս. պարտապանի շարժական կայքի կնքումը, գրաւումը. 3, առհ. արգելում, գրաւում:

Аржа||нéцъ,нцá ա. բս. Phleum. 1, փղէնի դաշտաց. 2, ճիլ. **-никъ, á** ա. 1, տ. Аржанéцъ; 2, բս. Plantago lanceolata, նրբատերև ջղախոտ:

Аржанóй տ. Ржанóй.

Ар||замáсецъ,сца, ա. Արզամասս գրականական ընկերութեան անդամ. **-замáсскій** ած. Արզամասի,—մասեան. А—ое óбщество; а. гусь Արզ. սագ (որով Ժուկովսկին գրականական երեկոյթներին հիւրասիրում էր հրաւիրուածներին). **-замáсъ** ա. Արզամաս յայտնի գրականական ընկերութիւնը Պետերբուրգում (1815—1818 թ):

Аристáрхъ ա. (Արիստարքոս քերականի անունով) քննադատ, մեծ. ուսումնական քննադատ. բծախնդիր, մեկնամաղծոտ, յամառ, սահմանափակ մտքի տէր քննադատ:

Аристо||кратизмъ ա. արիստոկրատականութիւն. **-кратическій** ած. արիստոկրատական. **-кратія** ի. (յն.) արիստոկրատիա. 1, ազնուապետութիւն, ազնուական, արտօնեալ դասակարգերի կառավարութիւնը. 2, պետութեան մէջ բարձրագոյն, երեւելիների, արտօնեալների դասակարգ. 3, որ և է դասակարգի բարձրագոյն, փարթամ, առանձնալի խաւը. а. церкóвная, купéческая, литератýрная; а. умá, талáнта, գերազանց, հանրաճանօթ խելք, տաղանդ. **-крáтство** չ. 1, արիստոկրատութիւն. 2, հ—ք. արիստոկրատների ժողով, խումբ. **-крáтствовать** (-ствую-ютъ) չ. արիստոկրատութիւն անել, արիստոկրատ ձեւանալ. **-крáтъ** ա. արիստոկրատ. 1, ազնուապետական կառավարութեան անդամ կամ կողմնակից. 2, պետական բարձրագոյն, իշխանական դասակարգին պատկանող. 3, հնոզն. (**аристокрáтка** ի.) արիստոկրատ ձեւացող այր, կին:

Аристóнъ ա. երաժշտական գործիք մի:

Ари||метика ի. թուաբանութիւն. **-метикъ** ա. թուաբան. **-метическій** ած. թուաբանական. а—ая задáча; **-мографія** ի. թուագրութիւն, թուագրական հանելուկ:

Аріáднина нить Արիադնեան թել (Արիադնայի անունով, որ Թէզէոսին օգնեց լաբիրինթոսից դուրս գալու, տալով նորան թելի կծիկը). առաջնորդ, ուղեցոյց. Вѣнéцъ Аріáдинъ աստղ. համաստեղութիւն մի հիւսիսային կիսագնդում:

Аріáнинъ ա. (յ. аріáне —áнъ) Արիոսեան (Քրիստոսի աստուածութիւնը ժխտող, ուրացող հերետիկոս):

Аріергáрдъ տ. Арьергáрдъ.

Аріéта ի. երժ. պարզ, թեթև մեղեդի:

'Аріи, іевъ ա. յ. արիացիք, արիական ցեղեր (հնդեւրոպական մեծ ցեղի ասիական ճիւղը, Հնդկաստանի և Պարսկաստանի ամենահին բնակիչները):

'Арійка ի. նւզ. պարիկ մեղեդի:

Арій||скій ած. արիական. а—ое плéмя; а—іе языки արիական լեզուներ, մնւզ. սանսկրիտ և զենդ լեզուները. **-цы**, цевъ տ. 'Аріи.

'Арія ի. (իտ.) երժ. մեղեդի:

'Ар||ка ի. (լտ.) կամար. **-кáда** ի. (Ֆր.) կամարաշարք, կամարակապ գալէրէա, սրահ:

Аркáдъ ա. մի տեսակ ամառնային, քաղցրահամ խնձոր:

Ватер||клозéтный, -клозéтовый ած. վատէրկլօզէտի. -клозетъ ա. (անգլ.) վատէրկլօզէտ (ջրով սարքած արտաքնոց, ուր բնական կարիքը կատարելուց յետոյ ջուրը բաց են թողնում, որն և սրբում տանում է անմաքրութիւնները):

Ватер||линéйный ած. ջրային գծի. -лúнія ի. (հոլ.) ծովգ. ջրային գիծ (նաւի շրջապատի այն գիծը, ցոր միայն բարձած նաւը կարող է սուզուել ջրի մէջ). -пáсный ած. կատերպասի, հարթաչափի. -пáсъ ա. (հոլ.) կատէրպաս, հարթաչափ. -прýфъ ա. (անգլ.) անթափանցիկ, անջրանցիկ վերարկու. -тáли, ей ի. յ. (հոլ.) ապարանդակներ, որոնցով ջրով լիք տակառներ և այլ ծանրութիւններ են բարձրացնում նաւի վերայ. -шлáнгъ ա. (հոլ.) ծովգ. ‹ջրի օձ› (կաշուայ կմ պարուսինեայ խողովակ). -штáгъ ա. (հոլ.) առագաստակալ бýшпритъ-ը ներքևից ամրացնող ձիգթած պարանը կմ շղթան:

Вати||канскій ած. Վատիկանի, -նեան. -кáнъ ա. (լտ.) Վատիկան (Հռոմի պապի ապարանքներն և աթոռավայրը). *պապական իշխանութիւն, կառավարութիւն:

Ватлóчекъ, чка տ. Василёкъ.

Вáтманская бумáга վատմանեան թուղթ (անգլիական, որ գործ է ածւում նկարչութեան [մէջ):

Вá||тный, -точный ած. բամբակէ, -կի:

Ватрý||ха, -шка տ. Вотрý||ха, -шка.

Ва||тъ ա. կնդ. Raia batis, լերկ ներկէս կմ կատուաձուկ: [յափուկ (խոտ մի):

Вáу անհ. բս. Reseda luteola, դեղնագոյն

Вá||фельникъ ա. վաֆէլագործ, վաֆէլավաճառ. -фельница ի. 1, վաֆէլագործ, վաֆէլավաճառ կինարմատ. 2. վաֆէլներ թխելու երկաթեայ գործիք -фельный ած. վաֆէլի. в—ое тѣсто; -фля ի. (գերմ.) վաֆէլ (քառանկիւնի, բջիջաւոր քաղցրահամ բլիթ, փափուկ կարկանդակ):

Вах||лáкъ, á ա. ռմկ. 1, պալար, ուռեցք, եւլունդ, խիլ կենդանու մարմնի. 2, խիլ, ուռեցք ողորնու (կեչու). 3, անհոգ կերպով հագնուած կմ սանտրուած մարդ. նոյնպէս յիմար, անշնորհք մարդ. -лáчка ի. 1, ռմկ. յիմար, անշնորհք կինարմատ. 2, բս. Cirsium lanceolatum, ճանապարհի տատասկը. -лачóкъ, чкá ա. Նւզ. տ. Вахлáкъ -ляй, -лáкъ, á ա. -ляла հոր. անշնորհք կերպով գործ անողը, տ. Вахлáкъ 3; -лянiе չ. մի կերպ, անշնորհք կերպով անելը, կատարելը. -лять, св—, ն. մի կերպ, անհոգ, անշնորհք կերպով մի բան անել, կատարել:

Вахми||стéрскій, -(вá-)стрскій ած. վախմէյստէրի. в—ая дóлжность; -стéрша, -(ва-)стрша ի. վախմէյստէրի կինը. -(вá-)стръ ա. (գերմ.) վախմէյստէր (հեծելազօրքի մէջ ամենաբարձր աստիճան ունեցող ենթասպայ, որ համապատասխանում է հետևակ զօրքի фельдфебель-ին).

Вахня́ ի. կնդ. Gadus wachnja, փրփրուկ կամ բրաձուկ մի:

Вáх||та ի. I. (գերմ.) ծովգ. 1, նաւի վերայ հերթով հսկում, հսկողութիւն, նաւապահութիւն, ժամապահութիւն. идти на в—у, стоять на в—ѣ; 2, այդ հսկումը, ժամապահութիւնը կատարող պահակախումբը, ջոկատը, թուով երկու. пéрвая в.-ն պահում է նաւի աջ կողմը, իսկ вторáя в.-ն ձախ կողմը. II, բս. Menyanthes trifoliata, ջրային երեքտերևուկը. -тенный ած. նաւային հսկողութեան, ժամապահութեան. նաւապահ, հսկող ջոկատի. в. начáльникъ; в. журнáлъ ժամացոյցեայ նաւամատեան, որի մէջ արձանագրւում են բոլոր նշանաւոր դէպքերը. вáхтенный, аго ա. հսկող, պահապան, ‹դարաւուլ›. -терскій ած. վախտերի. в—ая должность; -теръ ա. (յ. вахтерá, óвъ) (գերմ.) 1. պահապանների, գլխաւորապահների աւագ. 2, զօրքի նպարեղէնների, մթերքների, պահեստների պահապան. -тóвникъ ա. բս. Nymphaea alba, սպիտակ հարսնմատ (կոկոռ կմ շուշան 'ի գետնկը). -тпарáдъ ա. (գերմ.) ժամապահ զինուորների զօրահանդէս: [պան‹ (թաթման):

Вá||чега ի. բանուորի կաշեպատ ձեռնոց. ‹թաթ-

Вá||чикъ ա. քաթանէ կամ կաշէ մանդիկ, խուրջին սայլորդութեան համար. -чýга տ. Вáчега.

Вá||ша, -шъ տ. Вá||жа, -жъ.

Вáшгердъ ա. (գերմ.) լեռնգ. հանքը, հանուածոն լուանալու դարակ, սալք. շէնք:

Вашъ, а, е ստաց. դեր. (յգ. 2 դէմք). ձեր. вáша вóля ձեր կամքն է. по-вáшему ըստ ձեզ, ըստ ձեր կարծեաց, սովորութեանց. вáши յ. ձերոնք. клáняйтесь вáшимъ; и нáшимъ и вáшимъ երկդիմիութիւն, երկերեսութիւն անել, քսութեամբ աշխատել եւ սորան եւ նորան հաճոյանալ:

Ва||я́ло չ. քանդակիչ, փորագրիչ գործիք, դուր. -я́льный ած. քանդակագործութեան, -գործական, փորագրիչ, -գրութեան. в—ое искýсство,— орýдіе; -я́льня ի. սկւ. գործծ. քանդակագործարան, փորագրատուն. -я́ніе չ. քանդակագործութիւն, փորագրութիւն. -я́тель ա. քանդակագործ, փորագրիչ. -я́тельный ած. քանդակագործութեան, -ծական, փորագրութեան. -я́ть, изв—, ն. 1, քանդակել, քանդակագործել, կոփել. փորագրել. 2. մետաղից պատկերներ ձուլել:

Вби||вáніе չ մի բանի մէջ, ներս խփելը, մխելը, ցցելը. -вáть, вбить ն. մի բանի մէջ խփել, մխել, ցցել, անկել. в. сваю въ зéмлю,— гвоздь въ дóску; *вбить въ гóлову, въ толкъ յաճախ կրկնելով մեկնել, հասկացնել. в. себѣ въ голову հաստատապէս մտադրուիլ. -ся 1, անդր. ներս խցկուիլ. *вбúться къ комý-либо въ мúлость մէկի ‹տամարը մանել›, մէկի վստահութիւնը,

համբուլթիւնը շահել. 2, կր. մի բանի մէջ խփուիլ, մխուիլ, ցցուիլ, տնկուիլ. **-вка** է. տ. Вбиванiе.

Вби||ранiе չ. ներս, իր մէջ ծծելը, քաշելը. **-рать**, вобрать ն. ներս, իր մէջ ծծել, քաշել. грецкая губка вбираетъ въ себя воду; в. въ себя воздухъ; **-ся** անդր. ներս ծծուիլ, ներս քաշուիլ. **-рный** ած. ներս քաշող, ներս ծծող, հաւաքող:

В||битiе չ. մի բանի մէջ խփելը, մխելը, ցցելը, տնկելը. **-бить** (вобью-бьютъ), **ся** տ. Вбивать, ся.

Вблизи մ. մօտ, մօտիկ. онъ живётъ в. отъ насъ; плохо видѣть в.

Вбрасы||ванiе չ. ներս ձգելը, ներս շպրտելը. **-вать, вбросать, вбросить** (-ошу -осятъ) ն. ներս ձգել, ներս գցել, ներս շպրտել. **-ся** 1, անդր. յանկարծ, շեշտակի մի բանի մէջ ընկնել. իրան մի բանի մէջ ձգել, մի բանի մէջ նետուիլ. одинъ вбросился въ толпу непрiятелей; 2, կր. ներս ձգուիլ, ներս գցուիլ, ներս ածուիլ, ներս թափուիլ. соръ вбрасывается въ яму.

Вбрыз||ганiе չ. ներս սրսկելը, ներս ածելը. **-гать** տ. Вбрызгивать; **-гиванiе** չ. բժ. ներարկութիւն, դեղը, դարմանը մարմնի տակ սրսկելը, ածելը, տ. Впрыскиванiе; **-гивать, -нуть** ն. մի բանի մէջ, մի բանի ներս ածել, սրսկել. **-ся** կր. մի բանի մէջ, մի բանի ներս ածուիլ, սրսկուիլ:

Вбу||хать, -хнуть ն. յանկարծ, մեծ քանակութեամբ ներս ածել, ներս թափել. **-ся** անդր. մի բանի մէջ գլմփալ, շլխկալ, ընկնել, գլորուիլ:

Вбѣ||ганiе չ. արագ, շեշտակի ներս վազելը, ներս ընկնելը. **-гать, -жать** (-гу -жишь -гутъ) չ. արագ, շեշտակի ներս վազել, ներս մտնել. в. въ комнату; **-гиваться, -гаться** անդր. վազելու ընտելանալ, վարժուիլ. лошадь ещё вбѣгивается.

Вбѣлѣ մ. սպիտակ, մաքուր տեսքով. изба вчернѣ кончена, в. не отдѣлана еще.

Вва||живать, -дить (-жу -дятъ) ն. աստիճանաբար, հետզհետէ մի բանի ընտելացնել, վարժեցնել. в. въ пьянство; **-ся** անդր. աստիճանաբար, կամաց-կամաց մի բանի ընտելանալ, վարժուիլ:

Вва||ливанiе չ. ներս ածելը, ներս թափելը, ներս ձգելը. **-ливать, -лить** (-лю -лятъ) ն. 1, ներս ածել, ներս թափել, ներս ձգել, ներս գցել. *ввалить въ спину քամակին մի քանի հարուած հասցնել. 2,* դժբախտութեան, փորձանքի, վնասի մէջ ձգել. в. кого въ бѣду дурными совѣтами; **-ся** անդր. 1, մի բանի մէջ ընկնել, գլորուիլ. в. въ ровъ; ввалились глаза աչքերը փոս են ընկել. 2, ծանր, յաղթ քայլերով, անախորժ կերպով, աղմկով ներս մտնել. 3,* դժբախտութեան, փորձանքի մէջ ընկնել:

Вве||денiе չ. 1, ներմուծելը, ներս տանելը, ներս մտցնելը, ներս դնելը. հաստատելը (կարգի, օրէնքի). 2, ներածութիւն. в. во всеобщую исторiю; 3, В в е д е н i е во храмъ եկղ. Ընծայումն սուրբ Աստուածածնի 'ի տաճարն. **-дённый** ած. в. бояринъ տ. Бояринъ; в. дьякъ տ. Дьякъ; **-денскiй** ած. Ընծայման (տ. Введенiе 3.) 1, в. тропарь Ընծայման տօնին երգուող օրհներգութիւն. 2, в. приходъ Ընծայման տաճարի, Ընծ. եկեղեցու ծուխ:

Вве||зти, -зть (-зу -зутъ), **-зтися** տ. Ввозить, ся.

Ввер||гать, -гнуть ն. ներս ձգել, ներս գցել, ներս նետել. **-ся** (անց. ввергнулся,-лась-лось և ввергся-глась-лось) 1, անդր. մի բանի մէջ ընկնել, նետուիլ. в. въ пропасть,—въ погибель; 2, կր. մի բանի մէջ ձգուիլ, գցուիլ, նետուիլ. **-женiе** չ. մի բանի մէջ ձգելը գցելը, նետելը. **-женный** ած. մի բանի մէջ ձգած, գցած, նետած:

Ввернуть, ся տ. Ввёртывать, ся.

Ввёр||тка է. տ. Вверченiе; **-тный** ած. պտուտակաւոր. в. крюкъ, — блокъ; **-тыванiе** չ. պտուտակելով ներս մտցնելը. **-тывать, -тѣть** (-чу-вертятъ). **-нуть** ն. պտուտակելով, պտոյտ տալով ներս մտցնել, ներս դնել. в. въ косякъ винты, *ввернуть слово,—шутку անցողակի, կողմնակի կերպով խօսք ասել, հանաք անել, «я не послушна!», ввернула (ընդմիջեց, խօսքի մէջ ընկաւ) тутъ дочь»; ввернулъ ему бумажку անզգալի կերպով նորա ձեռքի մէջ փող դրեց, փող կոխեց. *ввернуть крючокъ գործը խճճել, խառնափնթորել. **-ся** կր. պտուտակուելով պտոյտ տրուելով ներս մտցնուիլ, ներս դրուիլ. тупой винтъ трудно ввёртывается; **-тѣнiе** չ. պտոյտ տալով ներս մտցնելը, ներս դնելը.

Ввер||ху մ. վերև[ում], բարձր[ում]. птица летитъ в.; рѣшено *в. բարձրագոյն իշխանութիւնից վճռուած է. онъ живётъ в. նա կենում է վերև, վերին յարկում. **-хъ** մ. դէպի վեր, վեր [և]. վերև, смотрѣть в.; подите в. գնացէք վերև. вверхъ дномъ տակն ու վրայ եղած, խառնաշփոթուած. в. по рѣкѣ գետն 'ի վեր:

Ввер||ченiе տ. Ввертѣнiе; **-чиванiе** տ. Ввёртыванiе; **-чивать, ся** տ. Ввёртывать, ся.

Вве||сти, -сть (-ду -дутъ) **-стися, -стись** տ. Вводить, ся.

Ввечеру մ. երեկոյեան:

Вви||ванiе չ. ներհիւսելը, հիւսելով խառնելը. **-вать**, ввить ն. ներհիւսել, հիւսել, ոլորելով մի բանի հետ խառնել, հիւսել. в. золотую нить въ шёлковый плетешокъ; **-ся** կր. ներհիւսուիլ, հիւսուելով, ոլորուելով մի բանի հետ խառնուիլ. **-вка** է. տ. Ввиванiе, -тiе; **-вной** ած. ներհիւսելու. в. подкосокъ մազերին ներհիւսելու, մազերի մէջ դնելու կերպ հիւս. **-вокъ**, вка տ. ներհիւսած իր, բան. **-вочный** ած. ներհիւսած իրի, բանի:

Ввин||тить (-чу -тятъ), **ся** տ. Ввинчивать, ся; **-чиванiе** չ. պտուտակը ոլորելով ներս մտցնելը. **-чивать**, -тить ն. պտուտակել, պտուտակը ոլորելով մի բանի մէջ մտցնել, դնել. **-ся** կր. պտոյտ տրուելով ներս տարուիլ, ներս մտցնուիլ, պտուտակուիլ:

Вви||тiе չ. ներհիւսելը, մի բանի հետ հիւսելը, խառնելը. **-ть** (вовью, -вьютъ), **ся** տ. Ввивать, ся.

Вво||дить (-жу -дятъ), ввести, ввесть ն. 1, ներմուծել, ներս տանել, ներս մտցնել. в. войска въ городъ, — судно въ гавань; в. кого-либо въ знакомый домъ, — въ свѣтъ; в. во владѣнiе իւր. մէկին նորա ձեռք բերած անշարժ կալուածքի մէջ հաստատել. 2,* վատ բանի, փորձանքի մէջ ձգել. в. въ заблужденiе, въ хлопоты, въ соблазнъ; не вводи насъ во искушенiе (և) մի տանիր զմեզ ի փորձութիւն. 3, հաստատել, մտցնել, սովորական դարձնել. в. новые обычаи; 4, մի բանի մէջ դնել. в. брёвна въ стѣну; **-диться**, ввестися կր. 1, ներմուծուիլ, ներս տարուիլ. 2,* սովորական, գործածական դարձնուիլ. это вводится въ обычай; 3, մի բանի մէջ դրուիլ. на мѣсто ветхихъ вводятся въ строенiе новыя брёвна; **-дный** ած. 1, ներս դրած, ներս դնելու. в—ое бревно; 2, ներածական, մեկնական. в—ая статья; 3, в—ое пред-

ложéніе քերկ. միջանկեալ նախադասութիւն. 4, в. листъ Լուր. ներմուծման, հաստատման թերթ, վկայական առ այն, որ կալուածք գնողին իւր սեփականութեան մէջ հաստատուել է:

Ввóдъ ա. ներմուծելը, ներս տանելը, ներս մտցնելը. հաստատելը. в. во владѣніе.

Вво‖зи́ть (-жу́ -зятъ), ввезти́, ввезть ն. մի և է տեղ տանել, կրել (սայլով, ձիով) в. товáры въ гóродъ; -зи́ться, вве‖зти́ся, -зти́сь կր. ներմուծուիլ, ներածուիլ, ներս կրուիլ. -зка Ի. ներմուծելը, ներածելը, ներս կրելը. -зный ած. ներս կրելու, ներս բերելու, ներածուող, -ծելի, ներմուծուող, -ծելի. в. товáръ; в—ая пóшлина ներմուծելի ապրանքների համար սահմանուած մաքսը. * в—ая грáмота հնց. թուղթ առ այն, որ մէկն իւր հողի, կալուածքի մէջ հաստատուել է. в в ó з н о е, аго չ. ապրանքի ներածման, մուտքի վճար. -зъ ա. 1, մի և է տեղ կրելը, ներածելը. 2, ներածութիւն. въ этомъ году́ в. превысилъ вывозъ այս տարի ներածութիւնը գերազանցեց արտածութեանը:

Вво‖лáкиваніе չ. ներս քարշելը. -лáкивать -лочи́ть (-лочу́ -лóчатъ) ն. ներս քարշել, քարշելով, թրև տալով ներս մտցնել, ներս տանել. -ся կր. ներս քարշուիլ, թրև տրուելով ներս տարուիլ:

Ввóлю մ. որչափ ցանկալի, հաճելի է:

Вво‖рáчиваніе չ. գլորելով, քարշելով ներս տանելը. -рáчивать, -роти́ть (-рочу́ -рóтятъ) ն. գլորելով, քարշելով ներս տանել (ծանր բանը) -ся կր. գլորուելով, քարշուելով ներս տարուիլ:

Ввóсь‖меро մ. ութ անգամ. -мерóмъ մ. ութ հոգով, ութովին:

Ввѣкъ մ. տ. Вовѣкъ.

Ввѣ‖рéніе չ. հաւատալը, վստահելը, յանձնելը, պահ տալը. -ря́ть, -рить (-рю -рятъ) ն. 1, հաւատալ, վստահելով մի բան յանձնել, պահ տալ. в. комý-либо имѣніе, хождéніе по дѣлáмъ; 2, մտերմաբար հաղորդել, յայտնել. в. тáйну; -ся 1, անզր. մէկին հաւատալ, մէկի վերայ վստահիլ. онъ во всёмъ емý ввѣряется; 2, կր. յանձնուիլ, պահ տրուիլ. дéньги ввѣряются надёжнымъ людямъ.

Ввя‖зáть (-жу́ -жутъ), ся տ. Ввязывать, ся; -зи́ть (-жу́ -зятъ) անզործծ. տ. Увязи́ть; -зка Ի. -зываніе չ. 1, մի բանի մէջ կապելը. 2, մի բանի մէջ հիւսելը, ներհիւսելը, գործելը. 3,* մի (վատ) բանի մէջ ձգելը, խճճելը, կաշկանդելը. -зывать, -зáть ն. 1, մի բանի մէջ կապել. в. бѣльё въ ýзелъ; 2, մի բանի մէջ գործել, գործելով ներհիւսել. в. стрѣлки въ чулки́; 3,* վատ բանի, փորձանքի մէջ ձգել, խճճել, կաշկանդել. в. въ чужíя хлóпоты; -ся 1, անզր. խառնուիլ. в. въ посторóнніе разговóры, въ сплéтни; 2, կր. միասին կապուիլ. մի բանի մէջ գործուիլ. փորձանքի մէջ ձգուիլ, խճճուիլ:

Вгáни‖ваніе չ. ներս քշելը. -вать, вогнáть ն. ներս քշել, քշելով 'տուն անել', ներս մտցնել. в. скотъ во дворъ, —лошадéй въ стóйла; -ся կր. ներս քշուիլ, ներմուծուիլ:

Вги‖бáніе չ. կռացնելը, կորացնելը, ծռելը, թեքելը. -бáть, вогнýть ն. կռացնել, ծռել. թեքել (ճկուն իրը). в. дно у тáза; -ся կր. կռացնուիլ, կորացնուիլ, ծռուիլ, թեքուիլ. -бъ ա. ծռուած, կորացած, փոս ընկած տեղ:

Вгладь մ. հարթ, հաւասար կերպով:

Вглу‖блéніе չ. խորասուզելը, ընկղմելը. -бля́ть, -би́ть (-блю́ -би́тъ) ն. խորասուզել, ընկղմել. -ся անզր. և կր. ընկղմուիլ, խորասուզուիլ. -бь մ. խոր, դէպի խոր, 'ի ներս:

Вгля́‖дчивый ած. շրջահայեաց, դիտել, նայել, զննել սիրող. -дываніе չ. դիտելը, նայելը, զննելը. -дываться, -дѣться (-жýсь -ди́тся) չ. ուշադրութեամբ դիտել, նայել, զննել:

Вгне‖тáть, -сти́, -сть (-тý -тýтъ) ն. ներս սեղմել. սեղմելով, ճնշելով ներս մղել, ներս մտցնել. -тáться, -сти́ся կր. ներս սեղմուիլ, սեղմուելով, ճնշուելով ներս մղուիլ. -тéніе չ. ներս սեղմելը, ճնշելով, սեղմելով ներս մղելը:

Вгнѣз‖ди́ться (-жýсь -ди́тся) տ. Гнѣзди́ться.

Вгó‖нка Ի. -нъ ա. ներս քշելը. ներս մղելը, ներս լցնելը, մի բանի մէջ ցցելը. -ня́ть, вогнáть ն. 1, տ. Вгáнивать; 2, ներս մղել, ներմուծել, մի բանի մէջ մտցնել, խցկել, ցցել. в. клинъ, проклáдку, гвоздь; в. конопáть վուշը, խծուծը, նաւի ծակերն կոխել. *вогнáть когó въ чахóтку, въ гробъ մէկի սիրտը մաշելով թոքախտաւոր հասցնել, մէկին գերեզման իջեցնել. вогнáть расхóдъ въ такýю-то сýмму ծախսը այս ինչ գումարի հասցնել (մեծ կամ փոքր ցոյց տալ). -ся կր. 1, տ. Вгáниваться; 2, ներս մղուիլ, ներմուծուիլ, մի բանի մէջ մտցնուիլ, խցկուիլ, ցցուիլ:

Вго‖рáживаніе չ. իւր ցանկապատն ուրիշի հողի մէջ դնելը, ուրիշի հողն իւր ցանկապատի մէջ առնելը. -рáживать, -роди́ть (-жý -дятъ) ն. իւր ցանկապատն ուրիշի հողի մէջ դնել, ուրիշի հողն իւր ցանկապատի մէջ առնել, յափշտակել. ты вгороди́лъ забóръ свой въ моё мѣсто.

Вгорячáхъ չ. ռմկ. տաքացած, կրակ կտրած, կռքից, բարկութիւնից կուրացած:

Вгре‖бáніе չ. քերելով մի տեղ, մի բանի մէջ ածելը, թափելը. -бáть, -сти́, -сть (-бý -бýтъ) ն. քերելով մի տեղ, մի բանի մէջ ածել, թափել. в. соръ въ навóзъ, -бáться, -сти́ся 1, անզր. թիավարելով մտնել, ներս մտնել. вгребли́сь въ бýхту, 2, կր. քերուելով ներս ածուիլ, ներս թափուիլ:

Вгру‖жáть, -зи́ть (-жý -зи́тъ) ն. բարձել (նաւի վերայ). -ся կր. բարձուիլ (նաւի վերայ). -жéніе չ. -зка Ի. -зъ ա. բարձելը (նաւի վերայ):

Вгры‖зáть, -зть (-зý -зýтъ, անց. вгрызъ-зла, о) ն. կրծելով ծակել. мышь вгры́зла дырý въ хлѣбѣ; -ся չ. ատամները մի բանի մէջ թաղել, խրել. собáка вгры́злась въ вóлка; *сосѣ́дки нáши вгры́злись другъ въ дрýга մեր հարևանուհիները միմեանց հետ կռուեցան, միմեանց ոսկր կրծեցին:

Вгý‖ливаться, -ля́ться չ. զբօսանքի ընտելանալ, սովորել ման գալ. вгуля́ешься, такъ не рабóтается.

Вгустýю մ. պինդ, ամուր. свари́ть в. (ձուն) [պինդ եփել:

Вда‖вáніе չ. տալը, ընձեռնելը, յանձնելը. -вáть (-ю́ -ю́тъ), вдать ն. տալ, ընձեռնել, յանձնել. -ся անզր. 1, ներս պրծնուլ, ներս ընկնիլ, ներս խրուիլ. домъ вдáлся въ садъ; зали́въ вдаётся далекó въ бéрегъ; 2,* մի բանի մէջ ընկնիլ, ընկղմուիլ. в. въ рóскошь, въ игрý, въ обмáнъ; в. въ подрóбности, въ толковáнія.

Вда‖ви́ть (-влю́ -вятъ), ся տ. Вдáвливать, ся; -вка Ի. -влéніе -вливаніе չ. ներս սեղմելը, ներս մղելը, ներս դնելը. -вливать, -ви́ть ն. ներս սեղմել, սեղմելով ներս մղել, ներս խցկել, ներս դնել. в. кирпи́чъ въ раствóръ; в. жи́дкость въ дéрево; -ся 1, կր. սեղմուելով ներս մղուիլ, ներս խցկուիլ, ներս դրուիլ. 2, չ. ծանրու-

թելնից մի բանի մէջ թաղուել. «глядя ͞на
тяжёлый, вдави́вшійся въ дива́нъ кошелёкъ».
Вда́внѣ *մ.* վաղուց, առաջ (յաճխ. не բայի.
մասնիկով, *տ.* Невда́внѣ).

Вда́л‖бливаніе *չ.* դըրով փորած ծակի մէջ
դնելը, մացնելը. **-бливать,** вдолби́ть *ն.* դըրով
դնել, մացնել, ‘ճխտել’.
փորած ծակի մէջ դնել, մացնել, ‘ճխտել’.
*вдолби́ть въ го́лову դժուար ըմբռնողին հակի
հաղ մինել, հասկացնել. **-ся** *չր.* դըրով շինած
ծակի մէջ դըրուել, մացնուել, ‘ճխտուել’։
Вда‖лекѣ́ *մ.* հեռու տեղում. հեռուից (յաճախ
не բայաս. մասնիկով, *տ.* Невдалекѣ́). **-ли́** *մ.*
բատակաների հեռու. **-ль** *մ.* հեռու տեղ, հեռու.
итти́ в.

Вдать (вдамъ, вдашь, вдастъ; вдади́мъ, -ди́те,
-ду́тъ; *անց.* вдалъ -ла́, о́), **ся** *տ.* Вдава́ть, ся.
Вдви‖га́ніе *չ.* ներս խոթելը, ներս դնելը, ներս
տանելը, **-га́ть** -путь *ն.* ներս խոթել, ներս դնել,
ներս տանել. в. я́щикъ въ столъ, — каре́ту въ
сара́й; **-ся** *չր.* ներս խոթուել, ներս դնուել, ներս
տարուել. я́щикъ ху́до вдвига́ется; **-гиваніе** *տ.*
Вдвига́ніе; **-гивать, ся** *տ.* Вдвига́ть, ся; **-жно́й** *ած.*
շարժուն, ներս տարուող. в. я́щикъ; **-нуть, ся**
տ. Вдвига́ть, ся.

Вд‖во́е *մ.* կրկնակի, երկակի, կրկին անգամ.
-воёмъ *մ.* երկուսով, երկու հոգով. мы шли в.;
-войнѣ́ *մ.* կրկին անգամ, երկրորդ անգամ։
Вде́‖вятеро *մ.* ինն անգամ. **-вятеро́мъ** *մ.* ինն
հոգով, ինն հոգի միասին։ [սեղ (ծայրը բուլթ)։
Вдёжка *ի.* մի բանի միջից թել անցկացնելու ա-
Вдёр‖гиваніе *չ.* մի բանի մէջ մացնելը, մի
բանի միջից անցկացնելը. **-гивать, -гать, -нуть** *ն.*
1, մի բանի մէջ դնել, մացնել, մի բանի միջից
անցկացնել. в. ни́тку въ иго́лку; 2, ձգելով,
քաշքշելով, քաշկռտելով ներս տանել. в. са́ни
въ сара́й; **-гиваться, -нуться** *չր.* 1, մի բանի մէջ
մացնուել, մի բանի միջից անցկացնուել. 2, քաշ-
քշուելով ներս տարուել։

Вде́‖сятеро *մ.* տասն անգամ. **-сятеро́мъ** *մ.* տասն
հոգով, տասն հոգի միասին։
Вдира́ться, водра́ться *անդր.* սեղմուելով հա-
վիւ հազ ներս պրծնուել, ներս մտնել։
Вдоба́вокъ *մ.* ’ի լրումն. բացի դորանից, դեռ-
ևս, այլև, աւելացրու դորան և այն, որ։
Вдо‖ва́ *ի.* (*հյ.* вдову́, *յ.* вдо́вы) այրի կին. вдо́-
вы сердобо́льныя սրտացաւ, հիւանդներին խնա-
մող այրիներ. Вдо́винъ, а, о *ած.* այրի կնոջ.
-ве́цъ, вца́, *ա.* այրի մարդ. **-ви́ца** *ի.* *եկ.* *սլ.*
(գործծկ. միայն գրականական լեզուի մէջ) *տ.*
Вдова́; лепта́ вдови́цы այրու լուման (Մարկ.
12_{42}). **-вій,** вья, вье *ած.* այրու, այրիների. в.
домъ, вдо́вья пе́нсія; вдо́вье, вья́го *չ.* այրուն
օրէնքով հասնելի մասը նորա մարդի (էրկան)
կայքից. **-вка** *նվաս.* *տ.* Вдова́.
Вдо́воль *մ.* բաւականաչափ, ըստ, կուշտ։
Вдо́в‖ственный *ած.* այրութեան, որբութեան.
в—ое состоя́ніе; **-ство́** *չ.* 1, այրութիւն (կնոջ
կմ էրկան). жить во в—ѣ; 2, որբութիւն, ան-
տէրութիւն. **-ствовать** (-ствую -ютъ) *չ.* 1, այ-
րութեան մէջ գտնուել. вдо́вствующая
ած. (գործածական միայն կայսերական տան ի-
գական անդամների համար) այրի. в—ая импе-
ратри́ца, — цари́ца; 2,* որբ, անտէր, անտիրա-
կան մնալ, որբանալ, որբացած լինել։
Вдо́вушна *փաղ.* *տ.* Вдова́; **-вый** *ած.* այրի, որբ.
человѣ́къ в., же́нщина в—ая; **-вѣть,** овд—, *տ.*
Вдо́вствовать.
Вдо‖га́дъ *մ.* (գրեթէ միշտ не բայի. մասնիկի
հետ, *տ.* Невдога́дъ); **-го́нку, -го́нъ** *մ.* հետապըն-
դելով, հետամուտ լինելով։
Вдодъ *տ.* Удо́дъ.
Вдол‖би́ть (-блю́ -бля́тъ), **ся** *տ.* Вда́лбливать, ся;
-бле́ніе *չ.* դըրով փորած ծակի մէջ դնելը, մըտ-
ցնելը. **-бя́жку** *մ.* ռամկ. բառ առ բառ, թու-
թակաբար. առանց մտքը, իմաստը հասկանա-
լու. вы́учить, зау́чить в.
Вдоль *նխդ.* (սեռկ. հոլ.) և *մ.* մի տեղի, մի
բանի երկարութեամբ. в. стѣны́, в. бе́рега
պատի, ափի երկարութեամբ. вдоль и поперёкъ
ըստ երկարութեան և ըստ լայնութեան, ամէն
ուղղութեամբ։ [հետ, *տ.* Невдомёкъ).
Вдомёкъ *մ.* (գրեթէ միշտ не բայի. մասնիկի
Вдо́мникъ *ա.* ռմկ. անփեսայ։
Вдо́сталь *մ.* բոլորովին, խիստ, կատարելապէս.
онъ разори́лся в. отъ неуда́чи въ подря́дахъ.
Вдохно‖ве́ніе *չ.* 1, առհ. ներշնչում. в. Бо́жье;
2, աւիւն, ոգևորութիւն (ստեղծագործական,
բանաստեղծական). **-ве́нный** (-ве́нъ -ве́нна, о)
էյ. *ած.* ոգևորուած, ներշնչուած. в. взоръ.
Սուրբ Հոգու շնորհքով լցուած (մարգարէ). **-ви́-
тель** *ա.* **-ви́тельница** *ի.* ներշնչող, ոգևորող, խրա-
խուսող այր, կին. **-ви́тельный** *ած.* ներշնչող, ո-
գևորող, խրախուսող, քաջալերիչ. **-влять, -ви́ть**
(влю́ -вя́тъ) *ն.* ոգևորել, ոգի ներշնչել, խրա-
խուսել. քաջալերել. **-ся** 1, *անդր.* և *չր.* ոգևորուել,
խրախուսուել, քաջալերուել։
Вдо‖хну́ть *տ.* Вдыха́ть; **-хъ** *ա.* *տ.* Вдыха́ніе;
вдохъ и вы́дыхъ ներշնչում և արտա-
շնչում (շնչառութիւն). **-шникъ** *ա.* ջրհան մեքե-
նայի խցանը։
Вдре́безги *մ.* ջարդ ու փշուր, ‘ալիւր աղցան’.
разби́ть в. ջարդ ու փշուր անել. разби́ться в.
ջարդ ու փշուր լինել [անգամ, կրկնակի։
Вдруго́рядь *մ.* *հնց.* երկրորդ անգամ, կրկին
Вдру́гъ *մ.* 1, իսկոյն, անմիջապէս, անյապաղ.
2, միանգամից, յանկարծ, անակնկալ կերպով.
միաժամանակ, միահաղոյն, բոլորը միասին. не
говори́те всѣ в., а кто-нибудь оди́нъ.
Вду‖ва́льный, -ва́тельный *ած.* ներս փչող, ներս
փչելու. **-ва́ніе** *չ.* ներս փչելը. **-ва́ть, -ть, -нуть**
ն. ներս փչել, փչելով ներս ածել, ներս թափել.
в. порошо́къ въ больно́й глазъ; **-ся** *չր.* ներս
փչուել, փչուելով ներս ածուել, ներս թափուել։
Вду́‖маться *տ.* Вду́мываться; **-мчивость** *ի.* 1.
մտքով մի բանի մէջ խորասուզուելու հակում,
ընդունակութիւն. 2, տարակուսանք. **-мчивый** *ած.*
1, մտքով մի բանի մէջ խորասուզուելու ընդու-
նակ, հակամէտ. 2, տարակուսած, լուրջ. в—ое
лицо́; **-мываніе** *չ.* մտքով մի բանի մէջ խորա-
սուզուիլը. **-мываться,** -маться *անդր.* во что-ни-
бу́дь մտքով մի բանի մէջ խորասուզուել, ըն-
կղմուել. հիմնաւորապէս, լրջօրէն մի բան մտա-
ծել, չափել, կշռել. «ничего́ не мо́жетъ быть
трудне́е человѣ́ку, какъ отдѣли́ться отъ само́го
себя́ и вду́маться въ явле́нія приро́ды».
Вду‖нове́ніе *չ.* ներս փչելը, փչելով ներս ա-
ծելը. **-нуть** *տ.* Вдува́ть; **-ть** (-ю -ютъ; *անց.*
вдулъ-ла, о), **ся** *տ.* Вдува́ть, ся.
Вды‖ха́льникъ *ա.* **-ха́льница** *ի.* գործիք, որով
թոքերի մէջ օդ են թողնում. **-ха́льный, -ха́тель-
ный** *ած.* 1, ներս շնչելու. 2,* ներշնչելու. -ха́

ніе չ. 1, ներս շնչելը, ներս առնելը. 2,* ներշնչելը, ոգևորելը, խրախուսելը. -хáть, вдохнýть ն. 1, ներս շնչել, ներս առնել. в свѣжій вóздухъ; 2,* ներշնչել, ներս փչել. 3, Նմ. ոգևորել, խրախուսել. -ся չբ. 1, ներս շնչուել, ներս քաշուել. 2, ներշնչուել. 3, ոգևորուել, խրախուսուել։

Вдѣ‖вáльный ած. ներս մտցնող, ներմուծող. в—ая иглá բութ ծայրով ասեղ, որով շորեղէնի անցքից (օր. վարտիքի վերևի. յետ կարած ծայրից) թել են անցկացնում **-вáніе** չ. ներս մտցնելը, ներմուծելը. **-вáть, вдѣть** ն. ներս մտցնել, ներմուծել, թել, անձուկ ծակի մէջ դնել, ծակից անցկացնել. в. нитку въ игóлку,— сéрьги въ прóймы; **-ся** 1, անդբ. թել ծակը մտնել, թել, անձուկ ծակից անցկենալ. нитка хýдо вдѣвáется; 2, չբ. թել ծակը մտցնուել, թել ծակից անցկացնուել. **-жка** տ. Вдёжка.

Вдѣ‖лать, ся տ. Вдѣлывать, ся; **-лка** ի. 1, տ. Вдѣлываніе; 2, ինչ և է բանի մէջ դրած, ամրացրած իրը, տարկան. в. въ мрáморѣ, въ дéревѣ; **-лочный** ած. 1, մի բան միւսի մէջ դնելու, ամրացնելու. 2, մի բանի մէջ դնելի, ամրապնդելի. **-лываніе** չ. մի բան միւսի մէջ դնելը, ամրացնելը, ամրապնդելը. **-лывать, -лать** ն. մի բան միւսի մէջ դնել, ամրացնել, ամրապնդել. в. алмáзъ въ пéрстень; **-ся** չբ. մի բանի մէջ դրուել, ամրացնուել, ամրապնդուել։

Вдѣть (вдѣну -нуть; անց. вдѣлъ -ла, о), **ся** տ. Вдѣвáть, ся.

Вéверица ի. կնդ. Mustela putorius, ժանտաքիս, մուշտակաւոր կենդանի, որով նախնի Ռուսիայում հարկ էին վճարում։

Вегетаріá‖нецъ, нца ա. (անգլ.) **-нка** ի. բուսակեր, խոտակեր, բանջարակեր այր. կին (որոնք սկզբունքով մսեղէնը խոտում և միայն բնդեղէններով և պտուղներով են կերակրուում). **-нúзмъ** ա. **-нство** չ. բուսակերութիւն, բանջարակերութիւն։

Вéда ի. (յոգն. ջ. вéды) վեդա (հնդկացիների դրականութեան ամենահին մասը, որ թէ լեզուով և թէ բովանդակութիւնով յետոայ սանսկրիտ գրականութիւնից տարբերուում է)։

Ве‖дéніе չ. 1, տանելը, վարելը. ведéніе книгъ по торгóвымъ дѣлáмъ առևտրական գործերի համար գրքեր պահելը. в. счётовъ հաշուակալութիւն. в. дѣла. тя́жбы; 2, в. голосóвъ երժ. ձայների ներդաշնակ կարգաւորութիւնը, դասաւորութիւնը։

Ве‖дёрко չ. նւզ. պստիկ վեդրօ, դոյլ. **-дéрникъ** ա. վեդրօագործ, դոյլագործ. **-дёрный. (вё)дерный** ած. 1, վեդրօյի, դոյլի. в. óбручъ; 2, վեդրօյագործի, դոյլագործի. 3, վեդրօանոց. в. бочёнокъ; 4, վեդրօներով, դոյլերով. в—ая продáжа; в е д ё р н а я, ой ի. վեդրօյագործութեան, դոյլագործութեան արհեստանոց. **-дёрочко, -дёрце** նւզ. պստիկ վեդրօ, դոյլիկ։

Ведéтъ ա. (ֆր.) զոր. թշնամու բանակին ամենամօտիկ ժամապահը, պարեկապահը, որն և նորա գործողութեանց հետամուտ է լինում։

Ведóмый էջ. ած. (տ. вести́) տարուող, վարուող։

Вéд‖реность ի. պայծառութիւն, պարզութիւն. պարզ, ջինջ լինելը. **-реный** ած. պարզ, պայծառ, ջինջ (եղանակի մասին). в. день; **-ри́на** ի. լաւ, բարեյաջող եղանակ։

Ве‖дри́ще չ. յւնլ. մի ահագին վեդրօ, դոյլ. **-дрó** չ. (յ. вёдра, -деръ, -драмъ) վեդրօ, դոյլ. 1, ջուր հանելու, ջուր կրելու աման, անօթ. носи́ть в—ами вóду; льётъ какъ изъ ведрá անձրևը շաւում, կում-կում թափւում է. 2, օրինական չափ հեղուկների և խմիչքների (=1/40 տակառի կամ 16 շշի). в. винá, вóдки, пи́ва.

Вё‖дро չ. պարզ, պայծառ, ջինջ եղանակ. լաւ ՙաւինդ՚. **-дрышко** չ. փոքր. 1, պստիկ, լաւ վեդրօ, դոյլիկ. II. ռմկ. պարզ, պայծառ, ջինջ յաջող եղանակ. в. бы далъ Госпóдь! էրնէկ Աստուած լաւ օր, ՙաւինդ՚ անէ. **(вé)дрѣть** (-рю -ря́тъ) պարզուիլ, պայծառանալ, բացուիլ (եղանակի մասին)։

Вéжа տ. Вѣжа.

Вез‖дѣ́ մ. ամէն տեղ, ամէնուրեք. **-дѣсýщіе** չ. 1, ամէն տեղ լինելը. 2, ածբ. ամէնուրեքութիւն Աստուծոյ. **-дѣсýщій** ած. ամէնուրեք, որ ամէն տեղ է. Богъ вездѣсýщъ; **-дѣсýщность** ի. տ. Вездѣсýщіе.

Ве‖зéніе չ. տանելը, կրելը. **-зóмый** էջ. ած. տարուող, կրուող, բերուող **-зти́, -зть** (-зý -зýтъ; անց. -вёзъ, везлá, ó) (հմմ. Брести́ ծանօթ.) 1, (свезти́ -зть), սայլով, նաւով կամ գրաստով տանել, կրել. в. товáры сухи́мъ путёмъ, водóю; 2, փխբ. (пов—,) յաջողուիլ, ՙվրայ գալ՚. емý *везётъ նորա գործը յաջող է գնում. емý *не везётъ նորան ոչինչ չէ յաջողուում. мнѣ повезлó գործս լաւ գնաց. **-зти́ся** չբ. տանուիլ, տարուիլ, կրուիլ։

Вей, -те տ. Вить

Вéй‖мутова соснá տ. Соснá.

Вéйновая, ой ի. (գերմ.) հնց. պատծ հացի արաղ, օղի, գինի։

Вéкош‖ки, шекъ ի. ջ. նւզ. պստիկ երկաթեայ ճախարակներ ծանրութիւններ բարձրացնելու. **-никъ** ա. հնց. մուշտակեղէնների վաճառական։

Век‖селевáться (-лю́юсь -ю́тся) անդբ. վճռկ. միմեանց փոխադարձաբար մուրհակներ տալ. **-селедáвецъ, вца** ա. **-селедáвица** ի. իրւք. մուրհակատու, մուրհակ տուող այր. կին. **-селедáтель, -селедáтельница** տ. Векселедá‖вецъ, -вица; **-селедержáтель** ա. իրւք. մուրհակ ձեռք բերող անձը. **-сель** (ջ. векселя́, лéй) ա. (գերմ.) մուրհակ, պարտամուրհակ, ՙսանաթ՚. простóй в. պարզ, հասարակ մուրհակ. переводный в. ուրիշի անունով տուած մուրհակ. **-сельный** ած. մուրհակի, մուրհակա—. в—ая бумáга, в—ое дѣло.

Вéкша ի. 1, կնդ. Sciurus vulgaris, հասարակ սկիւռ, ՙառնէտ՚. 2. երկաթեայ մեծ ճախարակ, որով շինութեանց ժամանակ մեծ քարեր, տաշտեղէն են բարձրացնում։

Веле‖глáсный ած. եկ. ոճ. բարձր, որոտացող ձայնով, որոտընդոստ. **-гóрка** ի. մի տեսակ ցուբեան. **-дýшный** եկ. ոճ. տ. Великодýшный; **-лѣ́піе** եկ. ոճ. տ. Великолѣ́піе; **-лѣ́пка** ի. բս. Gloriosa superba, շքեղաշուք շուշան. **-лѣ́пный** եկ. ոճ. տ. Великолѣ́пный; **-лѣ́пъ пышный** տ. Велелѣ́пка; **-мýдріе** չ. եկ. ոճ. գերիմաստութիւն (յոգն. հեղն. մտքով). **-мýдрствовать** (-ствую -ютъ) չ. գերիմաստութեամբ դատել, խորհել. **-мýдрый** ած. խիստ իմաստուն, մեծիմաստ, գերիմաստ։

Велéневая бумáга (ֆր.) խիստ ընտիր, ճաշակով պատրաստած, սովորականից հաստ թուղթ։

Веле‖рѣчи́вость ի. պերճախօսութիւն. ճարտարախօսութիւն, շատախօսութիւն. **-рѣчи́вый** ած. եկ. ոճ. պերճախօս, ճոռոմաբան. ճարտարախօս, շատախօս. **-рѣчи́ть** (-чу -чáтъ) չ. պերճախօսել,

ճոռ ճարտասանել, ճամարտակել. -рѣчіе չ. ճարտասան, բարձրաթռիչ ոճ. ճամարտակում, շատախօսութիւն. -умный ած. եկ. ս. մեծիմաստ, խիստ իմաստուն, խելօք:

Вели||ка́нище ա. յհն. մի ահագին հսկայ. -ка́нскій ած. հսկայական, վիթխարի. в. ростъ; -ка́нъ ա. -ка́нша ի. խիստ բարձրահասակ, հսկայ, վիթխարի այր, կին. великáнъ-змѣй տ. Удáвъ.

Вели́||кій (հմմ. Большóй; առկայն великій գործ է ածւում գլխաւորապէս իբրև մակդիր վեհ, ազնիւ առարկաների) ած. А, (լիակատար ձևով) ա, մեծ, ընդարձակ, լայնածաւալ. в—ое прострáнство; բ, մեծ, վեհ, նշանաւոր. իր (աւելի վատ) յատկութիւններով արտասովոր. в. человѣ́къ, — нарóдъ; в—ая душá; в—ая кля́узница; Пётръ В., Екатери́на В—ая; В—ая Россія; В—ое кня́жество; В. океáнъ; В. постъ; В—ая седьми́ца չարչարանաց շաբաթ. В. Госпóдинъ հնց. եպիսկոպոս, մետրոպոլիտ կամ պատրիարք. Б, (կրճատ ձևով. вели́къ, кá, ó; -ки և -кú; գործ է ածւում большóй ածականի փոխանակ, որ կրճատ ձև չունի, օր.) вели́ки дѣлá Твои, Гóсподи; отъ малá до вели́ка փոքրից մինչև մեծ. -ковáтый ած. փոքր ինչ մեծ, փոքր ինչ աւելի:

Велико||возрáстіе չ. դպրոցն. մեծահասակութիւն (աշակերտի). -вóзрастный ած. հասակը մեծ, հասակն առած. -дýшествовать (-ствую -ютъ) չ. մեծահոգութիւն, վեհանձնութիւն. ցոյց տալ. -дýшничанье չ. կեղծ վեհանձնութիւն -дýшничать չ. կեղծ, անտեղի մեծահոգութիւն, վեհանձնութիւն ցոյց տալ. -дýшный ած. մեծահոգի, վեհանձն. в. герóй; в. постýпокъ; -имени́тый ած. մեծանուն, խիստ անուանի, բազմահռչակ, ականաւոր. -кня́жескій ած. մեծ իշխանի. -лѣ́піе չ. շուք, շքեղութիւն, հոյակապութիւն, պերճութիւն. -лѣ́пный ած. 1, շքեղ, մեծաշուք, պերճ, փարթամ. в. пиръ; 2, առհ. հոյակապ, հրաշալի. սքանչելի. в. видъ, в—ая погóда; -мóчный, -мóщный ած. մեծազօր, հզօր. -мýченикъ ա. -мýченица ի. եռիցս երանելի, քաջ, անդանդիտող սուրբ նահատակ, -ուհի (անուանում է օրթոդոքս եկեղեցին իր մեծ սրբերին, օր. Св. в. и побѣдонóсецъ Геóргій). -мýченическій ած. քաջ, անդանդիտող սուրբ նահատակի. в—іе пóдвиги.

Великóнекъ, нька, о ած. բաւականաչափ մեծ:

Велико||помѣ́стный ած. ստացուածատէր, կալուածատէր. -пóстный ած. մեծ պահքի. в—ая слýжба; -рóдный ած. հնց. քաջատոհմիկ, նշանաւոր տոհմից. -рóслый ած. մեծահասակ, բարձրահասակ. в. человѣ́къ; -россíйскій ած. Մեծ Ռուսիայի. -россія́нинъ (յ. в—сія́не. -нъ) -рóссъ ա. Մեծ Ռուսիայի բնակիչ. -рýсскій տ. Великороссíйскій; -рýссъ տ. Великороссія́нинъ; -свѣ́тскій ած. աշխարհիկ, հասարակութեան բարձր, փարթամ և կրթուած դասակարգին պատկանող. в—ая дáма. — бáрышня.

Вели́кость ի. մեծութիւն, վեհութիւն. -кóхонекъ, нька, о ած. որին կարելի է մեծ ասել, մեծ անուանել:

Вели́тель սկս. գործծ. տ. Повели́тель.

Вели||чáвость ի. վեհութիւն, վսեմութիւն, մեծութիւն. -чáвый ած. 1, վեհ, վեհապանծ, վըսեմ. 2, հպարտ, ամբարտաւան, սէթևեթեայ. -чáйшій ած. գերադր. ամենամեծ, ամենավեհ. -чáльный ած. դովասանական. в. обря́дъ դովասանական մաղթանք, որ հոգևոր ընկերութիւնները պատկառելուց առաջ նորա առնը կատարում են. -чáніе չ. 1, յորջորջելը հօր անունով (по óтчеству); 2, (հարսանիքներում) գրուատիչ երգեր, մաղթանք 'ի պատիւ հարսի և փեսայի. 3, աւուր պատշաճի մաղթանք, օրհներգութիւն. -чáтельный ած. գոհաբանական, փառաբանական. в. стихъ տ. Величáніе 3; -чáть չ. 1, փառաբանել, գովաբանել, գովասանել, գրուատել. 2, մէկին պատուել, յորջորջելով նորան հօր անունով (по óтчеству), տիտղոսով. -ся 1, անդրդ. պարծենալ, իր գլուխը գովել. 2; կր. փառաբանուել, գովաբանուել, գրուատուել. -чественность ի. վեհութիւն, վսեմութիւն, մեծավայելչութիւն. -чественный ած. վեհ, վսեմ, մեծավայելուչ. в. видъ, в—ая осáнка; -чество չ. 1, հնց. մեծութիւն, լայնածաւալութիւն. 2, վեհութիւն, վըսեմութիւն, գերազանցութիւն. 3, մեծութիւն, վեհափառութիւն (ած. հ.) (տիտղոս թագաւորների, կայսրների և իրենց կանանց). егó имперáторское, королéвское в.; -чинá ի. 1, մեծութիւն, ծաւալ, բովանդակութիւն. 2, մաթմ. (նաև յ. величины́, -чи́нъ) քանակութիւն. -чіе չ. 1, վեհութիւն, վսեմութիւն, մեծութիւն. 2, փառք, պատիւ, դիրք:

Величýрка ի. մի տեսակ հնդկացորենի ձաւար:

Вéлій եկ. ս. տ. Вели́кій.

Велоси||педи́стъ ա հեծանուավար, հեծանուով գրօսնող, ման եկող. -пéдный ած. հեծանուի. -пéдъ ա. (ֆր.) հեծանիւ:

Вельбóтъ ա. (անգլ.) վելբոտ (թեթև, սրընթաց նաւ, նաւակ, որը կցւում է մարտանաւերին և որը կէտ որսալու համար ևս գործ է ածւում):

Вельверéтъ ա. (անգլ) թաւշակերպ բամբակեայ գործուածք:

Вельвóтъ ա. բս. Elatine hydropiper, ջրապղպեղ:

Вельзевýлъ ա. (յն.-եբր.) բեեղզեբուղ. 1, փիւնիկեան և ասորական (չ)աստուած. 2, չար ոգի, դևերի իշխան (տ. Մատթ. 12_{24}). 3, կենդ. Ateles Beelzebuth, պոչաւոր կապիկ մի:

Вельми́ ն. եկ. ս. յոյժ, խիստ, սաստիկ(ս):

Вельмóга ի. ծովգ. թիակաւոր նաւի վերայ յենարան:

Вельмó||жа ա. (յգ. սեռկ. вельмóжъ և -жей) քաջատոհմիկ, ականաւոր, հարուստ պատուակալ, իշխան, վըրուկ. -жескій ած. իշխանի, վըրուկի. -жество տ. Вельмóжство: -жность ի. իշխանազնութիւն, քաջատոհմիկութիւն. -жный ած. իշխանազուն, քաջատոհմիկ. ազնուազարմ. մեծ, ականաւոր. -жство չ. իշխանութիւն, վըրուկութիւն, իշխանական կոչում, դիրք:

Вельсъ ա. (անգլ.) ծովգ. հաստ գերաններից շինած նաւի դօտին, շրջապատը:

Ве||лѣ́ніе չ հրաման. -лѣть** (-лю́-ля́тъ; թէ несоверш. և թէ соверш. видъ-ի նշանակութիւն ունի. я велю́ թէ ներկայ և թէ ապառնի է. իսկ я велѣ́лъ միշտ անց. կատարեալ է), пов—, չ. комý հրամայել. не вѣ́лено արգելուած է:

Вéна ի. (լտ.) կազմխ. արիւնադարձ երակ:

Вен||гéрецъ, рца ա. 1, մաջառ, ունգարացի. 2, (Ռուսիայի ներքին նահանգներում) թափառաշրջիկ առևտրական. -гéрка ի. 1, մաջառուհի, ունգարուհի. 2. մի տեսակ հուսարական կարճլիկ բաճկոն, բաճկոնակ. 3, մի տեսակ պար, կաքաւ. -гры, овъ յ. հոգ. անեզ. մաջառներ, ունգարացիք:

Ве||не́ра ի. (լտ.) աստղը. Աստղիկ (արեգակին ամենամօտիկ մոլորակներից երկրորդը, որ երկրագնդից քիչ փոքր է և 225 օրուայ ընթացքում արեգակի շուրջը պտտում է. երբ լուսադէմին է երևում, կոչւում է) Արուսեակ, լուսաստղ, այգաստղ, (իսկ երբ արևի մայր մտնելուց յետոյ է երևում, կոչւում է) Գիշերավար. вене́ринъ, а, о ած. Աստղիկի. в—на ра́ковина Աստղիկի խեցին. в—на колесни́ца բս. Aconitum, ընձախոտ (բէշ), Աստղիկի կառքը. в—нъ башмачо́къ բս. Cypripedium calceolus, մուզածաղիկ. в—нъ гре́бень բս. Scandix pecten Veneris, Աստղիկի սանտրը. в—нъ по́ясъ կնդ. Cestum Veneris, Աստղիկի գօտին (ծովային կենդանի մի). **-нери́ческій** ած. (լտ.) վեներական, Աստղկական, սիրային. в—ія болѣ́зни; **-не́рка** ի. տ. Вене́рина ра́ковина.

Вене||це́йскій հնգ. **-ціа́нскій** ած. Վենետիկի, -կեան. в—ое окно́ վենետիկեան պատուհան (մեծ, երեք բաժանմունքով)։

Вен||зелева́тый ած. վենզելակերպ. в—ая по́дпись վենզելակերպ, երկար, կոր գծերով, պաչուռ ստորագրութիւն. **-зелевый -зело́вый** ած. վենզելեան, -լական. в—ое и́мя վենզ. անուն (որի սկզբնատառերը միայն գրած են). в—ая печа́ть, վենզ. կնիք (որի վերայ անուան միայն սկզբնատառերն են փորագրուած.) **-зель** ա. (յ. вензелі́, -ле́й) (լեհ.) վենզել. 1, միմեանց հետ հիւսած, ոլորած յատուկ անունների սկզբնատառերը. пе́рстень, печа́ть съ в—емъ; пи́шетъ *в—и գինովութիւնից երերում, այս կողմ այն կողմ է ընկնում, տատանւում է. 2, վենզելեան պատուառ, որի վերայ նկարած են յատուկ անունների սկզբնատառերը (օր. հրավառութեան ժամանակ)։

Вени||са́ ի. հնք. Silex granatus, նռնաքար. **-са́тикъ** ա. նռնաքարակոյտ, նռնաքարի շեղջ, դէզ. **-со́вый** ած. նռնաքարի։

Ве́н||ка նւզ. տ. Ве́на; **-ный** ած. արիւնադարձ երակի. **-о́зность** ի. 1, արիւնակոխութիւն, արիւնադարձ երակների ու արիւնով լցուիլը. 2, առհ. սևարիւնութիւն. **-о́зный** ած. (լտ.) տ. Ве́нный; в—ая кровь; **-очка** ի. նւզ. տ. Ве́нка.

Ве́нта ի. (իտալ.) պանդոկ, հիւրանոց Իսպանիայում։

Ве́н||тель ա. 1, ձուկ որսալու մի տեսակ կթող, ցանցապարկ. 2, կաքաւներ որսալու ցանց, մի տեսակ թօռ. **-те́рка** ի. տ. Ве́нтель 2; **-терный** ած. կթողով. թօռով. в. зало́въ на́чался; **-теръ** տ. Ве́нтель.

Венти||ля́торъ ա. (լտ.) 1, հողմահարութեան, օդամաքրութեան սարք, գործիք. օդանցք. 2, ծովգ. ձագարաձև լայն բերանով օդատար խողովակ, որ բաց ցանկութեան քամու դէմ են դարձնում կամ հեռացնում. **-ля́ція** ի. (լտ.) հողմահարութիւն, օդամաքրութիւն. в. обще́ственныхъ зда́ній.

Ве́||превый ած. վայրենի վարազի, կինճի. в. клыкъ; **-прёнокъ** ա. (յ. веприя́та, -тъ) վարազակորիւն (խոճկոր). **-прикъ** ա. պստիկ վայրենի վարազ. **-при́на** ի. վայրենի վարազի, կինճի միս. **-при́нецъ**, нца տ. Гори́чникъ; **-при́ный** ած. վայրենի վարազի, կինճի. **-(ве́)при́ца** ի. կինճ, էգ վայրենի խոզ. **-прій** տ. Ве́превый.

Вепрь ա. կնդ. Sus scrofa ferus, վայրենի վարազ։

Вера́нда ի. (անգլ.) վէրանդա, հովանոց (տանը կից սրահ (վերնայարկում) կամ տանձին կանգնած թեթև, չորս կողմից բաց շինութիւն)։

Вератри́нъ ա. (լտ.) շրիտամ (veratrum) բոյսից հանած նիւթ, դեղը։

Ве́р||ба ի. 1, բս. Salix depressa կամ purpurea կարճաբերձ կամ կարմիր ուռի, ուռենի. 2, կարմիր ուռենու ոստերը, որ Ծաղկազարդի շաբաթ օրը ժամերգութեան ժամանակ գործ են ածում. стоя́ть въ це́ркви съ в—ою; в. іерусали́мская տ. 'Агновы вѣ́тви; 3. ве́рбы յ. Ծաղկազարդի շաբաթուայ աճուրդը. **-бе́йникъ** ա. բս. ա, Lusimachia vulgaris, հասարակ ոսկի եղէգ. բ, Plantago maritima, ծովային ջղախոտ. **-бе́на** ի. բս. Verbena, աղաւնիճ կամ վերբենա. **-би́чникъ** ա. բս. Verbascum, արքայական գայլուտ կամ կերոն, եզին ագի։

Вер||блю́дикъ ա. նւզ. պստիկ ուղտ, ուղտիկ, կուղն. **-блю́дица** ի. էգ ուղտ. **-блю́дина, -блю́дка** ի. բս. Corispermum hyssopifolium, բազինջասերմ. **-блю́дникъ** ա. 1, ուղտապան (ըղտապան). 2, բս. Alhagi, ալհագի (թուփ մի). **-блю́дъ** ա. կնդ. Camelus, ուղտ. одного́рбый в., Cam. dromedarius, արաբական կամ միասապատ ուղտ. двуго́рбый в. Cam. bactrianus, բակտրիական կամ երկկուզեան (երկսապատ) ուղտ. **-блю́жина** ի. ուղտի միս. **-блю́жій**, жья, жье ած. ուղտի. в—жье сѣ́но, բս. Salsola kali, աղնիւ օշան. **-блюжо́нокъ**, нка ա. (յ. верблюжа́та, -тъ) կուղն, ուղտի ձագ։

Ве́рб||ный ած. ուռենու. в—ое воскресе́нье Ծաղկազարդ. в—ая недѣ́ля Ծաղկազարդի շաբաթ. **-ня́къ**, а́ ա. հաւ. ուռենիների թփուտ։

Вер||бова́ніе չ. զինուորագրելը, վարձով զինուորներ հաւաքելը. **-бова́ть** (-бу́ю -ютъ) I. (գերմ.) 1, нав—, զինուորագրել, վարձով զինուորներ հաւաքել[ով զօրքի թիւը լրացնել]. 2, зав— առհ. գրաւել, գրաւելով, հրապուրելով մի գործի մէջ գցել. II. (տ. вервь) չ. հնգ. թոկով. թելով, լարով գետինը չափել. **-бо́вка** ի. տ. Вербова́ніе; **-бо́вникъ** ա. բս. Lulthrum, արեան խոտ, կարմիր ոսկեղէգ. **-бовщи́къ**, а́ ա. զինուորագրող, վարձով կամաւորներ հաւաքող։

Ве́р||бовый ած. ուռենու, ուռենուց, ուռի, ուռից. **-боло́за** ի. **-боло́зъ** ա. առհ. ուռի, ուռենի. **-бочка** ի. նւզ. տ. Ве́рба.

Вер||ва́ ի. կօշիկներ կարելու ձիւթած, կպրած թել. **-ви́на** ի. յւնւ. տ. Вервь; **-вица** ի. 1, նւզ. տ. Вервь; 2, փոկից պատրաստած աէրոդրոմեան. **-віе** չ. 1, տ. Вервь; 2, որմնադրի, հիւսան լարը. հնգ. երկրաչափի լարը, թոկը. **-вный** ած. հնգ. թոկից, պարանից շինած։

Вер||вь ի. 1, թոկ, պարան, պարանոցակ, լար. 2, հողաբաժին, հողամաս. հնգ. թոկով. լարով չափած, որոշած հողաբաժին, հող. **-вяно́й** տ. Верёвочный.

Верга́ть (-га́ю- га́ютъ և ве́ржу -жутъ) ն. ևկ. ու. ձգել, գցել, նետել. շպրտել։

Верди́ктъ ա. (անգլ.) իրւբ. վերդիկտ, դատավճիռ, դատակնիք. присяжные вынесли оправда́тельный в.

Верё||вка ի. 1, թոկ, պարան, չուան, տռատան, պարանոցակ. 2,* երկար շարք. 'Ջէրգայ'. շղթայ. **-вочка** ի. նւզ. պստիկ թոկ, պարան. 2, մի տեսակ թոկախաղ, թոկով խաղ. **-вочникъ** ա. 1, թոկագործ, պարանագործ. 2, բս. Restio,

պարանախոտ. -вочный ած. 1, Թոկագործու-Թեան, պարանագործուԹեան. в. завóдъ; 2, Թոկից [շինած, հիւսած]. в. пéводъ; -вчатый ած. 1, Թոկի պէս հիւսած, ոլորած, դալարուն. в. столпъ, в—ое кольцó; 2, տ, Верёвочный.

Верёга ի. (արտս.-ёха) երկար և հաստ ձողի:

Ве‖редúть (-жý -дúтъ), разв—, ն. դիպչելով, չանգռելով կամ քորելով ապաքինուող վէրքը գրգռել, ցաւեցնել, տ. Бередúть; -рéдлúвый ած. խոցոտ, պալարաշատ. դիւրագրգիռ, գրգռուն. в. человѣ́къ փափկակեաց, քմահաճ, դիւրա-գրգիռ մարդ. в—ая рукá հիւանդ ձեռք. -ре-довецъ. вца ա. բս. Thalictrum, բնձմնձուկ. -рéдчатый ած. պալարակերպ, խոցի, եղունգի նման. -редъ ա. պալար, խոց, եղունգ, Թարախակա-լող կարմիր ուռեցք մորԹի տակ. ты мнѣ *в. въ бокý (դարձ.) դու ինձ ձանձրացնում, տաղտ-կացնում ես, գլխիս ցաւ ու կրակ ես դարձել:

Верéечка նւզ. տ. Верéйка.

Верез‖гá հոր. լացկան, ճւացող երեխայ. -глú-вый ած. լացկան, ճւացող. в. ребёнокъ; -жáніе չ. ճւալով, ճչալով, ոռնալով լալը. ոռնալը. -жáть (-жý -жáтъ) չ. ճւալով, ճչալով, ոռնալով լալ, [լաց լինել:

Верезýбъ տ. Вырезýбъ.

Ве‖рéйка ի. I. 1, նւզ. տ. Верей I; 2, ռուսա-կան բարդի կէսը (=26 խրձի). II. նւզ. (տ. верей II) նեղ, ԹեԹև, դիւրաշարժ զբոսանա-ւակ, մակոյկ. -рéйный ած. դռան սիւնի. в. крюкъ; -рéйщикъ ա. դռան սիւներ շինող վարպետ:

Вере‖нúца ի. շարք, շղԹայ, շարան, 'Չէրգայ'. ýтки хóдятъ в—цами բադերը ման են գալիս միմեանց յետևից շարուած, 'Չէրգայով':

Вересклéдъ տ. Бересклéдъ.

Вé‖ресковый ած. հաւամրգու, ցախու. -рескъ ա. բս. Erica, հաւամրգի, ցախի. -ресникъ, -ресня́къ, á ա. հաւամրգու, ցախու մանր Թփուտ. -ресо-вый ած. գիհի կամ գիհիի. в—ыя я́годы; -ресъ ա. ռմկ. բս. ա, տ. Вéрескъ; բ, Juniperus sabina, ցիրգ կամ ցրդի. գ, Junip. Communis, գի կամ

Веретéйка ի. նւզ. տ. Веретей. [գիհի:

Вере‖тенúца ի. 1, խարան, կողովիկ, որի մէջ դրած են իլիկներ. 2, կնդ. ա, Anguis fragilis, սղոսկուկ կամ կոյր օձ. բ. Fusus. իլաձև կակ-ղամորԹը. -тéнникъ ա. կնդ. Limosa mela-nura, Ջրեղբեայ, ճահճային կացար. -тéнница տ. Вертя́чка 2; -тённый ած. իլաձև. իլիկաձև. -тенó չ. (յ. веретёна, -нъ) 1, իլ, իլիկ. 2, հնց. գլխնդրաձև որոցաքարի (յեսանի) առանցքը. 3, կշռափայտի առանցքը. 4, ստորին երկանա-քարի մէջ անցը անկած ցիցը, որի շուրջը պտտում է վերին երկանաքարը. 5, ձեռնա-սայլակի անուի առանցքը. 6, կոնաձև փայտ, որի վերայ ձևում են ձուլելի Թնդանօթի կա-ղապարը. 7, ծովգ. խարիսխի կոԹը. -тéнце տ. Веретенó; -тéнчатый ած. իլաձև, իլիկաձև, -тéнщикъ ա. իլագործ, իլավաճառ, իլիկագործ, իլիկավաճառ:

Вере‖тéнь ի. գուշակ. առատ երկարուԹիւնը, այն տարածուԹիւնը, որի երկու ծայրերից գուԹանը 'հօք է դալիս'. -тéшко տ. Веретенó 5.

Веретея́ ի. 1, հնց. հողաբաժին, հողամաս, հո-ղաշափ. 2, ворóтей, тéй յ. Թումբեր տափաս-տանների մէջ, գրեԹէ միակ տեղերը, որոնք մար-դու և գայլի ոտքի տակ դիմանում են:

Вере́‖тище հնց. -тье չ. 1, մեծ պարկ, փսխա-Թելից շինած 'Չուալ'. 2, մեծ կտաւ, կտաւերդ, որ ոայլի վերայ փռելով, մէջը հացահատիկ կամ ա-լիւր են ածում:

Верёха ի. 1, տ. Верёга; 2, ջրհան խողովակ-ների ծակող գայլիկոնի (բուրգուի) երկար կոԹը:

Вере‖шóкъ, шкá ա. բեկոր, կտոր, փշրանք (խե-ցու եւն.) -щáга ի. Թուայի մէջ պատրաստած ձուազեղ. -щáніе, -щáть (-щý -щáтъ) տ. Верез‖жá-ніе, -жáть.

Ве‖рéюшка չ. տ. Верéйка I, տ. -ре́й ի. I, դռան երկու կողմից կանգնեցրած սիւնակները. որոնցից և կախուած են դռան երկու Թևերը. II. (անգլ.) պստիկ նաւակ, մակոյկ, կուր (գր.):

Вер‖жéніе չ. հնց. ձգելը, գցելը, նետելը, շը-պրտելը, на в. кáмня քար ձգելու հեռաւորու-Թեամբ. -женный էյ. ած. ձգած, գցած, նետած, շպրտած: [նահատակ և անճոռնի մարդ:

Верзú‖ла ա. -лище ա. յուռ. վիԹխարի երկայ-

Верú‖га ի. (յաճխ. յ. вери́ги) 1, նահատակնե-րի, մարտիրոսների շղԹաները, կապանքները. 2,* առհ. լուծ, բեռ, ծանրուԹիւն, խաչ. -жный ած. շղԹայի, կապանքի:

Ве‖ркблéй ա. (գերմ.) կնմգ. (արծաԹ հալելու գործարաններում.) արծաԹախառն կապար. -рки ա. յ. (գերմ.) ամբողջ. ամբուԹիւնների առանձին մասերը:

Вермилióнъ ա. (Фր.) ալ, կարմիր գեղ, ներկ:

Верми‖шéль ի. հ—ւ. (իտ.) վերմիշէլ (խմո-րէ Թելեր, որոնք գործ են ածում սուպի մէջ). -шéльный ած. վերմիշելի. в. супъ.

Вернýть ն. 1, (пов—, перев—) տ. Вертѣ́ть; 2, յետ դարձնել, վերադարձնել. в. когó -нибудь съ дорóги; в. долгъ; в. убы́токъ կրած վնասի փոխարէն ստանալ. в. прóигрышъ տանուլ տուածը յետ առնել. -ся անդր. յետ գալ, վերադառնալ. в. изъ путешéствія; в. на путь и́стины ուղղուել:

Верóника ի. բս. ա, Veronica officinalis, բժշկական բերենիկէ. բ, V. beccalunga, գե-տային բերենիկէ. գ, V. chamaedrys, վայրի բերենիկէ:

Вер‖повáніе չ. նաւի մի տեղից միւս տեղ քար-շելը, փոխադրելը (օժանդակ խարիսխների մի-ջոցաւ). -повáть (-пýю -ютъ) ն. ծովգ. նաւը մի տեղից միւս տեղ փոխադրել (օժանդակ խարիսխ-ների միջոցաւ). -ся 1, անդր. верпъ-ի. միջոցաւ յառաջանալ, շարժուիլ, ընԹանալ 2, կր. верпъ-ի միջոցաւ քարշուիլ, վարուիլ, փոխադրուիլ. -пъ ա. (հոլ.) ծովգ. պստիկ օժանդակ խարիսխ, որի միջոցաւ նաւը մի տեղից միւս տեղ են փոխադրում:

Версификá‖торскій ած. տաղաչափի. -торъ ա. (լտ.) տաղաչափ, ոտանաւորներ գրող. -ція ի. (լտ.) տաղաչափուԹիւն, տաղաչափուԹեան արուեստ:

Вéрсія ի. (Фր.) ձև, եղանակ (նկարագրուԹեան, մեկնուԹեան):

Верстá ի. (հնց. вёрстý; յ. вёрсты, -стъ) ի. վերստ. 1, հնց. առհ. չափ ոչ միայն տարածուԹեան, այլև ժամանակի. въ ту верстý այն չափով. въ верстý հաւասար, յարմար, համապատասխան. 2, վերստ (=500 սաժ.) 3, հնց. հասակ, տարիք. юнъ верстóю հասակով ջահէլ. 4, խճուղու ափին տըն-կած վերստացոյց կարճլիկ սիւնակը. հեգն. *վիԹխարի և անճոռնի մարդ. 5, քարած փայ-ցի միջին շարքը. 6, պատի երեսի քարը. под-ливáть верстóю ալիւրները խաչաձև միմեանց վերայ դնել (պատ քաշելիս):

Верстáкъ, á ա. (գերմ.) 1, 'դազգահ', սեղանա-

գործի երկար սեղանն իւր բոլոր յարմարութիւններով. 2, լեռնգ. տ. Вашгердъ.

Вер||стáльщикъ ա. տպգր. գրաշար, տ. Метранпáжъ; -стáніе չ. 1, համեմատելը, հաւասարացնելը. 2, տպգր. շարած սիւնեակների երեսների բաժանելը. -(вёр)станый ած. հնց. իւր ծառայութեան, պաշտօնավարութեան համար վարձատրուած ամսաթոշակով կամ կալուածքով. в—ые люди; -стáтка ի. -стáточка նւզ. տ. Верстáть I, -стáть I. ջուլհ. ի. տպգր. տառարան. II. (нов—, св—) ն. բյ. 1, համեմատել, հաւասարացնել. нельзя́ в. его́ заслу́гъ съ другúми; в. солдáтъ զինուորներին համեմատ նոցա հասակի կարգով կանգնեցնել. в. помѣ́стьемъ, оклáдомъ կալուածքով, ամսաթոշակով վարձատրել. 2, տպգր. կարգաւորել, երեսների բաժանել (շարած երեսը, սիւնեակները). -стáться, нов,— св—, 1, անդր. իրեն որ և է մէկի հետ համեմատել. 2, չ. ուղիղ գծի և հաւասար տարածութեան վերայ կանգնել. 3, փոխբ. իւր հաշիւները որ և է մէկի հետ վերջացնել:

Верстá||чный ած. սեղանագործի դազգի, 'դազգահի'. -чóкъ, чкá նւզ. տ. Верстáкъ.

Вёрстка ի. տ. Верстáніе.

Вёр||стный ած. վերստաչափ. -стовóй ած. վերստի, վերստա—. в. столбъ; -стомѣ́ръ ա. վերստաչափ (ինքնաշարժ գործիք մի, որով սայլի անցած վերստերի քանակութիւնը ըստ նորա անիւների պտոյտների չափւում է). -сту́шка նւզ. թեթև վերստ:

Вер||тёжъ, тежà ա. 1, պտտուիլը, պտոյտ գալը. կտակ. պար. 2, տ. Вертя́чка 2; -тель ա. 1, միս խորովելու շամփուր. 2, կզմխ. Trochanter, պտոյկ թումբ ազդրոսկրի վերայ, որից կպած են ազդրաշարժ մկանունքները -тельный ած. շամփրի, պտտելու. -тельщикъ ա. շամփուրը պտոյտ տուող, խորոված անող:

Верте́||пецъ, пца ա. նւզ. պտոյկ այր, քարայր. -пистый ած. այրաշատ, շատ քարայրերով, անձաւաշատ, սորաշատ. в—ыя го́ры; -пникъ ա. -пница ի. այրակեաց, այրաբնակ, սորաբնակ այր, կին. -пный ած. այրա—, քարայրա—, անձաւա—. в—ая дрáма Քրիստոսի ծննդեան թատերգութիւնը, որ առաջ եկաւ Լեհաստանում, իսկ XVI. դարի վերջերից սկսած կատարւում է հարաւային և հարաւ արևմտեան Ռուսիայում Ջրօրհնէքի տօներին. -те́пщикъ ա. վերոյիշեալ թատերգութեան մասնակցող:

Верте́пъ ա. 1, այր, քարայր, քարանձաւ.. 2, սրիկաների, աւազակների որջ, բոյն, ապաստարան. 3, մասր. արկղ, ներսից զանազան նկարներով, որոնք ներկայացնում են Քրիստոսի ծննդեան պարագաները, որը Ջրօրհնէքի տօներին Փոքր-Ռուսիայում երեխաները շրջեցնում են տունէ տուն, տ. Раёкъ; 4,=верте́пная дрáма (տ. Верте́пный).

Вертикá||лъ ա. (լտ.) ուղղահայեաց գիծ. -льность ի. ուղղահայեացութիւն, ուղղահայեաց լինելը. -льный ած. ուղղահայեաց. в— ая ли́нія.

Вер||ти́ло չ. -ти́льце նւզ. դայլիկոն, գչիր, 'բուրղու' (հիւսների). -(вёр)ткій ած. 1, հեշտութեամբ պտտուող. *ժիր, ճարպիկ, թեթևաշարժ. 2, գլորաշարժ, գլորաթեք, հեշտութեամբ տատանուող. в—ая ло́дка; -(вёр)ткость ի. 1, գլորապտոյտ լինելը. 2, գլորաթեքութիւն, գլորաթեք, երերուն լինելը. в. су́дна; -тли́вый ած. հնց. փոփոխական, անհաստատ. անվստահելի:

Вертло́ (յ. вёртла, -телъ) ծակիչ. դայլիկոն, գչիր, 'բուրղու':

Вер||тлю́гъ, á ա. 1, կզմխ. անանուն ոսկրի մէջ փոս, որի մէջ դառնում է ազդրոսկրի (գլխի) գլուխը. свихну́ть но́гу въ в—ѣ́; 2, հրետն. թնդանօթի կողքից գլանակ նորան լաֆետի վերայ հաստատ պահելու համար. 3, այն կլոր փայտի, երկաթի կտորը, որ երկու գլանաձև տաշեղները միմեանց հետ միացնում է, մի ծայրով մէկի մէջ ամրացրած լինելով, իսկ միւս ծայրով իբրև առանցք (սռնի) միւսի մէջ մտնելով. 4, ծովգ. խարիսխի պարանի մէջ առանձին կազմութեամբ օղակ, որի շնորհիւ պարանը չէ ոլորւում. -тлю́жный, -тлю́жій, жья, жье ած. 1, կզմխ. в—ая впáдина տ. Вертлю́гъ 1; «Сыны́ Израи́левы не ѣдя́тъ жи́лы в—жьей, кото́рая на сустáвѣ бедрá» ոչ ուտեն որդիքն Իսրայէլի զամոլաջիլն, որ է ի վերայ սոխատակի զրտին (Ծննդոց գիրք 32_{32}). 2, ծովգ. в—ое звено́, в. блокъ ոլորուող օղակ, ճախարակ. -тлюжо́къ, жкá նւզ. տ. Вертлю́гъ.

Вер||тля́вость ի. խիստ արագաշարժ, կենդանի, անհանգիստ լինելը, անհաստատութիւն. -тля́вый ած. 1, խիստ արագաշարժ, կենդանի, անհանգիստ, անհաստատ. 2, (կանանց մասին) 'կոտրատուող', 'քրքրուող', իրեն ցոյց տալ սիրող. -тля́ный ած. անհանգիստ, միշտ այս, այն կողմ ընկնող:

Верто||грáдарь ա. եկ. ոճ. պարտիզպան. -грáдный ած. պարտիզի. -грáдъ ա. -грáдецъ, дца նւզ. պարտէզ. *вертогрáдъ наýкъ գիտութեանց վայր, ուսումնական հիմնարկութիւն, ճեմարան:

Верто́къ, ткá ա. 1, որ և է կլոր իրի պտոյտը, շրջանառութիւնը. 2, պատառատակուոր փակեղ, ծրարակ (անօթի եղն):

Верто||пля́съ ա. պարող, կաքաւող. թեթև մարդ. -пра́хъ ա. -пра́шка ի. թեթևամիտ, թեթևսօլիկ, ցանցառ այր, կին. -пра́шество չ. թեթևամտութիւն, թեթևսօլիկութիւն, ցանցառութիւն. -пра́шить (-шу -шатъ), -пра́шничать չ. թեթևամտութիւն, թեթևսօլիկութիւն, ցանցառութիւն անել. -пра́шный ած. թեթևամիտ, թեթևսօլիկ, ցանցառ:

Вер||ту́нъ, á ա. 1, մի տեսակ աղաւնի, որ թռչելիս շատ պտոյտներ է անում. 2, մի տեսակ կացար, որ ջրի վերայ նստելով ամէն կողմ պտոյտներ է անում. 3,* թեթևամիտ, թեթևսօլիկ, անհաստատ, անհանգիստ մարդ. -ту́нья ի. կոտրատուող, ցուցամոլ կինարմատ. -ту́шка ի. 1, պտտան (օր. օղանցքի մէջ). 2, 'քամու ջաղաց' (մանկական խաղալիք մի). 3,* հոգ. թեթևամիտ այր, կին. -ты ա. յ. ոլոր-մոլոր պտոյտներ (օր. պարտիզի մէջ). *սրիկայական, խաբեբայական հնարքներ, միջոցներ. (вёр)тывать, ся տ. Вертѣ́ть, ся; -ть ձայն. ցոյց է տալիս ընթացքի յանկարծակի թեքումը, շուռ գալը, օր. онá вдругъ верть—да пря́мо ко мнѣ յանկարծ շուռ եկաւ և շեշտակի դէպի ինձ ուղղուեց. -тѣ́льщикъ ա. տպգր. տպագրական մեքենայի բանուոր, աշխատաւոր. -тѣ́ніе չ. պտտելը, պտոյտ տալը. ոլորելը. -тѣ́ть (-чу́, вéртятъ), вёртывать, вéрчивать. вернýть, ն. что և չ. чѣмъ 1, պտտեցնել, պտոյտ տալ. 2, մի բան ձեռքում շուռ տալ դիտելու, զննելու համար կամ մեքենաբար. 3,* մէկին ձեռք առնել, մէկին իւր ձեռքում

խաղացնել, մէկի քթից բռնած ման ածել. -ся տեղք. 1, պտտուել, պտոյտ գալ. колесо́ ве́ртится; верть́ться въ свѣтѣ աշխարհի, մարդկանց հետ շփուել. на языкѣ ве́ртится, да не вспо́мню լեզուիս ծայրին է, բայց միտս չէ գալիս. 2. մէկի աչքից չհեռանալ, աշխատելով նորան հաճոյանալ, նորա 'աչքը մտնել'. 3, *կեղծաւորութիւն անել, աշխատել ճշմարտութիւնը ծածկել. не верти́сь, а говори́ пра́вду; -тя́чій տծ. հեշտութեամբ պտտուող. в—іе пески́ քամուց քշած, օդի մէջ պտոյտ եկող աւազ -тя́чка է. 1, գլխի պտոյտ, թալուկ, մարմրուք. 2, ոչխարի գլխապտոյտ, հիւանդութիւն, որով բռնուած ոչխարը միևնոյն տեղում ցուժապտտութիւն պտոյտ է գալիս. 3,* կապտուող, 'քրքրուող', ցուցամոլ կինարմատ:

Ве́р¦фный, -фяный տծ. վերֆի, նաւարանի. -фь է. (հոլ.) վերֆ, նաւարան, նաւեր շինելու կամ կարկատելու տեղ:

Ве́рх¦никъ տ. 1, շէնքի մէջ դրան շրջանակի վերին հորիզոնական փայտը, դրանդ. 2, ջաղացի վերնաքարը. 3, ա. Вешня́къ ве́рхній; 4, (հայելու գործարանում) հայելու վերևի ապակին, որ յղկւում է. -ница է. 1, հովանոց, տանիքի վերայ շինած պատիկ սենեակ. 2, արու կանեփից պատրաստած հաստ կտաւ, քաթան. -ній տծ. վերին, վերևի. վերև, -ում գտնուող. в. слой земли; в—ее жильё; в—ее пла́тье վերնազգեստ. в. го́лосъ ձայների մէջ ամենաբարձր ձայնը. в—ее чутьё որս. շան օդային հոտառութիւնը (երբ նա օդի մէջ հոտոտելով է որսին որոնում):

Голо́||дный ած. (го́лоденъ -дна́, го́лодно) ած. 1, սոված, քաղցած. сы́тый г—аго не разумѣ́етъ (առծ.) կուշտը սովածին մանր մանր կբրդէ. 2, անհացապակաս, սովի. г. годъ; 3, աղքատիկ, անննդարար. г. обѣ́дъ; сажа̀ть за г. столъ (փակ ուսումն. հիմնարկութեանց մէջ) ճաշից զրկել, լոկ չորաբէկ հաց տալ: Го́лодно Մ. սոված, քաղցած. -до́вка իգ. սովի, կարօտութեան ժամանակ, երկար սով, քաղցածութիւն, սովածութիւն: [րով, մերկ, տկլոր ոտն:

Голодра́нецъ, нца ար. խիստ գզլտուած շորե-

Голоду́ха իգ. 1, տ. Голодо́вка; съ *голоду́хи սովածութիւնից, երկար կարօտութիւնից յետոյ. 2, կարիք, չքաւորութիւն, աղքատութիւն.

Го́||лодъ ար. սով, քաղց. սովածութիւն, քաղցածութիւն. утоли́ть г. քաղցը յագեցնել. умере́ть съ г—у սովից մեռնել: Во́лчій, соба́чій г. արտասովոր քաղց, սովածութիւն, (որ առաջանում է օր. ստամոքսի երկզորդից). терпѣ́ть г. и хо́лодъ ծայրայեղ կարօտութեան մէջ գտնուել. -лодьба́ տ. Голодо́вка և Голоду́ха.

Голодѣ́ть, ог—, չ. սովել, քաղցել, աղքատանալ, չքաւորել, կարօտութիւն քաշել:

Голо||ле́дица իգ. բարակ սառցային շերտ (աշնան կամ ձմրան այեացներից յետոյ). посѣ́вы пропа́ли отъ зи́мней г—ы; -ле́дичный ած. այսպիսի սառցային շերտի. -(го́ло)ле́дь տ. Гололе́дица.

Го́ло||мень իգ. տ. Го́ломя́ 2; -мена́ми Մ. հերթով, պարբերաբար, ժամանակ առ ժամանակ:

Голо||мы́зый ած. անմօրուք. г—ое де́рево տերևազուրկ, տերևաթափ ծառ:

Го́ломя́, голомя́ни կամ го́ло́мени չ. հիւս. 1, բաց, լայնատարած ծով. 2, սրի, սուսերի տափակ երեսը. 3, ծառի լերկ, ճիւղերից ազատ բունը, որից գերան են շինում:

Голо||мя́ Մ. ռմկ. մի քանի ժամ առաջ, արդէն վաղուց. онъ уже́ г. проѣ́халъ; -мяна́ми տ. Голомена̀ми; -мя́нный ած. 1, ափից հեռու. համատարած ծովում գտնուող. 2, ծովի կողմից փչող. г. вѣ́теръ.

Голо||но́гій ած. մերկ ոտքերով, բոկոտն. -пёрый ած. փետրազուրկ, փետրաթափ. -пу́зикъ ար. կտկլ. և ռմկ. կիսամերկ, փորը բաց երեխայ. -пу́зка իգ. իգ. տ. Голья́нъ; -пу́зый ռմկ. 1, տ. Голобрю́хій; 2, ևս գզլտուած շորերով, փորը բաց (մանուկ, մարդ). -пя́тый ած. ռմկ. պատռտուած տոնամաններով. -ру́кій ած. 1, մերկ ձեռքերով. 2, ձեռնունայն, դատարկ ձեռքերով:

Голо||си́на ար. յաւել. մեծ, բարձր, հզօր, հուժկու ձայն. «хорошо́ поётъ. Экой г. си́льный». -си́стость իգ. ձայնեղութիւն, զօրեղութիւն, հուժկուութիւն ձայնի. -си́стый ած. ձայնեղ, զօրեղ, հնչիւն ձայնով. г. дья́конъ.

Голо||си́ть (-шу́ -лося́тъ) չ. 1, բարձրաձայն ասել, բարբառել, երգել. 2, ձայնել, լալ, ողբալ, մեռելի վերայ կոծ անել. -си́шко ար. նվաստ. -си́ще ար. յաւել. տ. Го́лосъ. [голосло́вное обвине́ніе.

Голосло́вный ած. վարկպարագի, անհիմն, զուր.

Го||лосни́къ, а́ ար. 1, տ. Гласни́къ; 2, Голосники́ յ. հնատարազ տաճարների պատերի մէջ դրած անօթները, ձայնի արձագանգը զօրացնելու համար. -лосни́ца իգ. լալկան, ձայնարկու, մեռելի վերայ սուգ, կոծ անող կինարմատ. лосно́й, -лосный ած. 1, բարձրաձայն, քաջահնչիւն. 2, ձայնաւոր, երգելի, երգեցիկ:

Го||лосова́ніе չ. քուէարկութիւն. при г—іи оказа́лось разногла́сіе; -лосови́къ, а́ ար. ռմկ. ձայնեղ երգիչ կամ թռչուն. -лосово́й ած. 1, ձայնաւոր, ձայնային. г—ые зву́ки քեր. ձայնային հնչիւններ (օր. б, в, г են. հկռկը տ. Безголо́сные зв.,) 2, կզմխ. ձայնի. г—ыя свя́зки; 3, ձայնաւոր, ձայնով, երգեցիկ. г—а́я му́зыка = Вока́льная му́з.; г—ая труба́ ձայնափող: Голосовы́я сре́дства երգչի կամ երգչուհու ձայնի ույժը, կարողութիւնը, զօրութիւնը:

Го||лосо́къ, ска́, -лосо́чекъ. чка նւզ. տ. Го́лосъ.

Го́||лосъ ար. (յ. голоса́, о́въ) 1, ձայն. человѣ́ческій г., голоса́ пти́цъ; г. гро́ма որոտ. г. коло́кола զանգակի ձայն, զօղանջիւն. издава́ть г. ձայն հանել, ձայն արձակել. не свои́мъ г—омъ закрича̀ть սոսկալի, զարհուրելի կերպով աղաղակել (վախից, ցաւից են). крича̀ть во весь г. խիստ բարձր, 'քանի ջանումը ջան կայ' աղաղակել. пода́ть г. ա, ձայն տալ, պատասխան տալ. բ, քուէ տալ (տ. Го́лосъ 2); быть не въ г—ѣ երժ. ձայնը տեղը չլինել. спасть съ г—а ձայնը կորցնել. *г. со́вѣсти, пра́вды; вну́тренній, та́йный г.; 2, ձայն, քուէ. пусти́ть на г—а́ քուէարկութեան ենթարկել. подава́ть г. քուէ տալ. собира́ть, счита́ть г—а̀; большинство́ г—о́въ; 3, առհ. կարծիք, համարմունք. о нёмъ то́лько оди́нъ г. նորա մասին բոլորն է մի կարծիքի են, համակարծիք են:

Го||лосьба́ ի. անընդհատ լաց, կոծ, սուգ շիւան։

Голосѣмя́нный ած. բս. մերկասերմն. г—ыя растéнія.

Го́лоть ի. տ. Гололéдица.

Голо||у́сый տ. Безу́сый; -у́хій ած. մերկականջ, մերկ, լերկ ականջներով. -хвáстъ ա. աղքատ ու հպարտ, հարուստ ձևացող մմն. -шéйка տ. Голошéя; -шéйный ած. մերկապարանոց։

Голошéніе չ. լաց, կոծ, ողբ, կական (մեռելի վրայ)։

Голо||шéя հոբ. մերկապարանոց, պարանոցը բաց մարդ. -шмы́га հոբ. ռմկ. և նխտ. անտուն անտէր շրջմոլիկ. -шта́нникъ ա. ռմկ. և նխտ. անփոխան, գզլտուած շորերով մմն. -шта́нный ած. ռմկ. և նխտ. անփոխան, կիսամերկ, ցնցոտիներով։

Голо||щáный обѣдъ լոկ շշի ապուրից բաղկացած ճաշ. -щáпъ ռմկ. և նխտ. տ. Голоштáнникъ և Голохвáстъ.

Голощёкъ ա. 1, մերկ թշերով, առանց ծնօտամօրուքների (безъ бакенбáрдъ) մմն. 2, բարակ, մաքուր, անձիւն սառոյց։

Го́лтéль, я և я́ ա. ճրտրպ. տ. Го́лькéль.

Го́л||ти́на ի. 1, լեռնգ. գերաններ, որոնցով Ուրալում հալոցները վառում են. 2, այն գերանի միջուկը, որից տաշեղ են հանել. -ти́нка ի. բարակ տաշեղներ, որոնցից կողովներ են հիւսում։

Гол||ты́ль, я́ -ты́рь, я́ տ. Го́лькéль 2.

Голтьё, я́ չ. հաւ. ամբողջ, ոչ կտորած գերաններ, 'քօթուկներ'։

Голубевóдство չ. աղաւնեբուծութիւն։

Голубéль ի. 1, տ. Голуби́ка; 2, հիւս. տ. Качéль.

Голубёнокъ, нка ա. (յ. голубя́та, -тъ) աղաւնու ճուտ, ձագ։

Голу́бенькій ած. փղքշ. կապուտակ, կապտաւուն։

Голубéцъ, бцá ա. I. (տ. голубóй) 1, կապտագոյն պղնձէ դեղ, ներկ. 2, բս. Agaricus violaceus, կապոյտ ագարիկոն. 3, բս. Delphinium consolida, դաշտայ դելփինիոնը. II. (տ. го́лубь) 1, աղաւնորս[գիշատիչ թռչուն]ը. 2, ժողովրդական պար, կաքաւ մի, 'աղաւնեպար'. ходи́ть, плясáть голубцá; III. 1, տ. Голбéцъ; ևս տ. Лежáнка; 2, յուշարձան մի. IIII. голубцы́, óвъ յ. 1. կաղամբապատ թէ պասուայ (ձաւարով) և թէ ուտիսուայ (մսով) կերակուր. 2, մորդվինների և կարէլների ականջների օղերը, գինտերը։

Го||лубизнá ի. կապոյտ գոյն, կապտութիւն. -луби́ка ի. կապոյտ հապալասին (Vaccinium uliginosum) և իր պտուղը։ -луби́льщикъ ա. կապոյտ ներկարար, որ պարզ չինական գործուածներ է ներկում. -лубинá ի. ռմկ. (գրեթէ միայն ժողովրդական երգերում) մարի աղաւնի. -луби́ный ած. աղաւնու, աղաւնե—. г. пухъ աղաւնու աղուամազ. г—ое яйцó; г—ая пóчта աղաւնեպօստ. *г—ая крóтость. Голуби́ная кни́га (կամ Голуби́нная) ժողովրդական խրատական բանաստեղծութիւն տիեզերական մարմինների ծագման և առաջնութեան մասին։

Го||лу́бить (-блю -бятъ) ն. когó շոյել, փայփայել, փաղաքշել, գրգել, գգուել. -луби́ть (-блю́ -бя́тъ) ն. կապոյտ ներկել. г. холсты́; -лу́биться չ. къ комý մէկի վերայ գուրգուրալ։

Го||луби́ца ի. I. եկ. սլ. մարի աղաւնի. II. տ. Голуби́ка; III. տ. Го́лбéцъ և Голубéцъ III; голуби́цы ծովգ. յ. նաւի կողքից ծակեր, որոնցով տախտակամածի վերայ հաւաքուած ջուրը վայր է թափուում։

Голуби́чникъ ա. հապալասենու թուփ, թփուկ. հաւ. հապալասենու թփուտ։

Голу́бка ի. 1, մարի աղաւնի. 2, *աղաւնեակ, հոգեակ (անուանում են կանանց). 3, տ. Голу́бчикъ 3.

Голу||бовáтость ի. կապտաւունութիւն. -бовáтый ած. կապտաւուն, փոքր ինչ կապոյտ. -боглáзый ած. կապոյտ աչքերով, խաժակն։

Голубóй ած. կապոյտ, երկնագոյն, խաժգոյն, 'մաւի'. г—áя лóшадь մոխրագոյն (երբեմն նաև դեղնաւուն) ձի։

Голубóкъ, бкá 1, նւզ. աղաւնեակ. *голубки́ ես սիրախանդ ամոլ. 2, голубóкъ և голубки́ յ. բս. Aquilegia vulgaris, հասարակ արծուամագիլը։

Голубо||óкій տ. Голубоглáзый; г—ая красáвица; -сѣ́рый ած. կապոյտ գորշգոյն. г—ая кóшка.

Го||лубóчекъ, чка նւզ. տ. Голубóкъ; -лу́бушка ի. փղքշ. աղաւնեակ (թէ աղաւնի. г. сизокры́лая և թէ սիրելի, պաշտելի կին. г. моя́!) -лу́бчикъ ա. 1, նւզ. տ. Го́лубь; 2, *սիրելիս, հոգիս, ջանիդ ղուրբան (ասում են տղամարդիկ միմեանց). г., покажи́ мнѣ дорóгу; 3, *ղուրբան քեզ, ձիս, եզս ելն։

Го́лубь ա. (յ. го́луби, бéй) ա. 1, կնդ. Columba, աղաւնի. г. ди́кій, кáменный, си́зый, C. livia, վայրասուն հաւփալ. г. еги́петскій, C. risoria, ծիծաղասէր աղաւնին. почтóвый г. պօստային աղաւնի. гóнный г. տ. Гóнный; 2, ընկերական, խըմբական խաղ մի. 3, աստղ. հարաւային համաստեղութիւն մի. 4, ռմկ. սիրելիս, հոգիս (յորջորջում տղամարդի). 5, бѣ́лые гóлуби կոչուում են ներքինիական աղանդի հետևողները։

Голубѣ́ть, пог—, չ. կապտիլ, կապտանալ, կապուտակիլ։

Голу||бя́тина ի. աղաւնու միս. -бя́тникъ ա. 1, աղաւնեսէր, աղաւնիներ պահող, աղաւնիների սիրահար. 2, աղաւնիների որսորդ. 3, աղաւնորս; աղաւնիներին վրայ տուող գիշատիչ թռչուն, ինչպէս բազէ, ճուռակ եւն. 4, տ. Голубя́тня.

Голу||бя́тница ի. 1, աղաւնեպահ կինարմատ. 2, նովգ.նահ. նաւակ, կուր մի. -бя́тничать չ. 1, աղաւնիներ պահել, աղաւնիներ բուծանել. 2, *հեգն. պարապ-սարապ ման գալ, 'քամի կուլ տալ', ճանճեր քշել. -бя́тня ի. աղաւնիների տեղ, աղաւնատնոց. -бя́чій, чья, чье տ. Голуби́ный.

Голутвá ի. կտրած անտառամաս։

Голу́ха ի. 1, մերկ, տկլոր, հոլանի կինարմատ. 2, (Սիբիրի գործարաններում) առանձին եղանակ պղինձը հալելու։

Голъ ա. (հոլ.) հնց. նաւի փորը։

Гó||лый (-лъ лá, ó և о) ած. 1. մերկ, տկլոր, հոլանի, լերկ. г—ое тѣ́ло, г—ая сáбля, спать на г—ом полу́; у негó головá голá; г—ая зимá անձիւն ձմեռ. 2,* մերկ, *տկլոր, *աղքատ, ձեռնունայն. г. дворяни́нъ; голъ какъ бу́бенъ կամ голъ какъ сокóлъ բոլորովին մերկ է, ոչնչէն ոչինչ չունի. 3, զուտ, խտակ, մաքուր. э́то не нали́вка, а гóлое винó այդ ոչ թէ օշարակ, այլ զուտ օղի է. г—ая соль խիտ աղի է, բոլորովին աղ է (կերակրի մասին); *гóлая и́стина զուտ ճշմարտութիւն. *г—ыя словá դատարկ, վարկպարագի խօսքեր. г—ые фáкты պարզ փաստեր։ Съ гóлыми рукáми ա, ձեռնունայն, դատարկ ձեռքերով. съ гóлыми рукáми къ имени́нникамъ не хóдятъ; ը, անդէն, առանց զէնքի։ Гóлó չ. 1, մերկ, հոլանի կերպով. собáка вы-

стрижена на́-голо́; 2, *աղքատութեամբ: На́-голо́ տ. Наголо́; держа́ть са́блю н.

Голы́нь ի. Կապոյց ծովում աւազոտ ծանծաղուտ, որ սակաւաջրութեան ժամանակ բացւում է:

Го||лытьба́ ի. հ—ժ. *մերկ, *տկլոր, աղքատ, մարդիկ. -лышёвый ած. ճաղաքարի, ողորկուած քարի. -лы́шка 1, հոր. մերկ, հոլանի, տկլոր մարդ. 2,* հոր. մերկ, տկլոր, աղքատ մարդ, մուրացկան. 3, ի. ձաւար, բրինձ (թեփից մաքրած), փարտակապուր. 4, ի. տ. Голя́шка 3; лы́шъ, а́ ա. 1, մերկ, տկլոր մարդ. 2,* տկլոր, մերկ, աղքատ մարդ, մուրացկան. 3, ճաղաքար, ջրից ծեծուած, կլորուած և ողորկուած քար. 4, անկըճեպ, լոկ թաղանթով պատուած ձու. 5, բս. Salvia nutans, եղեսպակ: Голышо́мъ մ. մերկ մարմնով, տկլոր:

Го||ль ի. I. 1, մերկութիւն, հոլանիութիւն. 2, մերկ բան, մերկ մարմին. բաց, անանտառ կամ բուսազուրկ տեղ, տարածութիւն. 3,* աղքատութիւն, չքաւորութիւն. և հ—ժ. աղքատ, չքաւոր մարդիկ. голь на вы́думки хитра́ (առծ.). голь каба́цкая գինեմոլ մուրացկաններ. голь перека́тная նվատ. աղքատ թափառաշրջիկներ. въ голя́хъ, на голя́хъ շատը կորցրած, քիչը պահած, նեղութեան, կարօտութեան մէջ. ему́ въ голя́хъ (на голя́хъ) и э́то годи́тся. Го̀ли, голе́й յ. (зернь խաղի մէջ) խիստ աննշան աչքեր քարերի. бросилъ г. Го́лью մ. 1, լոկ, անխառն, զուտ. онъ ѣстъ говя́дину го́лью նա միսը առանց հացի է ուտում. ѣхать го́лью անձիւն ժամանակ սահնակով ճանապարհորդել. 2, կանխիկ, ՝նաղդ՝. II, հասարակ չինական կերպաս մի:

Голье̂, я́ չ. հ—ժ. 1, անխառն, զուտ, մաքուր բան. онъ пьётъ ромъ гольёмъ; 2, նորանշան ուական մի, դեռ ևս չգործածուած (Վոլգայի վերայ). 3, հ—ժ. ցախ, աւել:

Го́лькѐль, я и я́ ա. (գերմ.) 1, ծրտրպ. ակօս, փորուածք. 2, խարարուց (ռանդա) մի՝ փորած լեզուակով:

Гольтепа́ ի. ռմկ. տ. Голы́тьба́.

Го||льцы́, о̀въ ա. յ. տ. Голе́цъ 3; -льчикъ նւզ. տ. Голе́цъ 1; -лья́нъ ա. խիստ մանրաթեփ ազնիւ ձկնիկ մի:

Го||лѣ́ть, ог—, չ. 1, մերկանալ. տկլորուիլ. 2,* տկլորուիլ, աղքատանալ, տնանկանալ. онъ совсѣ́мъ оголѣ́лъ; -ля́къ, а̀ ա. -ля́нка ի. *մերկ, *տկլոր, աղքատ, տնանկ այր, կին:

Голя́нщина տ. Горя́нщина.

Голя́нъ տ. Голья́нъ.

Го||ля́шка ի. 1, տ. Го́лень; 2, տ. Голени́ще; 3, ոչ պատուական տաւարի միս (սրունքներից և չնքի մօտերքից). -ля́шъ, а́ տ. Голя́къ.

Гома́ръ տ. Ома́ръ.

Гомео||пати́ческій ած. 1, հոմէոպատիական, նըմանաբուժական. г—ое лѣче́ніе; 2,* հեգն. խիստ աղքատ, նուազ. г. за́втракъ; -па́тія ի. (յն.) հոմէոպատիա, նմանաբուժութիւն (հկռկը տ. Аллопа́тія); -па́тъ ա. -па́тка ի. նմանաբուժութեան հետևորդ. նմանաբոյժ այր, կին:

Гоме||ри́ды ա. յ. պատմ. հոմերականներ, աշուղներ, որոնք երգում էին Հոմերոսի վիպական բանաստեղծութիւնները. -ри́ческій ած. հոմերոսական. *г. смѣхъ անզուսպ, խիստ բարձր ծիծաղ:

Гом||за́ ի. ռմկ. 1, դրամապանակ, քսակ, ՝քիսա՝. 2, փող, դրամ, ստակ (տճ. հյ.). у него́ поря́дочная г.; -зе́ля գւռկ. տ. Гомзу́ля; -зи́ла հոր. ռմկ. փողամոլ, ագահ, ժլատ, գծուծ ամն:

Гом||зи́ть (-жу́ -зя́тъ) ն. ռմկ. ագահաբար դրամ դիզել. -зи́ха ի. ռմկ. տ. Гомзи́ла; -зу́ля ի. ռմկ. 1, հացի մեծ պատառ, ՝թիքա՝. 2, տ. Гомза́ 2; онъ не такъ бѣ́денъ: у него́ есть до́брая г.; -зу́ха ի. ռմկ. տ. Гомза́.

Гомиле́тика ի. (յն.) քեմբասացութիւն:

Гомо||за́ հոր. ռմկ. -зе́йка հոր. փղքշ. անհանգիստ, դադար չունեցող ամն:

Гомо||зи́ть (-жу́ -зя́тъ) չ. հանգստութիւն, դադար չունենալ, շարունակ դէս ու դէն ընկնել. -ся անդր. 1, տ. Гомози́ть; 2, (որդունքի մասին) վխտալ, զեռալ. че́рви гомозя́тся въ сыру́; 3, առհ. բազմութեամբ շարժուիլ, վխտալ, հաւաքուիլ. -зня́ ի. անդադար շարժողութիւն, իրարանցում:

Гомо́лька ի. ռմկ. ծծան, պտուկ մանկանը կաթ տալու համար:

Го||мони́ть (-ню́ -ня́тъ) չ. բարձր-բարձր խօսել. աղաղակել, ՝ղալմաղալ՝ բարձրացնել. на схо́дкѣ гомоня́ть; -ся փխդր. միմեանց հետ խօսել, խորհրդակցել. -монъ ա. աղմկալի խօսակցութիւն, ՝ղալմաղալ՝:

Го||мою́нка ի. տ. Гомою́нъ 2; -мою́нъ ա. ռմկ. 1, հոգացող, եռանդոտ, խաղաղ մշակ. 2, (гомою́нка ի.) դադար, հանգստութիւն չունեցող, շարունակ դէս ու դէն ընկնող այր, կին:

Гомру́ль ա. (անգլ.) հոմրուլ. 1, սեպհական կառավարութիւն, ազգային ժողով, որ իռլանդացիք ձգտում են ձեռք բերել. 2, դորա օրէնսգիծը կամ հայցը:

Гомѣ́ть չ. ռմկ. տ. Гами́ть.

Го́нве́ды ա. յ. (մջռ.) հոնվէդներ (մաջառական զունազը, հայրենապաշտպան գնդերը):

Гонгъ ա. (մալայերն.) գոնգ (Հնդկաստանում, Չինաստանում և ուրիշ տեղեր մետաղէ գործիք, որին զարկելով մի բան յայտարարում են):

Го́н||до́ла ի. (իտ.) գոնդոլ. 1, վենետկեան մակոյկ. 2, օդապարիկից կախած մակոյկ, զամբիւղ. -дольѐръ ա. (իտ.) գոնդոլավար, գոնդոլ մակոյկը թիավարող. -до́льный ած. գոնդոլի, գոնդոլային:

Го||не́ніе չ. հալածում, հալածանք. импера́торы ри́мскіе неоднокра́тно воздвига̀ли г. на христіа́нъ; -не́цъ, нца́ ա. 1, սուրհանդակ. պընդաքեսպան. 2, որս. խիստ արագաշարժ բարակ. 3,=го́нный го́лубь (տ. Го́нный); 4, բս. Sedum acre, դառն գառնադմակիկը (վայրի ադոխ). -ни́мый ԷՅ. ած. հալածուած, հալածուող:

Го||ни́тель ա. -ни́тельница ի. հալածիչ, *մորակիչ:

Гоніоме́тръ ա. (յն.) անկիւնաչափ (բիւրեղների):

Го́||нка ի. 1, քշելը, հալածելը, խրկելը, վռընտելը. 2, լաստերով փայտ քշելը. 3, մեղուամով նաւավարութիւն, թիավարութիւն. гребна́я, па́русная г.; 4, լաստ (գերաններից կամ փառելափայտի). 5, ձիւթ քաշելը. 6, արաղ, օղի քաշելը, թորելը. на го́нку вина́ ухо́дитъ мно́го хлѣ́ба; 7, յանդիմանութիւն, չշպրում. ему́ да́ли до́брую го́нку за ша́лости.

Го́||нкій ած. խիստ կրակոտ (բարակների, որսի բաղէների մասին): *Го́нкій лѣсъ բարձրուղէշ անտառ. -ный ած. հնց. հետապնդելու. г—ая слобода́.=Ямска́я сл. (տ. Ямско́й); г.

аха́нъ (Կասպից ծովի վերայ) ուռկան, որով հեռուից պարփակելով փոկերի տարմը, այսպ կոտորում են։ Го́нный го́лубь սպիտակ, բայց եւ թեերով, խաղացող աղաւնի մի։

Гоно‖бо́бель, -бо́й, -бо́ль ж. Голуби́ка; -бо́льникъ м. թուփ, եւ հաւ. թփուտ կապոյտ հապալասու։

Гоно‖ра́рій, -ра́ръ м. (լտ.) վարձ, վարձատրութիւն (մնւռ. գրական, գիտական և գեղարուեստական աշխատանքի համար)։

Го́норъ м. (լեհ.) 1, պատուասիրութիւն, բարի, անբիծ անուն, հռչակ. 2, հեգն. աւելորդ պատուախնդրութիւն, մեծամտութիւն. հպարտութիւն. ба́рыня съ г—омъ.

Го‖ноша́ հոր. ռմկ. խնայող, կոպէկի յետեւից ընկած մմն. -ноши́ть (-шу́ -ша́ть), сг—, չ. ռմկ. 1, խնայել, կոպէկների յետեւից ընկնել, աշխատել հարստութիւն, դրամ դիզել. сгоноши́лъ себѣ́ копее́чку; 2, շտապով անել, գործել։

Го‖нта́ть չ. տաշեղ կտրել. -нти́на ի. տաշեղ, փայտի բարակ թերթ. -нтово́й ած. 1, տաշեղի, -ղների. г—ые гвѐзди; 2, տաշեղներից բաղկացած, տաշեղով ծածկուած. г—а́я кро́вля; -нтовщи́къ, а́ м. տաշեղ կտրող։

Гонтъ м. հաւ. տաշեղներ, փայտի բարակ թերթեր, որով տանիքներ են ծածկում. домъ покры́тъ го́нтомъ.

Гон‖ча́рничать չ. բրուտութիւն, կաւագործութիւն անել. -ча́рный ած. բրուտութեան, կաւագործական, -ծութեան. г—ыя издѣ́лія; -ча́рня ի. բրուտանոց, կաւագործանոց. -ча́рство չ. բրուտութիւն, կաւագործութիւն. -ча́ръ, а́ м. բրուտ, կաւագործ։

Го́нчая (соба́ка) ի. մեծ գլխով և կախ ընկած ականջներով բարակ, զամփռ, քերծէ, որ վոհմակովին և բարձր հաչոցով որսին հետապնդում է։

Гонъ м. 1, հալածելը, հետապնդելը. 2, տ. Разго́нъ 2; 3, կտոր հող, միջնակ. խոտհարքում այն կտորը, որ խոտհարները մի շընչում հարում են. այն տեղը, ուր շրջապատել են որսի կենդանիներին։ Бобро́вый г. վայր, ուր հին ժամանակ շնձրիներ (կղբեր) էին բազմանում. 4, հնց. պօստային ձիաների կայարան. 5, հնց. օտար կամ համայնական անտառից օգտուելու, նորա մէջ որսալու իրաւունք, արտօնութիւն. 6, որս. բարակի անդամը։ Го́ны յ. հնց. այն տարածութիւնը, որ կարելի է անցնել առանց ձիաները փոխելու. до дере́вни то́лько дво́и го́ны; бѣжа́ть съ кѣмъ въ го́ны մէկի հետ մրցումով վազել (въ го́ны=Вза́пуски).

Го‖ньба́ ի. 1, հետամուտ լինելը, հետապնդում. г. за чина́ми, за ордена́ми; 2, կառքով տանելը, տեղափոխելը. ямщи́къ отпра́вился въ г—у́; вчера́ была́ больша̀я г. երէկ մեծ անցուդարձ կար. շատ կառքեր, ուղեւորներ անցան. 3, որսորդութիւն, բարակներով, զամփռներով գազաններ որսալը. եւ սոցա հաչոցն ու հետապնդումը. 4, Արեւել. Սիբիր. վայրի կենդանիների, մնւռ. գիշատիչների ցուլ գալու ժամանակը. -ню́ տ. Гнать.

Гоня́ть չ. (հմմ. Брести́ ծանօթ.) 1, քշել, հալածել, վռնդել, խրկել. г. голубе́й աղաւնիներին քշելով; քիշ անելով թռցնել. г. собакъ կամ голубе́й կռկւ. ճանճեր քշել, փչութիւններ անել. 2, որս. հետապնդել, հալածել. до́лго съ соба́ками гоня́ли по медвѣ́дю; г. за́йцевъ; 3, (пог—) *յանդիմանել, կշտամբել, շշպրել, ՙներկել՚. г. слугу́ за пья́нство; погоня́лъ, погоня́лъ его́, да и прости́лъ; -ня́ться, пог—, 1, չ. за кѣмъ, за чѣмъ մէկի, մի բանի յետեւից ընկնել, մէկին, մի բանի հետամուտ լինել. охо́тники гоня́ются за лиси́цею; г. за бога́тствомъ, за при́былью; 2, փոխբ. մրցել (վազելիս, արշաւելիս). они́ гоня́лись на бѣгу́.

Гопа́нъ, а́ м. (գերմ.) հոպակ (փոքր-ռուսական պար, կաքաւ). выбива́ть г—а́.

Гора́ ի. 1, լեառ, սար. поднима́ться на́ гору, спусти́ться съ горы́; итти́ въ го́ру լեառն 'ի վեր բարձրանալ. *պաշտօնի մէջ առաջանալ, առհ. առաջ գնալ, անուն հանել. итти́ по́дъ гору լեառից իջնել. лѣзть въ го́ру յամառութիւն ցոյց տալ, կոպ ցոյց տալ, վիճելիս տաքանալ. сла́вны бу́бны за гора́ми (առծ.) հեռու խաչը գօրաւոր կլինի. *не за гора́ми հեռու չէ, մօտալուտ է. какъ гора́ съ плечъ կարծես շալակից բեռ ընկաւ. онъ сталъ г. горо́й նա խիստ տըրտմել, գժւացել է. гора́ роди́ла мышь (առծ.) այնքան հարայ-հուրայից աչինչ չդուրս եկաւ. 2, Վօլգայի աջ, լեռնոտ ափը, բարձր գետափ (Սպիտակ ծովի մօտ), հանք (Սիբիրում). 3, (յոքն. յ. го́ры) անագին բազմութիւն. շատութիւն, կոյտ, շեղջ, ահագին իր, առարկայ. сули́ть кому́ золоты́я го́ры մէկին ամէն տեսակ բարիքներ խոստանալ։ -Горо́ю, горо́й մ. 1, լեառն պէս հաստատ, անդրդուելի կերպով. стоя́ть за кого́-нибудь горо́ю; 2, ափով. առհ. ցամաքով, բարձր տեղով, լեռնոտ ճանապարհով. онъ поѣ́халъ не горо́ю, а ни́зомъ.

Гора́здъ, а, о ած. հմուտ, տեղեակ, գիտակ, վարպետ, ձեռնհաս, ընդունակ. гра́мотѣ не гора́здъ ռմկ. կարդալ գրել չգիտէ. кто во что гора́здъ նայելով թէ մարդ ինչ բանի մէջ հմուտ է։ Гора́зже, -здѣ́е, -зднѣе բաղդտ. ռմկ. աւելի հմուտ, աւելի տեղեակ, աւելի վարպետ։ Гора́здо մ. (գործածական միայն ածականների բաղդտ. աստիճանի հետ) 1, աւելի. гора́здо лу́чше; г. вѣроя́тнѣе աւելի լաւ է, աւելի հաւանական է. 2, ռմկ. խիստ, սաստիկ. онъ г. поотста́лъ.

Гор‖ба́тенькій ած. փղքշ. փոքր ինչ սապատող, ՙկուզ՚, ՙկուզիկան՚. ма́ленькій, г. всё по́ле проска-ка́лъ (հանելուկ.—մանգաղ). -ба́тить (-чу -тятъ) չ. սապատող դարձնել, *ճնշել, ընկճել. серпъ не бога́титъ, а *горба́титъ (առծ.). -ба́тость սապատողութիւն, ՙկուզութիւն՚, ՙկուզիկանութիւն՚. -ба́тый ած. սապատող, ՙկուզ՚, ՙկուզիկան՚. г. человѣ́къ; г—ая спина́; г—аго моги́ла испра́витъ (առծ.) սեւին սապոն, խենթին խրատ. -ба́тѣть, пог—, չ. սապատող ՙկուզ՚, ՙկուզիկան՚ դառնալ։

Горбачо́къ, чка́ м. բս. Boletus globosus, սապատաւոր թնջուկը, սունկը։

Горба́чъ, а́ м. 1, տ. Горбу́нъ; 2, փոկերից կամ թելերից ալիքի հիւսած մտրակ. 3, սապատաւոր խարաբուզ (ռանդա) մի. 4, բեռնակիր (ցորենի, ալիւրի ջուալներ կրող). եւ Սիբիրի ոսկէ հանքերում բանուոր։

Го́р‖бикъ նւզ. տ. Горбъ; -би́на ի. -би́нка նւզ. թեթև խիլ, դուրս պրծած, ուռուցիկ տեղ. стеса́ть г—у на де́ревѣ, на ка́мнѣ; дли́нный носъ съ горби́ной; -би́стый ած. խլոտ, խլխլոտ, խոր-

տուբորտ (օր. տախտակ, գետին). -бить (-блю -бятъ), сг—, ն. կորացնել, կռացնել, ծռել. г. спи́ну; -биться, сг—, անդր. մէջքը կորացնել, կըռանալ. -би́ще չ. յոգն. մի ահագին սապատ:

Гор||бова́тый ած. փոքր ինչ սապատող, ‘կուզ‘, ‘կուզիկան‘. -бови́дный ած. սապատակերպ. -бови́на ի. խիստ շեղ զառիվայրով բլուր:

Горбо́къ, бка́ նւզ. տ. Горбъ.

Горбо||но́ска հոր. -но́съ ա. սապատաքիթ, քթի ծայրին սապատ, խիլ ունեցող, ռնգասապատ մարդ կամ անասուն. -но́сный ած. սապատաքիթ, ռնգասապատ. -обра́зный տ. Горбови́дный.

Гор||бо́чекъ, чка նւզ. տ. Горбо́къ; -бу́ля տ. Горбу́ша 1; -буно́къ, нка́ ա. 1, նւզ. տ. Горбу́нъ; 2, ծովաձի մի (Hippocampus); -бу́нчикъ նւզ. տ. Горбу́нъ. -бу́нъ, а́ ա. -бу́нья ի. սապատող, ‘կուզ‘. ‘կուզիկան‘ այր, կին. -бу́ха ի. ռմկ. որ և է բանի, մնւդ. մեծ հացի, կրկնու կոր ափը:

Гор||бу́ша ի. 1, Տիւս. մի տեսակ մանգաղ կեռ կոթով. 2, ձկն. Salmo Proteus, սալ'մոն մի. -бу́шечка նւզ. -бу́шка ի. նւզ. կլոր հացի կտրած ափը. -бу́шникъ ա սղոցած տախտակի հաստ ծայրը:

Горбъ, а́ 1, խիլ, դուրս պրծած, ուռուցիկ տեղ. г. на доскѣ́; 2, սապատ, կուտկէն. верблю́дъ о двухъ горба́хъ երկկուտկէն, երկսապատանի ուղտ. 3, սապատ, ‘կուզութիւն‘, ‘կուզիկանութիւն‘ (մարդու). у него́ г. сза́ди и спе́реди; 4,* ռմկ. քամակ, մէջք. отъ рабо́ты г. боли́тъ; наколоти́ть кому́-либо г. մէկի մէջքը ջարդել. накла́сть кому́ въ г. մէկի մէջքին մի քանի անգամ բռունցքով խփել. гнуть, погну́ть г. ջանասիրութեամբ աշխատել. 5, քթի ծայրի դուրս պրծած ոսկորը. носъ съ горбо́мъ (հմմ. Горби́на). Г о р б о́ м ъ Տ. սապատի պէս, ուռուցիկ կերպով:

Гор||бы́ль, я́ ա. գերանի երեսից քաշած (ուսափ և մի կողմից սապատով) տախտակ. -бы́лька ի. նւզ. պատուհանի շրջանակի մէջ փայտ մի:

Гор||дели́вецъ, вца տ. Горде́цъ; -дели́вица ի. հըպարտ, գոռոզ կին, կինարմատ, աղջիկ. -дели́вость ի. հպարտութիւն, գոռոզութիւն. -дели́вый ած. հպարտ, գոռոզ. բարձր, վեհ, սէգ. г. видъ; г—ая по́ступь սիգաճեմ քայլուածք. -де́некъ, нька, о ած. բաւականաչափ հպարտ, գոռոզ, սէգ:

Горде́нь ա. (հոլ.) ծովգ. առագաստակալ պարան մի:

Гор||де́цъ, еца́ ա. հպարտ, ամբարտաւան, գոռոզ մարդ. -ди́ться (-жу́сь -дя́тся), заг—, возг—, անդր. հպարտանալ, ամբարտաւանանալ, գոռոզանալ, մեծամտել. г. передъ кѣмъ-либо; г. чѣмъ մի բանով պարծենալ, հպարտանալ:

Го́рдіевъ у́зелъ 1, պատմ. Գորդեան հանգոյց. 2,* խճճուած, դժուարին, անմեկնելի գործ, խնդիր. разсѣ́чь, разруби́ть го́рдіевъ у́зелъ Գորդեան հանգոյցը կտրել. *դժուարութիւնից ազատուել:

Гор||до́вина ի. տ. Гордъ; -до́вый ած. գերիմաստու, -տուց. г. чубу́къ; г—ое де́рево տ. Гордъ.

Гор||до́й տ. Го́рдый 3; -дорѣчи́вый ած. հպարտ հպարտ խօսող, ճամարտակող, պոռոտախօս:

Го́рдость ի. հպարտութիւն, ամբարտաւանութիւն, գոռոզութիւն, մեծամտութիւն:

Гордъ ա. բս. Viburnum lantana, գերիմաստի:

Гор||дыба́ка հոր. խիստ գոռոզ, խրոխտ, յանդուգն մարդ. -дыба́чить (-чу -чатъ) չ. հոր. յանդգնաբար գոռոզանալ, հպարտանալ, լրբութիւն, անձարձակութիւն անել. -дыба́чъ, а́ ա. տ. Гордыба́ка.

Го́рдый (-рдъ -рда́. о) ած. 1, հպարտ, ամբարտաւան, գոռոզ, մեծամիտ. Госпо́дь го́рдымъ проти́вится, а смире́ннымъ даётъ благода́ть» Տէր ամբարտաւաններից հակառակ կայ, այլ շնորհս խոնարհաց (Թուղթ Յակոբու, 4_6). г. взглядъ, г—ая усмѣ́шка; 2,* վեհ, վէս, սէգ, փառահեղ. 3, Г о́ р д ы й և г о р д о́ й (հարսանիքի երգերում) հանդիսաւոր, ճոխ, փարթամ. պատուաւոր. гордо́й столъ, обѣ́дъ, у́жинъ; горды́е го́сти.

Гор||ды́ня ի. սաստիկ հպարտութիւն, ամբարտաւանութիւն, ամբարհաւաճութիւն. -дѣ́ть, возг—, չ. հպարտանալ, գոռոզանալ, ամբարհաւաճիլ:

Гор||дя́нка, -дя́чка ի. ռմկ. հպարտ, ամբարտաւան, մեծամիտ կին, կինարմատ, աղջիկ:

Го́ре չ. 1, վիշտ, թախիծ, տրտմութիւն, տըխրութիւն, կսկիծ, ցաւ. քամբախտութիւն, դըժբախտութիւն, աղէտ, ձախորդութիւն. мы́кать г. վշտանալ, այրուիլ խորովուիլ. къ моему́ го́рю իմ քօռ բախտից. помо́чь го́рю, пособи́ть го́рю թշուառութիւնը ամոքել. ему́ го́ря ма̀ло до чего́-нибудь այդ նորա հոգսը չէ, ‘վէջը չէ‘, նա անտարբեր է. 2, (իբրև մակդիր) ողորմելի. արգահատելի. 3, (իբրև) Տչ. վայ, վաշ, աւաղ. го́ре мнѣ! го́ре клятвопресту́пнику!

Го||рева́ніе չ. տրտմութիւն, վշտացնութիւն, մորմոք. -рева́ньице ռմկ. փոքր. տ. Го́ре; -рева́ть (-рю́ю -ю́тъ) չ. о комъ, о чёмъ մէկի, մի բանի վերայ (համար) վշտանալ, տխրել, տրտմել, ցաւել, մորմոքուել. г. о потéрѣ дру́га.

Го||рево́й, -рего́рькій ած. ռմկ. ողորմելի, աղիողորմ, արգահատելի, վատթար:

Горелье́фъ ա. (Ֆր.) բարձրաքանդակ (հմմ. Барелье́фъ).

Горе||мы́ка հոր. ռմկ. թշուառական, բազմավիշտ, բազմաչարչար ոմն. -мы́кать (-каю -ютъ և -мы́чу -чуть) չ. չարչարուիլ, տառապիլ, աղէտ, թըշուառութիւն կրել. -мы́чка ի. ռմկ. լղարած, վըտիտ, ‘գարնած‘ կով. -мы́чный ած. աղէտալի, թշուառ, վշտալից, տխրալի, արգահատելի. г—ая жизнь; сирота́ г—ая.

Го́ренка ի. նւզ. պատիկ սենեակ գիւղական խրճիթի յարկի տակ:

Го́||рестный ած. ցաւալի, արգահատելի, կսկծալի, դառն, տխուր. г—ое воспомина̀ніе; г—ая жизнь; -ресть ի. 1, տխրութիւն, տրտմութիւն, վիշտ, աղէտ, թախիծ. жизнь человѣ́ческая испо́лнена го́рестей; 2, եկ. սւ. դառնութիւն, դառն համ:

Горецъ ա. I, (го́рецъ, рца) լեռնական, լեռնաբնակ (մնւդ. Կովկասեան). II, (горе́цъ, рца́) ա. բս. Polygonum, մատնեղ. P. bistorta, մանդիկ (մանդակ). г. пти́чій, P. aviculare, արինճ (հաւու կեր):

Гореча́||вка ի. բս. Gentiana, բոզ, ‘ճէնթիան‘. -вочный ած. բոզի, բոզից:

Го́речь ի. 1, դառնութիւն, դառն համ. դառն դեղ, դարման. пить, принима́ть г.; 2,* անձկութիւն, դառնութիւն, կսկիծ, վիշտ, աղէտ. г. разлу́ки; г. нищеты́; г. упрёковъ.

Горже́ніе չ. հպարտանալը, պարծենալը, հըպարտութիւն, պարծանք:

Гори||зонта́льность ի. հորիզոնականութիւն. -зонта́льный ած. հորիզոնական. г—ая ли́нія, г—ое положе́ніе; -зо́нтъ ա. (յն.) հորիզոն. на г—ѣ появи́лись ту́чи; полити́ческій *г. քաղաքական

Ֆօրիզոն, տապարէզ. его́ у́мственный *г. тѣсенъ նա սահմանափակ մտքի տէր է. *г. поня́тій.

Гори́лла ի. կնդ. Troglodytes Gorilla, գորիլա[ամէնամեծ, մարդակերպ կապիկ]ն։

Гори́стый ած. լեռնոտ, լեռնային, լեռնաւէտ, բլրաշատ. г—ая страна́, г—ая мѣ́стность.

Гори́‖хво́стка ի. կնդ. Ruticilla phoenicura, սապատոնուկը, կարմրատուտն (թռչնիկ մի Կեռնեխազգիներից — Turdidae). -цвѣ́тъ ա. բս. Lychnis, բաց շողավարդը։

Гори́чникъ ա. բս. Peucedanum, մարգացնծու։

Гори́ща ի. յւեչ. մի ահագին, մեծ լեռ, սար։

Го́рка ի. 1, նւզ. լեռնակ, պստիկ սար. 2, գարակ. 3, տ. Дру́за; 4, ռմկ. թղթախաղ մի։ Кра̀сная го́рка հեթանոսութիւնից մնացած զարնան տօն, որ այժմ էլ ռուս ժողովուրդը տեղ տեղ տօնում է բարձրութիւնների վերայ Կանաչ կիւրակի (Նոր կիւրակի) օրը։

Гор‖ла́нить (-ню -нятъ) չ. և չ. ռմկ. խիստ բարձր աղաղակել, բղաւել, երգել, ‚գոռալ‘. -ла́нъ ա. 1, (горла́нья ի.) խիստ բարձր աղաղակող, երգող, ճւճւան այր, կին. 2, տ. Горла́чъ 2 և 3; -ла́стый ած. ռմկ. 1, խիստ բարձր ձայնով. 2,* ճւճւան, աղմկալից. 3, լայն ճռով, լայն բողազով. г—ая ба́нка; -ла́тка ի. հաստունցած մուշտակաւոր գազան, որի ճիտը տարբեր գոյնի բուրդ ունի. 2, այսպիսի մուշտակից կարած գլխարկ. -ла́тный ած. ճտի, վզի, ճտաւոր. -ла́чъ. а́ ա. 1, տ. Горла̀нъ 1; 2, կնդ. Mycetes seniculus, կարմիր կռնչակապիկը. 3, փոքր և սպիտ. ռուս. նեղ ճռով կաթնաման մի։

Го́р‖ленка նւզ. տ. Го́рлица 1; -лёнокъ, нка ա. տատրակի ճուտ, ձագ. [դիկ (մանգակ)։

Горле́цъ, а́ ա. բս. Polygonum bistorta, ման-

Го́р‖ликъ ա. արու տատրակ, վարուժան. -линка տ. Го́рленка; -лица ի. 1, կնդ. Columba turtur, տատրակ. 2, փոքր ռուսական պար, կաքաւ մի. 3, (փաղաքշաբար անուանում են օրիորդին, մնւզ. Փոքր-Ռուսիայում) աղաւնեակ, հոգեակ. -личій, чья, чье ած. տատրակի։

Го́рло չ. 1, որկոր, կոկորդ, խռչափող. 2, բուկ, ‚բողազ‘. г. боли́тъ բուկս ցաւում է. схвати́ть кого́ за г. մէկի բկից, բողազից կալնել. взять г—омъ գոռալով իր ասածն անել. дра́ть г., распусти́ть г. գոռալ, բարձր բղաւել. дерётъ г. բողազը խանձում է (գառն և թունդ խմիչքի մասին). *заткну́ть кому́-либо г. ա. մէկի բերանը կալնել, մէկին լռեցնել. բ, մէկի բերանը ցխել, մէկին կաշառել. *нали́ть г. լաւ գըցել, հարբել. сытъ по г. ա, կերել կշտացել է. *բ, եղ ու մեղրի մէջ լողում է. онъ и такъ сытъ по г., а всё берётъ взя́тки; приступи́ть съ ножо́мъ къ го́рлу խեղդել, ստիպել. 3, ճիտ (անօթի). отшиби́ть г. у кувшина; 4, ճիւղ, առաջք (գետաբերանի), հմմ. Ги́рло 2.

Гор‖лови́на ի. 1, անդունդի, վիհի անցքը, բերանը. г. огнеды́шащей горы́; 2, շոգեսանի կլոր կամ ձուաձև անցքը. -лово́й ած. որկորի, կոկորդի, -դային. բգի, ‚բողազի‘. г—ыя болѣ́зни; г—а̀я чахо́тка; г. го́лосъ, г—ы́я но́ты; -лодёръ ա. ռմկ. 1. գոռացող, ճւճւան, ճղճղան ոմն. 2, խիստ թունդ թութուն, խիստ կծու, տափիլ, բողազ խանձող գինի. -лозу́бка ի. կլորաբերան ձուկ մի Քարադիւացներից (Քարալէզներից). -лопа́й, -лопа́нъ ռմկ. տ. Горлодёръ 1; -лопа́нить (-ню -нятъ) ռմկ. տ. Горла̀нить; -лопа́стый ած. ռմկ. խիստ բարձր խօսող, ծղրտան. -лопёрый տ. Глоткопёрый; -лопя́тина ի. ռմկ. խիստ թթու, կծու կամ չափազանց աղի կերակուր, որ դժուար է կուլ տալ. -лохва́тъ ռմկ. տ. Горла́нъ, -лодёръ, -лопа́й.

Гор‖лупа́ ի. -лу́пникъ ա. բս. Bunias orientalis, խոտ մի Խաչաբերներից—Cruciferae.

Го́рлышко չ. նւզ. բողազ, ճիտ (օր. շշի)։

Горлюпа́ տ. Горлупа́.

Гор‖ля́нка ի. 1, կօշ, կօկօշ, շշուկ (իբրև ջրաման). 2, բոյսեր, որոնք ծառայում են իբրև գըլխացաւի դեղ, օր. երկտուն անմեռուկը (Gnaphalium dioicum). 3, բղացու, բողազացու. 4, քիմ. թորանօթ, ապակէ գնդաձև անօթ մի եր- [կար ճռով։

Горляно́й տ. Горлово́й.

Го́рмя ^. ռմկ. (գործծկ. горѣ́ть բայի հետ) վառ, բոցավառ կերպով. гори́тъ-го́рмя.

Гор‖ни́ло չ. հնց. տ. Горнъ I; *г. страсте́й, *г. о́пыта կրքերի, փորձառութեան հնոց. -ни́льный ած. հնոցի, հալոցի։ [փողհար։

Горни́стъ ա. (զերմ.) հօրնհար (տ. го́рнъ II):

Го́р‖ница ի. 1, հնց. տանիք, ձեղուն. 2, (առաջ) վերնատուն. (այժմ) առհ. սենեակ. գիւղական տան մաքուր օթախը. -ничный ած. վերնատան. սենեկի, օթախի. г—ая дверь, г—ое окно́. Го́рничная, ой ի. սենեկապանուհի, նաժիշտ։

Го́рній ած. եկ. ալ. 1, վերին, բարձրի. 2,* վեհ, վերին, երկնային. «о го́рнемъ помышля́йте, а не о земно́мъ զվերինն խորհեցարուք, մի զայս որ յերկրի աստ է (Թուղթ առ Կողոս. 3_2). «бро́симъ э́ти дря́зги и воспори́мте-ка въ го́рнія». г. Іерусали́мъ. Го́рнее мѣ́сто տաճարին բարձր տեղ բեմի յետևում։

Гор‖нови́ще չ. հնոցի, հալոցի բեկորներ. -ново́й ած. հնոցի, հնոցային, հալոցի, -ցային։

Горногоро́шекъ, шка ա. Orobus vernus, գարնանական քիստմը (քուշնայ)։

Горно‖заво́дскій ած. լեռնագործութեան, հանքագործութեան. г. чино́вникъ, г—ая промы́шленность; -заво́дчикъ ա. -заво́дчица ի. լեռնային, հանքային գործարանի տէր, տիրուհի. -ка́менный ած. հնց. քարէ, քարային. -промы́шленникъ ա. լեռնագործ, հանքագործ, հանքեր շահագործող. -рабо́чій, аго ա. լեռնային, հանքային մըշակ. -служа́щій, аго ա. լեռնային, հանքային պաշտօնեայ։

Горно‖ста́евый, -ста́ечій, чья, чье ած. կնգումի, սպիտակ կզաքիսի. г—вый мѣхъ; г—вая шу́ба; г—чья опу́шка; -ста́й ա. 1, կնդ. Mustela erminea, կնգում, սպիտակ կզաքիս. 2, սորա մորթին, մուշտակը. -ста́йка ի. տ. Горноста́йчикъ; -ста́йчикъ նւզ. տ. Горноста́й; -ста́ль հնց. և հիւս. տ. Горноста́й. [բուեստագիտութեան։

Горнотехни́ческій ած. լեռնային, հանքային ա-

Горну́шка ի. կրակավայր, կրակարան (օջախի կամ ռուսական վառարանի ձախ կողմում փոս, ուր կրակն ‚անթեղ‘ են անում, այսինքն կիտում են պահելու համար)։

Горнъ ա. I. (նեղքոյկ. въ горну́) 1, հնոց, հալոց, բով, ‚քուրայ‘ (փուքսով). г. кузне́чный; г. кри́чный հնոց, որով թուջից երկաթ են պատրաստում. г. ми́нный ականի, ‚լաղմա‘. 2, հալոցի (ша́хтная печь) ստորին մասը. II. (գերմ.) նուագարան, երաժշտական գործիք մի. մի տե-

սակ փող, սրինգ (զինուորական երաժշտութեան մէջ)։

Го́рный ած. I. 1, լեռների, լեռնային. г. хребе́тъ, г. во́здухъ; г—ая страна́; г—ое хозя́йство; г—ые жи́тели լեռնաբնակներ։ Го́рная ро́за = Альпі́йская ро́за (տ. Альпі́йскій); 2, ցամաքային (և ոչ ծովային). ցամաքային ճանապարհով բերած, կրած. г—ое сѣ́но; г—ыя дрова́ лу́чше сплавны́хъ; 3, լեռնագործութեան, հանքագործութեան. г. институ́тъ, г—ое правле́ніе, г. инжене́ръ; 4, հնք. և երկրբ. տ. Минера́льный; г. хруста́ль (Փր. cristal de roche) վանակն կամ լեռնաբիւրեղ. г—ая ко́рка (Փր. asbeste ligniforme) հաստաբակ անկէզ քար. г. лёнъ (Փր. amiante) կտաւաքար, լեռնակտաւ. г—ая смола́ (Փր. bitume) սև ձիւթ. г. дёготь (Փր. pissasphalte) կպրաձիւթ (ցուպան). г—ое са̀ло (Talc) տալկ. г—ое ма́сло (petroleum) քարիւղ, նաւթ. г—ое мы́ло տ. Сапони́тъ; II. պատուաւոր, վեհաշուք, հանդիսաւոր. г. столъ, г. пиръ հանդիսաւոր ճաշկերոյթ, որ նորապսակները կամ նոցա ծնողները սարքում են պսակադրութեան երկրորդ և երրորդ օրը. г—ые го́сти այս ճաշկերոյթին մասնակցող հիւրերը։

Го||роде́цъ, дца́ ա. հնց. պստիկ ամրացրած քաղաք, ամրութիւն. **-роди́ть** (-жу́ -о́дятъ) ն. I, (загор—) ցանկապատել, ցանկ, պատ, պատնէշ կանգնեցնել. зачѣмъ было *огоро́дъ г.? ինչու համար խաթարալի մէջ ընկար. 2, (наг—, сг—) դատարկ խօսել, 'դուրս տալ', փուչ, սուտ բաներ խօսել. э̀такую дичь горо́дить! «на ста́рости лѣтъ дичь горожу́»; **-ся** ռմկ. I, անդր. (загр—) ցանկապատուել, վանդակապատուել. 2,* (вз—) բարձրանալ, վեր ելնել. куда́ ты взгороди́лся? 3, կր. (сг—) ցանկապատուել, վանդակապատուել։

Го||роди́шко ա. նկտ. ողորմելի, վատ քաղաք. э̀то дрянно́й г.; **-роди́ще** ա. I, յաւ. մի մեծ, ահագին քաղաք. э̀кій г.! 2, քաղաքատեղ, ամրոցատեղ. ևս քաղաք, աւան, գիւղ. չէն. былъ го́родъ, оста́лось г. (առծ.) 3, խութերով հարուստ ծանծաղուտ. **-родки́** յ. տ. Городо́къ; **-родни́къ**, а́ ա. հնց. պատուարակալ, պատուարներ, պատնէշներ շինող, կանգնեցնող։

Го||родни́ческій ած. գորոդնիչու. **-родни́чество** չ. գորոդնիչութիւն. **-родни́чиха** ի. ռմկ. գորոդնիչու կինը. **-родни́чій**, аго ա. գորոդնիչի, քաղաքապետ։

Городня́ ի. հնց. պատուար (գերաններից կամ ցցերից կանգնեցրած և հողով ու քարով լցրած)։

Городово́й ած. քաղաքի, քաղաքային. г—а́я пло́щадь; г—ое положе́ніе. Городово́й, о́го ա. 1, գորոդովոյ, քաղաքապան (ստորին ոստիկանական պաշտօնեայ քաղաքներում). 2, հնց. քաղաքային ամրութեանց վերակացու, վերահսկող։

Го||родо́къ, дка́ ա. I, նւզ. տ. Го́родъ; 2, ցցապատ ամուր գիւղ, հարուստ քաղաքագիւղ, աւան մի քանի եկեղեցիներով. 3, խաղալիք մի (փայտէ ամրոց). երեխայական շինութիւններ աւազից, ձիւնից ևլն. 4, городки́ յ. ա, գորոդկի (ժողովրդական խաղ մի). игра̀ть въ г.; բ, գերաններից շինած բաներ, որ կարկառելու համար ափ հանած նաւերի տակ են դնում. գ, պատի ձևով զարդած խուրձ. **-родо́чекъ**, чка նւզ. տ. Городо́къ; **-родско́й** ած. քաղաքի, -քային, քաղաք—. г—ія ворота̀; г. жи́тель; г—ія вла́сти; г. голова́ քաղաքագլուխ г—іе слу́хи.

Го́||родъ ա. (города́, о́въ յ.) I, քաղաք. примо́рскій, губе́рнскій, уѣ́здный г.; *քաղաքացիք, քաղաքի բնակիչներ. 2, հնց. ցանկապատ. 3, հնց. ամրացրած վայր, ամրութիւն. 4, քաղաքաբերդ, միջնաբերդ։ Кита́й-г. Մոսկուայի մի մասի անունն է. **-родьба́** ի. I, ցանկով պատելը, պարփակելը. 2, ցանկ, -ապատ, վանդակ, -ապատ, 'չափար'. գետի միջից քաշած ցանկ ձկներ որսալու համար. **-рожа́нинъ** ա. (горожа́не, -а̀нъ յ.), **-рожа́нка** ի. քաղաքացի այր, կին. **-рожа́ночка** ի. փոքր. գեղահաս, պատուական քաղաքացի օրիորդ, կին. **-роже́ніе** չ. ցանկով պատելը, պարփակելը, 'չափարելը'. -жу́ տ. Городи́ть.

Горо||ко́пный ած. հնց. լեռնագործական, հանքագործական. г—ыя ору́дія; **-ко́пъ** ա. հնց. լեռնագործ, հանքագործ, հանքահան։

Горо́нить (-ню -нятъ) չ. ռմկ. դառն համ տալ. ма́сло горо́нитъ.

Горорытство չ. հանքագործութիւն, հանքագործութեան, լեռնագործութեան գիտութիւնը (Դերժավինից հնարած խօսք)։

Горо||ско́пія ի. (յն.) հօրօսկոպիա (գուշակութիւն մարդուս մասին, որ անում էին նայելով աստղերի դրութեանը նորա ծննդեան ժամանակ). **-ско́пъ** ա. ճակատագրային գուշակութիւն։

Го||ро́ховикъ ա. I, ոլոռից, սիսեռից թխած սիւնաձև կարկանդակ. 2, ոլոռով, սիսեռով լցրած կարկանդակ. 3, = горо́ховое де́рево (տ. Горо́ховый); **-ро́ховина** ի. I, ոլոռի, սիսեռի ցօղունը տերևներով. 2, տ. Горо́шина; **-ро́ховица** ի. ոլոռի, սիսեռի ապուր, 'աշաւ'. **-ро́ховичекъ**, чка նւզ. տ. Горо́ховикъ; **-ро́ховище** չ. ոլոռի, սիսեռի արտատեղ. **-ро́ховка** ի. կտկւ. հացի հաստաբակ օղի, ցքի. **-ро́ховникъ** ա. ոլոռաբոյս, սիսեռաբոյս։ Горо́ховникъ бара́ній, Cicer arietinum, բուն սիսեռը (տճ. նուխուտ)։

Горо́ховый ած. I, ոլոռի, ոլոռից, սիսեռի, -ից. г—ые стру́чья; г—ая мука́; 2, ոլոռի, սիսեռի գոյնով. г—ая шине́ль; 3, г—ое чу́чело, г—ое пуга̀ло խրտուիլակ, որ կանգնեցնում են ոլոռի և ուրիշ բոյսերի արտերում թռչուններին խրտնեցնելու համար. (ուստի և) шутъ *горо́ховый խեղկատակ, ծաղրածու, միմոս, 'մասխարայ' ոմն։ Горо́ховое де́рево, բս. Caragana arborescens, մեծ ոլոռաթուփ, Սիբիրական ակացիա։ Горо́ховый ка́мень, հնք. pisolithe, ոլոռաքար։

Горо́хъ ա. բս. Pisum sativum, հասարակ ոլոռ (մաշ), սիսեռ. какъ въ стѣ́ну г. (դարձւ.) ինչպէս էն պատին ասես, ոչինչ չէ ազդում. ему́ говори́ть, что въ стѣ́ну горо́хъ лѣпи́ть դուր, ապարդիւն է նորա հետ խօսելը, նորան ասելը. съ нимъ на́до говори́ть, наѣ́вшись г—у նորա հետ խօսելիս քամակդ պէտք է բօշ պահես (գռեհկ. դարձուածք). э̀то случи́лось ещё при царѣ́ Горо́хѣ կտկւ. այդ հօ պապիս պապի ժամանակն էր։ Горо́хъ журавли́ный, воробьи́ный, мыши́ный, кормово́й, Vicia sativa, ընտանի վիկ. г. гуси́ный, Viccia cracca, արտիճ կամ թռչնոց վիկ. г. жёлтый, Lathyrus pratensis, դաշտայ քիսամ. г. лугово́й, Vicia sepium, ցանկայ վիկ. г. полево́й, Pisum arvense, Coronilla varia, երփնագոյն քարատուոյտ. г. за́ячій, Onobrychis sativa, հասարակ խլխլար (իշառուոյտ)։ Горо́хи յ. ոլոռի, խարխոտերի ցանքսեր, արտեր կամ հունձ։

Го́рочка նւզ. տ. Го́рка.

Го||рóшекъ, шка ա. 1, *նւզ. տ.* Горóхъ; стрѣльбá *горóшкомъ *թեթև հրացանաձգութիւն.* подскочи́ть *горóшками *թեթև քայլերով մօտենալ.* 2, *ա,* Vicia sativa *ընտանիքի վիկ. բ,* V. cracca, *արտի կամ թռչնոց վիկ.* души́стый г., Lathyrus odoratus, *հոտաւէտ ոլոռ.* **-рóшина** *ի. ոլոռի, սիսեռի հատիկ.* **-рóшинка** *ի.* 1, *նւզ. տ.* Горóшина; 2, *կնդ. կակղամորթ մի.* **-рóшчатый** *ած. ոլոռակերպ, սիսեռի նման.* г. пéрецъ.

Гóрскій *ած. լեռնաբնակ, լեռնական (մնւռ. Կովկասեան).* г—іе нарóды.

Гóр||стать, сг—, *ն. ռմկ. բռով, կուց-կուց հաւաքել, վերցնել.* **-сти́ща** *յւճլ.* **-стка, -сточка** *նւզ. տ.* Горсть; **-сточный** *ած. բռան, կուցի. մի բուռըն, մի կուց:*

Гóрсть *ի. (ներքոյկ.* въ гóрсти́; *յ.* гóрсти, стéй) 1, *բուռ, ափ, կուց.* подстáвить г. *բուռը դէմ անել.* г. муки́,—орѣ́ховъ. Кто исчéрпалъ вóды гóрстью своéю? *Ո՞ չափեաց ափով իւրով զջուրս (Եսայի,* 40_{12}). г. вóйска *մի բուռն զօրք.* 2, *ռմկ.* хлѣ́бъ лежи́тъ въ *горстя́хъ *հացահատիկը բուռ-զուռ ընկած է (հնձած է, բայց դեռ խուրձ չէ կապած):*

Гор||тáнный *ած. կոկորդի, -դային, շնչափողի, -դային, խռչափողի, -դային.* г—ая мы́шца; г—ая чахóтка; г. гóлосъ *խուլ, անորոշ ձայն.* г—ые звýки *քեռկ. կոկորդային հնչիւններ (որոնք են.* г, к, х); **-тáнь** *ի. կզմխ.* Larynx, *կոկորդ, շնչափող[ի վերին մասը], խռչափող[ի վերին մասը].* прильнé (*եկ. ււ.*) язы́къ къ г—и *կտկւ. լեզուս պապանձուել է, չգիտեմ ինչ խօսիմ:*

Гортéнзія *ի.* 1, *բս.* Hydrangea hortensis, *հորտենզիա[ճապոնական կիսաթուփ]ն.* 2, *դորա ծաղիկը:*

Горýшка *ի. նւզ. և փղքշ. լեռնակ, լեռնիկ:*

Гор||чáвка *ի.* 1, *բս.* Picris, *դառնախոտ.* 2, *եփովի դառնահամ, վատորակ աղ.* **-чáй** *ա. տ.* Горечáвка; **-чáйшій** *ած. գերդրկ. ամէնադառն.* *г. пья́ница *խիստ մոլի հարբեցող.* *г—ая потéря *խիստ դառն, անփոխարինելի կորուստ:*

Гор||чáкъ, á *ա.* 1, *բս.* Polygonum persicaria, *դեղձատերև մատիտեղ.* 2, *կնդ.* Rhodeus amarus, *դառնաձուկ (ծածանազգի է).* **-чáнка** *տ.* Горечáвка; **-чáночный** *ած. բոգի:*

Гор||чáть *չ. դառնանալ.* **-че, -чѣе** *ած. և Տ. բաղդտ. աւելի դառն, դառնագոյն.* **-чи́ть** (-чý -чáтъ), наг—, 1, *ն. դառնացնել, դառն դարձնել.* 2, *չ. դառն համ տալ:*

Гор||чи́ца *ի* 1, *բս.* Sinapis, *մանանեխ[ի բոյս]ը.* бѣ́лая, обыкновéнная г., Sin. alba, *սպիտակ մանանեխը.* 2, *մանանեխ.* пóслѣ ýжина г. (*առծ.*) *ուշ է, այլ ևս հարկաւոր չէ, արդէն բանը բանից անցել է.* **-чи́чка** *փղքշ. տ.* Горчи́ца; **-чи́чникъ** *ա. (արտս.* -чи́шн—) 1, *մանանեխի սպեղանի, 'մհլամ'.* 2, *տ.* Горчи́чница; **-чи́чница** *ի. (արտս.* -чи́шн —) *մանանեխի աման, մանանեխաման.* **-чи́чный** *ած. (արտս.* -чи́шн—) *մանանեխի, մանանեխային.* г—ое зерно́; г—ая бáночка; г—ое мáсло.

Гор||шéнить (-ню -нятъ), **-шéничать** *տ.* Горшéчничать; **-шéня** *ա. ռմկ. տ.* Горшéчникъ.

Гор||шéчекъ, чка *նւզ. տ.* Горшóкъ; **-шéчникъ** *ա. (արտ.* -шéшн—) 1, *բրուտ, կաւագործ.* 2, (горшéчница *ի.*) *խեցեղէն ծախող, պտուկավաճառ, թաղարավաճառ այր, կին.* **-шéчничать** *չ.* (-шéшн—) *բրուտութիւն, կաւագործութիւն անել.* **-шéчничій**, чья, чье *ած.* (-шéшн—) *բրուտի, կաւագործի.* **-шéчный** *ած.* 1, *կաւագործութեան.* г—ая гли́на; 2, *թաղարի, պտուկի.* г—ая кры́шка; г—ыя растéнія. Горшéчное дéрево *բս.* Lecythis ollaria, *թաղարածառ.* **-ши́ще** *ա. յւճլ. տ.* Горшóкъ.

Гóршій *ած. աւելի վատ, վատթար, -ագոյն:* Гóрше *Տ. աւելի վատ, վատթարագոյն:*

Горшóкъ, шкá *ա. պտուկ, թաղար, խեցի.* цвѣтóчный г. *ծաղկաման, թաղար.* не бóги горшки́ обжигáютъ (*առծ.*) *մեծ բան չէ, հեշտ է.* хоть щей г., да самъ большóй (*առծ.*) *թէպէտ հարուստ չէ, բայց ազատ է.* наки́дывать г. *թաղար դնել (հիւանդի փորի վերայ՝ բուժելու համար, որ անում է ռամիկ ժողովուրդը):*

Гóрщикъ *ա. ռմկ. սահարանապետ (որ թումբեր, բլուրներ է շինում, որոնց վերայ ժողովուրդը սահում է):*

Го||ры́ничъ *ա. օձ, վիշապ (ռուս ժողովրդ. բանահիւսութեան մէջ).* **-ры́нчище** *ա. յւճլ. տ.* Горы́ничъ; **-ры́нянка** *ի.* бáба - г. *դիւցազնուհի մի ռուս ժողովրդական բանահիւսութեան մէջ:*

Гó||рькій (-рекъ -рькá, о; *բաղդտ.* гóрче *և* горчѣ́е) *ած.* 1, *դառն, դառնահամ.* г—ія трáвы; настóйка горькá; *г—ія слёзы *դառն, աղեկէզ արցունքներ.* гóрько плáкать *դառնապէս լալ,* гóрько жáловаться *կսկծալով գանգատուիլ.* 2,* *դառն, անտանելի. խիստ, անգութ.* г—ая судьбá, г—ая судьби́на; г—ая и́стина; гóрько слы́шать, ви́дѣть *ցաւալի, կսկծալի է լսել, տեսնել:* Пить гóрькую *արբեցողութեան միանգամայն անձնատուր լինել.* г. пья́ница *անուղղայ, սոսկալի արբեցող.* 3, *խեղճ, ողորմելի, արգահատելի, չուառական.* э́хъ! вы, гóрькія *ա՜յ դուք խեղճ ձիաներ (ասում է կառապանը):* —гóрькая земля́ (magnésite) *մագնիսաքար.* гóрькій шпатъ *տ.* Доломи́тъ; гóрькая соль *բժ. դառնաղ.* **-рьклый** *ած. դառնացած, դառն համ ստացած* г—ое мáсло; **-рькнуть**, ог—, прог— *չ. դառնանալ:*

Горько||вáтость *ի. թեթև դառնութիւն.* **-вáтый** *ած. դառնաւուն, փոքր ինչ դառն.* г—ое пи́во; **-вóдный** *ած. սկւ. գործծ. դառնաջուր.* **-зёмистый** *ած. մագնեսիոն կամ մագնիսաքար պարունակող.* **-зёмный** *ած. մագնիսաքարից, -քարէ.*

Горько||зёмъ *ա. Տնք.* magnésie, *մագնէսիա. մագնիսաքար.* **-минда́льный** *ած. դառն նշից [ստացած, քամած, պատրաստած].* г—ое мáсло.

Гóрь||конькій (-óнекъ -óнька, о) *ած. դառնաւուն, բաւական դառն.* **-кослáдъ** *ա. բս.* Solanum dulcamara, *կոզուկ կամ քաղցրադառն մորմ:*

Гóрь||кость, -котá *ի. դառնութիւն.* **-кóхонекъ**, пька, о *ած. բոլորովին դառն.* **-кýха** *ի. դառնօղի, դառն ցքի, արաղ.* **-кýша** *ի. բս.* Agaricus amarus. *դառն ագարիկոն[սունկ]ը:*

Горѣ́ *Տ. եկ. ււ.* 1, *դէպի վեր, 'ի վեր, յերկինս.* 2, *բարձրում, վերևում:*

Горѣ́лка *ի.* 1, *ռմկ. հացի օղի, արաղ (տաքտաք).* 2. *պատրոյկակալ, պատրոյկապահ.* г. керосиновой лáмпы.

Горѣ́лки, локъ *ի. յ. դորելկի (ժողովրդական խաղ մի. Խաղացողները զոյգ-զոյգ միմեանց յետևից կանգնում են, առջևից ունենալով 'խա-*

գահայր' կամ 'խաղամայր'. այս յետևի զոյգը սկսում է փախչել, իսկ 'խաղահայրը' կամ 'խաղամայրը' աշխատում է սորանցից մէկին բռնել):

Го||рѣлый ած. այրուած, խանձուած. г—ое мѣсто հրդեհավայր, հրդեհի տեղը: Горѣлое, аго չ. տ. Гарь 1; пáхнетъ горѣлымъ; **-рѣль** է. (Վոլգայի ձախ ափերում) տ. Гарь 2; **-рѣльникъ** ա. արտագի պղնձի ներքին մասը:

Го||рѣніе չ. այրուիլը, վառուիլը, այրում, վառում. **-рѣть** (-рю́ -ря́тъ) չ. 1, (сг—) վառուիլ. այրուիլ, առչորուիլ. կրակից լափուիլ. гори́тъ свѣчá; домъ гори́тъ, гóродъ гори́тъ; э́ти дровá не горя́тъ վառելափայտը [խոնաւութիւնից] չէ այրուում. на вóрѣ шáпка гори́тъ (առծ.) գող, սիրտը դող, փայտը ոչ վերցնես, գող շունը կը փախչի. 2, (пог—) հրդեհուիլ, հրդեհից վնասուիլ. на однóмъ годý два рáза горѣли; 3.*վառուիլ, փայլել. պսպղալ, պլպլալ, շողալ. у кóшки глазá горя́тъ въ темнотѣ; 4,* այրուիլ, բորբոքուիլ. головà гори́тъ; гори́тъ лицó; гори́тъ во рту; 5,* վառուիլ, այրուիլ-խորովուիլ, եփ գալ, եռ գալ, եռալ, մորմոքուիլ. г. стрáстью, любóвію, усéрдіемъ, нетерпѣніемъ; 6, дѣло гори́тъ գործը խիստ արագ կերպով առաջ է գնում. *у негó вся́кое дѣло гори́тъ նորա ձեռքից ամէն բան գալիս է. ամէն գործ նա լաւ է տանում. плáтье какъ на огнѣ гори́тъ շորը խիստ շուտ է մաշուում. 7, (горѣлки խաղում) 'խաղահայր' կամ 'խաղամայր' լինել:

Го||рю́нъ, à ա. **-рю́нья** է. վշտակիր, թշուառ, ողորմելի այր, կին. **-рю́ха** տ. Горю́нья.

Го||рю́честь է. վառուողութիւն, դիւրավառութիւն. **-рю́чій** ած. 1, վառուող, վառելի, վառելու, կիզանուտ. г. газъ; *г. матеріáлъ; 2, դիւրավառ. пóрохъ, сѣра, ýголь, мáсло—веществá г—ія; 3, տ. Горя́чій.

Горю́||ша, **-шица** ռմկ. տ. Горю́нья.

Гó||рюшко չ. նւզ. ռմկ. ցաւ, դարդ, հոգս. емý о дѣтяхъ и г—ка нѣтъ թէ ինչ կը լինի երեխաների հետ, այդ նորան փոյթ չէ, նորա 'վէջը չէ'. **-рю́ю** տ. Горевáть.

Го||ря́ни́нъ ա. (յ. горя́не, -я́нъ) լեռնաբնակ. առհ. ցամաքի (և ոչ կղզու) բնակիչ. **-ря́нка** է. 1, լեռնաբնակ կին. առհ. ցամաքի (և ոչ կղզու) բնակչուհի. 2, բս. Epimedium, եպիսկոպոսական ծոբենի. 3, տ. Горькýша.

Го||ря́нскій ած. փայտեղէն, փայտեղէնների. г. товáръ փայտեղէն ապրանք. г. рядъ փայտեղէն ապրանքների խանութներ (Հաշտարխանում). **-ря́нщикъ** ա. փայտեղէն իրեր շինող (Վոլգայի ձախ ափերում). **-ря́нщина** է. հ—ւ. փայտեղէն իրեր, ապրանք (օր. շրջանակներ, դուգաներ, թիաներ, հորսելիներ ևլն):

Го||ря́ченькій (-чéнекъ -чéнька, о) ած. փոքր ինչ տաք. **-ря́честь** է. 1, տաքութիւն, կէծութիւն, պճպճանութիւն. г. кипя́щей воды́; 2, սկւ. գործծ. ջերմ սէր, գութ, գթոտութիւն, գթասրտութիւն. роди́тельская г.; **-ря́чечный** ած. (արտ. -чешн—) ջերմախտի, տենդի, 'տաքութեան'. г. бредъ; г—ая рубáха կատաղի հիւանդների, խելագարների շապիկ. **-рячи́тельность** է. տաքութիւն, ջերմութիւն առաջացնելու ոյժ, զօրութիւն. г лѣкáрства; **-рячи́тельный** ած. տաքացնող. г—ое срéдство; г. напи́токъ.

Горячи́ть (-чý -чáтъ), разг—, ն. 1, տաքացնել. э́то лѣкáрство си́льно горячи́тъ; 2,* բարկացնել, գրգռել. **-ся** անդր. 1, տաքանալ. пли́тка разгорячи́лась; 2,* գրգռուիլ, տաքանալ, բարկանալ. отвѣчáй, не горячи́сь.

Горя́чій (-чъ -чá -чó և -че; բաղդտ. горячѣе) ած. 1, եռացող, եփ եկող, կէծ, կէծացած. г—ая водá; г—ія рýки; куй желѣжо, покá горячó (առծ.). г. ключъ ջերմուկ. 2, տաք, ջերմ, կաթոգին. դիւրաբորբոք. կրակոտ. г—ее сéрдце; г. нравъ; г. споръ; г—ая любóвь; г. человѣкъ; г—ая головá; 3, խիստ, վառ, կենդանի:—Горя́чіе напи́тки թունդ, ոգելից ըմպելիքներ. г—ее винó հասարակ հացի արաղ, օղի. *г. слѣдъ թարմ, նոր, թազայ հետք. производи́ть слѣдствіе по горя́чимъ слѣдàмъ; г. обѣдъ ռմկ. տաք կերակուր. 4, горя́чій столъ, горя́чій обѣдъ (տ. гóре) ոգի սեղան, հոգեհաց, 'ջէլէլի':—Горя́чее, аго չ. տաք կերակուր. ըմպասաւորին հասնելի թէյը:—Горячó մ. 1, խիստ տաք, կէծացրած, առրաշէկ. утю́гъ г. раскалёнъ; 2, ջերմ կերպով, ջերմաջերմ, սրտանց, մեծ խանդով. г. желáть; г. люби́мый; въ горячáхъ տ. Вгорячáхъ; съ горячá տ. Сгорячá.

Го||ря́чка է. 1, 'տաքութիւն', ջերմութիւն, ջերմախտ. лежáть въ г—ѣ; нéрвная, гнилáя, бѣлая, роди́льная г.; 2, ռմկ. ա, բարկացկոտութիւն, ցասկոտութիւն, խանդ, բոց, տենչ, գրգիռ. умѣрь свою́ г—у; всѣми́ овладѣла г. лёгкой нажи́вы; բ,* տաք բնաւորութեան տէր, տաքարիւն, դիւրագրգիռ ամն. «г. онъ былъ стрáшная»; **-ря́чность** է. 1,* բոց, մեծ խանդ. люби́ть съ г—ью կաթոգին սիրել. 2,* դիւրաբորբոքութիւն, տաքարիւնութիւն. **-рячó** մ. տ. Горя́чій; **-ря́щій** էյ. ած. հրավառ, հրաբորբոք, հրատոչոր, բոցավառ:

Госотéрнъ ա. (Ֆր.) բարձրագոյն, ընտրելագոյն սոտէրն (գինի):

Госпи||тáль, ля́ ա. ли է. (լտ.) հիւանդանոց (մնւդ. զինուորական մեծ հիւանդանոց). **-тáльный** ած. հիւանդանոցի, -ցային: Г—ая горя́чка [հարինք:

Господá, -пóдъ տ. Господи́нъ.

Госпо||дáрскій ած. հօսպոդարի, -րական. **-дáрство** չ. 1, հօսպոդարութիւն. 2. հնց. տէրութիւն, պետութիւն. **-дáрь**, я́ ա. 1, հնց. տէր, իշխան, պետ, վեհ. 2, (հարաւային Ռուսիայում) տանտէր. 3, հօսպոդար (Մոլդավիայի և Վալախիայի նախկին իշխանների տիտղոսը):

Гос||пóдень, дня, дне ած. տէրունական, աստուածային. моли́тва Госпóдня տէրունակ. աղօթք. **-поди́нъ** ա. (յ. господá, -пóдъ) 1, հնց. տ. Госудáрь; 2, տէր, իշխան, պարոն, 'աղայ'. дóбрый г. щади́тъ свои́хъ слугъ; *г. своегó слóва իւր խօսքին տէր, հաւատարիմ ամն. онъ г. своемý слóву հեգն. նա ազատ է, ուզենայ, կանէ, չուզենայ, չի անիլ. э́то отли́чный г. նա պատուական պարոն է: Палáта госпóдъ Գերմանիայում և Աւստրիայում ռէյխստագի և ռէյխսրատի վերին խորհրդարանը. **-пóдній** սկւ. գործծ. տ. Госпóдень: **-пóдскій** ած. 1, եկղ. տէրունական. Г—іе прáздники տէրուն. տօներ. II. տիրական, պարոնական, 'աղայական', կալուածատիրոջ. г. домъ; обѣдъ съ г—аго столá; г—ая власть, — вóля; по-госпóдски մ. տիրաբար, 'աղայաբար'. **-пóдственность** է. պարոնութիւն, 'աղայութիւն', ազնուականութիւն:

Гос‖по́дство չ. 1, տիրապետութիւն, իշխանութիւն, գերիշխանութիւն. 2, ՖՆg. իշխանութիւն, վիճակ, դաստակերտ. **-по́дствованіе** չ. 1, իշխելը, տիրելը. 2, գերիշխելը. **-по́дствовать** (-ствую -ютъ) չ. 1, իշխել, տիրել, տիրապետել. 2, գերիշխել, թագաւորել, առաջնակարգ լինել. въ Россіи госпо́дствуетъ правосла́вная вѣра; въ наро́дѣ госпо́дствуютъ предразсу́дки; э́та гора́ госпо́дствуетъ надъ селе́ніемъ; госпо́дствующій էյ. ած. տիրող, տիրապետող, գերիշխող. г—ая релı́гія въ госуда́рствѣ; г—ая на́ція; г. язы́къ; г—ее мнѣніе; **-по́дчикъ** ա. Նւզ. կտկւ. կմ Ֆեզն. պարոնիկ. **-поды́ня** ի. սպիտ. ռուս. 1, տանտիկին, տանտիրուհի. 2, տնտեսուհի. տիրական տան մէջ խոհարարուհի աղաատորների համար:

Гос‖по́дь (սեռկ. Го́спода; կոչկ. Го́споди) Տէր. Г. Богъ; Го́споди поми́луй Տէր ողորմեա. сла́ва Тебѣ, Го́споди փառք քեզ, Տէր. не дай, Го́споди Աստուած մի արասցէ. прости́ Го́споди! մեղայ քեզ, Տէր [այդ ինչ ես ասում, այդ ինչ բան է]. что вы дѣлаете, Г. съ ва́ми! 'ի սէր Աստուծոյ, այդ ինչ էք անում:

Гос‖пожа́ ի. (յ. госпожи́, -по́жъ -жа́мъ) տիրուհի, պարոնուհի (տիկին, օրիորդ). Пречи́стая Г. влады́чица Տիրամայր, Աստուածածին. **-пожи́нки** ի. յ. ռմկ. 1, Վերափոխումն Ս. Աստուածածնի. 2, Վերափոխման պաս. говѣ́ть въ г.

Го́‖стейка փղքշ. տ. Го́стья; **-стёкъ, стька́** փղքշ. տ. Гость; **-стелю́бецъ, бца** բանաս. տ. Гостепріи́мецъ; **-стелю́біе** բանաս. տ. Гостепріи́мство; **-стелю́бный** բանաս. տ. Гостепріи́мный; **-стенёкъ, нька́** տ. Гостёкъ; **-степріи́мецъ, мца** ա. բանաս. հիւրընկալ, ասպնջական. **-степріи́мный** ած. 1, հիւրընկալ, հիւրասէր, աղուհացով. г. хозя́инъ; армя́нскій наро́дъ гостепріи́менъ; 2, հիւրասիրութեան, յօժար. **-степріи́мство** չ. հիւրընկալութիւն, հիւրասիրութիւն, ասպնջականութիւն, աղուհացով լինելը:

Го‖сти́нецъ, нца ա. 1, ընծայ, 'փէշքաշ'. благодарю́ васъ за г.; гости́нцы յ. ա, ընծաներ, 'փէշքաշներ', մնւզ. քաղցրեղէններ երեխաներ համար. բ, փեսայի ընծաները հարսին. 2, ՖՆg. ճանապարհ, ուղի, որով առևտրականներն երթևեկում էին. **-сти́никъ** ա. հիւրընկալ (վանքերում). **-сти́ница** ի. հիւրանոց, հիւրատուն. իջևան. останови́ться, жить въ г—ѣ; **-сти́ничный** ած. հիւրանոցի, հիւրատան. **-стинодво́рецъ, рца** ա. առևտրական (Պետերբուրգի гости́ный дворъ-ի). **-стинодво́рскій** ած. 1, այսպիսի առևտրականին յատուկ. г—іе нра́вы, пріёмы; 2, гости́ный дворъ-ի. г. това́ръ, г. прика́зчикъ; **-стинодво́ры** ա. յ. ռմկ. Պետերբուրգում гости́ный дворъ-ի առևտրականներ. **-сти́нчикъ** Նւզ. տ. Гости́нецъ.

Го‖сти́нщица ի. ռմկ. փեսի կողմից ընծաներով հարսի մօտ ուղարկուած օրիորդ. **-сти́ный** ած. ՖՆg. առևտրականի, -կանների. г. сынъ; г—ая со́тня; г. дворъ ա, ՖՆg. իջևան, քարվանսարայ առևտրականների համար. բ, խանութների, կրպակների շարքեր. շուկայ: Гости́ная, ой ի. հիւրասենեակ, ընդունարան:

Го‖сти́стый ած. հիւրաշատ, հիւրառատ. г—ое вре́мя; **-сти́ть** (-щу́ -стя́тъ), прог—, չ. հիւր լինել, իբրև հիւր մնալ. мы гости́ли у нихъ цѣ́лую недѣ́лю; **-сти́ться, уг—,** ածդ. ռմկ. 1, տ. Гости́ть; 2, իրեն ինչպէս հիւր պահել, 'քաշուել', ամաչկոտութիւն անել. прошу́ не г.

Го́стія ի. (լտ.) սուրբ հաղորդութեան նշխար (կաթոլիկների և լուտերականների):

До‖буди́ться (-жу́сь -дятся) չ. кого́ հազիւ հազ, զօռով զարթեցնել, արթնացնել. его́ и пушка́ми не добу́дишься.

Добукси́ровáть (-сиру́ю -ютъ) 1, չ. նաւարարշութիւնը վերջացնել. 2, ն. իր յետևից քարշելով տանել, տեղ հասցնել (ցռկանաւի մասին). -ся անց. և կր. ցռկանաւից քարշուելով տեղ հասնել, տեղ հասցնուիլ։

Добунтовáть (-ту́ю -ютъ) չ. до чего́ ապստամբութեամբ, բանի միջոցով մի բան ստանալ, ձեռք բերել, շահել. -ся չ. до чего́ ապստամբութեամբ, խռովարարութեամբ իր դիմին սատիճ, պատուհաս բերել։

Добу‖рáвливать, -рáвить (-влю -вятъ) ն. գայլիկոնել, գայլիկոնով, բուրղուով ծակել վերջնել։

До‖буре́ніе չ. գայլիկոնելով խորացնելը. ցորոշ սահման ծակելը, գայլիկոնելը. -бури́ть (-рю́ -ря́тъ) ն. գայլիկոնելով խորացնել. ցորոշ սահման գայլիկոնել, ծակել, կտրել. -ся չ. գայլիկոնելով, ծակելով որոշ սահմանի, խորութեան հասնել. добури́лись до мѣ́ла, до воды́, до плáста кáменнаго у́гля. [նել։

Добути́ть (-чу́ -тя́тъ) պատի հիմքը ձգել վերջ-

До‖бывáніе չ. 1, ձեռք բերելը, ճարելը, հայթայթելը. 2, ձեռք ձգելը, բռնելը, կալնուլը. 3, հանելը, արդիւնագործելը (հանքերը). 4, որսալը. -бывáтель ա. -бывáтельница է. ճարող, ստացող, որսացող, արդիւնաբերող այր, կին։

До‖бывáть, -бы́ть 1, ն. что ձեռք բերել, ճարել, հայթայթել, վաստակել, ստանալ. д. себѣ́ пропитáніе; д. зо́лото, руду́ ոսկի, հանք հանել (բովերից). добывáющая промы́шленность հանքային արդիւնաբերութիւն, հանքարդիւնագործութիւն. 2, ն. кого́ ա, գտնել, ճարել. я тебѣ́ жену́ добу́ду; բ, հնց. փախածին, թագնուածին բռնել, կալնուլ, ձեռք ձգել. 3, չ. чего́ ջանալ, աշխատել ձեռք բերել, զօռով ձեռք բերել. 4, որսալ. д. звѣ́ря на охо́тѣ; -ся կր. հանուիլ, ստացուիլ, արդիւնաբերուիլ. въ Сиби́ри добывáется мно́го зо́лота и серебрá.

До‖бы́вка է. տ. Добывáніе; -бывно́й ած. ճարելու, գտնելու, շահելու. արդիւնաբերող, արդիւնագործող. д—áя спосо́бность; -бы́вчивый ած. հնարամիտ, ճարպար, ճարելու, գտնելու, վաստակելու, արդիւնաբերելու մէջ ճարպիկ, ընդունակ. онъ человѣ́къ д.; -бы́токъ, тка ա. 1, քրտնաջան վաստակ, աշխատանք. получи́ть д. че́стными трудáми; 2, հնց. կայք, գոյք, ստացուածք. -бы́точный տ. Добы́чный; -бы́тчикъ ա. աշխատաւոր, աշխատող, վաստակող, դադրող ձեռք. -(до́)бытый բյ. ած. ձեռք բերած, աշխատած, վաստակած, դագած։

До‖бы́ть (-бу́ду -бу́дутъ; անց. до́бы́лъ, добылá, до́бы́ло), ся տ. Добывáть, ся.

До‖бы́ча է. 1, որս, աւար, կողոպուտ (մնաց. ձյս իմաստով յաճախ до́быча); ходи́ть на д—у կմ за д—ею աւարի, կողոպուտի գնալ. во́ры вы́шли на д—у; сдѣ́латься д—ею чего́ կմ кого́-ли́бо մէկին, մի բանի աւար դառնալ. войскáмъ доста̀лось въ д—у мно́го съѣстны́хъ припáсовъ; 2, լեռնգ. շահագործութիւն, արդիւնաբերութիւն. д. рудъ հանքարդիւնաբերութիւն, -նագործութիւն. -бы́чка է. Նւզ. պտուկ, թեթև աւար, որս, կողոպուտ. -бы́чливый ած. 1, ընդունակ, յաջողակ աշխատելու, ճարելու, վաստակելու կամ որսալու, աւար առնելու, շահելու մէջ. 2, արդիւնաւէտ, շահաւէտ. -бы́чникъ ա. շահագործող, արդիւնաբերող. առհ. վաստակաւոր, աշխատող, դադրող ձեռք. -бы́чный ած. 1, շահագործութեան. արդիւնաբերութեան. 2, արդիւնաւէտ, արդիւնաբեր, շահաւէտ. д. про́мыселъ; -бычь է. գւռվ. ձկան որսը, ձկան որ-

Добью́ տ. Доби́ть. [սի ժամանակը։

Добѣгать չ. I. добѣгáть, -бѣжáть (-гу́ -жи́шь -гу́тъ) до чего́ վազելով որոշած տեղը հասնել. II, добѣ́гать, ся շատ վազելուց ուժից ընկնիլ, դլորուիլ, այնքան վազել, որ. онъ до того́ добѣ́галъ, что свали́лся съ ногъ отъ устáлости.

Дóбѣлá ն. 1, ցշիկցում, ցատրաշիկցում. расжали́ть желѣ́зо д.; 2, ցսպիտակցում, ցմաքրութիւն. чёрнаго кобеля́ не вы́моешь д. (առծ.). սևին խրատ, սևին սապոն։

До||бѣ́ливаніе չ. սպիտակացնել պրծնելը. ծեփել պրծնելը. -бѣ́ливать, -бѣли́ть (-бѣлю́ -бѣ́лятъ) ն. սպիտակացնել պրծնել, ծեփել պրծնել. д. стѣ́ны, поло́тна; -ся չէզ. սպիտակացնուիլ վերջանալ. холстъ добѣли́лся; -бѣ́лка ի. տ. Добѣ́ливаніе.

Добѣси́ться (-бѣшу́сь -бѣ́сятся) չ. այնքան չարութիւն, չարաճճի բաներ անել, գժութիւններ անել, որ. дѣ́ти добѣси́лись до ушибу.

До||ва́ливаніе չ. 1, կիտել պրծնելը, թեղ անել պրծնելը. 2, ցորոշ կէտ գլորելը. -ва́ливать ն. I. дова́ливать, -вали́ть (-лю́ -лятъ) 1, կիտել վերջացնել, թեղ անել պրծնել. д. ку́чу песку́; 2, до чего́ գլորելով տեղ հասցնել, ցորոշ տեղ գլորել. д. бревно́ до стѣны́; -ся անդր. 1, ցորոշ կէտ գլորուել, գլորուելով հասնել. ка́мень довали́лся до стѣны́; 2, ռմկ. ցորոշ տեղ հազիւ հազ քարշ գալ, քարշ գալով հասնել. наси́лу довали́лся до́ дому; д. до пи́щи, до питья́ սկսել ագահաբար ուտել, խմել. II. дова́ливать, -валя́ть во́йлокъ թաղիք գցել պրծնել. д. хлѣ́бы հացը հունցել պրծնել. -ся չէզ. գցուիլ վերջանալ (թաղիքի մասին), հունցուիլ վերջանալ. -валя́ть տ. Дова́ливать II; -валя́ться չէզ. I. տ. Дова̀ливаться II; II. անդր. այքան գէտուղէն ընկնել, այնքան քարշ գալ, որ. лѣнтя́й до того́ довалялся, что не поспѣ́лъ къ уро́ку.

До||ва́рённый ած. լաւ եփուած, լաւ խաշուած. -ва́риваніе չ. եփել պրծնելը, կատարելապէս եփելը. -ва́ривать, -вари́ть (-рю́ -рятъ) ն. եփել պրծնել, խաշել պրծնել. լաւ եփել. խաշել. -ся անդր. և չէզ. եփուիլ պրծնուլ. ку́шанье довари́лось; -ва́рка ի. եփել պրծնելը, խաշել պրծնելը, լաւ եփելը, խաշելը։

Дова́щивать, -вощи́ть ն. մոմել պրծնել, մոմով սրբել պրծնել. полы́ уже́ дова́щиваютъ; -ся չէզ. մոմուիլ, մոմով սրբուիլ պրծնուլ։

До||веде́ніе չ. ցվերջ տանելը, հասցնելը, վերջացնելը. д. на́чатаго дѣ́ла до конца́; -ведь ի. =да́мка (տ. Да́ма 4); пройти́ въ до́веди հնց. պաշտօնի մէջ բարձրանալ, իշխանաւոր դառնալ։

До||везти́, -ве́зть (-везу́ -везу́тъ; անց. довёзъ, -зла́, о́) -везти́ся -везти́сь տ. Довози́ть, ся.

Доверну́ть, ся տ. Довёртывать, ся.

До||вёрстывать, -верста́ть ն. 1, համեմատել, հաւասարեցնել պրծնել. 2, տպգր. շարած սիւնակները երեսների բաժանել պրծնել։

До||вёртывать, -вертѣ́ть (-чу́ -тятъ), -верну́ть ն. պտտել պրծնել, դարձնել, գլորել վերջացնել. -ся I, չ. պտտուելով, պտոյտ գալով, գլորուելով հասնել ցորոշ կէտ, ցորոշ սահման. не доверне́шься—бью́тъ и переверне́шься—бью́тъ (առած) քիչ ես անում, ծեծում են, շատ ես անում, ծեծում են. «հաստ ու բարակ մի գին է». 2, չէզ. պտտուելով, գլորուելով ցորոշ տեղ հասցնուիլ։

До||верша́ть, -верши́ть ն. 1, անել պրծնել, վերջացնել. д. на́чатое дѣ́ло; д. строе́ніе це́ркви; 2, վերև, ծայր, գագաթ հասցնել. դիզի գլուխը շինել վերջացնել. д. стогъ сѣ́на; -ся չէզ. անուիլ, կատարուիլ պրծնուլ. -верше́ніе չ. անել պրծնելը, կատարել պրծնելը, լրացնելը. въ д. всего́ 'ի լրումն ամէն բանի. -верши́тель ա. -верши́тельница ի. մի բան պրծնող, վերջացնող այր, կին. -верши́ть (-шу́ -ша́тъ), ся տ. Доверша̀ть, ся.

До||вести́, -ве́сть (-веду́ -ду́тъ; անց. довёлъ -ла́, о́) -вести́сь (անց. довёлся́ -вела́сь, о́сь) տ. Доводи́ть, ся.

До||вива́ніе չ. հիւսել վերջացնելը. -вива́ть, -ви́ть ն. հիւսել, վերջացնել, հիւսել պրծնել. д. верёвку; -ся չէզ. հիւսուիլ վերջանալ. -ви́вка ի. հիւսել վերջացնելը։

До||ви́нчивать, -винти́ть (-винчу́ -винтя́тъ) ն. 1, պտուտակել, պտուտակը ներս դնել պրծնել. 2, թղթխ. վինտը (տ. винтъ 3) վերջացնել, վինտել պրծնել. -ся չէզ. պտուտակուիլ վերջանալ։

До||ви́тый, -вито́й ած. հիւսած վերջացրած, [հիւսած պրծած։

Дови́ть (-вью́ -вью́тъ), ся տ. Довива́ть, ся.

До||влека́ть, -вле́чь (-ку́ -чёшь, -ку́тъ) ն. մէկին դրդելով, հրապուրելով մի բանի հասցնել։

Довлѣ́ть չ. кому́, чему́ եկ. սլ. 1, բաւել, բաւական լինել, գոհացնել. довлѣ́етъ дне́ви зло́ба его́ շատ է աւուրն չար իւր (Մատթ. 6_{34}). 2, (սխալ) վայել լինել, վայելել։

До||води́ть (-жу́ -дятъ), -вести́, -ве́сть ն. до чего́ կմ. къ чему́ ցորոշ տեղ տանել, հասցնել. д. ребёнка до́ дому; д. пріѣ́зжаго до гости́ницы; 2, ցվերջ տանել, հասցնել. довести́ дѣ́ло до конца́; довести́ что до соверше́нства մի բան կատարելութեան հասցնել, կատարելագործել. 3, պատճառել, առիթ լինել, քամբախտութեան, թշուառութեան եւն հասցնել. довести́ до разоре́нія, до поги́бели; д. кого́ до послѣ́дней кра́йности, до отча́янія մէկին վերջին ծայրայեղութեան, յուսահատութեան հասցնել. 4, հասցնել, հաղորդել, տեղեկացնել, զեկուցանել. довести́ что до чьего́ свѣ́дѣнія; -води́ться, -вести́ся 1, չ. պատահիլ, յաջողուիլ. мнѣ никогда́ э́того не доводи́лось ви́дѣть; 2, անդր. բարեկամ, ազգական գալ, համարուիլ. онъ мнѣ дово́дится родны́мъ племя́нникомъ; 3, ընկնել, հասնիլ. ему́ дово́дится бога́тое наслѣ́дство по́слѣ дя́ди; 4, չէզ. до чего́ ցվերջ տարուիլ, հասցնուիլ. дѣ́ло дово́дится до конца́.

До||во́дчикъ ա. -во́дчица ի. գանգատաւոր, մատնիչ, ամբաստանիչ. մեղադրող. վկայ, -ուհի։

До́водъ ա. 1, պատճառ, փաստ, ապացոյց. въ дѣ́лѣ предста́влены я́сные и неоспори́мые до́воды; 2, дово́дъ հնց 1, մատնութիւն, բողոք, գանգատ, ամբաստանութիւն, մեղադրանք. 2, տ. Стря́пчество.

До||вози́ть ն. I. довози́ть (ներկայ՝ довожу́ -зятъ), -везти́, -ве́зть, до чего́, докуда́, տանել, տեղ հասցնել (ձիով, սայլով, նաւով). д. до го́рода въ коля́скѣ; д. до бе́рега на ка́терѣ; II. довози́ть (ապառնի՝ довожу́ -зятъ) կրել վերջացնել. д. послѣ́дній стогъ сѣ́на; -ся չ. խիստ պղերգութիւն, սանձարձակութիւն, տաղտկութիւն անել. -во́зка ի. տանելը, տեղ հասցնելը. կրելը։

До||вола́киваніе չ. ցորոշ տեղ քարշելը. քարշ տալով տեղ հասցնելը։ -вола́кивать, -волочи́ть, -воло́чь ն. քարշել պրծնել. քարշելով տանել, տեղ հասցնել. онъ доволочи́лъ свою́ но́шу; доволо́чь но́ги դոռով, քարշ գալով տեղ հասնել.

-ся 1, ռմկ. քարշ գալով, թրև գալով, հազիւ հազ տեղ հասնել. кой-какъ домóй доволóкся; 2, կր. քարշուելով տեղ հասցնուիլ, կրուիլ, տարուիլ:

До||вóлить (-лю -лятъ), уд—, ն. հնց. և ռմկ. բաւականաչափ ուճիկ տալ. գոհացնել, բաւականացնել:

До||волочи́ть (-чý -лóчатъ; անց. доволóчилъ, -ла, о) 1, տ. Доволáкивать; 2, ն. տափանել պրծնել, ցաքանել պրծնել. -ся տ. Доволàкиваться, ся; -волóчь (-кý -кýтъ; անց. -лóкъ -клá, ó), ся տ. Доволочи́ть, ся.

До||вóльно մ. բաւական, բաւականին, հերիք. д. ли тебѣ́ э́тихъ дéнегъ? тамъ д. мнóго людéй; д.! բաւական է, հերիք է. -вóльный ած. 1, кѣмъ, чѣмъ (կամ տուանց լրացուցչի) բաւական, գոհ. д. мáлымъ; д. своéю судьбóю.

До||вóльствіе չ. 1, տ. Довóльство 2; 2, ուտելիք, պարէն, կենսական պիտոյք, ապրուստ. 3, ռզմ. զինուորական պիտոյքներ, մթերքներ. амуни́чное д.; -вóльство չ. 1, բաւականութիւն, գոհութիւն. 2, լիութիւն, առատութիւն, ունեւորութիւն, ընչեղութիւն. -вóльствованіе չ. պարենաւորում, հայթայթում, մատակարարում. -вóльствовать (-ствую -ютъ), уд—, ն. 1, պարենաւորել, հայթայթել, մատակարարել, տալ. д. вóйско припàсами; 2, գոհացնել, բաւականացնել. неумѣ́реннаго ничѣ́мъ не удовóльствуешь; -ся 1, ռմկ. և չ. բաւականանալ, գոհանալ. д. небольши́мъ дохóдомъ; 2, կր. պարենաւորուիլ. во врéмя похóда вóйско довóльствовалось всѣмъ нýжнымъ.

Доворовáться չ. до чегó այնքան գողութիւն անել, որ [փորձանքի մէջ ընկնել, պատժուիլ կըն]. доворовáлся до ссы́лки այնքան գողութիւն արաւ, որ աքսորեցին:

Довóщи́ть (-вóщý -вощáтъ), ся տ. Довàщивать, ся.

Доврáться (-врýсь -врýтся; անց. доврáлся, -лáсь, лóсь) չ. до чегó ստախօսութիւնը ծայրայեղութեան հասցնել, այնքան սուտ խօսել, որ. онъ доврáлся до совершéнной безсмы́слицы.

Доврéмéнный ած. 1, աշխարհիս ստեղծագործութիւնից առաջ եղող, նախաստեղծական. 2, վաղաժամ, վաղահաս:

До||вѣвáніе չ. 1, քամել պրծնելը, էրնել պրծնելը. 2, փչելով տանելը, տեղ հասցնելը. -вѣвáть, -вѣ́ять ն. 1, քամել պրծնել, էրնել պրծնել. 2, փչելով տանել, տեղ հասցնել. довѣ́йте, вѣтерки́, печáль мою къ дрýгу; -ся կր. 1, քամուիլ, էրնուիլ վերջանալ. 2, քամուց տարուիլ, տեղ հասցնուիլ:

До||вѣ́дывать, -вѣ́дать ն. իմանալ, տեղեկանալ, հասու լինել. -ся չ. մանրամասնաբար աշխատել իմանալ, տեղեկանալ, հասու լինել. чегó не скáзываютъ, тогó и не довѣ́дывайся.

До||вѣ́иваніе տ. Довѣвáніе (սակայն довѣ́иваніе աւելի գործածական է). -вѣ́ивать տ. Довѣвáть 1.

Дóвѣку մ. յաւէտ, միշտ, յաւիտեան:

До||вѣ́нчивать, -вѣнчáть ն. և չ. պսակել պրծնել, պսակադրութեան հանդէսը վերջացնել:

Довѣ́||ренность ի. 1, къ комý վստահութիւն, հաւատք. употреби́ть во зло д.; удостóить д—и; 2, հաւատարմագիր, -մաթուղթ. дать комý д. на что; дѣ́йствовать по чьей-ли́бо д—и; -ренный 1, բյ. ած. վստահացած, հաւատացած, ‘մատ զնացած‘. 2, ած. վստահելի, հաւատալի. հաւատարմաթուղթ ստացած. д—ое лицó; довѣ́ренный, аго ա. առևտրական գործերի հաւատարմատար, լիազօր գործակալ:

Довѣ||ри́тель ա. 1, մէկին մի բան հաւատացող, վստահացող, յանձնարարող. 2, իրւ. (довѣри́тельница ի.) հաւատարմատու, յանձնարարու (փաստաբանի), գործատէր, -տիրուհի. 3, նա որ հաւատարմաթուղթ է տուել. -ри́тельный ած. 1, հաւատարմական. д. актъ; 2, մտերմական, մտերմաւոր:

Довѣ́рить (-рю -рятъ), ся տ. Довѣря́ть, ся.

До||вѣ́ріе չ. къ комý տ. Довѣ́ренность 1; имѣ́ть, питáть пóлное д. къ комý; вкрáсться въ чьё-ли́бо д.; употреби́ть во зло д.; -вѣ́рчивость ի. դիւրահաւատութիւն, միամտութիւն. -вѣ́рчивый ած. դիւրահաւատ, միամիտ, անմեղ, ոչ կասկածոտ. -вѣря́ть, -рить ն. что комý և չ. 1, հաւատալ, վստահիլ, վստահանալ, ‘մատ զնալ‘, ‘մատ լինիլ‘. 2, հաւատալ, վստահանալով տալ, յանձնել, յայտնել. -ся 1, ռմկ. հաւատալ, վըստահիլ, վստահանալ, ‘մատ զնալ‘, ‘մատ լինիլ‘. 2, կր. հաւատացուիլ, վստահութեամբ յանձնուիլ, տրուիլ, յայտնուիլ:

До||вѣ́сить (-шу -сятъ), ся տ. Довѣ́шивать, ся; -вѣ́сное, аго և -вѣснóе, óго չ. = довѣ́сочныя дéньги (տ. Довѣ́сочный); -вѣ́сокъ, ска ա. աւելաքաշ, լրացուցիչ քաշ, ծանրութիւն. въ головѣ́ сáхару нѣтъ пяти́ фунтóвъ; нáдобенъ къ ней д.; купи́ть мя́со безъ довѣ́ска առանց լրացուցիչ քաշի միս գնել (իբրև լրացուցիչ քաշ մսավաճառները տալիս են ոչ պատուական միս). -вѣ́сочный ած. աւելաքաշի, լրացուցիչ քաշի. д—ыя дéньги դրամ, որ վճարում են ապրանքի քաշի մէջ երևցած պակասորդի համար:

Довѣ́съ տ. Довѣ́сокъ.

Довѣ́||шать տ. Довѣ́шивать 1; -шиваніе չ. 1, կախել պրծնելը. 2, քաշել պրծնելը, կշռել վերջացնելը. 3, քաշի, կշռի պակասորդը լրացնելը. -шивать ն 1, (довѣ́шать) կախել, կախ տալ պրծնել. д. мы́тое бѣльё для просýшки; 2, (довѣ́сить) քաշել պրծնել, կշռել վերջացնել. остáлось д. нѣ́сколько товáровъ; 3, կշռած, քաշած իրի պակասորդը լրացնել. -шиваться, -ситься 1, ռմկ. քաշուիլ, իւրն իրան քաշել, կշռել պրծնել. 2, կր. քաշուիլ, կշռուիլ վերջանալ:

Довѣ́ять (-вѣ́ю -вѣ́ютъ), ся տ. Довѣ́ивать և Довѣвáть, ся.

До||вязáть (-жý -жутъ), ся տ. Довя́зывать, ся; -вя́зываніе չ. 1, կապել պրծնելը. 2, գործել պրծնելը. -вя́зывать -вязáть ն. 1, կապել պրծնել. д. послѣ́дній снопъ; 2, գործել պրծնել, գործել վերջացնել. д. чулóкъ; -ся կր. 1, կապուիլ վերջանալ. товàры довя́зываются; 2, գործուիլ վերջանալ чулóкъ довязáлся.

До||гáвливать, -говѣ́ть 1, ն. պահել, պաշխարանքը լրացնել, վերջացնել, остаётся договѣ́ть ещё оди́нъ день; 2, ցորոշ ժամանակ պահել, ապաշխարել:

До||гадáть ն. когó մէկին մի միտք ներշնչել, մի բան գլխի գցել. -ся տ. Догáдываться.

До||гáдить (-жу -дятъ) ն. անհամ, անախորժ բան բանել. փչացնել (մեծ քանակութեամբ):

До||гáдка ի. 1, կարծիք, ենթադրութիւն, մակաբերութիւն. онъ говори́тъ э́то по однóй д—ѣ; теря́ться въ д—ахъ о чёмъ-либо մր և է

բանի մասին մտածելով, վարանել, ինչ անելը չիմանալ. 2, ռմկ. սրամտութիւն, հասկացողութիւն, իմացականութիւն, շրջահայեցողութիւն. -гáдливость ի. սրամտութիւն, նրբամտութիւն, շրջահայեցութիւն. -гáдливый ած. սրամիտ, նրբամիտ, մտմտուկ, շուտով հասկացող, գլխի ընկնող:

Дó‖гадъ ա. -гадь ի. ռմկ. տ. Догáдка; не въ дóгадъ առանց մտածելու, առանց հասկանալու: -гáдываться, -гадáться չ. о чёмъ հասկանալ, իմանալ, գուշակել, գլխի ընկնել. по прошéдшему д. мóжно и о бýдущемъ; д. по намёку.

До‖гарéсса ի. (իտ.) դոժուհի, дожъ-ի կինը:

До‖гáръ ա. տ. Догорáніе.

До‖гáщивать, -гостúть չ. ռմկ. հիւրութեան ժամանակը անցկացնել պրծնել, վերջացնել. -ся չ. до чегó ռմկ. այնքան հիւր մնալ, որ. догостúлись до тогó, что надоѣ́ли; догостúлись до ссóры.

До‖гибáть, -гнýть ն. բոլորովին կամ ցպահանջ, բոլոր հարկին կռացնել, կորացնել. догнýлъ до излóма; -ся չ. բոլորովին կամ ցպահանջ, բոլոր հարկին կորացնուիլ. կռացնուիլ:

Доглáдить (-жу -дятъ), ся տ. Доглàживать, ся.

До‖глáдывать, -глодàть ն. կրծելով ուտել, կրծել պրծնել. собáка доглодáла всѣ кóсти.

До‖глáживать, -глáдить ն. յղկել, հարթել պրծնել. д. бѣльё; -ся չ. յղկուիլ, հարթուիլ վերջանալ:

До‖глáтывать, ся, -глотáть, ся ն. և չ. բոլորովին կուլ տալ, կլանել. այնքան կուլ տալ, որ. доглотáлся снѣ́га до тогó, что схватúлъ кáшель.

Доглодáть (-жý -жутъ) տ. Доглáдывать.

Доглотáть, ся տ. Доглáтывать, ся.

До‖глядѣ́ть (-жý -дя́тъ) չ. և ն. նայելով, դիտելով տեսնել, նկատել, ՙբարատուրք անել՚. ցվերջ նայել, դիտել, տեսնել. ня́ня не доглядѣ́ла за ребёнкомъ: онъ упáлъ въ прудъ; д. пьéсу.

Дóг‖ма ի. (յն.) հիմք, հիմնաքար (գիտութեան). д. Рúмскаго прáва; -матизúровать (ֆր.) պատայայտել, ապացուցանել յայտնի հիմունքներով, դաւանաբանական ձևով. -матúзмъ ա. փիլ. դաւանականութիւն (ուղղութիւն, որ մարդկային մտքի իմացական կարողութեան չափը չօշափելու հարցից զգուշանում է. հկռկը. տ. критицúзмъ); առհ. դաւանական դոյն կրող գիտական մեթոդ. -мáтика ի. եկեղ. դաւանաբանութիւն, քրիստոնէական վարդապետութիւն. -мáтикъ ա. դոգմատիկոս. 1, դաւանական (ոչ քննադատական) հեղինակ (որ որոշ սկզբունքներ անքննադատելի, անժխտելի է համարում). 2, եկղ. դաւանաբան. 3, տ. Богорóдиченъ; -матúстъ տ. Догмáтикъ 1; -матúческій ած. դոգմատիկական. 1, դաւանական (ոչ քննադատական). 2, դաւանաբանական. д—ое богословіе.

Дóгматъ ա. (յն.) 1, փիլիսոփայական յայտնի հիմունք, սկզբունք, դաւանութիւն:

До‖гнáть (-гоню́ -гóнятъ; անց. догнàлъ -лá, о), ся տ. Догоня́ть, ся I.

До‖гнивáть, -гнúть (-гнію́ -іютъ) չ. բոլորովին փտիլ, նեխիլ, հոտիլ. -гнýть, ся տ. Догибáть, ся.

Дого‖вáривать, -ворúть (-рю́ -ря́тъ) ն. 1, ասել պրծնել, խօսքը, ասելիքը վերջացնել. пóдняли такóй шумъ, что емý не дáли д.; 2, ռմկ. договорúть когó մէկի հետ պայմանաւորուիլ, մէկին վարձել. -ся 1, չ. խօսակցութիւնը կողմնակի մարդու, իրի վերայ դարձնել. այնքան խօսել, որ. договорúлись и до негó նորա մասին էլ խօսեցան. д. до я́вныхъ прúзнаковъ умопомѣшáтельства при разспрóсахъ экспéрта; тебѣ д. до бѣды́ դու անպատճառ այնքան պիտի խօսես, որ փորձանքի, խաթարալի մէջ ընկնես. 3, առևտ. պայման կապել, պայմանաւորուիլ. д. о мúрѣ; д. о цѣнѣ́; 4, չ. պայմանաւորուիլ, պայմանով կապուիլ. договáривающійся, -щаяся, -щееся էյ. ած պայմանաւորուող, պայման կապող, բանակցող. óбѣ д—щіяся стóроны пóслѣ дóлгихъ спóровъ пришлú наконéцъ къ соглашéнію.

До‖говóрный ած. 1, պայմանական, պայմանով որոշած, ՙբարշած՚. рабóтать по д—ой цѣнѣ́; 2, պայմանադրական, պայմանագրին վերաբերող. д—ыя стáтьи; -говóръ ա. պայմանաթուղթ, պայմանագիր, դաշնագիր, դաշնաթուղթ. постановúть, заключúть д. պայման, դաշն կապել. сдáться на д. ռզմգ. որոշ պայմաններով անձնատուր լինել:

До‖говѣ́ть տ. Догáвливать; -годúть (-жý -дя́тъ) տ. Догожáть; -годя́ Տ. ռմկ. առաջուց, կանխօրօք, նախօրօք, վաղօրօք, օր առաջ:

До‖гожáть, -годúть ն. когó ռմկ. սպասել, ճամբայ պահել:

Дó‖голá Տ. ցմերկութիւն, ցհոլանիութիւն. раздѣ́ть когó д.; вы́стричь когó д.

До‖гóнка ի. 1, հետապնդում, հետամուտ լինելը. побѣжáть, брóситься за кѣмъ -либо въ д—у; 2, գտելը, քաշել պրծնելը (օդի կամ այլ բան). -гóнный ած. հետապնդելու, հետամուտ լինելու. догóнная, ой ի. հետապնդող, հետամուտ եղող մարդիկ, խմբակ. -гóнщикъ ա. հետապնդող, հետամուտ լինող:

До‖гóнъ ա. -гóня ի տ. Догóнка 1; со всѣхъ ногъ брóсился за нимъ въ д—ю; -гоня́ть ն. I. догоня́ть (-гоня́ю -ютъ — ներկայ է) -гнáть 1, մէկի յետևից հասնել (նաև փոխբ. մտքով). бѣжáлъ изо всѣхъ силъ, но не могъ егó догнáть; онъ сперва́ лѣнúлся, а потóмъ догнàлъ своúхъ свéрстниковъ; 2, քաշել պրծնել, գտել, թորել պրծնել. -ся չ. բանուիլ (հետապնդողից). II. догоня́ть (гоня́ю -гоня́ютъ—ապառնի) այնքան քշել, որ հոգին դուրս գայ, հալից ընկնի. онъ догоня́лъ своіо лóшадь до тогó, что онà пáла.

До‖горáніе չ. 1, ցվերջ, բոլորովին այրուիլ վերջանալը. 2, հանգչիլ, մարիլը. -горáть, -горѣ́ть (-рю́ -ря́тъ) չ. 1, ցվերջ, իսպառ այրուիլ, այրուիլ վերջանալ. свѣчà догорáетъ; дровá въ печú догорѣ́ли; 2, հանգչիլ, մարիլ:

Догостúть (-щý -стя́тъ), ся տ. Догáщивать, ся.

До‖гребáть, -грестú, -грéсть (-гребý -бýтъ; անց. догрёбъ -блà, ó) ն. 1, փոցխել, փոցխով հաւաքել, տրմզել, տրմզով հաւաքել. остаётся немнóго догрестú сѣ́на; 2, թիավարելով, նաւելով հասնել, ժամանել. съ трудóмъ догреблú до бéрега; -гребáться, -грестúся, -грестúсь 1, չ. փոցխով, փոցխ քաշելով հասնել. 2, չ. փոցխուիլ, փոցխով հաւաքուիլ, տրմզուիլ:

До‖гружáть, -грузúть ն. 1, բարձել պրծնել, վերջացնել. 2, բեռը լրացնել, բեռան պատը, պակասորդը լրացնել. -ся չ. բարձուիլ վերջանալ, կատարելապէս բարձուիլ. корáбль догру-

жа́ется; -гру́жённый բյ. ած. բարձած, բեռնած. -гру́живаніе չ. 1, բարձել, բեռնել պրծնելը. 2, բեռը լրացնելը. -гру́живать, ся, -грузи́ть, ся տ. Догружа́ть, ся; -грузи́ть (-гружу́ -гру́зятъ), ся տ. Догружа́ть, ся և Догру́живать, ся

До‖гру́зка ի. բարձել, բեռնել պրծնելը. -грузно́е су́дно, -гру́зокъ, зка ա. մի տեսակ նաւակ, մակոյկ, որոնք մեծ նաւերի բեռը լրացնում են (որովհետև սրա խիստ լայնածաւալ լինելով, չեն կարող ծովի ծանծաղուտ ափերի մօտ կատարելապէս բարձուել, այլ թեթեւ բարձուած ափից հեռանում և ծովի մէջ կանգնում են):

Догрун‖то́вывать, -това́ть (-ту́ю -ютъ) ն. Նկրչ. առաջին ներկը, գետը տալ պրծնել:

До‖грыза́ть, -гры́зть (-зу́ -зу́тъ; անց. догры́зъ, -зла, о) ն. 1, կրծել պրծնել, կրծոտել, ուտել պրծնել. догры́зъ всѣ орѣ́хи; 2*, ռմկ. մէկի միւսն ուտել, մէկին թշնամաբար հալածել, սպանել. онъ таки догры́зъ его նա նրա հոգին հանեց.

До‖грѣва́ть, -грѣ́ть ն. ցպահանջ տաքացնել, տաքացնել պրծնել. -ся էր. տաքացնուիլ, վերջանալ. ку́шанье догрѣва́ется.

До‖гу́ливать, -гуля́ть ն. և չ. 1, զբօսանքը, զբօսանքի օրերը անցկացնել, վերջացնել. д. послѣ́дніе дни пра́здниковъ; 2, до чего́ այնքան զբօսանքի, քէֆի, շուայտութեան յետեւից ընկնել, որ. догуля́ть тебѣ́ до бѣ́ды այնքան թրև պիտի գաս, որ դժբախտութեան հանդիպիս. -ся տ. Догу́ливать 2.

Догъ ա. (անգլ.) դոգ (մի տեսակ գամփռ, մեծ. արջ և կինճ որսացող). а́нглійскій д.

До‖дава́ть (-даю́ -даёшь -даю́тъ), -да́ть ն. լրիվին տալ, վճարել, հատուցանել. онъ мнѣ мно́го ещё не до́далъ; -ся էր. լրիվին տրուիլ, հատուցանուիլ, վճարուիլ. чего́ недоста́нетъ, то по́слѣ дода́стся; -да́токъ, тка, -да́точекъ, чка ա. Ուզ. յաւելում, լրացուցիչ վճար. -да́точный ած. յաւելավճարի. դեռ հասանելիք. д—ыя де́ньги; -да́ть (-да́мъ -да́шь -да́стъ -дади́мъ -дади́те -даду́тъ; անց. до́далъ -ла́, о), -да́ться (անց. додался́ -ла́сь -ло́сь) տ. Додава́ть, ся; -да́ча, -да́чка ի. Ուզ. 1, լրիվին հատուցանել, վճարել պրծնելը. 2, տ. Дода́токъ.

До‖двига́ть, -дви́нуть ն. առաջ մղել, բոթելով, հրնդելով առաջ տանել, տեղ հասցնել. -ся էր. առաջ մղուիլ, բոթուելով, հրնդուելով առաջ տարուիլ, տեղ հասցնուիլ:

Додека́эдръ (յն.) տ. Двѣнадцатигра́нникъ.

До‖дёргивать ն. 1, (додёргать) փետել պրծնել. 2, (додёрнуть) քաշելով, ձիգ տալով տանել, տեղ հասցնել. додёрни ло́дку до бе́рега; -ся էր. 1, փետուիլ վերջանալ. 2, տարուիլ, տեղ հասցնուիլ:

До‖держа́ніе չ. 1, ցորոշ ժամանակ պահելը. 2, մի քանի ժամանակ պահելով մշակելը, շինելը. 3, ծախսել, մսխել պրծնելը. -держа́ть (-держу́ -де́ржатъ), ся տ. Доде́рживать, ся; -де́рживаніе տ. Додержа́ніе; -де́рживать, -держа́ть ն. 1, ցորոշ ժամանակ պահել, 'տուն անել'. д. рабо́тника до сро́ка; 2, որոշ պայմանների մէջ պահելով մշակել, շինել. կատարել, վերջացնել (գործը). д. въ мо́чкѣ лёнъ; д. корректу́ру; д. пре́рванный экза́менъ արդէն սկսած, բայց ընդհատած քննութիւնը տալ վերջացնել. 3, ծախսել, մսխել պրծնել. д. послѣ́днія де́ньги; -ся էր. 1, ցորոշ ժամանակ պահուիլ. 2, պահուելով մշակուիլ, շինուիլ. 3, ծախսուիլ, մսխուիլ:

Додёрнуть, ся տ. Додёргивать, ся 2.

До‖дира́ніе չ. 1, պատառ պատառ, կտոր կտոր անելը, ծուատելը. 2, մաշելը. -дира́ть, -дра́ть ն. 1, պատառոտել, կտոր կտոր անել, ծուէն ծուէն անել, ծուատել. 2, մաշել (զգեստը, ոտնամանը). -ся 1, անդէմ. ամբոխի միջից տալ անցնել, անց կենալ. здѣ́сь тако́е мно́жество наро́да, что ни до чего́ нельзя́ додра́ться; 2, կռուել պրծնել, կռիւը վերջացնել. 3. էր. պատառոտուիլ, կտոր կտոր անուիլ, ծուատուիլ:

Доднéсь Տ. եկ. ս. ցայսօր, ցայժմ:

Додо́ ա. տհհ. տ. Дронтъ.

До‖до́ру нѣтъ ռմկ. անցք, ճանապարհ չկայ, անկարելի է անցնել. на ры́нкѣ додо́ру нѣтъ.

Додра́ть (-деру́ -ру́тъ), ся տ. Додира́ть, ся.

До‖ду́мываться, -ду́маться չ. մտածելով, խորհելով մի բանի հասնել, մի եզրակացութեան յանգել:

До‖дѣ́лать, ся տ. Додѣ́лывать, ся; -дѣ́лка ի. -дѣ́лъ ա. մշակում, շինելը, գործելը, մշակել պրծնելը. ко̀жи въ д—кѣ; въ д—лѣ оста̀лось немно́го кожъ քիչ կաշին է մնացել, որ դեռ պիտի դաբաղուի. -дѣ́лываніе չ. անել, շինել պրծնելը. -дѣ́лывать, -дѣ́лать ն. անել, շինել վերջացնել, մի գործ կատարել պրծնել. д. строе́ніе; -ся էր. անուիլ, կատարուիլ, շինուիլ վերջանալ. э́то строе́ніе нескоро додѣ́лается.

До‖е́ніе չ. կթելը. -ёный (-до́енъ -на, о) բյ. ած. կթած. д—ая коро́ва.

До‖жа́риваніе չ. տապակել պրծնելը. -жа́ривать, -жа́рить (-рю -рятъ) ն. տապակել պրծնել. д. говя́дину; -ся 1, չ. և էր. տապակուիլ վերջանալ. жарко́е дожа̀ривается.

До‖жа́тіе չ. I. քամել, մզել պրծնելը. II. հնձել պրծնելը. -жа́тый բյ. ած. I. (-жа́тъ -та, о) մզած, քամած. д—ое бѣльё; II. (до́жа́тъ -та, о) հնձած պրծած. д—ая рожь; -жа́ть, ся I. (дожму́ -у́тъ; անց. дожа́лъ, а, о) տ. Дожима́ть, ся; II. (дожну́ -у́тъ; անց. до́жа́лъ. а, о) տ. Дожина́ть, ся.

Дожда́ть (-жду́ -ждёшь -жду́тъ; անց. -дожда́лъ -ла́, о́), ся (անց. дожда̀лся -жда́ла́сь -жда́ло́сь) տ. Дожида́ть, ся.

Дож‖девико́вые [грибы́], ыхъ ա. յ. բս. Lycoperdaceae, Գայլասունկեր. տոհ. մուտ սունկեր (Gastromycetes); -деви́къ, а́ ա. 1, տ. Дождевико́вый грибъ; д.-велика̀нъ, Lycoperdon giganteum, Հսկայ գայլասունկը. 2, աշնանը պատրաստած և անձրևի տակն ընկնելուց յետոյ թրջած ադիս. 3,=дождево́й червь (տ. Дождево́й); 4, մի տեսակ անթափանցիկ վերարկու:

Дож‖деви́на ի. անձրևաջրից առաջացած խոնաւութիւն, նամութիւն, փտողութիւն. -дёвка ի. կնդ. Haematopota pluvialis, անձրևաճանճ. -ждево́й ած. անձրևի, անձրևա—, -անձրևային. д—а́я вода́; д. пузы́рь; д. зо́нтикъ; д о ж д е в о́ й червь, Lumbricus terrestris, բոստ կամ երկրամայր[որդ]ը, 'խմորարուկ'. д о ж д е в ы я облака́ ցածր, խիտ, թուխպ, անձրևաբեր ամպեր. -де́йка ի. անձրևատաշտակ, որ խողովակի տակ դնելով անձրևաջուր են կալնում. -демѣ́ръ ա. անձրևաչափ (գործիք, որով որոշ ժամանակամիջոցում եկած անձրևի քանակութիւնը չափում են). -дено́сный ած. սկլ. գործ. անձրևաբեր. д—ыя облака́.

Дóж||дикъ ա. նւզ. անձրեւիկ, թեթեւ անձրեւ. -дúнка ի. անձրեւի կաթիլ, մի կաթիլ անձրեւ. наступúла зáсуха. Ни д—и; -дúстый ած. սկւ. գործծ. անձրեւաշատ, անձրեւառատ. д. край.

Дож||дúть (-ждю́ -дя́тъ) չ. սկւ. գործծ. 1, անձրեւել, անձրեւ թափել. дождúтъ (դէմ.) անձրեւում, անձրեւ է գալիս. 2, ռմկ. սրսկել. попъ дождúтъ кропúломъ; -дичекъ, чка ա. նւզ. թեթեւ անձրեւ, անձրեւիկ, շաղ. пóслѣ *дóждичка въ четвéргъ 'վաղը', 'միւս անգամ' (այսինքն երբէք). приходúте за полýчкой пóслѣ *д—чка въ четвéргъ; -дúще ա. յւկ. մեծ, սաստիկ անձրեւ, տարափ. э̀кой д. пошёлъ!

Дождлúвый ած. անձրեւային, անձրեւաշատ. д. день; д—ая погóда; д—ое лѣто.

Дож||дь, я́ (յ. дождú, -дéй) անձրեւ. д. идётъ անձրեւ է գալիս. укры́ться отъ дождя́; попáсть подъ д. անձրեւի տակ ընկնել. метеóрный д. օդերեւութային անձրեւ. -данúкъ, à տ. Дождевúкъ.

До||жёвывать, -жевáть (-жую́ -ю́тъ) ն. և չ. ծամել պրծնել, բոլորովին ծամել, ծամքել վերջացնել:

Дожéчь (-жгу́ -жжёшь -жгу́тъ; անց. дожёгъ, -жглá, ó), ся տ. Дожигáть, ся.

До||живáніе չ. 1, ապրելը, ապրելով հասնելը (օր. խորին ծերութեան). 2, վերջին օրապահիկը ծախսելը. -живáть, -жúть 1, չ. до чегó որոշ ժամանակ ապրել, ապրելով հասնել. жильцу́ нáдобно доживáть до срóка ещё два мѣ́сяца; 2, ապրել, անցկացնել. «онъ доживáлъ свой вѣкъ одинóко»; 3, վերջին օրապահիկը, կարողութիւնը ծախսել, մսխել, 'ուտել':

До||жигáніе չ. ցվերջ այրելը, այրել պրծնելը. -жигáть, -жéчь ն. 1, ցվերջ այրել, այրել պրծնել. д. свѣ́чку; 2, այրելով սպառել. д. послѣ́дки дровъ; 3, այրել, շինել, պատրաստել պրծնել. дожигáютъ послѣ́днюю кýчу лѣ́са на ýголь վերջին փայտակոյտը գործելի ('անձող') են դարձնում. -ся էր. այրուել վերջանալ:

До||жидáніе չ. սպասելը, սպասելով ժամանակը անցկացնելը. -жидáть, ся, -ждáть, ся ն. և չ. սպասել, ճամբայ պահել, սպասելով ժամանակն անցկացնել. я дожидáлъ тебя́ цѣ́лый часъ; онъ дожидáется, чтобъ за нимъ прислáли; не дожидáйтесь меня́: мнѣ нельзя́ быть у васъ.

Дожúзненныя зáписи իրւբ. ժառանգական պայմանագրեր ամուսինների մէջ, որոնցով մէկի մահից յետոյ ժառանգական իրաւունքը անցնում է միւսին:

До||жимáть, -жáть ն. քամել, մզել պրծնել. д. лимóны, мы́тое бѣльё; 2,* նեղել, նեղ տեղը դցել, տհաճութիւն պատճառել. -ся էր. քամուել, մզուել վերջանալ. -жúмка ի. քամել, մզել պրծնելը:

До||жинáть, -жáть ն. հնձել պրծնել, հունձը վերջացնել. я дожинáю свою́ полосу́; -ся էր. հնձուել վերջանալ. -жúнка ի. տ. Дожúнъ; дожúнки, нокъ յ. հնձի վերջին օրը, որը շինականի համար նաև տօն է. -жúночный ած. հնձի վերջի. д. снопъ հնձի վերջին խուրձը, որ հնձուորները հնձատիրոջը մատուցանելով հիւրասիրութեան արժանանում են:

Дожúнъ ա. հնձել վերջացնելը, հունձը պրծնելը:

Дó||жúтый (дóжúта, -тá, о) էյ. ած. ապրած, անցկացրած. ծախսած. -жúть (-живу́ -вёшь -вýтъ; անց. дóжилъ -лá, о) տ. Доживáть.

Дóжни, ней ի. յ. = Дожúнки (տ. Дожúнка).

Дожъ ա. (իտ.) պտմ. դոժ (նախկին Վենետիկի և Գենովայի հասարակապետութիւնների պետը, գլուխը). дворéцъ дóжей.

Дóза ի. (ֆր.) մաս, պտղունց, միանգամից ընդունելի դեղի, դարմանի քանակութիւնը. увелúчить дóзу; принять дóзу я́да; лошадúная д. ռմկ. խիստ մեծ, շատ դեղաման:

До||замýжній ած. ցամուսնական, ցամուսնութիւն, մինչև ամուսնութիւնն եղած, պատահած, անցկացրած. д—яя жизнь.

Дозвáть (-зовý -вýтъ), ся տ. Дозывáть, ся.

Доз||волéніе չ. թոյլատրութիւն, 'դաստուր'. мнѣ данó д. ѣ́хать въ óтпускъ; -вóленный էյ. ած. թոյլատրած. -волúтельность ի. թոյլատրելի լինելը, թոյլատրելիութիւն. -волúтельный ած. 1, թոյլատրող. -տրութեան, -տրական. д—ое свидѣ́тельство; 2, թոյլատրելի, անարգել. -волять, -вóлить (-лю -лятъ) ն. թոյլատրել, թոյլ տալ, իրաւունք տալ. д. отлучúться на врéмя отъ дóлжности; -ся էր. թոյլատրուիլ:

Дозвонúться (-ню́сь -ня́тся) ն. և չ. когó կամ до чегó այնքան զանգահարել, որ լսեն. онъ вернýлся пóздно домóй и не могъ д.

Дозде́ մ. եկ. ռւ. մինչև այսօր, մինչև հիմա, մինչև այստեղ:

Дозимовáть (-мýю -ю́тъ) չ. до чегó ձմեռը կամ ձմեռուայ մնացած մասը անցկացնել, ձմեռելով հասնել. дозимовáли до Велúкаго постá.

До||знавáть (-знаю́ -ю́тъ), -знáть ն. ճշտութեամբ իմանալ, տեղեկանալ, հաւաստիանալ. -ся չ. աշխատել իմանալ, հասկանալ, տեղեկանալ: -знáніе չ. 1, ճիշտ տեղեկանալը, իմանալը. 2, իրւբ. նախորոք կատարուող քննութիւն, հարցուփորձ. произвестú д. на мѣ́стѣ преступлéнія; -знáть (-áю -áютъ; անց. дóзнàлъ -знáлà дóзнáло; дóзналú), ся տ. Дознавáть, ся.

Дозóрный ած. հսկող, հսկողական. д. обхóдъ; д—ое сýдно; д—ыя кнúги հնց. լրացուցիչ հաշուեմատեաններ, որոնց մէջ մտցնում էին մի ընդհանուր աշխարհագրից մինչև միւս նկատուող ապրանքական և հողային յաւելումները. дозóрный, аго ա. շրջագնաց հսկող, դէտ:

Дозóрщикъ ա. հնց. 1, տ. Досмóтрщикъ; 2, ընդհանուր ժողովրդահամարի հաշուեմատեանները ստուգող պաշտօնեայ, վերստուգիչ:

Дозóръ ա. 1, գիշերային շրջագայութիւն, հրսկում. 2, ռզմգ. տ. Пáтруль; 3, հնց. համեմատութիւն, վերստուգում:

До||зрѣвáніе չ. հասունանալը, հասնելը. д. хлѣ́ба; -зрѣвáть, -зрѣ́ть չ. հասունանալ, հասնել. я́блоки ещё не дозрѣ́ли; нары́въ ещё не дозрѣ́лъ; -зрѣ́лый ած. (յաճախ не բայց. մասնիկով) հասունացած, հասած. д—ые плоды́.

Дозрѣ́ть (-зрѣ́ю -ю́тъ) տ. Дозрѣвáть.

До||зывáть, -звáть ն. когó կանչել, մօտ կանչել, հրաւիրել (մնացածներին ևս). -ся ն. և չ. այնքան ձայն տալ, այնքան կանչել, որ գայ:

До||игрáть, ся տ. Доúгрывать, ся; -úгрываніе չ. խաղալ պրծնելը, խաղը վերջացնելը. -úгрывать, -игрáть ն. խաղալ պրծնել, խաղալ, ածել, վերջացնել. д. пáртію; д. пьéсу на рóялѣ; -ся 1, չ. այնքան խաղալ, այնքան ածել, որ [փորձանքի մէջ ընկնել, անհամութեան հանդիպել եւն]. 2, էր. խաղացուիլ, ածուիլ վերջանալ:

Дóйлица ի. ընտանիքը կերակրող կով, կթան:

Дой‖льникъ ա. -льница ի. փայտէ աման, կոտ, որի մէջ կաթ են կթում. -льня ի. սկ. գործ. կովեր կթելու տեղ, կթարան. -льщица ի. կովեր կթող կինմարդ:

Дой‖мка ի. հնց. 1, պարտքը ստանալը. 2, պարտք. -мочка ի. փոքր. տ. Недоимка; за ва́ми есть ещё д.! -мочный ած. պարտքի, պարտքային. д—ыя де́ньги; д о и м о ч н ы й п р и к а́ з ъ պարտքերը հաւաքող պաշտօնատուն (17—18 դարերում). -мщикъ ա. պարտքերի հաւաքող:

До‖иска́ть (-ищу́ -и́щутъ), ся տ. Дойскивать, ся; -и́скиваніе չ. փնտռելով գտնելը (մնացածը). -и́скивать, -иска́ть ն. փնտռելով, որոնելով գտնել (մնացածը). я уже́ отыска̀лъ мно́гія ве́щи; тепе́рь дойскиваю оста́льныя; -ся չ. чего́ աշխատելով որոնելով գտնել. աշխատել, ջանալ մի բան տեղեկանալ, իմանալ, հաստ լինել. не доищу́сь своей ша́пки; наконе́цъ я доиска́лся, въ како́й кни́гѣ э́то напи́сано.

Доистори́ческій ած. նախապատմական. д—ое вре́мя.

Дойть (дою, до́ятъ) 1, ն. կթել. д. коро́ву; 2, մէկին կողոպտել, մէկի արիւնը ծծել. 3, չ. կաթ տալ. коро́ва переста́ла дойть(ся); -ся 1, կր. կթուիլ. 2, չ. տ. Дойть 3.

Дой‖ка ի. կթելը. -ло չ. 1, անասունի տուած կաթը մի օրուայ ընթացքում. въ до́йлѣ два-три удо́я մի օրում կովին երկու-երեք անգամ են կթում. 2. վատ, անպիտան կաթ. տ. Моло́зево; пе́рвое д. по́слѣ отёлки не молоко́, а моло́зево; -никъ ա. բս. Melilotus, կորնգան (մեղրածուծ):

Дой‖ни́къ, а́ ա. տ. Дойльникъ, -ница; -ни́ца ի. 1, տ. Дойникъ; 2, գործիք. մեծ պտուկ ապակի հալելու համար. -ница ի. կթան, կթելու, կաթնատու կով. -ничо́къ, чка̀ նւզ. տ. Дойникъ; -ный ած. կթան, կաթ տուող. д—ая коро́ва հորթամէր, կաթնատու կով. *շահի, օգուտի աղբիւր. онъ смо́тритъ на него́ какъ на д—ую коро́ву.

До́йня տ. Дойльня.

Дой‖ти́ (-ду́ -дёшь -ду́тъ; անց. дошёлъ -шла́, о́) տ. Доходи́ть.

До́йчивая коро́ва խելօք, կթելիս հանգիստ կեցող կով:

До́ка ա. ռմկ. մի բանի մէջ խիստ հմուտ, ճարտար, տեղեակ, բազմափորձ մարդ. 'յետ եկած' ոմն. онъ вели́кій д.

Дока‖за́тель, -за́тельница ի. սկ. գործ. ցոյց տուող, տեղեկատու. ամբաստանիչ. -за́тельный ած. ապացուցանող, ապացուցիչ. д—ыя слова́; -за́тельство չ. 1, ապացոյց, փաստ. убѣди́тельное, сла́бое д.; 2, տրմբ. հաւաքրանական եզրափակում, ապացուցում. с у д е́ б н ы я д—а դատական փաստեր, ապացոյցներ:

Дока‖за́ть (-жу́ -жутъ), ся տ. Дока́зывать, ся; -зчикъ ա. -зчица ի. տ. Доказа́тель, -ница; -зываніе չ. ապացուցանելը, հաստատելը. -зывать, -за́ть 1, ն. ապացուցանել. д. въ судѣ́ справедли́вость своего́ обвине́нія; д. кому́-либо свою́ любо́вь и дру́жбу на дѣ́лѣ; 2, չ. на кого́ մէկին ամբաստանել, մեղադրել. մէկի վերայ գանգատուել. на него́ дока́зываютъ въ кра́жѣ; -ся կր. ապացուցուիլ. бытіе́ Творца́ дока́зывается бытіе́мъ тва́рей.

До‖ка́ливаніе չ. տ. Дока́лка; -ка́ливать, -кали́ть (-лю́ -ка́лятъ) ն. 1, տաքացնել, շիկցնել պրծնել. 2, որոշ աստիճանի շիկցնել, կարմրեցնել. -ся կր. շիկցնուիլ. -ка́лка ի. -ка́лъ ա. 1, շիկցնել պրծնելը. 2, որոշ աստիճանի շիկցնելը:

До‖ка́лываніе չ. 1, կոտորել պրծնելը. ծակոտել պրծնելը. 2, կարեվերը խոցելը, սպանելը. -ка́лывать, -коло́ть ն. 1, կոտորել պրծնել, ճեղքել պրծնել. д. дрова́; 2, ծակոտել պրծնել. д. на̀чатый узо́ръ; 3, կարեվեր խոցել, վերջին հարուածը տալ, սպանել. доколо́ть штыко́мъ; -ся կր. կոտորուիլ, ճղքուիլ վերջանալ. послѣ́дняя оха̀пка дровъ дока́лывается.

До‖ка́нчиваніе չ. վերջացնելը, պրծնելը. -ка́нчивать, -ко́нчить ն. 1, վերջացնել, պրծնել. д. строе́ніе; 2. հնց. վերջնականապէս հաստատել, վաւերացնել (վճիռը, անօրինութիւնը, պայմանը). -ся 1, անդր. վերջանալ. строе́ніе дока́нчивается; 2, կր. վերջացնուիլ, կատարուիլ, անուիլ վերջանալ:

До‖ка́пываніе չ. փորել պրծնելը, պեղել պրծնելը. -ка́пывать, -копа́ть ն. փորել պրծնել, պեղել պրծնել. д. прудъ, ровъ; -ся չ. до чего́ փորելով, պեղելով գտնել, հասնել մի բանի. д. до воды́; д. до кла́да; *հետազօտելով միջամուխ լինել, խելամուտ լինել. д. до су́щности дѣ́ла.

До‖ка́рмливаніе 1, կերակրել, բուել պրծնելը. 2, կշտացնելը. -ка́рмливать, -корми́ть ն. 1, կերակրել պրծնել, բուել պրծնել. 2, կշտացնել. -ся կր. կերակրուիլ, լիովին կերակրուիլ, բուուիլ:

Доката́ть, ся տ. Дока́тывать, ся.

До‖кати́ть (-чу́ -тятъ) 1, ն. տ. Дока́чивать I; 2, չ. անդուլ, անդադար, անընդհատ գնալով, ընթանալով հասնել, ժամանել. мы докати́ли до Москвы́ въ три дня; -ся տ. Дока́чиваться I; -ка́тываніе չ. 1, գլորել պրծնելը. 2, յղկել պրծնելը. -ка́тывать, -ката́ть ն. 1, գլորել պրծնել. д. бо́чки; 2, հարթել պրծնել, յղկել պրծնել. д. бѣльё; -ся 1, անդր. до чего́ գլորուելով մի բանի հասնել (հմմ. дока̀чиваться I); шаръ дока́тывается на билья́рдѣ до лу́зы; 2, կառքով այնքան զբօսնել, որ. доката́лся на лихача̀хъ до того́, что оста́лся безъ гроша́; 3, կր. հարթուիլ, յղկուիլ. бѣльё дока́тывается.

До‖кача́ть, ся տ. Дока́чивать, ся II; -ка́чиваніе չ. ցորոշ տեղ գլորելը, գլորելով հասցնելը. -ка́чивать I. (дока́чивать, -кати́ть) ն. ցորոշ տեղ գլորել, գլորելով հասցնել. рабо́тники докати́ли бревно́ до стѣны́; -ся անդր. ցորոշ տեղ գլորուիլ, գլորուելով հասնել. шаръ докати́лся до забо́ра; II. (дока́чивать, -кача́ть) ն. 1, այնքան ճօճել, որ. д. на каче́ляхъ до головокруже́нія; 2, ջուր քաշել, ջուր հանել պրծնել, վերջացնել. -ся անդր. այնքան ճօճուիլ, որ. докача́лся до тошноты́.

До‖ка́шиваніе չ. հնձել, հարել պրծնելը. -ка́шивать, -коси́ть ն. հնձել պրծնել, հարել պրծնել. д. своё по́ле; -ся 1, անդր. արտը հնձել պրծնել. խոտհարքը հարել պրծնել. 2, կր. հնձուիլ վերջանալ. հարուիլ պրծնել:

Дока́‖щикъ ա. -щица ի. տ. Дока́зчикъ, -чица.

До‖ква́сить (-шу -сятъ), ся տ. Докваши́вать, ся; -ква́ска ի. -ква́шиваніе չ. թթուեցնել պրծնելը, խմորեցնել վերջացնելը. -ква́шивать, -ква́сить ն. թթուեցնել պրծնել. խմորեցնել վերջացնել. -ся կր. թթուեցնուիլ, խմորեցնուիլ վերջանալ:

До‖кети́змъ ա. (յն.) երեւութականութիւն. -ке́ты ա. յ. երեւութականներ:

До‖кида́ть, ся տ. Доки́дывать, ся; -ки́дка ի.

գցել, նետել պրծնիլը. -кидываніе չ. 1, ցորոշ տեղ գցելը, նետելը. 2, գցել, նետել պրծնիլը. -кидывать ն. 1, (докинуть) ցորոշ տեղ գցել, նետել. докинуть камень до стѣны; 2, (докидать) գցել, նետել պրծնել. докидать стогъ сѣна խոտի դէզը սայլի վերայ ածել, բարձել. -ся կր. գցուիլ վերջանալ, նետուիլ վերջանալ, բարձուիլ վերջանալ. сѣно докидывается въ сѣновалы.

Доки‖паніе չ. եփ գալը, եռ գալը. -пать, -пѣть (-плю -пятъ) չ. եփ գալ, եռ գալ. -пѣлый ած. եփ եկած, եռ եկած, կէծացած:

До‖кисаніе չ. ինչպէս հարկն է թթուիլը, խմորուիլը. -кисать, -киснуть (անց. докисъ -кисла, о) չ. թթուիլ, խմորուիլ ինչպէս հարկն է. квашня не докисла; -кислый ած. ըստ հարկին թթուած, խմորուած. -кись է. թթուած, խմո-

Докладка է. դարսել պրծնիլը: [րուած բան:

Докла‖дной ած. 1, զեկոյցի, զեկուցման. д—ая записка իրւք. համառօտ զեկուցագիր. д. день զեկոյցի, զեկուցման օր. д. списокъ հնց. դատավճռագիր, որ յանձնուում էր արդարացած կողմին. д. холопъ հնց. դատաստանական ճանապարհով ձեռք բերած կամ գնած ծառա. գնած, առնովի ծառա. 2, աւելացրած, լրացուցիչ. д—ая полѣнница дровъ; -дчикъ ա. -дчица է. զեկուցող, -ցանող այր, կին:

Докла‖дъ ա. զեկուցում. զեկոյց. զեկուցագիր, տեղեկութիւն, ծանուցում. приготовить дѣло къ д—у գործը պատրաստել զեկուցման համար. сдѣлать д. въ учёномъ обществѣ; къ нему можно ходить безъ д—а նորա մօտ կարելի է գնալ առանց՝ նախօրօք յայտնելու, թոյլտուութիւն հայցելու. -дываніе չ. 1, տ. Докладка; 2, աւելացնելը. 3, զեկուցանելը, տեղեկացնելը, ծանուցանելը. -дывать ն. 1. (докласть) դարսել պրծնել. д. сажень дровъ; заложили строеніе, но не успѣли его докласть շինութեան հիմքը ձգեցին, բայց չկարողացան շինել (պատել) վերջացնել. 2, (доложить) աւելացնել. къ этой суммѣ надобно доложить ещё нѣсколько тысячъ; 3, (доложить) զեկուցանել. հաղորդել, յայտնել, ծանուցանել. сегодня будутъ докладывать моё дѣло; доложить о приходѣ чиновника съ бумагами; 4, (доложить) տալ. հասկացնել. -дываться 1, կր. (докласться և доложиться) ա. դարսուիլ պատուիլ, շինուիլ վերջանալ. наконецъ строеніе докладывается; բ. զեկուցուիլ, ծանուցուիլ. дѣла докладываются по очереди; 2. անդր. իր մտքին յայտնել, մտնելու, տեսակցութեան թոյլտուութիւն խնդրել. прямо итти нельзя, надо сперва черезъ лакея доложиться; 3. անդր. (доложиться) հնց. кого (սեռկ. հոլ.) մէկից թոյլտուութիւն խնդրել:

Докласть (-ду -дутъ), ся տ. Докладывать, ся 1.

До‖клёвывать, -клевать (-клюю -ютъ) ն. կտուցով, կտցահարելով ուտել պրծնել. воробьи доклевали зёрна и улетѣли.

До‖клеивать, -клеить (-клею -еютъ) ն. կպցնել պրծնել (սոսնձով, շրէշով ևլն):

Доклинаться (-каюсь -каются և -кличусь -кличутся) տ. Дозваться.

До‖ковывать, -ковать (-кую -куютъ) ն. կռել պրծնել, դարբնել պրծնել:

Доковый ած. դոկի, դոկային:

Доковылять չ. ռմկ. յանախ կանգ առնելով, հանգստանալով քարշ գալ (մնւգ. կաղերի և հաշմանդամների մասին):

Доко‖вырявать, -вырять ն. փորել, քչփորել [պրծնել:

Доко‖лачиваніе չ. 1. ցցել պրծնելը. 2, խփում ծեծելը, ջարդելը, ջախջախելը. -лачивать, лотить (-очу -отятъ) 1, ցցել, խրել, տնկել պրծնել, մխել պրծնել. д. гвоздь до шляпки; 2, խփում ծեծել, գանակոծել, ջարդել, ջախջախել. доколотили его до смерти; 3. բոլորովին ջարդուփշուր անել. доколотить посуду; -ся 1, չ. ռմկ. մի բանի հասնել, մի բան ձեռք բերել. 2, կր. ա, ցցուիլ, խրուիլ. բ, խփում ծեծուիլ, ջախջախուիլ. գ, բոլորովին ջարդուփշուր անուիլ:

До‖колотый բյ. ած. ճեղքած, ճղած, ջարդած. -колоть (-колю -колютъ), ся տ. Докалывать, ся.

До‖коль, -колѣ մ. 1, քանի որ. 2, մինչև երբ. 3, ռմկ. մինչև այսօր, մինչև այժմ ժամանակ:

Доконать ն. 1, վերջացնել, ցվերջ, ցվախճան հասցնել. 2, ծայրայեղ տառապանքի հասցնել. բոլորովին հալից գցել, հոգին հանել, սպանել, կորստեան անդունդը գլորել. կործանել, փչացնել, մէկի տունը քանդել:

До‖кончальная грамота վերջնականապէս հաստատած, որդէն ստորագրած խաղաղութեան դաշնագիր. -кончаніе չ. 1, վերջացնելը, աւարտելը. 2, հնց. վերջնականապէս հաստատելը, վաւերացնելը (խաղաղութեան դաշնագրերը). -кончательная грамота տ. Докончальная гр., -кончить (-чу -чатъ), ся տ. Доканчивать, ся.

Докопать, ся տ. Докапывать, ся. [ся.

Докормить (-млю -мятъ), ся տ. Докармливать,

До‖косить (кошу -косятъ), ся տ. Докашивать, ся.

До‖косъ ա. հնձել, հարել պրծնելը. -кошенный բյ. ած. հնձած պրծած, հարած պրծած:

До‖краиваніе չ. ձևել պրծնելը. -краивать -кроить ն. ձևել պրծնել. д. рубахи; ся կր. ձևուիլ վերջանալ. платье докраивается.

Докрасить (-шу -сятъ), ся տ. Докрашивать, ся.

Докраска է. ներկել պրծնելը, դեղել պրծնելը, ծեփել պրծնելը:

Докрасна մ. ցկարմրութիւն, ցկարմրումն, ցշիկնութիւն. накалить желѣзо д.; натереть глазъ кулакомъ д.

До‖крашиваніе չ. ներկել պրծնելը, դեղել պրծնելը. ծեփել պրծնելը. -крашивать, -красить ն. ներկել պրծնել, դեղել պրծնել, ծեփել պրծնել. д. стѣну; -ся կր. ներկուիլ, դեղուիլ, ծեփուիլ վերջանալ. кровля докрашивается.

Докричаться (-чусь -чатся) 1, ն. այնքան կանչել, այնքան ձայն տալ, որ լսեն. онъ насилу насъ докричался; 2, չ. до чего այնքան աղաղակել, որ փորձանքի, անախորժութեան հանդիպել:

До‖кроенный բյ. ած. ձևած պրծած. -кроить (-крою -кроятъ), ся տ. Докраивать, ся.

Докропать ն. ռմկ. հազիւ հազ, մեծ ջանքով վերջացնել մի բան. մի կերպ կարել պրծնել:

Докрошить (-шу -шатъ) ն. բոլորովին բրդել պրծնել:

До‖крутить (-чу -тятъ), ся տ. Докручивать, ся; -кручиваніе չ. մանել պրծնելը, ոլորել պրծնելը. -кручивать, -крутить ն. մանել պրծնել, ոլորել պրծնել. д. нитки; ся կր. մանուիլ, ոլորուիլ վերջանալ:

До‖крываніе չ. ծածկել պրծնելը. -крывать,

-крыть (-крóю -крóютъ) ն. ծածկել պրծնել. д. крóвлю; -ся եր. ծածկուիլ վերջանալ:

Доксо‖лóгія ի. (յն.) եկղ. փառաբանութիւն, գոհաբանութիւն. -мáнія ի. (յն.) փառամոլութիւն:

Док‖торáльный ած. (ֆր.) ինքնավստահ, անձնապարծ, ուսուցչին, դատախազական վայել. это было скàзано д—ымъ тóномъ: -торáнтскій ած. դոկտորանտի. -торáнтъ ա. (լտ.) դոկտորանտ, դոկտորացու, դոկտորութեան աստիճանի թեկնածու. -торскій ած. դոկտորի, -րական. д—ая степень; д—ая диссертáція. Дóкторски, по-дóкторски ի. դոկտորաբար, ինչպէս դոկտորին վայել է. -торство չ. ռմկ. դոկտորութիւն. -торша ի. ռմկ. 1, կին-բժիշկ, բժշկապետուհի. 2, բժշկի, բժշկապետի կինը:

Дóкторъ ա. (յ. доктора́, óвъ) (լտ.) 1, դոկտոր (նա որ համալսարանից կամ ակադէմիայից բարձրագոյն ուսումնական աստիճան է ստացել). д. медицѝны բժշկապետ. д. философіи, д. богословія; почётный д. պատուաւոր դոկտոր. 2, ասհ. բժիշկ. домàшній д.

Док‖три́на ի. (լտ.) ուսում, վարդապետութիւն, տեսութիւն. -тринéрскій ած. տեսական ուսումնական. -тринéрство չ. տեսականութիւն, տեսական ուսումնականութիւն. -тринéръ ա. (ֆր.) տեսական ուսումնական, տեսականութեան թունդ հետեւող, կողմնակից: [нáдобно намъ итти?

Докýда ի. ռմկ. մինչեւ ուր, մինչեւ որտեղ. д.

Докýка ի. խնդիր, միջնորդութիւն, թախանձանք, ուրիշին պատճառած ձանձրութիւն, անհանգստութիւն, գլխացաւանք:

Доку‖ментáльный ած. գրաւոր փաստերի վերայ հիմնուած, վաւերագրական, փաստային, հաստատ. -мéнтикъ ա. նուզ. տ. Докумéнтъ; -мéнтный, -мéнтовый ած. դոկումէնտի, վաւերագրի, -գրական. -мéнтъ ա. (լտ.) դոկումէնտ, վաւերագիր, վաւերաթուղթ, պաշտօնական գիր, թուղթ. докумéнты յ. վկայականներ (մետրիկական, արտօնագիր, անցաթուղթ եւն). выправить свой докумéнты; долговыя д—ы պարտամուրհակներ. д—ы на прàво торгóвли առեւտրական արտօնագրեր, իրաւագրեր:

До‖кунѣлый ած. հասած, մեծացած (մուշտակաւորների մասին). д—ая лисица; -кунѣть չ. կատարեալպէս մազակալել, մուշտակաւորուիլ (կզաքիսների մասին). մեծանալ, հասունանալ:

До‖купать I. (докупáть, -купи́ть) ն. պակասը, պակասորդը գնել, գնելով պակասը լրացնել. д. полъ-аршина сукнà; -купáться եր. գնուիլ, գնուելով լրացնուիլ. II. (докупáть) ն. լողացնել պրծնել. д. ребёнка; -ся անդր. այնքան լողանալ, որ փորձանքի, անախորժութեան հանդիպել. онъ до тогó докупáлся, что схватилъ простýду; -купи́ть (-плю́ -кýпятъ) տ. Докупáть I; -кýпка ի. -кýпъ ա. պակասը գնելով լրացնելը:

До‖курéніе, -кýриваніе չ. 1, ծխել պրծնելը. 2, դտել, քաշել պրծնելը (օր. օղին). -кýривать -кури́ть (-рю́ -рятъ) ն. 1, ծխել պրծնել, ծխելով սպառել. д. трýбку табакý; 2, քաշել պրծնել, դտել պրծնել, թորել պրծնել (օղին). -ся 1, անդր. դադարիլ ծխելուց, ծուխ արձակելուց. մարիլ, հանգչիլ. головня́ докури́лась; 2, այնքան ծխել, որ[անախորժութեան, ցաւի հանդիպել]. докури́лся табакý до дурноты́; 3, եր. ծխուիլ վերջանալ. դտուիլ, քաշուիլ վերջանալ. -кýрка ի. դտել, քաշել պրծնելը (օղին):

Докути́ть (-кучý -кýтятъ) տ. Докýчивать I; -ся չ. այնքան շուայտութիւն, զեղխութիւն անել, որ [փորձանքի, քամբախտութեան հանդիպել]. докути́лся до бѣды́.

До‖кучáть չ. комý чѣмъ մէկին մի բանով (խնդիրքներով, թախանձանքով) ձանձրացնել, նեղացնել, անհանգստացնել, մէկի ‘գահլան տանել’:

До‖кучивать I. (докýчивать, -кути́ть) 1. չ. այնքան շուայտութիւն, զեղխութիւն անել, որ. 2, ն. շռայլել, վատնել պրծնել. кýпчики докýчивают послѣ́днія свой дéнежки; II. (докýчивать. -кýчить). ն. կիտել պրծնել, հաւաքել, թեղ անել, դիզել պրծնել. рабóтницы докýчиваютъ сѣ́но; -кýчить (кýчу -кýчатъ) 1, տ. Докýчивать II; 2, սկւ. գործծ. ձանձրացնել, զզուեցնել. -кýчливость ի. թախանձողութիւն, ձանձրացում. -кýчливый ած. թախանձող, ձանձրացնող, նեղացնող, ‘գահլա տանող’ (խնդիրքներով, գիմումներով). -кýчный ած. 1, տ. Докýчливый; 2, ձանձրալի, տխուր. մարդու վերայ տխրութիւն, ձանձրութիւն բերող. д. гость.

До‖кýшивать, -кýшать ն. ուտել կամ խմել պրծնել, ‘անուշ անել’ պրծնել, վայելել պրծնել. -ся եր. ուտուիլ կամ խմուիլ վերջանալ, ‘անուշ անուիլ’, վայելուիլ վերջանալ:

Докъ ա. (հոլ.) դոկ. 1, ծովգ. նաւահանգստի մէջ այն տեղը, ուր մացնում են նաւերը կարկատելու կամ նոցա ընդջրեայ մասերը գիտելու նպատակով (նախորոք դոկից ջուրը դուրս տալով). 2, նաւերը բարձելու կամ նաւերի բեռները վայր առնելու տեղը իւր համբարանոցներով: Дóки յ. մեծ նաւերի շինութեան համար կառուցած շէնքեր, շինութիւններ:

До‖лáвливать, -лови́ть ն. որսալ պրծնել:

Долáгать ն. աւելացնել, պակասը լրացնել:

Долáзить (-лáжу -лáзятъ) չ. եւ ն. до чегó այնքան մագլցել, մինչեւ որ փորձանքի, անախորժութեան հանդիպել. долáзишь ты до бѣды́; 2, ն. մեղրը հաւաքել պրծնել, մեղրը կտրել պրծնել. д. ýлья; -ся չ. տ. Долáзить 1.

До‖лáмливаніе չ. կոտրել պրծնելը. -лáмливать, -ломи́ть ն. կոտրել պրծնել. д. шестъ. -ся եր. կոտրուիլ վերջանալ

До‖лáмываніе չ. քանդել պրծնելը. -лáмывать, -ломáть ն. քանդել պրծնել, փլցնել պրծնել. д. бáрку; -ся եր. քանդուիլ վերջանալ, փլցնուիլ վերջանալ:

Долбанéцъ, нцá ա. մի կտորից, մի ծառից փորած, շինած մակոյկը:

Долбанýть ն. ռմկ. 1, խիստ հարուածել, խիստ հարուածով տեղահան անել. 2,* միանգամից, մի շնչում խմել, ‘գցել’. д. стакáнчикъ вóдки; 3, տ. Долби́ть 1.

Дол‖бёжа ի. տ. Долбёжъ 1; -бёжка ի. տ. Долбёжъ 2 եւ 3; -бёжный ած. փորելու, կտրելու. -бёжъ, à ա. 1, ծակելը, փորելը. 2, զերանի, տախտակի մէջ փորած ծակ. д. на бревнѣ́; 3, ղպրոցկ. տ. Долбня́ 5.

Дóл‖бежь, -бёжь ի. տ. Долбёжъ 1 եւ 3.

Дóл‖бень, бня ա. ռմկ. տ. Долби́ла 2; -би́ла հոր. 1, ռմկ. կոցահարող. յաճախ կրկնող, ասող կամ մեքենաբար սերտող մարդ. 2,* բութ, բթամիտ, յիմար մարդ. -би́лка ի. կարճլիկ եւ

հատակին գուր, որով անուր կողի ծակերն են փորում. -би́ло ա. Долото́.

Дол||би́ть (-блю́ -бя́тъ) ն. 1, (долбну́ть, -бану́ть, выдол—) ծակել, փորել. ка̀пли ча́стымъ паде́ніемъ долбя́тъ ка́мень; 2, (Թռչունների մասին) կտցահարել. 3, (առանց совершен. видъ-ի) *յամառ յիշեցնել, կրկնել. онъ ка́ждый день долби́тъ мнѣ свои́ поуче́нія; 4, (выд—) դպրոցկ. մեքենայաբար անգիր անել, առանց հասկանալու սերտել. я наси́лу вы́долбилъ свой уро́къ; -бле́ніе չ. 1, ծակելը, փորելը. 2, կտցահարելը. 3, յամառ կրկնելը, յիշեցնելը. 4, դպրոցկ. անգիր, մեքենայաբար սերտելը. поме́ньше д—ія грамма́тики и бо́льше пра̀ктики; 5, վիրաբ. ոսկորի մնած մասը հանելը, հեռացնելը, -блёнка ի. [լոբի] ծառից փորած, չինած տաշտակ, կոտ գնովի յատակով:

Долбну́ть ա. Долби́ть.

Долбня́ ի. 1, Թակ, սեպը մխելու Թակիչ. 2, կոճղ, որով հողը, խճճը, խճուղին ծեծում նստեցնում են, ցցեր անկելու ձեռնաԹակ. 3, հնց. կոճղաձև փայտ, որով նախկին նովգորոդում ոճրագործների գլուխները ջախջախում էին. 4, աշակ. ամենայուն գուրը. 5*, դպրոցկ. առանց խմաստը հասկանալու բերանացի, անգիր սերտելը. долбнёй не возьмёшь.

Дол||бу́ха ա. Долбня́ 1; -бу́шка նւզ. ա. Долбу́ха; -бя́жна ա. Долбёжка; въ долбя́жку մ. ա. Вдолбя́жку; -бя́жъ, а́ ա. գլանաձև ճախարակ բարկանաւերի վերայ:

Долга́рь, я́ ա. 1, Հ—ռ. երկար, դեռ և չողոցած, չկտորած ձողեր, վառելափայտ. 2, երկար, չկտորած փայտի կտոր:

До́лгій (-логъ -лга́, о; բաղդտ. և գերադր. долж̀айшій) երկար, երկայն. д. шестъ; д—ая ни́тка; д. день; д—ая жизнь; д. слогъ; у него́ язы́къ до́логъ ա. Дли́нный; у него́ до́лги ру́ки ա, նա խեղկատակ, չարաճճի, կռուարար է. բ, նա գող է, մաքուր մարդ չէ. откла̀дывать что-нибу́дь въ д. я́щикъ մի բան յետաձգել, ուշացնել, մի գործ քնացնել. вотъ тебѣ и вся (ի՞նչ рѣчь էր) не долга́ (դարձ.) կարճ ասած, կարճ կտրենք. э́то — до́лгая пѣ́сня! այդ երկար պատմուԹիւն է. ѣхать на до́лгихъ միևնոյն ձիաներով ճանապարհորդել: До́лго մ. (բաղդտ. до́лѣе, -лѣ, -льше) երկար, երկարօրէն, երկար ժամանակ. д. пусти́лъ верёвку; *приказа́лъ д. жить (դարձ.) մեռաւ, վախճանուեցաւ, 'չարդ տարաւ'. д. ли до бѣды́? մի՞Թէ հեռու է դժբախտուԹիւնը, քամբախտուԹիւնը. за до́лго ա. Задо́лго; на до́лго ա. Надо́лго.

Дол||гоборо́дый ա. Длинноборо́дый; -гова́тый ած. երկարաւուն, փոքր ինչ երկար:

Долгово́й ած. պարտքի, պարտ—. д—ы́я де́ньги; д—о́е обяза́тельство պարտագիր, պարտամուրհակ. д—а́я кни́га պարտամատեան (առևտրականների). д—о́е отдѣле́ніе կմ долгово́е բանտ անճշտապահ, անկարող պարտապանների համար. посади́ть въ долгово́е за неплатёжъ.

Долго||воло́сый ա. Длинноволо́сый; -вре́менность ի. երկար ժամանակամիջոց. -вре́менный ած. երկարատև. д. трудъ; д—ая война́; д. путь երկարատև նաւագնացուԹիւն. д—ы́я укрѣпле́нія երկարաձիգ տարիների համար կանգնեցրած ամրուԹիւններ. д—ая фортифика́ція ռզմգ. ա. Фортифика́ція.

Долго||вѣ́чность ի. երկարատևուԹիւն, յարատևուԹիւն. д. человѣ́ческая մարդկային կեանքի յարատևուԹիւնը. -вѣ́чный ած. երկարամեայ, երկարատև, յարատև:

Долго||вя́зый ած. ռմկ. 1, երկարահասակ, բայց վտիտ և անճոռնի, 'լող լող'. 2, երկար, երկարաձիգ. -гри́вый ած. 1, բսմստ. երկայնաբաշ, երկարաբաշ. 2, ռմկ. նխտ. д—ая ду́ра մազն երկար, խելքը կարճ, յիմար կին:

Долго||де́нственный ած. եկ. ս. երկարամեայ, երկարատև. -де́нствіе չ. 1, երկար կեանք, արեշատուԹիւն. тостъ за здра́віе и д.; 2, ամէնաերկար օրերը երկրի հիւսիսային կիսագնդի վերայ. երբ արեգակը Խեցգետի մէջ է մտնում. -де́нствовать (-ствую -ютъ) չ. երկար ապրել. -днёвный ած. երկար, մի քանի օրեր տևող:

Долго||лѣ́тіе չ. երկար, երկարամեայ կեանք, երկարակեցուԹիւն. -лѣ́тній ած. երկարամեայ. д—яя слу́жба; д, учёный трудъ; -мѣ́рный ած. 1, երկար, երկայն, երկար չափով. дрова́ д—ы́я.

Долго́некъ, нька, о ած. բաւականաչափ երկար, բաւականաչափ երկայն, երկարաւուն:

Долго||но́гій ա. Длинноно́гій; -но́жка ի. կնդ. Tipula, երկայնասրունք մժղուկ մի:

Долго||но́сики ա. յ. կնդ. Curculionidae, կնճԹաւոր[բզէզ]ներ. д—къ амба́рный, Calandra granaria, երևելը կամ արմաւոց կնճԹաւորը, ուտիճ կամ մնինայ. долгоно́сики որս. կարմրափետուր կտցարներ. -но́сый ած. երկարաքիԹ:

Долго́нько մ. երկար, բաւականին երկար. д. [мы засидѣ́лись.

Долго||пёръ ա. կնդ. Exocoetus volans, Թռչող ձուկը. -пёрый ած. երկարափետուր, երկայն փետուրներով. -по́лый ա. Длиннопо́лый.

Долго||пя́тъ ա. կնդ. Tarsius, կիսակապիկ մի. -пя́тый ած. երկայնադարշապար:

Долгору́кій ած. 1, երկարաձեռն, երկայնաբազուկ. 2,* ագահ, ընչաքաղց, փառասէր:

Долго|сро́чный ած. երկար ժամանակով, երկարատև. д. о́тпускъ; д—ы́я ссу́ды; -ство́льный ած. երկայնաբուն. д—ое де́рево; երկայնախողովակ, երկար խողովակով, 'լուլայով'. д—ое ружьё.

Долгостебе́лка ի. Հ—ռ. ոսպնակ, փափուկ և հիւԹալից խնձոր մի երկայն կօԹով:

niaceae, Խորդենիներ. -вéльникъ տ. Журá-влúнникъ; -вéльчикъ, -вéцъ, вцá Նւզ. տ. Журáвль; -влёвый ած. կռունկի. -вленникъ ա. բս. Geranium L'Herit, խորդենի և նման բոյսեր. -влёнокъ, нка ա. (յ. журавля́та, я́тъ) կռունկի ճուտ, ձագ. -вликъ ա. փոքր. տ. Журáвль; -влúнка ի. բս. Vicia cracca, արտի կամ ժաշնոց վիկ. -влинникъ ա. բս. Geranium pratense, մարգաց խորդենի (մլմլուկ). -влúный ած. կանչի, խորդի. ж. крикъ; *ж—ыя нóги երկար ոտքեր. *ж—ая шéя երկար վիզ, ճիտ. ж. горóхъ ա, տ. Астрагáлъ 1; բ, տ. Журавлúнка; գ, Orobus vernus, գարնանական քիսամը (քուշնայ) և ուրիշ բոյսեր. ж. горóшекъ, բս. Lathyrus pratensis, դաշտաց քիսամ:

Журавлúха ի. մայր կռունկ:

Журá||вль, я́ ա. 1, կնդ. Grus cinerea, կռունկ, հասարակ խորդ. *երկար ոտքերով կմ երկար վզով անճոռնի մարդ. 2, բարակ ձողի, լծակ ջրհորից կմ գետից ջուր հանելու. 3, աստղ. հարաւային համաստեղութիւն մի. -влюшка ա. Նւզ. տ. Журáвль; -въ տ. Журáвль.

Журáнъ ա. բս. Spiraea ulmarea, կնձնատերեւ տապլերակ:

Жу||рéнье շ. յանդիմանելը, շշպրելը. նկատողութիւն անելը. յորդորելը, խրատելը:

Жу||рúть (-рю́ -ря́тъ) ն. յանդիմանել, շշպրել, ներկել. նկատողութիւն անել. յորդորել, խրատել. -ся էր. յանդիմանուիլ, խրատուիլ. -рлúвый ած. չար, ամբարիշտ, ուրիշին յանդիմանել, նկատողութիւններ անել սիրող:

Жýрка ի. 1, (կռնկի յորջորջումը) կռնկուկ. 2, մայր կռունկ, խորդ:

Жур||нáлецъ, льца ա. 1, պստիկ նկատողութիւն յիշատակարանում. 2, թերթիկ, պստիկ լրագիր. -налúзмъ ա. (Фр.) օրագրութիւն, լրագրութիւն. -налúстика ի. օրագրութիւն, լրագրութիւն, պարբերական հրատարակութիւններ. -налúстъ ա. (Фр.) 1, լրագրագիր, լրագրիներում, պարբերական թերթերում գրող. 2, մատենակալ (պաշտօնատան մատեանը պահող). -нáлишка ա. Նխտ. թերթուկ, ողորմելի, չնչին թերթ, լրագիր:

Жур||нáлъ ա. (Фр.) 1, յիշատակարան, յիշատակագրութիւն, օրագրութիւն, նկատողութիւն յիշատակարանի մէջ. 2, ժապաւինեալ մատեան (պաշտօնատան). 3, դասացուցակ, անուանացուցակ (աշակերտների). клáссный ж.; штрафнóй ж. մատեան, որի մէջ գրում են չար, դանդաղ աշակերտների անունները. 4, թերթ, պարբերական հրատարակութիւն. լրագիր, օրագիր. -нáльный ած. 1, յիշատակարանի, -րանական. ж—ыя запúски յիշատակամատեանի[ն վերաբերող]. ж—ая часть; ж—ое постановлéніе արձանագրուած վճիռ (պաշտօնատան). 2, պարբերական թերթի, հրատարակութեան, լրագրական. ж—ая статья́, полéмика, рецéнзія; -нáльчикъ ա. Նւզ. պստիկ, թեթև թերթ, լրագիր. -нáльщикъ ա. Նխտ. ողորմելի լրագրատէր, գծուծ հրատարակիչ:

Жур||фúксный ած. ժուռֆիքսի, -քսային, ընդունելութեան օրուայ, երեկոյթի. ж—ое óбщество; -фúксъ ա. (Фр.) ժուռֆիքս, ընդունելութեան օր, երեկոյթ:

Жур||чáніе, -чáнье շ. խոխոջ, խշխշոց (ջրի). *հնչիւն, ձայն, մրմունջ. բզզոց. ж. пчёлъ; ж. летя́щей птúцы թռչունի թռիչքի ձայնը. ж. словъ, стихóвъ; -чáстый ած. խոխոջացող, խշխշան. -чáть (—, -чúшь -чáтъ) չ. խոխոջել, խշխշալ. ручеёкъ журчúтъ; *հնչել, սուլել, մըրմնջալ, բզզալ:

Журьбá ի. 1, թեթև, մեղմ յանդիմանութիւն, մեղադրութիւն. 2, տխրութիւն, թախիծ:

Жýра ա. փոքր. տ. Журáвль.

Жýстарить (-рю -рятъ) ն. ուտել, ծամել, ծամա-[քել:

Жý||ткій ած. ահ, երկիւղ ազդող. ծանր, հոգեմաշ, սրտամաշ, չարչարող: Жýтко մ. ահալի, երկիւղալի, տխրալի, տաղտուկ ազդող. -ткость ի. ահ, երկիւղ, ահի, երկիւղի զգացում, լքում. -тость տ. Жýткость.

Жуть ի. տխրութիւն, տրտմութիւն, վշտագնութիւն, թախիծ. ահ, երկիւղ, անհանգստութիւն:

Жу||чёкъ, чкá 1, Նւզ. տ. Жукъ; 2, ж у ч к ú յ. ռօժօժ (լծասարքի). -чикъ տ. Жучёкъ; -(жý)-чúна ի. 1, փորած տեղ գերանի, տախտակի մէջ և կմ խիլ. 2, մի ահագին բզէզ:

Жýчить (-чу -чатъ) ն. նախատել, յանդիմանել, շշպրել, ներկել. ծեծել, թակել:

Жу||чúха ի. էգ բզէզ. -чúще ա. յւն. մի ահագին բզէզ. -чій, ья, ье ած. բզէզի. -чка ի. 1, սև շուն. 2, թանաքաթաթախ սև տառ (գրած կմ տպած). 3, ա. բանուոր, մշակ:

Жý||чкó ա. տ. Жýчка 1 և 3. -члúвый ած. կըռուասէր, չար, ամբարիշտ:

Жю||рú շ. անհ. (Фр.) 1, երդուեալների (մեւղ. ֆրանսիական երդուեալների) դատարան. 2, կաճառ, ժողով (էքսպէրտների):

Жюрискóнсультъ հնց. տ. Юрискóнсультъ.

З.

З, з, ռուսաց այբբենի ութերորդ տառն է: Ատամնային ձայնային (голосовóй) բաղաձայն է, որին համապատասխանում է с ձայնատը: З-ն հնչւում է ինչպէս հայոց զ-ն:

За նխդ. պահանջում А, հայցական և Б, գործիական հոլով:—А, за հայցկ. հոլովով նշանակում է. 1, (շարժողութիւն ցոյց տուող բայերից յետոյ) ա, առարկայի միւս կողմը, յետևը. поѣхать зá море ծովի միւս կողմն անցնել. поѣхать за границу արտասահման գնալ (իսկապէս սահմանի միւս կողմն անցնել). брось э́ту бумàгу за пéчку գցիր այդ թուղթը վառարանի յետևը. сѣсть за столъ սեղան(ի) նստել. բ, մի գործով զբաղուել, մի բանի ձեռք տալ,

մի բան վերցնել. бра́ться, взя́ться, принима́ться, -ня́ться за дѣ́ло, за рабо́ту, за ремесло́ սկսել գործով, արհեստով զբաղուիլ. выходи́ть, вы́йти за́ мужъ за кого́ մարդու գնալ, մէկի հետ պսակուիլ. драть кого́ за́ уши, за́ волосы մէկի ականջներից, մազերից քաշել. взя́ться за ша́пку գլխարկը վերցնել. води́ть кого́-нибудь за́ руку մէկի ձեռքից բռնած ման ածել. 2, աւելի, աւելի քան. ему́ лѣтъ за́ сорокъ նա աւելի քան 40 տարեկան է. прошло́ за́ три часа́ աւելի քան 3 ժամ անցաւ. 3, համար, յօգուտ, 'ի պաշտպանութիւն մէկի. жизнь за царя́; заступа́тьсл, стоя́ть, страда́ть, ра́доваться, руча́ться, моли́ться за кого́-нибудь; пить за чьё здоро́вье մէկի կենացը խմել. взять за себя́ жену́ իրեն [համար] կին առնել. фа́кты говоря́тъ за себя́; за и про́тивъ թեր և դէմ. 4, համար, պատճառով. онъ поплати́лся за свою́ неосторо́жность; ни за что́, ни про что́ առանց մի և է պատճառի, չգիտես, ինչու համար. 5, փոխարէն, համար, գնով. за что́ купи́лъ, за то и продаю ինչ գնով առել եմ, այն գնով էլ ծախում եմ. о́ко за о́ко и зубъ за зубъ; онъ ѣстъ, рабо́таетъ за двои́хъ նա երկու մարդու չափ ուտում, աշխատում է. 6, մէկի, մի բանի տեղ, փոխանակ, իբրև. за кого́ вы меня́ принима́ете? онъ принима́етъ его́ слова́ за чи́стую моне́ту նա նորա խօսքերը հալած իւղի տեղ է ընդունում. сдѣ́лай э́то за меня́ արա այդ իմ տեղ, իմ փոխանակ. за мини́стра подписа́лъ това́рищъ мини́стра; приня́ть за гла́вное основа́ніе իբրև գլխաւոր հիմք ընդունել. 7, ժամանակի, պարագայի ընթացքում. ժամանակից, պարագայից առաջ կամ յետոյ. за ту же ночь онъ пріѣ́халъ домо́й նոյն գիշերը նա վերադարձաւ տուն։ обзо́ръ журна́ловъ за янва́рь мѣ́сяцъ 1902 г.; за всё лѣ́то не́ былъ у него́ ни ра́зу; э́того не сдѣ́лаешь за́ день այդ մի օր[ուայ ընթացք]ում չես կարող անել. за недѣ́лю до моего́ отъѣ́зда իմ գնալուց մի շաբաթ առաջ. уже́ было за по́лдень, когда́ меня́ разбуди́ли արդէն կէսօրից անց էր եւն. за мину́ту онъ былъ добръ, а тепе́рь золъ մի ըոպէ[ից] առաջ բարի էր եւն. Б, за գործիակ. հոլովով նշանակում է 1, [մէկի, մի բանի] յետեւում, յետևը (տեղ, ինչ տեղում). жить за грани́цею արտասահմանում ապրել. за̀ го́родомъ քաղաքից դուրս. 2, [մէկի, մի բանի] յետևից, (գր.) զհետ, զկնի, վերայ. слѣ́дуй за мно́ю հետևիր ինձ, եկ իմ յետևից. затворя́й за собо́ю дверь փակիր յետևիցդ դուռը. слѣди́ть за кѣмъ-нибу́дь մի և է մէկի վերայ հսկել. уха́живать за кѣмъ-ли́бо ա, մէկի վերայ հոգս, խնամք քաշել. բ, մէկի (մի օրիորդի, կնոջ) յետևից ընկնել. 3, [մի բան ձեռք բերելու, ստանալու, շահելու] համար, նպատակաւ, դիտաւորութեամբ. որպէս զի. итти́ на́ рѣку за водо́ю գետի ափ գնալ ջուր բերելու համար. онъ пришёлъ за де́ньгами նա փողի, փող ստանալու համար եկաւ. ходи́ть за *нуждо́й բնական կարիքը կատարել[ու գնալ]. 4, [մի բան անելիս, մի բանի] ժամանակ, միջոցին, երբ որ. за обѣ́домъ, за за́втракомъ, за у́жиномъ, за обѣ́дней ճաշի, նախաճաշի, ընթրիքի, պատարագի ժամանակ (ճաշելիս, նախաճաշելիս եւն). заста́ть кого́ за рабо́той; 5, [մի բանի. արգելքի, խոչընդոտութեան եւն] պատճառով. որովհետև. за неимѣ́ніемъ де́негъ онъ заложи́лъ свои́ ве́щи — փող չունենալու պատճառով. онъ вы́шелъ въ отста́вку за болѣ́знію; за его́ отсу́тствіемъ засѣда́ніе не состоя́лось — նորա բացակայութեան պատճառով. за тѣмъ, что նորա համար, որ. 6, պատկանելութիւն. она́ живётъ за купцо́мъ նա վաճառականի ձեռքում է, վաճառականի կին է. за ва́ми остаётся ещё де́сять рубле́й դուք դեռ 10 ռուբլի պարտ էք։ За по́дписью ստորագրութեամբ. за руко́ю ձեռքով, միջոցով. за печа́тью կնիքով. за но́меромъ համարով եւն. взять за жено́й при́даное օժիտով կին առնել. признава́ть за кѣмъ-нибу́дь что-нибу́дь ընդունել, որ այս ինչ մարդն այս ինչ բանն ունի, այս ինչ բանի տէրն է. за Бо́гомъ моли́тва, за царёмъ слу́жба не пропада́етъ (առծ.) Աստծու մօտ աղօթքը, թագաւորի մօտ ծառայութիւնը ապարդիւն չէ անցնում. за число́мъ աւելորդ, պահանջից աւելի. 7, [պարտքը, ծախսը, միսը] զեղչած, հանած, դուրս եկած. за вы́четомъ всѣхъ расхо́довъ вамъ слѣ́дуетъ 100 рубле́й; В, խիստ սակաւ սեռկ. հոլովով. за добра́ ума́ վաղօրօք, նախօրօք, իր ժամանակին. за утра (սեռկ.!) առաւօտեան. Г, что за (ուղղկ. հոլովով) ինչպիսի, որպիսի. что за лю́ди ինչպիսի մարդիկ են. что за бѣда́ վնաս չէ, ինչ անենք, որ, ինչ վնաս. что э́то за кни́жка? այդ ինչ գրքոյկ է.—N B. За բայերի հետ միանալով 'ի միջի այլոց նշանակում է գործողութեան ըսկիզբը, օր. загремѣ́ть, заже́чь (տ. Воз, вз 1).

Заалѣ́ть, ся չ. սկսել կարմրիլ. կարմրատակել։

Заарен||дова́ніе, -до́вываніе չ. կապալով տալը կամ վերցնելը. -до́вывать, -дова́ть (-ду́ю -ютъ) ն. կապալով տալ կամ վերցնել։

Зааре||стова́ніе, -сто́вываніе չ. կալանաւորելը, ձերբակալելը. -сто́вывать, -стова́ть (-сту́ю -ютъ) ն. 1, կալանաւորել, ձերբակալել. 2, իրւ. գըրաւել, 'վեր գրել', կնքել (կալքը)։

Заар||ка́нивать, -ка́нить (-ню -нятъ) ն. 1, պարանով բռնել, 'քեամանդ գցելով բռնել'. 2, *գրաւել, հրապուրել[ով բռնել, իր կողմը գրաւել]։

Заарта́читься տ. Арта́читься.

Заатла́||шивать, -сить (-шу -сятъ) ն. 1, ատլասի փայլ տալ, յղկել. 2, մաշել, կեղտոտել (մետաքսէ շորը)։

Заату́кать չ. «ату его́» գոռալով շները նապաստակի վերայ հը՛ս անել, նապաստակին հետամուտ լինել։

Заа́хать չ. ախ քաշել, ախ ու վախ անել. -ся չ. շատ յաճախ ախ քաշել, ախուվախ անել։

Заба́||ва ի. 1, զուարճութիւն. խաղ, զուարճալիք. -вить (-влю -вятъ) տ. Забавля́ть; -вле́нье չ. 1, զուարճացնելը, -ճանալը. 2, զուարճութիւն. -вля́ть, -вить ն. զուարճացնել, խնդացնել. -вля́ться չզ. 1, զուարճանալ, խնդալ. 2, գւռկ. մի բանով զբաղուիլ. -вни́къ ա. -вни́ца ի. զուարճացնող, զուարճալի, սրախօս բաներ խօսող այր, կին. հանաքչի, 'մասխարայ ադի'։

Заба́||вно մ. զուարճալի, ծիծաղաշարժ եղանակով. -вность ի. զուարճալիութիւն, խընդալիութիւն. -вный ած. զուարճալի. խնդալի, սրախալի. հետաքրքիր. ուշագրաւ. ծաղրալի, ծիծաղելի, ծիծաղաշարժ, տարօրինակ։

Заба́||гриваньe չ. багръ-ով բռնելը, որսալը.

-гривать, -грить (-рю -рятъ) ն. 1, багръ-ով բռնել, որսալ. 2,*առհ. որսալ, գրփել, յափշտակել:

Забагровѣть, ся չ. բոսորագոյն դառնալ, կարմրել: [լանալ, փորը հաստացնել:

Забайбачиться (-чусь -чатся) չ. ծուլանալ, յու-

Забалагурить (-рю -рятъ) չ. 1, սկսել զուարճախօսել, հանաքներ, կատակներ անել. 2, զուարճախօսութիւնով մէկին ձանձրացնել. -ся չ. երկար զուարճախօսել, հանաքներ, կատակներ անել:

За‖баливанье չ. ցաւելը, հիւանդանալը. -баливать, -болѣть չ. սկսել ցաւել, հիւանդանալ:

Забалканскій ած. անդրբալկանեան. з—ая Болгарія.

Забаллоти‖рованіе չ. սևացնել (քուէարկութեան ժամանակ). -ровывать, -(и)ровать (-рую -ютъ և -рую -ютъ) ն. սևացնել (քուէարկութեան ժամանակ). -ровываться կր. սևացնուիլ (քուէարկութեան ժամանակ):

За‖балованный ըդ. ած. խիստ երես առած, սանձարձակ, փչացած. -баловывать, -баловать (-балую -ютъ) ն. 1, խիստ փայփայել, երես տալ, փչացնել. -баловаться չ. անհրեսութիւն, սանձարձակութիւն անել. -балтываніе չ. 1, դէս ու դէն ձգելը, շարժելը. 2, գլուխ տանելը, վայրահաչելը. -балтывать, -болтать ն. 1, чѣмъ սկսել այս կողմ այն կողմ ձգել, դէս ու դէն ձգել, շարժել, թրփտացնել. з. ногами; 2, что խառնել. з. мѣсиво; 3, кого մէկի 'գլուխը տանել', 'գահլան տանել', մէկին ձանձրացնել (վայրահաչութեամբ). 'դուրս տալ', 'դաղդալ', շաղակրատել. -ся 1, անդր. ճօճուիլ, տարուբերուիլ. 2, պըղտորուիլ (ջրի մասին). 3, դէսուդէն ընկնել. շփոթուիլ, շշկլուիլ. 4, 'դուրս տալ', վայրահաչել, շաղակրատել, երկար ու բարակ խօսիլ:

Забарабанить (-ню -нятъ) չ. 1, սկսել թմբկահարել, թմբուկ ածել. 2, կղկղալ, կոկոալ (սպիտակ կաքաւի մասին). 3,* 'դաղդալ', յանդգնաբար վայրահաչել, խօսել. 4,* հռհռալ:

Забарабошить (-шу -атъ) ն. սկսել խառնաշփոթել, խառնափթորել, ամէն բան տակն ու վրայ անել, աղմուկ, շփոթ բարձրացնել:

Забарахтаться չ. 1, սկսել թլփտալ (թփրտալ, թրթփալ, թրփրտալ), այս ու այն կողմ ընկնիլ. з. руками и ногами; 2,* յամառիլ, կամակորութիւն անել, ընդդիմանալ, 'հուջաթ անել':

Забарствовать (-ствую -ютъ) չ. փարթամ, մեծատան կեանք վարել, աղայութիւն անել:

Забасить (-шу -сятъ) չ. սկսել ցածր ձայնով խօսել կամ երգել, մրմնջալ, 'մռմռալ':

Заба‖стовка ի. գործադուլ, գործը, աշխատանքը դադարեցնելը. -стовщикъ ա. -стовщица ի. գործադուլ անող, 'բանթող' այր, կին. -стовывать, -стовать (-стую -ютъ) չ. գործադուլ, 'բանթող' անել, գործը, աշխատանքը դադարեցնել, կանգնեցնել. *խաղը դադարեցնել, առհ. մի բան դադարեցնել, խափանել:

Заба‖юкиванье չ. 1, օրօր ասելով քնացնելը (երեխային). 2,* մէկի 'գլուխը եղելը'. -юкивать, -юкать ն. 1, օրօրելով քնեցնել (երեխային). *քնացնել, հանգստացնել. з. себя мечтами ցնորքների, յուսախաբութեան անձնատուր լինել. з. совѣсть; 2,* մէկի 'գլուխն եղել', կակուղ խօսքերով մէկին հանգստացնել, քնացնել. -юкиваться անդր. чѣмъ *մի բանով ինքն իրան հանգստացնել, յուսադրել:

Заб‖вені(ь)е չ. 1, մոռանալը, մտահան անելը, մտից ընկնելը. մոռացնում. предавать, обрекать [вѣчному] забвенію [յաւիտենական] մոռացութեան տալ, մոռացութեան մատնել. приходить въ з. մոռացուիլ. 2, բժ. Amnesia, մոռացկոտութիւն, յիշողութեան թուլութիւն, խանգարում. 3, ուշագնացութիւն, ուշաթափութիւն. -венный ած. 1, մոռացուած. 2,*ողորմելի, աննշան, մոռացութեան արժանի. 3, ուշագնաց, ուշաթափուած, նուաղած:

Забедры ի. յ. տ. Крупъ II.

Забезпокоиться (-коюсь -ятся) չ. սկսել անհանգիստ լինել, վրդովուիլ:

Забезпремѣнно մ. ռմկ. անպատճառ, անշուշտ:

Забель‖ботать, -котать (-чу -очутъ) չ. անկապ, անճահ, անհասկանալի խօսքեր արտասանել:

За‖берега ի. -берегъ ա. եզրամաս, եզրակողմ (գետի կամ լճի). забереги, овъ յ. սառոյց և հալուող եզրակողմ, ափ (գետի կամ լճի):

За‖бережный ած. գետեզրի, գետափի յետևում գտնուող. -бережье չ. ծովեզրեայ ծանծաղուտը, որ պարբերաբար ջրով ծածկւում, ապա նորից ցամաքում է:

Забере‖менить (-ню -нятъ). -менѣть չ. յղ(ի)անալ, բեղմնաւորիլ. -менѣваніе, -менѣніе չ. յղ(ի)անալը, բեղմնաւորիլը: [զրոյց անել:

Забесѣдовать (-дую -ютъ) չ. սկսել խօսիլ,

За‖биваніе չ. 1, խցելը, խցկելը, փակելը, կալնուլը. 2, մի բան միւսի մէջ խփելը, զարկելը, ցցելը. з. гвоздя, клина, кола; 3, մահարբեր հարուածներ, ծեծ. -бивать, -бить (-бью -ютъ) ն. 1, մի բան միւսի մէջ խփել, զարկել, ցցել, խցկել. կոխել. з. гвоздь въ стѣну; з. преступника въ кандалы ոճրագործին շղթայել. з. въ голову что-нибудь ոչ և է մտքի մի միտք յղանալ. 2, խիստ անխնայ ծեծել, թակել. *з. ножъ, топоръ, косу դանակը, կացինը, գերանդին բթացնել, 'փնջացնել'. 3, ճնշել, ընկճել, շարշրկել, տառապեցնել, մէկի սիրտը, հոգին մաշել, մէկի սիրտը ահ գցել. 4, փակել, ծածկել, գոցել. կալնուլ, խցկել. з. окна досками; з. щели въ деревянной крѣпи; 5, սկսել զարկել, խփել. пульсъ его забилъ сто разъ въ минуту; дрожь забила меня դողը ջանս ընկաւ, ինձ ցնցեց. з. въ набатъ աղմուկ, 'հարայ-հարայ' բարձրացնել. з. въ ладоши ծափ տալ. часы забили; 6, չ. ցայտել, դուրս ցայտել. ժայթքել. забилъ фонтанъ, ключъ, родникъ; забила кровь изъ раны; -ся 1, անդր. ներս պրծնել, մի բանի մէջ մտնել, խրուիլ, ծածկուիլ, թագնուիլ, թաղուիլ. 2, յանկարծ սկսել խփել, զարկել, տրոփել. сердце, грудь, забились; з. ногами ոտները գցել, թլփտալ (թրփտալ). 3, կր. ցցուիլ, զարկուիլ, մխուիլ. բթացնուիլ, 'փնջուիլ':

За‖бивка ի. 1, ցցելը, խրելը, մխելը. 2, խցելը, ծածկելը, գոցելը, կալնուլը. լցնելը (մի բանի բերան, ծակ, անցք). 3, գունդ, վուշ, խծուծ, փայտս, փայտի կտոր են, որով մի բանի բերան, մի ծակ կալնում են. -бивной, -бивочный ած. ցցելու, մխելու. з—ые колья; -бивочка նւզ. տ. Забивка 3.

За‖бижать, -бидѣть (-жу -дятъ) տ. Обижать, -дѣть. [փաթաթել (վէրքը):

Забин‖товывать, -товать (-тую -ютъ) ն. կապել,

Забираніе չ. 1, վերցնելը, գրաւելը, 'դաւթելը',

խլացնելը. з. впередъ жалованья ռոճիկը նախօրօք վերցնելը. 2, բռնելը, կալանաւորելը։

Заби||рать, забрать ն. 1, վերցնել, գրաւել, ՙզաւթել՚, սեփհականացնել, խլացնել. з. себѣ чужія земли, сокровища; 2, հետն առնել, տանել, վերցնել. 3, գնել, վերցնել (ապրանք, մթերքներ). з. припасы, провизію въ долгъ, на книжку մթերքներ, պաշարեղէն ապառիկ վերցնել. 4, հաւաքել, ձեռք բերել. з. свѣдѣнія, справку; з. въ себя կամ къ себѣ духъ շունչ առնել, շունչ քաշել. з. силу կազդուրուել, ուժեղանալ. 5, գրաւել, բռնել, առնել. з. [въ участокъ] կալանաւորել. ձերբակալել. з. въ плѣнъ, въ кабалу, въ неволю գերել, ճորտացնել, ստրկացնել. з. кого-нибудь, что-нибудь въ руки, въ лапы մէկին, մի բան ձեռք առնել, նուաճել. з. себѣ что-нибудь въ голову, въ башку մի բան մտադրուել, з. себѣ много въ голову փքուել, հպարտանալ, մեծամտել. з. волю, власть սանձարձակ դառնալ, անիշխանութիւն անել. вино, водка забираетъ его գինին, օղին նորա գլուխն է ընկնում. з. за душу, за сердце. за виски, за живое հոգին, սիրտը, զգացմունքը գրաւել, մորմոքել. меня забираетъ дрожь, страхъ, охота ջանս դող է ընկնում, սոսկում եմ, ախորժում եմ. 6, з. что чѣмъ-нибудь մի բան մի բանով փակել, կալնուլ, գոցել. з. окно досками; 7, չ. з. куда-нибудь գնալ, ընթանալ, քայլել, թեքուել դէպի. 8, բռնել. желѣзко рубанка тупо, не забираетъ խարտոցի լեզուակը բութ է, չէ բռնում (չէ տաշում). -раться, забраться անդր. чѣмъ-нибудь պարենաւորուել մի բանով, մի բան հետը վերցնել. з. всѣмъ нужнымъ, деньгами, припасами; з. дѣлами գործերով ծանրաբեռնուել. 2, з. куда-нибудь գնալ, մտնել, թափանցել մի տեղ. з. въ глубь, въ даль, въ самую глушь лѣса; дурь забралась къ тебѣ въ голову յիմարացել, խենթացել ես. з. въ засаду դարան գործել. з. въ гости հիւր գնալ. 3, ծածուկ մտնել, սպրդել. къ намъ забрались воры; 4, з. на что-нибудь բարձրանալ, ելնել մի բանի վերայ։

За||битіе չ. 1, խփելը, զարկելը, զարնելը. 2, փակելը, գոցելը, կալնուլը. з. оконъ досками; -битость ի. ընկճութիւն, լքում. -битый Էյ. ած. ընկճուած, լքած, վախուորած. -бить (-бью -ютъ), ся տ. Забивать, ся.

Забія||ка հօր. կռուարար, ամբարիշտ, անզգամ. չարաճճի (երեխայ, շուն եւն). -чество չ. կռուարարութիւն, ամբարշտութիւն. -чить (-чу -чатъ) չ. կռիւ սարքել, անզգամութիւն անել. -чливый ած. կռուարար, ամբարիշտ, անզգամ։

Заблаговре||менно մ. նախօրօք, վաղօրօք, օր առաջ. -менный ած. նախօրօք եղած, արած, պատրաստած, եկած եւն։

Заблаговѣстить (-щу -стятъ) չ. սկսել զանգահարել, զանգակները տալ. з. къ обѣднѣ.

Заблагораз||судить (-жу -дятъ) չ. յարմար, պատեհ համարել կամ դատել, գտնել. հաճիլ. -суждаться, дается; -судиться, ится, ятся кому դէմք. յարմար, պատեհ, հաճոյ թուալ, երեւալ։ [ձակել։

Заблагоухать չ. սկսել բուրել, անոյշ հոտ ար-

Заблажить (-жу -жатъ) 1, սկսել խենթութիւն, հեստութիւն անել. կամակորել, ՙթարսուել՚. սկսել խեղկատակութիւն անել. 2, բարձր աղաղակել, ՙբղաւել՚։

За||блеваніе չ. փսխելը, փսխում. -блевывать, -блевать (-блюю -ютъ) ն. սկսել փսխել. կեղտոտել, աղտոտել (փսխումով). -ся էք. փսխումով կեղտոտուիլ, աղտոտուիլ։

За||блёклый ած. թառամած, թօշնած. -блёкнуть չ. սկսել թառամիլ, թօշնիլ, խամրիլ.

За||блескать (-блещу -щутъ) տ. Заблестѣть; -блеснить (-ню -нятъ) ն. փայլուն լուսով, փայլով կուրացնել. -блестѣть (-щу -стятъ) չ. սկըսել փայլել, փայլատակել, պլպլալ։

Заблеять (-блеетъ -блеютъ) սկսել մկկալ, մայել. մկմկալ (ոչխարի, այծի մասին)։

Заблистать տ. Заблестѣть.

Заблу||дить (-жу -дятъ), ся տ. Заблуждать, ся; -дущій, -дшій, -дшійся, -дящій ած. կորած, մոլորուած. -ждать, -дить չ. 1, վարանիլ, մոլորուիլ, սխալուիլ. з. отъ истины вѣры ճշմարիտ հաւատից հեռանալ. 2,* գայթակղուիլ, ընկնիլ (բարոյապէս). -ся չ. 1, մոլորուիլ, ճանապարհը կորցնել. 2,* մոլորուիլ, սխալուիլ, վրիպիլ. з. въ чёмъ-нибудь մի բանի մէջ խաբուիլ. -жденіе չ. մոլորութիւն, սխալ, սխալանք, վրիպում. գայթակղութիւն. вводить кого-нибудь въ з. մէկին մոլորութեան, սխալանքի մէջ գցել. выводить изъ з—ія մէկի մոլորութիւնը փարատել. впадать въ з. մոլորուիլ, գայթակղիլ. -ждённый ած. գայթակղուած, մեղաւոր։

Забобоны, -нъ ի. յ. և -овъ ա. յ. բանդագուշանք, յիմար, անմիտ, անճահ բաներ. նախապաշարմունք, սնոտիապաշտութիւն։

За||боданіе չ. խիստ խեթկելը, հարու տալը. -бодать ն. խեթկել, հարու տալ[ով սպանել կամ խիստ վնասել]. սկսել խեթկել, հարու տալ։

Забожить (-жу -жатъ) ն. սուտ երդումով մի բան ստանալ, խլացնել. -ся չ. սկսել սաստիկ երդուել, երդում ուտել։

За||бой ա. -бойка ի. 1, լից, խից (բան, իր, որ լցնում են կամ խցկում են մի ծակի մէջ, որով կալնում են մի ծակ, անցք). 2, ցցապատ (գետի մէջ շինած, ձուկ որսալու համար). -бойна ի. 1, տ. Забойка 1; 2, խորտ ու բորտ տեղ։

За||бойникъ տ. Шомполъ; -бойный ած. խիստ, սաստիկ, մեծ[ապէս հարուածող]. з. дождь; з—ая зима; -бойчивый ած. ընդունակ թաղնուելու, ծածկուելու. -бойщикъ ա. 1, զարկող, սպանող. 2, հանքահան, հանածոն կտրող և հանող մշակ։ [ніе, -вать, ся.

Забо||лачиваніе, -лачивать, ся տ. Заболочива-

За||болонники ա. յ. ծառակեր բզէզներ. -болонь ի. բս. Alburnum, վերնաշերտ (ծառի բնի երեւի շերտը, անմիջապէս նորա կեղեւի տակ)։

Заболотить (-итъ -ятъ) տ. Заболочивать.

За||болотный ած. ճահճի միւս կողմում գտնուող. -болоть ի. -болотье չ. ճահճի միւս կողմում գտնուող տեղ, վայր. -болочиваніе չ. ճահճանալը, ճահիճ դառնալը. -болочивать, -болотить ն. ճահիճ դարձնել։

За||болтать, ся տ. Забалтывать, ся; -болтка ի. 1, խառնելը, հարելը. 2, խառնած, հարած դեղ, դարման, հեղուկ. -болтущій ած. փախած, իր տիրոջը կորցրած, մոլորուած. з—ая собака.

Забо||лѣваемость ի. հիւանդոտութիւն, հիւանդանալու սխտ. -лѣваніе չ. հիւանդանալը. հիւանդութիւն, ցաւ. -лѣвать, -лѣть (-лѣю -ютъ) չ. 1, հիւանդանալ, տկարանալ. 2, տ. Забаливать; -лѣть (-литъ -лятъ) տ. Забаливать.

Забомбардирова́ть (-ру́ю -ютъ) ն. սկսել ռմբակոծել. *з. кого́-либо вопро́сами, пи́сьмами.

Забо||ра́ниваніе չ. տափանելը, ցաքանելը. հողը փափկացնելը. **-ра́нивать, -рони́ть** (-ню́ -ня́тъ) ն. 1, տափանել, ցաքանել. 2, առհ. հողը փորել, փափկացնել, փխրուն դարձնել. **-ра́ниваться** կր. տափանուել, ցաքանուել։

Забо́||рецъ, рца, **-ринъ** նւզ. տ. Забо́ръ.

Забо́||ристость ի. թնդութիւն, կծուութիւն, սաստկութիւն. з. вина́; **-ристый** ած. թունդ, կծու, սաստիկ. ազդու. з. таба́къ; з—ая во́дка; з—ое сло́во, з—ая пѣ́сня ազդու, սրտայոյզ խօսք, երգ։

Забо́ришко ա. նւաս. **-рище** ա. յլ. տ. Забо́ръ.

Забо́||рка ի. միջնապատ, միջնորմ, խրճիթը, տունը երկու մասի բաժանող պատ. **-рный** ած. 1, ցանկապատի, վանդակապատի. з—ая литерату́ра վանդակապատից կպցրած գրութիւններ, *որորմնի, կեղտոտ գրութիւններ. з—ая ви́ка կամ з. горо́шекъ բս. Vicia sepium, ցանգայ վիկ. 2, բռնելու, ճանկելու, յափշտակելու. з. ко́готь; 3, պարտքով. ապառիկով, ‘նիսիա‘ վերցնելու. з—ая кни́жка ապառիկների գրքոյկ։

За||борода́тить ն. մօրուքաւորել. *մօրուքը փոշով. ձիւնով ծածկել, փոշոտել, կեղտոտել։

Зоборо́ло չ. հնց. հողապատնէշ, պատնէշ (նախկին Ռուսիայի ամուր քաղաքներում)։

Заборо||ни́ть (-ню́ -ня́тъ) տ. Забора́нивать; **-нова́ніе** չ. տափանել, ցաքանել պրծնելը. **-нова́ть** (-ну́ю -ютъ) ն. տափանել, պրծնել, ցաքանել [պրծնել։

Забо́рчикъ նւզ. տ. Забо́ръ 1.

Забо́рщикъ ա. 1, գնող, գնորդ, ‘մուշտարի‘. 2, ցանկ, վանդակապատներ շինող։

Забо́ръ ա. 1, ցանկ, ցանկապատ, ‘չափար‘. վանդակ, վանդակապատ, *որգեւք. 2, ապառիկ ‘նիսիայ‘ վերցնելը (մթերքները), պարտք վերցնելը. з. съѣ́стныхъ припа́совъ, де́негъ.

Забо́||та ի. հոգս, հոգացողութիւն, ցաւ, դարդ, ջանք. **-тить** (-чу -тятъ) ն. հոգս, մտատանջութիւն պատճառել, աշխատեցնել. **-ся** անդր. հոգալ, հոգս քաշել. անհանգիստ լինել, մտատանջուել. **-тливость** ի. հոգացողութիւն, խնամք, հոգատարութիւն, մտախոհութիւն. **-тливо** մ. խնամքով, հոգացողութեամբ, մտախոհութեամբ. **-тливый** ած. 1, հոգացող, հոգս քաշող, մտախոհ. 2, հոգս, մտախոհութիւն պատճառող։

Забо́||тность ի. հոգս, հոգալու բաներ, մտատանջութիւն. **-тный** տ. Забо́тливый; **-тушка** ի. նւզ. հոգս, հոգացողութիւն. ցաւ ու կրակ, դարդ. մտատանջութիւն։

За||бочи́ть (-чу́ -ча́тъ) 1, չ. դէպի աջ կամ ձախ թեքուել, շեղուել, ծռուել. 2, կողքից ճանկել, կալնել. **-ся** տ. Забочи́ть 1.

Забоя́ться (-бою́сь -я́тся) չ. սկսել վախենալ, ահ, երկիւղ զգալ։

Забра́живать, -броди́ть չ. 1, սկսել, խմորուել, թթուել, քացախել, եփ գալ. 2, սկսել թափառել, երերալ, տատանուել, վարանել. 3,* ծագել, ծընուել, առաջանալ, առաջ գալ, վերակենդանանալ. у него́ вдругъ заброди́ло про́шлое; 4, ն. ցեխոտել, կեղտոտել։ [խըմորութիւն անել։

Забра́жничать, ся չ. սկսել, քէֆ, կերուխում,

За||бракова́ніе, -брако́вываніе չ. **-брако́вка** ի. խոտելը, փտելը, փնովելը, պարսաւելը. **-брако́вщикъ** ա. խոտող, փտնող, փնովող, պարսաւող (ապրանքները). **-брако́вывать, -бракова́ть** (-ку́ю -ютъ) ն. кого́, что մի բան, մէկին խոտել, փնովել, փտել, պարսաւել։ [դաւարտի)։

Забра́ло չ. հնց. երեսակալ, երեսապանակ (սա-

За||бра́нивать, -брани́ть (-ню́ -ня́тъ) ն. սկսել յանդիմանել, կշտամբել, նախատել, շշպրել. **-брани́ться** չ. հայհոյել, ուշունց տալ, սաստիկ նախատել, անարգել։

За||бра́ніе տ. Забира́ніе.

Забра́нка ի. յիշոց, հայհոյանք, ուշունց, նախատական խօսքեր. пригиба́ть կամ пригина́ть з—у кому́ մէկի գլխին հայհոյանքներ թափել։

За́бра́нный բյ. ած. առած, վերցրած, գնած, նուաճած, հաւաքած, ստացած. з—ыя де́ньги; з—ыя спра́вки; կալած, փակած. з. у́голъ.

Забра́нчивый ած. կռուարար. ամբարիշտ։

За||бра́сываніе չ. ձգելը, գցելը, գցելով, տեղալով ծածկելը. з. грязью чьего́ до́браго и́мени մէկի բարի անունը ըծաւորելը, աղարտելը. **-бра́сывать** I. (забра́сывать, -бро́сить) 1, յետ գցել, գցել, ձգել նետել. судьба́ забро́сила его́ на чужби́ну; з. сѣть, у́дочку թոռ գցել, կարթ գցել. з. что чѣмъ-нибу́дь ծածկել, սքօղել. 2, բարձի թող անել, աչքից գցել, մոռացութեան տալ. забро́шенный садъ, домъ, человѣ́къ; մի բանից ձեռք քաշել, ձեռք վերցնել. з. му́зыку, пѣ́ніе, жи́вопись: -ся 1, կր. ձգուել, շպրտուել. 2, անդր. ընկնել, յետ ընկնել. II. (забра́сывать, -броса́ть) ն. 1, кого́, что чѣмъ-нибудь մէկի, մի բանի վերայ մի բան տեղալ, թափել. з. кого́-нибудь цвѣта́ми, вѣнка́ми մէկի վերայ ծաղիկներ, պսակներ տեղալ, թափել. з. кого́-нибудь слова́ми, вопро́сами մէկի գլխին (շատ) խօսքեր, հարցեր թափել. 2, что во что, за что ածել, թափել, շպրտել. з. руду́ въ до́мну. з. кни́ги за шкафъ; -ся 1, կր. [վերան թափուած բանով] ծածկուել։

Забра́ть (-беру́ -ру́тъ), ся տ. Забира́ть, ся.

За||бреда́ть, -брести́, -бре́сть չ. 1, մտնել, թաղուել (գետի հունի մէջ). онъ забрёлъ по колѣ́но, по го́рло; 2, գնալ, մտնել մի տեղ։ **Забре́дшій**, ая, шее բյ. ած. եկած, եկուոր. з. гость.

Забре́дить (-жу -е́дятъ) չ. սկսել զառանցել, ‘դել տալ‘, *բանդագուշել, յիմար-յիմար դուրս տալ։ [խոկալ, չ'ախորժել, գարշել, խորշել։

Забре́з||гать, -говать (-гую -ютъ) չ. սկսել շը-

Забре́з||живаться, -жить(ся), (-ится) չ. դէմք. ըսկսել լուսանալ, առաւօտանալ, բացուել, ծագել, երևալ, շողալ. у́тро, заря́, свѣтъ забре́зжились.

Забренча́ть (-чу́ -ча́тъ) չ. սկսել հնչել, զըրնգալ, ծնգալ, շաչել, թխկթխկացնել։

За||брести́, -бре́сть (-бреду́ -ду́тъ) տ. Забреда́ть.

За||брёха ի. ստախօս, սնապարծ, պոռոտախօս կինարմատ. **-бреха́ть** (-е́шетъ -шутъ) չ. սկսել հաջել, վայրահաջել, սուտ խօսել, յիմար, փուչ բաներ դուրս տալ. սկսել հայհոյել։

За||брива́ніе չ. սափրելը, ածելելը (գլխի մի մասը) *զինուորագրելը. **-брива́ть, -бри́ть** (-бре́ю -ютъ) ն. 1, սափրել, ածելել (գլխի մի մասը). *з. лобъ, го́лову կամ լոկ *забри́ть զինուորագրել, զինուոր տանել. з. заты́локъ զինուորութեան համար անյարմար, անպէտք գտնել. *փտնել, փնովել, պարսաւել։ [փտնել։

Заброди́ть (-жу́ дя́тъ) չ. սկսել ման գալ, թա-

За||броса́ніе չ. ածելը, թափելը, ձգելը. **-броса́ть**,

ся տ. Забрáсывать, ся II; -брóсить (-шу -сятъ), ся տ. Забрáсывать, ся I.

За||брóсъ ա. 1, ձգելը, նետել պրծնելը. 2, անխնամ դրութիւն, աչքից ձգած, անխնամ լինելը. дѣти егó въ з—ѣ; -брóшенность տ. Забрóсъ 2.

Забры́з||ганіе -гиваніе չ. կեղտոտելը, աղտոտելը. թափթփելը, թափթփուիլը. -гивать, -гать 1, ն. թափել, թափթփել, ցանել[ով կեղտոտել, աղտոտել]. з. грязью ցեխոտել. з. крóвью արիւնոտել. 2, չ. (միայն забры́згать) [սկսել] դուրս ցայտել, դուրս ժայթքել, թափթփուիլ. -ся անդր. և էր. աղտոտուիլ, կեղտոտուիլ, ծածկուիլ. з. грязью ցեխոտուիլ. з. крóвью արիւնոտուիլ. -бры́знуть, ся տ. Забры́згать, ся.

Забры́||киваніе չ. 1, աքացել սկսելը. 2, աքացելով վնասելը կմ սպանելը. -кивать, кáть 1, չ. սկսել աքացել, քացի տալ, կիցս հանել (գր.), տալ գցել. 2, ն. աքացելով, քացի տալով վնասել, վիրաւորել կմ սպանել:

Забрюзжáть (-зжу́ -зжáтъ) չ. սկսել տրտնջալ, քրթմնջել, փնթփնթալ, դժգոհել, հայհոյել:

Забря́кать չ. սկսել զրնգզրնգալ, չխկչխկալ, ղօղանջել:

За||брянчáть տ. Забренчàть; -бряцáть չ. սկսել հնչել, հնչեցնել, ծլնգալ, ծլնգացնել, զրնգալ, զրնգացնել:

Забу||бéнить (-ню -нятъ) ն. 1, սկսել բաղխել. թխկթխկացնել. 2, սկսել յայտարարել, տարածել. -бё(é)нный ած. 1, շուայտ, մոլի, անհոգ, անզարդ, սանձարձակ. զուարճամոլ. խրոխտ, կատաղի, աղմկալից. з—ая головá; з—ая жизнь, мóлодость; 2, ազդու, սրտայոյզ, թունդ. з—ая рѣчь, з—ая пѣсня; -бéнщина ի. 1, շուայտութիւն, մոլութիւն, զուարճամոլութիւն, սանձարձակ քէֆ, խրախուսութիւն. 2, հաւ. շուայտ, մոլի, սանձարձակ. ցոփ մարդիկ: [բակ նզածաղիկ:

Забу́дка ի. բս. Artemisia vulgaris. հասա-

Забулды́||га ա. շուայտ, փուչ, անբարոյական, ցոփ մարդ. -жный ած. անպիտան, ցոփ, անառակ, անբարոյական: [ընկնել]:

Забултыхáть չ. դրմփալ, շրմփալ[ով ջրի մէջ

Забу́лькать 1, չ. և ն. կլկլալ, կլկլացնել. *з. на àрфѣ пѣсню. [խռովուիլ, յուզուիլ:

Забунтовáть (-ту́ю -ютъ), ся չ. ապստամբուիլ,

Забунчáть (-чу́ -чáтъ) չ. սկսել բզզալ, տզզալ, *մոմռալ, մրմնջալ з. пѣсню.

Забурли́ть (-лю́ -ля́тъ) չ. սկսել վշշալ, գոռալ, ալէկոծուիլ, մռնչել. *խռովուիլ, յուզուիլ, եռ գալ. въ нёмъ забурли́ла кровь.

Забурчáть (-чи́тъ -чáтъ) չ. սկսել խլխլալ, *մրթմրթալ. забурчи́тъ въ животѣ փորը սկսում է գոռալ, ղռղռալ, կռկռալ:

Забути́ть (-чу́ -чáтъ) տ. Забу́чивать.

Забу́хать չ. 1. սկսել գոռալ, սկսել հրացան որոտացնել. 2, (забухáть, -бу́хнуть) սկսել ուռչիլ (խոնաւութիւնից): [կրով ամրել:

Забу́чивать ն. քարով, խիճով լցնել և զաջու-

Забушевáть (-шу́ю -ютъ) չ. կատաղութեամբ, մոլեգնաբար փչել, վշշալ, գոռալ. ալէկոծուիլ:

Забуя́нить (-ню -нятъ) չ. սկսել աղմուկ, 'դալմաղալ' բարձրացնել, սկսել կռուել:

За||бывáла հսր. մոռացկոտ այր, կին. -бывáніе չ. մոռանալը. -бывáть, -бы́ть ն. 1, մոռանալ, մտահան անել, մտքից գցել, մոռացութեան տալ. *աչքից գցել. не з. себя́ իր շահը, օգուտը աչքաթող չանել, չմոռանալ. 2, դադարիլ. з. лежáть, шумѣ́ть, ду́мать դադարիլ պառկել[ուց], աղմկել[ուց] ևլն. -ся անդր. 1, յիշողութիւնից զրկուիլ, մոռացկոտ դառնալ. ուշքը կորցնել, ուշագնաց լինել, ուշաթափուիլ. 2, նիրհել, նիրհանքից. քնից յաղթահարուիլ. з. дремóтой, сномъ: 3, առօրեայ հոգսերը, ցաւերը մոռանալ[ով հանգստանալ]. 4, իրեն մոռանալ, իր չափը, պարտաւորութիւնը մոռանալ, պարզ ու պատշաճի սահմանից դուրս գալ. не изво́льте з.! 5, տ. Забывáть; 6, էր. մոռացուիլ:

Забы́в||чивость ի. մոռացկոտութիւն, յիշողութեան թուլութիւն. з. чегó-нибудь մի բան արհամարհելը, առանց ուշադրութեան թողնելը, անտարբերութիւն դէպի մի բան. -чивый ած. 1, մոռացկոտ. з. человѣ́къ; 2, մոռացուող. 3, մոռացնող, մոռացութիւն առաջ բերող. з—ая лѣнь, истóма, нѣ́га.

Забыду́щій ած. շշմեցնող. з—ее зéлье.

За||бы́тіе չ. մոռացութիւն, մոռացում. -бытли́вый տ. Забы́вчивый.

Забыть I. (зáбыть, и ի.) ուշագնացութիւն, ուշաթափութիւն. больнóй лежи́тъ въ забыті́; II. забы́ть (забу́ду -дутъ) ն. տ. Забывáть.

Забытьё, ья́ չ. 1, ուշագնացութիւն, ուշաթափութիւն, անզգայութիւն. մոռացութիւն, ինքնամոռացութիւն. 2, նիրհում, նիրհանք, նինջ. 3, տ. Забы́тіе.

За||бѣгáніе չ. з. впередъ 1, առաջ վազելը, առաջ ընկնիլը, առաջ նետուիլը. 2, մէկի տուն վազելը, մէկի դուռը բաղխելը, աշխատելը մէկին հաճոյանալ, իր կողմը գրաւել. -бѣгáтельство, з. впередъ տ. Забѣгáніе 2.

За||бѣ́гать չ. յետ ու առաջ վազել, վազվզել. *դէս ու դէն ընկնիլ, արագ շարժուիլ, հօգալ. глазá, взглядъ. зрачки́ забѣ́гали—սկսեցին արագ-արագ յածել. *мурáшки забѣ́гали по егó тѣ́лу նորա ջանի վերայ զարզանք, սարսուռ եկաւ. смѣхъ забѣ́галъ по лицу́ երեսին յանկարծ ծիծաղ յայտնուեց ու չքացաւ. -ся չ. վազելուց դադարիլ, յոգնիլ, վաստակիլ:

За||бѣгáть, -бѣжáть չ. 1, վազել, առաջ վազել, շտապով մի տեղ պատսպարուիլ. 2, գնալ, հեռանալ, մեկնիլ, փախչիլ. 3, վազելով մէկի առաջը կտրել, մէկին յաղթել, մէկից առաջ ընկնիլ. 4,* з. къ кому́-либо մէկի դուռը բաղխել, աշխատել մէկին հաճոյանալ, նորան իր կողմը գրաւել, դէպի ինքը լաւ տրամադրել. з. впередъ ա, առաջ կմ առջևից վազել. բ, մէկի առաջ վազել, մէկին ընդառաջել. գ.*շտապել, աճապարել, առաջ ընկնիլ, առաջ նետուիլ. часы́ забѣгáютъ впередъ; -бѣ́глый ած. փախած, փախստական, օտար, պանդուխտ. з—ая собáка; з. человѣ́къ.

Зáбѣгъ ա. 1, փախչելը, մի տեղից միւս տեղ անցնելը. 2, պտոյտ: [նալ:

Забѣд||нѣ́ть, -ня́ть չ. աղքատանալ, չքաւոր դառ-

Забѣ́дствовать (-ствую -ютъ) չ. սկսել թշուառութիւն, կարօտութիւն քաշել:

Забѣ||жáніе չ. վազելով գնալը, մտնելը մի տեղ. -жáть (-бѣгу́ -жи́шь -гу́тъ) տ. Забѣгáть; -жный ած. 1, փախած, կորած, մոլորուած. 2, з—ая ступéнь на лѣ́стницѣ սանդուխքի առաջին աստիճանը:

Забѣ‖ливаніе չ. սպիտակացնելը, սպիտակ երանգ տալը. -ливать, -лять, -лить (-лю -лятъ և -лятъ) ն. սպիտակացնել, սպիտակ գոյն, երանգ տալ з. окно мѣломъ; з. щи мукой, сметаной; -ливаться, -литься չր. սպիտակացնուիլ:

Забѣ‖лка է. 1, սպիտակացնելը. сметана, мука, молоко для з—и щей; 2,* զարդ, *ծաղիկ. з. общества, семьи; -лѣть չ. սկսել սպիտակին տալ, սպիտակիլ, իր սպիտակ գոյնով ուրիշ առարկաներից ջոկուիլ, որոշուիլ. -ся չ. 1, սկսել սպիտակին տալ, սպիտակ երեւալ (հեռուում). 2, սպիտակիլ. твоя голова уже забѣлѣлась.

Забѣситься (-шусь -сятся) չ. կատաղիլ, սկսել կատաղի, մոլեգին բաներ բանել:

Заваживать ն. I. (заваживать, -вадить, -важу -дятъ) հրապուրել, գրաւել. II. (заваживать, -возить) սկսել կրել. կրելով աշխատել, վաստակել. з. ногами подъ столомъ ոտքերը սեղանի տակ դէսուդէն զցել:

За‖важничать չ. սկսել 'քթքթուիլ', 'կոտրտուիլ', հպարտանալ, գոռոզանալ. -вазживать, -возжать ն. սանձափոկերը (возжи) սանձից կապել:

За‖вала է. Թումբ, հողի բլրակ. -валенка է. Նւզ. հողաթումբ (փայտաշէն շինութիւնների շուրջը կիտած). -валиваніе չ. ձգելը, ածելը, թափելը. լցնելը, կալնուլը, կապելը, գոցելը. -валивать. -валить ն. 1, յետ զցել. յետ ձգել. з. шапку на затылокъ; 2, լցնել, մի բան ածելով, թափելով լցնել, ծածկել, փակել, կապել. з. яму, канаву; больницы завалены больными; дорогу завалило (դէմք.) снѣгомъ ճանապարհը ձիւնից կապուել է. 3, з. кого чѣмъ մէկին մի բանով ծանրաբեռնել. онъ заваленъ работой, дѣлами; 4, ձգել, զցել, նետել. գլորել, տապալել. 5, արագ գնալ, ընթանալ, ճեպել. 6, кому-нибудь կամ у кого-нибудь завалило грудь, горло, глотку, уши մէկի կուրծքը, բողազը, կոկորդը, ականջները բռնուել, կապուել է(են). -ся 1, անդր. յետ ընկնիլ. 2, շուռ գալ. կործանուիլ, տապալուիլ, գլորուիլ, վայր ընկնիլ. телѣга завалилась; стѣна завалилась; исхудалая корова завалилась на ходу; онъ воротился пьянъ, завалился на постелю и спитъ; 3, չր. ածուիլ, թափուիլ, լցուիլ, ծածկուիլ, փակուիլ, կապուիլ, գոցուիլ. 4, չ. ընկնիլ, ծածկուիլ, թաքչիլ մի տեղում. կորչիլ, չքանալ. гребень завалился за комодъ; стая куропатокъ завалилась за горку.

За‖валина է. -валинка, -валиночка Նւզ. խրճիթի պատերի շուրջը կիտած հողաթումբը. -валить (-лю -лятъ), ся տ. Заваливать, ся; -валка է. 1, ածելը, ծածկելը, լցնելը, փակելը, կապելը. 2, ծածկուած, փակուած, լցուած լինելը. -валокъ, лка ա. Նստարան:

Завалъ ա. 1, ծանրաբեռնութիւն. з. въ дѣлахъ; 2, Թումբ, արգելք, որ պատահական առարկաներից (փայտից, քարից եւն) կանգնեցնելով կապում են թշնամու ճանապարհն, որի յետեւում և պատսպարւում են. каменные з—ы; 3, թափուած ձիւնակոյտ, հիւս, ուսին. 4, բժ. Հնց. բռնուիլը, կապուիլը. страдать з—ами желудка; з. носа.

За‖валь է. զւռկ. հնացած, մնացած, փտած ապրանք. -вальня տ. Завалина; -валящій, -валящійся ած. վատ, անպէտք, անպիտան, դէն շըպրտած:

За‖вариваніе չ. եփելը. եռ ածելը, զօդելը (երկաթը). -варивать, -варить (-рю -варятъ) ն. 1, ըսկսել եփել з. чай; з. бѣлье լուացքը եռ եկած ջրի մէջ ընկղմել. 2,* з. кашу փորձանքի, խաթարալի մէջ ընկնիլ կամ ուրիշին փորձանքի մէջ գցել. *з. дѣло, сумятицу դաւել, վատ, նենգ գործ բանել, 'օյին խաղալ'. *з. свадьбу հարսանիք սարքել. 3, եռացնել, եռ ածելով զօդել, կպցնել. մխել. з. желѣзо, з. дамасковые стволы; 4, (բարակների մասին) բարձր հաջելով որսին հետ ածել, հետամուտ լինել. -ся չր. 1, եփուիլ, եռ ածուիլ. 2,* каша заваривается կամ заварится փորձանքը, 'խաթարալան' սկսուում է. бой, дѣло, кутерьма заварились մարտը, շփոթը սկսուեցան. 3, пятно заварилось բիծը [եռացած ջրի մէջ եփուելով] անջնջելի է դարձել:

За‖варка է. 1, եփելը. եփելով պատրաստելը. 2, մի անգամ գցելու թէյ. осталось чаю только на з—у միայն մի անգամ գցելու թէյ է մնացել. 3, երկաթի եռացումը, զօդումը, կռումը. 4, եփած կամ եփելու բան, սարկոյ. -варной ած. 1, եփող, եփ տուող. з. чанъ; 2, եփելու, եփ տալու. з—ое хлѣбное тѣсто; -варочка Նւզ. տ. Заварка 2.

За‖вастриваніе չ. սրելը. *սադրելը, դրդելը. -вастривать ն. 1, սրել. з. колъ; 2,* սրել, սադրել, դրդել. -ся չր. սրուիլ, *գրգռուիլ, սադրուիլ:

Завгодно մ. փոքր ռուս. տ. Угодно.

За‖веденіе չ. 1, շինելը, սարքելը, հիմնելը. շէնք, շինուածք, սարք. з. школъ; 2, տուն, հիմնարկութիւն, գործարան, ուսումնարան. учебное, торговое, промышленное, богоугодное з—ія; 3, ռմկ. կայք, գոյք, ստացուածք. 4, հեգն. տ. Бордель; 5. սովորութիւն. такого з—ія у насъ нѣту; -веденка է. Թիֆլիսի «Заведеніе Св. Нины» ուսումնարանի աշակերտուհի. -веденскій ած. [ուսումնական] հիմնարկութեան, ուսումնարանի, -րանական. з—ое воспитаніе; -веденьице չ. Նւզ. պստիկ տուն, հիմնարկութիւն, գործարան:

За‖везти (-езу -зутъ). -везтись տ. Завозить, ся.

Завер‖бованіе, -бовываніе չ. զինուորագրելը. *գըրաւելը. -бовывать, -бовать (-бую -ютъ) ն. 1, զինուորագրել, վարձով բռնել. 2,* գրաւել, հրապուրել, իր կողմը քաշել, հրաւիրել. -ся անդր. զինուորագրուիլ, վարձով բռնուիլ:

Заверещать (-щу -щатъ) չ. խիստ բարձր ձայնով ոռնալ, ճչալ, ճղճղալ:

Завернуть տ. Завёртывать.

Завёр‖стываніе չ. 1, փոխարինելը (մի բան, մի գործողութիւն միւսով). 2, տպգր. սիւնեակի ընրացում. -стывать, -стать ն. 1, что-нибудь за что մի բան միւսի տեղ, միւսի փոխարէն հաշուել, հաշուի առնել. 2, վճարել:

За‖вёртка է. -вёрточка Նւզ. 1, փաթաթելը. փաթաթելու բան, փաթաթան. бумага на з—у; 2. պտուտակներն ամրացնելու կամ հանելու գործիք. 3, ծռուածք, ծռութիւն. 4, носовая կամ нососная з. քթի խոխոռոց, խռմփոց. храпѣть во всю насосную з—у; -вёртокъ, тка ա. փաթեթ, ծալած, փաթաթած բան:

Завёр‖тъ ա. 1, ծալելը. փաթաթելը. 2, з а в ё р т ы յ. յորձանք, յորձանուտ. -вёртываніе չ. 1, փաթաթելը, պատելը, պարուրելը. ծալելը. 2, ոլորելը, գալարելը. з. усиковъ; -вёртывать -вернуть ն. 1, փաթաթել, պատել, պարուրել. ծա-

լել. з. покупку обёрточной бумагой; гусь завёртываетъ голову подъ крыло *սագը գլուխը ծալում, դնում, պահում է թևի տակ*. завернуть слово, словечко *խեր տեղում մի սուր, կտրուկ խօսք ասել*. 2, *ոլորել, պտոյտ տալ. լամպի պատրուճակը իջեցնել (մինչև մարիլը)*. завернулъ онъ лампу и лёгъ спать; животъ завёртываетъ *փորը գալարւում, կտրատում է*. 3, *թեքուել, ծռուել. շեղուելով մի տեղ ծածկուել կամ մէկին այցելել*. з. въ переулокъ; заверните къ намъ при свободномъ времени; 4, *շուռ փեշը, եզրը վեր քաշել հաւաքել*. завернуть полу, рубашёнку, штаны; 5, *սկսուել, վրայ հասնել (եղանակի մասին)*. завернулъ морозъ, холодъ; на дворѣ зевернуло *եղանակը խստացաւ, ցրտեց*. -ся *անդր*. 1, *փաթաթուել, պատուել, պարուրուել*. з. въ пледъ; онъ весь въ себя *завернулся *նա բոլորովին քաշուել, իրան համար կացել է*. 2, *ոլորուել, կըծկուել. պտոյտ գալ*. 3, *յետ դառնալ, վերադառնալ*. 4, *էր. փաթաթուել, պատուել, պարուրուել*:

За‖верть *ի*. 1, *հողմ, բուք, բորան, ‘քաջքարամի’*. 2, *յորձանուտ, ջրապտոյտ*. -вертѣть (-верчу́ -ертя́тъ), ся *տ*. Заве́рчивать, ся; -ве́рчиваніе *չ*. 1, *պտտեցնելը, պտոյտ տալը*. 2, *ամրացնելը (պըտուտակը)*. -ве́рчивать, -вертѣть *ն*. что *և* чѣмъ 1, *պտտեցնել, պտոյտ ածել, պտոյտ տալ*. з. нагайкой; вихрь завертѣлъ сѣно; **գժուեցնել, խելքն առնել, գլխահան անել*. 2, *ամրացնել, սնդել (պտուտակը)*. 3, *գւռկ. տ*. Завёртывать 1; -ся *չ*. 1, *սկսել արագութեամբ պտտուել, պըտոյտ գալ. *եռալ*. «вотъ тепе́рь завертѣлась жизнь! Да такъ завертѣлась, что голова́ круго́мъ пошла́»; 2, *ոլորուել*. въ головѣ завертѣлось *գլուխը պտոյտ եկաւ, ուշքը կորաւ*. въ мозгу́, въ глаза́хъ завертѣлся вихрь *կամ* зелёныя круги́ *ուշակորոյս եղաւ, աչքերը մթնեցին*:

За‖верша́ть, -верши́ть (-шу́ -ша́тъ) *ն*. 1, *սրել, (մի բանի ծայրը)*. з. стогъ *դէզի ծայրը սուր վերջացնել (անձրևից պաշտպանելու համար)*. 2,* *պրծնել, վերջացնել, բոլորել, վերջաւորել*. з. дѣло, разсказъ; -ся 1, *էր. ծածկուել, ձեղունաւորուել*. 2,* *չ. վերջանալ, վախճանի յանգել, բոլորուել*. -верше́ніе **վերջացնելը, բոլորելը*. -верши́тель *ա. մի գործ վերջացնող, բոլորող*. -верши́тельный *ած. վերջում դրնուող, վերջաւորող*:

За‖весели́ться (-лю́сь -ля́тся) *չ. սկսել ուրախանալ, խիստ խնդալ*. -веселѣть *չ. ուրախանալ, խնդալ, ուրախ տեսք, կերպարանք ընդունել*:

Завесно́ва́ть (-ну́ю -ютъ) *չ. գարնանացնել, գարունը անցկացնել*:

Заве‖сти́ (-веду́- -ду́тъ), сти́сь *տ*. Заводи́ть, ся.

Заветша́ть *չ. հնանալ, մաշուել*:

За‖вечерѣть, ѣетъ, *չ. դէմք. երեկոյանալ, մըթնել, տարաժամել, մութը կոխել*. -вечеря́ть *չ. երեկոն անցկացնել*:

Завздо́рить (-рю -рятъ) *չ. սկսել կռուել, վիճել*:

Завздыха́ть *չ. սկսել հառաչել, հոգոց հանել*:

Завзя́тый *ած*. 1, *քաջ, անվեհեր, աներկիւղ, խրոխտ, անընկճելի*. 2, *իսկ, իսկական, բուն*. 3, *մոլի, մոլեռանդ, թունդ*:

За‖вива́ніе *չ. ոլորելը, հիւսելը, խուճուճ դարձնելը*. -вива́ть, -ви́ть *ն*. 1, *ոլորել. հիւսել, խուճուճել*. з. во́лосы, ку́дри, усы́; *з. бо́роду *հունձը, դաշտային աշխատանքը պրծնել*. з. го́ре верёвочкой *կամ* ремешко́мъ *դարդերի վշտանալուց, տխրելուց, ձախորդութիւնը մոռացութեան տալ*. з. гнѣздо́ *բոյն շինել, բոյն դնել*. з. ко́конъ *շերամ. բոժոժ շինել*. -ся 1, *անդր. ա, ոլորուել, գալարուել, մի բանի շուրջը փաթաթուել հիւսուել, խուճուճ դառնալ*. во́лосы у него́ надо лбомъ зави́лись ку́дрями; хмель завива́ется вокру́гъ тычи́ны; *բ, բոյն դնել*. 2, *էր. ոլորուել, գալարուել, հիւսուել*. -ви́вистый *ած. ոլորուող, գալարուող. արագ պտտուող*. -ви́вка *ի*. 1, *ոլորելը, խուճուճելը*. з. ко́кона *շերամ. բոժոժ դնելը կամ շինելը*. 2, *ոլորուելը, մի բանի շուրջը փաթաթուելը*. 3, *դանգուր, խուճուճ մազեր*. -вивно́й *ած*. 1, *ոլորուող, գալարուող*. 2, *ոլորելու, հիւսելու համար*. з—ы́я бума́жки *տ*. Папильо́тки; -ви́въ *ա. կախարդութիւն, հմայութիւն, որ անում են կտրտելով և կապկպելով հասկի (հասկահմայութիւն) կամ խոտի (խոտահմայութիւն) ծղօտը, ցօղունը*:

Зави́‖дки, докъ *ի. յ. նախանձ*. его́ беру́тъ, возьму́тъ з. *նա նախանձից բռնւում է, կը բռնուի*. -дливость *ի. նախանձոտութիւն, յաչաղանք, չարակամութիւն*. -дливый *ած. նախանձոտ, յաչաղկոտ, չարակամ*:

Зави́‖дный *ած. նախանձելի, *ընտիր, հրաշալի, սքանչելի*: З а в и́ д н о *մ. նախանձելի, *փառաւոր կերպով*: [ուից):

Завиднѣться *չ. սկսել երևալ, նշմարուել (հե-*

Зави́‖дованіе *չ. նախանձելը, յաչաղելը*. -довать (-дую -ютъ) *չ*. кому́, чему́ *մէկին, մի բանի նախանձել, յաչաղել*. въ э́томъ я ему́ не зави́дую—*այդ բանում, դորա համար*. з а в и́ д у ю щ і й *բյ. ած*. 1, *նախանձոտ, չարակամ, յաչաղկոտ*. 2, *կախողին, կարօտ, խանդակաթ*. -ду́щій=Зави́дующій.

Зави́‖дывать, -дѣть (-жу -дятъ) *ն. հեռուից տեսնել, նշմարել, նկատել*. -дѣться *չ. հեռուից նըշմարուել, երևալ, տեսնուել, նկատուել*:

За‖визжа́ть (-жу́ -жа́тъ) *չ. ռռնալ, բարձր աղաղակել, ճռնչել. բարձր բղաւել, ճռռալ, ճչալ, ճըթճըթալ*:

Завиле́цъ, льца́ *բս*. Chelidonium majus, *մեծ հողմափայտ (կանթեղխոտ, ծիծեռնախոտ)*:

Завиля́ть *չ. սկսել ագին պտոյտ տալ, պտըտեցնել (շան մասին)*. соба́ка завиля́етъ хвосто́мъ; *з. *կամ* з. хвосто́мъ *խորամանկութիւն բանեցնել, հնարքներ, խորամանկութեան դիմել*:

За‖винéніе *տ*. Обвинéніе; -вини́ть (-ню́ -ня́тъ) *տ*. Завиня́ть; -винти́ть (-чу́ -тя́тъ), ся *տ*. Зави́нчивать, ся; -винту́шка *ի. մեխ, ցցելու ‘շօփ’, փայտի կտոր*. -винче́ніе, -ви́нчиваніе *չ. պտուտակելը. պտտեցնելով ամրացնելը*. -ви́нченность *ի. պարկեշտութիւն, ամաչկոտութիւն, չխօսկանութիւն*. -ви́нчивать, -винти́ть *ն*. I. *պտուտակել, պտոյտ տալով ամրացնել. լարել, պրկել. *մէկի ուշադրութիւնը լարել, հետաքրքրութիւնը շարժել, գրգռել*. -ся *էր. պտուտակուել, պտոյտ տալով ամրացնուել. լարուել*. II. *սկսել վինտ խաղալ*:

За‖виня́ть, -вини́ть *տ*. Обвиня́ть, -вини́ть.

За‖вира́льный *ած. սուտ, կեղծ, անմիտ, անհեթեթ*. *з—ыя идéи *ազատ, յեղափոխական մտքեր, ‘յղացումներ’*. -вира́ть, завра̀ть *չ. սկսել սուտ, անհեթեթ, անհամ բաներ դուրս տալ, շաղակրատել*. -ся *անդր. սուտ մէջ բռնուել. շատ սուտ, անհեթեթ, անհեթեթ բաներ խօսել*. -виро́ха *հոր. ստախօս*.

փուչ, անհամ բաներ դուրս տուող այր, կին. -вирýха ի. 1, գւռկ. բուք, փոթորիկ. 2, խառնակութիւն, շփոթ, անկարգութիւն, աղմուկ:

Зави́‖симость ի. կախում, ստորադրելութիւն. быть у когó въ з--и; -симый ած. կախուած (մէկից կամ մի բանից), ստորադրուած (մէկին կամ մի բանի):

Зави́‖стецъ, стца տ. Зави́стникъ; -стливость ի. նախանձոտութիւն, յաչաղկոտութիւն. -стливый ած. 1, նախանձող, նախանձոտ, յաչաղկոտ. 2, եռանդոտ, եռանդուն, գլխաբորբոք. з. на что-нибудь մի բանի սիրահար, ձգտող, նկրտող մի բան ձեռք բերելու. 3, նախանձելի. նախանձ գրգռող:

Зави́‖стникъ ա. -стница ի. չարակամ, նախանձոտ, յաչաղկոտ այր, կին, ոսոխ. -стничество չ. նախանձոտութիւն, յաչաղկոտութիւն, չարակամութիւն. -стность ի. փութաջանութիւն, եռանդոտութիւն. -(зáви́)стный, -стнóй ած. 1, նախանձոտ, յաչաղկոտ, չարակամ. 2, նախանձելի. 3, գւռկ. փութաջան, եռանդոտ, հոգս տանող, ջանասէր, աշխատասէր:

Зáвисть ի. նախանձ, յաչաղանք, չարակամութիւն. лопнýть отъ з—и նախանձից տրաքուել, բրդուել. з. къ комý, къ чемý նախանձ մէկի, մի բանի վերայ:

Зави́сѣть (-ви́шу -сятъ) չ. 1, отъ когò կամ отъ чегó-нибудь մէկից կամ մի բանից կախուած լինել, կախում ունենալ. счáстье зави́ситъ не отъ насъ, а отъ Бóга; 2, գւռկ. вотъ въ чёмъ дѣло зави́ситъ ահա թէ բանը ինչումն է:

За‖витóй, -ви́тый ած. ոլորած, հիւսած. գանգ, խուճուճ. -витóкъ, ткá ա. 1, խուճուճ, գանգ մազեր, գանգուր, խոպոպիք. з а в и т к и́ յ. ա, արուեստական կերպով ոլորած, խուճուճած մազեր, խոպոպիք. բ, տ. Папильóтки; 2, ճարտարապ. ոլորուածք, գալարուածք. з. капитéли; ոլորտ (ստորադրութեան, գեղազարդութեան). 3, առհ. ոլորաւոր, պատատուող կամ ոլորուած, պատատուած բան. բս. Hepatica tribola, երեքբլթեան լերդատունկ (քարհիճայ):

Завитóчекъ, чка ա. նւզ. տ. Завитóкъ.

За‖витýха ի. բուք. -витýшка ի. 1, տ. Завитóкъ, -тóчекъ; 2, փորագրած կամ քանդակած և կամ գըրչով գրած ոլորտ:

Зави́ть (-вью́ -ю́тъ), ся տ. Завивáть, ся.

Зави́хриться (-рюсь -рятся) չ. 1, փոթորկի պէս պտտուել, մրրկի պէս, խիստ արագ ընթանալ, սլանալ. 2,* շռայլութեան, զեղխութեան անձնատուր լինել. 3, կորչել, չքանալ, անյայտանալ:

За‖владѣвáть, -владѣ́ть չ. чѣмъ մի բան յափշտակել, գրաւել, 'կուլթել', զօռով առնել. -владѣ́ніе չ. յափշտակելը, 'կուլթելը', զօռով գրաւելը. յափշտակութիւն, գրաւում:

Завле‖кáніе չ. հրապուրելը, գրաւելը. գայթակղեցնելը. -кáтельность ի. հրապոյր, հրապուրանք, գրաւչութիւն. -кáтельный ած. հրապուրիչ, գրաւիչ, գայթակղեցնող:

За‖влекáть, -влéчь (-екý -чёшь -кýтъ) ն. հրապուրել, գրաւել, հրապուրելով մի բանի մէջ գըցել, գայթակղեցնել. з. когó въ заговóръ, въ сообщество, въ шáйку; -ся անդր. հրապուրուել, գրաւուել, գայթակղուել. -влечéніе տ. Завлекáніе.

За‖вóдецъ, дца -вóдинъ ա. նւզ. պստիկ գաւօդ, գործարան. -(зà)вóди́на տ. Зáводь; -вóдина ի. յւհլ. տ. Завóдъ.

Заводи́тель ա. 1, ձեռնարկու, -կող, հիմնող, հիմնարկող. 2, հիմնարկութեան տէր, պահող:

Заво‖ди́ть (-жý -óдятъ), завести́ ն. 1, տանել, վարել, հեռացնել[ով մի տեղ, փորձանքի մէջ գցել]. э́то завелó бы меня́ далекó այդ ինձ շատ հեռու կը տանէր. з. когó въ долги́; 2, յետ տանել, յետ գցել. емý завели́ рýки назáдъ и связáли крестъ-на-крестъ; з. глазá աչքերը պըտտուտ ածել, աչքերը խփել, փակել. 3, սարքել (з. маши́ну), լարել, բան գցել (з. часы́), լծել (з. сохý), ձգել, գցել (з. ýдочку, нéводъ), *з. пружи́ну երկար խօսակցութիւն, զրոյց, կռիւ առաջացնել. з. рѣчь о чёмъ մի բանի վերայ խօսք վայր գցել. з. когó-нибудь ա՛յ և է մէկին գրգռել, բարկացնել, կատաղեցնել, չարչարել. 4, հիմնել, առաջացնել, հաստատել. з. селéнія, сады́; з. у себя́ собáкъ, котóвъ շներ, կատուներ պահել. з. обыкновéніе, привы́чку, поря́докъ, -дки; з. сношéнія, отношéнія съ кѣмъ-либо մէկի հետ յարաբերութեան մէջ մտնել, յարաբերութիւն սկսել. з. дрýжбу, знакóмство, перепи́ску съ кѣмъ-либо մէկի հետ բարեկամանալ, ծանօթանալ, թղթակցել, բարեկամութիւն, ծանօթութիւն, թղթակցութիւն սկսել. з. гóлосомъ սկսել երգել. 5, գւռկ. սկսել. з. пѣсню, игрý, пиръ, ссóру, дрáку եւն. -ди́ться, завести́сь 1, էր. շինուել, սարքուել, լարուել. բան գցուել. часы́ завóдятся посýточно; 2, անդր. յայտնուել, երևալ. առաջանալ, սկսուել. насѣкóмые завели́сь; отъ пы́ли завóдится моль; мéжду ни́ми завелáсь связь, дрýжба, перепи́ска; 3, անդր. чѣмъ-нибýдь մի բան ձեռք բերել, ստանալ. з. хозя́йствомъ տնտեսուել, տնային պիտոյքները գնել, ձեռք բերել:

Завó‖дишко ա. նխտ. աղորմելի, անպիտան գաւօդ, գործարան. -дище ա. յւհլ. մի ահագին գաւօդ, գործարան:

Завó‖дка ի. I. 1, լարելը. з. часóвъ; մի բանի մէջ դնելը, անցկացնելը. кольцó для з—и въ негó ключéй; II. նեղ և ծանծաղ գետախորշ, գետածոց. -дный, -днóй ած. 1, ունևոր, հարուստ. з. садàми и огорóдами; 2, տ. Завóдскій; з—ая лóшадь, з. конь պահեստի ձի, երիվար. 3, սարքելու, լարելու. з—ая пружи́на часóвъ; з—ыя игрýшки սարքաւոր խաղալիքներ (որոնք բանում են, երբ որ լարում են). з—óй чижъ վարժեցած սարեակ, որն ուրիշ սարեակներին գրաւում վարմի մէջ է գցում:

Заводо‖владѣ́лецъ, льца ա. գաւօդատէր, գործարանատէր. -держáтель, -содержáтель ա. -содержáтельница ի. գաւօդ, գործարան պահող այր, կին:

Завó‖дскій ած. գաւօդի, գործարանի, -նական. з—ая лóшадь գործարանում բուծած, տոհմիկ ձի. -дчикъ ա. 1, գործարանատէր (մեւզ. ձիու), գաւօդի տէր. կրթուած ձիապան. 2, պատճառ, հեղինակ. з. безпоря́дковъ; з. всемý злу; 2, (ձիարոյծ գործարաններում) մատակախառ ձի, յամատակ, 'այղր', 'էղիր'. -дчица ի. պատճառ, հեղինակ. з. всѣхъ прокáзъ; з. всемý злу.

Завóдъ ա. 1, սկիզբ (գործի), գործ. կարգ, սովորութիւն. заводи́ть з—ы գործ սկսել. э́того въ з—ѣ нѣтъ, нé было այդ սովորութիւն չէ, այդ երբէք սովորութիւն չէ եղել. 2, գա-

վօղ, գործարան, ՙքարխանայ՚. 3, բուծում. кóнскій, кóнный կմ лошади́ный з. ձիարուծութիւն: 4, քանակութիւն, թիւ. տպգր. դավօղ (1200 օրինակ միանգամից տպագրած գրքի):

За́водь ի. 1. կարգ, սովորութիւն, գործածութիւն. этого и въ за́водяхъ нé было; II. 1, խաղաղ տեղ, խորշ (գետի կմ լճի ափին). 2, ջրով լցուած փոս դաշտերում, որ ամառը ցամաքում է:

За́во́дье չ. ծանծաղ գետախորշ:

За‖воевáніе չ. 1, նուաճելը. նուաճում, գրաւում. 2, նուաճած, գրաւած երկիր, հող. -воевáтель ա. -воевáтельница ի. նուաճող, աշխարհակալ այր, կին. -воевáтельный ած. նուաճողական, աշխարհակալական. -воёвываніе չ. նուաճելը, գրաւելը. -воёвывать, -воевáть (-вою́ю -ютъ) ն. նուաճել. з. странý, óбласть, гóродъ; з. сéрдце, счáстье, симпáтіи; -ся էր. նուաճուիլ, գրաւուիլ:

Завожделѣ́ть չ. ցանկանալ, փափագիլ, տենչալ:

За‖вози́ть (-жý -вóзятъ), -везти́, -вáживать ն. 1, [ճանապարհորդելիս, գնալիս] իւր հետ բերել, տանել (կառքով, սայլով), վարել, ածել. отправля́ясь къ своéй дóлжности, онъ завози́лъ женý къ ея́ отцý; 2, բազմութեամբ բերել, կրել. 3, з. я́корь խարիսխը որոշ տարածութիւն գետն 'ի վեր քարշել, տանել (նաւակով). -вози́ться, -везти́сь էր. 1, բերուիլ. пи́сьма завóзятся сюдá по пути́ проѣ́зжими; գետն 'ի վեր քարշուիլ (խարիսխ, նաւի մասին). 2, տեղափոխուիլ. 3, անդր. սկսել դէս ու դէն ընկնիլ, շարժուիլ, ժաժ գալ. յուզուիլ. «рáзныя сомнѣ́нія *завози́лись въ его́ душѣ́». 4, անդր. յապաղիլ, ՙմլոլ անել՚. -вóзный ած. 1, ուրիշ տեղից, երկրից բերած, բերովի. 2, з. я́корь նաւաքարշ խարիսխ (որի օգնութեամբ նաւը գետն 'ի վեր են քարշում). з—ая лóдка նաւակ, որ завóзный я́корь-ը գետն 'ի վեր տանելով, ջուրն է գցում. 3, з. базáръ ուրիշ տեղերից բերած ապրանքներով, մթերքներով լիք, խիտ հարուստ շուկայ. з—ое дѣ́ло ապրանքներ կրելու թունդ ժամանակ, գործ:

За́‖вóзня ի. ապրանքատար կմ խարսխատար գետանաւ (տ. Завóзная лóдка) -вóзчикъ ա. գիւղական, որ ջաղացն աղուն է տարել աղալու:

Завóзъ ա. 1, առատութեամբ կրելը, բերելը. մատակարարում. 2, գետն 'ի վեր տանելը, վարելը, քարշելը (նաւը):

За‖вóй ա. 1, ոլորելը, հիւսելը. 2, ոլորած, հիւսած բան. ոլորտ, գալարուածք:

Заво‖лáкиваніе չ. 1, քարշելը, քարշ տալով տանելը. 2, ծածկելը, պատելը. -лáкивать, I. заволáкивать, -лóковать -локáть -лóчь (-локý -чёшь -кýтъ), -локнýть ն. 1, քարշել, քարշ տալով տանել. 2, ծածկել, պատել, պօղել. рѣкá нанóсомъ заволáкиваетъ берегá; óблако, тýча, тумáнъ заволáкиваетъ нéбо, сóлнце, мѣ́сяцъ; сонли́вость заволáкиваетъ его́ глазà քնափութիւնը խփում է նորա աչքերը. *շլացնել. -лáкиваться, -лóчься, -локнýться ծածկուիլ, պատուիլ, պօղուիլ. нéбо заволàкивается тýчами; II. (заволáкивать, -лочи́ть) ն. 1, մաշել, կեղտոտել (զգեստը). 2, քաշքշել, ձգձգել (գործը):

Завóлжье չ. անդրվօլգայեան երկիր (Վօլգա գետի միջին և ստորին, ձախակողմեան աւազանը):

Заволновáть (-нýю -ютъ) ն. սկսել յուզել, խառնել, *գրգռել, ալէկոծել. -ся անդր. սկսել ալէկոծուիլ, յուզուիլ. заволновàлось мóре, óзеро; *գրգռուիլ, խռովիլ, վրդովուիլ:

Иго́‖лка ի. 1, նւզ. պստիկ ասեղ, ասեղ. быть какъ на *и—ахъ այրուել-փոթոթուել, տանջուել. пуска́ть и—и փրփրել (գինու մասին.) какъ съ и—и թափ թազայ, բոլորովին նոր. пла́тье съ и—и; 2, բս. Stipa capillata, փետրախոտ. **-лочка** նւզ. պստիկ ասղուկ. **-лочникъ**, **-лочница** 1, տ. Иго́льщикъ, -щица; 2, գւռկ. դծուծ, ժլատ այր, կին. **-лочный** ած. ասղուկի, ասղուկների(ց). **-льникъ** ա. 1, ասղարան, ասեղների տուփ. 2, փշաւոր մացառ. 3, բս. Dianthus deltoides, բրգաձև շահոքրամ. **-льничекъ**, чка նւզ. տ. Иго́льникъ 1; **-льный** տ. Игли́ный; **-льчатый** ած. ասղաձև, ասղակերպ. բս. փշաւոր, մախաթաւոր. **-льщикъ** ա. ասեղնագործ. **-льщица** ի. 1, ասեղնագործ կին. 2, ասեղնագործի կին։

Игоно́‖сецъ, сца ա. լծակիր, *ստրուկ, տառապեալ, բազմաչարչար մարդ. **-сный** ած. լծակիր, լուծ կրող, տառապող։

Иго́‖ристый ած. խաղասէր. **-рка** նւզ. տ. Игра́; **-рный** ած. խաղի, խաղա—. и. домъ; **-рочка** նւզ. տ. Иго́рка.

И́го‖тка նւզ. **-ть** ի. սանդ, 'հաւանք'. **-тный** ած. սանդի, 'հաւանքի'։

Иг‖ра́ ի. 1, խաղ. и. въ ка́рты թղթախաղ. и. въ ба́бки վէգախաղ. аза́ртныя и́гры; мнѣ не нра́вится и. э́того актёра, э́того піани́ста; и. словъ բառախաղութիւն. 2, խաղաթուղթ. одна́ и. картъ; 3, խաղալու ժամանակ տարածը կամ տանուլ տուածը. **-ра́ла** հ-ը. խաղող, խաղացող այր, կին. **-ра́-**

лище չ. խաղալիք. человѣкъ * и. страстей; **-ра́льный** ած. խաղի, խաղալու. и—ыя ка́рты, ко́сти; **-ра́ніе** չ. խաղալը, ածելը. **-раный** բյ. ած. խաղի ժամանակ գործ ածած, խաղալուց մաշուած. и́—ыя ка́рты; **-ра́ть** չ. և ն. խաղալ. и. въ ка́рты, въ ша́хматы, въ мя́чикъ, въ ку́клы; и. по копе́йкѣ, по́ двѣ копе́йки մի, երկու կոպէկով խաղալ. и. на де́ньги փողով խաղալ. румя́нецъ игра́етъ у нея́ на щека́хъ; *и. кому́ въ ру́ку մէկին խրախուսել, մէկի ՝սրտից ջուր խմել՝, и. на скры́пкѣ, на фле́йтѣ, на трубѣ́, на роя́лѣ ջութակ, ֆլէյտ, փող, դաշնամուր ածել. и. пѣ́сню երգ երգել, նուագել. и. траге́дію, коме́дію; и. гла́вную роль; **-ре́цкиі** ֆ. խաղացողին վայել ձևով. **-ре́цкій** ած. խաղացողի, խաղացողին յատուկ. и—ія уло́вки; **-ре́цъ**, а́ ա. **1**, հնց. խեղկատակ, միմոս, ծաղրածու, դերասան. **2**, անտային օգլի մի, գև. **-ри́вость 1**, չարաճճիութիւն. **2**, կենդանութիւն, ժրութիւն, կայտառութիւն, աշխոյժ. **-ри́вый** ած. **1**, չարաճճի, ուրախ. и—ое дитя́; **2**, կենդանի, ժիր, կայտառ, վառ, վառվռուն, աշխոյժ. и. умъ; и—ое воображе́ніе; **-ри́стый** ած. փրփրուն. փրփրացող, փրփրադէզ (խմիչքների մասին). **-ри́шка** է. նվաս. ողորմելի, դատարկ, անհամ խաղ. **-ри́ща** է. յաւ. մեծ, ահագին խաղ. **-(и́г)рище** չ. ժողովրդական խաղ, համախմբում պարով և երգով. **-ро́къ**, а́ ա. **-рочи́ха** է. խաղացող, ածող, նուագող այր, կին. խաղամոլ, խաղալու, ածելու սիրահար այր. կին. **-ру́нчикъ** նւզ. **-ру́нъ**, а́ ա. **-ру́нья** է. չարաճճի, խաղըլկան այր, կին. **-ру́шечка** ն—վ ա. Игру́шка; **-ру́шечникъ** ա. խաղալիքներ շինող կամ վաճառող **-ру́шечница** է. **1**, խաղալիքներ շինող կամ վաճառող կինարմատ. **2**, խաղալիքների արկղ. **-ру́шечный** ած. խաղալիքի, -քների. **-ру́шка** է. խաղալիք, խաղալու իր. **-рывать** ա. Игра́ть.

Игуа́на է. կնդ. Iguana tuberculata, հատարակ իգուան, մողէզ, խլէզ:

Игу́‖менскій ած. վանահայր. **-менство 1**, վանահայրութիւն. մայրապետութիւն. **2**, վանք, կուսանոց. **-менствовать** (-ствую -ютъ) չ. վանահայրութիւն, մայրապետութիւն անել. **-менъ** ա. վանահայր. **-менья** է. մայրապետ (կուսանոցի), վանամայր:

Идеа‖лизи́ровать (-рую -ютъ) ն. իդէալացնել, -լականացնել. **-ли́змъ** ա. փիլ. իդէալականութիւն, գաղափարականութիւն (հմմտ ա. Реали́змъ); **-ли́стъ** ա. **-ли́стка** է. իդէալիստ, գաղափարական այր, կին. **-лъ** ա. իդէալ, վեհ, վսեմ գաղափար. **-льность** է. իդէալ, գաղափարական, վերացական լինելը. վեհութիւն, վսեմութիւն. **-льный** ած. իդէալական, գաղափարական, վերացական, վեհ, վսեմ, կատարեալ, գերականական:

И‖де́йный ած. գաղափարի, -ների. **-деологи́ческій** ած. գաղափարախօսական. **-деоло́гія** է. (յն.) փիլ. գաղափարախօսութիւն. **-деоло́гъ** ա. գաղափարախօս, -բան. **-де́я** է. (յն.) գաղափար, միտք, հասկացողութիւն. руководя́щая и. առաջնորդող գաղափար:

Идил‖ли́ческій ած. հովուերգական. **-лія** է. (յն.) հովուերգութիւն (թեթև վիպական բանաստեղծութիւն, որի նիւթը առնուած է գիւղական պարզ կեանքից):

է գիւղացիական հովիւների, ձկնորսների, շինականների և այլն. գիւղական պարզ կեանքից):

Идіо́мъ ա. **1**, առանձնայատկութիւն (բարբառի). **2**, բարբառ:

Идіопа‖ти́ческій ած. բժ. առանձնակրական. **-тія** է. (յն.) բժ. առանձնակրութիւն (առանձին, ցաւ, որից հիւանդութիւն մարմնի ոչ և է անդամի):

Идіосинкра́зія է. (յն.) բժ. բնածին զգացողութիւն, բնածին համակրութիւն կամ հակակրութիւն:

Идіо‖ти́змъ ա. իդիոտիզմ (որ և է լեզուին յատուկ անթարգմանելի դարձուածք, օր. «онъ соба́ку съѣлъ» կամ թէ հայերէն՝ «քո բանը բուրդ է»). **-тка** է. խենթ, թուլամիտ, ապուշ, խօլ աղջիկ, կինարմատ. **-тство** չ. խօլութիւն, խենթութիւն, ապուշութիւն. **-тъ** ա. խենթ, թուլամիտ, ապուշ, խօլ մարդ:

Идоло‖поклоне́ніе չ. կուռքերին երկրպագելը. **-покло́нникъ** ա. **-покло́нница** է. կռապաշտ, -ուհի. **-покло́нничать** չ. կռապաշտութիւն անել, կուռքերին երկրպագութիւն տալ, *ստրկանալ, քծնելով աշխատել հաճոյանալ. **-покло́ннический** ած. կռապաշտական **-покло́нничество** չ. կռապաշտութիւն. **-покло́нничествовать**, **-покло́нствовать** (-ствую -ютъ) ա. Идолопокло́нничать; **-покло́нство** չ. կռապաշտութիւն. **-служе́ніе** չ. կուռքերի պաշտօն, կռապաշտութիւն. **-служи́тель** ա. **-служи́тельница** է. կռապաշտ, -ուհի, կռապարիշտ, -րշտուհի. **-тво́рецъ**, рца ա. կուռքեր շինող:

Идо‖лъ ա. կուռք. **-льница** է. կռատուն, մեհեան. **-льскій** ած. կուռքի, կուռքերի:

Идти́ ա. Итти́.

Иждив‖а́ть, -ви́ть, -вля́ть ն. եկ. ս. ծախսել, մսխել. **-ве́ніе** չ. ծախս, մսխել. „И жилъ Па́велъ цѣлыхъ два го́да на своёмъ и—іи Եւ եղև զերկեամ մի բովանդակ իւրով վարձու (Գործք, 28_{30}). **-ви́ть** (-влю́-вя́тъ), **-вля́ть** ա. Иждива́ть.

И́же եկ. սլ. **1**, դեր. որ. **2**, չ. եկ. սլաւ. այբբենի մէջ и տառի անունը: [(V) անունը:

И́жица է. սլաւ այբբենի վերջին տառի

Изба́ է. խրճիթ, հիւղ, խուղ. чёрная կմ курна́я и. խրճիթ առանց ծխնելոյզի. бѣ́лая и. խրճիթ ծխնելոյզ ունեցող վառարանով. кра́сная и. մեծ խրճիթ մեծ պատուհանով. су́дная и. հնց. դատարան:

Изба‖ви́тель ա. **-ви́тельница** է. փրկող. թափող, ազատող այր, կին. **-ви́тельный** ած. փրկող, թափող, ազատող **-вить** (-влю -вятъ), **ся** ա. Избавля́ть, ся; **-вле́ніе** չ. **1**, ազատելը, փրկելը, թափելը. **2**, ազատութիւն, փրկութիւն. **-вленникъ** ա. **-вленница** է. փրկուած, թափուած այր, կին. **-вля́ть**, -вить ն. **1**, ազատել, թափել. избáви Богъ! Աստուած փրկէ, ազատէ. избáвьте меня́ отъ э́того человѣ́ка; и. кого́ отъ опа́сности; и. кого́ отъ безпоко́йства; **2**, գւռկ. պարպել, դատարկել, մաքրել. и. ведро́, ка́дку; **-ся** ներ. отъ кого́, чего́ մէկից, մի բանից ազատուել, թափուել, պրծնել. и. отъ свои́хъ кредито́ровъ; и. отъ опа́сности, отъ наказа́нія; **-ву́шка** է. խրտուիլակ (օր. թռչուններին խրտնեցնելու համար):

Изба‖лова́ніе չ. երես տալը, փայփայելը, երես տալով փչացնելը. **-лова́ть** (-лу́ю -ютъ) **ло́вывать** ն. փայփայել, երես տալ, երես տալով սաստկացնել, փչացնել. **-ся** անդր. երես առնել, փչանալ:

Избё‖нка է. Նւզ. Նխտ. ողորմելի հիւղ, խրճիթ. **-ночка** է. Նւզ. հիւղիկ, պստիկ խրճիթ:

Избе‖рега́ть, -ре́чь (-гу́-жёшь-гу́тъ) ն. խնայել, յետ գցել:

Изби‖ва́ніе չ. 1, սոսկալի ծեծելը, ջարդելը, ջարդուփշուր անելը. 2, սպանելը, կոտորելը. **-ва́ть**, -ть ն. 1, սոսկալի ծեծել, կոշկոճել, ջարդել, ջարդու փշուր անել, կոտրտել. 2, սպանել, կոտորել. 3, շատ խաղալով, ածելով մաշել, փչացնել (երաժշտական գործիքը.) **-ся** անդր. կոտրտուել, ջարդ ու փշուր ըլել. մաշուել (շորի ստառի մասին):

Из‖бира́емость է. ընտրելի լինելը. **-бира́ніе** չ. ընտրելը, ընտրութիւն, ընտրողութիւն. **-бира́тель** ա. **-бира́тельница** է. ընտրող այր, կին. **-бира́тельный** ած. ընտրողական, ընտրելու, ընտրութեան. и. го́лосъ; и—ое собра́ніе, и. комите́тъ; **-бира́тельство** չ. ընտրութիւն, ընտրելը. **-бира́ть**, -бра́ть ն. ընտրել, ջոկել. и. кого́ въ чле́ны о́бщества; и. вое́нное по́прище զինուորական ասպարէզ ընտրել (իբրև պաշտօն). и́бо мно́го зва́ныхъ, а ма́ло и́збранныхъ Զի բազումք են կոչեցեալք՝ և սակաւք ընտրեալք (Մատթ. 22_{14}):

Из‖би́тіе չ. կոտրտելը, ջարդ ու փշուր անելը. **-би́тость** է. անկենդանութիւն, *անհամութիւն. и. мы́сли; **-би́ть** (изобью́—ю́тъ), **-ся** տ. Избива́ть, ся.

Изби́‖шка է. Նխտ. ողորմելի խրճիթ. հիւղ. **-ща** է. յւմէ. ահագին խրճիթ, հիւղ:

Избіе́ніе չ. ջարդ, կոտորած. и. младе́нцевъ въ Виѳлее́мѣ; и. армя́нъ въ Константино́полѣ въ 1896 г.

Из‖блева́ніе չ. դուրս թքելը, որձկալով դուրս ժայթքելը, փսխելը. **-блёвывать, -блева́ть** (-блюю́ -ю́тъ) ն. դուրս թքել, դուրս ժայթքել, որձկալով դուրս թափել, փսխել:

Из‖близи, -бли́зка մ. 'ի մօտոյ, մօտիկուց:

Изб‖но́й ած. խրճիթի, հիւղի. **-ня́къ**, а́ ա. սառոյց, շինութեան փայտ (մախաթառր ծառից):

Избо‖да́ніе չ. հարու տալով, խեթկելով ջարդելը. սպանելը. **-да́ть** ն. հարու տալով, խեթկելով ջարդել, սպանել.

Избожи́ться (-жу́сь -жа́тся) անդր. խիստ, սաստկապէս երդուել:

Из‖бо́й ա. տ. Изби́тіе; **-бо́ина** է. 1, փոս ընկած, փոս գցած տեղ, փոս (օր. ճանապարհի վերայ) 2, ամանի վերայ զարկից գոյացած փոս, խորոչ. 3, հարուածից կապտած տեղ. **-бо́йна** է. քուսպ, կուսպ (ձիթաբեր հատիկների). **-бо́йный** ած. ծեծի, ջարդ ու փշուր անելու. и. па́рень տուրուդմփոցի սիրահար. и. това́ръ կէս սաղ, կէս ջարդուած ապրանք. **-бо́йня** է. ծեծ, կռիւ. **-бо́истый** ած. խորտուբորտ, փոս ընկած տեղերով:

Избо́рникъ եկղ. տ. Избра́нникъ.

Избо‖ра́зживаніе չ. ակօսելը, ակօս քաշելը. **-ра́зживать, -розди́ть** (-зжу́ -здя́тъ) ն. ակօսել, ակօսներ քաշել. вре́мя изборозди́ло его́ чело́; **-рождённость** է. ակօսուածութիւն:

Избоче́‖нивать, -нить (-ню -пятъ) ն. ծռել, թեքել. **-ся** անդր. կողքի վերայ թեքուել, ծռուել, յենուել (ձեռքով):

Из‖бра́живаніе չ. շրջելը. **-бра́живать**, -броди́ть ն. 1, շրջել (օր. մի ամբողջ քաղաք), տակն ու վրայ անել. 2, տրորել, կոխճոտել, ոտնատակ տալ (դաշտեր, մարգեր). 3, ոտքով միանգամից բոլոր ձկները բռնել. 4, *խենթ բաներ բռնել, չարաճճի բաներ անել:

Избра́жничать ն. խմել, խմելով վատնել. **-ся** անդր. հարբեցողութեան անձնատուր լինել, փչանալ:

Из‖бра́ніе չ. ընտրելը, ընտրութիւն. **-бра́нникъ** ա. **-бра́нница** է. ընտրուած, ջոկուած այր, կին. **-бра́нно** մ. ընտրութեամբ, ընտրողաբար. **-бра́нушка** հոր. փղըշ. սիրելի, հոգեակ. **-бра́ть** (-беру́ -ру́тъ), **ся** տ. Избира́ть, ся.

Изброди́ть (-жу́ -дятъ) տ. Избра́живать.

Избры́‖зганіе, -згать, ся, -згиваніе, -згивать, ся տ. Испры́скапіе, -скать, ся.

Избу‖шёнка, -шечка, -шка է. Նւզ. պստիկ խրճիթ, հիւղիկ:

Избы‖ва́ніе չ. հեռացնելը, ոչնչացնելը. խուսափում. **-ва́ть**, -ть ն. 1, кого́ մէկին հեռացնել, ոչնչացնել, մէկից ազատուել. 2, что մի բանից խուսափել. 3, գերազանցել, գերակշռել. расхо́дъ избыва́етъ дохо́дъ; 4, գւռկ. ծախսել, մի բանից զրկուիլ. 5, չ. մնալ, աւելանալ. **-вно́й, -вчивый** ած. որը կարելի է հեշտութեամբ հեռացնել, ոչնչացնել:

Избы́‖токъ, тка ա. **-точекъ**, чка Նւզ. առատութիւն, լիութիւն. աւելորդ մնացածը, յաւելուած, մնացորդ. у него́ во всёмъ и. Նա ամեն բան լիուլի ունի. жить въ и—ткѣ; отъ избы́тка се́рдца уста́ глаго́лютъ 'ի յաւելուածոյ սրտի խօսի բերան (Մատթ. 12_{34}) **-то́чествіе, -то́чество, -то́чествовать** (-ствую -ютъ) տ. Изоби́ліе, -би́ловать; **-то́чность** է. տ. Избы́токъ; **-то́чный** ած. առատ, շատ, աւել մնացող: **-то́чно** մ. առատապէս. լիովին:

Избы́ть (избу́ду -бу́дутъ) տ. Избыва́ть.

Из‖бѣга́ніе չ. 1, (-бѣга́ніе) խուսափելը, խոյս տալը, խորշելը. 2, (-бѣганіе) շատ ման գալը, շրջելը, վազվզելը. **-бѣга́ть** 1, (-бѣга́ть); **-бѣ́гнуть, -бѣжа́ть** (-бѣгу́ -жи́шь -гу́тъ) **-бѣ́чь** (-бѣгу́ -гу́тъ) ն. кого́, чего́ մէկից, մի բանից խուսափել, խոյս տալ, խորշիլ, փախչիլ. и. ссо́ры; судьбы́ свое́й не избѣ́гнешь; всѣ избѣга́ютъ э́того человѣ́ка; 2, (-бѣгать) ն. շրջել, տակն ու վրայ անել. я избѣ́галъ весь го́родъ, иска́вши его́; **-ся** անդր. շատ վազելուց յոգնել, վաստակել. **-бѣжа́ніе** տ. Избѣга́ніе 1; во и. непрія́тностей անախորժութիւններից, անհամութիւններից խուսափելու համար. **-бѣ́жный** ած. խուսափելի:

Избѣ́ла մ. սպիտակաւուն, սպիտակին տալով:

Избяно́й տ. Избно́й.

Изва́‖да, -дка է. 1, փայփայելը, երես տալը. 2, սովորութիւն, անկրթութիւն, խեռու-

թիւն. **-живать**, **-дить** (-жу -дятъ) ն. փայփայել, երես տալ, փչացնել։

Из‖вáливать, **I.** (-вáливать, **-валить** (-лю́ -лятъ) ն. 1, դուրս գցել, դուրս թափել, դուրս ածել. 2, տապալել, գլորել, շուռ տալ. **II.** (-вáливать, **-валя́ть**) ն. գլորելով, թաւալելով, շուռ ու մուռ տալով կեղտոտել, աղտոտել։

Извá‖ра է. **1**, գիրտ, մրուր, տկնուցք (գարեջուր, կվաս քաշելիս). **2**, տաշտ, տաշտակ. **-ре́ніе** ,**-риваніе** չ. լաւ եփելը. **-ривать**, **-ри́ть** (-рю́ -ря́тъ) ն. լաւ եփել, այնքան եփել, որ քրքրուի. **-рки**, рковъ ա. յ. քափ (եփելու ժամանակ). **-рно́й** ած. եփած. **-рчивый** ած. հեշտութեամբ եփուող, քրքրուող։

Изва‖я́ніе չ. **1**, քանդակելը, փորագրելը. **2**, քանդակ, քանդակած պատկեր, անդրի. **-я́ть** ն. քանդակել, քանդակագործել. փորագրել։

Изве‖де́ніе չ. **1**, դուրս հանելը, դուրս բերելը. **2**, ծախսելը, մսխելը. **3**, կործանելը, ոչնչացնելը, ջնջելը. **-дёнышъ** ած. վիժած (արհեստական միջոցներով)։

Извер‖гáніе տ. Изверже́ніе 1, 2; **-гáтель** ա. **-гáтельница** է. դէն, դուրս գցող, մերժող այր, կին. **-гáтельный** ած. դէն, դուրս գցող, մերժող. **-гáть**, **-гнуть** ն. **1**, ժայթքել. դէն գցել, խիստ անպէտք, անպիտան բան դուրս գցել. огнеды́шащая горá изверга́етъ плáмень; **2**, եկ. ս. վիժել. **3**, եկղ. պաշտօնանկ անել (հոգևորականին). **-(и́з-)гъ** ա. **1**, անագորոյն գազան, հրէշ. **2**, եկ. ս. վիժած, վաղածին. **-женецъ**, нца ա. պաշտօնանկ, տարագրած, աքսորած հոգևորական. **-же́ніе** չ. **1**, դուրս գցելը, դէն գցելը. **2**, պաշտօնանկ անելը (հոգևորականին). **3**, ժայթքում, վիժում (հրաբուխի). **4**, բժ. վիժում, որձկալը, դուրս թափելը, փսխում. տտադնացութիւն. твёрдое и. պինդ տտադնացութիւն, կղկղանք. и. мокро́ты; и. сѣмени; и. гно́я кáшлемъ; и. младе́нца վիժում։

Изверну́ть, ся տ. Извёртывать, ся.

Извёр‖стываніе չ. **1**, ուղղելը, հարթելը. **2**, հաշուելը, բաժանելը. **-стывать**, **-стáть** ն. **1**, ուղղել, հարթել. **2**, հաշուել, բաժանել, դասաւորել։

Извёр‖тъ ա. **-тка** է. խուսափում, հնարք. **-тливый** ած. ճարպիկ, ժիր. **-токъ**, тка ա. ոլորտ, պտոյտ (ճանապարհի). **-тываніе** չ. պտոյտ տալով, ոլորելով փչացնելը. **-тывать**, -ну́ть ն. պտոյտ տալով, ոլորելով փչացնել, քայքայել. **-ся** անդր. **1**, շուռ գալ, տապալուել (օր. նաւակի մասին). **2**, մի կերպ դուրս գալ, ազատուել. и. изъ бѣды́; **3**, մի կերպ կառավարուել, ‘եօլա գնալ‘. кое-кáкъ и. свои́ми сре́дствами; безъ зáйма ему́ тру́дно бу́детъ и—ну́ться.

Извéр‖чиваніе չ. գայլիկոնով, բուրղուով ծակելը. **-чивать**, **-тѣть** (-чу́ -тятъ) ն. գայլիկոնով, բուրղուով ծակել։

Извести́ (-веду́ -ду́тъ; անց. извёлъ -лá, о́), **сь** տ. Изводи́ть, ся.

Из‖вёстка է. կիր, այրած կիր. **-вестковáтый** ած. կրախառն, կրակերպ. **-вестко́вый** ած. կրային, կիր պարունակող. и. кáмень կրաքար. и. полево́й шпатъ կրապաթ. **-ве́стковый** ած. կրից բաղկացած, շինած. **-весткообжигáтельный** ած. կիր այրելու. и—ая печь; **-вестни́къ**, á ա. **1**, կրավաճառ. **2**, կրագործ, կիր այրող. **3**, կրատար մշակ. **-вестный** ած. կրային, կրի. и́. раство́ръ կրալուծոյթ. **-вестня́къ**, á ա. կրաքար. зерни́стый и. մանրամաղ կրաքար. пло́тный и. խիտ կրաքար. гру́бый и. խառնամաղ կրաքար. перви́чный и. նախնական կիր. **-вестняко́вый** ած. կրի, կրաքարի. **-весть** է. կիր. гидравли́ческая и́. ջրաբաշխական կիր. жжёная и́. այրած կամ անշէջ կիր. гашёная и. մարած կիր. ѣдкая и́. ուտիչ կիր. хлори́новая и́. քլորակիր։

Из‖ве́сть (-веду́ -ду́тъ) տ. Изводи́ть.

Извет‖шáть չ. հնանալ, խաթարուել, աւերուել. **-шáлый** ած. հնացած, աւերուած։

Изви‖вáніе չ. ոլորելը, պտտկաձև հիւսելը. **-вáть**, -ви́ть ն. **1**, ոլորել, պտտկաձև հիւսել. **2**. սղաւել (թելը, կանեփը մի բան հիւսելիս). **-ся** անդր. ոլորուել, գալարուել, ծալուել, ոլորաններ, պտոյտներ անել. змѣя́ извива́ется; тропи́нка, руче́й извива́ется; *и. передъ кѣмъ մէկի առաջ քծնուել, սողալ. **-вина** է. ոլորտ, պտոյտ, ծռուածք. **-вистый** ած. ոլոր մոլոր, պտոյտներով. и—ая доро́га; **-вно́й** ած. ոլորածոյ, գալարուն, գալարածոյ. **-вка** է. **-въ** ա. **1**, տ. Извива́ніе; **2**. ոլորտ պտոյտ։

Изви́‖ливаніе չ. ծալելը, ծռելը, կորացնելը. **-ливать**, -ля́ть ն. ծռել, ծալել, կորացնել. и сапоги́ կօշիկները ծռել (մաշ գալիս). **-ся** անդր. ծռուել, ծալուել, կորանալ. **-лина** է. **-линка** ծուռ գիծ, ծալուածք, ոլորտ, պտոյտ. рѣкá дѣлаетъ нѣсколько и—нъ; **-листый** ած. ծուռումուռ տեղերով, ոլորաններով, պտոյտներով, գալարուն, ոլոր-մոլոր. и—ая рѣкá; и—ая тропи́нка **-ля́ть, ся** տ. Изви́ливать, ся.

Изви‖не́ніе չ. ներելը. ներողութիւն, թողութիւն. проси́ть у кого́ извине́ніе; **-ни́тель** ա. **-ни́тельница** է. ներող, թողութիւն տուող, արդարացնող այր, կին. **-ни́тельность** է. ներողութիւն, ներելի, թոյլատրելի լինելը. **-ни́тельный** ած. **1**, ներելի, թողութեան արժանի. **2**, ներող, թողութիւն տուող. и—ое письмо́; **-ни́ть** (-ню́ -ня́тъ), **ся** տ. Извиня́ть, ся; **-нный** ած. մեղաւոր, մեղապարտ։

Изви́н‖чиваніе, **-че́ніе** չ. փչացնելը (պտուտակը). **-чивать**, **-ти́ть** (-нчу́ -нтя́тъ) ն. **1**, յաճախ գործածելով փչացնել. անպէտք դարձնել (պտուտակը). **2**, մի բան փչացնել, այլանդակել, (վրան շատ ծակեր անելով). **-ся** անդր. փչանալ, անպէտքանալ յաճախ գործածուելուց (պտուտակի մասին)։

Изви́нь է. տ. Алкого́ль.

Изви‖ня́емость տ. Извини́тельность; **-ня́ть**, -ни́ть ն. ներել, թողութիւն տալ. извини́те мою́ нело́вкость; извини́те, я васъ безпоко́ю; **-ся** անդր. **1**, передъ кѣмъ մէկից ներողութիւն, թողութիւն խնդրել. **2**, մեղանչել։ [вáть, ся.

Изви́ть (изовью́ -ю́тъ), **ся** տ. Изви-

Извле‖кáніе չ. դուրս քաշելը, հանելը. քաղելը. **-кáтельный** ած. դուրս քաշելու, հանելու. **-кáть**, -чь ն. դուրս քաշել, դուրս հանել,

քաղել, քաղուածք անել. и. кого́ изъ бѣды́ մէկին դժբախտութիւնից, փորձանքից ազատել, թափել. и. пу́лю изъ ра́ны; и. квадра́тный, куби́ческій коре́нь երկրորդ, երրորդ աստիճանի արմատ հանել. и. у кого́ бѣльмо́ изъ гла́за մէկի աչքի հատը կտրելով հանել. и. по́льзу օգուտ քաղել. онъ изъ всего́ извлека́етъ по́льзу; и. изъ а́втора приме́ры; **-че́ніе** * չ.* **1,** դուրս քաշելը, դուրս հանելը. и. дохо́довъ изъ чего́ մի բանից արդիւնք ստանալը. и. пу́лю изъ ра́ны; **2,** քաղուածք (որ և է գրքից, գործից). и. изъ дѣ́ла, изъ сочине́нія; **-чь** (-ку́ -чёшь -ку́тъ; *անց.* извлёкъ -кла́, о́; ки́), **ся** *տ.* Извлека́ть, [ся.

Извнѣ́ *ս.* դրսից, արտաքուստ:

Из‖води́тель *ա.* **-води́тельница** *է.* ոչնչիչ, կործանիչ, կորուսանող այր, կին. **-води́ть** (-жу́ -дятъ), -вести́, -ве́сть *ն.* **1,** դուրս հանել, դուրս տանել. **2,** ծախսել, մսխել, վատնել. и. де́ньги; **3,** кого́ մէկի սիրտն ու հոգին մաշել, մէկի արևը, կեանքը խաւարեցնել, մէկին սպանել. и. своего́ врага́; **4,** ոչնչացնել, ջնջել, կոտորել (որդունքը). **5,** կախարդել, հմայել, դիւթել. **-води́ться,** -вести́сь *չ.* **1,** կործանուիլ, ոչնչանալ, կորչիլ. цыпля́та извели́сь отъ хо́лода; **2,** ուժասպառուիլ, հալից ընկնիլ. **3,** տանջուիլ, չարչարուիլ. **-во́дка** *է.* *տ.* Изво́дъ; **-во́докъ,** дка, **-во́дышъ** *ա.* մատղաշ անասուն, գրաստ. **-во́дъ** *ա.* **1,** դուրս տանելը, դուրս հանելը. գաղթեցնելը. **2,** կործանելը, ոչնչացնելը, ջնջելը, փչացնելը. жена́ со́слана за и. му́жа—էրկանը թունաւորելու համար. **3,** ծախսելը, մսխելը, վատնելը, սպառելը (պաշարեղէնը). **4,** յայտնելը, մատնելը. **5,** ազբիւրը ցոյց տալը, ցուցում:

Извоева́ть (-вою́ю -ю́тъ) *ն.* աւերել, կործանել (պատերազմելիս):

Из‖вожде́ніе *չ.* **1,** դուրս հանելը, դուրս տանելը. **2,** ջնջելը, ոչնչացնելը. **3,** ծախսելը, մսխելը, սպառելը. **-вози́ть** (-жу́ -зятъ) *ն.* մաշել, փչացնել (շատ բանեցնելով). **-во́зить** (-во́жу -зятъ) *չ.* սայլապանութիւն անել. **-во́зникъ** *ա.* սայլապան. **-во́зничанье** *չ.* սայլապանութիւն. **-во́зничать** *չ.* սայլապանութիւն անել. **-во́зническій, -во́зничій,** чья, чье *ած.* սայլապանի, -ների. и—чья ло́шадь; **-во́зный** *ած.* սայլապանութեան, բեռնակրութեան. и. про́мыселъ; **-во́зчикъ** *ա.* **1,** կառապան, սայլապան, սայլորդ. ломово́й и. բեռներ կրող սայլապան **2,** *կառք, սայլ. ѣ́хать на и—ѣ; сѣсть на и—а; слѣзть съ и—а; взять и—а на часы́ ժամով կառք վարձել. **-во́зчичій,** чья, чье *ած.* կառապանի, սայլապանի, սայլորդի **-во́зъ** *ա.* սայլապանութիւն, սայլորդութիւն, բեռնակրութիւն, կառապանութիւն: [**-во́истый** *տ.* Излу́чистый.

Из‖во́й *ա.* պտոյտ, ոլորտ, ծալուածք.

Изво‖ле́ніе *չ.* կամենալը, հաճիլը, հրամելը. **-ли́тельный** *ած.* բարեհաճ, հաճող, հաւանող, յօժար. **-лить** (-лю -лятъ; *հրմ.* изво́ль -те), -ля́ть *ն.* что, на что **1,** կամենալ, հաճիլ, բարեհաճիլ, հրամել, յօժարիլ. ба́рыня изво́литъ почива́ть տիկինը, ‘աղջիկպարոնը‘ հանգստանում է. изво́льте войти́ ներս հրամեցէք чего́ изво́лите? ինչ կհրամէք:

Изво‖ло́къ *ա.* թեթև դառնվայր, դարիվայր. **-ло́ка** *է.* ձգձգում, յապաղում. **-лоче́ніе** *չ.* դուրս քաշելը, դուրս հանելը. **-ло́чистый** *ած.* թումբերով, խորտուբորտ. **-лочи́ть** (-чу́ -чатъ) *ն.* **1,** դուրս քաշել, ձգելով դուրս հանել. **2,** մաշել, քրքրել. **3,** ուշացնել, յապաղեցնել. **-ся** *անդ.* **1,** մաշուիլ, քրքրուիլ. **2,** ուժասպառուիլ, հալից ընկնիլ (զեղխութեան շնորհիւ). **3,** *հնց.* հագնուիլ. **-ло́чка** *է.* **1,** մաշելը, քրքրելը (օր. շորը). **2,** *տ.* Изволо́ка.

Изво́ль‖ничаться *չ.* կամակոր, քմահաճ դառնալ, սանձարձակութեան ընտելանալ. **-ный** *ած.* կամայական, ինքնակամ, քմահաճ:

Из‖во́нъ *նխդ.* (*սեռկ.* *հոլ*) *ռմկ.* դուրս, հակառակ. и. пра́вилъ կանոններից դուրս. **-во́нный** *ած.* դրսի, դրսում. и—ая сторона́ դրսի կողմը:

Изво‖ра́чиваніе *չ.* շրջելը, դարձնելը. **-ра́чивать,** -роти́ть *ն.* **1,** շուռ տալ, դարձնել (հակառակ կողմի վերայ), շրջել. **2,** աղճատել, այլանդակել. **-ся** *անդ.* **1,** դառնալ, շրջել, շուռ գալ. **2,** դուրս գալ, ազատուիլ (նեղութիւնից), իր համար մի ճար գտնել:

Извороваться (-ру́юсь -ю́тся) *հոբ.* գողութեանը ընտելանալ, գող դառնալ:

Из‖вороти́ть (-чу́ -о́тятъ), **ся** *տ.* Извора́чивать, ся; **-воро́тливость** *է.* ճարպկութիւն, ճարտարութիւն, ճարտարամտութիւն, ժրութիւն. **-воро́тливый** *ած.* ճարպիկ, ճարտար, ճարտարամիտ, ժիր, յաջողակ. **-ро́тный** *ած.* շուռ տալու, շրջելու. շուռ տուած, շրջած կողմ. **-ро́тъ** *ա.* **1,** դարձնելը, շրջելը. **2,** հակառակ, ‘թարս‘ կողմ. на и. հակառակ, ‘թարս‘. **3,** հնարք, միջոց (դժուարութիւնները հարթելու), եւք. **4,** պատրուակ, պատճառանք. **5,** *գւռկ.* վճարում, հատուցում. и. до́лга; **-воро́ть** *է.* *տ.* Изворо́тъ; **-воро́чать** *ն.* **1,** խառնափթորել, տակն ու վրայ անել. **2,** *ռմկ.* ծեծել, ջարդել, ‘քօթակել‘:

Из‖во́рсить (-ршу -сятъ) *ն.* խաւ տալ, խաւաւորել. и. сукно́; **-ся** *չ.* քրքրուիլ, գզգզուիլ, մաշուիլ: [-чичій.

Изво́‖щикъ, -щичій *տ.* Изво́зчикъ,

Из‖врачева́ніе, -врачева́ть (-чу́ю -ю́тъ) *տ.* Излѣче́ніе, -чи́ть.

Извра‖ща́ть, -ти́ть (-щу́ -тя́тъ) *ն.* **1,** յեղաշրջել, աղճատել, այլայլել (խօսքի իմաստը). **2,** այլանդակել, փչացնել. духъ па́ртіи извраща́етъ сужде́ніе; **-ще́ніе** *չ.* յեղաշրջում, աղճատում, այլայլում. и. смы́сла зако́новъ.

Из‖вы́къ *ա.* **-вы́ка́ніе** *չ.* **1,** սովորութիւն, ունակութիւն. **2,** վարժութիւն. **-выка́ть, -вы́кнуть** *չ.* սովորել, ունականալ, վարժուիլ, ընտելանալ. **-вы́чай** *ա.* սովորութիւն, սովորոյթ, ծէս

Извѣ‖ва́ніе *չ.* **1,** տանելը, ցրելը. **2,** անօդուտ, զուր ծախս. **3,** մաքրելը, զտելը (էրնելով). **-ва́ть,** -ять *ն.* **1,** տանել, ցրել. **2,** զուր ծախսեր անել, վատնել. **3,** քամել, էրնել, մաքրել:

Извѣ‖даніе, -дываніе *չ.* հետախուզութիւն, -խուզելը, քննելը, փորձելը. **-дчикъ** *ա.* **-дчица** *է.* հետախուզող այր, կին, լրտես, -ուհի. **-дывать, -дать** *ն.* հետախուզել, քննել, փորձել, իմանալ:

Извѣковáть (-кýю -ютъ) ն. իւր կեանքը անցկացնել, վերջացնել։

Извѣ‖рéніе չ. **1**, հաւատացնելը, հաւատիացնելը. **2**, վստահութիւն, հաւատիք. **-ривáться, -рúться** (-рюсь -рятся) անդր. **1**, հաւատքը, վստահութիւնը կորցնել. онъ извѣрился въ нёмъ նա նորան այլևս չէ հաւատում. **2**, իւր վարկը, հաւատարմութիւնը կորցնել. **-рúа** է. կորուստ ա, հաւատքի, վստահութեան. ը, վարկի, հաւատարմութեան։ [шивать, ся.

Извѣсúть (-шу -сятъ), **ся** տ. Извѣ-

Извѣ‖стúтель ա. **-стúтельница** է. տեղեկատու, համբաւաբեր, աւետող, քարոզող այր, կին. **-стúтельный** ած. տեղեկացնող, լուր, համբաւ հաղորդող, ծանուցողական. и—ое письмó; **-стúть** (-щý -стятъ), **ся** տ. Извѣщáть, ся; **-стіе** ն. համբաւ, լուր, 'խաբար', տեղեկութիւն. и. о смéрти մահուան գոյժ. **-стность** է. **1**, յայտնի, պարզ լինելը, գիտութիւն, տեղեկութիւն. довестú до óбщей и—и 'ի գիտութիւն հանրութեան հաղորդել, յայտարարել. это ещё не приведенó въ и. այդ դեռևս պարզուած, որոշուած չէ. **2**, հռչակ, անուն. пріобрѣсть и., достúгнуть и—и անուն հանել. **-стный** ած. **1**, յայտնի. мнѣ это извѣстно; онъ извѣстенъ цѣлому свѣту своéю чéстностью; **2**, ճիշտ, հաւատի, հաստատ. **3**, նշանաւոր, ականաւոր, հռչակաւոր. **4**, որոշ, միքանի. въ и—ыхъ слýчаяхъ.

Извѣ‖тникъ ա. **-тница** է. մատնիչ, մատնութիւն անող, չարախօս այր, կին. **-тный** ած. մատնութեան, չարախօսութեան։

Извѣт‖ривать, -рить (-рю -рятъ) ն. քամուն ենթարկելով փչացնել, չորացնել. **-ся** չ. **1**, քայքայուիլ, փչանալ (քամու ազդեցութիւնից). **2**, թեթևամիտ, թեթևսօլիկ դառնալ։

Из‖вѣтчикъ, -вѣтчица է. տ. Извѣтникъ, -ница; **-вѣтъ** ա. **1**, ամբաստանութիւն, չարախօսութիւն, մեղադրութիւն. **2**, մատնութիւն. **3**, գւռկ. յայտարարութիւն. **4**, գւռկ. կախարդում, հմայում։

Извѣ‖шиваніе ն. չափելը, կշռելը. **-шивать**, -сить ն. չափել, կշռել։

Извѣ‖щáтель, -щáтельница, -щáтельный տ. Извѣстúтель, -ница, -ный; **щáть**, -стúть ն. տեղեկացնել, իմացընել, իմաց տալ, ծանուցանել. հրահանգել. յայտարարել. я извѣстúлъ егó обо всёмъ; **-ся** անդր. լուր, համբաւ ստանալ. **-щéніе** ն. **1**, տեղեկացնելը, ծանուցանելը. **2**, տեղեկութիւն, ծանուցում, ազդ, լուր, համբաւ, 'խաբար'. и. о несчáстномъ слýчаѣ.

Извѣять տ. Извѣвáть.

Из‖вядáніе ն. **1**, թառամիլը, թօշնիլը, խամրիլը. **2**, չորանալը, կուչ գալը. **-вядáть**, -вянуть չ. **1**, թառամիլ, թարշամիլ, թօշնիլ, խամրիլ. **2**, չորանալ, կուչ գալ. **-вялый** ած. թառամած, թարշամած, թօշնած, խամրած. **-вянуть** տ. Извядáть.

Изгáга տ. Изжóга.

Из‖гáженіе ն. **1**, կեղտոտելը, աղտոտելը, ապականելը. **2**, փչացնելը. **-гáживать, гáдить** (-жу -дятъ) ն. **1**, աղտոտել, ապականել, կեղտոտել. мýхи изгáдили бумáгу; **2**, փչացնել, եղծանել. онъ всё дѣло изгáдилъ; **3**, աչք տալ, հմայել, գիւթել, **-ся** անդր. **1**, կեղտոտուիլ, աղտոտուիլ. **2**, փչանալ. погóда изгáдилась.

Из‖гáра է. գոլուկ, ժանգ (արմտիքների). **-гарáть, -гарѣть** չ. եկ. ռւ. այրուիլ, տոչորուիլ. **-гáрина** է. **-гарь** է. այրուած, փըչացած մետաղէ անօթ. առհ. այրուած, փչացած բան (օր. չափազանց թրծած աղիւս)։

Из‖гáщивать, -гостúть ն. երբև հիւր այցելել, շրջել։

Из‖гибáемость է. ծռելի, ծալելի լինելը. դիւրաթեքութիւն, ճկունութիւն. **-гибáніе** ն. ծռելը, թեքելը, ծալելը, կորացնելը. **-гибáть**, изогнýть ն. ծռել, կորացնել, ծալել. **-ся** անդր. ծռուիլ, կորանալ, ծալուիլ, գալարուիլ. змѣя́ изгибáется; **-гúбецъ**, бца ռւզ. տ. Изгúбъ; **-гúбина, -гúбинка** ռւզ. է. ծռուած, կորացած, ներս պրծած տեղ. ծալք. **-гúбистый** ած. ծուռումուռ տեղերով, ոլորաններով. **2**, ճարտար, աջողակ. **-гибнóй** ած. ընդունակ ծռուելու, ծալուելու. **-гúбнуть** չ. կորչել, ոչնչանալ, փչանալ. **-гúбчивость** է. դիւրաթեքութիւն, դիւրակորութիւն, փափկութիւն. **-гúбчивый** ած. դիւրաթեք, դիւրակոր, փափուկ, կակուղ. **-гúбъ** ա. ծռուած, ներս պրծած, ներս ընկած տեղ, գոգ, կորութիւն, պտոյտ, ոլորտ. ծալք, ծալուածք. и—ами ոլոր մոլոր պտոյտներով. рѣкá дѣлаетъ и.

Изглá‖дить (-áжу -дятъ), **ся** տ. Изглáживать, ся; **-женіе, -живаніе** ն. **1**, հարթելը, կոկելը, դզելը, արդուկելը. **2**, *ջնջելը, ոչնչացնելը. **-живать**, -дить ն. **1**, հարթել, կոկել, դզել, արդուկել. **2**, *ջնջել, ոչնչացնել, անհետացնել, չքացնել. и. изъ воспоминáнія; и. печáльное воспоминáніе տխուր յիշողութիւնը խեղդել, ոչնչացնել. **-ся** անդր. ջնջուիլ, անհետանալ, չքանալ, մոռացուիլ. пáмять о нёмъ никогдá не изглáдится նորա յիշատակը երբէք չի մոռացուիլ. благодѣя́нія вáши никогдá не изглáдятся изъ моéй пáмяти.

Изгла‖шáть, -сúть (-шý -сятъ) ն. արտասանել, քարոզել, յայտարարել, ազդարարել. **-шéніе** ն. արտասանելը, քարոզելը. յայտարարութիւն, ազդարարութիւն։

Из‖глодáть ն. կրծոտել, կրծելով լափել (տեղ տեղ կամ բոլորովին). **-глóдокъ**, дка, **-глóдышъ** ա. կրծած, կրծոտած իր։

Из‖гнáиваніе ն. փտեցնելը, թարախակալեցնելը. **-гнáивать**, -гноúть ն. բոլորովին, ամբողջապէս փտեցնել, հոտեցնել, թարախակալեցնել. **-ся** չ. բոլորովին փտել, հոտիլ, թարախակալիլ։

Из‖гнáніе ն. հալածելը, -ծում, վռնդելը, -տում, քշելը, աքսորելը. **2**, աքսոր, տարագրելը, -գրութիւն, վտարելը, -րում. жить въ и—іи; **-гнáнникъ** ա. **-гнáнница** է. աքսորուած, տարագրուած այր, կին. **-гнáнническій** ած. աքսորական, -կաններին. и—ая жизнь; **-гнáнничество** ն. աքսոր, աքսորանք, տարագրութիւն. **-гнáтель** ա. **-гнáтельница** է. այր, կին, որը մէկին աքսորել, տարագրել է. **-гнáть** (-гоню́ -гóнятъ), **ся** տ. Изгоня́ть, ся.

Из‖гнетáть, -гнестú, -гнéсть (-етý -тýтъ) ն. եկ. ռւ. քամել, մզել, ճզմել։

Из‖гниваніе ն. փտիլը, հոտիլը, նեխիլը.

-гнивать, -гнить չ. փտիլ, հոտիլ, նեխիլ. **-гниль** ի. փտած, հոտած, նեխած, բորբոսնած բան. **-гнить** (-гнію -ютъ) տ. Изгнивать; **-гноеніе, -гноить** (-ою -оятъ), **ся** տ. Изгнап‖ваніе, -вать.

Изго‖дить (-жу -дятъ), **-жать** ն. աչք տնկած սպասել. и. время, случай, срокъ; **-диться** չ. գւռ. **1**, կատարուիլը, իրականանալը, ճշտուիլը. **2**, հնանալը, խախտւիլը:

Из‖гой ա. **-гойный** князь կալուածազուրկ, ժառանգական իշխանութիւնից զուրկ (ռուս) իշխան:

Изго‖ловокъ, вка ա. **-ловье** չ. սընար (մահճակալի բարձր ծայրը, որի վերայ հանգչում է գլուխը). գլխի տակ դրած բարձը, շորեղէնը:

Из‖гоненіе չ. հալածելը, -ծում, վռնտելը, -տում. **-гонитель** ա. **-гонительница** ի. հալածող, վռնտող, աքսորող այր, կին. **-гонительный** ած. հալածման, աքսորման. **-гонка** ի. տ. Изгоненіе; **-гонять**, -гнать ն. **1**, դուրս քշել, արտաքսել, վռնտել, հալածել. испанцы изгнали мавровъ; **2**, աքսորել, վտարել, տարագրել. и. изъ отечества.

Изго‖раживаніе չ. ցանկապատով բաժանելը, բաժան բաժան անելը (տարածութիւն). **-раживать**, -родить ն. **1**, ցանկով, ցանկապատով մի որոշ տարածութիւն մասերի բաժանել, մաս մաս անջատել. **2**, որոշ տարածութիւն անջատել, բռնել (ցանկապատ քաշելով):

Изгорать տ. Изгарать.

Из‖горбатить (-чу -тятъ) ն. սապատողն դարձնել. **-ся, -горбатѣть** չ. սապատողն դառնալ. **-горбить** (-блю -бятъ) ն. կռացնել, կորացնել, սապատողն դարձնել. и. спину; **-ся** անդր. կռանալ կորանալ, ծռուիլ. **-горбленіе** չ. կռացնելը, ծռելը, կորացնելը:

Изго‖рода ի. ցանկ, ցանկապատ. **-родить** (-жу -одятъ) տ. Изгораживать; **-родка, -родочка** նւզ. տ. Изгорода; **-(из·)родь** ի. տ. Изгорода; живая и. կենդանի [բոյսերից շինած, տնկովի] ցանկապատ:

Изгостить (-щу -стятъ) տ. Изгащивать.

Изго‖тавливаніе չ. պատրաստելը, յարդարելը. **-тавливать, -товлять, -товить** (влю -вятъ) ն. պատրաստել, յարդարել, շինել, սարքել. **-ся** անդր. պատրաստուիլ. **-товка** ի. **-товленіе** չ. տ. Изготавливаніе.

Из‖греби, бей ի. յ. **-гребье** չ. խծուծ, [փուշ:

Изгружать տ. Выгружать.

Из‖грызаніе տ. Изгрызеніе; **-грызать, -грызть** (-ызу -зутъ; անց. изгрызъ -зла, о) ն. կրծել, կրծոտել, խածնել, խածոտել. **-грызеніе** չ. կրծելը, կրծոտելը, խածնելը, խածոտելը. **-грызокъ**, зка ա. կրծոտած, խածոտած տաշրկայ:

Из‖грязненіе չ. ցեխոտելը, աղմոտելը, կեղտոտելը. **-грязнить, ся** տ. Грязнить, ся. [կործանել, փչացնել, ոչնչացնել:

Изгу‖блять, -бить (-блю -бятъ) ն.

Изгуляться անդր. զբօսախնդրութեամբ, հարբեցողութեամբ փչանալ, բարոյապէս ընկնել:

Издавать (-даю -ютъ; հրամ. издавай), -дать ն. **1**, արտադրել, արձակել, առաջացնել, գոյացնել. и. звукъ, тонъ; и. запахъ; **2**, հրատարակել. и. книгу, журналъ; и. законъ, постановленіе; **-ся 1**, անդր. երևալ, յայտնուիլ. հրատարակուիլ. этотъ журналъ издаётся на французскомъ языкѣ.

Издавна մ. վաղուց, վաղուց 'ի վեր:

Издаива‖ніе, -ть տ. Выдаиваніе, -вать.

Из‖далбливаніе չ. փորելը, ծակելը. **-далбливать**, -долбить ն. փորել, ծակել, ծակոտել, քչփորել:

Из‖далёка, -далеча, -далече մ. հեռուից, հեռու տեղից. онъ пріѣхалъ и.; **-дали** մ. հեռուից. и. она показалась мнѣ очень хорошенькою.

Из‖даніе չ. **1**, հրատարակութիւն, տպագրութիւն. и. книги, журнала; великолѣпное и.; книга эта выходитъ вторымъ и—іемъ; **2** հրատարակութիւն. и. закона, манифеста; **3**, արձակում, արտադրութիւն. и. звука; **-даньице** նւզ. տ. Изданіе; **-датель** ա. **-дательница** ի. հրատարակիչ, -կչուհի. **-дательный** ած. հրատարակութեան, -կչական. **-дательскій** ած. հրատարակչի. **-дать** (-дамъ -дашь -дастъ; -дадимъ -дадите -дадутъ), **ся** տ. Издавать, ся.

Издёр‖ганіе, -гиваніе չ. [illegible], պատռտելը, մաշելը. **-гивать, -гать** ն. **1**, քրքրել, պատռտել. մաշել (շորը). **2**, քաշկռտելով թերել, ծռել. его издёргало նորա մարմինը ցնցուեց:

Издер‖жаніе տ. Издерживаніе; **-жать** (-жу -жатъ), **ся** տ. Издерживать, ся; **-живаніе** չ. ծախսելը, մսխելը, **-живать**, -жать ն. ծախսել, մսխել, սպառել. онъ издерживаетъ по сто рублей въ мѣсяцъ; я издержалъ всё вино; **-ся** անդր. բոլոր ունեցածը ծախսել, մսխել, սպառել. մեծ ծախսի տակ ընկնել. **-жка** ի. ծախս, մսխս (սովոր. յ. издержки ծախսեր). судебныя и.; и. на столъ, погребеніе, на починку; и. по дѣлопроизводству, по перевозкѣ; и. при продажѣ имѣнія; вознагражденіе и—жекъ ծախսերի փոխարինումը, հատուցումը. покрывать и. ծախսերը ծածկել:

Изди‖раніе չ. պատռտելը, ճղոտելը, ծուատելը. **-рать**, изодрать ն. պատռտել, ճղոտել, ծուատել, պատառ պատառ անել:

Изди‖чалый ած. վայրենացած, բրտացած. **-чать** ն. վայրենանալ, բրտանալ:

Из‖доеніе տ. Издаиваніе; **-дой** ա. կաթնատուութիւն, կաթից կտրուիլը. наша корова на и—ѣ մեր կովը կաթնատել է, *մե[illegible] կով չունինք. **-дойки**, екъ ի. յ. կաթ[illegible] կտրուող կովի վերջին կաթը. **-дойниц[illegible]** կաթից կտրուող կով. **-доить** (-дою -доятъ[illegible]) Издаивать.

Издол‖бить(-блю -бятъ), **ся** տ. Изд[illegible]бливать, ся; **-бленіе** տ. Издалбливан[illegible]

Издо‖хлый ած. **1**, սատկած. **2**, գւռ. վտիտ, նիհար, վատառողջ. **-хнуть**. տ. Издыхать. [դողալ, ցնցուիլ (ցրտից):

Из‖драгивать, -дрогать, дрогнуть չ.

Издревле մ. հնուց, վաղուց 'ի վեր:

Издро‖бленіе չ. կտորելը, կտոր կտոր անելը. **-блять, -бить** (-блю -бятъ) ն. գերմակ կտորել, կտոր կտոր անել. **-ся** անդր.

կտոր կտոր լինել. **-бчивый** ած. դիւրափշուր:

Издро||гáть տ. Издрáгивать.

Из||дряблѣ́ть չ. թառամիլ, թօշնիլ, խամրիլ. *ուժասպառիլ, ծերիլ. **-дря́хлый** ած. զառամեալ, ուժասպառուած. **-дряхлѣ́ть, -дря́хнуть** չ. զառամիլ, ուժասպառիլ:

Изду||рáчить (-чу -чатъ) ն. ծաղրել, յիմարի տեղ դնել, այպանել. **-ри́ть** (-рю́ -ря́тъ) ն. 1, փայփայել, երես տալ. 2, ծաղրել, յիմարի տեղ դնել. 3, փչացնել:

Издырáвить (-влю -вятъ) ն. ծակծկել, ծակոտել, ծակեր անել:

Из||дыхáніе չ. սատակելը. борóться до послѣ́дняго и—ія ցվերջին շունչ կռուել. находи́ться при послѣ́днемъ и—іи հոգեվարքի մէջ գտնուիլ. **-дыхáть**, -дóхнуть չ. սատակել:

Из||дѣвáніе, -дѣвáтельство չ. ծաղրելը, նշաւակելը, այպանելը. **-дѣвáться** հոր. (чему́, надъ кѣмъ) ծաղրել, նշաւակել, այպանել. **-дѣ́вка** է. ծաղր, ծանակ, նշաւակ, հանաք. **-дѣ́вчивый** ած. ծաղրասէր, ծաղրել, նշաւակել սիրող:

Из||дѣля́ть, -ли́ть (-лю́ -ля́тъ) ն. բաժանել (խոպառ). **-дѣ́ліе** չ. **-дѣ́льице** նւզ. գործուածք, ձեռագործ. ապրանք. вя́заныя и—ія, кóжаныя, шёлковыя и—ія; стальны́я, желѣ́зныя и—ія; **-дѣ́лка** է. **-дѣ́лываніе** չ. գործելը, պատրաստելը. **-дѣ́лывать**, -дѣ́лать ն. գործել, պատրաստել. **-дѣ́лываться** չ. 1, անգործ լինել. 2, գործածութիւնից հնանալ, մաշուիլ, անպիտանանալ. **-дѣ́льный** ած. ձեռագործի. и—ая плáта աշխատավարձ. **-дѣ́льщина** է. հ—ք. ձեռագործ ապրանք:

Издѣ́тства մ. մանկութիւնից ՚ի վեր:

Изжá||леніе չ. խայթելը, կծելը. **-лить** (-лю -лятъ) ն. խայթել, կծել:

Изжá||реніе չ. տապակելը, խորովելը. **-рить** (-рю -рятъ) ն. տապակել, խորովել, բոլորովին տապակել, խորովել:

Изжáть (изожму́ -му́тъ), **ся** տ. Изжимáть, ся.

Из||жевáніе, -жёвываніе չ. բոլորովին ծամելը. ծամծմելը, ծամքելը. **-жёвывать, -жевáть** (-жую́ -ю́тъ) ն. բոլորովին ծամել, ծամծմել, ծամքել:

Изжелта մ. դեղնաւուն:

Изжéчь (изожгу́, изжжёшь, изожгу́тъ; անց. изжóгъ, изожглá, ó), **ся** տ. Изжигáть, ся.

Из||живáніе չ. 1, ապրելը, անցկացնելը ժամանակ). 2, ծախսելը, վատնելը (կայքը). **-живáть**, -жи́ть ն. 1, ապրել, անցկացնել (ողջ ժամանակ). 2, ծախսել, մսխել, վատնել (ստացուածքը):

Из||жигáніе չ. այրելը, հրի ճարակ դարձնելը. **-жигáть**, -жéчь ն. այրել, հրի ճարակ դարձնել, կրակ տալ, կիզել:

Изжидáть ն. սպասել, ճամբայ պահել:

Из||жимáніе; -жимáть, ся տ. Выжимáніе, -жимáть, ся.

Из||жи́ть (-живу́ -ву́тъ) տ. Изживáть; **-жóга** է. այրոյցք, այրում. տոչորում, տապ (բողազի, սրտի, ստամոքսի):

Иззеле||на մ. կանաչաւուն. **-ни́ть** (-ню́ -ня́тъ) ն. կանաչ բծեր առաջացնել:

Иззно||би́ть (-блю́ -бя́тъ) ն. սառեցնել, ցրտատար անել, փայտացնել. **-блéніе** չ. սառեցնելը, փայտացնելը:

Иззо||ря́ть, -ри́ть (-рю́ -я́тъ) ն. աւերել, քայքայել, ոչնչացնել, կործանել:

Иззу||брéніе չ. կոտրատելը, ջարդոտելը. **-бривать, -бря́ть** ն. կոտրել, բթել (սղոցաձև), շատ տեղեր ջարդոտել:

Из||зябáніе չ. խիստ մրսելը, սառչելը, ցրտահար լինելը. **-зябáть, -зя́бнуть** չ. խիստ մրսել, սառչել, չորանալ, փայտանալ. **-зя́блый** ած. խիստ մրսած, սառած, ւքառած, փայտացած, ցրտահար:

Из||лáвливаніе չ. հետապնդելով կալնուլը, բռնելը. **-лáвливать**, -лови́ть ն. հետապնդելով կալնուլ, բռնել:

Из||лагáніе տ. Изложéніе; **-лагáтель** ա. **-лагáтельница** է. մեկնող, բացատրող այր, կին, մեկնարան, -ուհի. **-лагáтельный** ած. մեկնական, բացատրական, մեկնող, բացատրող. **-лагáть**, -ложи́ть ն. մեկնել, բացատրել. նկարագրել. и. подрóбности дѣ́ла; и. трéбованія իր պահանջները ձևակերպել:

Излá||дить (-жу -дятъ), **ся** տ. Излáживать, ся; **-жéніе** չ. պատրաստելը, շինելը, սարքելը. **-живать**, -дить ն. պատրաստել, շինել, սարքել, կարգաւորել:

Излáзить (-жу -зятъ) ն. մագլցելով ամեն տեղ ելնել, մտնել, ման գալ, խուզարկել:

Излá||мываніе չ. կոտրելը, կտոր կտոր անելը, ջարդ ու փշուր անելը. **-мывать**, изломи́ть ն. կոտրել, կտոր կտոր անել, ջարդ ու փշուր անել. и. пáлку; **-мываніе** չ. կոտրելով փչացնելը. **-мывать**, изломáть ն. կոտրելով փչացնել. **-ся** անհոր. կոտրուիլ, կոտրուելով փչանալ. стулъ изломáлся.

Излег||кá մ. հեշտութեամբ. թեթև կերպով. **-чáть, -чи́ть** (-чу́ -чáтъ) ն. 1, հեշտացնել, թեթևացնել. 2, մալել, կրտել (անասունին):

Изле||жáлость է. փչացում, եղծում. **-жáлый** ած. փչացած, անպիտանացած (երկար ընկած մնալուց). **-живаться, -жáться** (-жу́сь -жáтся) չ. 1, ծուլանալ. յուլանալ, ծուլութեան, 'թամբալութեան' ընտելանալ. 2, փչանալ, անպիտանանալ (երկար ընկած մնալուց):

Изле||тáніе չ. 1, դուրս թռչելը. շատ տեղեր թռչելով անցնելը. **-тáть**, -тѣть 1, չ. դուրս թռչել. 2, թռչելով շատ տեղեր անցնել:

Излету́||чиваться, -читься (-чусь -чатся) չ. գոլորշիանալ, չքանալ:

Из||лётъ ա. 1, ընկնելը, վայր ընկնելը (դցած գնդակի, նետի և այլն). пу́ля на и—ѣ գնդակը վայր ընկնելու վրայ է. 2, դուրս թռչելը, պարսելը (մեղուներին). 3, մասամբ զատարկուած փեթակ. **-летѣ́ніе, -летѣ́ть** (-чу́ -тя́тъ) տ. Излетáніе, -тáть.

Излеч... տ. Излѣч...

Из||ливáніе չ. հոսելը, թափելը, հեղուլը, արտահոսելը. **-ливáть**, -ли́ть ն. թափել, հոսել, արտահոսել, հեղուլ. Вóлга изливáетъ свои́ вóды въ Каспíйское мóре; 2, *առատապէս տալ, շնորհել, բաշխել. *и. на когó ми́лости, благодѣя́нія; и. я́рость, гнѣвъ, жёлчь на когó իր կատաղութիւնը, բարկու-

թ իւնը, դառնութիւնը մէկի վերայ թափել. и. дýшу въ и́скреннихъ разговóрахъ *անկեղծ խօսակցութեանց ժամանակ սիրտը բաց անել.* **-ся** *անդր. թափուիլ, հոսել:*

Изли||зáніе *չ. լիզելը, լիզելով մաքրելը.* **-зáть** (-жý -ли́жутъ; -лижи́), **ся** *ա.* Изли́зывать, ся; **-зываніе** *ա.* Излизáніе; **-зывать**, -зáть *ն. լիզել, լիզելով մաքրել:*

Изли||невáніе *չ. տաղելը, գծելը.* **-невáть** (-ню́ю -ю́тъ) *ն. տողել, գծել.* и. листъ, тетрáдь.

Изли́||тіе, -ли́ть (изолью́ -лью́тъ), **ся** *ա.* Изливáніе, -вáть, ся.

Изли́||шекъ, шка *ա. աւելի մնացած, աւելացած բան.* и. въ чёмъ *մի բանից աւելացածը.* **-шество** *չ. շատութիւն, առատութիւն. աւելորդութիւն.* нáдо избѣгáть и—ва въ словáхъ; вся́кое и. врéдно; **-шествовать** (-ствую -ютъ) *չ. յղփալ, ամեն բան առատութեամբ ունենալ.* **-шечекъ**, чка *նւզ. ա.* Изли́шекъ; **-шне** *մ. աւելորդ, չափից, պահանջից դուրս.* онъ и. вы́пилъ; **-шній** *ած. աւելորդ, չափից, պահանջից աւելի.* продáть и—ія вéщи; и—яя поспѣ́шность испóртила дѣ́ло; **-шность** *է. ա.* Изли́шество.

Из|ліяніе *չ. թափելը, -փուիլը, -փում. արտահոսում,-հոսելը, - սիլը, -սում. հեղուլը, -ղում.* и. сéрдца *սրտի զեղում.* и. ми́лости *շնորհաբաշխութիւն.* и. сѣ́мени *բժ. սերմնահոսութիւն, երազխաբութիւն.* **-ліять, ся** *ա.* Изли́ть, ся.

Излови́ть (-влю́ -вятъ), **ся** *ա.* Излáвливать, ся.

Изловчи́ться (-чýсь -чáтся) *հոր. վարժուիլ, ունականալ, ունակութիւն ձեռք բերել, ճարպիկ, ճարտար դառնալ:*

Излóгъ *ա. խոռոչ, ձոր, հովիտ:*

Изложéніе *չ. մեկնութիւն, բացատրութիւն.* крáткое, подрóбное и. дѣ́ла; крáткое и. содержáнія кни́ги.

Излóжина *է. հրացանի կոթը, կոթի ճիտը:*

Изложи́ть (-жý -жатъ), **ся** *ա.* Излагáть, ся.

Из||ломáй *ա.* **1**, *անշնորհք, անզգոյշ, ամէն բան կոտրող մարդ.* **2**, *ուժեղ, տուր ու դմփոցի սիրահար մարդ.* **-ломáніе, -ломáть, ся** *ա.* Изла́мываніе, -вать, ся; **-ломи́ть** (-млю́ -мятъ), **ся** *ա.* Изла́мливать, ся; **-ломлéніе, -ломáть, ся** *ա.* Изла́мливаніе, -вать, ся; **-лóмокъ**, мка *ա.* **-лóмочекъ**, чка *նւզ. կոտրած բան, փշրանք, բեկոր.* **-лóмъ** *ա.* **1**, *ա.* Изломлéніе; **2**, *կոտրած, բեկուած տեղ.* **3**, *ոլորտ, պտոյտ, ծռուածք:*

Излóпаться *չ. տրաքուիլ, տրաքտրաքուիլ:*

Излупи́ться (-плю́сь -пятся) *ա.* Вылупля́ться.

Излý||чина *է.* **-чинка** *նւզ.* **1**, *պտոյտ, ոլորտ.* **2**, *լար.* **-чистый** *ած. շատ պտոյտներով, ոլոր մոլոր:*

Из||лы́сина *է. ճաղատութիւն.* **-лысѣ́ть** *չ. ճաղատ դառնալ, մազերը կորցնել:*

Из||лѣни́ть (-ню́ -лѣ́нятъ) *ն. ծուլացնել, յուլացնել.* **-ся** *անդր. ծուլանալ, յուլանալ, 'թամբալանալ'.* **-лѣ́нокъ**, нка *ա. ծոյլ, յոյլ, 'ալարկոտ', 'թամբալ' մարդ:*

Излѣ́токъ, тка *ա. հասակն առնող, պառւ անտառուն:*

Из||лѣчáть *ա.* Излѣ́чивать; **-лѣчéніе**, **-лѣ́чиваніе** *չ. բժշկելը, բուժելը.* **-лѣ́чивать**, -лѣчáть, -лѣчи́ть *ն. բժշկել, բուժել, առողջացնել.* **-лѣчи́мость** *է. բուժելի, բժշկելի լինելը.* **-лѣчи́мый** *ած. բուժելի, բժշկելի, առողջելի.* **-лѣчи́тель** *ա.* **-лѣчи́тельница** *է. բուժող, բժշկող, դարմանող այր, կին.* **-лѣчи́ть** (-чý -чатъ), **ся** *ա.* Излѣ́чивать, ся.

Излю||бля́ть, -би́ть (-блю́ -бятъ) *ն. ընտրել, ջոկել (սիրելով, հաւանելով).* **-бчивый** *ած. ընտրող, դժուարահաւան:*

Измá||заніе *չ. քսելը, քսելով ապտելը.* **-зать** (-жу -жутъ; -жь), **ся** *ա.* Измáзывать, ся; **-зываніе** *ա.* Измáзаніе; **-зывать**, -мáзать *ն.* **1**, *քսելով ապտել (իւղ, նաւթ, սապոն).* **2**, *աղտոտել, կեղտոտել, ապականել.* **-ся** *անդր. կեղտոտուիլ, աղտոտուիլ, ապականուիլ:*

Измá||лываніе *չ. աղալ պրծնելը.* **-лывать**, измолóть *ն. աղալ պրծնել:*

Изма||рáніе *չ. կեղտոտելը, ցեխոտելը.* **-рáть, ся** *ա.* Измáрывать, ся; **-рываніе** *ա.* Измарáніе; **-рывать**, -рáть *ն. կեղտոտել, աղտոտել, աղտեղել, ցեխոտել.* **-ся** *անդր. կեղտոտուիլ, ցեխոտուիլ:*

Измá||тываніе *չ.* **1**, *յետ անելը, յետ տալը.* **2**, *վատնելը, շռայլելը.* **-тывать**, -мотáть *ն.* **1**, *յետ անել, յետ տալ, լուծել (կծկածը, փաթաթածը).* **2**, *վատնել, շռայլել.* **-ся** *չ.* **1**, *այս կողմ այն կողմ դանդաչելով ուժից ընկնել.* **2**, *շնորհիւ գեղխութեան տնանկանալ, սնանկանալ:* **3**, *բարոյապէս ընկնել, ապականուիլ:*

Из||мáчиваніе *չ. թրջելը, թրջոտելը.* **-мáчивать**, -мочи́ть *ն. թրջել, թրջոտել.* **-ся** *անդր. թրջուիլ, ջուր կտրել:*

Из||мáяніе *չ. տանջելը, խոշտանգելը.* **-мáять** *ն. տանջել, խոշտանգել, մաշկել, 'հոգին հանել' (ծանր աշխատանքների միջոցով).* **-ся** *անդր. չարչարուիլ, տանջուիլ, ուժասպառ լինել:*

Измая́чить (-чу -чатъ) *ն. դատարկ, պարապ սարապ անցկացնել.* и. врéмя, жизнь.

Измé||ливаніе *չ. մանրելը, զերմակացնելը, մանր մանր կտրելը, կտորելը, փշրելը.* **-ливать, -ли́ть** (-лю́ -мéлятъ) *ն. մանրել, զերմակացնել, մանր մանր կտրել, կտորել, ջարդել, փշրել.* **-льчáть, ся** *ա.* Измельчи́ть, ся; **-льчéніе** *չ. մանրելը, զերմակացնելը, փշրելը.* **-льчи́ть** (-чý -чáтъ), **ся** *ա.* Измéливать, ся.

Из||мерзáніе *չ. խիստ սառչիլը, պաղիլը.* **-мерзáть, -мёрзнуть** *չ. խիստ սառչիլ, սառուց կտրիլ, պաղիլ.* **-мёрзлый** *ած. սառած, պաղացած, ցրտատար:*

Из||метáніе, -метáть *ա.* Выбрáсываніе, -вать; **-мётъ** *ա.* **1**, *դուրս գցած, դուրս թափած բան.* **2**, *բամբասանք, զրախօսութիւն:*

Из||минáніе *չ. ճխլտելը, տրորելը, ճմլելը.* **-минáть**, -мять *ն. ճխլտել, տրորել, ճմլել:*

Измирáніе *ա.* Вымирáніе.

Измлáда *մ. հնղ. 'ի մանկութենէ:*

Измо||ждáть, -жди́ть *ն. ուժասպառ դարձնել, հալից գցել.* **-ждéніе** *չ. ուժասպառութիւն, թուլացում.* **-жди́ть** (-ждý -ждýтъ)

տ. Изможда́ть; **-ся** անդր. ուժասպառուիլ, հալից ընկնիլ:

Измо‖зжа́ть, -зжи́ть (-зжу́ -зжа́тъ) ն. ջարդ ու փշուր անել, ջարդել, տրորել:

Из‖мока́ть, -мо́кнуть չ. բոլորովին թրջուիլ, թացուիլ, ջուր կտրիլ. **-мо́клый** ած. բոլորովին թացուած, թրջուած, ջուր կտրած:

Измо‖ла́чиваніе չ. կա(լ)սելը. **-ла́чивать, -лоти́ть** (-чу́ -ло́тятъ) ն. կա(լ)սել պրծնել. **-ло́тъ** ա. կա(լ)սած կալ, հացահատիկ. **-ло́ть** (-мелю́ -ме́лютъ; -мели́), **ся** տ. Изма́лывать, ся; измоло́ть**ся** չ. *սկսել կմկմալ, ատամը կրկնել. **-лоче́ніе** չ. կա(լ)սել պրծնելը: [դուն, հացահատիկ:

Измо́лъ ա. **1.** աղալը. **2,** աղացած ա-

Измо‖ра́живаніе չ. սառցնելը. **-ра́живать,** -ро́зить ն. սառցնել, խիստ պաղեցնել. **-ся** անդր. խիստ պաղիլ, սառչիլ:

Измори́ть (-рю́ -ря́тъ) ն. ուժասպառել, հալից գցել, սպանել, կոտորել:

Из‖моро́зить (-жу -зятъ), **ся** տ. Изма́раживать, ся; **-мо́розь** ի. թեթև եղեամ, սառած գոլորշի, ցօղ. **-моро́зки,** овъ ա. յ. գինու սառած մնացորդ: [մարդ կամ անասուն:

Измо́рокъ, рка ա. հալից, ուժից ընկած

И́зморось ի. ձիւնախառն շաղ. եղեամ. па́даетъ и́.

Изморо́чить (-чу -чатъ) ն. кого́ մէկին բոլորովին կուրացնել, շլացնել:

Изմо́ръ ա. **1,** ուժասպառութիւն, նրթում. **2,** ջնջում, սպառում, ոչնչացնում:

Изմо́рье չ. ծովափ, ծովեզր:

Измо‖та́ніе, -та́ть, ся տ. Изма́тываніе, -вать, ся.

Измоча́‖ливаніе չ. քրքրելը, թելերի բաժանելը. **-ливать, -лить** (-лю -лятъ) ն. քրքրել, թելերի բաժանել. **-ся** անդր. քրքրուիլ, թելերի բաժանուիլ: [чивать, ся.

Измочи́ть (-чу́ -чатъ), **ся** տ. Изма́-

Измоше́нничаться հոր. սրիկայութեան վարժուիլ, ընտելանալ:

Изму́‖сливать, -слить (-слю -слятъ) ն. թքոտել, փչնոտել, լորձունքով կեղտոտել. **-ся** անդր. թքոտուիլ, փչնոտուիլ, կեղտոտուիլ:

Изму́‖чивать, -чить (-чу -чатъ) ն. չարչարել, տանջել, խոշտանգել. նահատակել. հոգին հանել, հալից գցել. э́та рабо́та изму́чила меня́; **-ся** անդր. չարչարուիլ, տանջուիլ, հալից ընկնիլ:

Из‖мыва́ніе չ. լուանալը. **-мыва́ть,** -мы́ть ն. լաւ լուանալ, լուանալ պրծնել:

Измызга́ть տ. Мизга́ть.

Из‖мы́кивать, -мы́кать ն. **1,** ծեծել, կեղեները հանել, գերծել (կտաւը). **2,** մաշել. **3,** վիշտը, թախիծը կրել պրծնել. **-ся** չ. **1,** քրքրուիլ. **2,** վշտահար լինել, վշտից, դարդից մաշուիլ, հալումաշ ըլլիլ:

Из‖мы́ливать, -мы́лить (-лю -лятъ) ն. օճառը (սապոնը) սպառել. **-мы́локъ,** лка ա. լուացքից յետոյ մնացած օճառի (սապոնի) կտորը:

Из‖мы́селъ, сла ա. հնարած բան, հնարովի բան. **-мы́слить** (-слю -слятъ) տ. Измышля́ть.

Измы́ть (-мо́ю -ютъ) տ. Измыва́ть.

Измы‖шле́ніе չ. հնարելը, նիւթելը, յերիւրելը. հնարած, զատած բան. **-шля́ть, -слить** ն. մտածել, հնարել, յերիւրել, նիւթել. и. зло свои́мъ врага́мъ.

Из‖мѣ́ливать, -мѣли́ть (-лю́ -лятъ) ն. **1,** կաւճով գրել. խզմզել. **2,** կաւիճը սպառել. **-мѣ́локъ,** лка ա. կաւճի կտոր (անկարգ մնացած):

Измѣ́‖на ի. **1,** դաւաճանութիւն, մատնութիւն, անհաւատարմութիւն. его́ объяви́ли вино́вымъ въ госуда́рственной и—ѣ; соверши́ть супру́жескую и—у; **2,** փոփոխութիւն (մարդի, զգացմունքի). **-не́ніе** չ. փոխելը, փոփոխելը, փոփոխում, -խութիւն. и. завѣща́нія; мѣ́сячныя и—ія լուսնի փոփոխութիւնը. **-ни́тель** ա. **-ни́тельница** ի. փոխող, փոփոխող այր, կին. **-ни́ть** (-ню́ -нятъ), **-ся** տ. Измѣня́ть, ся; **-нникъ** ա. **-нница** ի. դաւաճան, -ուհի, մատնիչ, ‘մուխաննաթ‘, անհաւատարիմ այր, կին. **-нничать** չ. դաւաճանել, մատնել. **-ннически** ն. մատնութեամբ, դաւաճանութեամբ. **-ннический, -нничій,** ья, ье ած. դաւաճանութեան, մատնութեան. и—ая душа́; **-нничество** չ. դաւաճանութիւն, մատնութիւն, անհաւատարմութիւն. **-нчивость** ի. փոփոխականութիւն, փոփոխամտութիւն, անհաստատութիւն. **-нчивый** ած. փոփոխական, փոփոխամիտ, անհաստատ, յեղյեղուկ. и—ое настрое́ніе ду́ха; **-нщикъ, -нщица** տ. Измѣ́нникъ, -ница; **-ня́емость** ի. փոփոխելի լինելը, փոփոխականութիւն. **-ня́емый** ած. փոփոխական, -խելի. **-ня́ть,** -ни́ть ն. **1,** փոխել, փոփոխել, կերպարանափոխել. փոխարինել. քերկ. հոլովել. խոնարհել. и. сво́й о́бразъ жи́зни; э́та матерія измѣня́етъ сво́й цвѣтъ; и. зако́нъ; **2,** кому́, чему́ մէկին մի բանի դաւաճանել, մատնել, անհաւատարիմ գտնուիլ, ‘մուխաննաթութիւն անել‘. и. оте́честву; не и. своему́ призва́нію, свои́мъ убѣжде́ніямъ; па́мять начина́етъ мнѣ и. յիշողութիւնս թուլանում, տկարանում է. сча́стіе измѣни́ло мнѣ; и. своему́ му́жу; **-ся** անդր. և չ. փոխուիլ, փոփոխուիլ, կերպարանափոխուիլ. онъ измѣни́лся въ лицѣ́; сво́йства э́того расте́нія измѣня́ются смотря́ по кли́мату; пого́да безпреста́нно измѣня́ется.

Измѣ́‖риваніе, -ре́ніе չ. չափելը, չափը, քանակութիւնն իմանալը. **-ривать,** -рять ն. չափել, չափը, քանակութիւնն իմանալ. **-ри́мость** ի. չափելի լինելը. **-ри́мый** ած. չափելի. **-ри́тель** ա. **1,** չափող, մի բանի չափը, քանակութիւնն իմացող մարդ. **2,** մի բան չափելու գործիք. չափիչ, **-ри́тельница** ի. մի բան չափող կին. **-ри́тельный** ած. չափելու, չափը, քանակութիւնն իմանալու. **-рить** (-рю -рятъ), **-ря́ть** տ. Измѣ́ривать.

Из‖мя́клый ած. կօկված, փափկացած (պտուղների մասին). **-мя́кнуть** չ. կակղիլ, փափկանալ (պտուղների մասին):

Из‖мя́тіе, -мя́ть (-изомну́ -мну́тъ), **ся** տ. Измина́ніе, -на́ть, ся.

Изна́‖нка ի. **-ночка** նւզ. տակի կողմ, տարբն, ներքին կողմ, աստառ (զգեստեղէնի, զգեստի). надѣ́ть пла́тье на и—у շորը թարս հագնել. вы́воротить на и—у շուռ տալ (շորեղէնը). **-ночный** ած. [զգեստի, շորի] տարբին երեսի, տակի երեսի, աստառի

Изна‖ро́къ ա. մտադրութիւն, դիտաւորութիւն. **-ро́чить** (-чу -чатъ) ն. ապշեցնել, յանկարծ վրայ տալ, վրայ ընկնել:

Изна‖ряжа́ть, -ряди́ть (-жу́ -дятъ) զուգել, զարդարել. **-ся** անդր. զուգուիլ, զարդարուիլ. **-ря́дный** ած. զուգուած, զարդարուած. **-ря́дъ** ա. զուգ, զարդարանք:

Изнаси́‖ливаніе, -леніе չ. բռնաբարելը, -բութիւն, բռնադրօսելը, -սութիւն, զօռով առևանդում, լլկում. **-ливать, -лить** (-лю -лятъ), **-ловать** (-лую -ютъ) ն. բռնաբարել, բռնադատել, բռնադրօսել, զօռով առևանդել, լլկել. **-ся** անդր. ինքն իրան հարկադրել, ստիպել, բռնադրօսել. **-льничать** տ. Изнаси́ловать.

Изна́‖шиваніе չ. մաշելը (հագնելիքը). **-шивать.** износи́ть ն. մաշել (հագնելիքը). **-ся** անդր. մաշուիլ, քրքրուիլ. э́та матéрія скóро изна́шивается.

Изнаи́ниться (-нюсь -нятся) չ. լրբութիւն, անպիտանութիւն անել:

Изне‖во́леніе չ. **-во́ля** ի. ստիպմունք, հարկադրութիւն, բռնաբարութիւն. **-во́ливать, -во́лить** (-лю -лятъ) ն. ստիպել, հարկադրել, բռնադատել, բռնաբարել:

Изневѣ́риться (-рюсь -рятся) չ. 1, անհաւատանալ, հաւատը փոխել. 2, թշնամու կողմը անցնել:

Изне‖мога́ніе չ. տկարանալը, թուլանալը, ուժասպառելը **-мога́ть,** -мо́чь չ. տկարանալ, թուլանալ, ուժասպառիլ. и. отъ уста́лости; и. отъ го́лода, жа́жды; **-може́ніе** չ. տկարութիւն, թուլութիւն, ուժասպառութիւն. **-мо́чь** (-могу́ -мо́жешь -мо́гутъ; *անց.* изнемо́гъ -гла́, о́) տ. Изнемога́ть.

Из‖несе́ніе չ. դուրս տանելը, դուրս հանելը. **-нести́** (-несу́ -су́тъ; *անց.* -нёсъ -сла́, о́) ն. 1, տ. Износи́ть 2; 2, մէկին ամբաստանել, սեւցնել. **-нести́сь** չ. դադարել ձու ածելուց:

Изни́‖зываніе չ. ուլունքներով զարդարելը, ընդելուզելը. **-зывать, -за́ть** ն. 1, ուլունքներով զարդարել, ընդելուզել. 2, բոլոր ուլունքները սպառել:

Изни‖ка́ніе չ. 1, դուրս գալը, երեւալը, յայտնուիլը. 2, չքանալը, գոլորշիանալը. **-ка́ть, -кну́ть** չ. 1, դուրս գալ, երեւալ, յայտնուիլ. 2, կործանուիլ, ոչնչանալ, չքանալ, հալուիլ, գոլորշիանալ. и. съ го́ря վշտից հալումաշ լինել:

Коло́‖да է. **1,** կոճղ, 'թօթուկ'. че́резъ пе́нь к—у вали́ть անշնորհք կերպով անել, գործել. **2,** գերանից փորած նաւ (տաշտ), մակույկ, տաշտ, տաշտակ, մսուր և կամ փեթակ. **3,** կոճղ, որի մէջ ամրացնում էին ոճրագործի ոտները. но́ги ихъ заби́лъ въ к—у զոտս նոցա պնդեաց 'ի կոճեղ (Գործք, 16_{24}). **4,** коло́да картъ մի կապոց խաղաթուղթ. **5,*** անճոռնի, 'լող լող' մարդ։

Коло́‖дезникъ ա. ջրհոր փորող. **-дезный** ած. ջրհորի. к—ая вода́; **-дезь, -децъ,** дца ա. ջրհոր. не плюй въ к., пригоди́тся воды́ напи́ться (առծ.)։

Коло́‖дка է. **1,** նւզ. տ. Коло́да; **2,** կօշկկ. 'դալիբ', կաղապար. **3,** փայտէ կրունկ. **4,** ատղձգ. խարտբուկի փայտ. **-дникъ** ա. **-дница** է. կոճղակիր այր, կին. կալանաւոր, -ուհի, բանտարկեալ այր, կին. **-дническій** ած. բանտարկեալի, կալանաւորի, գերու. к о л о́ д н и ч е с к а я, ой է. կալանք, արգելարան, արգելանոց. **-дничій,** чья, чье տ. Коло́дническій; к о л о́ д н и ч ь я, чьей տ. Коло́дническая; **-дочка** նւզ. տ. Коло́дка; **-дочникъ** ա. կօշիկների 'դալիբներ' շինող. կաղապարագործ. **-дочный** ած. 'դալիբի', կաղապարի։

Коло‖ко́ленка նւզ. տ. Колоко́льня; **-ко́ленный** ած. զանգակատան. **-ко́лецъ,** льца նւզ. տ. Ко́локолъ; к. въ го́рлѣ հոգեվարքի խախուդը. **-ко́лишко** ա. նւզ. **-коли́ще** ա. յեձ. տ. Ко́локолъ; **-(ко́—)колъ** ա. (յ. колокола́, о́въ) զանգակ. к. въ це́рковь сзыва́етъ, а самъ въ це́ркви не быва́етъ (առծ.). к—а́ лить յիմար յիմար բաներ դուրս տալ, սուտ խօսել. **-ко́льникъ** ա. զանգակագործ. **-ко́льный** ած. զանգակի. к. звонъ; **-ко́льня** է. զանգակատուն, զանգականոց. **-ко́льчатый** ած. զանգականձև, զանգակաւոր. к—ые цвѣ́ты զանգակածաղիկներ. **-ко́льчикъ** ա. նւզ. **1,** տ. Ко́локолъ; **2,** к о л о к о́ л ь ч и к и յ. բս. ա, Campanula, զանգակիկ. բ, Aquilegia vulgaris, հասարակ արծուամագիլ. **-ко́льщикъ** տ. Колоко́льникъ; **-ко́льщица** է. զանգակագործի կին։

Коло́къ, лка́ ա. նւզ. **1,** փայտէ պտիկ բիր, մեխ. **2,** ջուլհակի ականջ։

Ко́ломазь է. սայլի սապօն, նաւթ, խեժ։

Коло́менка է. նաւ, մեծ նաւակ։

Коломё́нокъ տ. Каламё́нокъ.

Коло‖низа́ція է. (ֆր.) բնակեցնելը (գաղթականներով). **-низи́ровать** (-рую -ютъ) ն. բնակեցնել (գաղթականներով), մի երկրում գաղութ հաստատել. **-ни́стъ** ա. (գերմ.) **-ни́стка** է. գաղթական, -ուհի. **-ніа́льный** ած. ամերիկեան գաղութներից բերած. к—ые това́ры; **-нія** է. (լտ.) գաղութ, գաղթականութիւն։

Коло́‖нна է. (ֆր.) **-нка, -ночка** նւզ. **1,** սիւն, մեծ, երկար շրասիւն. **2,** կոթող, սիւնաձև արձան. **3,** զօր. զօրասիւն, զօրաշարք. маршъ к—ами; боева́я, взво́дная к.; **4,** նաւաշարք. **-на́да** է. (ֆր.) սիւնաշարք. **-новожа́тый,** аго ա. զօր. զօրասիւնի առաջնորդ. **-нный** ած. սիւնի, սիւնա—։

Колоно́къ, нка́ ա. կնդ. Mustela sibirica, սիբիրական սամոյր։

Коло‖рату́ра է. (լտ.) երժ. գեղգեղանք. **-рату́рный** ած. գեղգեղաձայն. к—ая пѣви́ца; գեղգեղանքով. **-ри́стъ** ա. (ֆր.) երան-

գանկար, -նկարիչ. **-ри́тъ** ա. (լտ.) երանգաւորում, երփնաւորում:

Коло‖си́стый ած. հասկաշատ. **-си́ться** (-шу́сь -ся́тся), вы́к—, չ. հասկաւորել, հասկ տալ, հասկ արձակել, քշել. **-си́ще** ա. յաւլ. տ. Ко́лосъ; **-сни́къ**, á ա. կրակակալ (վառարանի մէջ). **-сни́ца** ի. բս. Stachys sylvatica, արեգախոտ (եզնախոտ). **-сно́й**, -(ко́—)**сный**, **-сово́й** ած. հասկի, հասկաւոր. **-сови́дный** ած. հասկաձև, հասկակերպ. **-со́къ**, ска́ ա. **-со́чекъ**, чка նւզ. 1, տ. Ко́лосъ; 2, բս. Anthoxanthum, ժահախոտ:

Колосса́ль‖ность ի. խիստ մեծութիւն, վիթխարիութիւն. *ահեղութիւն, հզօրութիւն. **-ный** ած. խիստ մեծ, վիթխարի. *ահեղ, հզօր:

Коло́ссъ ա. (յն.) խիստ մեծ, վիթխարի բան; առարկայ. *ահեղութիւն, հզօրութիւն, անպարտելի ոյժ, զօրութիւն:

Ко́ло‖съ ա. (յ. коло́сья, сьевъ) հասկ. **-ся́нка** ի. կնդ. Atherina, հասկաձուկ. **-ся́но́й** ած. հասկի:

Колоти́ло չ. ծեծիչ, թակիչ փայտ. **-ти́ть** (-чу́ -тятъ; -ти́), **-тну́ть** ն. ծեծել, թակել, զարկել. թափ տալ (շորեղէնը):

Коло́тіе չ. 1, ճեղքում, կտորում (փայտի). 2, խոցում, ծակում:

Коло‖то́вка ի. 1, իւղ հարելու փայտ, խառնիչ. 2,* չար, լեզուանի կնամարդ. **-ту́шечка** նւզ. **-ту́шка** ի. 1, թակ, ծեծիչ. **-ту́шечный** ած. թակի, ծեծիչի. **-ты́рка** տ. Колото́вка 2.

Ко‖ло́ть (-лю́ -лешь -лютъ) 1, (коло́ть, ка́лывать) ն. ճեղքել, կտորել, կոտրտել. к. дрова́; к. са́харъ; 2, (коло́ть, ка́лывать, кольну́ть) ա, վիրաւորել, սպանել. խոցոտել, ծակել. к. кого́ була́вкою; к. бара́на ոչխարը մորթել. բ, խրել, խշտել, մխել, թաղել. у меня́ ко́летъ въ боку́ անդ. կողքս ծակում է. пра́вда глаза́ ко́летъ (առծ). 3,* վիրաւորել, կծել, կշտամբել. к. кого́ въ глаза́ чѣмъ մի բան մէկի երեսովը տալ, մէկին մի բանի համար յանդիմանել. это ему́ глаза́ ко́летъ այդ նորա աչքի փուշն է. **-ся** չ. 1, ծակել, կծել, խայթել. ро́за ко́лется; 2, փոխդ. միմեանց ծակծկել, խոցոտել. **-лотьба́** ի. 1, խփելը, զարկելը, թափ տալը. 2, ողորմելի կեանք, աղքատութ. 3, վէճեր, դժգոհութիւններ. 4, ճանապարհի սատած ցեխը, աղբը. **-ло́тье** չ. 1, տ. Коло́тіе; 2, ծակումն. տ. Ко́лика; к. въ боку́, въ плечѣ́, въ спинѣ́, въ груди́.

Коло‖фони́тъ ա. հնք. Colophonite, կոլոֆոնիտ (բեեկնաքար?):

Коло́чекъ, чка նւզ. փայտէ պստիկ ցից, մեխ. какъ сейча́съ съ к—чка снялъ հէնց նոր զամբիկից հանած, բոլորովին նոր, թափ թազայ:

Колоче́ніе չ. զարկելը, թակելը, ծեծելը:

Колоше́ніе չ. հասկ դնելը, հասկ քշելը, հասկ տալը:

Колпа́‖къ, á (թուրք.) ա. **-чёкъ**, чка́ նւզ. 1, գիշերազդակ, փեղոյր. 2, խուփ, խփան, կափարիչ (աչալի կաթսայի), ծածկոց. стекля́нный к. փեղոյրաձև ապակի, որով ծածկում են օր. սենեակում դրած ժամացոյցը. ла́мповый к. լուսամփոփ, լուսակալ (տ. Абажу́ръ 1); 3,* թոյլ, յոյլ, ծոյլ, քնած, պարզամիտ մարդ. **-чи́ще** ա. յաւլ. մեծ, ահագին գիշերազդակ, փեղոյր. **-чникъ** ա. 1, (**-чница** ի.) փեղոյրագործ, գիշերազդակներ կարող կամ ծախող այր, կին. 2, արաղ քաշելու կաթսայի վերայ հսկող գործաւոր. **-чный** ած. փեղոյրի, փեղոյրա—, գիշերազդակի:

Ко́л‖пикъ ա. **-пица** ի. կնդ. Platalea, [արու, մարի] գրգալաւոր արագիլ. **-пичій**, чья, чье ած. գրգալաւոր արագլի:

Колра́би տ. Кольра́би.

Колту‖нова́тый ած. մազի կնճռութեան նման. **-но́вый** ած. մազի կնճռութեան. **-нъ** ա. (լեհ.) բժ. Plica polonica, մազի կնճռութիւն, մազի հերախտ (որով վարակուածի գլխի մազերը բոլորովին խճճուում, թաղիք են դառնում, գլխի վերայ քոս և որդունք է առաջանում):

Колу‖па́ніе չ. քերելը, ճանկռտելը, պոռճոկելը, քչփորելը. **-па́ть**, **-пывать**, **-пну́ть** ն. քերել, ճանկռտել, պոռճոկել, քչփորել. «стоя́лъ лицо́мъ къ стѣнѣ́—и колупа́лъ въ ней но́гтемъ»; **-по́къ**, пка́ ա. տ. Колупа́ніе.

Колу́рій ա. (յն.) աստղբ. աղատ (երկնագնդի երկու մեծագոյն շրջանների խաչաձևիչները):

Колча́‖нный ած. կապարճի, կապարճա—. **-нъ** ա. **-нчикъ** նւզ. կապարճ:

Колчеда́нъ ա. հնք. pyrite; հրաքար. желѣ́зный, мѣ́дный, сѣ́рный к.

Колчено́гій ած. կաղ, ‘չոլախ‘:

Колъ, á ա. (յ. ко́лья, ьевъ) 1, ցից, ձող(ի), ցից. ко́лья пала́тки վրանի ցցերը. ему́ хоть к. на головѣ́ теши́ ոչինչ բան նորա վերայ չէ ազդում. к—о́мъ засѣ́сть за рабо́ту աշխատանքի վերայ մեխուիլ. това́ръ к—о́мъ сѣ́лъ ապրանքի վերայ խնդրանք չկայ. у него́ ни к—а́, ни двора́ նա բոլորովին մերկ, տկլոր է, ոչինչ չունի. гдѣ́ онъ к—о́мъ сѣ́лъ նա ճւր կոյտ. 2, ձիու սաւրին ժանիքը:

Колыбе́‖ль ի. **-лька**, **-лечка** նւզ. օրօրոց, որորան (եւ փոխբ. հմ.) положи́ть ребёнка въ к.; Флоре́нція была́ к—ью новѣ́йшей живописи; **-льный** ած. օրօրոցի, որորանի. к—ая пѣснь.

Колы́‖га 1, ի. կուռծ, կտոր (աղբի, կեղկղանքի). 2, ա. գծուծ, ժլատ մարդ. **-жка** ի. 1, տ. Колы́га 1; 2, թակի, պարանի մէջ կապ, ոլորուածք, գալարուած տեղ. гнуть к—и կատակ անել:

Колыма́‖га ի. **-жка** նւզ. ծանր, հին, անճոռնի կառք. **-жникъ** ա. կառքագործ. **-жница** ի. միշտ կառքով ման եկող կնամարդ. **-жный** ած. колыма́га-ի:

Колы‖ха́ніе չ. ճօճելը, տարուբերելը, շարժելը. **-ха́ть** (-ха́ю -ха́ютъ և -шу́ -шутъ), **-хну́ть** ն. ճօճել, տարուբերել, շարժել. **-ся** անդր. և չ. ճօճուիլ, տարուբերուիլ, շարժուիլ. երերալ, տատանուիլ, տատանիլ:

Ко́лышекъ, шка նւզ. տ. Коло́къ.

Коль տ. Коли́.

Колье́ չ. անհ. (ֆր.) մանեակ:

Ко́‖льё, лья́ չ. հաւ. ցցեր, ցցեր. **-льево́й** ած. ցցերից շինած, ցցերի:

Кольми́, кольми́-па́че մ. առաւել ևս:

Кольну́ть, ся տ. Коло́ть, ся.

Кольра́би ա. անհ. բս. Brassica napus esculenta, ստեղի գոնգեղ:

Кольце‖во́й ած. մատանու, մատանի—. к. ка́мень մատանեքար. **-обра́зный** ած. մատանիաձև, մատանու նման:

Коль‖цо́ չ. (յ. ко́льца, лецъ) **1**, մատանի. вѣнча́льное, обруча́льное к.; **2**, օղ, կապ, շրջան (փայտէ, մետաղէ). змѣя́ сверну́лась к—о́мъ օձը շրջանաձև կծկուեց. к. для ключе́й; к. о́коло со́лнца ծիր, շրջան արեգակի շուրջը. **-ча́тый** ած. մատանևոր, օղաւոր. к—ыя живо́тныя, к—ые че́рви կմ **-чѐцы** ա. յ. կնդ. Annulata, օղակաւոր որդեր. **-чу́га** ի. պատիկ օղակներից շինած զրահ, օղազրահ. **-чу́жникъ** ա. օղազրահակիր. **-чу́жный** ած. **1**, օղաւոր, օղակաւոր. к—ая бро́ня; **2**, օղազրահի:

Колѣ́‖нко չ. նւզ. տ. Колѣ́но 1; **-нный** ած. ծնկի, ծնկա—. **-но** չ. (յ. колѣ́ни, ней և колѣ́на, -нъ) **1**, ծունկ. сто́ять на к—ямъ ծնկաչոք մնալ. станови́ться, стать на к—и չոքել. па́сть на к—и передъ кѣ́мъ մէկի առաջ ծունկ չոքել, մէկի ոտներն ընկնել. поста́вить кого́ на к—и մէկին չոքացնել. **2**, գալարուածք, պտոյտ, անկիւնաձև ծռուածք. узо́ръ к—ами; **3**, կոթ. к. рыча́жнаго ва́ла; **4**, տափեճան (ձայնի), գեղգեղանք, եղանակ. у солову́я дѐвять колѣ́нъ; **5**, ազգ, ցեղ, սերունդ. **6**, (յ. колѣ́нья, ьевъ) մաս, օղ, օղակ (շղթայի). յօդ, կապ, հանգոյց (ցօղունի):

Коленопреклоне́‖нie չ. ծունկ չոքելը, ծնրադրութիւն. **-ня́ться**, **-ни́ться** (-ню́сь -ня́тся) չ. ծնկաչոք աղօթել. **-нный** ած. ծնկաչոք արած, կատարած, արուող, կատարուող:

Кол‖ѣ́нце նւզ. յօդ, կապ. հանգոյց. промежу́токъ ме́жду к—ами բս. կապամէջ տարածութիւն ցօղունի. к. у сте́бля; **-нчатый** ած. կապերով, հանգոյցներով. յօդերով:

Колѣ́ть, ок— չ. չորանալ, քար կտրել. փայտանալ (ցրտից). (կենդանիների մասին) սատակել:

Ко‖лю́ տ. Коло́ть; **-лю́ка** ի. բս. Carlina vulgaris, հասարակ վարդափուշ կմ կարլինա. **-лючеко́жій** ած. փշամորթ. к—iя живо́тныя, կնդ. Echinodermata, Փշամորթեր. **-лючепёрый** ած. փշաթև. к—ыя ры́бы կնդ. Acanthopteri, Փշաթևեր. **-лю́честь** ի. փշոտութիւն. **-лю́чій** ած. կծող, խայթող, ծակող, փշոտ. **-лю́чка** ի. առհ. փուշ, խայթող իր, տատասկ, տատասկափուշ (Carduus acanthoides), կանգառ. **-лю́чникъ** ա. բս. Carlina, կարլինա, վարդափուշ. **-лю́шка** ի. **1**, կնդ. gasterosteus aculeatus, երեքփշեան ձուկ կամ փշատղիկ. **2**, բս. Eryngium planum, տափակ երնջնակ կմ երնժնակ. **-лю́щій** ած. ծակող, խոցող. рѣ́жущее и к—ее ору́жie; к—ая боль ծակուն:

Коля‖да́ ի. **1**, ծննդեան տօներ. **2**, ծննդեան տօնին ման գալը «Խորհուրդ մեծ». **-дка** ի. **1**, նւզ. տ. Коляда́; **2**, հայոց «Խորհուրդ մեծ»-ի նման երգ, որ երգում են ծննդեան տօներին. **-дова́нie** չ. «Խորհուրդ մեծ» ման գալը. **-дова́ть** (-ду́ю -ютъ) չ. «Խորհուրդ մեծ» ման գալ ծննդեան տօնի երեկոյին:

Коля́‖ска ի. **-сочка** նւզ. կառք (ծածկած և ռէսօրներով). **-сочный** ած. կառքի. **-счёнка** ի. նխտ. վատ, անպիտան կառք:

Кома́н‖да ի. (ֆր.) **1**, խումբ, ջոկատ. вое́нная к. զօրախումբ, զօրախմբակ. пожа́рная к. հրդեհաշէջներ. **2**, հրաման. по к—ѣ своего́ нача́льника; **3**, հրամանատարութիւն, մեծաւորութիւն. приня́ть к—у надъ войска́ми; **-дирова́ть** (-ру́ю -ютъ), отк—, (ֆր.) պաշտօնական պատուէրով ուղարկել. **-диро́вка** ի. ուղարկում, առաքում (պաշտօնական պատուէրով). **-ди́рскій** ած. հրամանատարի. **-ди́рша** ի. հրամանատարի կինը. **-ди́ръ** ա. (ֆր.) հրամանատար, մեծաւոր. полково́й, баталіо́нный к.; **-дный** ած. հրամանի. к—ыя слова́; **-дова́нie** չ. հրամայելը, հրամանատարութիւն անելը. **-дова́ть** (-ду́ю -ютъ) չ. (ֆր.) кѣ́мъ-либо, чѣ́мъ-либо **1**, մէկի, մի բանի վերայ հրամանատարութիւն անել, մէկին, մի բան ղեկավարել, մի բան կարգադրել. **2**, հրաման արձակել, հրաման տալ. к. къ ружью́; к. во фро́нтъ; **3**, (ամրոցի, բարձրութեան, դիրքի մասին) իշխել, տիրապետել. к о м а́ н д у ю щ i й 1, ած. իշխող, տիրապետող (դիրք, տեղ). 2, գոյ. ա. հրամանատար. к. войска́ми вое́ннаго о́круга; **-до́рскій** ած. հասոյթընկալ ասպետի. **-до́рственный** ած. հասոյթընկալ ասպետութեան. **-до́рство** չ. հասոյթընկալ ասպետութիւն. **-до́ръ** ա. (ֆր.) **1**, (առաջ) հասոյթընկալ ասպետ (ասպետական կարգի կալուածքը կառավարող և վայելող ասպետ). **2**, (այժմ) բարձրագիր ասպետ, որ շքանշանը կրում է պարանոցին. **-ду́ющій** տ. Кома́ндовать.

Кома́‖рикъ նւզ. **-ришко** ա. նխտ. **-ри́ще** ա. յեւլ. տ. Кома́ръ; **-рі́й**, ья, ье ած. մոծակի, մոծակային. **-ръ**, а́ ա. **1**, մոծակ. дѣ́лать изъ к—а́ слона́ լուից ուղտ շինել. **2**, երկաթէ թերթեր ծակոտելու մեքենայ. **3**, բս. Agrimonia Eupatoria, հասարակ երեանակ

Комби‖на́ція ի. (ֆր.) կոմբինացիա, մտակարգութիւն, մտքերի զուգաւորում (որոշ մտքերի լոռհուն կապակցութիւնը միմեանց հետ. որոշ մտքերի կապակցութիւնից հանած եզրակացութիւն, հաշիւ). **-ни́ровать** (-ру́ю -ютъ) ն. մտակարգել, հաշուել (մտքերը, հանգամանքները միմեանց հետ կապակցելով):

Коме‖діа́нтскій ած. կատակերգուի. ծաղրածուի. **-діа́нтъ** ա. (ֆր.) **-діа́нтка** ի. **1**, կատակերգու այր, կին. **-дія** ա. (յն.) **-ді́йка** նւզ. **1**, կատակերգութիւն. ку́кольная к. պաճուճապատախաղ. **2**, կատակ, ծաղրալի դէպք, անցք. *это ку́кольная к. այդ կատարեալ ծաղրածութիւն է:

Комелёкъ տ. Камелёкъ.

Ко́ме‖ль, мля ա. ստորին ծայր, տակ, ‘ոլք‘ (գերանի, աւելի, խրձի. հկ. տ. Во́лоть 2); **-ный** ած. ստորին ծայրի, ‘ոլքի‘:

Коменда́‖нтскій ած. կոմէնդանտի. к—ое управле́нie ամրոցապահական, գլխաւոր պահականոցի (гауптва́хта) վարչութիւնը. **-нтъ** ա. (ֆր.) կոմէնդանտ, հրամանատար ամրոցի, ամրոցապետ, բերդապետ. **-нтша** ի. կոմէնդանտի կին:

Коме́‖та ի. (յն.) **-тка**, **-точка** նւզ. գիսաւոր, ագեոր աստղ. **-тный** ած. գիսաւոր

ստղի. **-тогра́фія** ի. (յն.) գիսաւոր աստղերի նկարագրութիւն:

Ко‖ми́змъ ա. (ֆր.) կոմիզմ (առարկայի ծաղրական կողմը). **-микъ** ա. (ֆր.) 1, կատակերգու [դերասան]. 2, կատակերգութիւնների հեղինակ:

Комильфо́‖тный ած. (ֆր.) լաւ, ընտիր, բարի, պատշաճաւոր. **-тность** ի. ընտիր, բարի լինելը. լաւութիւն, պատշաճաւորութիւն:

Комисса‖ріа́тскій ած. կոմիսարիատի. **-ріа́тъ** ա. (ֆր.) կոմիսարիատ (հիմնարկութիւն, որ զօրքը թէ դրամով և թէ մթերքներով պարենաւորում է). **-рскій** ած. կոմիսարի. **-рство** չ. (ֆր.) կոմիսարութիւն **-ръ** ա. կոմիսար. 1, վարչական պաշտօնեայ, լիազօր. верхо́вный к. վարչապետ. 2, մատակարար (մթերքների, իրերի եւն):

Комиссіо‖не́рскій ած. կոմիսիոների, գործակալի. **-не́ръ** ա. (ֆր.) կոմիսիոներ, գործակալ:

Комис‖сіо́нный ած. կոմիսիայի, կոմիսիոնական. **-сія** ի. (ֆր.) կոմիսիա. 1, պատուէր, յանձնարարութիւն, ապսպրանք. дать това́ръ на к—ію ապրանքը պահ տալ. получи́ть това́ръ на к—ію ապրանքը պահեստի մէջ ընդունել. 2, յանձնաժողով, մասնաժողով (որոշ գործի համար ընտրուած կամ նշանակուած). испыта́тельная к.

Комите́‖тскій ած. կոմիտէի. **-тъ** ա. (անգլ.) կոմիտէ, խորհրդաժողով, խորհուրդ. учёный, революціо́нный, биржево́й к.; к. министро́въ.

Коми́‖ческій ած. կոմիքական, ծաղրալի, ծիծաղաշարժ, զուարճալի. **-чески** մ. ծաղրալի, ծաղրաշարժ եղանակով:

Ко́м‖канье չ. ճմլտելը, ճմռտելը. **-кать**, ск—, ն. ճմլտել, ճմռտել (թուղթ, շորեղէն). գնդել (ձիւն). **-кова́тый** ած. գնդաձև:

Ко́мликъ նւզ. տ. Ко́мель.

Коммен‖та́рій ա. (լտ.) մեկնութիւն, մեկնաբանութիւն, բացատրութիւն (շարադրութեան, մութ կէտի). **-та́торъ** ա. մեկնաբան, բացատրող, պարզաբանող. **-ти́рованіе** չ. բացատրելը, մեկնելը. **-ти́ровать** (-рую -ютъ) ն. մեկնել, բացատրել, լուսաբանել, պարզաբանել (շարադրութիւնը, գրուածքի մութ կէտը):

Комме‖рса́нтъ ա. առևտրական, վաճառական, 'սովդագար'. **-рція** ի. (լտ.) առուտուր, վաճառականութիւն. **-рческій** ած. առևտրական, վաճառականական. к. банкъ, к—ое учи́лище.

Комми́ ա. անհ. (ֆր.) գործակալ, պատուիրակալ, գրագիր (վաճառականի, սեղանաւորի):

Комму́‖на ի. (ֆր.) համայնք, հասարակութիւն (քաղաքական). **-ни́змъ** ա. (նոր լտ.) կոմունիզմ, համայնականութիւն (քաղաքական վարդապետութիւն, որ ձգտում է ազգութեան մէջ օրինական և կայքի ու գոյքի հաւասարութիւն հաստատել, ոչնչացնելով անձնական սեփականութեան իրաւունքը). **-никаціо́нный** ած. հաղորդակցութեան. к—ая ли́нія; **-ника́ція** ի. (լտ.) հաղորդակցութիւն, ճանապարհ. **-ни́стъ** ա. (լտ.) համայնական (կոմունիզմի հետևորդ, կուսակից):

Коммута́торъ ա. (լտ.) ֆիզ. հոսանքադարձ գործիք:

Ко́мна‖та ի. **-тка, -точка** նւզ. սենեակ, 'օթախ'. **-тный** ած. սենեկի, -կային, 'օթախի'. к—ыя расте́нія.

Комо́‖дъ ա. (ֆր.) **-децъ**, дца նւզ. կոմոդ, պահարան շարժուն արկղներով. **-дный** ած. կոմոդի. к. я́щикъ.

Комо́къ, мка́ տ. Комъ.

Комо́лый ած. անեղջիւր, անպոզ, առանց եղջիւրների, առանց պոզերի (օր. կով):

Комо́чекъ, чка նւզ. տ. Комо́къ.

Компа́ктный ած. սեղմուած, խտաշար, խտագիր. к—ое изда́ніе.

Компа‖не́йскій ած. ընկերութեան, հասարակութեան. **-нія** ի. (ֆր.) 1, ընկերութիւն, հասարակութիւն. 2, առևտրական, արդիւնաբերական միութիւն, ընկերութիւն. **-ньо́нъ** ա. **-ньо́нка** ի. (ֆր.) 1, զրուցակից, -կցուհի, ընկեր, -ուհի, ուղեկից, -կցուհի (որ վարձուած է մէկի մօտ նորան զրուցակցելու, ուղեկցելու եւն). 2, առևտրական կամ արդիւնաբերական ընկերութեան անդամ այր, կին:

Ко́мпа́‖съ ա. (լտ.) **-сикъ** նւզ. կողմնացոյց, բևեռացոյց. **-сный** ած. կողմնացոյցի, բևեռացոյցի:

Компен‖саціо́нный ած. հաւասարակշռութիւն հաստատող, փոխարէն, փոխանակ նշանակուող. к—ая по́шлина; **-са́ція** ի. (լտ.) 1, ֆիզ. փոխակշռութիւն. 2, տրիտուր, փոխադարձ հատուցում. **-си́ровать** (-рую -ютъ) ն. փոխարէնը տալ, հատուցանել, բերել, լրացնել, փոխարինել. к. недоста́тки чего́ մի բանի պակասութիւնները լրացնել, ծածկել:

Компе‖те́нтность ի. 1, վարչական իշխանութիւն, իրաւասութիւն. 2, ձեռնհասութիւն. **-те́нтный** ած. (լտ.) ձեռնհաս, իրաւասու. **-те́нція** ի. (լտ.) իշխանութիւն, իրաւասութիւն, ձեռնհասութիւն. это не въ мое́й к—іи այդ իմ իրաւասութեան տակ չէ:

Компи‖ли́рованіе չ. մեքենայական բանաքաղութիւն. **-ли́ровать** (-рую -ютъ) ն. (գերմ.) քաղուածօրէն հաւաքել, յերիւրել, մեքենայօրէն բանաքաղել. **-ля́торъ** ա. (լտ.) այստեղից այնտեղից քաղող, հաւաքող, յերիւրող. բանաքաղ. **-ля́ція** ի. (լտ.) քաղուածք, մեքենայական բանաքաղութիւն, յերիւրուածք, այլ և այլ շարադրութիւններից քաղուածօրէն կազմած գիրք, յօդուած: [ніе.

Компле́ксія ի. (լտ.) տ. Тѣлосложе-

Компле‖кта́ція ի. (նոր լտ.) զոր. զօրալրական վարչութիւն. **-ктный** ած. (ֆր.) 1, լրիւ, լրացրած, ամբողջ. 2, կոմպլէկտային, կոմպլէկտի մէջ մտնող (հակառ. տ. Закомпле́ктный); **-ктова́ть** (-ту́ю -ютъ) ն. (լտ.) լրացնել, լիաթիւ դարձնել. **-ктъ** ա. (լտ.) կոմպլէկտ, լիակատար թիւ, կազմ. боево́й к. ռազմակազմ. к. новобра́нцевъ նորակոչների թիւ, կազմ:

Компле́кція տ. Компле́ксія. [ճիւ:

Компли́ка́ція ի. (լտ.) բարդութիւն, կըն-

Комплиме́нтъ ա. (ֆր.) կոմպլիմէնտ, հաճոյական խօսք: [թիւն:

Компло́тъ ա. (ֆր.) դաւ, դաւադրու-

Компо‖зи́торскій ած. երաժշտագրի.

-зи́торъ м. (ֆր.) **-зи́торша** է. երաժշտագէտ, -գրուհի, դաշնակող այր, կին. **-зи́ція** է. (ֆր.) **1**, կազմութիւն. **2**, երաժշտագրութիւն, դաշնակում, երաժշտական շարադրութիւն. **3**, կեղծ, շինծու, արհեստական ականակն, զոհար. **-зи́чный** ա. **1**, հաւաքած, -քովի, կազմած, -մավի. **2**, շինծու, արհեստական. к—ые ка́мни; **-ни́ровать** (-рую -ютъ) ն. եռմ. դաշնակել, շարադրել, երաժշտագրել. **-ни́стъ** (գերմ.) **-ни́стка** ա. Композиторъ, -рша; **-нова́ніе** չ. **1**, կարգաւորելը, դասաւորելը. **2**, դաշնակելը, երաժշտագրելը. **-нова́ть** (-ну́ю -ютъ), ск—, ն. (լա.) **1**, կարգաւորել, դասաւորել (գեղարուեստական երկը). **2**, ա. Компони́ровать.

Компо́стъ м. (գերմ.) պարարտիչ աղբ, աղբախառնուրդ: [փտած մերգ, ‹չամչաքակ›:

Компо́тъ м. (ֆր.) կոմպոտ, շաքարով ե-

Ком||прéссоръ м. սեղմիչ, ճնշիչ գործիք. **-прéссъ** м. (ֆր.) կոմպրէս (ջրի, քացախի եւն մէջ թացած փաթոթոթ, որ դնում են մարմնի ցաւող տեղի վերայ՝ ցաւն ամոքելու համար):

Компрометúровать (-рую -ютъ), ск— ն. (ֆր.) խայտառակել, անունը կոտրել, պարսաւորել:

Компроми́ссъ м. (ֆր.) փոխադարձ պայմանադրութիւն, հաշտութիւն, համաձայնութիւն, իրաւախոհութիւն:

Комфо||ртáбельность է. յարմարութիւն (կեանքի). **-ртáбельный** ա. յարմար, հաճոյական, զուրեկան. **-ртъ** м. (անգլ.) յարմարութիւն, վայելք (կեանքի):

Комъ м. (յ. кóмья, ьевъ) գունդ, գուղձ. к. снѣ́га; к. бѣ́лья ճերմակեղէնի բողչայ. свернýть въ к. գնդել. пéрвый блинъ к—омъ ա. Блинъ; раздрóблять кóмья на пáшнѣ. [տուն, պատօնատուն.

Конáкъ м. (թուրք.) ապարանք. վարչա-

Конáть, дóк—, ն. վերջացնել, վերջ փախճան տալ. ոչնչացնել, ջնջել:

Конвé||нтъ м. (լա.) **1**, ժողով. **2**, պատմ. կոնվէնտ, ժողով (1792 թ. ֆրանսիական ազգային ժողովը). **-нціóнный** ա. դաշնադրութեան. **-нція** է. (ֆր.) դաշնադրութիւն (պետութեանց մէջ):

Конвéрсія է. (գերմ.) բարեփոխում, բարեփոխութիւն (պետական պարտքերի, փոխառութեան, որ կատարւում է օր. տոկոսները նուազեցնելու նպատակաւ). к. госудáрственныхъ долгóвъ.

Конвéр||тъ м. (ֆր.) **-тикъ** նւզ. կոնվէրտ, ծրար (նամակի, այլեայ թղթերի). купи́ мнѣ́ десятóкъ кóнвертовъ; вложи́ть письмó въ к. [ձիավորներ ուղեկցութեամբ:

Конви́ктъ м. (լա.) համալսարանական (բար-

Кон||воевáть (-вою́ю -ютъ) ա. Конвои́ровать; **-вóй** м. (ֆր.) կոնվօյ (պահակախումբ, որ զգուշութեան համար մի եւ է մէկին ուղեկցում է). **-вóйный** ա. կոնվօյի, պահակախմբի. **-вои́ровать** (-рую -ютъ) ն. (ֆր.) ուղեկցել, տանել. **-вóиръ** м. պահականաւ, կոնվօյանաւ:

Конвуль||сúвно ն. ջղաձգաբար, ցնցումով. **-сúвный** ա. ջղաձգութեան, ջղաձգական, ցնցողական. **-сія** է. (լա.) ջղաձգութիւն, մկանաձգութիւն, ցնցում:

Конгломерáтъ м. հնք. conglomérat, շեղջաքար (կուտակաքար): [(վանական):

Конгрегáція է. (լա.) միաբանութիւն

Конгрéссъ м. (լա.) **1**, վեհաժողով, դիւանագիտաժողով (ժողով վեհապետների կամ նրանց լիազօրների՝ քաղաքական կարեւոր խնդիրներ լուծելու համար). **2**, համաժողով (գիտնականների՝ այլեայ գիտական խնդիրների համար):

Кондáкъ м. (յն.) եկղ. համառօտ երգ, օրհներգութիւն ’ի փառս Փրկչի, Աստուածածնի կամ որ եւ է սրբի:

Конден||сáторъ м. (լա.) խտացուցիչ մեքենայ. ֆիզ. ելեքտրահաւաք մեքենայ. **-сáція** է. (լա.) խտացնում. խտացում:

Кондитé||рская, ой է. կոնդիտերատուն, քաղցրանոց (տուն, խանութ, ուր այլ եւ այլ շաքարեղէններ, քաղցրեղէններ են պատրաստում եւ ծախում). **-рскій** ա. կոնդիտերի. **-ръ** м. (լա.) **-рша** է. կոնդիտեր, -ուհի, քաղցրագործ, -ուհի (այր, կին, որ շաքարեղէններ, քաղցրեղէններ է պատրաստում եւ ծախում):

Конди́ція է. (ֆր.) **1**, պայման, պայմանադրութիւն, դաշն. **2**, մասնաւոր դաս. ходи́ть на к—іи մասնաւոր դասեր տալ:

Кóндоръ м. կնդ. Sarcoramphus, պատկուճ կամ կորճ. [ծայրին հարուած:

Кондрáшка է. ռմկ. կաթուած, կաթուա-

Кон||дуи́тный ա. (ֆր.) վարքի. **-дуи́ты**, овъ м. յ. (ֆր.) վարքի վկայական:

Кондýкторъ м. (լա.) կոնդուկտոր. **1**, ֆիզ. ելեքտրակալ (ելեքտրածին մեքենայի մի մասը). **2**, ենթասպայ նաւային ճարտարապետների մարմնի. **3**, [երկաթուղու, հանրային կառքերի, վագօնների, արամվէյների] վարիչ, ծառայ. **4**, տնտեսապետի օգնական.

Ко||небы́къ м. կնդ. Catoblepas gnu, ձիեղջերու. **-нёвина** ա. Кони́на; **-нёвій**, вья, вье ա. ձիու, ձիական. **-невóдство** չ. ձիաբուծութիւն. **-невóдъ** м. ձիաբոյծ. **-нёвъ**, а, о ա. ձիու, ձիական, ձիային. **-некóвка** ա. Конякóвка; **-нёкъ**, конька́ м. **1**, նւզ. ա. Конь; **2**, (սովոր. յ. коньки́) չմուշկ, սառահնակ (սահնակաձեւ երկաթէ քօշեր, որ հագնելով սառցի վերայ սահում, ‹չմշկում› են). бѣ́гать, катáться на конькáхъ ‹չմշկել›. **3**, կնդ. gryllus, ծղրիդ. **4**, կնդ. Hippocampus brevirostris, ձիաձուկ կամ ծովաձի. **5**,* յանկալիք, պաշտելիք. սիրելի, պաշտելի բան, տարփայ. у всякаго свой к.

Конéцъ, нцá м. **1**, վերջ, վախճան. при концѣ́ жи́зни, до концá жи́зни մահուան ժամանակ, ցմահ. въ концѣ́ концóвъ վերջ ի վերջոյ. подъ к. վերջը. приходи́ть къ концý վերջանալ, սպառիլ, հատնել. к. дѣ́лу вѣнéцъ գործի վերջն է գովելի. привести́ дѣ́ло къ концý գործն աւարտել. **2**, ծայր. к. шпáги, перá; своди́ть концы́ съ концáми ծայրը ծայրին հասցնել (իւր ունեցածով մի կերպ կառավարուել, ‹եօլա գնալ›). дѣ́ло съ концóмъ գործը վերջացած, աւարտած է. концá крáю не видáть վերջ չկայ. по к. пáльцевъ վայր ’ի վերայ. другъ по к. рукъ անվստահելի բարեկամ. хорони́ть концы́, концы́ въ вóду [փաստ] գործը ծածկել, ‹կոծ-

կել՝, պարտկել, քնացնել. 3, որոշ տարածութիւն, ճանապարհ. одинъ к. գնալը. два конца́ գնալ և վերադառնալը:

Конёчекъ, чка նւզ. տ. Конь.

Коне́‖чно ?. 'ի հարկէ, հարկաւ, անշուշտ. **-чность** է. 1, ծայր, եզր, սահման, վախճան. 2, վերջ, վախճան ունենալը. **-чный** ած. 1, վերջի, վերջին, վերջը գտնուող. к—ая бу́ква; *ծայրայեղ. к—ое разоре́ніе կատարեալ քայքայում. 2, վերջ ունեցող. к—ое существо́.

Ко́никъ տ. Ко́никъ 2.

Кони́на է. ձիու միս:

Кони́ческій ած. կոնաձեւ:

Ко́нка է. ձիաքարշ, տրամվէյ:

Конкла́въ ա. (լտ.) 1, փակարան, ժողովարան (Հռոմում, ուր ծիրանաւորները կատարում են պապի ընտրութիւնը). 2, այս ծիրանաւորների ժողովը:

Конкорда́тъ ա. (լտ.) կօնկորդատ (դաշնադրութիւն, համաձայնութիւն պապի և մարմնաւոր իշխանութեան մէջ):

Конкубина́тъ ա. (լտ.) հարճակալութիւն, անպսակ կենակցութիւն:

Конкре́тный ած. (լտ.) կոնկրէտ, թանձրացեալ:

Конку‖ре́нтъ ա. մրցակից, ախոյեան. **-ре́нція** է. (լտ.) մրցում. **-ри́ровать** (-рую -ютъ) չ. մրցել:

Ко́н‖курсный ած. կօնկուրսի, -սային. к. экза́менъ; к—ое сочине́ніе; **-курсъ** ա. (լտ.) 1, կօնկուրս, մրցութիւն (որ և է տեղի, պաշտօնի, մրցանակի համար). сочине́нія, предста́вленныя на к.; 2, պարտապանի գործերի վերայ կարգած ժամանակաւոր վարչութիւն:

Ко́н‖ная, о́й է. ձիավաճառանոց, հրապարակ, ուր ձիեր են վաճառում. **-никъ** ա. 1, ձիաւոր, հեծեալ, ասպազէն. 2, իշանուկ (նստարան գիւղական խրճիթում). **-ница** է. հեծելազօրք:

Конно‖артиллері́йскій ած. հեծեալ հրետանու, ձիաւոր հրետանու. **-гварде́ецъ**, де́йца ա. հեծեալ գվարդիական. **-гварде́йскій** ած. հեծեալ գվարդիայի. **-желѣ́зный** ած. ձիաքարշ. к—ая доро́га տ. Ко́нка; **-заво́дскій** ած. ձիաբուծութեան. **-заво́дство** չ. ձիաբուծութիւն. **-заво́дчикъ** ա. ձիաբոյծ. **-піоне́рный** ած. հեծեալ ռահվիրայի. **-піоне́ръ** ա. հեծեալ ռահվիրայ (ճամբայ բացող, կամուրջ ձգող, բանակատեղ ամրացնող եւն զօրական):

Ко́нный ած. 1, ձիու, երիվարի. к. бѣгъ; 2, ձիաւոր, հեծեալ. к. полкъ; к. карау́лъ; к—ая артилле́рія.

Конова́‖лъ ա. ձիաբոյժ, ձիու 'հէքիմ'. 'Չառուահ'. **-льный** ած. ձիաբուժութեան, -ժական. **-льскій** ած. ձիաբոյժների. **-льство** չ. ձիաբուժութիւն:

Коновни́къ, а́ ա. բս. Trifolium montanum, լեռնային առույտ:

Коново́‖децъ, дца ա. ձիաբոյծ. **-дить** (-жу -дятъ) չ. գնկավար, պարագլուխ, խռովարար հանդիսանալ. **-дка** է. 1, խռովարարուհի. 2, (Վօլգայի վերայ) մեծ լաստակի նաւ, որ քարշում են ձիերը: **-дный** ած. ձիատար, ձիերից քարշուող. к—ая маши́на; к—ое су́дно; **-дскій** ած. ձիաբոյծների. **-дственный** ած. ձիաբուծութեան. **-дство** չ. ձիաբուծութիւն. **-дъ** ա. 1, տ. Коново́децъ; 2, խռովարար, մաքեր պղտորող. 3, ձիերով նաւեր քարշող բանուոր:

Ко́но‖вязь է. հ—ք. ծայրերին շուաններով բրեր, որոնցից ձիերին դաշտում կապում են արածելու համար. **-кра́дство** չ. ձիագողութիւն. **-кра́дъ** ա. ձիագող, ձիերի գող:

Коно‖па́тить (-чу -тятъ), зак—, չ. խծուծել, խծուծով լցնել, կալնել, փակել որ և է բանի արանք, որ և է ծակ, ծերպ, ճեղք. **-па́тка** է. 1, խծուծելը, խծուծով լցնելը, կալնելը, փակելը. 2, խծուծիչ երկաթէ գործիք. **-па́тный** ած. խծուծիչ, խծուծելու. **-па́тчикъ** ա. խծուծող. **-па́тчица** է. սորա կինը. **-(ко́-)пать** է. վուշ, խծուծ (որ պատրաստում է կանեփի տանկի մնացորդներից), բամբակ, որոնցով որ և է բանի արանքները լցնում, կալնում են (օր. նաւը կպրաձիւթելիս). **-па́ченіе** չ. տ. Конопа́тка 1; **-па́чивать** տ. Конопа́тить.

Коно‖пе́ль, пля́ ա. բս. Cannabis sativa, հասարակ կանեփ. инді́йскій к., C. indica, հնդկականեփ. ди́кій к. Epilobium angustifolium, նրբատերև ապուզան. **-пе́лька** նւզ. տ. Конопля́; **-пе́льникъ** ա. բս. Eupatorium cannabinum, ապուզանուկ (պատերխոտ, երեանուկ?) **-пе́льный** ած. կանեփի. **-пля́** է. տ. Конопе́ль; **-пля́никъ** ա. կանեփավայր, կանեփ ցանած տեղ, դաշտ, անդ. **-пля́нка** է. 1, կնդ. Fringilla cannabina, կանեփակեր ճնճղուկ. 2, բս. Datisca cannabina, դեղին կանեփ. **-пля́ный** տ. Конопе́льный; к—ое ма́сло, сѣ́мя.

Коносаме́нтъ ա. ծովգ. ապրանքագիր, նաւի վերայ բարձած ապրանքի ցուցակը:

Консервати́‖вность է. պահպանողականութիւն. **-вный** ած. (նոր լտ.) պահպանողական. **-змъ** ա. պահպանողականութիւն, պահպանողական ձգտում:

Консервато́‖рія է. (նոր լտ.) կոնսերվատօրիա (բարձրագոյն երաժշտական ուսումնարան). **-рскій** ած. կոնսերվատօրիայի:

Консерва́торъ ա. (նոր լտ.) 1, պահպանողական [կուսակցութեան անդամ]. 2, վերակացու, վերահսկող. к. музе́я.

Консе́рвы ա. յ. (ֆր.) 1, աչքապաշտպան ակնոցներ (որ կրում են աչքերի պաշտպանութեան համար). 2, կօնսերվ (մրգեղէններ և ուտելեղէններ, որ առանձին կերպով պատրաստելով և լցնելով ժեշտէ տուփերի մէջ պահում են):

Конси́ліумъ ա. (լտ.) բժ. բժշկական խորհուրդ (ծանր հիւանդութեան պատճառով):

Консис‖торі́альный ած. կոնսիստորիական. **-то́рія** է. (լտ.) կոնսիստորիա (թեմական հոգևոր ատեան, որին նախագահում է թեմակալ առաջնորդը). **-то́рскій** ած. կոնսիստորի:

Ко́нскій ած. ձիու, ձիերի. к—ая сбру́я ձիու լծասարք. к. заво́дъ ձիաբուծութիւն. к. кашта́нъ բս. Aesculus hippocastanum, ձիակաղին, վայրի շագանակենի:

Конскри‖пціо́нный ած. զինուորագրական. **-пція** է. (լտ.) զինուորագրութիւն:

Консолиди́‖рованный բյ. ած. **1**, միացրած, 'ի մի գումարած, 'ի մի ձուլած (պետական պարտքերի մասին). **2**, յետաձգած (պետական պարտքերի, փոխառութիւնների մասին). к—ые за́ймы; **-ровать** (-рую -ютъ) ն. (լտ.) **1**, միացնել, 'ի մի գումարել. 'ի մի ձուլել (պետական այլ և այլ փոխառութիւնները, որ անում են օր. պետական բոլոր պարտքերի մէջ միութիւն հաստատելու, այդ պարտքերը յետաձգելու կամ անմարելի, մնայուն դարձնելու նպատակաւ). **2**, յետաձգել (պետական փոխառութիւնը)։

Консо́ль է. **1**, (ֆր.) ճարտր. կօնսօլ, ուս (պատի մէջ յօրինած արտակարկառ մաս, որի վերայ դնում են օր. սենեակային ժամացոյց, կիսարձան (бюсть) ևյն). **2**, (անգլ.) к о н с о́ л и, ей յ. հաստատուն պարտքեր (պետական)։

Консо́рціумъ ա. (լտ.) միութիւն, կապակցութիւն (սակարանական կամ առևտրական տների, բանկերի)։

Конспе‖кти́вный ած. կօնսպէկտային, համառօտ, հակիրճ. к—ая за́пись ле́кціи դասախօսութեան համառօտ գիր առնելը. **-ктъ** ա. (լտ.) **-ктикъ** նւզ. կոնսպէկտ (գրքի, շարադրութեան համառօտած բովանդակութիւնը, ամփոփումը)։

Констати́‖рованіе չ. ցոյց տալը, հաստատելը. **-ровать** (-рую -ютъ) ն. (ֆր.) ցոյց տալ, հաստատել (իրի, հանգամանքի գոյութիւնը)։

Консти‖туціо́нный ած. սահմանադրական. **-ту́ція** է. (լտ.) սահմանադրութիւն։

Констру́кція է. **1**, կազմ, կազմութիւն, դասաւորութիւն. **2**, շինուածք, յօրինուածք։

Ко́нсу‖лъ ա. (լտ.) կօնսուլ, հիւպատոս. **1**, հին Հռոմում բարձրագոյն պաշտօնեայ, որ ընտրւում էր ժողովրդից մի տարով և գրեթէ արքայական իրաւունքներ ունէր. **2**, Ֆրանսիայում 1799 թ. հաստատուած կառավարութեան (consulat) 3 անդամներից իւրաքանչիւրը. **3**, պետական գործակալ, որ օտար պետութեան առաջ պաշտպանում է իւր հայրենակիցների առևտրական շահերը. **-льскій** ած. կօնսուլի, հիւպատոսի, -սային. **-льство** չ. **1**, կօնսուլութիւն, հիւպատոսութիւն. **2**, հիւպատոսարան։

Консуль‖та́нтъ ա. (լտ.) բժշկական խորհրդին (консиліумъ) մասնակցող բժիշկ. **-та́ція** է. (լտ.) խորհրդածութիւն. пригласи́ть докторо́въ на к—ію.

Конта́рь ա. 'ղանթար' (կշեռք մի)։

Контена́нсъ ա. (ֆր) դիրք, կեցուածք. պատշաճութիւն, պատշաճաւորութիւն։

Континге́нтъ ա. (լտ.) մաս, բաժին, քանակութիւն, թիւ։

Конти‖нента́льный ած. ցամաքային. **-не́нтъ** ա. (լտ.) ցամաք։

Конто́‖ра է. (ֆր.) գրասենեակ, հաշուետուն. ба́нкирская к.; к. объявле́ній; почто́вая к.; к. нота́ріуса; **-рка** է. (ֆր.) **-рочка** նւզ. բարձր և թեք գրասեղան. **-рскій** ած. գրասենեակի, հաշուետան. **-рщикъ** ա. **-рщица** է. գրասենեակային պաշտօնեայ, գրասենեկում ծառայող այր, կին։

Ко́нтра է. (լտ.) հակառակութիւն. быть съ кѣмъ-нибу́дь въ к—ахъ մէկի հետ կռուած լինել, տարաձայնութեան մէջ գտնուել. у нихъ вы́шла к. նոքա գժտուեցան։

Контраба́н‖да է. (ֆր.) **1**, մաքսանենգութիւն. **2**, մաքսանենգութեամբ ներածած ապրանք. **-ди́стъ** ա. (ֆր.) մաքսանենգ. **-дный** ած. մաքսանենգութեան. մաքսանենգութեամբ ներածած, ներածուող, կատարուող. к—ые това́ры; к—ая торго́вля.

Контра‖баси́стъ ա. կօնտրաբասահար, կօնտրաբասի վերայ ածող. **-ба́съ** ա. (ֆր.) կօնտրաբաս (ամենամեծ ջութակը)։

Контраге́нтъ ա. (լտ.) դաշնադիր։

Контра‖ктова́ть (-ту́ю -ютъ), зак— ն. (լտ.) դաշնադրել, պայմանադրել, դաշնադրութեամբ կապել, պարտաւորեցնել. **-ся** անդր. պայմանաւորուիլ, կապուիլ. **-ктъ** ա. (լտ.) դաշնադրութիւն, պայմանադրութիւն, պայման։

Контра́ль‖то չ. անհ. **-тъ** ա. (իտ.) կօնտրալտ (ամենացածր իգական ձայն). **-товый** ած. կօնտրալտեան, -տային. к. го́лосъ.

Контра‖ма́рка է. (ֆր.) կօնտրամարկա, փոխատոմս (նշան, որ տոմսակի փոխանակ ժամանակաւորապէս տրւում է). **-ми́на** է. (ֆր.) ներքնաբերդեան ական. **-пу́нктъ** ա. (նոր լտ.) երժ. ձայնակարգութիւն. **-сигни́ровать** (-рую -ютъ) ն. (լտ.) փոխադարձաբար ստորագրել, վաւերացնել։

Контра́стъ ա. (ֆր.) հակապատկեր, ընդդիմապատկեր, հակադրութիւն։

Контрафа́кція է. (նոր լտ.) գրանենգութիւն։

Контри‖буціо́нный ած. պատերազմական տուգանքի. **-бу́ція** է. (լտ.) պատերազմական տուգանք, հարկ։

Конт‖ролёрскій ած. վերատեսուչի, վերահսկողի. **-ролёръ** ա. (ֆր.) վերատեսուչ, վերահսկող. **-роли́ровать** (-рую -ютъ) ն. (ֆր.) վերատեսչել, վերահսկել. **-ро́ль** ա. (ֆր.) վերատեսչում, -չութիւն, վերահսկում, -կողութիւն. **-ро́льный** ած. վերատեսչի, վերահսկող. к—ая пала́та վերատեսչի տեան։

Контрфо́рсъ ա. (ֆր.) նեցուկ, մայթ (դիմապիր)։

Контръ‖-адмира́лъ ա. կոնտր-ծովակալ (աստիճանով համապատասխանում է ցամաքային զօրքի генера́лъ-маіо́ръ-ին). **-манифеста́ція** է. (լտ.) հակառակ ցոյց (հրապարակական)։

Кон‖ту́зить (-жу -зятъ), ок—, ն. (լտ.) ճմլել, ջարդել, վիրաւորել. **-ту́зія** է. (լտ.) ճմլուած, ջարդուած տեղ, թեթև վէրք, սկրթուք (կշտով անցած գնդակից)։

Конту́‖рный ած. շրջագծի, ծիրի. к. рису́нокъ շրջագծած, ուրուագծած նկար. **-ръ** ա. (ֆր.) շրջագիծ, եզերագիծ, շրջապատ, ծիր. առհ. ուրուագիծ, ուրուանկար։

Кону́‖ра է. **-рка, -рочка** նւզ. **1**, շնաբուն. **2**,* ողորմելի հիւղ, բուն, որջ։

Ко́ну‖сный ած. կոնի. **-сови́дный**, **-сообра́зный** ած. կոնաձև. **-съ** ա. (լտ.) կոն, կոնաձև մարմին. усѣчённый к. հատնուած, ծայրատ կոն։

Конфедера́ція է. (լտ.) քաղաքական դաշնակցութիւն, նիզակակցութիւն (մի քանի կամ պետութիւնների)։

Конфере́нція է. (լտ.) **1**, ըհնգ. խորհուրդ, վեհաժողով (տ. Конгре́ссъ 1); **2**, առհ.

խորհուրդ, խորհրդակցութիւն կարևոր խնդիրների մասին:

Конфé‖та է. (լտ.) **-тка, -точка** նւզ. կոնֆետ. **-тный** ած. կոնֆետի. **-тчикъ** ա. **-тчица** է. կոնֆետավաճառ, -ուհի, կոնֆետագործ, ուհի:

Конфигурáція է. (լտ.) կերպարանաւորութիւն, ձեւաւորութիւն. արտաքին ձև, կերպարանք:

Конфиденціá‖льный ած. մտերմական, գաղտնի. **-льно** մ. մտերմաբար:

Конфир‖мáція է. (լտ.) 1, «դրոշմ» (բողոքական եկեղեցու մէջ հրապարակական խոստովանութիւն, վկայութիւն հաւատքի, դաւանութեան, որով դեռահաս (13—15 տարեկան) քրիստոնեան ընդունւելով հասուն համայնքի մէջ՝ առաջին անգամ հաղորդւում է). 2, վաւերացում, հաստատում (դատավճռի). **-мовáть** (-мýю -ютъ) ն. 1, եկղ. «դրոշմել», հրապարակաւ խոստովանեցնել հաւատքի, դաւանութեան մէջ, օրհնել և հաղորդել. 2, վաւերացնել, հաստատել:

Конфис‖кáція է. (լտ.) 1, գրաւում, արքունիք գրաւելը. 2, բռնելը, գրաւելը (չթոյլատրած գրքերը, ապրանքը). **-ковáніе** չ. գրաւելը, բռնելը. **-ковáть** (-кýю -ютъ) ն. 1, արքունիք գրաւել. 2, բռնել, խլել, գրաւել (չթոյլատրած գրքեր, ապրանքը):

Конфли́ктъ ա. (լտ.) ընդհարում, վէճ:

Конфó‖рка, -рочка տ. Канфóра, -рочка.

Конфý‖зить (-жу -зятъ), ск—, ն. (ֆր.) շփոթեցնել, 'շշկլացնել', շուարեցնել, ամաչեցնել. **-зія** է. (ֆր.) շփոթութիւն, շուարում:

Конфуціá‖нецъ, нца ա. Կոնֆուցիոս չինական իմաստունի և կրօնապետի հետևորդ. **-нство** չ. կոնֆուցիականութիւն, Կոնֆուցիոսի օրէնքը, վարդապետութիւնք:

Конхиліо‖логи́ческій ած. խխունջախօսական. **-лóгія** է. (յն.) խխունջախօսութիւն, խխունջաբանութիւն:

Конхóида է. երկրչփ. կոնքագիծ:

Концен‖трáція է. (լտ.) **-три́рованіе** չ. կենտրոնացնում. խտացնում. **-три́ровать** (-рую -ютъ) ն. կենտրոնացնել. խըտացնել. **-три́ческій** ած. (լտ.) համակենտրոն, -նական:

Кон‖цéптъ ա. (լտ.) նախագիծ. **-цéпція** է. (լտ.) ըմբռնում, իւրացնում, հասկացողութիւն:

Конце‖ртáнтъ ա. **-ртáнтка** է. համերգատու, կոնցէրտ տուող այր, կին. **-ртикъ** նւզ. տ. Концéртъ; **-рти́но** չ. անհ. (իտ.) 1, պստիկ համերգ, կոնցերտ. 2, երգեհոն մի. **-рти́стъ** ա. 1, համերգակից, կոնցերտին մասնակցող. 2, համերգադիր, կոնցերտներ շարադրող. **-ртный** ած. համերգի, կոնցերտի. к—ая зáла; **-ртъ** ա. (ֆր.) 1, կոնցերտ, համերգ, նուագահանդէս. 2, մի կամ մի քանի գործիքների համար շարադրած երգ:

Кон‖цессіонéръ ա. (նոր լտ.) արտօնատէր. **-цéссія** է. (լտ.) [տուած, զիջած] արտօնութիւն, առանձնաշնորհութիւն, մենաշնորհ. дать комý к—ію на постройку желѣзной дорóги.

Кон‖чáніе չ. վերջացնելը, աւարտելը, պրծնելը. **-чáть**, -чить, окóнчить ն. վերջացնել, աւարտել, պրծնել. к. рѣчь, чтéніе, дѣло; онъ кóнчилъ тѣмъ, что женился վերջ ի վերջոյ նա պսակուեց. **-ся** չ. 1, վերջանալ, աւարտուել. обѣдня кóнчилась; срокъ его́ нáйма кончáется; жизнь кончáется смéртью; 2, (сконч—) վախճանուիլ. онъ кончáется; онъ скончáлся; **-чикъ** նւզ. տ. Конéцъ; **-чи́на** է. վերջ, վախճան. **-чить** (-чу -чатъ), **ся** տ. Кончáть, ся.

Конъ ա. 1, խաղի տեղ, տարածութիւն. վէգերի (կոճիների) շարք. 2, Թղթխ. եկածը, դրածը:

Ко‖нь, я́ ա. 1, ձի, երիվար. доровóму коню́ въ зýбы не смóтрятъ (առծ.). морскóй к., Otaria jubata, ծովառիւծ կամ բաշեւոր փոկ. 2, շախմատի ձի. **-ньки́** տ. Конёкъ 1; **-нькобѣжецъ**, жца ա. 'չմշկող', սահադող. **-нькóвый** ած. 'չմուշկի', սահանակի. к. ремéнь.

Коньи́къ, á ա. (ֆր.) կոնեակ (բարկ օղի):

Кó‖нюхъ ա. ձիապան, ախոռապետ. **-нюшенка** նւզ. տ. Конюшня; **-нюшенный** ած. ձիանոցի, ախոռանոցի. **-нюшій**, шья, шье ած. ձիապանի, ախոռապետի. (իբրև գոյկ. ա.) տ. Кóнюхъ; **-нюшня** է. ձիանոց, ախոռանոց, գոմ:

Ко‖нянóвка է. բս. Vicia sativa, ընտանի վիկ (տճ. [illegible]):

Коопера‖ти́вный ած. ընկերակցական, միասին, միաբանութեամբ գործող, ներգործող. к—ыя учреждéнія; **-ція** է. (լտ.) ընկերակցութիւն. միասին, միաբանութեամբ գործելը:

Коорди‖нáты ա. յ. (լտ.) երկրչփ. կոորդինատներ, համակարգեալ գծեր. **-нáція** է. (լտ.) համակարգում, -գութիւն:

Копá է. 1, շեղջ, դէզ, կոյտ. 2, դէզ, 'եղն' (60 խրձից բաղկացած). խոտի դէզ:

Копáловый ած. կոպալի. к—ая кáмедь կոպալի խէժ:

Копалýха է. մայր փայտամորեակ, ցախահաւ:

Копáлъ ա. կոպալ (մի տեսակ խէժ):

Ко‖пáльный ած. փորելու, պեղելու. **-пáльщикъ** ա. փորող, պեղող բանուոր. **-пáніе** չ. փորելը, պեղելը, քանդելը. **-пáтель** տ. Копáльщикъ; **-пáть**, -пнýть ն. փորել, պեղել, քանդել, բրել. к. зéмлю, я́му; к. колóдезь; к. гряды́ ածուներ փորել, պատրաստել. к. въ носý քիթը քչփորել. **-ся** չ. դանդաղ շարժուիլ, մի բանի վերայ շատ 'մլոլ անել'. какъ вы дóлго копáетесь за э́тою рабóтою!

Ко‖пéечка նւզ. տ. Копéйка; **-пéечникъ** ա. 1, բս. Alectorolophus, աքլորբըռուկ (աքաղաղի կատար). 2, ժլատ, գծուծ, կծծի մարդ. **-пéечный** ած. կոպէկանոց. **-пéйка** է. կոպէկ. կոպէկանոց դրամ. зашибить к—у մի քանի կոպէկ 'դաղել', աշխատել:

Копе‖йстскій ած. արտագրողի, ընդօրինակողի. գաղափարողի. **-йстъ** ա. (լտ.) արտագրող. ընդօրինակող, գաղափարող:

Копё‖нка, -ночка նւզ. տ. Копнá; **-нный** ած. բարդերի(ց):

Ко‖пёрщикъ ա. (լեհ.) բրեր, ցցեր վարող (տնկող) բանուոր. **-пёръ**, прá ա. (լեհ.) 1, բրեր, ցցեր վարելու (տնկելու) գործիք, Թակ. 2, բս. Anethum graveolens, սամիթ:

Ко́петень, тня ա. բս. Asarum europaeum, սթեր կմ աղարիոն (մրուանտակ, կաղմորէ):

Копи́лка է. դանձանակ, դրամ խնայելու տուփ:

Копи||рова́льный ած. 1, ընդօրինակող, պատճէնը վերցնող. 2, նմանաբերող. **-рова́ніе** չ. 1, ընդօրինակելը, գաղափարելը. 2, նմանաբերելը. **-рова́ть**, ск—, ն. (լտ.) 1, ընդօրինակել, գաղափարել, պատճէնը վերցնել. 2, к. кого́ մէկին նմանաբերել, մէկի ‘հանգը‘, ‘դայդան‘ անել. **-ро́вка** է. (լտ.) 1, տ. Копировáніе; 2, պլաններ վերցնելու տեղ. **-ро́вщикъ** ա. (լտ.) **-ро́вщица** է. 1, ընդօրինակող, գաղափարող այր, կին. 2, նմանաբերող այր, կին:

Ко||пи́тель ա. **-пи́тельница** է. խնայող, հաւաքող, դիզող այր, կին. **-пи́ть** (-плю́ -пятъ), ск—, ն. հաւաքել, դիզել, խնայել, յետ դցել (դրամ). 2, չզ. հաւաքուիլ, կիտուիլ, կուտակուիլ, դիզուիլ:

Ко||піё տ. Копьё; **-піеви́дный** տ. Копьеви́дный.

Ко||пі́йстъ տ. Копейстъ; **-пі́я** է. (լտ.) ընդօրինակութիւն, պատճէն, գաղափարում:

Ко́п||ка է. փորելը, պեղելը, քանդելը. **-кій** ած. փուխր, փխրուն, դիւրապեղ. **-кость** է. փխրունութիւն, դիւրապեղութիւն:

Копле́ніе չ. հաւաքելը, կիտելը, դիզելը. խնայելը (դրամ):

Коп||на́ է. բարդ, պատիկ դէզ. *к. воло́съ մազերի դէզ, խիտ մազեր. **-ни́ща** է. մեծ, ահագին բարդ:

Ко||пну́ть, ся տ. Копа́ть, ся.

Копо́къ ա. հարուած (բահով, թիով). աքացի:

Ко́по||ткій, **-ткость** տ. Копотли́вый, -тли́вость; **-тли́вость** է. անարիութիւն, դանդաղկոտութիւն, ‘ջանջալութիւն‘. **-тли́вый** ած. անարի, թոյլ, դանդաղկոտ, ‘ջանջալ‘. копотли́во մ. անարիաբար, դանդաղկոտութեամբ. **-тный**, **-тно** տ. Копотли́вый, -во; **-ту́нъ** ա. **-ту́нья** է. անարի, դանդաղկոտ, անշնորհք, թամբալ, ‘ջանջալ‘ այր, կին:

Ко́поть է. 1, մուխ, մուր. 2, փոս, գուբ (ճիւթ, կուպր քաշելու):

Копо||ши́ть (-шу́ -ша́тъ), зак—, пок—, ն. 1, շարժել, ‘ժաժ տալ‘. 2, դանդաղ կերպով անել, գործել. **-ся** չզ. շարժուիլ, ‘ժաժ գալ‘. վխտալ, վեռալ:

Копро́вый ած. թակի, ցցեր անկելու գործիքի. к—ая ба́ба տ. Копёръ.

Коп||ти́лька է. ռմկ. ծխելու սենեակ. **-ти́льный** ած. ծխելու, ծխոտելու, մխելու, չորացնելու. **-ти́льня** է. ծխանոց, մխանոց (շինութիւն, խրճիթ, ուր ձուկ, միս եւն մուխ տալով չորացնում են). **-ти́льщикъ** ա. **-ти́льщица** է. ծխող, մխող, ծխոտող, մխոտող, ծխով, մխով ձուկ, միս չորացնող այր, կին. **-ти́тель** ա. **-ти́тельница** է. ծխոտող, մխոտող այր, կին. к. не́ба փուչ, պարապ մարդ. **-ти́ть** (-чу́ -тя́тъ), ն. 1, (закопт—) ծխոտել, մխոտել. онъ живётъ, то́лько не́бо копти́тъ նա բոլորովին աւելորդ մարդ է աշխարհիս երեսին. 2, (закопт—) չ. ծխալ, ծուխ, մուխ արձակել. ла́мпа копти́тъ; 3, (вы́копт—) մխել, ծխի, մխի մէջ պահելով չորացնել, ապխտել. к. ры́бу, окорока́, колбасу́; **-тѣ́лка** տ. Копти́льня; **-тѣ́лый** ած. ծխոտուած, մխոտուած, սեւացած. **-тѣ́ть** (-чу́ -тя́тъ) չ. ծխոտուիլ, մխոտուիլ, սեւանալ:

Копули́||ровать (-рую -ютъ) ն. այգեգ. պատուաստել. **-ро́вка** է. պատուաստում:

Копу́нъ, á ա. 1, (**копу́нья** է.) տ. Копоту́нъ, -нья; 2, կնդ. sphex, պիծակ մի:

Копче́||ніе, **-нье** չ. ծխոտելը, մխոտելը. ծուխ, մուխ անելով չորացնելը. **-(ё)ный** ած. 1, ծխոտած, մխոտած. 2, ծխած, մխած. к—ое мя́со.

Копы́лъ, á (копы́лья, львъ յ.) ոտ (սահնակի):

Копы́||тень, тня տ. Копы́тникъ; **-ти́стый** ած. մեծասմբակ, խոշորասմբակ, մեծակճղակ. **-ти́ще** յաւ. տ. Копы́то; **-тникъ** ա. բս. Asarum europaeum, սթեր կամ ազարիոն (մրուանտակ, կաղմորէ). **-тница** է. սմբակախտ, կճղակախտ. **-тный** ած. սմբակի, կճղակի. **-то** չ. **-тце** նւզ. սմբակ, կճղակ. **-тчатый** ած. սմբակաւոր, կճղակաւոր. к—ыя живо́тныя.

Копы́шиться (-шусь -шатся) տ. Копоши́ться.

Копь է. բով. каменноу́гольная к.

Ко||пьё չ. տէգ, նիզակ, աշտէ, գեղարդ. бой на ко́пьяхъ նիզակամարտութիւն. **-пьеви́дный** ած. նիզակաձեւ, նիզակակերպ. **-пьено́сецъ**, сца ա. նիզակակիր, նիզակաւոր. **-пьеобра́зный** տ. Копьеви́дный; **-пьецо́** նւզ. տ. Копьё; **-пьи́ще** յաւ. տ. Копьё.

Копѣ́||ечка, **-ечникъ**, **-ечный**, **-йка** տ. Копе...

Кора́ է. կեղեւ, կճեպ, պատեան. земна́я к. երկրագնդիս կեղեւը:

Корабе́ль||ный ած. նաւի. **-щикъ** ա. նաւատէր. **-щичій**, ья, ье ած. նաւատիրոջ:

Корабле||круше́ніе չ. նաւաբեկութիւն. претерпѣ́ть к.; **-нача́льникъ** ա. նաւապետ. **-пла́ваніе** չ. նաւարկութիւն, նաւագնացութիւն. **-пла́ватель** ա. նաւորդ, նաւագնաց. **-пла́вательный** ած. նաւարկութեան, նաւագնացութեան. **-строе́ніе** չ. նաւաշինութիւն, նաւագործութիւն. **-строи́тель** ա. նաւակառոյց, նաւագործ. **-строи́тельный** ած. նաւաշինութեան, նաւագործութեան. **-хозя́инъ** ա. նաւատէր:

Ко||ра́бликъ ա. նւզ. 1, պստիկ նաւ. 2, կնդ. Nautilus, նաւախեցի. **-рабли́ще** ա. յաւ. ահագին, մեծ նաւ. **-ра́бль**, я́ ա. նաւ (առագաստաւոր). вое́нный, купе́ческій к.; сѣсть на к.; *сжига́ть свои́ корабли́ իր փայփայած մտքերին մնաս բարեւ ասել, իր ըղձերից հրաժարուել. большо́му кораблю́ большо́е плава́ніе (առծ.) հարկս հարկաւորաց, պատիւս արժանաւորաց:

Кора||лли́тъ ա. (լտ.) կորալ'իոնի մարմարիոն. **-ллови́дный** ած. կիրալ'իոնակերպ, կորալ'իոնաձեւ. **-лловый** ած. կիրալ'իոնի(ց), մարջանի(ց). **-ллъ** ա. կորալ'իոն, մարջան. звѣ́здчатый к. աստղակերպ կորալ'իոն:

Кораль||ки́ ա. յ. կորալ'իոնի, մարջանի մանեակ, շարոց, ուլունք. **-ко́вый** ած. կորալ'իոնի(ց). к—ое ожере́лье կորալ'իոնի (մարջանի) մանեակ:

Кора́нъ ա. (արբ.) ղուրան:

Корве́тъ ա. (ֆր.) կորվէտ (եռակայմ մարտանաւ):

Коргá ի. (*թուրք.*) 1, *ագռաւ*. 2, Corvus cornix, *մոխրագոյն ագռաւ*. 3, **ագռաւ, պառաւ, չար կին, վհուկ*. 4, *խուլթ. ընդձրեայ ժայռ*:

Кóрда ի. [*ախոռա*]*սանձի փոկ*:

Корде‖балéтъ ա. (*ֆր.*) *թատր. բալետախումբ, բալետային խումբ*. **-батáлія** ի. (*ֆր.*) *միջաշարք նուատարմի*. **-гáрдія** ի. (*ֆր.*) *պահակախոց*:

Кордó‖нный ած. 1, *զօրաշղթայի*. 2, *թելի*. **-нъ** ա. (*ֆր.*) 1, *ռզմգ. զօրաշղթայ*. 2, *թել*:

Корёжить (-жу -жатъ) ն. *ծռել, կռացնել, կորացնել*. **-ся** չզ. *կծկուիլ, կուչ գալ*:

Коре‖нáстый ած. 1, *մեծարմատ, հաստարմատ*. 2, *թիկնաւէտ, կարճլիկ ու հաստլիկ, ամրակազմ, պնդակազմ*. **-нúстый** ած. *մեծարմատ, հաստարմատ*. **-ннúкъ**, á ա. *միջնեկ, քեղաձիգ ձի*. **-ннóй** ած. 1, *անմատի, արմատային*. к. зубъ *սեղանատամ, աղօրիք*. к. слогъ; 2,* *արմատական, հիմնական, բնիկզբնական*. к. жúтель *բուն բնիկ*. к—óе преобразовáніе; к. ýксусъ *խիտ թունդ քացախ*. к—áя рыба *խիտ աղած (մեծ) ձուկ*. к—áя лóшадь *միջնեկ, կառքի մէջ տեղում լծած, քեղաձիգ ձի*. **-новáтый** ած. *պտերկ արմատներով*. **-нщикъ** ա. **-нщица** ի. *արմտիքներ վաճառող այր, կին*. **-(кó-)нь**, рня ա. (յ. кóрни, éй *բոյսի, մազի, ատամի արմատներ*. և корéнья, ьевъ *արմտիքներ*) *արմատ, 'տակռի', 'քօք'*. хлѣбъ ещё стоúтъ на корню́ *հացը (արտը) դեռ ոտի վերայ է*. пускáть кóрни *արմատներ ձգել*. запускáть кóрни *խոր արմատներ ձգել*. вырвать съ кóрнемъ *արմատաքի հանել*. исторгáть к. зла *չարիքի արմատը կտրել*. к. слóва *բառի արմատը*. квадрáтный, кубúческій к. *մաթմ. երկրորդ, երրորդ աստիճանի արմատ*. извлечéніе корнéй *մաթմ. արմատներ հանելը*. питáться корéньями *արմտիքներով ապրել*. *ծանօթ*. кóрень *բառը միանալով ածականների հետ, բազմաթիւ բոյսեր է նշանակում, օր.* к. живóтный, солодкóвый *եւն*. (*տ. իւրաքանչիւրն իր տեղում*):

Корéцъ, рцá ա. 1, *ջաղացի ալիւրի տաշտ*, [*դոխ*. 2, *չերեփ*:

Коре‖шё(ó)къ, шкá ա. **-шё(ó)чекъ**, чка *նւզ*. 1, *նւզ. տ.* Кóрень; 2, *կոթ (սունկի)*. 3, *յետևի կողմ, քամակ (գրքի)*. переплётъ въ корешкѣ *գրքի կազմ, որի յետևն (և անկիւնները) կաշուց են*. переплестú въ к. *գիրքը կազմել, յետևը կաշի գցելով*:

Коржá‖вина ի. 1, *ժանգ*. 2, *երկաթի կեկղանք*. 3, *առարկայի կոշտ, խորտուբորտ երես*. 4, *եղեամ (ծառի վերայ նստած)*. **-вый** ած. *ժանգոտ, ժանգով ծածկուած, խորտուբորտ*. **-вѣлый** ած. *ժանգոտած, խորտուբորտ երեսով*. **-вѣть**, зак—, չ. 1, *ժանգոտիլ, ժանգակալիլ, ժանգով ծածկուիլ*. 2, *եղեամով պատուիլ, ծածկուիլ*. 3, *խորտուբորտ դառնալ*:

Коржáнъ ա. *կնդ.* Julus terrestris, *ան*[*մեղ հաղարտուի*:

Корзú‖на ի. **-нка, -ночка** *նւզ. կողով, զամբիւղ*. **-ноплетáніе** չ. *կողովահիւսութիւն, կողովագործութիւն*. **-нщикъ** ա. **-нщица** ի. *կողովագործ, -ուհի, կողովավաճառ, -ուհի*:

Коридó‖рецъ, рца, **-рикъ, -рчикъ** *նւզ. տ.* Коридóръ; **-рный** ած. *կօրիդօրի, միջանցքի*. **-ръ** ա. (*ֆր.*) *կօրիդօր, միջանցք, նեղանձք, նրբանցք (տան, շինութեան մէջ նեղ ու երկար անցք)*:

Корúнка ի. (*նոր. յն.*) *կորինթեան քիշմիշ, չամիչ (դերմակ, սև և անկորիզ)*:

Корúстый ած. 1, *կեղևակերպ, կեղևանման*. 2, *հաստակեղև*:

Корúть (-рю́ -ря́тъ), ук—, ն. когó въ чёмъ, чѣмъ *կամ* за что *մէկին մի բանի համար յանդիմանել, կշտամբել, նախատել*. к. когó благодѣя́ніемъ *արած լաւութիւնը մէկի երեսով տալ*. **-ся** չզ. *գզուել, սորուել, փոշմանիլ*:

Корифéй ա. (*յն.*) 1, (*առաջ*) *խմբապետ, խմբի* (хоръ) *ղեկավար (ողբերգութեանց ժամանակ)*. 2,* *կոթող, նշանաւոր գործիչ, գլխաւորական, գերազանցագոյն եւն*:

Корú‖ца ի. *կինամոմոն, դարչին*. **-чневый** ած. 1, *կինամոմոնի, դարչինի*. 2, *կինամոմոնագոյն, դարչինագոյն*:

Коріáндръ ա. *բս.* Coriandrum sativum, *դինձ (կորինդ ?)*:

Кóр‖ка ի. 1, *կեղև, կճեպ, 'կլեպ'*. лимóнная, апельсúнная к.; к. у хлѣба; 2, *զատած ձոյլ արծաթ*:—*Отодрáть на óбѣ к—и *լաւ ծեծել, թակել, 'գլխել'*. **-ковáтый** ած. *կեղևակերպ*. **-ковый** ած. 1, *կեղևի, կճեպի, 'կլեպի'*. 2, *խցանի*. **-корѣзный** ած. 1, *կեղև կտրելու*. 2, *խցան կտրելու, խցանի վերայ նշան անելու*:

Кормá ի. *խելք, յետևի կողմ (նաւի)*. брóсить я́корь съ к—ы́; неводнáя к. *ուռկանի փորը*:

Кор‖мёжка ի. **-мёжъ** ա. 1, *կերակրում, բռում*. поѣхалъ на к—у *տաք տեղ է գնել*. **-мúлецъ**, льца ա. 1, *հայ տուող, կերակրող*. 2, *բարերար*. **-мúлица** ի. 1, *բարերարուհի*. 2, *դայակ, ծծմայր, սնուցիչ*:

Кормú‖ло չ. **-льце** *նւզ. նաւի ղեկ. *ղեկ*. *к. правлéнія.

Кор‖мúтель ա. **-мúтельница** ի. *կերակրող, սնուցանող, բռող այր, կին*. **-мúть** (-млю́ -мятъ), нак—, ն. 1, *սնուցանել, կերակրել*. к. младéнца грýдью *մանկանը սնուցանել, կաթ, ծիծ տալ*. к. лошадéй сѣномъ; к. когó изъ сострадáнія, изъ мúлости; *к. когó зáвтраками *սնոտի խոստումներով մէկին չարչարել, խաբել*. 2, *կերակրել, բռել, բուծանել*. **-ся** չզ. *ապրիլ, կառավարուիլ, իր ապրուստը հայթայթել*. к. своúми рукáми, отъ своúхъ трудóвъ; к. рукодѣліемъ *ձեռագործութեամբ իր օրական պարէնը հայթայթել*. **-мка** ի. *կերակրում, բռում*. **-млéніе** չ. *կերակրելը, սնուցանելը. բռելը*. к. скотá; к. грýдью *կաթով սնուցանելը, ծիծ տալը*. **-мовúще** չ. *արօտ, արօտավայր, արօտատեղի*:

Кор‖мовóй ած. I. *կերակրի, սննդի, բռի. կերակրելու, բռելու (տ.* Кормъ); к—áя травы; к. горóшекъ; II. *նաւի յետևի կողմի, խելքի (տ.* Кормá); к. пень; к. флагъ; к о р м о в ó й ա. *տ.* Кóрмчій; **-мýшка** ի. *պտերկ աման, պտերկ տաշտ թռչուններին կերակրելու*. **-мчая** кнúга *կանոնագիրք, օրինական ժողովածու (ռուս եկեղեցու)*. **-мчій**, аго,

-мщикъ ա. ղեկավար, ուղղիչ (նաւի). «Вотъ и корабли́, какъ ни вели́ки они́ и какъ ни си́льными вѣ́трами но́сятся, небольши́мъ рулёмъ направля́ются, куда́ хо́четъ к. — յոր կոյս և միտք ուղղչին կամին (Թուղթ Յակովբայ, 3_4):

Кормъ ա. 1, բուտ, խոտ, կեր, ճարակ. подно́жный к. արածելու խոտ. пусти́ть лошаде́й на подно́жный к.; посади́ть кого́ на к. մէկի համար մի տաք տեղ, պաշտօն [գտնել:

Корна́къ ա. (փր.) փղավար:

Корна́ть, ок—, ն. [անշնորհք կերպով, ասելի քան հարկաւոր է] կտրել, կարճել, խուզել:

Корне‖ва́тый ած. բազմարմատ. հաստարմատ. **-ви́къ**, а́ ա. **-ви́на** ի. արմատի ամենահաստ մասը. **-ви́ще** չ. վերարմատ (բոյսի այն մասը, որ գտնւում է արմատի և ընի կամ ցօղունի միջև). **-во́й** ած. 1, արմատի, արմատային. 2, արմատից, արմատափայտից. **-но́жка** ի. կնդ. Rhizopodon, արմատոտանի. **-плóдный** ած. արմատապտուղ, խլունկաւոր. к—ыя расте́нія խլունկներ, արմատապտուղ բոյսեր (օր. կարտոֆիլ). **-рѣ́зецъ**, зца ա. **-рѣ́зка** ի. **-рѣ́зъ** ա. արմատներ կտրելու, արմատակտուր գործիք. **-сло́віе** չ. բառագննութիւն, ստուգաբանութիւն. **-сло́вный** ած. բառագննական, ստուգաբանական:

Корне́‖тъ ա. (խտ.) **-тикъ** նւզ. կոռնէտ. 1, հեծելազօրքի կրտսեր սպայ. 2, մի տեսակ փող, ‘գուռնա‘:

Кор‖не́йдный ած. արմատակեր, արմըտիքներ ուտող. **-ни́стый** ած. բազմարմատ. բաջարմատ. [բավարունգ:

Корнишо́нъ ա. բս. Cornichon, մանր

Корно‖у́хій ած. կտրած ականջներով, ականջատ. к—ая соба́ка; **-у́шить** (-шу -шать) ն. ականջները կտրել:

Коробе́й‖ка նւզ. տ. Коробья́; **-никъ** ա. 1, արկղագործ. 2, փերեզակ, շարշի, շըրջող մանրավաճառ. **-ный** ած. արկղի, արկղիկի:

Коро́бить (-блю -бятъ), ск—, пок—, ն. 1, ծռել, թեքել, կուացնել, ծալել, կծկել. отъ жа́ру до́ски коро́битъ տաքութիւնից տախտակները ծռւում են. его́ коро́битъ դէմ. նա ցնցւում է. 2,* դադել, կպչել, դիպչել. **-ся** անդր. ծռուիլ. թեքուիլ, կռանալ, կորանալ, ծալուիլ. կծկուիլ, կուչ գալ (կաշու մասին):

Коро‖би́ще ա. յեղ. տ. Ко́робъ; **-бка** ի. 1, արկղ, արկղիկ, տուփ, ‘բուն‘ (փայտէ, ստուարաթղթէ, ժեշտէ ևն). к. для шля́пы; к. для спи́чекъ; 2, կողպէքի փորը. замо́къ съ мѣ́дною к—ою; 3, շրջանակ. око́нная к.; 4, զսպանակատեղի (ժամացոյցի):

Коро́бленіе չ. 1, ծռելը, ծալելը, թեքելը, կուացնելը, կորացնելը. կծկելը. 2,* դադելը, կպչելը, դիպչելը:

կաւթին. п—ая любо́вь կաթողին սէր. п—ое воображе́ніе վառ երեւակայութիւն. **-мень** ա. գւռկ. տ. Пла́мя; **-менѣ́ть** չ. **1**, վառւիլ, բորբոքւիլ, բոց արձակել. **2**, чѣмъ մի բանից այրուիլ, խորովուիլ, տոչորուիլ, մորմոքուիլ. п. любо́вью; **-мечко** նւզ. **-мя**, мени չ. բոց, հուր. п. любви́; возже́чь п. раздо́ра երկպառակութեան հուրը բորբոքել:

Плане́‖та է. (լտ.) մոլորակ. **-тный** ած. մոլորակի, -կների, մոլորակային. п—ая систе́ма.

Плани́да է. ռմկ. մոլորակ, աստղ. *աստղ, բաղդ, ճակատագիր. «да ужъ ви́дно, така́я твоя́ п.».

Планиме‖три́ческій ած. պլանիմետրիական. **-трія** է. (լտ.-յն.) պլանիմետրիա (երկրաչափութեան մի մասը). **-тръ** (յն.) ժամթմ. մակերեւոյթաչափ (հարթ պատկերի մակերեւոյթը չափելու գործիք):

Плани‖рова́ніе չ. **1**, հարթելը, 'դզելը'. **2**, պլանը ձգելը, յօրինելը. **3**, հարթելը, կոկելը (թուղթը սոսնձաջրից անցկացնելով). **-рова́ть** (-ру́ю -ютъ), спл—, ն. **1**, հարթել, 'դզել'. **2**, պլանը ձգել, յօրինել. **3**, հարթել, կոկել (թուղթը սոսնձաջրից անցկացնելով). **-ро́вка** է. **1**, տ. Планирова́ніе; **2**, գործրնկ. շաքարի գլուխների մաքրումը (դանակով և խոզանակով):

Планисфе́ра է. (լտ.) քարտէզագրութիւն դնդի. небе́сная п. երկնադնդի քարտէզագրութիւնը (նկարումը տափակ մակերեւոյթի վերայ):

Пла́нка է. (գերմ.) **1**, բարակ և նեղ տախտակ. **2**, ծովգ. նաւի կողքին ամրացրած փայտ, որից ամրացնում են պարանը:

Планово́й ած. պլանի:

Планта́‖торъ ա. (լտ.) **1**, տնկարանատէր. **2**, ճորտատէր, ճորտութեան կողմնակից. **3**, ուրիշի աշխատանքն ու գիտութիւնը շահագործող մարդ. **-ція** է. (լտ.) տնկարան (օգտակար տնկերի՝ հեռու երկրներում, մնւդ արեւելեան և արեւմտեան Հնդկաստանում և Աֆրիկայի գաղութներում). п. са́харнаго тростника́ շաքարեղէգի տնկարան:

Планше́тъ ա. (фр.) պլանշէտ. **1**, կօրսէտապահ թիթեղ (կօրսէտի առջևից). **2**, ժամթմ. վայրաչափ (գործիք). **3**, վայրանկար, տեղանկար:

Планъ ա. (գերմ.) **1**, պլան, նկար, մակերդակ, յատակագիծ, ծրագիր. снять п. съ го́рода քաղաքի պլանը վերցնել. п. сочине́нія շարադրութեան պլանը, ծրագիրը, ուրուագիծը. гла́вный, о́бщій п.; **2**, նկրչ. առարկաների հեռաւորութիւնը միմեանցից. дере́вья занима́ютъ за́дній п. карти́ны ծառերը նկարի յետևի կողմն են բռնում. **3**,* պլան, ծրագիր, մտադրութիւն, դիտաւորութիւն, խորհուրդ. хорошо́ заду́манный п.; п. мой не уда́лся; легко́ разстра́ивать чьи п—ы մէկի դիտաւորութիւնները հեշտութեամբ խանգարել, 'ի դերև հանել:

Пла‖ста́ніе չ. ճեղքելը, ճղելը, բացելը (ձկան փորը). կտորելը. **-ста́ть** ն. ճեղքել, ճղել, բացել (ձկան փորը), մաքրել. կտրտել, կտորել:

Пла́стика է. (յն.) արձանագործութիւն, արձանակերտութիւն (մնւդ կաւից, գաճից և մոմից արձաններ քաշելու արուեստը):

Пласти́‖на է. տափակ շերտ, տախտակ. п. рыбы ճեղքած; ճղած ձկան կէսը. **-нка** է. նւզ. թիթեղ, թերթ. п—и у грибо́въ սունկերի թիթեղներ կմ ծալքեր. **-нный** ած. շերտերից, տախտակներից բաղկացած. п. лѣсъ տախտակ քաշած փայտ. п. мостъ տախտակներից շինած կամուրջ. **-ночникъ** ա. բս. Agaricus, ագարիկոն (սունկ). п. ке́сарскій, A. caesareus, արքայասունկ կմ արքունի սունկ. **-нчатожа́берные моллю́ски** ա. յ. կնդ. Lamellibranchiata, թերթախռիկներ կմ խեցիներ. **-нчатый** ած. թերթաւոր, թիթեղաւոր. п—ое желѣ́зо թերթաւոր երկաթ. п—ые грибы́ ագարիկոններ (թիթեղաւոր կմ ծալքաւոր սունկեր):

Пласти́‖чески մ. թանձրացեալ եղանակով. **-ческій** ած. (յն.) արձանագործութեան. թանձրացեալ. **-чность** է. թանձրացեալ լինելը. **-чный** տ. Пласти́ческій.

Пла‖стова́ть (-ту́ю -ютъ) ն. շերտերի բաժանել. **-стово́й** ած. շերտաւոր, թերթաւոր. п. лѣсъ տախտակներ քաշած ատաղձ. п—о́е желѣ́зо թերթաւոր երկաթ. տափակ երկաթի ձողեր. п. мёдъ մեղրահաց. **-сту́нъ**, а́ ա. **1**, ձուկ ճեղքող, ճղող, [ըստ երկարութեան] կտորող. **2**, Սև ծովի ափերում ծառայող հետեւակ կօզակ. **-стъ**, а́ ա. հաստ շերտ, խաւ. п. земли́ հողի շերտ, խաւ, տո (օր. գութանի թեւով շուռ տուած). каменноуго́льный п. քարածխի խաւ. п. сото́въ մեղրահացեր. п. рыбы միջից ճեղքած, ճղած ձկան կէսը:

Пла́сты‖рикъ ա. սպեղանի, 'մհլամ', 'եախու' շինող. **-рный** ած. սպեղանու, 'մհլամի', 'եախուի'. **-рь** ա. սպեղանի, 'մհլամ', 'եախու'. приклада́ывать п. къ ранѣ́.

Пла́‖та է. **1**, վճարում, հատուցում (պարտքի). **2**, վարձ, վճար. п. за рабо́ту, зарабо́тная п. աշխատավարձ. задѣ́льная п. համեմատ աշխատանքի վարձ, վճար. подённая п. օրավարձ. **-тежеспосо́бность** է. վճարելու, հատուցանելու կարողութիւն. **-тёжный** ած. վճարման, վճարի. **-тёжъ**, а́ ա. վճարում, հատուցում. прекрати́ть п—и́; срокъ п—а́ վճարման պայմանաժամ, 'վադա'. долгъ п—о́мъ кра́сенъ (առծ.) տացինք առ ու տուր, չտացինք առ ու կուլ. **-те́льщикъ** ա. **-те́льщица** է. վճարող, հատուցանող այր, կին. п. по́дати.

Пла́‖ти́на է. (фр.) պլատին, լուսնօսկի. **-тинирова́ть** (-ру́ю -ютъ) ն. (գերմ.) պլատինել, պլատինով ծածկել (հատարակ մետաղները). **-ти́нистый** ած. պլատին (լուսնօսկի) պարունակող. **-ти́новый** ած. պլատինէ, -նից, լուսնօսկէ, -կուց. п—ая моне́та.

Пла‖ти́ть ն. **1**, (плачу́ пла́тятъ; -ти́) վճարել, հատուցանել. п. долгъ; п. жа́лованье; п. впере́дъ կանխօրօք վճարել, հատուցանել. по чёмъ плати́ли вы за э́то сукно́? այդ մահուդի արշինը որքանով էք առել. я плати́лъ за него́ по́ три рубля́ за арши́нъ; **2**, (плачу́ -тя́тъ; -ти́) կարկատել (հօղնելիքը). **-тный** ած. վճարելի, վճարելու, հատուցանելի:

Пла‖то́къ, тка́ ա. թաշկինակ, «պլոխ». носово́й п. թաշկինակ, ձեռնոցլուխ. маха́ть платко́мъ թաշկինակը շարժել, թափահարել:

Плато‖ни́змъ ա. պլատոնականութիւն. **-никъ** ա. պլատոնական. **-ни́ческій** ած. պլատոնական. п—ая любо́вь պլատոնական, սէր:

Плато́‖чекъ, чка նւզ. պստիկ թաշկինակ, «ձեռնոցլուխ». **-чникъ** ա. **-чница** ի. թաշկինակագործ, -ուհի, թաշկինակավաճառ, -ուհի. **-чный** ած. թաշկինակի, -կային, «ձեռնոցլուխի»:

Платфо́рма ի. (ֆր.) պլատֆորմ. **1**, հարթած և տափարակած տեղ պահականոցի առաջ կամ որի վերայ կանգնեցնում են թնդանօթը. **2**, երկաթուղու կայարանի յետևի մասը, որի առաջ կանգնում է գնացքը:

Платъ տ. Плато́къ; п. для утира́нія поти́ра.

Пла́‖тье չ. շոր, զգեստ, հագուստ. мужско́е, же́нское п.; сва́дебное п.; тра́урное п.; по п—ью встрѣча́ютъ, а по у́му провожа́ютъ (առծ.) **-тьице** չ. նւզ. պստիկ շոր. **-тяно́й** ած. շորի, հագուստի. п. шкафъ.

Плау́‖нный, -нъ տ. Плаву́нный, -ву́нъ.

Плафо́‖нный ած. պլաֆոնի. п. живопи́сецъ առաստաղանկարիչ. **-нъ** ա. (ֆր.) պլաֆոն (նաշխած կամ նկարած առաստաղ):

Пла́ха ի. կոճղ. *գլխատման տեղ, կառափնարան. нести́ го́лову на п—у կառափնարան, գլխատուելու գնալ. положи́ть го́лову на п—у գլխատուել:

Плацъ‖ ա. (գերմ.) [առհ. մեծ] հրապարակ. **-адъюта́нтъ** ա. պլացադիւտանտ (плацъ-майо́ръ-ի օգնականը). **-майо́ръ** ա. (գերմ.-ֆր.) պլացմայոր (աւագ ամրոցային սպայ. ամրոցապետին նորա բացակայութեան ժամանակ փոխարինող սպայ). **-пара́дъ** ա. (գերմ.-ֆր.) զորավարժութեան, զօրակրթութեան հրապարակ:

Пла‖че́вно մ. ողբալի, արգահատելի կերպով. **-че́вный** ած. ողբալի, լալագին, ողորմելի, արգահատելի. п—ое состоя́ніе; п. го́лосъ; п. ви́дъ; **-че́й** ի. լալկան կին:

Пла́чивать տ. Плати́ть 1.

Пла‖чли́во մ. լալով, ողբալով. **-чли́вость** ի. լալկանութիւն. **-чли́вый** ած. լալկան, լացկան. **-чу** տ. Пла́кать; **-чу́** տ. Плати́ть; **-чъ** ա. լաց, ողբ. пла́чемъ го́рю не пособи́шь (առծ.) լաց լինելով բան չի դառնալ:

Плашко́‖тный ած. պլաշկոտի. п. мостъ պլաշկոտակամուրջ. **-тъ** ա. (հոլ.) պլաշկոտ (տափակ և լայն յատակով նաւ, որով ոչ միայն բեռներ են կրում, այլև ժամանակաւոր կամուրջ են կապում):

Плашмя́ մ. տափակ երեսի վերայ. класть кирпи́чъ п. աղիւսը տափակ երեսի վերայ դնել. уда́рить са́блею п. սուսերի տափակ երեսով (կողքով) զարկել:

Пла‖щани́ца ի. **1**, վարշամակ, ծածկոց, կտաւ. **2**, պատստառակալ պատկեր Քրիստոսի թաղման. **-щево́й** ած. պատմուճանի, -նային. п. воротни́къ; **-щъ**, а́ ա. պատմուճան, պատմաքրու վերնազգեստ առանց թևերի. п. съ капюшо́номъ; непромока́емый п.

Плеа́ды տ. Плея́ды.

Пле‖бе́й ա. (լա.) ամբոխական. *ստոր, անազնիւ մարդ. **-бисци́тъ** ա. (ֆր.) պլեբիսցիտ (հանրաքվէիւ, հանրային ազգաքվէիւ, ժողովրդաքվէիւ):

Плева́ ի. [խիստ բարակ] թաղանթ. մաշկ. дѣ́вственная п. կզմխ. կուսութեան թաղանթ, կուսութեան կնիք:

Пле‖ва́ка ա. շատ շատ թքող. **-ва́льница** ի. թքարան, թքելու աման. **-ва́льный** ած. թքելու. **-ва́ніе** չ. թքում, թքելը. **-ва́ть** (плюю́ -ю́тъ), плю́нуть չ. թքել. п. въ лицо́ երեսին թքել. п. мнѣ на него́, на его́ угро́зы; не плюй въ коло́децъ, пригоди́тся напи́ться (առծ.):

Пле́ве‖лъ ա. **1**, յարդ, «դարման». **2**, բս. Lolium, որոմ. многолѣ́тній կամ а́нглійскій п., L. perenne, հաստարակ կամ անգլիական որոմ. *որոմ, մոլար վարդապետութիւն, սխալանք. **-льный** ած. որոմաշատ. որոմի, որոմային:

Плевистокры́лый ած. թաղանթաթև. п—ы я կնդ. Hymenoptera, թաղանթաթևեր:

Плеви́стый ած. որոմաշատ:

Плевокры́‖лка ի. թաղանթաթև. **-лый** տ. Плевистокрылый.

Пле‖во́къ, вка́ ա. [թքած] թուք:

Пле́‖вра ի. (յն.) բժ. լանջամաշկ. **-вра́льный**, **-врити́ческій** ած. լանջամաշկի, լանջաթաղանթի բորբոքման. **-ври́тъ** ա. (յն.) բժ. լանջամաշկի, լանջաթաղանթի բորբոքում:

Плё‖вывать տ. Плева́ть; **-вый** ած. ոչինչ, չնչին, դատարկ. э́то п—ое дѣ́ло.

Пледъ ա. (անգլ.) պլէդ:

Плезіоза́връ ա. հնք. plésiosaure, երկայնավիզ ծովամողէզ:

Пле‖мени́тость ի. բազմածնութիւն, բազմանդամութիւն (ցեղի, ընտանիքի). **-мени́тый** ած. բազմածին, բազմանդամ (ցեղ, ընտանիք). **-менно́й** ած. տոհմիկ, տոհմը աղնուացնող. п—а́я коро́ва, овца́; п—а́я кобы́ла; **-меноача́льникъ** ա. ցեղապետ, տոհմապետ. **-мя**, мени չ. **1**, ազգ, ցեղ, տոհմ, սերունդ. кавка́зскія племена́; кочу́ющее п.; **2**, ազգ, լեզու, ծագում. онъ а́нглійскаго пле́мени նա ծագումով անգլիացի է. **3**, բուծում (անասունների). оста́вить на п. բուծանելու համար պահել, թողնել (անասունին). **-мя́нникъ** ա. եղբոր կամ քրոջ որդի, ազգական. **-мя́нница** ի. եղբոր կամ քրոջ աղջիկ. **-мя́нничекъ**, чка նւզ. փոքր. տ. Племя́нникъ; **-мя́нническій**, **-мя́нничій**, чья, чье ած. եղբոր կամ քրոջ որդու. **-мя́нный** տ. Племенно́й.

Пле‖на́ ի. **1**, բարակ մաշկ, թաղանթ. **2**, հազիւ նկատելի ճեղքուածք մետաղի կամ քարի մէջ. **-на́стый**, **-ни́стый** ած. կտրուած, ճեղքուած (քար կամ մետաղ). **-(ё)нка** ի. **-(ё)ночка** նւզ. տ. Плена́; **-нчатый** ած. ճեղքուած, կտրուած (քարի, մետաղի մասին):

Плеона́змъ ա. աւելորդաբանութիւն, աւելաբանութիւն:

Плерёзы ի. յ. (ֆր.) սգի նշաններ (ըզգեստի վերայ կարած).

Плеса́ ի. գւռկ. տ. Плёсо.

Плѣ́сень տ. Плѣ́сень.

Пле‖ска́льщикъ ա. **-ска́льщица** ի. ծափ տուող և կամ ջուրը ճզմող այր, կին. **-ска́ніе** չ. **1**, ճզմում, ճզմելը, ցայտեցնելը (ջու-

րը). **2,** *ռմկ. ծափ տալը.* **-скáть** (-щý плéщутъ; -щи́), -снýть *չ.* **1,** *ճղփել, ճղփելն տըրձակել.* вóлны плéщутъ въ сýдно; п. въ когó водóю; **2,** *ծափ տալ, ծափահարել.* **-ся** *անդր.* **1,** *ճօճուելուց թափուել (ջրի մասին).* **2,** *փոխդ.* водóю *միմեանց վերայ ջուր ածել, ջուր ցայտեցնել.* **-скъ** *ա.* **1,** *ճղփիւն, ցայտում (ջըրի, ալիքի).* **2,** *ծափ (մեծ ձկան):*

Плеснá *տ.* Плюснá.

Плеснýть, ся *տ.* Плескáть, ся.

Плёсо *չ.* *այն տեղը, ուր գետը լայնանում և հոսանքը դանդաղանում է:*

Пле‖сти́, -сть (-тý -тýтъ; -ти́) *ն.* **1,** *հիւսել. գործել.* п. корзи́нку; п. вóлосы въ кóсу; п. крýжева *ժապաւէններ, 'հաշիւններ', գործել, յօրինել.* **2,*** *յերիւրել, շաղակրատել, դուրս տալ.* какóй онъ вздоръ плетётъ! **-сти́сь, -стьcя** *անդր.* **1,** *սողուլ, պտտտուել (մի բանի շուրջը).* **2,** *զոռով, հազիւ հազ ման գալ, քարշ գալ.* старýшка едвá плетётся; п. ногá зá ногу *հազիւ հազ ոտները քարշ տալ.* **-тéйный** *ած.* *հիւսելու.* **-тéльщикъ** *ա.* **-тéльщица** *է.* *հիւսող այր, կին.* п. корзи́нъ; **-тени́ца** *է.* **1,** *առհ. հիւսած բան.* п. волóсъ *մազերի հիւս.* **2,** *կողով.* **-тéніе** *չ.* *հիւսում, հիւսելը.* **-тёнка** *է.* **-тёночка** *նւզ.* **1,** *տ.* Плетени́ца; **2,** *հիւսած փախթ ոտներ մաքրելու.* **-тёный** *բյ.* *ած.* *հիւսած.* п. стулъ; п—ая рабóта; **-тéнь,** тня́ *ա.* *հիւսած ցանկ, ցանկապատ, վանդակապատ.* тернóвый п.; п. изъ вѣтвéй; **-тешóкъ,** шкá *ա.* *ռմկ.* *հիւսի ժապաւէն.* **-тей** *է.* [*օր.* *ժապաւէն*] *հիւսող կին.* **-(ё)тка** *է.* *նւզ.* *պատիկ մտրակ, մտրակիկ.* **-тнёвый** *ած.* *հիւսած, հիւսովի.* **-(ё)точка** *նւզ.* *տ.* Плётка; **-тý** *տ.* Плести́; **-тýшка** *է.* *հիւսած ձեռնակողով.* **-ть** *է.* **1,** *մտրակ.* плéтью обýха не перешибёшь *զոռով բան չի լինի, մտրակ իր չափը պիտի ճանաչէ.* **2,** *թել, խիղը, պատատիճ (օր. ձմերուկի, վարունգի).* арбýзы, огурцы́ лежáтъ на плетяхъ. [*րիսխ մի*). канáтъ п—а.

Плехтъ *ա.* (*հոլ.*) *ծովգ.* *պլեխտ (խա-*

Пле‖чевóй *ած.* *ուսի, ուս(ա)—.* п—áя кость; **-чико** *նւզ.* *տ.* Плечó; **-чи́стый** *ած.* *լայն ուսերով, թիկնեղ.* **-чи́ще** *յւել.* *տ.* Плечó; **-чнóй** *տ.* Плечевóй; **-чó** *չ.* (*յ.* плечá, плéча, плéчи) **1,** *ուս.* пожимáть плечáми *ուսերը վեր քաշել, ցցել, թափ տալ.* э́то плáтье сли́шкомъ ýзко въ плечáхъ *այդ զգեստի ուսերը խիստ նեղ են.* носи́ть лéнту чéрезъ п.; э́то емý не по плечý *այդ նորա ոյժից վեր է.* **2,** [*մորթած անասունի*] *առջևի մաս, 'էրի'.* п. барáнины, теля́тины; **3,** *լծակի թև (երկու մասերից իւրա-*

Плещý *տ.* Плескáть. [*քանչիւրը*):

Плеáды *է.* *յ.* (*յն.*) *աստղ.* *Եօթնաստեղունք (Յոյլ աստեղատան).* **2,*** *ջոկ, կաճառ (ժամանակակից երևելի մարդկանց):*

Пли! *ձյ.* *կրակ, կրակեցէ՛:*

Пли́нту‖совый *ած.* пли́нтусъ-*ի.* **-съ** *ա.* (*յն.*) **1,** *սեան պատուանդանի ստորին մասը.* **2,** *պլինթ (անմիջապէս յատակին կից պատի երկարութեամբ քաշած շրջանակ, տախտակէ շերտ).* **3,** *պլինթ (դուրս ցցուած, տրտակարկառ մաս շինութեան ստորին մասի):*

Пли́ска *տ.* Трясогýзка.

Плй‖совый *ած.* *պլիսէ, -սեայ, 'շիլարէգու'.* **-съ** *ա.* (*գերմ.*) *պլիս, 'շիլարէգի' (բամբակէ թաւիշ ամենատարբերն տեսակի):*

Пли‖тá *է.* **1,** *շերտաքար, սալաքար.* **2,** *քառանկիւնի տաշած սալ, սալաքար.* мощéніе п—óю *սալելը, սալարկելը (փողոցը).* надгрóбная п. *գերեզմանաքար.* **3,** *տապակ (երկաթէ կմ թուջէ տախտակ կրակարանի).* кýхонная п.; **-тка** *է.* *նւզ.* *տափակ բան.* п. шоколáду *շօկօլադի տափակ կտոր.* **-тный** *ած.* *սալի, սալա—.* п. кáмень *սալաքար.* п—ая стѣнá *սալաքարից շինած պատ.* **-тня́къ,** á *ա.* *սալաքար (անմշակ).* **-толóмный** *ած.* *սալեր, սալաքարեր կտրելու.* **-толóмня** *է.* *սալահանք, սալեր կտրելու քարհանք.* **-точка** *նւզ.* *տ.* Пли́тка. [*ջրի թիակի:*

Плй‖ца *է.* *գւռկ.* *ջրի թիակ.* **-чный** *ած.*

Пло‖вéцъ, вцá *ա.* **1,** *լողորդ.* **2,** *նաւորդ.* **-вкóмъ** *մ.* *լողալով.* **-вýчесть** *է.* *լողալու յատկութիւն.* **-вýчій** *ած.* *լողացող, լողալու.* п. мостъ *լողացող, շարժուն կամուրջ:*

Пловъ *տ.* Пилáвъ.

Пло‖ди́ть (-жý -дя́тъ; -ди́) *ն.* *պտղեցնել, աճեցնել, բազմացնել.* **-ся** *անդր.* *աճել, բազմանալ.* **-дли́вость, -дли́вый** *տ.* Плодови́тость, -тый; **-дни́къ,** á *ա.* **1,** *բս.* pistillum, *կնիք (էգայ, վարսանդ?).* **2,** *ձուարան (անասունների).* **-дный** *ած.* *պտղաբեր, պտղա—:*

Плодо‖ви́тка *է.* *մի տեսակ խիստ պըտղաշատ խնձորի, -րենի.* **-ви́то** *մ.* *առատութեամբ, առատապէս. ճոռոմաբանօրէն.* **-ви́тость** *է.* **1,** *պտղաւէտութիւն. առատութիւն. արգասաւորութիւն.* п. умá *մտքի հարստութիւն, փարթամութիւն.* п. воображéнія *վառ երևակայութիւն.* п. рѣ́чи *պերճախօսութիւն, ոճի ճոխութիւն.* п. словъ *ճոռոմաբանութիւն.* **2,** *բեղմնաւորութիւն, բազմածնութիւն.* **-ви́тый** *ած.* **1,** *պտղաւէտ, առատ. հարուստ. արգասաւոր, բեղմնաւոր.* п—ое воображéніе *վառ երևակայութիւն.* п. писáтель *արգասաւոր հեղինակ.* п. слогъ *ճոխ, փարթամ ոճ.* **2,** *բեղմնաւոր, բազմածին.* п—ая женá; п. нарóдъ; **-вмѣсти́лище** *չ.* *բս.* receptaculum, *պտղակալ, ընդունարան.* **-(ó)вый** *ած.* *պտղի, մրգի. պտղաբեր, պտղատու.* п. садъ *մրգի պարտէզ.* п—ыя дерéвья *պտղատու ծառեր.* **-гóнный** *ած.* *բժ.* *արգանդի պըտուղը սպանող, ոչնչացնող.* п—ыя срéдства; **-кóрмъ** *ա.* *անտառի, -ային պտուղներ, որ հաւաքում և անասուններին ուտեցնում են.* **-нóсный** *ած.* *պտղաբեր, պտղատու.* **-ношéніе** *չ.* *պտուղ բերելը, պտղաբերութիւն.* **-перемѣ́нность** *է.* *գիւղտ.* *սերմնափոխութիւն (միևնոյն տեղում իւրաքանչիւր տարի ուրիշ, նոր սերմ ցանելը).* **-перемѣ́нный** *ած.* *սերմնափոխական.* п—ое сéльское хозя́йство; **-рóдіе** *չ.* **-рóдность** *է.* *պտղաբերութիւն, պտղաւէտութիւն, պտղաշատութիւն.* **-рóдный** *ած.* *պտղաբեր, պտղաշատ, պտղաւէտ. բերրի, արգաւանդ.* **-смѣ́нность, -смѣ́нный** *տ.* Плодоперемѣ́нность, -нный; **-творéніе** *չ.* *պտղատու դարձնելը.* **-твори́ть** (-рю́ -ря́тъ) *ն.* *պտղաբեր, պըտղաւէտ դարձնել.* **-твóрный** *ած.* *բեղմնաւորիչ, պտղաբեր դարձնող.* *п—ое влiя́ніе

наýки գիտութեան փրկարար պտղեցութիւնը. **-я́дный** ած. մրգակեր, պտղակեր:

Пло||ду́щій ած. բազմածին (անասուն), հեշտութեամբ աճող, բազմանող (բոյս). **-дъ** ա. 1, պտուղ, միրգ. բերք. спѣ́лый, неспѣ́лый п.; утрóбный п. կզմխ. սաղմնաւորութիւն. п. чрéва արգանդի պտուղ. питáться плодáми պտուղներով, մրգերով կերակրուել. 2,* պտուղ, արգասիք, արդիւնք. *п—ы́ просвѣщéнія; п—ы́ егó трудóвъ.

Плое́ніе չ. խողովակուկների ձևով արդուկելը (օր. կանանց մանժէտները):

Пло||же́ніе չ. պտղեցնելը, բուծանելը, բազմացնելը (անասուններին). **-жу́** տ. Плоди́ть.

Пло́||йка ի. տ. Плое́ніе; **-и́ть** (-ю́ -я́тъ) ն. (ֆր.) խողովակուկների ձևով արդուկել, կոկել, ոզորկել (օր. կանանց մանժէտները):

Пло́м||ба ի. (ֆր.) պլօմբ, 1. կապարէ կնիք, 'մուհր' (մաքսատան). 2, պնդուած (ատամի խոռոչը լցնելու). **-бирова́ніе** չ. 1, կապարէ կնիք դնելը, կնքելը. 2, պլօմբելը, լցնելը (ատամի խոռոչը). **-бирова́ть** (-ру́ю -ютъ), запл—, ն. 1, կապարէ կնիքը դնել (մաքսատուն մտած ապրանքների վերայ), կնքել, 'մհրել' (կապարէ կնիքով). п. товáры на тамóжнѣ; 2, պլօմբել, լցնել (ատամը, վնասուած ատամի խոռոչը). п. зубъ; **-биро́вка** ի. 1, կնքում (մաքսատան ապրանքի). 2, պլօմբում, լցնում (ատամի). **-биро́вщикъ** ա. կնքադիր (մաքսատան):

Пло́||скій ած. 1, հարթ, տափակ, տափարակ. п—ая повéрхность; п—ая крóвля; п—ое лицó; п—ая гóрная возвы́шенность աշխ. սարահարթ. 2,* տափակ, սառը, յոռի, գռեհիկ, գռեհկական, ցած. п—ая шýтка; **-ско** մ. 1, տափակ կերպով, տափակութեամբ. 2,* սառըութեամբ, յոռութեամբ, գռեհկաբար:

Плоско||ва́тость ի. թեթև տափակութիւն. **-ва́тый** ած. փոքր ինչ տափակ. **-го́рье** չ. սարահարթ, սարաւանդ. **-гу́бцы** ա. յ. տափակ բերանով աքցան. **-до́нный** ած. տափակ յատակով. **-зу́бецъ**, бца ա. մի տեսակ աքցան սեղանագործի. **-клю́вый** ած. տափակակտուց, տափակ կտուցով. **-поло́сный** ած. տափակահասակ, տափակ հասկերով. **-ли́цый** ած. տափակ երեսով. **-ло́бый** ած. տափակ ճակատով. **-но́сый** ած. 1, տափակ քթով. 2, տ. Плоскоклю́вый.

Пло́скость ի. 1, հարթ, տափակ մակերևոյթ. հարթութիւն, տափարակութիւն. возвы́шенная п. սարահարթ. касáтельная, наклóнная п. երկրչփ. շօշափող, թեք մակերևոյթ. 2,* տափակութիւն, յոռութիւն, ցածութիւն (խօսքով), գռեհկաբանութիւն:

Плоско||хво́стный ած. տափակագի, տափակ ագով, պոչով. **-шля́почный** ած. տափակագլուխ:

Пло||сти́льня ի. տափակիչ մեքենայ (որով ոսկէ և արծաթէ նուրթուլները տափակացնում են). **-сти́льщикъ** ա. տափակացնող (նուրթուլը). **-сти́ть** (-щу́ -стя́тъ; -сти́) ն. տափակացնել, տափակ քաշել, յօրինել:

Плотва́ ի. կնդ. Cyprinus idus, մանրաձածան, քարթակ:

Пло́тикъ նւզ. տ. Плотъ.

Плоти́||на ի. պատնէշ, պատուար, ամբարտակ (գետի). хоть п—у пруди́ անթիւ անհամար. **-нка** ի. նւզ. պատիկ պատնէշ, պատուար. **-нный** ած. պատնիշի, պատուարի:

Плоти́ть (-чу́ -тя́тъ) ն. սերտ կցել, միմեանց հետ հոծ միացնել (տախտակները):

Плоти́||ца, -чка նւզ. տ. Плотва́.

Плоти́ща ա. յւզ. տ. Плотъ.

Пло́тникъ ա. տաղձագործ, հիւսն, 'դուրգար':

Плотни́ть (-ню́ -ня́тъ), упл—, ն. խըտացնել:

Пло́тни||чать չ. տաղձագործութիւն, հիւսնութիւն, 'դուրգարութիւն' անել. **-ческій** ած. հիւսնի, 'դուրգարի'. **-чество** չ. տաղձագործութիւն, հիւսնութիւն, 'դուրգարութիւն'. **-чій**, чья, чье, **-чный** ած. տաղձագործութեան, հիւսնի, 'դուրգարի':

Пло́т||но մ. 1, ամրապէս, քիփ, կպած. кафтáнъ п. сиди́тъ на нёмъ կապան նորա վերայ քիփ նստում է. пристáвить шкапъ п. къ стѣнѣ́ պահարանը պատին հպել, կպցնել. шить п. խիտ կարել. 2, շատ, սաստիկ. наѣ́сться п. ակռել. сидѣ́ть п. за рабóтою լրջօրէն աշխատանքի նստել, անդուլ անդադար աշխատել. **-нова́тый** ած. բաւականին խիտ, սխմուած. **-ность** ի. հոծութիւն, սերտութիւն, խտութիւն, թանձրութիւն. **-тный** ած. 1, խիտ, հոծ, թանձր, սերտ. п—ое веществó; вóздухъ мéнѣе плóтенъ, чѣмъ водá; 2, ամուր, ամրապինդ, ամրակազմ. п—ая рабóта; п. мужчи́на; **-нѣ́ть**, попл—, խտանալ, հոծ դառնալ, գէրանալ, պարարտանալ, ուռչել:

Плото||во́е, вóго չ. լաստագին (տ. плотъ 2); **-во́й** ած. լաստի, լաստա—:

Плотолю||би́вый ած. մարմնասէր, հեշտասէր, ցանկասէր, վաւաշոտ. **-біе** չ. մարմնասիրութիւն, հեշտասիրութիւն, ցանկասիրութիւն, վաւաշոտութիւն:

Плотоуго́||діе չ. մարմնամոլութիւն, մարմնական կրքերին, ցանկութիւններին բաւարարութիւն տալու տենչ. **-дливость** ի. բղջախոհութիւն, ցանկասիրութիւն, հեշտասիրութիւն. **-дливый** ած. բղջախոհ, ցանկասէր, հեշտասէր, վաւաշոտ. **-дникъ** ա. **-дница** ի. ցանկասէր, հեշտասէր, վաւաշոտ, բղջախոհ այր, կին. **-дный** տ. Плотоугóдливый.

Плотоя́||децъ, дца ա. մսակեր, մսով կերակրուող. **-дный** ած. մսակեր, գիշակեր, գիշատիչ (գազան, թռչուն):

Пло́т||скій, -ско́й ած. մարմնաւոր, մարմնական, հեշտասիրական. п—ая пóхоть ցանկասիրութիւն. п—ія вожделѣ́нія մարմնական ցանկութիւններ:

Плотъ, á ա. 1, լաստ. гóнка плотáми լաստամղութիւն. 2, լաստաշէնք (նաւահանգստում). прáчешный п. լաստաշէնք, որի վերայ լուացք են անում (դորա համար վճարած դրամը կոչվ. плотовóе).

Плоть ի. մարմին, միս. крáйняя п., կզմխ. praeputium, թլփատ, պատճայճ. мýдрые по п—и իմաստունք ըստ մարմնոյ (Ա. Կորնթ. 1_{26}). изнуря́ть п. постóмъ; умерщвля́ть п. մարմինը, մարմնական ցանկութիւնները սպանել. п. и кровь մարմին և արիւն. духъ бодръ, п. же немощнá հոգին յօժար է, բայց մարմինն տկար:

Плóха է. *որս.* փարմակայր (անտառում կտրած և ցանցեր քաշած տեղ թռչներ որսալու համար)։

Плó‖хо մ. վատ, վատթար. дѣло п.; дѣло идётъ п.; игрáть, пѣть п.; **-ховáто** մ. բաւական վատ. **-ховáтый** ած. բաւական վատ. **-хóй** ած. վատ, վատթար, 'գէշ', յոռի. п. рабóтникъ; п. музыкáнтъ, писáтель; п. обѣдъ; п. товáръ; п—óе утѣшéніе չնչին մխիթարութիւն. **-хóнекъ**, нька, о ած. բաւական վատ, վատթարագոյն. **-хость** է. վատ, աղորմելի դրութիւն, վիճակ։

Пло‖чéніе չ. ամբարտակ կցելը, միացնելը (տախտակներ). **-чý** տ. Плотить.

Пло‖шáть, опл—, չ. 1, վատանալ. дѣлá егó плошáютъ; здорóвье егó день óто дня плошáетъ; 2, պարտազանց գտնուել, անհոգ, անփոյթ, անշրջանկատ գտնուել. սխալուել, վրիպել. я оплошáлъ, купи́вши такýю плохýю лóшадь; на Бóга надѣйся, а самъ не плошáй (առծ.). **-ше** ած. և մ. բաղդատ. աւելի վատ, վատթար, վատագոյն։

Плó‖шечка նւզ. տ. Плóшка; **-шечный** ած. 1, ամանի, թասի. 2, ճրագի. **-шка** է. 1, աման, թաս. 2, կաւէ ճրագ (իւղով լցրած, գործածական հրավառութեան ժամանակ)։

Пло‖щáдка է. նւզ. 1, պստիկ հրապարակ, տարածութիւն. 2, բարձրադիր տափակ տեղ. քարած, հարթած տեղ, տարածութիւն. հանգստութեան տեղ (սանդխի մէջ տեղում). **-щаднóй** ած. 1, հրապարակի, -կային. п—áя лáвочка; п—ыя нóвости; 2, փողոցային, ստոր, յոռի, անվայել. п—ыя шýтки, острóты, рѣчи; **-щадь** է. 1, հրապարակ. п. Соглáсія Միաբանութեան հրապարակ (Պարիզում). 2, հրապարակ, շուկա, 'մայդան'. сѣннáя п. խոտի շուկայ. кóнная п. ձիերի շուկայ. хлѣбная п. հացի շուկայ, ալրի մէյդան. топтáть п. փողոցները չափչփել, փողոցներում թրև գալ. 3, տարածութիւն, մակերևոյթ. п. занимáемая здáніемъ շինութեան բռնած տարածութիւնը, տեղը։

Плó‖ще ած. և մ. բաղդատ. աւելի տափակ. **-щéніе** չ. տափակացնելը (մետաղեղէնը). **-щи́льный** ած. (մետաղեղէնը) տափակ քաշող, քաշելու. п. станъ, **-щи́льня** տ. Плости́льня; **-щи́льщикъ** տ. Плости́льщикъ; **-щи́ть** (-щý -щáтъ) ն. տափակացնել, տափակ կոել, քաշել (օր. նուրթալ)։ [փակ ոջիլ։

Площи́ца է. կնդ. Pediculus pubis, տա-

Плу‖гови́дный ած. գութանակերպ, գութանի նման. **-говóй** ած. գութանի. **-годéржка** է. բս. Ononis spinosa, փշոտ եզնարգել (կաղնուտ, իշախոտ?). **-гъ** ա. գութան. рýчка у плýга գութանի մաճ. отвáлъ у плýга գութանի թև. **-жна** է. ջութակի կոխ, 'ճիտ'. **-жни́къ**, á ա. գութանի խոփ։

Плумпýдингъ ա. (անգլ.) պլումպուդինգ, չամչէ պուդինգ (թեթև կերակուր մի)։

Плу‖тáніе չ. թափառելը. **-тáть**, проп—, չ. 1, թափառել. 2,* մոլորուիլ, սխալ ճանապարհ բռնել. **-ся** չ. մոլորուիլ, մոլոր ճանապարհներով թափառել, ուղիղ ճանապարհը չկարողանալ գտնել. **-ти́шка(о)** ա. նւզ. **-ти́ще** ա. յաւել. տ. Плýтъ; **-тня** է. (յաճխ յ. плýтни, ей) անզգամութիւն, սրիկայութիւն, անզգամ, սրիկայական գործ, արարմունք. **-товáтый** ած. բաւական անզգամ, սրիկայ. **-товáть** (-тýю -ютъ), спл—, չ. անզգամութիւն, խաբեբայութիւն, սրիկայութիւն անել. **-тóвка** է. անզգամ, խաբեբայ կին, աղջիկ. **-тóвочка** է. նւզ. չարաճճի, անզգամ կին, աղջիկ. **-товски́** մ. սրիկայաբար, անզգամաբար. **-товскóй** ած. անզգամական, սրիկայական. у негó п—іе глазá; **-товствó** չ. սրիկայութիւն, անզգամութիւն, խարդաւանք։

Плутокрáтія է. (յն.) հարստապետութիւն, հարստութեան, հարուստների, փողի իշխանութիւնը, ոյժը։

Плутóнгъ ա. (ֆր.) զգմ. պստիկ ջոկատ հեծեալների կամ հետևակների (զօրախաղերի ժամանակ—въ манёврахъ).

Плуто‖ни́змъ ա. (յն.) երկրբ. պլուտոնականութիւն, տ. Вулкани́змъ (հկռկը տ. Нептуни́змъ); **-ни́стъ** ա. երկրբ. պլուտոնական. **-ни́ческій** ած. պլուտոնական, պլուտոնականութեան։

Плу‖тъ, á ա. լիրբ, անզգամ խաբեբայ, սրիկայ. п. съ плутóмъ за однó (առծ.) շունը շանից, երկուսն էլ մի տանից. **-тя́га** ա. տ Плутъ.

Плы‖вýчесть է. դիւրահալութիւն. **-вýчій** ած. դիւրահալ. **-тіе** չ. 1, լողալը (որոշ ուղղութեամբ). 2, նաւելը, ընթանալը (որոշ ուղղութեամբ), նաւարկութիւն. 3, հալուելը. **-ть** (-вý -вýтъ; հրմ. -ви́) չ. 1, լողալ (որոշ ուղղութեամբ, տ. Брести́ ծանօթ.). доскá плывётъ по рѣкѣ; 2, նաւել (որոշ ուղղութեամբ). п. на пароходѣ, на кораблѣ; п. въ лóдкѣ նաւակով զբօսնել. п. на всѣхъ парусáхъ խիստ արագ, սրընթաց նաւել. п. по течéнію ըստ հոսանքի նաւել, լողալ. п. прóтивъ течéнія հակառակ հոսանքի նաւել, լողալ. п. внизъ по рѣкѣ; п. вверхъ по рѣкѣ; орёлъ плывётъ արծիւը սաւառնում է (մեղմ կերպով). 3, հալուել, հոսել, թափուել. сургýчъ плывётъ; свѣчá плывётъ.

Плѣ‖нéніе չ. 1, գերելը, գերութիւն. Вавилóнское п.; 2,* հմայելը, թովելը, կախարդելը. **-ни́тель** ա. 1, գերող, գերիչ. 2,* (**-ни́тельница** է.) հմայող, դիւթող, կախարդիչ այր, կին. **-ни́тельно** մ. հմայքով, գրաւչութեամբ, հմայելով, թովելով, կախարդական ոյժով. **-ни́тельность** է. հմայք, կախարդանք, գրաւչութիւն, թովչութիւն. п. красоты́; **-ни́тельный** ած. հմայիչ, կախարդիչ, -դական, դիւթիչ, -թական, պճայլիչ, գրաւիչ, հրապուրիչ. **-ни́ть** (-ню́ -ня́тъ), **ся** տ. Плѣня́ть, ся; **-нникъ** ա. 1, գերի, գերեալ. 2,* գերի (կրքերի, ցանկութեան). **-нница** է. 1, գերուհի, գերեալ կին. 2,* գերուհի (կրքերի, ցանկութեան). **-нническій** ած. գերու. **-нничество** չ. գերութիւն. **-нничій**, чья, чье տ. Плѣннический; **-нный** ած. գերուած, գերի վերցրած. **-нъ** ա. գերութիւն. взять когó въ п. մէկին գերել. попáсть въ п. գերի ընկնել, գերուել. быть въ плѣнý գերութեան մէջ գտնուել. *быть въ плѣнý своихъ страстéй իր կրքերին գերի լինել. **-ня́ть**, -ни́ть ն. 1, գերել, գերի վերցնել. 2, դիւթել, հմայել, կախարդել, գրաւել, հրապուրել, պճայլեցնել. п.

кого́ красото́ю; **-ся** ներգ. մի բանով հրապուրուիլ, գերուիլ, կախուիլ:

Плѣ‖сень ի. բորբոսանք, բորբոս, [գինու, գարեջրի] ծաղիկ. **-снева́лый** ած. բորբոսած, բորբոսնած. **-снѣвѣ́ть**, запл—, տ. Плѣснѣть; **-снь** տ. Плѣсень; **-снѣть**, запл—, չ. բորբոսիլ, բորբոսնիլ, [գինու, գարեջրի մասին] ծաղկով պատուիլ, ծածկուիլ:

Плѣ‖ша́къ, а́ ա. 1, ճաղատ, կնդակ. 2, պարզ, անխառ ծաղիկ. **-ши́вецъ**, вца ա. **-ши́вица** ի. ճաղատ, հերաթափ, կնդակ, կունդ այր, կին. **-ши́вость** ի. կնդութիւն, ճաղատութիւն, հերաթափութիւն. **-ши́вый** ած. ճաղատ, հերաթափ, կունդ, կնդակ. не помина́й п—аго передъ лы́сымъ го́стемъ հիւրի մօտ «կուժ քեզ ասեմ, կուլայ դու լսիր» առակը մոռացիր. **-ши́вѣть**, опл—, չ. կնդանալ, ճաղատանալ, գլխի մազերից զրկուել. **-ши́на** ի. **-ши́нка** նւզ. 1, հերաթափ կամ մազաթափ տեղ (անասունի մորթի վերայ). 2, բաց տեղ անտառում. 3, բաց տեղ արտում կամ խոտհարքում. **-шь** ի. կնդութիւն, ճաղատութիւն, ճաղատ, հերաթափ տեղ գլխի վերայ. у него́ п. отъ брове́й до заты́лка նորա գլխին էլ մազ չէ մնացել: [Plus ending of line]

Плэдъ տ. Пледъ.

Плюга́‖вецъ, вца ա. **-вица** ի. 'գէշ', գարշելի, նողկալի, զազրալի այր, կին. **-вость** ի. **-вство** չ. 'գէշութիւն', գարշելիութիւն, զազիր, զազրալիութիւն. **-вый** ած. 'գէշ', գարշելի, զզուելի, սոսկալի, զազիր, զազրալի:

Плюма́‖жный ած. փետրային զարդարանքի. **-жъ** ա. (ֆր.) փետուրի, փետրային զարդարանք (գլխարկի, սաղաւարտի վերայ):

Плю́нуть տ. Плевать.

Плю́‖ска ի. բս. cupula, բաժակ (կաղինի). **-сконо́сныя**, ыхъ ի. յ. բս. Cupuliferae, բաժակաբերներ. **-скообра́зный** ած. բս. բաժակաձև:

Плюс‖на́ ի. 1, ներբան (ոտի). 2, կզմխ. metotarsus, ոտնամէջ. **-нево́й** ած. ոտնամիջի:

Плюсъ ա. (լտ.) 1, մաթմ. պլիւս, գումարման նշան (+). 2, դրական քանակութիւն, մնացորդ:

Плю́‖ха ի. ապտակ, 'սիլլայ', 'չափալախ'. **-хаться**, **-хнуться** ներգ. ռմկ. դմփալ, շմփալ, վայր ընկնել (ջրի մէջ):

Плюшъ տ. Плисъ.

Плю‖щево́й, **-щевый** ած. բաղեղի(ց), բաղեղէ. п. вѣно́къ.

Плюще́ніе չ. տափակացնելը, տափակ քաշելը, յօրինելը (մետաղեղէնը):

Плю́щикъ ա. 1, նւզ. տ. Плющъ; 2, բս. Glechoma hederacea, բաղեղնակերպ ծոթորին:

Плю‖щи́льный ած. [մետաղեղէնը] տափակացնելու, թիթեղ քաշելու. п—ая маши́на; п. стано́къ; п. заво́дъ; **-щи́льня** ի. [մետաղեղէնը] տափակացնելու, թիթեղ քաշելու մեքենայ կմ արհեստանոց. **-щи́льщикъ** ա. [մետաղեղէնը] տափակացնող, թիթեղ քաշող մարդ. **-щи́ть** (-щу́ -ща́тъ) ն. [մետաղեղէնը] տափակացնել, թիթեղ, թերթ քաշել. п. желѣ́зо, мѣдь, зо́лото.

Плющъ, а́ ա., բս. Hedera Helix, հասարակ բաղեղ:

Плюю́ տ. Плевать.

Пля‖са́льный ած. պարելու, կաքաւելու, պարի, կաքաւի. п. башма́къ; **-са́льщикъ** ա. **-са́льщица** ի. ճարտար պարող, կաքաւող այր, կին. **-са́ніе** չ. պարելը, կաքաւելը. **-са́ть** (-шу́ -я́шутъ; -ши́) ն. և չ. պարել, կաքաւել. п. на кана́тѣ պարանի վերայ պարել, 'քանդրբազութիւն անել'. *п. по чужо́й ду́дкѣ մէկին կամակատար դառնալ, սէկի կամքով գնալ. **-ска** ի. պար, կաքաւ (ռուսական). **-сово́й** ած. պարի, կաքաւի. п—а́я пѣ́сня պարերգ. п—а́я му́зыка; **-су́нъ**, а́ ա. **-су́нья** ի. պարող, կաքաւող, պարելու, կաքաւելու ձիրահար այր, կին. кана́тный п. պարանազնաց, 'քանդրբազ'. **-сывать** տ. Пляса́ть; **-шу́** տ. Пляса́ть; **-съ** ա. տ. Пля́ска.

Пнев‖ма́тика ի. (յն.) օդապնդութիւն. **-мати́ческій** ած. օդապնդական. **-мато-гра́фія** ի. (յն.) կզմխ. թոքագրութիւն. **-матологи́ческій** ած. հոգեխօսական, ոգեխօսական. **-матоло́гія** ի. (յն.) հոգեխօսութիւն, ոգեխօսութիւն. **-мо́нія** ի. (յն.) բժ. թոքերի բորբոքում, թոքատապ:

Пнуть տ. Пина́ть.

По նխդ. պահանջում է **А**, տրական և **Б**, հայցական հոլով. **А**, по տրական հոլովով նշանակում է. 1, համաձայն, համեմատ, ըստ. по моему́ мнѣ́нію իմ կարծիքով. по стари́нному обы́чаю ըստ հնաւանդ սովորութեան. одѣва́ться по мо́дѣ ըստ մօդայի հագնուել. узна́ть кого́ по го́лосу, по похо́дкѣ մէկին ձայնից, քայլուածքից ճանաչել. по зако́ну օրէնքով. пѣть по наслы́шкѣ լսողութեամբ, ըստ լսածի երգել. това́рищъ по слу́жбѣ պաշտօնակից. по совѣ́ту отца́ հօր խորհրդով. по слу́чаю առթիւ. по оши́бкѣ սխալմամբ. уче́бникъ по исто́ріи պատմութեան դասագիրք. итти́ по слѣда́мъ հետքերով գնալ. уволить въ отста́вку по проше́нію համաձայն խնդրի արձակել. онъ мнѣ родня́ по женѣ́ նա կնոջս կողմից ինձ ազգական է. 2, այս ինչ տեղով, այս ինչ ուղղութեամբ. այս ինչ տեղերում. այս ինչ տեղերով. гуля́ть по го́роду, по́ полю քաղաքում, դաշտում զբօսնել. плыть по Во́лгѣ Վօլգայով նաւել. расти́ по лѣса́мъ անտառներում աճել, բուսնել. уда́рить по головѣ́ գլխին խփել, զարկել. путеше́ствіе по Россі́и ճանապարհորդութիւն Ռուսիայով. лѣзть на кро́влю по лѣ́стницѣ սանդուխով տանիք բարձրանալ. скова́ть кого́ по рука́мъ и по нога́мъ մէկի ձեռներն ու ոտները կապել. всѣ разошли́сь по дома́мъ բոլորն էլ իրանց տները դարձան. 3, այս ինչ ժամանակ. по лѣта́мъ ամառները. онъ принима́етъ по пя́тницамъ ուրբաթ օրերը նա ընդունում է (այցելուներին). по пра́здникамъ не рабо́таютъ տօներին չեն բանում. 4, նկատմամբ, վերաբերմամբ. но́выя затрудне́нія возни́кли по э́тому дѣ́лу; 5, այս ինչ քանակութեամբ. по рублю́ съ ка́ждаго ամէն մէկից մի մի ռուբլի. дай ни́щимъ по пяти́ копе́екъ աղքատներին հինգ հինգ կոպէկ տուր (հմմ. ստորև Б, 2). **Б**, по-ն հայցական հոլովով նշանակում է. 1, մինչև, ց'. стоя́ть по колѣ́но въ водѣ́; онъ по́ уши въ долга́хъ նա մինչև ականջները պարտքերի մէջ խրուած է. по сіё вре́мя

մինչև հիմա. онъ былъ въ отлу́чкѣ три мѣ́сяца: съ 1-го января́ по пе́рвое апрѣ́ля; 2, *այս ինչ քանակութեամբ (միմիայն* $1^1/_2$, 2, 3, 4 *թուականների հետ. մնացած թուականների հետ* «по»-*ն միանում է տրական հոլովով, հմմ. վերև* A, 5). дѣ́ти съѣ́ли по́ три я́блока *ամէն մի երեխայ երեք խնձոր կերաւ.* сукно́ по́ два рубля́ арши́нъ *արշինը երկու ռուբլիանոց մահուդ.* 3, *ռմկ. համար.* ходи́ть по воду, по дрова́ *ջրի, փայտի, ջուր, փայտ բերելու գնալ (աւելի ուղիղ՝* за водо́ю, за дрова́ми); по ту сто́рону *այն կողմում.* **B,** *նախդրական հոլովով* (съ предло́жн. падежо́мъ) *նշանակում է.* 1, *այս ինչ ուղղութեամբ.* вы́стрѣлить по комъ *մէկի վերայ հրացան, ատրճանակ արձակել.* 2, *համար, վերայ.* пла́кать по отцѣ́, по ма́тери, по бра́тѣ, по сестрѣ́ *հօր, մօր, եղբօր, քրոջ վերայ լաց լինել.* скуча́ть по женѣ́ *կնոջ կարօտը քաշել.* носи́ть тра́уръ по роди́теляхъ *ծնողների մահուան համար սգի շորեր կրել.* соверши́ть панихи́ду по комъ *մէկի համար հոգեհանգիստ կատարել.* 3, *յետոյ.* по возвраще́нiи его́ въ оте́чество *նորա հայրենիք վերադառնալուց յետոյ.* по моёмъ прiѣ́здѣ въ Тифли́съ *Թիֆլիս վերադառնալուցս յետոյ.* въ 1904 году́ по Рождествѣ́ Христо́вѣ (*կմ* по́слѣ Рождества́ Христо́ва); N. B. **I. По-***ն բայի հետ միանալով ցոյց է տալիս.* 1, *գործողութեան մեղմութիւնը կամ կարճատևութիւնը, օր.* поду́мать *փոքր ինչ մտածել.* погуля́ть *փոքր ինչ զբօսնել.* поуба́вить *մի քիչ պակասեցնել.* попла́кать *փոքր ինչ լաց լինել.* 2, *գործողութեան աւարտումը, օր.* погаси́ть *հանգցնել պրծնել.* погуби́ть *փչացնել պրծնել.* постро́ить *շինել պրծնել.* постарѣ́ть *ծերանալ.* 3, *գործողութեան կրկնութիւնը, օր.* погу́ливать *յաճախ զբօսնել.* поигрывать *յաճախ խաղալ.* **2, по-***ն միանալով ածականի և մակբայի բաղդատականի հետ, ցոյց է տալիս սաստկութիւն կամ մեղմութիւն. օր.* поумнѣ́е *փոքր ինչ աւելի իմաստուն.* полу́чше *աւելի լաւ.* покрѣ́пче *աւելի ամուր, աւելի պինդ.* **3, по-***ով կազմւում են շատ մակբայեր, օր.* по бра́тски *եղբայրաբար.* по-ца́рски *արքայաբար.* по-армя́нски, по-ру́сски *հայերէն, ռուսերէն։*

Поалѣ́ть *չ. կարմրել։*

Поапо́стольскiй *ած. յետառաքելական։*

По‖-арме́йски *մ. բատ զօրականների սովորութեան.* **-армя́нски** *մ. հայերէն։*

Поа́хать *չ. փոքր ինչ հառաչել, հեծել։*

Поба́бничать *չ. մի քանի ժամանակ մանկաբարձութիւն անել։*

Побаг‖ро́вѣть *տ.* Багро́вѣть; онъ побагро́вѣлъ отъ гнѣ́ва *նա բարկութիւնից կարմրել, 'վուշնել' է.* **-рѣ́ть** *տ.* Багрѣ́ть.

Поба́иваться *չ.* кого́, чего́ *մէկից, մի բանից փոքր ինչ վախենալ, երկիւղ կրել։*

Побалагу́рить (-рю -рятъ) *չ. փոքր ինչ զրոյց անել, հանաքներ անել, 'դուրս տալ'։*

Поба́ливать *չ. փոքր ինչ ցաւել (երբեմըն).* грудь начина́етъ п.

Поба‖лова́ть (-лу́ю -ютъ), **-ло́вывать I,** *չ. փոքր ինչ, երբեմն չարութիւն, չարաճճիութիւն անել.* **2,** *փոքր ինչ երես տալ (երեխան երին)։*

Поба́лтывать I, *ն. յաճախ թափահարել (հեղուկեղէնը).* **2,** *ոկսել զրոյց անել, 'դուրս տալ'։*

Побаля́сничать *չ. փոքր ինչ զուարճախօսել, կատակներ, հանաքներ անել։*

Поба́нить (-ню -нятъ) *ն. փոքր ինչ լուանալ, մաքրել։*

Побараба́нить (-ню -нятъ) *չ. փոքր ինչ թմբկահարել։*

Побара́хтаться *չ. փոքր ինչ թպրտալ, խրթփել, թրփրտալ։*

Поба́‖риться (-рюсь -рятся), **-рни́чать** *չ. մի քանի ժամանակ ազայութիւն անել.* **-рски** *մ. ազայաբար.* жить п.: награди́ть п. *արժանավայել կերպով վարձատրել։*

Побары́шничать *չ. մի քանի ժամանակ շահագիտական առուտուրով պարապել։*

Побасё‖нка *է.* **-ночка** *նւզ. պատիկ պատմութիւն, զրոյց, հէքիաթ։*

Побаси́ть (-шу́ -ся́тъ) *չ.* **1,** *փոքր ինչ բաս, բամբ ձայնով երգել, նուագել.* **2,** *փոքր ինչ պճնամոլութիւն անել, զուքուել։*

Побасносло́вить (-влю -вятъ) *չ. առասպելներ, սուտ, մտացածին բաներ պատմել։*

Баталіо́нно *մ. առանձին առանձին զումարտակներով, զումարտակօրէն։*

Побашма́чничать *չ. մի քիչ ժամանակ կօշկակարութիւն, 'խարապութիւն' անել։*

Побаю́кать *ն. կամաց կամաց օրօրելով քնացնել (մանուկներին)։*

Побез‖ду́шничать *չ. անխիղճ, անսիրտ կերպով վարուել.* **-дѣ́льничать** *չ. փչութիւններ, սրիկայութիւններ անել.* **-поко́ить** (-ко́ю -ятъ) *ն. փոքր ինչ անհանգստացնել, նեղացնել, խանգարել.* **-пу́тничать** *չ. մի քանի ժամանակ ցոփութիւն, շուայտութիւն, անառակութիւն անել.* **-сла́вить** (-влю -вятъ) *ն. կարգով չարերին պատուազուրկ դարձնել, չարերի անունը կոտրել, պատիւը գցել.* **-сты́дничать** *չ. մի քանի ժամանակ անամօթ, անպատկառ բաներ բանել։*

Побере‖га́ть, -чь *ն.* что **1,** *պահել.* поберегите ва́ши совѣ́ты для друго́го слу́чая; п. свой си́лы для ва́льса; п. свой аппети́тъ для жарко́го; **2,** *պահել, պահպանել, պաշտպանել.* **-ся** *անդր. զգուշանալ.* **-гу́** *տ.* Побере́чь.

Побере́‖жный *ած. ափի, եզրի, ծովափեայ, ծովեզրեայ, գետափեայ, գետեզրեայ.* п. жи́тель; **-жье** *չ. ափ, եզր (ծովի, լճի, գետի), եզերավայր, ծովափ, ծովեզր, գետափ, գետեզր։*

Побере́чь (-егу́ -ежёшь -гу́тъ; *անց.* -рёгъ -гла́, о́; *հրմ.* -ги́); **ся** *տ.* Побере-га́ть, ся.

Побесѣ́довать (-дую -ютъ) *չ. փոքր ինչ զրոյց անել, խօսել։*

Поби‖ва́нiе *չ. տ. ստորև բայը.* **-ва́ть,** -ть *ն.* **1,** *ջարդել, կոտորել.* п. всѣхъ непрiя́телей; **2,** *ծեծել, թակել, ջարդել.* онъ затѣ́ялъ ссо́ру и его́ поби́ли; **3,** *յաղթել.* онъ всѣхъ бойцо́въ побива́етъ; *թղթխաղում* *խփել, զարկել, կտրել.* я поби́лъ ва́шего короля́ ко́зыремъ; **4,** *[կարկտի, ցրտի մասին] հարել, զարկել, տանել.* градъ поби́лъ весь хлѣ́бъ (*կմ ու. ին.* гра́домъ весь хлѣ́бъ поби́ло); моро́зъ поби́лъ я́блони; **-ся** *անդր.* объ закла́дъ *գրաւ, գրազ գալ, 'մաոջ գալ'։*

По||бира́ніе չ. վերցնելը (մեծ քանակութեամբ). **-бира́ть**, -бра́ть ն. մէկը միւսից յետոյ վերցնել (շատ բան, բոլորը). п. въ плѣнъ գերի վերցնել (շատերին, բոլորին). чортъ тебя́ побери́, чтобъ тебя́ чортъ побра́лъ դրողը քեզ տանի. **-ся** չ. մուրալ. **-биро́(ý)ха** հ.ր. աղքատ, մուրացկան, մուրացող:

По||би́тіе չ. զարկելը, ջարդելը. п. гра́домъ կարկտահարութիւն. **-би́ть** (-бью́ -ю́тъ; հրմ. -бе́й), **ся** տ. Побива́ть, ся; **-біе́ніе** չ. ջարդելը, ջարդ, կոտորելը, կոտորած, զարկելը. п. ка́мнями քարկոծութիւն:

Побла́говѣстить (-щу -стятъ) չ. զանգահարութիւնը վերջացնել, պրծնել:

Поблагодари́ть տ. Благодари́ть.

Поблаго||де́нствовать (-вую -ютъ) չ. մի քանի ժամանակ բարօր, բարեկեցիկ վիճակի մէջ գտնուել. **-дѣ́тельствовать** (-вую -ютъ) չ. кому́ մէկին բարութիւն անել, շնորհք ցոյց տալ. **-прія́тствовать** (-вую -ютъ) ն. кому́, чему́ մէկին, մի բանի նպաստել, օժանդակել, սատարել:

Побла||жа́ть չ. кому́ մէկին երես տալ, ներողամտութեամբ վերաբերուել. **-же́нствовать** (-вую -ютъ) չ. երանելի, երջանիկ օրեր անցկացնել. **-жи́ть** (-жу́ -жа́тъ) չ. փոքր ինչ չարաճճիութիւն, սաահակութիւն, աններեսութիւն անել. **-жка** ի. 1, երես տալը. ներողամտութիւն. дава́ть п—у տ. Поблажа́ть; 2, խելառութիւն, խելացնորութիւն, գժութիւն:

Поблева́ть (-лю́ю -ю́тъ) չ. փոքր ինչ փսխել, որձկալ:

Поблё||клый բյ. ած. թօշնած, թառամած, թարշամած, գունաթափ. **-кнуть** տ. Блёкнуть.

Поблестѣ́ть (-щу́ -стя́тъ) չ. մի քանի ժամանակ փայլել, շողալ, շողշողալ, պլպլալ, պսպղալ:

Поблея́ть (-блею́ -бле́ятъ) չ. մի քիչ մայլել, մկկալ, մկմկալ:

По||бли́же մ. աւելի մօտ, աւելի մօտիկ. ся́дьте п.; **-бли́зости** մ. մօտիկ:

Поблиста́ть չ. մի քիչ փայլել, շողալ:

Поблу||ди́ть (-жу́ -блу́дятъ) չ. 1, մի քիչ թափառել. 2, փոքր ինչ չարութիւն, չարաճճիութիւն անել. **-жда́ть** տ. Поблуди́ть 1.

Поблѣднѣ́ть տ. Блѣднѣ́ть.

Побогаты́рски մ. հերոսաբար, դիւցազնաբար, ʻաժդահաբարʻ:

Побогатѣ́ть չ. աւելի հարստանալ:

Побода́ть ն. կարգով խեթկել, եղջիւրներով զարկել, ʻհարու տալʻ:

Пободрѣ́ть չ. քաջալերուել, խրախուսուել, սիրտ առնել:

Побожи́ться տ. Божи́ться.

Побо́||и, евъ ա. յ. հարուածներ (ծեծի). **-ище** չ. արիւնահեղ, մեծ ճակատամարտ, կոտորած, ջարդ. 2, արեան դաշտ:

Поболта́ть 1, ն. փոքր ինչ թափահարել (հեղուկը). 2, չ. съ кѣмъ մէկի հետ փոքր ինչ զրոյց անել:

Побо́льше մ. բաղդատ. փոքր ինչ աւելի, աւելի շատ:

Побо||лѣ́зновать (-ную -ютъ) չ. կարեկցել. п. о комъ մէկին կարեկցել. **-лѣ́ть** չ. մի քանի ժամանակ հիւանդ լինել:

Побо||ра́ніе չ. պարտութիւն, -սելը, յաղթահարում, -բելը. **-ра́ть**, -ро́ть ն. 1, յաղթել, յաղթահարել, պարտել (կռուելով, սորելով). 2, (միայն побора́ть) չ. кому́, по комъ մէկին օգնել, պաշտպանել. **-ре́ніе** տ. Побора́ніе; **-ре́цъ**, рца ա. 1, պաշտպան, ապաւէն (կռուի, մաքառման մէջ). 2, (**-рица** ի.) յաղթող, յաղթահարող այր, կին. **-ри́тель**, **-ри́тельница** տ. Побо́рецъ, -рица.

Побормота́ть (-чу́ -мо́чутъ) չ. փոքր ինչ տրտնջալ, քրթմնջել, ʻմրթմրթալʻ, դժգոհել:

Побо́||рникъ ա. **-рница** ի. պաշտպան, ապաւէն այր, կին. *п. угнетённыхъ հեգն. Դոն Քիշոտ, ʻլիչի նահատակʻ:

Побороздйть (-зжу́ -здя́тъ) ն. մի քանի ժամանակ ակօսել, ակօսներ քաշել:

Поборо||ни́ть (-ню́ -ня́тъ), **-нова́ть** (-ну́ю -ютъ) ն. 1, մի քիչ տափանել, ցաքանել. 2, տափանել պրծնել, ցաքանել պրծնել:

Поборо́ть (-рю́ -бо́рютъ; -ри́) տ. Побора́ть; **-ся** փ.խ. միմեանց հետ մաքառել, մարտնչել, ոգորել. ոյժերնին չափել:

Побо́ръ ա. 1, առնելը, վերցնելը. 2, հարկահանութիւն. 3, побо́ры յ. անիրաւ բաժ, հարկեր, տուրքեր. п. де́ньгами, хлѣ́бомъ.

Побоча́||рить (-рю -рятъ), **-рничать** չ. մի քանի ժամանակ տակառագործութիւն անել, տակառագործութեամբ պարապել:

Побо́ч||но մ. կողմնակի կերպով. **-ный** ած. 1, կողմնակի. п—ыя сёла; п. путь; п—ое родство́ կողմնակի ազգակցութիւն. п—ое обстоя́тельство կողմնակի, երկրորդական պարագայ. 2, ամուսնութիւնից դուրս ծնուած, անհարազատ. п—ыя дѣ́ти.

Побоя́||рить (-рю -рятъ) չ. մի քանի ժամանակ բոյերութիւն, իշխանութիւն, աղայութիւն անել. **-рски** մ. բոյերաբար, իշխանաբար:

Побоя́ться (-бою́сь -я́тся) չ. փոքր ինչ վախենալ, երկիւղ կրել, երկիւղ քաշել:

По||бра́живать, -броди́ть չ. 1, փոքր ինչ ման գալ, շրջել, զբօսնել. 2, փոքր ինչ եռալ, եփ գալ:

Побра́жничать չ. լաւ կոնծել, ուտել, խմել, քէֆ անել:

Побракова́ть (-ку́ю -ютъ) ն. պարսաւել, ʻփտնելʻ, ʻփնովելʻ:

Побра́||нивать ն. փոքր ինչ կշտամբել, նախատել, շշպրել. **-ся** ան.դ. միմեանց հետ կռուել. **-ни́ть** (-ню́ -ня́тъ) հայհոյել, անարգել. **-ся** փ.խ. միմեանց հետ կռուել, գզվռտուել. **-нка** ի. կծու խօսքեր, կռիւ, վէճ, վիճաբանութիւն:

Побра́сывать ն. ձգել, գցել (մի քիչ կմ յաճախ):

Побра||та́нецъ, нца տ. Побрати́мъ; **-та́ться** տ. Брата́ться; **-ти́мство** չ. եղբայրութիւն, բարեկամութիւն. **-ти́мъ** ա. եղբայր, բարեկամ (նա, որ մէկի հետ եղբայրացել, բարեկամացել է). **-тски** (по-бра́тски) մ. եղբայրաբար:

Побра́ть (-беру́ -ру́тъ) տ. Побира́ть.

Побре́дить (-жу -дятъ) չ. մի քանի ժամանակ երազների, ցնորքների անձնատուր լինել:

Побре́з||гать, -гова́ть (-гую -ютъ) չ. чѣмъ մի բանից զզուել, զարշել, պժգալ, մի բան չխոկալ:

Побремени́ться (-ню́сь -ня́тся) ան.դ. чѣмъ իրան մի բանով ծանրաբեռնուած զգալ, իր վզին մի բեռ, ծանրութիւն զգալ:

Побренча́ть չ. մի քիչ ճնգճնգացնել, զրնգացնել, անհամ կերպով ածել. п. на гита́рѣ, на фортепіа́но.

Побре||сти́, -сть (-ду́ -ду́тъ; անց. -брёлъ -ла́, о́; -ди́) չ. քայլել, առաջ ընթանալ:

Побреха́ть չ. մի քիչ հաչել, կաղկանձել. *մի քիչ զալմաղալ բարձրացնել, աղմուկ հանել:

По||брива́ть ն. կարգով շատերին սափրել, ածելել. **-бри́ть** (-бре́ю -ютъ; -бре́й) ն. արագ սափրել պրծնել. **-ся** անդր. սափրուել, ածելուել:

Побро||ди́ть (-жу́ -бро́дятъ) տ. Побра́живать; **-дя́га** հոլ. շրջմոլիկ, պարապ-սարապ թրև եկող մարդ: [շրջտել:

Поброса́ть ն. ձգել, գցել, դէն ձգել,

Побры́з||гать, -гивать ն. մի քիչ ցանել, շաղ տալ, սրսկել. **-ся** անդր. միմեանց վերայ ջուր ցանել, ջուր շաղ տալ: [ցի տալ:

Побрыка́ть, ся չ. մի քիչ աքացել, քա-

Побрюзжа́ть (-жу́ -жа́тъ) չ. մի քիչ տրտնջալ, քրթմնջել, մռմռալ:

Побря́||кать տ. Побря́кивать; **-кива́ніе** չ. զօղանջելը, զրնգացնելը, չխկացնելը. **-кивать**, -кать չ. զօղանջել, զրնգացնել, չխկացնել (մի քիչ կամ յաճախ). **-ку́шка** է. չխկան, չխկչխկան (մանկական խաղալիք):

Побряца́ть տ. Побренча́ть.

Побу||ди́тель ա. **-ди́тельница** է. դրդող, դրդող այր, կին. **-ди́тельный** ած. դրդիչ, գրգռիչ. ստիպողական, հարկադրիչ. п—ыя сре́дства; **-ди́ть 1,** (-жу́ -бу́дятъ) ն. երբեմն զարթեցնել (քնածին). **2,** (-жду́ -дя́тъ) տ. Побужда́ть; **-ду** տ. Побы́ть; **-жда́ть,** -ди́ть ն. դրդել, գրգռել, սադրել. ստիպել, հարկադրել [մի բան անելու]. что побуди́ло васъ оста́вить слу́жбу? нужда́ побуди́ла его́ къ э́тому посту́пку; п. къ бу́нту; **-жде́ніе** չ. **1,** դրդելը, գրգռելը. **2,** դրդում, գրգիռ. слѣ́довать п—ію се́рдца սրտի ցանկութեանը հետևել. сдѣ́лать что по со́бственному п—ію մի բան իր սեպհական կամքով, իր սրտի բերմամբ անել. есте́ственное п. բնազդում. **-жду́** տ. Побуди́ть 2.

Побу́йствовать (-вую -ютъ) չ. մի փոքր անկարգութիւն անել, աղմուկ հանել:

Побунтова́ть (-ту́ю -ютъ) չ. մի քանի ժամանակ խռովութիւն բարձրացնել, ապստամբուել:

Побура́вить (-влю -вятъ) ն. մի քիչ գայլիկոնել, 'բուրղու քաշել':

Побурла́||цки մ. բուրլակաբար. *կոպտաբար, բիրտ, կոպիտ կերպով. **-чить** (-чу -чатъ) չ. մի քանի ժամանակ բուրլակութիւն (бурла́ченье) անել: [կատաղել, աղմուկ հանել:

Побурли́ть (-лю́ -ля́тъ) չ. փոքր ինչ

Побурча́ть (-чу́ -ча́тъ) չ. փոքր ինչ խլխլալ, մճաճալ, գռգռալ, կռկռալ:

Побу||рѣ́лый բյ. ած. գորշ կարմրագոյն դարձած. **-рѣ́ть** չ. գորշ կարմրաւուն դառնալ:

Побуфо́нить (-ню нятъ) չ. միմոսութիւններ, խեղկատակութիւններ անել:

Побушева́ть (-шу́ю -ютъ) չ. մի քիչ կատաղել, 'գաղազել':

Побуя́нить (-ню -нятъ) չ. մի քանի ժամանակ աղմուկ բարձրացնել, կատաղի, մոլեգին բաներ բանել:

По||быва́ть չ. гдѣ գտնուել, այցելել. онъ побыва́лъ во мно́гихъ стра́нахъ; п. у кого́ այցելել (հմմ. Перебыва́ть); **-бы́вка** է. այցելութիւն, ժամանակաւոր տայնջականութիւն:

Побыстрѣ́ть չ. արագանալ, արագահոս, արագընթաց դառնալ: [ցողութիւն:

Побы́тъ ա. գւռ. նիստ ու կաց. վարե-

По||бы́ть (-бу́ду -дутъ) չ. մի քանի ժամանակ մնալ. онъ по́былъ на ба́лѣ съ часъ, и уѣ́халъ; побу́дьте здѣ́сь, пока́ я возвращу́сь; **-бью́** տ. Поби́ть.

Побѣ́||гать չ. մի քիչ վազել, վազվզել. **-гивать** չ. երբեմն, ժամանակ առ ժամանակ վազել. **-гу́шки** է. յ. դէս ու դէն վազելը, վազվզելը. ма́льчикъ на п—ахъ բանբեր տղայ. **-гъ** ա. **1,** փախուստ, փախչելը. п. изъ тюрьмы́; п. солда́та; **2,** շառաւիղ, ընձիւղ, ճիւղ. п. де́рева.

Побѣ́||да է. յաղթութիւն. одержа́ть п—у յաղթել, յաղթութիւն կանգնել. **-ди́тель** ա. **-ди́тельница** է. յաղթող այր, կին. **-ди́тельный** ած. յաղթող, -թական. **-ди́ть** (-жду́ -дя́тъ) տ. Побѣжда́ть; **-дный** ած. յաղթութեան, յաղթական. п—ая пѣснь; п—ые зна́ки տ. Трофе́и; **-доно́сецъ,** сца ա. **-доно́сица** է. յաղթող, բազմայաղթ այր, կին. **-доно́сно** մ. յաղթական կերպով. **-доно́сный** տ. Побѣди́тельный; п—ыя войска́; п. до́водъ կարուկ ապացոյց:

Побѣжа́ть (-ѣгу́ -жи́шь -гу́тъ; -ги́) չ. **1,** սկսել վազել, փախչել. **2,** կծիկը դնել, 'պոկ տալ':

Побѣ||жда́ть, -ди́ть ն. յաղթել, պարտել. п. враго́въ; п. препя́тствія, тру́дности; **-жде́ніе** չ. յաղթելը, պարտելը:

Побѣ́ж||ка է. գնացք, քայլուածք, 'երիչ' (ձիու). **-никъ** ա. Սիբ. լծափոկ (շների):

Побѣ́||ливаніе չ. սպիտակացնելը, ճերմակացնելը. **-лива́ть, -ли́ть** (-лю́ -ля́тъ) ն. սպիտակացնել. **-лѣ́ть** տ. Бѣлѣ́ть.

Побѣ||си́ть (-шу́ -бѣ́сятъ) ն. մի քիչ բարկացնել, կատաղեցնել. **-ся** անդր. մի քիչ բարկանալ, կատաղել. **-снова́ться** (-ну́юсь -ю́тся) չ. մի քանի ժամանակ գժուել, մոլեգին բաներ անել:

По||ва́дить (-жу -дятъ), **ся** տ. Пова́живать, ся 3; **-ва́дка** է. **1,** սովորոյթ, -րութիւն. **2,** ներողամտութիւն. **-ва́дливый** ած. որ և է սովորութիւն ընդունած, խրատուած. մտերմացած. **-ва́дный** ած. դրաւիչ, հրապուրիչ. քաղցր, հաճելի. п—ыя рѣ́чи; **-ва́дчикъ** ա. **-ва́дчица** է. հրապուրող, դրաւող, մի բանի ընտելացնող այր, կին. **-ва́женіе,** **-ва́живаніе** չ. սովորեցնելը, ընտելացնելը. **-ва́живать 1,** (-води́ть) ն. երբեմն, մի քիչ ժամանակ ման ածել, շրջեցնել (օր. ձեռքից բռնած). п. дѣте́й по́ саду; **-ся** անդր. съ кѣмъ մէկի հետ յարաբերութիւն, կապ ունենալ. **2,** (-вози́ть) ն. երբեմն, մի քիչ ժամանակ շրջեցնել (կառքով). **3,** (-ва́дить) ն. հրապուրել, ընտելացնել. **-ся** անդր. սովորել, ըն-

տեղանալ. слуга́ пова́дился ча́сто уходи́ть со двора́.

Пова́жничать չ. մի քիչ, մի քանի ժամանակ հպարտանալ, փքուիլ, կոտրտուիլ.

Пова́жу տ. Пова́дить.

Пова́ксить (-кшу -сятъ) ն. մի քիչ վաքսել, ներկել (կօշիկները):

Пова́‖ливать ն. դէս ու դէն ձգել, գցել. երբեմն գլորել. **-ся** անդր. 1, դէս ու դէն ընկնել, գլորուիլ. 2, երբեմն վայր ընկնել. **-ли́ть** (-лю́ -лятъ) 1, ն. գլորել, տապալել, գետնով տալ. вѣтеръ повали́лъ мно́го дере́вьевъ; п. кого́ на зе́млю, на́ полъ, на крова́ть; дождёмъ повали́ло хлѣбъ անձրեւը արտերը շուռ տուեց, պառկեցրեց. 2, չ. խուժել, թափուել. наро́дъ повали́лъ на пло́щадь; **-ся** անդր. վայր ընկնել, գլորուիլ, տապալուիլ. домъ повали́лся տունը փուլ եկաւ, փլեց. онъ повали́лся ему́ въ но́ги նա նրա ոտներն ընկաւ. п. на зе́млю; **-лка** է. կարգով պառկելը, պառկոտելը, պառկում (շատերի). спать въ п—у միմեանց մօտ պառկած, թափուած (առանց ակողնի) քնել. **-лъ** ա. 1, ընդհանուր ջարդ, կոտորած, մահ, մահտարաժամ. 2, գլորում, տապալում. п—омъ յանկարծակի. лежа́ть п—омъ միմեանց մօտ կարգով պառկել. уби́ть на п. մի հարուածով գետին տապալել, սպանել. положи́ть всѣхъ на п. բոլորին էլ ջարդել, կոտորել. **-льный** ած. ընդհանուր. п—ая болѣ́знь տարափոխիկ հիւանդութիւն, ժանտախտ, մահտարաժամ. п. о́быскъ; **-ля́ть** ն. 1, տապալել. շուռ տալ. 2, մի քանի ժամանակ գլորել, թաւալել. **-ся** անդր. երբեմն գլորուել, շուռ ու մուռ գալ:

Пова́‖пить (-плю -пятъ) տ. Ва́пить; **-пле́ніе** տ. Ва́пленіе; **-пленный** ըյ. ած. բուած, գաջ ու կրով ծեփած: [վատ գրել:

Поварáксать ն. կեղտոտել, մրոտել,

Поварга́нить (-ню -нятъ) ն. 1, մի քիչ ածել, խաղալ (варганъ-ի վերայ) 2, անշնորհք կերպով անել, շինել, թխել:

Пова́‖ренка է. նւզ. պստիկ խոհանոց. **-ренный** ած. խոհանոցի, -ցային. п—ое иску́сство խոհարարութիւն. п—ая соль սովորական, խոհանոցում գործածական աղ, կերակրի աղ. **-рёнокъ**, нка ա. նւզ. պստլիկ խոհարար, խոհարարի օգնական. **-ривать, -ри́ть** (-рю́ -рятъ) ն. մի քիչ, երբեմն եփել, խաշել. **-ри́ха** է. 1, խոհարարուհի. 2, խոհարարի կին. **-рничать** չ. խոհարարութիւն անել, խոհարար, -ուհի լինել. **-рня** է. խոհանոց. **-рско́й** ած. խոհարարի, -րական. п. ножъ; (по́ва)**ръ** ա. խոհարար:

Повата́житься (-жусь -жатся) անդր. съ кѣмъ մի քանի ժամանակ մէկի հետ ընկնել, շրջել: [անել. գլխից 'ռադ' անել':

Повахля́ть չ. անհոգ կերպով, մի կերպ

По‖ва́щивать, -вощи́ть ն. մի քիչ, թեթեւ կերպով մոմել, մոմ քսել:

По‖вбива́ть, -вби́ть (-вобью́ -ю́тъ) ն. գւռկ. միմեանց յետեւից զարկել, ցցել:

Повглядѣ́ться (-жусь -лятся) չ. въ кого́ մէկին մի լաւ, ուշադրութեամբ նայել, դիտել, զննել, 'տնտղել':

Повда‖ви́ть (-влю́ -а́вятъ), **-влива́ть** ն. սեղմելով մասամբ ներս մղել, ներս կոխել:

Повдви‖га́ть ն. միմեանց յետեւից ներս խոթել. **-нуть** ն. փոքր ինչ շատ ներս խոթել, ներս մտցնել:

Повдовѣ́ть չ. 1, մի քանի ժամանակ այրի մնալ. 2, կարգով, միմեանց յետեւից այրիանալ: [ներս ածել:

Повду́нуть չ. մի քիչ ներս փչել, փչելով

Поведе́ніе չ. վարք, ընթացք. վարմունք, արարմունք. человѣ́къ хоро́шаго п—ія լաւ վարքի տէր մարդ. она́ дурно́го п—ія նա ամբարոյական է. свидѣ́тельство о п—іи վարքի վկայական. всѣ осужда́ютъ его́ п.

Поведёрно մ. վէդրօներով, դոյլերով:

Пове‖зти́, -зть (-зу́ -зу́тъ) ն. տանել, (գր.) ածել (ոչ ոտով, այլ սայլով, նաւով, գրաստով). посла́нника повезли́ въ придво́рной каре́тѣ; п. това́ры на телѣ́гахъ, на вола́хъ, водо́ю, на ло́дкахъ սայլերով, եզներով, ծովով (գետով), նաւակներով ապրանքներ կրել, տեղափոխել. ему́ *повезло́ նորա բաղդը բանեց:

Пове‖ли́тель ա. հրամայող, տէր. **-ли́тельница** է. հրամայող կին, տիրուհի. **-ли́тельно** մ. հրամայողաբար, հրամայողական եղանակով. **-ли́тельный** ած. հրամայական. п. го́лосъ, тонъ; п—ое наклоне́ніе քեր. հրամայական եղանակ. **-ли́тельство** չ. իշխանութիւն հրամայելու. **-лѣва́ніе** չ. հրամայելը, հրաման տալը, արձակելը. **-лѣва́ть**, -лѣ́ть ն. հրամայել, պատուիրել. Госуда́рь повелѣ́лъ объяви́ть слѣ́дующее; мо́й долгъ повелѣва́етъ э́то; рели́гія повелѣва́етъ помога́ть бли́жнему; п. во́йскомъ զօրքին հրամանատար լինել. **-лѣ́ніе** չ. հրաման, պատուէր. **-лѣ́ть** (-лю́ -ля́тъ) տ. Повелѣва́ть.

Повер‖га́ть, -гнуть (անց. пове́ргъ -гла, о) ն. ձգել, գցել. վայր գցել, տապալել, գլորել. п. трофе́и къ стопа́мъ побѣди́теля; расточи́тельность пове́ргла его́ въ нищету́; п. къ стопа́мъ Госуда́ря вѣрнопо́дданническія чу́вства սփռել առ ոտս Կայսեր հաւատարիմ հպատակութեան զգացումները. **-ся** անդր. գլորուիլ, տապալուիլ. п. въ про́пасть; она́ пове́рглась пе́редъ свя́тою ико́ною նա սուրբ պատկերի առաջ ծունկ չոքեց. п. къ чьимъ нога́мъ մէկի ոտներն ընկնել: [վիրաւորել:

Повере‖ди́ть (-жу́ -дя́тъ) ն. վնասել,

Повере‖зжа́ть (-жу́ -жа́тъ), **-ща́ть** (-щу́ -ща́тъ) չ. փոքր ինչ լալ. ոռնալ, ճչել:

Поверже́ніе չ. ձգելը, վայր ձգելը, տապալելը. վայր ընկնելը, փռուելը. п. ницъ.

Поверну́ть, ся տ. Повёртывать, ся.

По‖верста́ть, ся տ. Повёрстывать, ся; **-вёрстка** է. հաւասարեցնելը, 'բարէբար' դարձնելը:

Повёр‖стно մ. ըստ վերստաթուի. **-стный** ած. ըստ վերստաթուի. п—ая пла́та.

Повёр‖стываніе չ. հաւասարեցնելը, 'բարէբար' դարձնելը. **-стывать**, -ста́ть ն. հաւասարեցնել, 'բարէբար' դարձնել. մէկը միւսի փոխարէն վերցնել, п. кого́ жа́лованьемъ մէկին միւսի հետ հաւասարաչափ ռոճիկ տալ. **-ся** անդր. հաւասարուել, 'բարէբար' դառնալ:

Повёр‖тка է. դարձ, պտոյտ. **-тываніе** չ. դարձնելը, շրջելը. **-тывать**, -нуть ն. դար-

ձնել, շրջել, շուռ տալ. п. жаркóе на вéртелѣ խորովածը շամփուրը շուռ տալ. п. на прáво, въ стóрону; кýчеръ повернýлъ въ переýлокъ կառապանը կառքը դէպի կողմնակի փողոց դարձրեց. корáбль повернýлъ къ бéрегу նաւը դէպի ափ դարձաւ, թեքուեց. мы *повернёмъ это дѣло по своему մենք այդ գործին մեր ցանկացած ընթացքը կտանք. **-ся** անդր. շուռ գալ, շրջել, դառնալ. п. съ бóку нá бокъ въ кровáти; п. къ комý спинóю մէջքը մէկին դարձնել. тамъ было такъ тѣсно, что едвá мóжно было п—нýться; какъ у тебя́ язы́къ повернýлся сказáть это? ինչպէս լեզուդ վրադ եկաւ այդ ասելու. ну, повёртывайся դէհ, շուտ արի. **-тѣть** (-чý -вéртятъ) ն. երբեմն, մի քանի ժամանակ պտոյտ տալ, պտոյտ ածել. онъ повертѣлъ надъ этимъ головóю դորա վերայ նա գլուխը պտոյտ տուեց. **-ся** անդր. մի քանի ժամանակ պտոյտ գալ, պտտուիլ:

Повéрхно‖стно մ. հարևանցի կերպով, վայր ի վերոյ. **-стность** ի. մակերևութականութիւն. *հարևանցիութիւն. п. егó знáній; **-стный** ած. 1, վերին, երեսի. п—ые слои пóчвы; 2,* թեթև, հարևանցի, վայր ի վերոյ. п—ыя знáнія; п—ое понятіе; **-сть** ի. վերին կողմ, երես, մակերևոյթ. п. воды́; п. земли́; плóская п.; 2,* արտաքին կողմ. онъ знáетъ однý тóлько п. этого дѣла.

Повéр‖хъ նխդ. (սեռ. հոլ.) վերև, վերայ. п. земли́; п. воды́; **-шительный** ած. աւարտական. **-шить** (-шý -шáтъ) ն. 1, ծածկել (գլուխը, վերևի մասը). 2, վերջացնել, աւարտել:

Повесе‖лить (-лю́ -ля́тъ) ն. ուրախացնել, խնդացնել (մի քանի ժամանակ). **-ся** անդր. փոքր ինչ ուրախանալ, խնդալ. **-лѣть** չ. ուրախանալ, խնդալ:

Пове‖сти́, -сть (-дý -дýтъ; *անց.* повёлъ -лá, ó; -ди́) ն. տանել, (գր.) վարել, ածել. п. преступника на казнь; п. дѣтéй на гуля́нье; это ни къ чемý не поведётъ դորանից [լաւ] բան չի դուրս գայ. это мóжетъ п. къ ссóрѣ դորանից կարող է կռիւ առաջանալ. **-сти́сь, -сться** անդր. съ кѣмъ մէկի հետ յարաբերութիւն ունենալ. съ кѣмъ поведёшься, тѣмъ и прослывёшь.

Поветшáть չ. հնանալ:

Повечé‖ріе չ. երեկոյեան ժամասացութեան երկրորդ, վերջին մասը. вечéрнее богослужéніе состои́тъ изъ вечéрни и п—ія; **-рній** ած. երեկոյեան ժամասացութեան, ժամերգութեան. **-(-éче)ру** մ. երեկոյեան, երեկոյեան դէմ. **-рѣть** չ. երեկոյանալ, մթնել, տարաժամիլ. **-ря́ть** տ. Поужинать.

Повзвóдно մ. ռզմ. ջոկատներով, խըմբակներով:

Повздёрнуть ն. փոքր ինչ բարձրացնել, վերև քաշել (ձգձգելով)

Повздóрить տ. Вздóрить.

Повздыхáть չ. մի քիչ հառաչել, հոգոց հանել: [րել, խորտակել:

Повзломáть ն. միմեանց յետևից կոտ-

Повзноси́ть (-шý -нóсятъ) ն. կարգով, միմեանց յետևից վերև տանել, բարձրացնել:

Повзнуздáть ն. կարգով սանձել (ձիերին), սանձերը բերանները դնել:

Повзобрáться (-взберýсь -рýтся) անդր. կամաց կամաց վերև ելնել, վերև բարձրանալ: [ընկեցնել, օդ ցնդեցնել:

Повзорвáть (-рвý -вýтъ) ն. կարգով

Пови‖вáльный ած. մանկաբարձութեան, -բձական. п—ая бáбка մանկաբարձուհի. **-вáльщикъ** ա. **-вáльщица** ի. մանկաբարձ, -ձուհի. **-вáніе** չ. 1, խանձարրելը, բարուրելը. 2, մանկաբարձութիւն անելը. **-вать**, -(й)ть ն. 1, խանձարրել, բարուրել, բալուլել. 2, մանկաբարձութիւն անել. **-вной** ած. մանկաբարձութեան, -ձական. п—ая плáта.

Пови‖дáть ն. [աշխատել] տեսնել. людéй п. и себя́ показáть; **-ся** անդր. съ кѣмъ աշխատել տեսնուել մէկի հետ. повидáйтесь съ нимъ; **-димому** մ. ինչպէս երևում է, ըստ երևոյթին:

Пови́з‖гивать, -жáть (-жý -жáтъ) չ. երբեմն, մի քիչ ոռնալ:

Пови́ли‖ка, -ца ի. բս. Cuscuta, գաղձ. **-чный** ած. գաղձի: [տալ, 'մահանալ անել'

Повиля́ть չ. գործից խուսափել, խոյս

Пови‖ни́ть (-ню́ -ня́тъ) ն. մեղադրել, դատապարտել. **-ся** անդր. իր մեղքը, մեղաւորութիւնը խոստովանել. **-нная**, он ի. խոստովանութիւն (մեղքի, յանցանքի, սխալանքի), զղջանք. принести́ п—ую հրապարակաւ իր մեղքը խոստովանել, թողութիւն խնդրել. **-нность** ի. 1, պարտք, պարտականութիւն. ծառայութիւն, տուրք. общéственныя п—и հանրային տուրքեր. городскія п—и քաղաքային տուրքեր. зéмскія п—и գաւառային տուրքեր. дéнежная п. դրամական տուրք. натурáльная п. տուրք բերքով. вóинская п. զինուորական ծառայութիւն. 2, տ. Пови́нная; **-нный** ած. 1, մեղաւոր, մեղապարտ, յանցաւոր. я ни въ чёмъ не пови́ненъ; 2, պարտական, պարտաւոր. кáждый граждани́нъ пови́ненъ защищáть своё отéчество; 3, հնազանդ, հպատակ. իր մեղքը խոստովանող, զղջացող (տ. Пови́нная); п—ую гóлову и мечъ не сѣчётъ իր մեղքը խոստովանողը թողութիւն կ'ստանայ. **-новáться** (-нýюсь -ются) անդր. հնազանդուիլ, հպատակուիլ, լսել. п. закóнамъ, разсýдку; слѣпо п.; тѣлá повинýются закóну тяготѣнія; **-новéніе** չ. հնազանդութիւն, հպատակութիւն. держáть въ п—іи հնազանդութեան մէջ պահել. вы́йти изъ п—ія հնազանդութեան սահմանից դուրս գալ. слѣпóе п.; почти́тельное п. отцý, мáтери; п. вóлѣ Бóжьей.

Повинти́ть (-чý -тя́тъ) ն. փոքր ինչ պնդել (պտուտակը):

Пови‖рáть ն. փոքր ինչ սուտ խօսել. **-рýнъ** ա. **-рýха** ի. երբեմն սուտ խօսող, սուտ սուտ բաներ պատմող այր, կին:

Пови‖сáть, -снуть չ. կախուել, կախ ընկնել. вѣтви пови́сли; **-слый** բյ. ած. կախուած, կախ ընկած, քաշ ընկած. **-снуть** (*անց.* -съ -сла, о) տ. Повисáть; **-сѣть** (-шý -ся́тъ) չ. մի քանի ժամանակ կախուել, կախուած, կախ ընկած մնալ: [ռել

Повитáть չ. դէս ու դէն յածել, թափա-

Повитіе չ. պատելը, փաթաթելը, խան-
ձարուրելը։
Повитійствовать (-вую -ютъ) չ. մի
քանի ժամանակ ճարտասանութիւն անել։
По‖витýха է. մանկաբարձուհի. **-вить**
(-вью -ютъ; -вéй) տ. Повивáть.
Пови‖хáть -хнýть ն. դուրս գցել, խե-
ղել. **-ся** անդր. դուրս ընկնել, խեղուել. *ուղիղ
ճանապարհից շեղուել, մոլորուել. գժուել.
-хлять չ. խորամանկութիւն անել, խորա-
մանկութեամբ գործից խուսափել, խոյս տալ.
-хнýть (անց -хъ -хла, о) տ. Повихáть;
-(пó-)хъ ա. խեղում, դուրս ընկնելը, տեղա-
հան լինելը։
По‖вклáдывать, -вложить ն. միմեանց
յետևից ներս դնել (սրերը պատեանների մէջ)։
Повклеить (-лею -ятъ) ն. чегó կար-
գով, միմեանց յետևից կպցնել, սոսնձել։
Повкусить (-шý -сятъ) ն. փոքր ինչ
ճաշակել, համը տեսնել։ [րել (մի բանի)։
Повладѣть չ. մի քանի ժամանակ տի-
Повлá‖ствовать, **-стительство-
вать** (-вую -ютъ) չ. մի քանի ժամանակ
իշխել։
Повлачить (-чý -чáтъ) ն. քարշ տալ,
թրև տալ, թրև ածել. п. жизнь ողորմելի
կեանք վարել, տառապել։
По‖влéчь (-влекý -чёшь -кýтъ) ն. սկը-
սել քարշ տալ, թրև ածել. э́то повлечётъ за
собóю вáжныя послѣ́дствія այդ կարևոր
հետևանքներ կունենայ. **-ся** անդր. սկսել քարշ
գալ, թրև գալ. п. за кѣмъ.
Повліять չ. ազդել։ [дывать.
Повложить (-жý -жатъ) տ. Повклá-
Повломиться (-млюсь -лóмятся) անդր.
ներս խուժել։
Повлѣ‖зáть, **-зть** (-зу -зутъ; անց.
-зъ -зла, о) չ. միմեանց յետևից բարձրանալ,
ելնել։ [մաց վճարել, հատուցանել։
Повносить (-шý -óсятъ) ն. կամաց կա-
По‖водить (-жý -вóдятъ) 1, ն. տ. По-
вáживать 1; 2, (-вести) ն. և չ. чѣмъ մի
բան շարժել, մի բանով շարժում, շարժողու-
թիւն անել. п. рукáми, глазáми ձեռքերով
շարժում անել, աչքերը յածել. дóску повелó
տախտակը ծռուել, կորացել է. **-вóдка** է.
շարժում. п. смычкóмъ երժ. ջութակի աղե-
ղի շարժումը, զարնումը. **-водóкъ**, дкá ա.
1, սանձ (ձիու) 2, կարթաթել. **-водчикъ** ա.
-водчица է. առաջնորդ, -դող, վարիչ այր,
կին (կոյրի). **-водъ** ա. 1, (յ. повóдья и по-
водá) սանձ, երասանակ ձիու. սանձի փոկ,
սանձափոկ. вести лóшадь зá п.; отпустить
повóдья у лóшади ձիու սանձը բաց թողնել.
2, (յ. пóводы) առիթ, պատճառ. дать п. къ
чемý մի բանի առիթ տալ. онъ пóдалъ емý
п. къ жáлобѣ; по э́тому п—у այդ պատ-
ճառով. **-водырь**, я́ ա. **-водырка** է. ա-
ռաջնորդ, -ող, վարիչ այր, կին. п—рь кара-
вáна; **-вóдья** ա. յ. տ. Пóводъ 1.
Поводянѣть չ. ջրալի դառնալ։
Пово‖евáть (-юю -ютъ) չ. մի քանի
ժամանակ պատերազմ մղել. **-евóдствовать**
(-вую -ютъ) չ. մի քանի ժամանակ воеводá
լինել. **-ёвывать** չ. 1, երբեմն, ժամանակ
առ ժամանակ պատերազմել. 2, մեծ աղմուկ,
'ղալմաղալ' բարձրացնել։
Повóень, -óйня ա. բս. Convolvulus
պատատուկ։
Пово‖жý տ. Поводить և Повозить;
-зить (-жý -вóзятъ) տ. Повáживать 2;
-ся 1, անդր. съ кѣмъ մէկի համար չարչա-
րուել, նեղութիւն կրել. *довóльно я съ
нимъ повозился նա ինձ շատ չարչարեց,
շատ նեղութիւններ պատճառեց. 2, ժող. հան-
րութեամբ, միասին կրել (խուրձ, խոտ). **-зка**
է. սայլ. арестáнтская п. կալանաւորների
սայլ. п. для перевóзки мéбели; п. на
двухъ колёсахъ երկանիւ սայլ։
Повозмужáть չ. արբունքի հասնել,
չափահաս դառնալ։
Повóзочка է. նւզ. սայլակ։
Повó‖й ա. 1, տ. Повивáніе; звать на
п. մանկաբարձական գործով կանչել. 2, բս.
Convolvulus arvensis, բուն պատատուկ կամ
դաշտաց դեղձ (բաղեղնատերև փաթաթայիկ).
-йникъ ա. **-йничекъ**, чка նւզ. 1, գլու-
խը փաթաթելու աղլուխ (ռուս գեղջկուհու). 2,
բս. Althaea officinalis, տուղտ։ [սով։
По-вóински մ. զօրականին յատուկ ձե-
Поволáкивать ն. երբեմն, ժամանակ
առ ժամանակ քարշ տալ, թրև ածել։
Повóлжье չ. Վոլգայի ափերը, շրջակայ-
քը. вéрхнее п. Վոլգայի վերին ափերը։
Пово‖лóка է. 1, քարշքշելը, թրև ածելը.
2, յածում, դանդաղ շարժում, յոգնածութիւն
(աչքերի). глазá съ п—ою քողարկած աչքեր.
-локý տ. Поволóчь; **-лочить** (-чý -чáтъ)
ն. 1, քարշել, մի քանի ժամանակ քարշել, թրև
ածել. 2, ձգձգել, ուշացնել (գործը). **-ся** ան-
դր. քարշ գալ, թրև գալ. я хочý п. за э́тою
вдóвушкою ես ուզում եմ այս այրու յետևից
ընկնել. **-лóчь** (-кý -чёшь -кýтъ; անց.
-лóкъ -клá, ó; հրմ. -кú) ն. սկսել քարշ տալ,
թրև տալ, թրև ածել։
Повóльничать չ. մի քիչ, մի քանի
ժամանակ կամայականութիւն անել, ինքնիշխա-
նաբար վարուել։ [շահոտութիւն արձակել։
Повонять չ. մի քանի ժամանակ գար-
Поворáживать չ. երբեմն գուշակու-
թիւն, հմայութիւն անել։
Пово‖рáчиваніе չ. 1, շուռ տալը, շըր-
ջելը. 2, դարձնելը, դառնալը. **-рáчивать**,
-ротить ն. 1, շուռ տալ, շրջել. п. жаркóе
на вéртелѣ շամփուրը շուռ տալ. 2, դարձնել.
դառնալ. п. на прáво; идя́, п. назáдъ գնա-
լու ժամանակ յետ դառնալ. нéчего дѣ́лать,
на п. въ другýю стóрону; вѣ́теръ пово-
рáчиваетъ къ югу քամին դէպի հիւսիս է
դառնում. корáблъ поворотилъ къ бéрегу;
-ся անդր. շուռ գալ, շուռ ու մուռ գալ, շրջել,
դառնալ. п. съ бóку нá бокъ; ну, пово-
рáчивайся! դէհ, ժամ արի. здѣ́сь такъ тѣ́-
сно, что нельзя́ п—ротиться.
Пово‖рáшиваніе չ. թեթև կերպով
շօշափելը, խառնելը. **-рáшивать**, -рошить
ն. ժամանակ առ ժամանակ շօշափել (վէրքը),
խառնել (օր. կրակը). **-ся** անդր. շարժուել,
գեալ (մրջիւնների մասին)։
Поворковáть (-кýю -ютъ) չ. մի քա-
նի ժամանակ մնչել (աղաւնու մասին)։

Пово‖ровáть (-рýю -ютъ) ն. գողանալ. չ. մի քանի ժամանակ գողութիւն անել։

По-воровски մ. գողի պէս։

Поворóвывать ն. երբեմն, ժամանակ առ ժամանակ գողանալ, գողութիւն անել։

Поворожить տ. Ворожить.

Поворонить (-ню́ -нятъ) ն. սևացնել, սև ներկել, սև գոյնով արծնել։

Поворо‖тить (-чý -рóтятъ), **ся** տ. Поворáчивать, ся; **-тливость** էգ. ճարպկութիւն, ճարտարութիւն, արագաշարժութիւն. **-тливый** ած. ճարպիկ, ճարտար, արագաշարժ, թեթև. **-тный** ած. **1**, դարձնելու, պըտըտեցնելու. п. рычáгъ; **2**, դառնող, պտոյտ եկող, շրջանական, շրջադարձ. **3**, դարձի, պտոյտի. п—ые крýги աշխ. արևադարձային շրջաններ. **-тъ** ար. **1**, դառնալը, շրջելը, պտոյտ գալը, պտոյտ անելը. շուռ գալը. дѣлать п. на прáво, на лѣво դէպի աջ, դէպի ձախ դառնալ. карéта изломáлась на п—ѣ ծածկակառքը պտտուելիս կոտրուեց. **2**, դարձ, պտոյտ. դարձի, պտոյտի տեղ. замóкъ въ два п—а երկպտոյտ կողպէք (որ կողպելու համար բանալին երկու անգամ պիտի պտոյտ տալ). п. сóлнца, сóлнечный п. արևադարձակէտ. рѣкá дѣлаетъ нѣсколько п—овъ; при п—ѣ ýлицы այն տեղում, ուր փողոցը պտոյտ է առնում. **-чать** ն. մի քիչ, մի քանի ժամանակ պտոյտ տալ, պտոյտ ածել, դարձնել. **-ся** անդ. մի քիչ պտոյտ գալ, թաւալուել. **-чý** տ. Поворотить. [ворáшивать, ся.

Поворошить (-шý -шатъ), **ся** տ. По-

Поворчáть (-рчý -чáтъ) չ. մի քիչ փնթփնթալ, մրթմրթալ, քրթմնջել։

Повострить (-рю́ -рятъ) ն. փոքր ինչ սրել, (գր.) յեսանել։ [вать.

Повощить (-щý -щáтъ) տ. Повáщи-

Повраждовáть (-дýю -ютъ) չ. մի քանի ժամանակ թշնամութիւն անել, թշնամաբար վերաբերուել։ [սել, շատ շաղակրատել։

Поврáть (-врý -ýтъ) չ. շատ ստեր ա-

Повре‖дитель ար. **-дительница** էգ. վնասիչ, վնասակար, վնաս, զեան հասցնող, փըչացնող այր, կին. **-дить** (-ждý կմ -жý -дятъ), **-ждáть** ն. վնասել, վնաս, զեան հասցնել, (գր.) ստանանել. վիրաւորել. փչացնել. безпрестáнное чтéніе повредило мнѣ глазá; п. нрáвы վարք ու բարքը փչացնել, ապականել. п. члéны անդամները խեղել. это повредитъ здорóвью; градъ повредилъ (կմ ռմկ. грáдомъ повредило) виногрáдники; **-ждéніе** չ. վնաս, զեան, վիրաւորում. тѣлéсное п. մարմնական վնաս. п. нрáвовъ վարուց ապականութիւն, զեղծում. п. члéновъ անդամների խեղում, անդամախեղութիւն։

Повре‖менить (-ню́ -нятъ) չ. համբերել, փոքր ինչ սպասել. повремените немнóго; **-мéнно** մ. պարբերաբար, ժամանակ առ ժամանակ. **-мéнность** էգ. պարբերականութիւն, պարբերաբար յայտնուելը. **-мéнный** ած. պարբերական. п—ое издáніе.

По‖врывáть, -врыть (-врóю -ютъ; -врóй) ն. միմեանց յետևից թաղել, անկել։

По‖врѣзать (-жу -жутъ) ն. [փորելով, կտրելով] միմեանց յետևից դնել, ամրացնել (օր. պատուհանիապակիները)։

Повса‖дить (-жý -áдятъ), **-жáть** ն. կարգով ներս դնել. ամրացնել։

Повсе‖гóдно մ. ամէն տարի. **-гóдный** ած. ամէն տարի եղող, պատահող. **-днéвно** մ. խւրաքանչիւր օր, ամէն օր. **-днéвность** էգ. ամէնօրէութիւն, ամէնօրեայ լինելը. **-днéвный** ած. ամէն օր եղող, պատահող, ամէնօրեայ, առօրեայ. п—ое занятіе; **-лѣтній** ած. խւրաքանչիւր ամառ եղող, պատահող. **-мственный** անգործած. տ. Повсемѣстный; **-мѣстно** մ. ամէն տեղ, ամէնուրեք. **-мѣстность** էգ. ամէնուրեքութիւն. **-мѣстный** ած. ամէն տեղ եղող, պատահող, ընդհանուր. п. гóлодъ; **-мѣсячный** ած. ամէն ամիս եղող, պատահող. **-нарóдный** ած. համայն ժողովրդի. **-рáдостный** ած. ընդհանուր ուրախութիւն պատճառող. **-чáсный** ած. ամէն, խւրաքանչիւր ժամ պատահող։

По‖вставáть (-таю́ -ютъ) չ. կարգով, բազմութեամբ վեր կենալ, ոտքի ելնել. **-встáнецъ**, нца ար. ապստամբ. **-встáніе** չ. ապստամբութիւն. **-встáть** (-стáну -нутъ) չ. **1**, կլոռվ չափ վեր կենալ, ոտքի ելնել. **2**, տ. Повставáть.

Повстрѣчáть ն. յանկարծ պատահել, հանդիպել. **-ся** փոխ. յանկարծ, անակնկալ կերպով միմեանց պատահել, հանդիպել։

Повсю́ду մ. ամէն տեղ, ամէնուրեք. искáть когó п.

Повто‖рéніе չ. կրկնում, կրկնութիւն. **-ритель** ար. **-рительница** էգ. կրկնող այր, կին. **-рительный** ած. կրկնող, կրկնողական. կրկին, կրկնուած, կրկնուող. **-рить** (-рю́ -рятъ) տ. Повторять; **-рный** ած. կրկնուող. **-рять**, -рить ն. կրկնել. п. урóкъ; п. однó и то же; **-ся** անդ. իր խօսքը, ասածը կրկնել։ [թեամբ կպչել։

Повцѣпляться անդ. մեծ քանակու-

Повыбивáть, -выбить ն. մեծ քանակութեամբ հանել, դուրս գցել (զարկելով)։

По‖выбирáть, -выбрать ն. կամաց կամաց ընտրել, ջոկել, վերցնել. **-выбыть** (-бью -ютъ) տ. Повыбивáть.

Повы‖болтать ն. կամաց կամաց ասել, զրուցել, յայտնել. **-брать** (-беру -рутъ) տ. Повыбирáть; **-брить** (-брею -ютъ) ն. կարգով սափրել, ածելել. **-бѣгáть, -бѣжать** (-бѣгу -бѣжишь -гутъ) չ. դուրս փախչել. **-вáливать** ն. կամաց կամաց դուրս ածել, վայր թափել. **-варить** (-рю -рятъ) ն. փոքր ինչ եփել. **-вáть** չ. երբեմն ունալ։

Повывезти (-зу -зутъ; անց. -везъ -зла, о) ն. կամաց կամաց, մեծ քանակութեամբ դուրս կրել։ [տոյտ տալով հանել։

Повывёртывать ն. կամաց կամաց պը-

Повывести‖ (-веду -дутъ; անց. -велъ -ла, о) ն. **1**, կամաց կամաց դուրս տանել, դուրս հանել (շատերին). **2**, կամաց կամաց ջնջել, ոչնչացնել (օր. վնասակար միջատներին). **-сь** անդ. կամաց կամաց չքանալ, ոչնչանալ, սպառուել։

Повы‖вихáть, -вихнуть ն. միմեանց յետևից դուրս գցել, խեղել, խախտել։

Повы‖вѣдать ն. կամաց կամաց բոլորն էլ իմանալ, տեղեկանալ. **-гладить** (-жу -дятъ) ն. հարթել, ողորկել, արդուկել (բաւա-

կանաչափ). **-глянуть** չ. մի քիչ դուրս նայել, դուրս մտիկ անել. **-гнать** (-гоню -нять) ն. կարգով դուրս անել, արտաքսել, վռնդել. **-горбить** (-блю -бять) ն. փոքր ինչ կորացնել. **-грузить** (-жу -зять) ն. 1, բեռը մասամբ վայր ածել, թեթևացնել. 2, կարգով բոլոր նաւերն էլ պարպել, բեռից ազատել. **-губить** (-блю -бять) ն. կամաց կամաց ջնջել, ոչնչացնել, բնաջինջ անել. **-давить** (-влю -вять) ն. մի քիչ մզել, քամել, հանել։

По‖выдвигáть ն. միմեանց յետևից դուրս քաշել. **-вы́двинуться** անդր. փոքր ինչ առաջ գալ, առաջ նետուել։

Повы́дер‖гать ն. կամաց կամաց փետել. **-нуть** ն. փոքր ինչ դուրս քաշել։

Повы‖дирáть, -драть ն. կամաց կամաց պոկոտել, փետել, պճլել։

Повы́‖дохнуть չ. կարգով, բազմութեամբ սատակել. **-драть** (-деру -рутъ) տ. Повыдирáть.

Повы‖ду́мывать, -думать ն. շատ, ամէն տեսակ բաներ մտածել։

Повы́дуть (-дую -ютъ) ն. փչելով կամաց կամաց ցրել։

Повы́‖здоровѣть չ. կարգով, միմեանց յետևից առողջանալ, ապաքինուել. **-знобить** (-блю -бять) ն. բոլորովին սառցնել, ցրտահար անել. **-золотить** (-чу -тять) ն. կամաց կամաց ոսկէզօծել, ոսկէջրել։

Повызывáть ն. կարգով, միմեանց յետևից դուրս կանչել։

Повы‖кáлывать, -колоть ն. կարգով հանել։

Повы‖кáть, -кнуть չ. զւռկ. սովորել, ընտելանալ։

По‖вы́кидать, -выки́дывать ն. կարգով դուրս ածել, դուրս ձգել։

Повыклáдывать ն. կարգով դուրս հանել, դուրս ածել։

Повы́‖клевать (-клюю -ютъ) ն. կամաց կամաց բոլորն էլ կտցել, ուտել. **-ключить** (-чу -чатъ) ն. միմեանց յետևից, բազմութեամբ հանել, դուրս գցել, արձակել։

Повы́кнуть տ. Повыкáть.

По‖выковы́ривать, -вы́ковырять ն. կամաց կամաց քերելով, քչփորելով հանել։

Повы́‖колоть (-лю -лютъ) տ. Повыкáлывать; **-колупать** տ. Повы́ковырять; **-копать** ն. կամաց կամաց փորել, պեղել, փորելով, պեղելով հանել. **-косить** (-шу -сятъ) ն. կամաց կամաց հնձել, հարել։

Повыкрáивать, -кроить ն. բաւականաչափ շատ ձևել։

Повы́‖красить (-шу -сятъ) ն. 1, մի քիչ ներկել, գեղել, ծեփել. 2, կարգով բոլորը ներկել, գեղել, ծեփել. **-кроить** (-крою -ятъ) տ. Повыкрáивать; **-крошить** (-шу -шатъ) ն. կամաց կամաց բրդել. **-круглить** (-лю -лятъ) ն. փոքր ինչ աւելի կլորացնել. **-купить** (-плю -пятъ) ն. բաւական շատ գնել (ապրանք)։

По‖вылáвливать, -вы́ловить ն. կամաց կամաց որսալ, բռնել, բռնոտել (օր. ձկներ). **-вылетáть, -вы́летѣть** (-чу -тятъ) չ. միմեանց յետևից դուրս թռչել։

Повы́‖ловить (-влю -вятъ) տ. Повылáвливать; **-лѣзть** (-зу -зутъ) չ. կամաց կամաց դուրս սողալ, սողալով դուրս գալ. **-мереть** (-мру -утъ) չ. կամաց կամաց մեռնել. **-местить** (-щу -стятъ) ն. на комъ что, за что մէկից մի բանի համար վրէժ առնել, բարկութիւնը, ցասմունքը մէկի գլխին թափել. **-манить** (-ню -нятъ) ն. կամաց կամաց գրաւել, տանել, քաշել։

По‖вынáшивать ն. 1, միմեանց յետևից դուրս կրել, դուրս տանել. 2, բաւականին մաշել (շորերը). **-вы́нести** (-су -сутъ; անց. -несъ -сла, о) ն. բոլորն էլ միմեանց յետևից դուրս կրել, դուրս տանել. **-вынимáть** ն. կարգով, մէկը միւսի յետևից դուրս հանել։

Повы́‖писать, -пи́сывать ն. մեծ քանակութեամբ պատուիրել (ապրանքներ)։

Повы́‖пихать, -пихнуть ն. միմեանց յետևից դուրս շպրտել, դուրս ածել։

По‖выползáть, -вы́ползти (-зу -зутъ) չ. միմեանց յետևից դուրս գալ (սողալով)։

Повы́править (-влю -вятъ) ն. մի քիչ, բաւականաչափ ուղղել, գլատել։

По‖выпрягáть, -вы́прячь (-рягу -жешь -гутъ; -ги) ն. կարգով բոլոր[ձիեր]ին էլ լծից արձակել։

Повы́рубить (-блю -бятъ) ն. կարգով, մեծ քանակութեամբ կտրել, կոտորել։

Повы́сить (-шу -сятъ), **ся** տ. Повышáть, ся.

Повы́‖сказать (-жу -жутъ) ն. կամաց կամաց ասել, յայտնել (օր. իր բոլոր գաղտնիքները). **-скакать** չ. միմեանց յետևից արագ դուրս թռչել, դուրս գալ. **-слушать** ն. մասամբ լսել. **-смотрѣть** (-рю -рятъ) ն. լաւ, օրինաւոր կերպով նայել, դիտել, զննել. **-строить** (-рою -ятъ) ն. մեծ քանակութեամբ կառուցանել, շինել. **-сыпать** (ապռն. -плю -плютъ), **-сыпáть** (ներկ -пáю -ютъ) ն. կամաց կամաց դուրս ածել, դուրս թափել։

Повы‖тáлкивать, -толкать տ. Повы́пихать; **-тáптывать**, -топтать ն. կամաց կամաց տրորել, ոտնատակ անել (մարգագետինը). **-тáскивать, -тащить** (-щу -щатъ) ն. կամաց կամաց դուրս քաշել, հանել։

Повы́токъ, тка ա. 1, հնց. և զւռկ. մաս, բաժին. 2, զւռկ. գլխահարկ։

Повы́‖толкать տ. Повытáлкивать; **-топтать** (-пчу -чутъ) տ. Повытáптывать.

Повы́тчикъ տ. Столоначáльникъ.

Повы́‖тѣснить (-ню -нятъ), **-тѣснять** ն. կամաց կամաց դուրս քշել, վռնդել, արտաքսել. **-тянуть** ն. փոքր ինչ դուրս քաշել, հանել։

По‖вышáть, -вы́сить ն. բարձրացնել. п. стѣну на арши́нъ; п. цѣну; п. слѣдующимъ чи́номъ հետևեալ աստիճանը տալ. **-ся** անդր. բարձրանալ. температу́ра повы́силась; баромéтръ повышáется; áкціи повышáются; **-вышáтельный** ած. բարձրացնող, -ցուցիչ. п—ая биржевáя игрá; **-вы́ше** ած. և մ. բաղդտ. աւելի բարձր. онъ невысо́къ ро́стомъ, но братъ егó п.—բայց նորա եղբայրը քիչ աւելի բարձր է. взойди́те п. փոքր ինչ աւելի բարձրացէք. онъ рáненъ п. колѣна—ծնկից փոքր ինչ բարձր. **-вышéніе** չ. 1, բարձրացնելը. п. го́лоса; п.

цѣны́ на хлѣбъ; **2,** բարձրացում, առաջացում. աւելի բարձր պաշտօն. получи́ть п. նոր, աւելի բարձր պաշտօն ստանալ, պաշտօնի մէջ առաջանալ. чѣмъ быстрѣ́й п., тѣмъ ле́гче паде́ніе.

Повѣва́ть չ. մեղմօրէն փչել:

Повѣ‖да́ніе չ. պատմելը, հաղորդելը. **-датель** ա. **-дательница** է. պատմիչ, պատմող, հաղորդող այր, կին. **-дать** ն. պատմել. ճառել, յայտնել, հաղորդել. п. кому́ свою́ та́йну, своё го́ре. [Вѣнча́ть 4.

Повѣн‖ча́ніе չ. պսակում. **-ча́ть** տ.

Повѣ‖ре́ніе չ. **1,** հաւատալը, յանձնելը. **2,** տ. Повѣ́рка; **-ренный** էյ. ած. **1,** ստուգած. **2,** հաւատացած, յանձնած. повѣ́ренный, аго հաւատարմատար. прися́жный п. երդուեալ հաւատարմատար. ча́стный п.; п. по торго́вымъ дѣла́мъ առեւտրական գործերի հաւատարմատար. п. въ дѣла́хъ դիպլոմատիկական գործավար. **-рить** (-рю -рятъ) **1,** ն. տ. Повѣря́ть; **2,** չ. հաւատալ, հաւատ ընծայել. тру́дно п. э́тому слу́ху; ты не повѣ́ришь, какъ онъ...; **-рка** է. ստուգում, վերստուգում, -գութիւն. п. счёта, вѣ́са; ежего́дная п.; п. по́дписи че́резъ сличе́ніе; **-рочный** ած. ստուգողական, վերստուգիչ. п. экза́менъ; **-рщикъ** ա. ստուգող, վերստուգող. **-рье** չ. ժողովրդական հաւատալիք, աւանդութիւն. въ наро́дѣ есть п., бу́дто...; **-ря́ть**, -рить ն. **1,** кому́ что մի բան մէկին հաւատալ, վստահութեամբ յայտնել, տալ, յանձնել. п. дру́гу свою́ та́йну, свои́ чу́вства; **2,** ստուգել, վերստուգել. п. счёты; п. мѣ́ры и вѣсы́; п. чьи слова́; п. часы́; дѣле́ніе повѣря́ютъ умноже́ніемъ.

Повѣ‖са հ-ր. **1,** թեթեւամիտ, թեթեւսոլիկ, 'տուտուց' մարդ. **2,** սանձարձակ, խեռ, ստահակ, չարաբարոյ, վայրենի մարդ, թոկից փախած, 'չաթուքասան'. **-сить** (-шу -сятъ) ն. կախել, կախ անել. կախաղան հանել կամ բարձրացնել. п. шля́пу на гвоздь գլխարկը մեխից կախել. п. лю́стру, карти́ны; ходи́ть повѣ́ся го́лову կորագլուխ, գլուխը կախած ման գալ. п. престу́пника; п. кого́ за́ ноги մէկին ոտներից կախել. **-ся** անդր. կախուել. **-сничанье** տ. Повѣ́сничество; **-сничать** չ. փչութիւններ, անպիտանութիւններ, լկտի, յոռի, անզգամ բաներ անել. **-сничество** չ. խեռութիւն, փչութիւն, անպիտանութիւն, անզգամութիւն, լկտութիւն:

Повѣ‖ствова́ніе չ. պատմութիւն, աւանդութիւն. **-ствова́тель** ա. **-ствова́тельница** է. պատմիչ, պատմող, աւանդող այր, կին. **-ствова́тельный** ած. պատմական, պատմող, աւանդող. **-ствова́ть** (-ву́ю -ютъ) ն. պատմել, աւանդել, զրուցել. п. о собы́тіяхъ мину́вшихъ времёнъ; **-сти́ть** (-щу́ -стя́тъ) տ. Повѣща́ть; **-стка** է. ծանուցագիր. почто́вая п.; п. о я́вкѣ въ судъ; **-(по́-)стный** ած. պատմութեան, վիպակի. **-сту́шка** է. պստիկ պատմութիւն, վիպակ. **-(по́вѣ)сть** է. պատմութիւն, վիպակ:

По́‖вѣтеръ ա. աջողակ քամով, հողմով. плыть п.; **-вѣтреный** ած. տարափոխիկ, վարակիչ. п—ая зара́за; п—ая болѣ́знь; **-вѣтріе** չ. վարակիչ, ժանտախտային, ժանտ օդ, հողմ. տարափոխիկ հիւանդութիւն. занести́ куда́ п.; морово́е п. ժանտախտ:

Повѣтъ ա. գւռկ. շրջան, վիճակ, գաւառ:

Повѣ́тье չ. կառքատան, սայլատան (ծածկած տեղ սայլերի, կառքերի համար):

Повѣ‖ше́ніе չ. կախելը, կախաղան հանելը. приговори́ть кого́ къ сме́ртной ка́зни че́резъ п. մէկին կախաղանի դատապարտել. **-шенный** էյ. ած. կախուած, կախաղան հանուած. въ до́мѣ п—аго не говоря́тъ о верёвкѣ (առծ.):

Повѣ‖ща́тельный ած. ծանուցանող, տեղեկացնող. **-ща́ть**, -сти́ть ն. кого́ о чёмъ մէկին մի բան հաղորդել, տեղեկացնել, ծանուցանել. **-ще́ніе** չ. ծանուցում, տեղեկութիւն:

Повѣ́ять (-вѣ́ю -ютъ) **1,** չ. սկսել փչել. повѣ́ялъ свѣ́жій вѣтеро́къ; **2,** ն. փոքր ինչ քամել, էրնել: [չամել, խամրել, թօշնել:

Повя‖да́ть, -нуть չ. թառամել, թար-

Повя‖за́ть (-жу́ -вя́жутъ; -жи́), **ся** տ. Повя́зывать, ся; **-зка** է. **1,** փաթաթելը, կապելը. **2,** փաթաթան, կապ. головна́я п. գլխի փաթաթան. **2,** մի տեսակ խոյր, ապարօշ ռուս աղջիկների. **-зочный** ած. կապելու, փաթաթելու. **-зыва́ніе** չ. փաթաթելը, կապելը. **-зыва́ть**, -за́ть ն. **1,** կապել, փաթաթել, պատել. п. го́лову платко́мъ; п. плато́къ на ше́ю; п. га́лстукъ; **2,** կապել (խուրձ). **3,** երբեմն գործել (գուլպաներ). **-(по́вя)зь** տ. Повя́зка 2, 3.

Повя́‖лить (-лю -лятъ) ն. փոքր ինչ չորացնել, քամհարել (ձուկը). **-лый** ած. թառամած, թարշամած, թօշնած, խամրած:

Повя́нуть տ. Повяда́ть.

Повя́сло տ. Вя́сло.

Пога‖да́ть, -дывать չ. **1,** երբեմն գուշակել, հմայութիւն, 'ջադուբազութիւն' անել. **2,** մի քիչ մտածել, խորհել:

Пога́е‖рить (-рю -рятъ), **-рствовать** (-вую -ютъ) չ. միմոսութիւններ, ծաղրածութիւններ անել:

Пога́нецъ, нца ա. **1,** կեղտոտ, աղտոտ, 'մուրտառ' մարդ. **2,** պիղծ, այլակրօն, հեթանոս, կռապաշտ: [(օր. ձկներին):

Пога́нивать ն. յաճախ կմ երբեմն քշել

Пога́‖нить (-ню -нятъ) ն. պղծել, 'հարամել'. **-ся** անդր. պղծուիլ. съ жидо́мъ и палачо́мъ не пога́нься; **-нка** է. **1,** կեղտոտ, աղտոտ, 'մուրտառ' կնարմատ. **2,** պիղծ, այլակրօն, հեթանոս, կռապաշտ կին. **3,** վատ, թունաւոր սունկ. **4,** կնդ. Colymbus, ծովասուզակ. **-нство** չ. **1,** աղտեղութիւն, կեղտոտութիւն, 'մուրտառութիւն'. **2,** պղծութիւն, հեթանոսութիւն, կռապաշտութիւն, այլակրօնութիւն. **-ный** ած. **1,** աղտոտ, կեղտոտ, գագիր, 'մուրտառ', գարշելի. **2,** պիղծ, այլակրօն, հեթանոս, կռապաշտ. **-нышъ** ա. տ. Пога́нка 3; **-(по́га)нь** է. կեղտոտութիւն, աղտոտութիւն, տաղտկանութիւն, պիղծ, գարշելի բան:

Пога‖са́ть, -снуть չ. հանգչիլ, մարիլ. (գր.) շիջանիլ. ого́нь пога́съ; страсть его́ *пога́сла; жизнь его́ *пога́сла նորա կեանքը խաւարեց. день нача́лъ п—са́ть օրն սկըսեց տարաժամել. **-си́ть** (-шу́ -га́сятъ) տ.

Погашáть; **-слый** բյ. ած. հանգած, մարած. **-снуть** (անց. погáсъ -сла, о) ա. Погасáть; **-шáть**, -сить ն. **1**, հանգցնել, մարել, (գր.) շիջուցանել. п. свѣчку, лáмпу, огóнь, пожáръ; *п. стрáсти կրքերը մեղմել, ոչընչացնել. **2**, մարել, վճարել, հատուցանել, ոչընչացնել. п. долгъ; **-шéніе** չ. **1**, հանգցնելը, մարելը. **2**, մարելը, վճարելը, ոչնչացնելը. комиссія п—ія долгóвъ. [տուկ ձևով:

По-гвардéйски մ. գվարդիականին յա-

Поги||бáть, -бнуть չ. կործանուել, փըչանալ, ոչնչանալ, մեռնել, կորչել. п. нá морѣ; корáбль погúбъ во врéмя бýри; п. отъ огня́; цвѣты́ погúбли отъ хóлода; всё погúбло! éсли э́то случи́тся, то я погúбъ; **-бель** է. կործանում, փչացում, կորուստ, մահ. Елéна былá причи́ною п—и Трóи; быть на краю́ п—и կործանման մօտ լինել. оснóвывать своё счáстіе на п—и врагá; согнýть когó въ три п—и մէկին կործանել, ոչնչացնել. **-бельный** ած. **1**, կործանիչ, ապականիչ, վնասակար, աղէտաբեր. **2**, փչացած. **-блый** ած. փչացած, ոչնչացած, կործանուած. **-бнуть** (անց. -бъ -бла, о) ա. Погибáть; **-бшій** բյ. ած. փչացած, կործանուած, կորած, ոչնչացած. **-(пó—)бъ** է. ծռում, ծալում, կորութիւն, կորացած, ծռուած տեղ:

Поглáдить (-жу -дятъ; -дь) ա. Поглáживать. [կամաց կրծել, ուտել:

По||глáдывать, -глодáть ն. կամաց

Поглá||живаніе չ. շոյելը (երբեմն). **-живать**, -дить ն. Թեթև կերպով, երբեմն շոյել. п. ребёнка по головѣ; **2**, փոքր ինչ հարթել, արդուկել:

Поглазѣть չ. на что մի բանի վերայ բերանը բաց մի քանի ժամանակ նայել, մտիկ անել:

По||глодáть ա. Поглáдывать; **-глотúть** (-щý -тятъ) ա. Поглощáть.

Поглóхнуть (անց. -глóхъ -хла, о) չ. խեղդուել (բոյսերի մասին):

Погло||щáтельный ած. կլանող, -նելու, ծծող, ծծելու. п—ая спосóбность; **-щáть**, -ти́ть ն. կլանել, կլլել, կուլ տալ, լափել, ծըծել. э́та рабóта поглощáетъ мнóго врéмени այդ աշխատանքը շատ ժամանակ է խլում. врéмя всё поглощáетъ; земля́ поглощáетъ влáгу; *п. книги գրքերը կլանել, ագահաբար կարդալ. **-щéніе** չ. կլանելը, կլլելը, ծծելը. **-щý** ա. Поглоти́ть.

Поглуми́ться (-млю́сь -мя́тся) չ. надъ кѣмъ մէկի վերայ ծիծաղել, մէկին ծաղրել, նշաւակել, 'մասխարայ դցել':

Поглу||пи́ть (-плю́ -пя́тъ) չ. յիմարութիւն անել, յիմար, անմիտ բաներ բռնել. **-пѣть** ա. Глупѣть.

Погля́||дываніе չ. երբեմն նայելը, մըտիկ անելը. հսկելը. п. въ окнó; **-дывать** չ. **1**, երբեմն նայել, մտիկ անել. п. въ окнó; онъ на неё погля́дываетъ; **2**, за кѣмъ մէկին նայել, մէկի վերայ հսկել. п. за дѣтьми́; **-дѣть** (-жý -дя́тъ) չ. **1**, նայել, տեսնել. **2**, за кѣмъ մէկի վերայ հսկել, մէկի վերայ աչք պահել:

Погнáть (-гоню́ -гóнятъ) ն. սկսել քշել. онъ погнáлъ лóшадь во весь духъ; **-ся** անդր. за кѣмъ մէկի յետևից ընկնել, մէկի յետևից պնդել. п. за чѣмъ մի բանի յետևից ընկնել. за двумя́ зáйцами погóнишься, ни одногó не поймáешь (առծ.) մի ձեռքով երկու ձմերուկ չէ կարելի բռնել:

По||гнивáть, **-гни́ть** (-гнію́ -ю́тъ) չ. փտիլ, նեխիլ, քայքայուիլ, փչանալ, ապականուիլ. **-гнои́ть** (-ою́ -я́тъ) ն. **1**, մի քանի ժամանակ փտեցնել, Թարախակալեցնել. **2**, բոլորովին փտեցնել, հոտեցնել:

Погнуси́ть (-шý -ся́тъ) չ. փոքր ինչ ռնգախօսել, քթի մէջ խօսել, 'դնգդնգալ':

Погнýть ն. փոքր ինչ կռացնել, կորացնել, ծռել. слúшкомъ большáя тя́жесть погнýла полъ; **-ся** անդր. փոքր ինչ կռանալ, կորանալ, ծռուել:

Погнушáться անդր. чѣмъ մի բանից զզուիլ, զարշիլ, պժգալ:

Погнѣваться ն. բարկանալ, նեղանալ:

Погнѣздно (արտս. -гнёзд-) մ. ջուխտ ջուխտ, զոյգ զոյգ, երկու երկու:

Пого||вáривать չ. երբեմն խօսել, ասել. поговáриваютъ, что войнá бýдетъ; **-вори́ть** (-рю́ -ря́тъ) չ. [մի բան, մի քիչ] խօսել. я хочý п. съ нимъ о вáжномъ дѣлѣ; мы объ э́томъ поговори́мъ; **-вóрка** է. **1**, առած. любимая п. նշանաբան. **2**, զրուցուածք. **3**, լուր, համբաւ:

Поговѣть չ. մի քիչ, մի քանի ժամանակ ապաշխարել (պաս պահելով և եկեղեցի յաճախելով):

Погó||да է. **1**, եղանակ. въ дурнýю п—у վատ եղանակին, վատ եղանակով. **2**, փոթորիկ, մրրիկ, բուք. поднялáсь сúльная п.; **-ди́ть** (-жý -дя́тъ) չ. սպասել, ճամբայ պահել. **-ди́шка** է. նվաս. վատ, ձախորդ եղանակ. **-дка** է. նւզ. եղանակ. **-дки**, овъ հոգ. յ. միմեանցից մի մի տարով մեծ երեխաներ. **-дно** մ. իւրաքանչիւր տարի, տարին մի անգամ. **-дный** ած. իւրաքանչիւր տարի, տարին մի անգամ եղող, պատահող. **-довѣстникъ** ա. կնդ. Procellaria pelagica, մրրկահաւ. **-домѣръ** ա. Баромéтръ; **-душка** նւզ. ա. Погóдка; **-жій** ած. **1**, պարզ. պայծառ (եղանակ). **2**, գուրեկան, գուրալի, սիրուն, վայելչագէմ. **-жý** ա. Погоди́ть.

Поголи́ть (-лю́ -ля́тъ) ն. մերկացնել, բացել, կեղևել, 'կլպել' (ծառ). սափրել, ածելել. **-ся** անդր. սափրուիլ, ածելուիլ:

Поголó||вно մ. մարդագլուխ, բոլորին, ընդհանրապէս. **-вный** ած. մարդագլուխ, ընդհանուր. п—ая пéрепись ընդհանուր աշխարհագիր, ժողովրդահամար. п—ая пóдать գլխահարկ. **-вщина** է. ընդհանուր պատասխանատուութիւն, սղառադինութիւն, հարկ, գործ, դէպք, հանգամանք են: [ցել, քաղց, սով. կրել:

Поголодáть չ. մի քանի ժամանակ քաղ-

Поголоси́ть (-шý -ся́тъ) չ. մի քանի ժամանակ լալ, ողբալ:

Поголýбить (-блю -бятъ) ն. մի քիչ շոյել, փայփայել, փաղաքշել: [տանալ:

Поголубѣть չ. բաց կապոյտ գոյն ըս-

Погó||нка է. խիստ յանդիմանութիւն. **-нный** ած. **1**, հետապնդող. п. отря́дъ; **2**, երկարութեան. п—ая мѣра; **3**, պօգոնի. п.

ремéнь հրացանի փոկ (ուսը գցելու). **-нщикъ** ա. 1, հետամուտ եղող, հալածիչ. 2, վարիչ, քշող. կառապան. **-нщичій**, ья, ье ած. հալածչի, քշողի, կառապանի[ն յատուկ]. **-нъ** ա. 1, տ. Погóня; 2, 'մի շնչում', առանց կանգ առնելու անցած տարածութիւն, ճանապարհ. 3, ջրալի մնացորդ աղաղի (որ վատ համ ունի և նորից պէտք քաշուի). 4, փոկ, 'պայիչ' (ուսից կրելու հրացանի). 5, (լեհ.) պօղոն (զարդ նշանազգեստի ուսին). **-ню** տ. Погнáть; **-ня** է. 1, յետևից ընկնելը, յետևից պնդելը, հալածելը. հետապնդում, հետամտութիւն. брóситься, пустúться въ п—ю за кѣмъ մէկի յետևից ընկնել, մէկի յետևից պնդել. 2, հ-ք. մէկին հետապնդող, մէկի յետևից ընկած մարդիկ, խումբ, հալածիչներ. **-нáй** ա. թառափ որսալու ցանց. **-нáлка** է. մտրակ, խարազան, փայտ. **-нять** ն. քշել (մի քիչ, մի քանի ժամանակ). քշել, խթան տալ. ямщúкъ! погоняй! զէհ, քշի՛ր, կառապան. 2, когó մէկին շտապեցնել, նախատել. **-ся** անդր. за кѣмъ մէկի յետևից ընկնել, մէկին հետապնդել. за чѣмъ մի բանի յետևից ընկնել, մի բանի հետամուտ լինել. довóльно погоня́лся я за пóчестями.

По||горáть, -рѣть չ. 1, այրուիլ, հրդեհուիլ. 2, [արևից] այրուիլ, խորովուիլ, խանձուիլ:

По||гóрбить (-блю -бятъ) ն. կռացնել, կորացնել, ծռել. **-ся** անդր. խիր մէջքը ծռել (շատ աշխատելուց). **-гордúться** (-жýсь -дя́тся) չ. чѣмъ մի բանով պարծենալ, հպարտանալ. **-горевáть** (-рю́ю -ютъ) չ. մի քանի ժամանակ սուգ անել, տխրել, սգալ:

Погóріе տ. Погóрье.

Погорлáнить (-ню -нятъ) չ. մի քանի ժամանակ աղաղակել, 'բղաւել' (խիստ բարձր), գոռալ:

Погóрный ած. լերան վերայ գտնուող:

По-городскú մ. ինչպէս քաղաքում, քաղաքացու պէս: [գտնուող գիւղ, շէն:

Погóрье չ. լեռնակողմ, լերան վերայ

Погóрькнуть չ. դառնանալ:

Пого||рѣлецъ, льца ա. հրդեհեալ. оказáть пóмощь погорѣльцамъ; **-рѣлый** ած. 1, այրուած, հրդեհուած. п—ое мѣсто հրդեհավայր, հրդեհի տեղ. 2, արևառ, արևից այրուած, խորովուած, խանձուած. **-рѣть** չ. 1, տ. Погорáть; 2, մի քանի ժամանակ այրուիլ:

Погорячúть (-чý -чáтъ) ն. փոքր ինչ, բաւականին տաքացնել. **-ся** անդր. փոքր ինչ տաքանալ:

По-господски մ. ինչպէս աղայ, աղայաբար, ինչպէս իշխան, իշխանաբար, -նօրէն:

Погостúть (-щý -тя́тъ) չ. մի քանի ժամանակ հիւր լինել, հիւր մնալ:

Погó||стный ած. погóстъ-ի. **-стъ** ա. 1, եկեղեցի բնակարաններով, գերեզմաններով և հողերով. 2, եկեղեցական ծուխ, համայնք. 3, գւռկ. գերեզմանոց, հանգստարան:

Погрáбить (-блю -бятъ) ն. կողոպտել, թալանել, պլոկել: [ինչ փորագրել:

Погравировáть (-рýю -ютъ) ն. փոքր

Погрáдусный ած. աստիճաններին բաժանած, ըստ աստիճանների չափած, հաշուած:

Погрáжи||ваніе չ. երբեմն սպառնալը. **-вать**, չ. երբեմն սպառնալ:

Погранú||чіе չ. սահմանակից երկիր, կողմ. **-чный** ած. սահմանի, սահմանում, սահմանի վերայ գտնուող. п. кáмень; п—ая крѣпость; п—ая стрáжа սահմանապահ զօրք:

Погре||бáльный ած. թաղելու, թաղման. -п—ое шéствіе; **-бáльщикъ** ա. 1, մեռեալ թաղող. 2, կնդ. Necrophorus, մեռելաթաղ (ճճի մի). **-бáніе** չ. թաղելը, թաղում. **-бáтель** տ. Погребáльщикъ 1; **-бáть**, -бстú ն. թաղել. здѣсь погребёнъ такóй-то այս է տապան այս ինչ մարդու. **-бéніе** չ. թաղում. мѣсто п—ія գերեզմանատեղ. торжéственное п.; **-бéцъ**, бцá ա. ճանապարհորդական պահարան (արկղ սրուակների, բաժակների, ըմպանակների, ափսէների եւն համար առանձին առանձին բաժանմունքներով). **-бéчный** ած. այս պահարանի, արկղի. **-бной**, **-бóвый** ած. ներքնատան, նկուղի. **-бóкъ**, бкá, **-бóчекъ**, чка նւզ. տ. Пóгребъ; **-бстú** (-бý -бýтъ; -бú) տ. Погребáть; **-бщúкъ**, á ա. **-бщúца** է. նկուղապետ, -ուհի, գինեվաճառ, -ուհի. **-(пó-)бъ** ա. 1, ներքնայարկ (տան). 2, նկուղ, գինեվաճառանոց. 3, այլևայլ բաներ պահելու ներքնատուն. пороховóй п.

Погрéзить (-жу -зятъ) չ. փոքր ինչ զառանցել. **-ся** անդր. դէմք. երևալ (երազում):

Погре||мóкъ, мкá ա. բս. Rhinanthus crista galli, մանր աքլորբրուկ (աքաղաղի կատար). **-мѣть** (-млю́ -мя́тъ) չ. փոքր ինչ գոռալ, գոռգոռալ, որոտալ:

Погре||стú, **-сть** (-бý -бýтъ; անց. -рёбъ -блá, ó; -бú) ն. 1, մի քանի ժամանակ թիավարել. 2, փոցխով հաւաքել, փոցխել, արմղել: [սպառնալ:

Погрозúть (-жý -зя́тъ) չ. комý մէկին

Погро||мúть (-млю́ -мя́тъ), **-мля́ть** ն. աւերել, ամայի դարձնել (պատերազմ միջոցով), ջարդել, խորտակել (թշնամուն). **-мъ** ա. աւերում, կործանում, պարտութիւն (թշնամու արշաւանքից). **-мыхивать** չ. թխկթխկալ, դռռալ, գոռալ, շաչել: [ռալ, դղրդալ:

Погрохотáть (-чý -хóчутъ) չ. դռ-

Погру||бúть (-блю́ -бя́тъ), **-біянить** (-пю -нятъ) չ. комý մէկի հետ կոպտաբար վարուել. **-бѣлый** բյ. ած. կոպտացած, կոշտացած. **-бѣть** տ. Грубѣть. [կոյտ:

Погрýдно մ. կրծքերով, շեղջերով, կոյտ

Погру||жáльный ած. սուզելի, ընկղմելի. п. крестъ Յորդանէքի խաչ. **-жáть**, -зúть ն. 1, ընկղմել, սուզել. п. младéнца въ купéль; смерть сы́на *погрузúла егó въ глубóкую скорбь; 2, բարձել. п. товáры на корáбль; **-ся** անդր. ընկղմուիլ. п. въ вóду; *п. въ размышлéнія, въ дýму մտածմունքների մէջ ընկնել. п. въ уны́ніе վհատուիլ, լքանիլ. **-жéніе** չ. 1, ընկղմելը, -մում. 2, բարձելը. **-жý** տ. Погрузúть; **-зáть**, -знуть չ. ընկղմուիլ, խորասուզուիլ. **-зúтель** ա. 1, ընկղմող. 2, բարձող. **-зúть** (-жý -зя́тъ), ся տ. Погружáть, ся; **-зка** է. տ. Погружéніе; **-злый** բյ. ած. ընկղմուած. **-знуть** տ. Погрузáть; **-зчикъ** ա. բեռ բարձող, բեռ բեռնող:

По||грунтовáть տ. Грунтовáть; **-грустúть** (-щý -стя́тъ) չ. մի քանի ժամանակ

տխրել, տրտմել, վշտանալ. **-грызть** (-зу́ -зу́тъ; անց. -грызъ -зла, о; -зи́) ն. փոքր ինչ կրծել, կրծոտել։

По||грѣва́ніе չ. փոքր ինչ տաքացնելը. **-грѣва́ть, -грѣ́ть** ն. փոքր ինչ տաքացնել. *п. ру́ки, карма́нъ շահուել. **-ся** անդր. փոքր ինչ տաքանալ։

Погрѣ||ша́ть, -ши́ть չ. 1, մեղանչել, մեղք, յանցանք գործել. 2,* սխալուել, վրիպել. **-ше́ніе** չ. 1, մեղանչում, մեղք, յանցանք. 2, սխալ, սխալանք, վրիպում. **-ши́тельно** մ. սխալմամբ. **-ши́тельность** է. 1, մեղանչականութիւն. 2, սխալականութիւն, սխալանք, մոլորութիւն. **-шительный** ած. 1, մեղանչական. 2, սխալ, սխալական, մոլար, սուտ. **-ши́ть** (-шу́ -ша́тъ) տ. Погрѣша́ть; **-шность** է. սխալ, վրիպակ. թերութիւն, պակասութիւն. въ э́той карти́нѣ мно́го п—ей; спи́сокъ п—ямъ տպագրական սխալների ցանկ։

Погря́дно մ. ածու-ածու, ածուներով։

Погря||за́ть, -знуть չ. խրուել, թաղուել, ընկղմուել. *п. въ поро́кахъ, въ невѣ́жествѣ, въ чу́вственности ախտերի, տգիտութեան, զգայականութեան մէջ թաղուել, ընկղմուել. **-злый** բայ. ած. ընկղմուած, թաղուած. **-знуть** (անց. -зъ -зла, о) տ. Погряза́ть; **-знѣ́ть** տ. Грязнѣ́ть.

Погу||би́тель ա. **-би́тельница** է. մէկին փչացնող, կործանող, մէկի կեանքը խաւարեցնող այր, կին. **-би́тельный** ած. կորստաբեր, կործանիչ, փչացնող. **-би́ть** (-блю́ -гу́бятъ) տ. Погубля́ть; **-бле́ніе** չ. փչացնելը, կործանելը. **-бля́ть**, -би́ть ն. փչացնել, կործանել, ոչնչացնել, կորուստ, մահ պատճառել. э́та страсть погуби́ла его́; его́ погуби́ла ро́скошь жены́ նորա տունը քանդողը կնոջ փարթամասիրութիւնն էր. п. свою́ бу́дущность; онъ погуби́лъ честь э́той же́нщины նա այդ կնոջ 'գլուխը կերել':

Погу||ди́ть (-жу́ -дя́тъ) չ. մի քիչ ածել, 'ճռզճռզացնել'. **-дка** է. 1, ածելը, 'ճռզճռզացնելը'. 2, եղանակ. ста́рая п. на но́вый ладъ հին գառման, նոր ձևով արտայայտած հին բան. **-дѣ́ть** (-жу́ -дя́тъ) չ. մի քիչ զօղանջել. մի քիչ բզզալ։

Погу́кать չ. ձայն տալ, աղաղակել (անտառում):

По||гу́ливать չ. 1, երբեմն զբօսնել. 2, երբեմն խմել, հարբել, 'դդել'. **-гулю́кать** չ. մի քիչ աշխատալուկ, աշխարհիկ խաղալ. **-гуля́ть** չ. մի քիչ զբօսնել, ման գալ. п. гдѣ на пра́здникахъ, на ма́сляницѣ.

По-гуса́рски մ. որպէս հուսար, հուսարաբար:

Погу||сти́ть (-щу́ -стя́тъ) ն. մի քիչ խտացնել, թանձրացնել. **-стѣ́ть** չ. խտանալ, թանձրանալ. сиро́пъ погустѣ́лъ.

Погу́то́рить (-рю -ря́тъ) չ. մի քիչ խօսել, զրոյց անել։

Пода||ва́ніе չ. մատուցանելը. п. голосо́въ քուէարկութիւն. **-ва́тель** ա. 1, մատուց(ան)ող. 2, յանձնող. **-ва́ть** (-ю́ -ю́тъ; -ва́й), -ть ն. 1, տալ. п. кому́ ру́ку մէկին ձեռք տալ. п. го́лосъ ա, ձայն հանել. բ, ձայն տալ, քուէ տալ. п. ми́лостыню бѣ́днымъ; Богъ пода́стъ Աստուած տայ (ասում են աղքատին). п. по́мощь օգնութիւն հասցնել. п. по́водъ къ чему́ մի բանի առիթ տալ. п. проше́ніе խնդիր տալ. въ сена́тъ по́дано проше́ніе; п. надѣ́жду յոյս տալ. п. примѣ́ръ օրինակ տալ. п. жа́лобу գանգատ տալ. п. искъ на кого́ մէկի դէմ դատական պահանջ ներկայացնել. на рѣше́ніе суде́бной пала́ты онъ по́далъ апелля́цію въ сена́тъ; 2, մատուց(ան)ել, հրամցնել, 'թասպա անել', բերել. п. ку́шаніе на столъ կերակուրը, ճաշը մատուցանել. п. жарко́е; чай по́данъ; подака́й каре́ту ծածկակառքը, կառքը բեր. **-ся** անդր. 1, առաջ գնալ կամ յետ կենալ. пода́йся впере́дъ առաջ գնա. пода́йся наза́дъ յետ կաց. войска́ подали́сь наза́дъ զօրքերը յետ նահանջեցին, յետ կացան. лобъ пода́вшійся наза́дъ յետ պրծած ճակատ. 2, զիջանել, զիջել. онъ до́лго упо́рствовалъ въ отка́зѣ, но наконе́цъ пода́лся.

Пода||ви́ть (-влю́ -да́вятъ) ն. 1, մի քիչ սղմել, սխմել, ճնշել, հանել, ճզմել. 2, —, **ся** տ. Подавля́ть, ся; **-вле́ніе** չ. 1, ոտնատակ անելը, ջախջախելը, խորտակելը, ճնշելը, խեղդելը. п. возста́нія; 2,* ճնշելը, խեղդելը, ոչնչացնելը. **-вленность** է. վհատութիւն, լքում, սրտաբեկութիւն. **-влива́ніе** չ. երբեմն, թեթև կերպով ճնշելը, սխմելը. **-влива́ть** ն. երբեմն, թեթև կերպով ճնշել, սեղմել, սխմել. **-вля́ть**, -ви́ть ն. 1, տրորել, ոտնատակ տալ. ճնշել, խեղդել, ջախջախել, խորտակել, ոչնչացնել. во вре́мя пожа́ра подави́ли мно́го наро́ду; п. возмуще́ніе; я чу́вствую, что мнѣ что-то подавля́етъ; 2,* ճնշել, խեղդել, ոչնչացնել. п. вся́кое человѣ́ческое чу́вство; п. свои́ стра́сти, свою́ печа́ль; п. зло въ заро́дышѣ; **-ся** անդր. մի [բաղադրում մնացած] բանով խեղդուել. п. ко́стью; **-вля́ющій** ած. ջախջախիչ, խեղդիչ. п—ее большинство́ голосо́въ ձայների բացարձակ առաւելութիւն, մեծամասնութիւն. п—ее чи́сленное превосхо́дство.

Пода́вно մ. առաւել ևս, ևս առաւել։

Пода́||гра է. (յն.) բժ. պոդագրա, ոտնացաւութիւն, ոտնացաւ, -ութիւն. **-грикъ** ա. ոտնացաւով բռնուած, ոտնացաւող. **-гри́ческій** ած. ոտնացաւի, ոտնացաւութեան:

Пода́ивать ն. երբեմն կթել։

Пода́||кать, -кивать չ. երբեմն, յաճախ համաձայնուիլ, «հա», «այո» (да) ասել։

По||да́лбливать, -долби́ть ն. մի քիչ, մի քանի ժամանակ կոփել։

По||да́мъ տ. Пода́ть; **-данный** բայ. ած. մատուցած. всѣ ку́шанья бы́ли по́даны.

Пода||ри́ть տ. Дари́ть; **-ре́ніе** չ. ընծայելը, բաշխելը. **-ро́къ**, рка ա. **-ро́чекъ**, чка նւզ. ընծայ, պարգև, նուէր, 'փէշքաշ'. сва́дебный п.; получи́ть что въ п. մի բան ընծայ ստանալ. дать кому́ что въ п. մէկին մի բան ընծայել. и ма́лый п. не накла́дъ (առ.) առել թիքէն փոր չի ծակի. п. ко дню рожде́нія, на имени́ны կամ къ имени́намъ; **-ро́чный** ած. ընծայի, պարգևի, ընծայելու, բաշխելու. ընծայած, բաշխած:

По||да́тель ա. **-да́тельница** է. 1, բերող, տուող, մատուց(ան)ող, յանձնող, ընձեռող այր, կին. отвѣча́йте съ п—емъ э́того письма́ նամակաբերի ձեռքով պատասխանեցէք. п. проше́нія խնդրատու. 2, բաշխող,

շնորհող այր, կին. пода́тель всѧ́кихъ благъ ամէն տեսակ բարիքներ բաշխող (Աստուած). **-да́тливость** է. **1**, զիջ(ան)ողութիւն. **2**, տատասձեռնութիւն. **-да́тливый** ած. **1**, զիջանող, զիջող, փափուկ, փափկասիրտ. **2**, տատասձեռն. **-датно́й** ած. հարկի, հարկային. п—ое сосло́віе հարկատու դասակարգ. находи́ться въ п—о́мъ состоя́ніи հարկատու լինել. п. инспе́кторъ հարկերի, հարկային տեսուչ. **-да́ть** (-да́мъ -да́шь -да́стъ; -дади́мъ -ди́те -ду́тъ; հրմ. -да́й), **ся** տ. Подава́ть, ся; **-(по́)да́ть** է. հարկ, ‘խար(ա)ջ‘. поду́шная п. գլխահարկ. поземе́льная п. հողային հարկ. сбо́рщикъ п—е́й հարկահան. плоти́ть п.; наложи́ть п. հարկ դնել. раскла́дка п—и հարկադրութիւն. разложе́ніе п—е́й по двора́мъ հարկերի բաժանումն ծխերի վերայ. освобожде́ніе отъ п—е́й; **-да́ча** է. **1**, տալը, մատուցանելը. п. го́лоса ձայն, քուէ տալը. пра́во пода́чи го́лоса քուէարկութեան իրաւունք. п. проше́нія, жа́лобы խնդիր, դանգատ տալը. **2**, ընծայ, պարգև, տուրք. **3**, կերակուր, ‘բաժին‘. **-да́чка** է. նւզ. տուրք, ողորմութիւն, շնորհք. **-дая́ніе** ւ. ողորմութիւն, յօժարակամ տուրք. жить, пита́ться п—іемъ; собира́ть п—ія.

Подба́‖вить (-влю -вятъ; -вь) տ. Подбавля́ть; **-вка** է. **1**, աւելացնելը. **2**, յաւելում, աւելացրած բան. **-вля́ть**, -вить ն. մի քիչ աւելացնել:

Подба‖го́рщикъ ա. բագրատորի (баго́рщикъ) օգնական. **-греникъ** ա. կարճ բագոր. **-гривать** ւ. օգնել բագրելու, թափ, ‘թարթ‘ որսալու: [խուսել, քաջալերել:

Под‖ба́дривать, -бодри́ть ն. խրա-

Подба́ло‖чникъ ա. գերանակալ, գերանի յենարան. **-чный** ած. գերանի տակ դրուող:

Подба́лты‖ваніе ւ. հարելով խառնելը, ղանդելը. **-вать**, подболта́ть ն. հարելով խառնել, ղանդել. п. муки́ въ со́усъ սոուսի հետ մի քիչ ալիւր խառնել:

Подбаси́ть (-шу́ -ся́тъ) ւ. բամբ ձայնով նուագակցել, ձայն պահել:

Подбе́дренный ած. սրունքի:

Подберё‖зникъ, -зовикъ ա. բս. Boletus scaber, սզօրենու թնջուկ կմ սունկ:

Под‖бива́ніе ւ. **1**, աստառելը, աստառ դցելը (շորին). **2**, տակից զարկելը, մեխելը, կպցնելը. **3**, գրգռելը, կրգելը. **-бива́ть**, -би́ть ն. **1**, աստառել, աստառ դցել (շորին). п. плащъ ба́рхатомъ; **2**, տակից, ստորին կողմից խփել, զարկել, կպցնել. п. сапоги́ гвоздя́ми; п. потоло́къ доска́ми; **3**, подо что մի բանի տակ, մէջ խրել, մտցնել. плотъ подби́ло подъ мостъ լաստը կամրջի տակ խրուեց. **4**, ծեծել, ջարդել, կոտրեցնել. п. кому́ глаза́; **5**,* кого́ на что մէկին գրգռել, գրգել, սադրել, ‘սրել‘ մի բան անելու. его́ подби́ли на э́то дурно́е дѣ́ло; **-би́вка** է. **1**, տ. Подбива́ніе; **2**, աստառ. **-бивно́й** ած. **1**, աստառի. **2**, տակից խփելու, զարկելու:

Подби‖ра́ніе ւ. **1**, հաւաքելը, ժողովելը. **2**, վեր քաշելը, քշտելը (շորը). **3**, որոնելը, փնտռելը, ջոկելը, ընտրելը. п. подъ па́ру հատը, նմանը գտնելը. **4**, խարերայութեամբ ղարսելը (թուղթը). **-ра́тель** ա. **-ра́тельница** է. հաւաքող, ժողովող այր, կին. **-ра́ть**, подобра́ть ն. **1**, հաւաքել, ժողովել. п. съ по́лу разсы́панныя де́ньги; п. виногра́дъ այգում ճառքաղ լինել. соба́ки подобра́ли па́даль շները լէշը լափեցին. **2**, վեր քաշել, քշտել, հաւաքել. п. пла́тье; п. паруса́ առագաստները քաշել. п. ло́шадь ձիու սանձը քաշել. **3**, ընտրել, ջոկել (մի բանի հատը, յարմար եկող իրը). п. ло́шадь подъ стать къ друго́й ձիուն յարմար հատ, ‘թայ‘ գտնել. п. подкла́дку подъ цвѣтъ мате́ріи երեսին համապատասխան աստառ ընտրել. п. ключъ յարմար բանալի գտնել. п. слова́ յարմար խօսքեր գտնել. **4**, թղթխ. խարերայութեամբ ղարսել (խառնելիս). п. ка́рты, что́бы обыгра́ть кого́ навѣ́рняка́; **-ся** անդր. **1**, къ кому́, подъ кого́ աշխատել մէկի մօտ մուտք գործել. онъ подбира́ется къ бога́тому сосѣ́ду; волкъ подбира́ется къ ста́ду գայլը զաղտագողի մօտենում է հօտին. **2**, սպառուել, հատնել, վերջանալ. запа́сы подбира́ются; **-ро́ха** հօր. ամէն բան գրփող, յափշտակող այր, կին:

Подби́ть (подобью́ -ю́тъ; подбе́й) տ. Подбива́ть.

Подблю́‖дникъ ա. սկուտղակալ, սկաւառակակալ. **-дный** ած. սկուտղի, սկաւառակի տակ դրուող. п. кружо́къ տ. Подблю́дникъ; п—ыя пѣ́сни Ծննդեան տօներին երգուող] գուշակութեան երգեր:

Подбод‖ри́ть (-рю́ -ря́тъ), **-ря́ть** տ. Подба́дривать.

Подбо́й‖ ա. **1**, տ. Подбива́ніе; **2**, աստառ. **3**, կօշկի կրունկ. **-ка** է. **1**, տ. Подбива́ніе; **2**, կօշկկ. պատիկ կնգան (կօշիկներ մեխելու, գամելու). **3**, մի բանի տակից խփած, կպցրած տախտակ. **-ный** ած. **1**, խփելու, զարկելու. **2**, աստառի. **-щикъ** ա. կօշիկներ կարկատող կօշկակար:

Подбол‖та́ніе, -та́ть տ. Подба́лтываніе, -вать; **-тка** է. **1**, խառնելը (հարելով), ղանդելը. **2**, հարելով կերակրի հետ խառնած բան (սերուցք, ալիւր, խաղ և այլն):

Подбо́‖ра է. թոկ, պարան ուռկանի. **-ристый** ած. **1**, բարձր կրունկներով (կօշիկներ). **2**, լաւ նստող (զգեստ). **3**, սուր յատակով (նաւ) **-рка** է. տասնապղի կմ յատակի դերանների արանքներում կարճ տախտակներ դցելը. այսպէս դցած տախտակ. **-рный** ած. **1**, ընտրած, ջոկած, ընտրովի. **2**, խարերայութեամբ ղարսած. п—ыя ка́рты.

Подборо́‖дникъ ա. բղափոկ, պարանոցափոկ (սանձի). **-докъ**, дка ա. **-дочекъ**, чка նւզ. կզակ, ‘կլափ‘. **-дочный** ած. կզակի:

Подбо́‖рщикъ ա. **-рщица** է. ընտրող, ջոկող այր, կին. **-ръ** ա. **1**, տ. Подбира́ніе; на п. ընտրովի. въ э́той ла́вкѣ това́ры на п. այդ խանութում ապրանքը ընտրովի է. въ э́томъ полку́ всѣ лю́ди на п. այդ գնդի բոլոր զօրականները ընտրովի մարդիկ են. у него́ всѣ ло́шади на п.; игра́ть п—омъ զարած թղթերով խաղալ, խաբել. **2**, есте́ственный п. բնագ. բնական ընտրութիւն (Դարվինական տեսութիւն, ըստ որի գոյութեան կռիւը կենդանիների և բոյսերի մէջ եւ գոյութիւն ունի, որի մէջ միայն ընտիր տեսակներն են

յաղթող հանդիսանում). **3**, կօշկի կրունկ (կաշու կտորներից շինած): [чéниться.

Подбочé‖ниваться, -ниться *տ.* Бо-

Подбоя́‖риваться, -риться (-рюсь -рятся) *չ.* къ комý *մէկի մօտ մուտք գործել, մէկի շնորհքը շահել:*

Под‖брáсываніе *չ.* **1**, *մի բանի վրան, տակձգելը, նետելը.* **2**, *վեր ձգելը (գնդակը, 'բուրթին').* **3**, *ծածուկ գցելը, ձգելը.* **-брáсывать**, -брóсить *ն.* **1**, *մի բանի վրան, տակ ձգել, գցել, նետել.* **2**, *վեր ձգել, վեր շըպրտել.* п. мя́чикъ къ вéрху, къ потолкý; **3**, *ծածուկ գցել, ձգել, նետել.* п. къ комý письмó, ребёнка.

Под‖бриваніе *չ.* *մաստմը, մի քիչ սափրելը, ածելելը.* **-бривáть, -брить** (-брéю -ютъ; -брéй) *ն.* *մի քիչ, մաստմը սափրել, ածելել.* **-брóсить** (-шу -óсятъ) *տ.* Подбрáсывать. [տակ գտնուող:

Подбрýсный *ած.* *գերանի, գերաններին*

Подбры́знуть *ն.* **1**, *վեր ցայտեցնել.* **2**, *տակից սրսկել:*

Подбрю́‖шина *է.* *փորատակ, փորի, ոռվային տակը, տակի կողմը.* **-шникъ** *ա.* **1**, *փորկապ, 'թափխուր' (ձիու).* **2**, *վիւբժ. փորի կապիչ.* **-шный** *ած.* *փորատակի, որովայնատակի, փորատակից, որովայնատակից քաշած.* п. ремéнь *փորակապ, 'թափխուր' (ձիու):*

Подбуты́лочникъ *ա.* *շշակալ, շշի տակ դրած խեղէն:*

Под‖бывáть, -бы́ть *չ.* **1**, *վարարել, յորդանալ.* **2**, *հատաքուել, կիտուել (ամբոխի մասին):*

Подбѣ‖гáніе *չ.* *արագ մօտ վազելը.* **-гáть, -жáть** (-гý -жи́шь -гýтъ) *չ.* **1**, *արագ, շտապ մօտ վազել, վազելով մօտենալ.* **2**, *վազելով մի բանի տակ ընկնել:*

Подбѣ‖лéніе, -ливаніе *չ.* **1**, *թեթև կերպով սպիտակացնելը, սպիտակ գեղով ծեփելը.* **2**, *կերակրի հետ սերուցք խառնելը.* **-ливать, -ли́ть** (-лю́ -ля́тъ) *ն.* **1**, *թեթև կերպով սպիտակացնել, սպիտակ գեղով ծեփել.* **2**, сметáною *սերուցք խառնել (կերակրի հետ).* **-лка** *է.* **1**, *տ.* Подбѣлéніе; **2**, *հարած սերուցք, որ խառնում են կերակրի հետ.* **-лъ** *ա.* **1**, *տ.* Подбѣлéніе; **2**, *բս.* Petasites vulgaris, *մեծ հապլպեպ:*

Подвá‖лецъ, льца *նւզ.* *տ.* Подвáлъ; **-ливаніе** *չ.* **1**, *ձգելը, նետել, ածելը. աւելացնելը.* **2**, *գլորելով մի բանի տակ գցելը.* **-ливать, -ли́ть** (-лю́ -ля́тъ) *ն.* **1**, *ձգել, նետել, ածել, աւելացնել.* п. земли́ подъ забóръ; **2**, *գլորելով մի բանի տակ գցել.* **-лка** *է.* *տ.* Подвáливаніе; **-лъ** *ա.* **1**, *ներքնատուն, նըկուղ.* **2**, *ներքնայարկ, գետնայարկ.* **-льный** *ած.* *ներքնատան, ներքնայարկի.* п. этáжъ *ներքնայարկ.* подвáльный, аго *ա.* *նկուղի վերակացու, գինեվաճառ, գրեվաճառ:*

Подвá‖риваніе *չ.* **1**, *նորից եփելը.* **2**, *եփելիս աւելացնելը.* **3**, *զօդելը, կպցնելը (երկաթը).* **-ривать, -ри́ть** (-рю́ -рятъ) *ն.* **1**, *նորից եփել.* **2**, чегó *եփելիս մի բան աւելացնել.* **3**, *զօդել, եռացնելով կպցնել (երկաթը).* **-рка** *է.* *տ.* Подвáриваніе. [սով սրել:

Под‖вáстривать, -востри́ть *ն.* *շատ-*

Подвáщивать *ն.* *ժամանակ առ ժամանակ մամել, մոմով շփել:*

Под‖ведéніе *չ.* *մօտ բերելը, մօտեցնելը.* **-ведý** *տ.* Подвести́; **-везéніе** *չ.* *մօտ բերելը, մօտ կրելը (ոչ ոտով, այլ կառքով, դրաստով ելն).* **-везти́, -вéзть** (-зý -зýтъ) *տ.* Подвози́ть.

Подвер‖гáніе *չ.* *ենթարկելը.* **-гáть, -гнуть** (*անց.* -гъ -гла, о) *ն.* *ենթարկել.* п. когó пы́ткѣ, истязáнію; п. опáсности свою́ жизнь; п. когó отвѣ́тственности; п. штрáфу; **-ся** *անդր.* *ենթարկուել.* п. насмѣ́шкамъ, гнѣ́ву, опáсности, штрáфу; **-жéніе** *չ.* *ենթարկելը, -կում:*

Под‖вернýть, ся *տ.* Подвёртывать, ся; **-вёртка** *է.* **1**, *փաթաթում, փաթաթելը.* **2**, *փաթաթան.* «блѣ́дный солдáтъ, съ шéеей обвя́занной окровáвленною п—ой»; подвёртки *յ.* *ոտների փաթաթաններ (փախանակ գուլպաների).* **-вёртываніе** *չ.տ.* Подвёртка 1; **-вёртывать**, -вернýть *ն.* **1**, *մի բանի տակ դնել, գցել.* *онъ подвернýлъ емý крючóкъ *նա նորա առաջ արգելք գցեց, նորան խոչընդոտ հանդիսացաւ.* **2**, что чѣмъ *մի բան միւսով փաթաթել.* **-ся** *անդր.* **1**, *մի բանի տակ ընկնել.* ребёнокъ подвернýлся подъ лóшадь; ногá у негó подвернýлась и онъ упáлъ *նորա ոտը սայթաքեց և նա վայր ընկաւ.* **2**, *յանկարծ երևալ, յայտնուել, լոյս, 'արշայ' ընկնել.* тутъ и онъ подвернýлся; проси́тель подвернýлся къ судьѣ́ въ дóбрый часъ *խնդրատուն յարմար ժամանակ դատաւորին մօտեցաւ.* **-вертѣ́ть** (-рчý -вéртятъ), **-вéрчивать** *ն.* *ոլորել պտտեցնել, պտոյտ տալ:*

Подвесе‖ли́ть (-лю́ -ля́тъ), **-ля́ть** *ն.* **1**, *մի քիչ ուրախացնել, զուարճացնել.* **2**, *խըմեցնել, կոնծեցնել, հարբեցնել, գլուխը տաքացնել.* **-ся** *անդր.* *խմել, կոնծել:*

Пролю‖бе́зничать չ. *մի քանի ժամանակ սիրալիրութիւններ անել.* **-бова́ться** (-бу́юсь -ются) չ. *մի քանի ժամանակ զուարճանալ, հրճուել, հրճուանքով նայել:*

Прома́‖зывать, -зать (-жу -жутъ; -жь) ն. *խղել, օծել, ճարպել:*

Про‖ма́лчиваніе չ. *լռելը.* **-ма́лчивать, -молча́ть** չ. *լռել, լռութիւն պահպանել:*

Про‖ма́лывать, -моло́ть ն. 1, *աղալ. աղալ պրծնել.* 2, *վայրապար 'դուրս տալ', շաղակրատել:*

Проманéжиться (-жусь -жатся) ան. *մի քանի ժամանակ պճնամոլել, կոտրատուել, քրքրուել:*

Прома́‖нивать, -ни́ть (-ню́ -нятъ) ն. *մի քանի ժամանակ յուսադրել, սուտ յոյսերով խաբել:* [տոտել, կեղտոտել, ապականել:

Промара́ть ն. *մի քանի ժամանակ աղ-*

Промарширова́ть (-ру́ю -ютъ) չ. *ռզմ. անցնել:*

Про‖ма́тываніе չ. *վատնում, վատնելը.* **-ма́тывать, -мота́ть** ն. 1, *վատնել.* п. своё имѣ́ніе; онъ промота́лъ своё состоя́ніе на актри́съ; 2, *մի քանի ժամանակ [թել] կծկել, կծկելով անցկացնել.* **-ся** ան. *սնանկանալ, 'քանդուիլ', 'տնաքանդ ըլիլ' (ստացուածքը վատնելով):*

Прома́‖хивать, -ха́ть, -хну́ть ն. 1, *հողմահարելով քշել, վանել, հալածել, ցրել.* 2, *ամկ. վատնել.* 3, *քշելով անցնել (որոշ տարածութիւն).* 4, չ. ми́мо чего́ *մի բանի մօտից, 'կշտից' արագ անցնել.* **-ся** ան. *վրիպել, սխալուել, շզարկել (նպատակին).* онъ вы́стрѣлилъ въ меня́ изъ рево́львера, но промахну́лся; **-(про́-)хъ** ա. *սխալ հարուած, վրիպում. առհ. սխալ, անյաջողութիւն.* дать, сдѣ́лать п. *սխալուել, վրիպել, նպատակին չըդիպցնել.* онъ не п. *նա միամիտ մարդ չէ, նա խաբուող պտուղ չէ.* ни ра́зу не дать п—у *երբէք չվրիպել:*

Про‖ма́чивать, -мочи́ть ն. 1, *թացել, թրջել.* п. но́ги; 2, *բոլորովին թացել, թրջել, ջուր կտրեցնել.* дождь -мочи́лъ меня́ до косте́й; дождь наскво́зъ -мочи́лъ мою́ шине́ль; *п. го́рло *ծարաւը կոտրել, 'բողազը թացել', 'թաց անել':*

Прома́шка է. տ. Про́махъ.

Прома́яться (-ма́юсь -ются) ան. *չարչարուել, տանջուել, նահատակուել (մի քանի ժամանակ):*

Прома́ячить տ. Мая́чить.

Проме‖дле́ніе չ. *ուշանալը, ուշացում, յապաղում.* **-длива́ть, -дли́ть** (-лю -лятъ) չ. *ուշանալ, յապաղել, 'յետանալ'.* п. въ доро́гѣ.

Промé‖жду նխդ. (*սեռ. և գործիակ. հոլ.*) *մէջ, միջև.* п. двухъ огне́й; п. горъ; п. ни́ми; **-жность** է. *միջոց, արանք.* п. мéжду бровя́ми; **-жу́токъ**, тка ա. **-жу́точекъ**, чка նւզ. *միջոց. [միջի] տարածութիւն, հեռաւորութիւն.* мéжду деревя́нными строéніями оставля́ются -жу́тки; п. врéмени, раздѣля́ющій э́ти двѣ эпо́хи; въ э́тотъ п. случи́лось мно́го происшé-ствій; **-жу́точный** ած. *միջանկեալ, միջա—.* п—ое простра́нство; п—ая стѣ-

ná; **-жъ** տ. Проме́жду; «возьми́ дуби́ну п. ногъ, вотъ тебѣ́ и конь бу́детъ!»

Промель||ка́ть չ. 1, մի քանի ժամանակ, երբեմն փայլել, պսպղալ, պլպլալ. 2, և **-кну́ть** չ. փայլակի պէս անցնել, յանկարծ փայլել, երևալ և անյայտանալ, չքանալ։

Про||мерза́ніе չ. բոլորովին սառչիլը, սառից կտրիլը. **-мерза́ть**, -мёрзнуть չ. բոլորովին սառչիլ, սառից կտրիլ. **-мёрзлый** էջ. ած. բոլորովին սառած, սառից կտրած. **-мёрзнуть** (անց. -мёрзъ -зла, о) տ. Промерза́ть. [տմնագիր։

Проме́ссъ ա. (ֆր.) վճռկ. պռոմէս, խոս-

Про||мести́, -ме́сть (-мету́ -ту́тъ; անց. -мёлъ -ла́, о́; -ти́) տ. Промета́ть I; **-мета́ніе** չ. 1, ավլելը, սրբելը, մաքրելը. 2, տ. Промётываніе; **-мета́ть** ն. I. (-мести́, -ме́сть) ավլել, սրբել, մաքրել. II. տ. Промётывать; **-метну́ть** տ. Промётывать; **-мётываніе** չ. пе́тель կոճակների ծակերը կարելը. **-мётывать**, -мета́ть, -метну́ть ն. 1, ձգել, գցել, նետել (միջից). п. сквозь гро́хотъ խարբալել, 'խալխալել'. 2, կարել (կոճակների ծակերը)։

Промечта́ть չ. о чёмъ մի բանի մասին մի քանի ժամանակ երազել, մտածել, խորհել։ [մանակ աչքերը ճպել։

Проми||га́ть, -гну́ть չ. մի քանի ժա-

Проми́ловаться (-лу́юсь -ются) անդր. հնց. մեղանչել։

Про||мина́ть, -мя́ть ն. 1, լաւ տրորել, շաղախել (կաւը). 2, ծեծել, քրքրել (կտաւատը). 3, ման ածել (ձիուն). **-ся** անդր. շարժուել, ման գալ։

Промо́з||глость է. փտածութիւն, հոտածութիւն. 'ծլթածութիւն'. **-глый** էջ. ած. փտած, հոտած, փչացած (մրգեղէն), կծուած, 'ծլթած' (խոտ), **-гнуть** չ. փտիլ, հոտիլ, փըչանալ. կծուիլ, 'ծլթիլ'։

Промо́||ина է. **-й** ա. 1, ջրից ողողուած, քանդուած տեղ, խորոչ. 2, սառցի մէջ բացուած ծակ, անցք. **-и́мый** ած. ջրից ողողուած, քանդուած։

Промо||ка́ніе չ. թացուիլը, թրջուիլը. **-ка́ть**, -кнуть չ. բոլորովին թրջուել, թացուել, ջուր կտրիլ. п. отъ дождя́; п. до косте́й; **-клый** էջ. ած. բոլորովին թրջուած, թացուած, ջուր կտրած. **-кнуть** (անց. -мо́къ -кла, о) տ. Промока́ть.

Промо||ла́чивать, -лоти́ть ն. 1, մի քանի ժամանակ կա(լ)սել. 2, բոլորը կա(լ)սել։

Промо́лвить (-влю -вятъ) ն. ասել, արտասանել. **-ся** անդր. բերնից անզգուշաբար խօսք դուրս թռցնել։

Промоли́ться (-лю́сь -лятся) չ. աղօթել, աղօթելով անցկացնել (որոշ ժամանակ)։

Промолоти́ть (-очу́ -о́тятъ) տ. Промола́чивать.

Промоло́ть (-мелю́ -е́лютъ; -ели́) տ. Прома́лывать.

Промолча́ть տ. Прома́лчивать.

Промо́лъ ա. աղալը (աղունը)։

Промо||ра́живать, -ро́зить ն. բոլորովին սառցնել։

Промори́ть (-рю́ -ря́тъ) ն. որոշ ժամանակ քաղցած թողնել, քաղցից, սովից տառապեցնել. п. безъ обѣ́да առանց ճաշի, քաղցած թողնել. п. на рабо́тѣ քաղցած աշխատեցնել, բանեցնել. 2,* երկար ժամանակ սպասել տալ։ [мора́живать.

Проморо́зить (-о́жу -зятъ) տ. Про-

Промота́ть, ся տ. Прома́тывать, ся.

Промо||че́ніе չ. թացելը, թրջելը. **-чи́ть** (-чу́ -чатъ) տ. Прома́чивать.

Прому́чить (-чу -чатъ) ն. մի քանի ժամանակ չարչարել, տանջել. **-ся** անդր. մի քանի ժամանակ չարչարուել, տանջուել։

Промуштрова́ть (-ру́ю -ютъ) ն. լաւ, խստութեամբ կրթել, վարժել, հրահանգել։

Промча́ть ն. արագ տանել, սլացնել, անցկացնել, 'թռցնել'. **-ся** անդր. արագ գնալ, անցնել, սլանալ։

Промы||ва́льный ած. լուանալու[ն ծառայող]. **-ва́льня** է. լուացարան (հանածոյի). **-ва́льщикъ** ա. լուացող, լուացարար (հանածոյի). п. зо́лота; **-ва́ніе** չ. լուանալը, լուացում. **-ва́тельное**, аго չ. տ. Клисти́ръ 1; **-ва́тельный** տ. Промыва́льный; **-ва́ть**, -(ы́)ть ն. 1, լուանալ, մաքրել. п. руду́; п. глаза́; 2, (ջրի մասին) ողողել, քակել, քանդել, տանել. во́да промы́ла плоти́ну; **-вка** է. լուանալը, լուացում, մաքրելը, -լուամ. п. рудъ; п. ше́рсти; **-вно́й** ած. լուանալու. լուացած. ջրից ողողուած, քանդուած, տարուած. **-во́чный** տ. Промыва́льный.

Промы́каться (-каюсь -ются և -чусь -чутся) անդր. 1, դէս ու դէն թափառել, քարշ գալ. 2, ողորմելի կերպով ապրել, 'եօլա գնալ'։

Про́мыселъ, сла ա. զբաղմունք, արհեստ, 'փէշակ'. ры́бный п. ձկնորսութիւն. звѣри́ный п. որսորդութիւն. го́рный п. հանքագործութիւն. соляно́й п. աղագործութիւն։

Промысли́те||ль ա. նախախնամող (Աստուած). **-льный** ած. նախախնամական։

Про||мы́слить (-шлю -слятъ) տ. Промышля́ть 3; **-мыслово́й, -мысло́вый** ած. արհեստագիտական, արհեստագործական, արհեստի, -տային. промысло́вое свидѣ́тельство արհեստագիտական, -գործական վկայական. промысло́вое заведе́ніе արհեստագիտանոց, արհեստագործանոց։

Про́мыслъ ա. նախախնամութիւն. տ. Провидѣ́ніе. [мыва́ть.

Промы́ть (-мо́ю -ютъ; -мо́й) տ. Про-

Промы||шле́нникъ ա. արհեստաւոր, արհեստագէտ, 'փէշաքար', արդիւնաբերող (ձկնորս, որսորդ, առևտրականներ). **-шленность** է. արհեստագիտութիւն, արհեստագործութիւն, արդիւնաբերութիւն. фабри́чная, заво́дская п. գործարանական արհեստագիտութիւն, -գործութիւն. хлопча́то-бума́жная п. բամբակագործութիւն. **-шленный** ած. 1, արհեստագործ, արհեստագէտ. արդիւնաբերական, -բող. п. наро́дъ; п. го́родъ; 2, աշխատած, վաստակած, ճարած. **-шля́ть** 1, չ. чѣмъ մի գործով, արհեստով պարապել, զբաղուել. п. ры́бою ձկնորսութիւն անել. п. ди́чью որսորդութիւն անել. п. изво́зомъ սայլապանութիւն անել. п. контраба́ндою մաքսանենգութեամբ պարապել. 2, չ. о комъ, о чёмъ մէկի, մի բանի մասին հոգալ, հոգս քաշել. 3, (-слить)

ն. что աշխատել, վաստակել, ճարել, հայթայթել. п. себѣ хлѣба իր օրական պարէնը հայթայթել:

Промѣ‖на է. տ. Промѣнъ; **-ниваніе** չ. փոխում, փոխանակում, փոխելը, փոխանակելը. **-нивать**, -нять ն. փոխել, փոխանակել. п. старую посуду на новую; п. картину на книги; **-ся** փխդ. чѣмъ մի բան միմեանց հետ, միմեանց մէջ փոխել. мы промѣнялись лошадьми; **-нный** ած. փոխելու, փոխանակելու. **-нщикъ** ար. **-нщица** է. դրամափոխ, լումայափոխ այր, կին, սեղանաւոր, ուհի. ‘սառաֆ‘. **-нъ** ար. 1, փոխելը, -խում, փոխանակելը, -կում, փոխանակութիւն. п. одной вещи на другую; съ меня взяли столько-то за п.; п. безъ придачи, ухо на ухо փոխել, փոխանակել առանց որ և է աւելորդ բան վճարելու. 2, փոխավճար, լումայաշահ. **-нять, ся** տ. Промѣнивать, ся.

Промѣ‖риваніе չ. չափելը. **-ривать**, **-рить** (-рю -рятъ), -рять ն. չափել (խորութիւնը). **-ся** անդր. սխալուել (չափելիս). **-рный** ած. չափելու, չափման. п. шестъ; **-ръ** ար. չափելը, չափում. 2, սխալ (չափի, չափելիս եղած). **-рять** (-ряю -ютъ), **ся** տ. Промѣривать, ся.

Промѣ‖шивать, -сить (-шу́ -ѣсятъ), **-шать** ն. լաւ շաղախել, խառնել:

Промѣш‖кивать, -кать չ. մի քանի ժամանակ ուշանալ, յապաղել. онъ промѣшкалъ въ пути.

Промякнуть չ. փափկիլ, փափկանալ, կակղիլ, կակղանալ (բոլորովին):

Промять (-мну́ -у́тъ; -мни́), **ся** տ. Проминать, ся. [մյաւել, նուալ:

Промяу́кать չ. մի քանի ժամանակ

Прона́ши‖ваніе չ. կրելով մաշելը, ծակելը (հագուստը). **-вать**, проноси́ть ն. 1, հագնել, կրել (որոշ ժամանակ). 2, հագնելով, կրելով մաշել, ծակել, քրքրել (հագուստը):

Пронести́ (-су́ -су́тъ; անց. -нёсъ -сла́, о́; հրմ. -си́), **ся** տ. Проноси́ть, ся II.

Прон‖за́ніе չ. խոցելը, խոցում, ծակելը, -կում. **-за́ть**, -зи́ть ն. խոցել, ծակել. п. кинжаломъ; п. насквозь միջից ծակելով անցնել. **-зи́тельно** մ. սուր, ականջ ծակելով. **-зи́тельность** է. ականջ ծակելը, սրութիւն, սաստկութիւն, զլութիւն (ձայնի). **-зи́тельный** ած. սուր, սաստիկ, ականջ ծակող, զիլ. обладать п—ымъ голосомъ; п—ые крики; **-зи́ть** (-жу́ -зя́тъ) տ. Пронза́ть.

Про‖низа́ть (-ижу́ -и́жутъ; -жи́) տ. Прони́зывать; **-ни́зываніе** չ. շարելը, յեռելը. **-ни́зывать**, -низа́ть ն. 1, շարել, յեռել. п. жемчугомъ մարգարտազարդել. 2, շարելով անցկացնել (որոշ ժամանակ). **-низь** է. ուլունք, շարելու բան:

Прони‖ка́ніе չ. անցնելը, ներս մտնելը, թափանցելը. **-ка́ть**, -кнуть ն. անցնել (միջից, ընդթափ), [ներս] մտնել, թափանցել. свѣтъ проникаетъ сквозь стекло́, сквозь занавѣски; вода́ проникла во второй этажъ; п. въ глубь [կամ глубину] страны երկրի խորքը մտնել. 2,* խորասուզուել, իմանալ, խելամուտ լինել. п. чьё-либо намѣреніе; воззрѣніе начинающее п—кать въ умы մարդերին միջամուխ եղող, մարդերը գրաւող հայեացք. п. въ будущее ապագային խելամուտ լինել. **-ся** անդր. чѣмъ մի բանով տոգորուիլ. п. истиною ученія; п. чувствомъ до́лга; **-кнове́ніе** չ. թափանցելը, -ցում. *հասկանալը, հասկացողութիւն, խելամտութիւն. **-кнове́нность** է. *խորասուզում, խելամտութիւն:

Про‖нима́ть, -нять ն. 1, ծակել. 2, ազդել, ներգործել. меня морозъ, голодъ пронимаетъ ես մրսում եմ (կամ ցուրտը ջանս է ընկել), ես քաղցած եմ. меня дрожь пронимаетъ ես դողդողում եմ. 3, զգալ, խելքի բերել, ուղղել (պատժելով). его́ не проймёшь.

Прони‖ца́емость է. թափանցիկութիւն. **-ца́емый** ած. թափանցիկ. թափանցելի. **-ца́ніе** չ. թափանցում, թափանցելը. **-ца́тельность** է. թափանցողութիւն (միտքի), սրամտութիւն, նրբամտութիւն, կորովամտութիւն, լրջամտութիւն, զգաստութիւն. **-ца́тельный** ած. թափանցող, սուր. սրամիտ, նրբամիտ, կորովամիտ, լրջամիտ, զգաստ. п. взоръ, умъ; **-ца́ть, ся** տ. Проника́ть, ся.

I. **Проноси́ть** (ապռն. -ношу́ -но́сятъ; -си́) տ. Пронашивать.

II. **Про‖носи́ть** (ներկյ -шу́ -но́сятъ; -си́), -нести́ ն. 1, տանել, [տանելով] անցկացնել. мимо нашихъ оконъ пронесли́ гробъ; п. слухъ, молву́ о чёмъ մի բանի մասին լուր տարածել. Го́споди, пронеси́ это го́ре Տէր, հեռացրու այդ աղէտը. 2, դէմք. լուծել, ‘դուրս գնալ‘. его́ проно́ситъ, пронесло́; 3, պատառել, խորտակել, քակել, քանդել, տանել. плоти́ну пронесло́ водо́ю; **-ся** անդր. 1, արագութեամբ անցնել, անցկենալ, սլանալ. ло́шадь пронесла́сь ми́мо насъ; 2, տարածուել. пронёсся слухъ; **-но́сный** ած. և проно́сное, аго չ. լուծողական, մաքրողական:

Пронунціаме́нто չ. (իսպ.) պրօնունցիամիենտօ (խռովարարական ցոյց կառավարութեան դէմ. ևս ցոյց որ և է կուսակցութեան պարագլխի, երեսփոխանի կամ պետական անձի դէմ):

Проны́‖ра հսր. խորամանկ, խարդախ, բանսարկու, ադուեսաբարոյ մարդ, *‘ճիղուիտ‘. **-ривать**, -рну́ть չ. սուզուիլ, խորասուզուիլ, ընկղմուիլ. **-ри́ть** (-рю -ря́тъ) չ. խորամանկութիւն, խարդախութիւն, նենգութիւն անել (որ և է նպատակով). **-рливость** է. նենգութիւն, խորամանկութիւն, բանսարկութիւն. *‘ճիղուիտութիւն‘. **-рливый** ած. նենգ, խորամանկ, խարդախ, բանսարկու, *‘ճիղուիտ‘. **-рну́ть** տ. Проны́ривать; **-рство** չ. խորամանկութիւն, խարդախութիւն, նենգութիւն, բանսարկութիւն. **-рствовать** (-вую -ютъ) տ. Проны́рить.

Пронѣ́житься (-жусь -жатся) անդր. մի քանի ժամանակ իր անձը գրգել, գգուել, փայփայել (օր. անկողնում պառկած մնալով):

Пронѐю́‖хивать, -хать ն. 1, հոտառութեամբ, գաղտնաբար իմանալ, տեղեկանալ. онъ пронюхалъ, что его хотя́тъ поколоти́ть; 2, ըմպելով, ‘բռնօթու‘ վերայ ծախսել, ‘մսխել‘. п. пожи́ву.

Проня́ньчить (-чу -чатъ) ն. кого́, **-ся** անդր. съ кѣмъ պահել, խնամել, մեծացնել (մանկանը)։ [нима́ть.

Проня́ть (-ойму́ -му́тъ; -йми́) տ. Про-

Прообра‖зова́тель ար. **-зова́тельница** ի. ապագան նշանակող, գուշակող (այլաբանօրէն). **-зова́тельный** ած. ապագան նշանակող, գուշակող. **-зо́вывать, -зова́ть** (-зу́ю -ютъ) ն. ապագան նշանակել, պատկերացնել, գուշակել (այլաբանօրէն). закла́нiе ветхозавѣ́тнаго пасха́льнаго а́гнца прообразо́вывало распя́тiе Iису́са Христа́ на крестѣ́; **-(о́бра)зъ** ար. նշան (ապագայի). նախատիպ։ [կացնել (որոշ ժամանակ)։

Прообѣ́дать չ. ճաշել. ճաշելով անց-

I. **Проора́ть** (-орю́ -о́рютъ; -ори́) ն. 1, վարել, հերկել, ակօսներ քաշել (հողի միջից). 2, վարել, հերկել[ով անցկացնել] (որոշ ժամանակ)։

II. **Проора́ть** (-ору́ -ру́тъ; -ори́) չ. աղաղակել, ‘բղաւել‘[ով անցկացնել] (որոշ ժամանակ)։

Проо́хать չ. ախ քաշել, ախ ու վախ քաշել, հառաչել[ով անցկացնել] (որոշ ժամանակ)։

Пропа́вшiй ած. կորած. это п—iя де́ньги.

Пропага́н‖да ի. (նոր լտ.) պռօպագանդա, տարածում, ջանք տարածելու (նոր ուսում, կարծիք). **-ди́ровать** (-рую -ютъ) ն. պռօպագանդա անել, տարածել, աշխատել տարածել, քարոզել (նոր ուսում, կարծիք). п. иде́ю трете́йскаго суда́; **-ди́стъ** ար. **-ди́стка** ի. պռօպագանդա անող, տարածող (նոր ուսում, կարծիք) այր, կին։

I. **Про‖пада́ть**, -па́сть չ. 1, կորչել, անյայտանալ, չքանալ. у меня́ пропа́ла соба́ка; всё пропа́ло ամէն բան կորած է. куда́ пропа́ли мои́ перча́тки? онъ пропа́лъ изъ глазъ, и́зъ виду; пропа́ли мои́ труды́ и де́ньги; онъ пропа́лъ въ толпѣ́; 2, կորչիլ, փչանալ, ապականուել, կործանուել, ոչնչանալ. цвѣты́ пропа́ли отъ моро́за; у меня́ пропа́ло за нимъ сто рубле́й նա հարիւր ռուբլիս կերաւ. пиши́ пропа́ло ստացին գրիր. пропа́лъ я, пропа́ла моя́ голо́вушка; пропади́ онъ про́падомъ փչանայ նա, գրողը նորան տանի։ [ընկնել, գլորուել։

II. **Пропа́дать** չ. մի տեղից միւս տեղ

Про‖паду́ տ. Пропа́сть; **-па́жа** ի. 1, կորչելը, կորուստ. 2, կորած իր։

Пропази́ть (-жу́ -зя́тъ) ն. ակօսել, ակօսաձև փորել։ [խել՝ (խմիչքների վրայ)։

Про‖па́ивать, -пои́ть ն. ծախսել, ‘մըս-

Про‖па́лзывать, -полза́ть, -ползти́ չ. սողալ, սողալով անցնել (մի բանի միջից)։

Пропали́ть (-лю́ -ля́тъ) ն. հրացան, հրացէն արձակել, տրաքացնել (որոշ ժամանակ)։

на **Пропалу́ю** տ. Напропалу́ю.

Пропа́лы‖ванiе չ. փետելը, քաղելը, քաղհանելը. **-вать**, прополо́ть ն. փետել, քաղել, քաղհանել։

Пропа́ры‖ванiе չ. քակելը, ճղելը, պատռելը. **-вать**, пропоро́ть ն. քակել, ճղել, պատռել։

Пропасова́ть տ. Пасова́ть.

Пропасти́ (-су́ -су́тъ; -си́) ն. որոշ ժամանակ արածացնել (անասուններին)։

I. **Пропа́сть** (-паду́ -ду́тъ; անց. -па́лъ -ла, о; -ди́) տ. Пропада́ть.

II. **Про́пасть** ի. 1, անդունդ, վիհ. гора́ окружена́ глубо́кими пропастя́ми; быть на краю́ п—и կորստեան անդնդի ափին գտնուել. картёжная игра́ есть п., поглоти́вшая мно́го состоя́нiй; бездо́нная п.; 2, անթիւ, անհամար բազմութիւն, քանակութիւն. п. наро́да; п. дѣлъ; онъ издержа́лъ п. де́негъ; у него́ п. де́негъ, враго́въ, заня́тiй; тфу п.! թո՜ւհ, անիծեալ։

Пропа́‖хиванiе չ. լաւ, ըստ հարկին վարելը, հերկելը. **-хивать, -ха́ть** (-шу́ -а́шутъ; -ши́) ն. 1, լաւ, ըստ հարկին վարել, հերկել. 2, վարելով, հերկելով անցնել, անցկացնել (որոշ ժամանակ). **-шка** ի. լաւ, ըստ հարկին վարելը, -րում, հերկելը, -կում. **-шникъ** ար. ձեռնաարօր (որով օր. տունկերի շարքերն ակօսում են)։

Пропа́щiй ած. կորստեան մատ. կորած. *անուղղայ. онъ п. человѣ́къ; п. трудъ.

Пропеде́втика ի. (յն.) նախապատրաստութիւն, նախապատրաստական գիտութիւն։

Пропе‖ка́нiе չ. լաւ, ըստ հարկին եփելը, թխելը. **-ка́ть**, -(е́)чь ն. 1, լաւ, ըստ հարկին եփել, թխել. 2, եփել, թխել (որոշ ժամանակ). **-ся** անդր. լաւ, ըստ հարկին եփուել, թխուել։ [пира́ть.

Пропере́ть (-пру́ -ру́тъ; -при́) տ. Про-

Пропеча́тать ն. 1, տպել, տպելով անցնել, անցկացնել (որոշ ժամանակ). 2, տպել, տպելով հրատարակել, պարբերական մամուլի մէջ հրապարակ հանել։

Про‖пече́нiе չ. լաւ, ըստ հարկին թխելը, եփելը. **-пе́чь** (-пеку́ -чёшь -ку́тъ; անց. -пёкъ -кла́, о́; -ки́), **ся** տ. Пропека́ть, ся.

Пропи‖ва́нiе չ. խմելը, խմելու, խմիչքների վրայ ծախսելը, վատնելը. **-ва́ть**, -(и́)ть ն. խմել, խմելու, խմիչքների վրայ ծախսել, վատնել. онъ пропи́лъ всѣ свои́ де́ньги; онъ пропи́лъ своё пла́тье նա իր զգեստը գինու վրայ ծախսել է. *онъ пропи́лъ свой умъ նա խմելուց խելքը կորցրել է. **-ся** անդր. իր բոլոր կարողութիւնը խմել, խմելով սնանկանալ։

Пропи́ли‖ванiе չ. միջից սղոցելը, խարտոցելը. **-вать**, -ть ն. 1, միջից սղոցել կամ խարտոցել. 2, սղոցելով կամ խարտոցելով անցկացնել (որոշ ժամանակ)։

Пропили́ка́ть տ. Пили́кать.

Пропина́‖торъ ար. կալուածատէր, որ բացառիկ իրաւունք ունի օղի քաշելու և գարեջուր պատրաստելու. **-цiо́нное** пра́во կմ **-цiя** ի. (լտ.) իւր. բացառիկ իրաւունք որ և է կալուածքի օղի քաշելու և գարեջուր պատրաստելու։ [(միջից)։

Про‖пира́ть, -пере́ть ն. կխթել, խոթել

Про‖пирова́ть (-ру́ю -ютъ) 1, չ. կերուխումով անցկացնել (որոշ ժամանակ). 2, ն. կերուխումի վրայ ծախսել, վատնել. **-пи́ршествова́ть** (-пи́ршествую -ютъ) ն. և չ. մի քանի ժամանակ քէֆ անել, կերուխումով անցկացնել, խրախանալ։

Про||писа́ніе չ. գրելը, պատուիրելը (դեղ, դարման). **-писа́ть** (-шу́ -шутъ; -ши́), **ся** տ. Прописывать, ся; **-пи́ска** է. 1, ցուցակագրում, -գրութիւն. 2, վաւերացում (անցաթղթի). 3, ցուցակագրելիս բաց թողած բառ. **-писно́й** ած. 1, չցուցակագրած, բաց թողած. 2, п—áя бу́ква գլխատառ. **-пи́сываніе** տ. Прописа́ніе; **-пи́сывать**, -писа́ть ն. 1, նկարագրել, մեկնել (հանգամանօրէն). п. ходъ дѣ́ла; 2, ցուցակագրել. п. па́спортъ անցաթուղթը ցուցակագրել (ոստիկանատանը), վաւերացնել տալ (հիւպատոսարանում). 3, գրել, պատուիրել. п. лѣка́рство; 4, գրել, գրելով անցկացնել (որոշ ժամանակ). я цѣ́лый день прописа́лъ; 5, ցուցակագրելիս բաց թողնել. **-ся** անդր. ցուցակագրուել. **-пись** է. պռօպիս (վայելչագրութեան օրինակ, կաղապար). написа́ть п—ью տառերով (և ոչ թէ թուանշաններով) գրել, տառագրել:

Про||пита́ніе չ. սնունդ, կերակուր, պարէն, ապրուստ. доста́вить кому́ п. մէկի համար ապրուստ ճարել. сни́скивать себѣ́ п. իւր օրական պարէնը ճարել, հայթայթել. **-пита́ть, ся** տ. Пропи́тывать, ся; **-пи́тываніе** չ. ծծեցնելը. արհեստ. տոգորելը, տոգորում. п. де́рева փայտի տոգորումը (օր. ադալուծոյթներով, երկար պահելու նպատակով). **-пи́тывать**, -пита́ть ն. 1, կերակրել, սնուցանել. 2, ծծեցնել, ծծել տալ. արհեստ. տոգորել. **-ся** անդր. 1, կերակրուել, սնուել. 2, ծծել (իւր մէջ), տոգորուել:

Пропи́ть (-пью́ -ю́тъ; -пе́й), **ся** տ. Пропива́ть, ся.

Пропи́||хивать, -ха́ть, -хну́ть ն. ներս խոթել, ներս կոխել, ներս խցկել, ներս խոթել. **-ся** անդր. ներս խոթուել, ներս կոխուել, ներս խցկուել:

Пропишу́ տ. Прописа́ть.

Пропища́ть (-щу́ -ща́тъ) 1, չ. ճղղալ, ճղճղալ, ճւճւալ (որոշ ժամանակ). 2, ն. ճղճղալով, ճւճւալով ասել, յայտնել:

Пропла́вать չ. լողալ կամ նաւել (որոշ ժամանակ):

Пропла́кать (-пла́чу -чуть; -чь) չ. լալ, լաց լինել (որոշ ժամանակ):

Пропле||та́ть, -сти́ (-ту́ -ту́тъ; անց. -ёлъ -ла́, о́; -ти́) ն. ներհիւսել, մի բանի հետ. մէջ հիւսել:

Проплута́ть չ. մի քանի ժամանակ շրջել, թափառել:

Про||плыва́ть, -плы́ть (-плыву́ -ву́тъ; -ыви́) չ. լողալով կամ նաւելով անցնել. мнѣ случа́лось п. бо́лѣе версты́.

Про||пля́сывать, -пляса́ть (-яшу́ -я́шутъ; -ши́) 1, չ. պարել, կաքաւել (որոշ ժամանակ). 2, ն. պարել պրծնել, կաքաւել պրծնել (որ և է պար. կաքաւ):

Проповѣ́||даніе չ. քարոզելը, -զում. **-дать** տ. Проповѣ́дывать; **-дникъ** ա. քարոզող, -զիչ. **-днически** մ. քարոզչի պէս. **-днически́й** ած. քարոզչի, -զչական. **-дничество** չ. քարոզչութիւն, քարոզչի պաշտօն. **-дно́й, -дный** ած. քարոզի. **-довать** (-дую -ютъ) տ. Проповѣ́дывать; **-дываніе** տ. Проповѣ́даніе; **-дывать**, -дать ն. քարոզել. п. сло́во Бо́жье; **-(про́повѣ)дь** է. (յ. սեռ. проповѣде́й) քարոզ:

Про||по́й ա. խնջոյքի, կերուխումի վերայ ծախսելը, 'մսխելը', վատնելը. **-пои́ть** (-пою́ -я́тъ) տ. Пропа́ивать; **-по́йца** հոր. իւր բոլոր ստացուածքը խմող այր, կին, հարբեցող:

Пропо||ла́скиваніе չ. թեթև կերպով ողողելը (լուացքը). **-ла́скивать**, -лоска́ть ն. թեթև կերպով ողողել (լուացքը):

Пропол||за́ть տ. Пропа́лзывать; **-(о́л)зать** չ. որոշ ժամանակ սողալ. **-зти́** (-зу́ -зу́тъ; -зи́) տ. Пропа́лзывать.

Прополоска́ть (-щу́ -о́щутъ; -щи́) ն. 1, ողողելով անցնել, անցկացնել (որոշ ժամանակ). 2, տ. Пропола́скивать.

Прополо́ть (-лю́ -о́лютъ; -ли́) տ. Пропа́лывать.

Пропо́льзовать (-зую -ютъ) ն. խնամել, բժշկել (որոշ ժամանակ):

Пропоро́ть (-рю́ -о́рютъ; -ри́) տ. Пропа́рывать.

Пропороши́ть (-шу́ -ша́тъ) ն. փոշոտել (կողպպարը):

Пропоржну́ть չ. թռչելով, ճախրելով անցնել, անցկենալ:

Пропор||ціона́льно մ. համեմատաբար, համահաւասարաբար, համաչափաբար, համեմատ, համապատասխան կերպով. **-ціона́льность** է. համեմատականութիւն, համաչափութիւն, համահաւասարութիւն, համապատասխանութիւն. **-ціона́льный** ած. համեմատ, համեմատական, համահաւասար, համաչափ. համապատասխան. сре́дняя п—ая ли́нія միջին համեմատականը. наказа́нія должны́ быть пропорціона́льны преступле́ніямъ պատիժը յանցանքին պէտք է համապատասխան լինի. **-ція** է. (յո.) 1, համաչափութիւն, համեմատութիւն. յարաբերութիւն. աղերս. п. зда́нія շինութեան [առանձին մասերի] համաչափութիւնը. 3, թւբ. պռոպօրցիա. ариѳмети́ческая, геометри́ческая п.

Пропости́ть (-щу́ -стя́тъ -сти́) չ., **-ся** անդր. պահել, պաս պահել (որոշ ժամանակ):

Пропотѣ́||ніе չ. որոշ ժամանակ քրտնելը. լաւ, ըստ հարկին քրտնելը. **-ть** չ. որոշ ժամանակ քրտնել. լաւ, ըստ հարկին քրտնել. на́до, что́бы больно́й пропотѣ́лъ.

Про||пою́ տ. Пропои́ть և Пропѣ́ть; **-пру́** տ. Проперéть.

Пропры́гать չ. թռչել, թռչկոտել (որոշ ժամանակ):

Пропря́сть (-яду́ -ду́тъ; -ди́) ն. որոշ ժամանակ մանել, (գր.) նիւթել:

Пропуделя́ть չ. որս. վրիպել, չյաջողել:

Пропу||ска́ніе չ. թողնելը. բաց թողնելը. **-ска́ть**, -сти́ть ն. 1, թողնել որ անցնի, որ հոսի, բաց թողնել. насъ пропусти́ли че́резъ заста́ву; п. сою́зныя войска́ че́резъ свою́ зе́млю; п. во́ду въ ровъ; 2, բաց թողնել, ձեռքից բաց թողնել, թողնել որ անցնի. п. удо́бный слу́чай; п. вре́мя посѣ́ва; п. срокъ апелля́ціи; 3, բաց թողնել, դուրս ձգել. я пропусти́лъ нѣ́сколько словъ въ моёмъ письмѣ́; на́до п—сти́ть э́ту фра́зу; *п. что ми́мо уше́й մի բան չլսելու դնել. п—сти́те э́ту ску́чную главу́ и чита́йте да́лѣе; 3, քամել. п. бульо́нъ че́резъ си́то; п. жи́дкость сквозь сѣ́рую бума́гу́; 4, իւր միջից անցկացնել, բաց թողնել. бума́га п—ска́етъ черни́ла; стекло́ пропуска́етъ свѣтъ; ко́жа не п—ска́етъ во-

ды; **5,** *թոյլտրել.* цензýра не п—стила моéй статьи́; **-скнóй** *ած.* *բաց թողնող, անցկացնող.* п. видъ *անցագիր.* п—áя бумá-га *ծծողական թուղթ.* п—áя способность линіи *երկաթ. երկաթուղային գծի դնացքա-ռաքութեան կարողութիւնը.* **-(прó-)скъ** *ա.* **1,** *բաց թողնելը, թողնելը որ անցնի, թոյլա-տրութիւն անցնելու.* **2,** *բաց թողած տեղ, մաս.* п. въ набóрѣ *տպգր. շարուածքի մէջ բաց թողած տեղ.* **3,** *անցագիր.* **-сти́ть** (-щý -ýстятъ; -сти́) *ա.* Пропускáть.

Пропутешéствовать (-вую -ютъ) **1,** *չ.* *ճանապարհորդել, ճանապարհորդելով անց-կացնել (որոշ ժամանակ).* **2,** *ն.* *ճանապարհոր-դելիս ծախսել, ‘մսխել‘ (փող):*

Про‖пущáть *ռմկ.* *ա.* Пропускáть; **-щéніе** *չ.* *թողնելը. բաց թողնելը.* **-щý** *ա.* Пропусти́ть.

Про‖пью́ *ա.* Пропи́ть; **-пья́нство-вать** (-вую -ютъ) *չ.* *խմել, հարբեցողութիւն անել, խմելով, հարբեցողութիւն անելով անց-կացնել (որոշ ժամանակ):*

Про‖пѣвáть, -пѣ́ть (-пою́ -ю́тъ; -пóй) *ն.* **1,** *երգել վերջացնել, պրծնել.* **2,** *եր-գելով անցնել, անցկացնել (որոշ ժամանակ):*

Прорабó‖тывать, -тать *չ.* *աշխա-տել, բանել, աշխատելով, բանելով անցնել, անց-կացնել (որոշ ժամանակ):*

Прора‖стáніе *չ.* *ծլելը, բողբոջելը.* **-стáть, -сти́** (-стý -стýтъ; *անց.* -рóсъ -слá, ó; -сти́) *չ.* **1,** *ծլել, բողբոջել.* рожь въ скирдáхъ проройслá; картóфель прорóсъ отъ сы́рости; **2,** *մի բանի միջից բուսնել, դուրս գչել.* травá проросла́ сквозь дорó-гу; **-щáть, -сти́ть** *ն.* *բուսցնել, ծլեցնել:*

Прó‖рва *է.* **1,** *նոր, ուղիղ հուն (գետի հո-սանքից բացուած).* **2,*** *գւռկ.* *անդունդ, վիհ.* **3,** *հռբ.* *անկուշտ, անկշտում, որկրամոլ.* **-рвáть** (-рвý -вýтъ; -рви́) *ա.* Прорывáть I.

Проревѣ́ть (-вý -вýтъ; -ви́) *չ.* **1,** *ոռ-նալ, աղաղակել.* **2,** *բառա(ն)չել, մռնչել:*

Προредакти́ровать (-рую -ютъ) *ն.* *խմբագրել:*

Прore‖кáніе *չ.* *նախագուշակելը, մար-գարէանալը.* **-кáтель** *ա.* **-кáтельница** *է.* *նախագուշակող այր, կին. մարգարէ, -ուհի.* **-кáть,** -(é)чь, -щи́ *ն.* *նախագուշակել, մար-գարէանալ:*

Проре́кторъ *ա.* *փոխ ռեկտոր:*

Проре‖чéніе *չ.* *նախագուշակում, -կու-թիւն, մարգարէութիւն.* **-(é)чь, -(é)щь** (-кý -чёшь -кýтъ) *ա.* Прорекáть.

Прorжá‖вина *է.* *ժանգից կերուած, ծա-կուած տեղ.* **-вѣть** *չ.* *ժանգից ուտուել, ծա-կուել:*

Прорзáть (-ржý -жýтъ; -ржи́) *չ.* **1,** *որոշ ժամանակ վրնջել, խրխնջալ, խնջել.* **2,** *բարձր վրնջել, խրխնջալ, խնջել:*

Прори‖сóвывать, -совáть (-сýю -ютъ) *ն.* **1,** *ընդթափ նկարել, ընդթափ կաղա-պարել, «ծայրանկարել» (նուրբ թղթի կամ ա-պակու վերայ, թուղթը կամ ապակին կաղա-պարի հետ միասին լոյսի դէմ պահելով).* **2,** *նկարել, նկարելով անցնել, անցկացնել (որոշ ժամանակ* **-(н)сь** *է.* *ընդթափ նկարած կաղա-պար, «ծայրանկար»:*

Прори‖цáлище *չ.* *պատգամատուն, պատ-գամի տաճար; մեհեան.* **-цáніе** *չ.* *գուշակելը, -կում. մարգարէանալը, -ցում.* **-цáтель** *ա.* **-цáтельница** *է.* *գուշակող, մարգարէանող այր, կին.* **-цáтельный** *ած.* *գուշակութեան, մարգարէական.* **-цáть** *չ.* *գուշակել, մարգա-րէանալ:* [յետաձգումին:

Пророгáція *է.* (*լտ.*) *իրւբ.* *յետաձգում,*

Прорóкъ *ա.* *մարգարէ.* прорóку нѣтъ слáвы въ отчи́знѣ *մարգարէն իւր գաւառում պատիւ չունի:*

Пророни́ть (-ню́ -нятъ) *ն.* *վայր գցել. կորցնել.* не п. слóва *բերանը չբացել, ոչ մի խօսք չասել, չարտասանել, լռել:*

Про‖ростáніе, -ростáть *ա.* Прорастáніе, -стáть; **-рóстъ** *ա.* **1,** *վերաճող վէրք, կարած տեղ ծառի բնի վերայ.* **2,** *բս.* Elatine, *ելատինէ կմ ալատին.* **-рость, -рось** *է.* *ճարպաշերտ մսի մէջ:*

Прорó‖чески *մ.* *մարգարէաբար.* **-че-скій** *ած.* *մարգարէի, -րէների, մարգարէա-կան.* **-чественный** *ած.* *մարգարէական, -րէութեան.* **-чество** *չ.* *մարգարէութիւն.* исполнéніе пророчествъ; **-чествованіе** *չ.* *մարգարէանալը.* **-чествовать** (-вую -ютъ) *չ.* *մարգարէանալ.* **-чить** (-чу -чатъ), напр— *ն.* *մարգարէանալ, գուշակել.* **-чица** *է.* *մարգարէուհի:*

Прорóю *ա.* Proры́ть.

Проры‖бáніе *չ.* *կտրելը, կտրելով ծա-կելը.* **-бáть, -би́ть** (-блю́ -ýбятъ; -би́) *ն.* *կտրել, կտրելով ծակել.* п. окнó въ стѣнѣ́ *պատի մէջ պատուհան կտրել կմ բացել.* п. прóсѣку въ лѣсý *անտառի մէջ տեղ բացել (ծառերը կտրելով).* **-ся** *անդբ.* *ռզմ.* *թշնա-մու շարքերը ճեղքել, սուրը ձեռքին անցնել թշնամու շարքերից.* **-бка** *է.* *կտրելը, կտտ-րելը.* **-(прó-)бь** *է.* *սառցի մէջ կտրած, բա-ցած անցք, ծակ:*

Прорýха *է.* *սխալ, սխալանք, վրիպում.* и на старýху бываетъ п. (*առծ.*) *ծերու-թիւնն էլ անսխալական չէ:*

Про‖рывáніе *չ.* **I.** *պատռելը, ճղելը. քանդելը, քակելը, խորտակելը.* **II.** *փորելը, պեղելը, քանդելը.* **-рывáть** *ն.* **I.** (-рвáть) *պատռել, ճղել (օր. շորը), պատռել, քանդել, քակել, խորտակել (ամբարտակը), խորտակել, ցրել, ցիրուցան անել (թշնամու շարքերը).* **-ся** *անդբ.* 1, *պատառուել, ճղուել, ճեղքուել, քակուել. (պալարի մասին) պայթիլ, բուշիլ.* мѣшóкъ прорвáлся *պարկը պատռուեց.* 2, *դուռով, թըշ-նամու շարքերը ճեղքելով անցնել.* **II.** (-ры́ть) *ն.* *փորել, պեղել, բացել.* п. канáлъ; рѣкá проры́ла нóвое рýсло; **-ся** *անդբ.* *փորելով հասնել.* **-ры́въ** *ա.* **1,** *պատառուածք, պատա-ռուած. քանդուած տեղ, անցք. ծակ.* **2,** *թե-թև վէրք, պալար:* [բալ, հեծկլտալ:

Прорыдáть *չ.* *մի քանի ժամանակ ող-*

Прорыси́ть (-шý -сятъ; -си́) *չ.* [*ձիով*] *անցնել (որոշ տարածութիւն):*

Прорыскать (-щу -щутъ) *չ.* *մի քա-նի ժամանակ այս կողմ այն կողմ թափառել, շրջել:*

Про‖ры́тіе *չ.* *փորելը, բացելը, անցկաց-նելը.* п. тоннéля; **-ры́ть** (-рóю -ютъ; -рóй) *ն.* **1,** *որոշ ժամանակ փորել, պեղել.* **2,** *ա.*

Прорывáть II; **-ся** ան. **1,** *որոշ ժամանակ որոնել, փնտռել (օր. գրքերում).* **2,** *տ.* Прорывáться II.

Про‖рычáть (-чу́ -чáтъ; -чи́) *չ. բարձր մռնչել (առիւծի մասին).* **-ры́щу** *տ.* Проры́скать.

Прорѣди́ть (-ѣжу́ -дя́тъ) *ն. մաքրել (անտառը, աւելորդ ծառերը կտրելով):*

Прорѣ́зать (-жу -жутъ; -жь), **ся** *տ.* Прорѣ́зывать, ся.

Прорѣзви́ться (-влю́сь -вя́тся; -ви́сь) *չ. մի քանի ժամանակ խնդալ, չարաճճիութիւններ անել:*

Прорѣ‖зно́й *ած. կտրած, [միջից, ընդթափ] ծակած.* **-зъ** *ա. [միջից, ընդթափ] կտրած տեղ, անցք, ծակ. դերձ. թեքի համար կտրած անցք.* **-зывáніе** *չ. [միջից, ընդթափ] կտրելը, ծակելը. բժ.* п. зубо́въ *ատամների դուրս գալը.* **-зывáть,** -зать *ն.* **1,** *[միջից, ընդթափ] կտրել, ծակել.* п. пило́ю *սղոցել, սղոցով կտրել.* **2,** *մի քանի ժամանակ կտրել, փորագրել[ով անցնել, անցկացնել].* **-ся** *ան. դուրս գալ (ատամների մասին).* у ребёнка зу́бы п—зываются; **-(-про́-)зь** *է.* **1,** *տ.* Прорѣ́зъ; **2,** *ծակծկուած յատակով նաւ, որի մէջ ձկներ են պահում, ձկնակուր, ձկնարան:*

Прорѣ‖ха *է.* **-шка** *նւզ. ծակ, պատռուածք, պատռած տեղ (զգեստի).* смо́лоду п—шка, а подъ стáрость дырá *(առծ.) ձուի գողը ձիու գող էլ կը դառնայ:*

Проса‖ди́ть (-жу́ -áдятъ) *տ.* Просáживать; **-жáть** *ն. տնկել, տնկելով անցնել, անցկացնել (որոշ ժամանակ).* **-живáть,** -ди́ть *ն.* **1,** *տնկել.* **2,** *պատառել, ծակել (եղջիւրներով).* **3,** *շատ [փող] ծախսել, 'մսխել', վատնել.* **-жу́** *տ.* Просади́ть.

Просáкъ *ա.* **1,** *դժուար, նեղ դրութիւն, շփոթութիւն.* попáсть въ п. *նեղ դրութեան մէջ ընկնել.* **2,** *առասան ոլորելու կմ հիւսելու տեղ:*

Про‖сáливаніе *չ. լաւ, բոլոր հարկին աղելը, աղ անելը, աղ դնելը.* **-сáливать** *ն.* **I.** [**-сáлить** (-лю -лятъ)] *լաւ, բոլոր հարկին ճարպոտել, իւղել, ճարպ, իւղ քսել.* **II.** (-соли́ть) *լաւ, բոլոր հարկին աղել, աղ անել, աղ դնել:*

Просáсы‖ваніе *չ. թափանցելը, միջից անցնելը (ծծուելով).* **-вать,** прососáть *ն.,* **-ся** *ան. թափանցել, միջից անցնել (ծծուելով):*

Просáчи‖ваніе *չ. միջից, ընդթափ անցնելը, հոսելը (կաթելով, ծորալով).* **-вать-ся,** просочи́ться *ան. միջից, ընդթափ անցնել, հոսել, ծորալ:*

Просвá‖таніе, -тываніе *չ. նշանելը, նշան դնելը, 'ուզելը'.* **-тывать, -тать** *ն. նշանել, նշան դնել, 'ուզել'.* п. дѣви́цу за богáтаго жениха́; п. свою́ дочь за кого́-либо.

Просверкáть *չ. մի քանի ժամանակ փայլել, պլպլալ, պսպղալ:*

Просвер‖лéніе, -ливаніе *չ. գայլիկոնելը, ծակելը.* **-ливать, -ли́ть** (-лю́ -лятъ) *ն. գայլիկոնել, գայլիկոնով ծակել.* п. до́ску.

Просви‖рá *տ.* Просфорá; **-ренная,** ой *է. նշխարատուն, նշխար թխելու տուն.* **-рка** *նւզ. տ.* Просвирá; **-рки,** рокъ *է. յ. բս.* Malva rotundifolia, *կատանակ (բոլորտերեւեան մոլոշ).* **-рница** *է. նշխար թխող կոյս, կին.* **-рный** *ած. նշխարի, նշխարա—.* п—ое тѣ́сто; **-рня** *տ.* Просви́рница; **-ряќъ,** á *ա. տ.* Просви́рки; **-рочка** *նւզ. տ.* Просвирá; **-рочный** *ած.* **1,** *տ.* Просви́рный; **2,** п—ыя растéнія *բս.* Malvaceae, *մոլոշներ:*

Просви́‖стывать, -стáть (-щу́ -и́щутъ; -щи́) **-стѣ́ть** (-щу́ -стя́тъ; -сти́) *ն.* **1,** *շուացնելով երգել (երգ).* **2,** *մի քանի ժամանակ շուացնել.* **3,*** *վատնել.* п. имѣ́ніе.

Просвѣ‖жáть, -жи́ть (-жу́ -жáтъ) *ն. [սենեկի, բնակարանի] օդը մաքրել, թարմացնել.* **-ся** *ան. թարմանալ (մաքուր օդ ծծելով):*

Просвѣ‖ти́тель *ա. լուսաւորիչ.* **-ти́тельница** *է. լուսաւորչուհի.* **-ти́тельный** *ած. լուսաւորող.* п—ая благодáть Бо́жія; **-ти́ть** (-щу́ -тя́тъ; -ти́) *տ.* Просвѣщáть; **-тли́ть** (-лю́ -ля́тъ), **ся** *տ.* Просвѣтля́ть, ся; **-тлѣ́ніе** *չ. բացուելը, լուսաւորուելը.* на него́ нашло́ п. *նորա աչքերը բացուել են.* **-тлѣ́ть** *չ. բացուել, պարզուել.* **-тля́ть,** -тли́ть *ն. պարզել (հեղուկեղէնը).* **-ся** *ան. պարզուել, բացուել.* **-тъ** *ա.* **1,** *լոյսի երեւալը, յայտնուելը.* *жизнь безъ п—а *առանց լուսոյ նշոյլի կեանք.* **2,** *ճրտրպ. լուսոյ տարածութիւն, լուսամուտ.* **-чиваніе** *չ. թափանցում, միջից անցնելը (լոյսի).* **-чивать** *չ. իր միջից լոյսն անցկացնել, թափանցիկ լինել.* «Элéнъ былá въ бѣ́ломъ плáтьѣ, просвѣ́чивающемъ на груди́ и на плечáхъ»; **-щáть,** -ти́ть *ն. լուսաւորել, կրթել.* п. умы́; п. свѣ́томъ вѣ́ры; п. ю́ношество; п. наро́дъ; **-щéніе** *չ.* **1,** *լուսաւորութիւն, կրթութիւն.* наро́дное п.; **2,** *եկղ. Աստուածայայտնութեան տօն.* **-щённый** *ք. ած. լուսաւորուած, կրթուած:*

Просё‖локъ, лка *ա.,* **-лочекъ,** чка *նւզ. տարածութիւն, միջոց մեծ ճանապարհից հեռու գտնուող գիւղերի մէջ.* итти́ п—лками *կողմնակի ճանապարհներով գնալ.* **-лочная** доро́га *կողմնակի ճանապարհ, շաւիղ:*

Проси́‖живать, -дѣ́ть (-жу́ -дя́тъ; -ди́) *չ. նստել, նստած անցկացնել (որոշ ժամանակ).* п. весь вéчеръ у знако́маго; п. всю ночь за рабо́тою; п. всю ночь у больно́го.

Про́синецъ, нца *ա. յունուար [ամսի հին անունը]:*

Про‖си́тель *ա.* **-си́тельница** *է. խնդրող, հայցող, խնդրարկու այր, կին.* **-си́тельный** *ած. խնդրի, հայցում պարունակող.* **-си́тельскій** *ած. խնդրողի, խնդրարկուի.* **-си́ть** (-шу́ -о́сятъ; -си́) *ն.* кого́, что, чего́, о чёмъ *մէկին, մի բան խնդրել, մէկին աղաչել, մի բան հայցել.* п. у кого́ дéнегъ, по́мощи; п. позволéніе; п. прощéніе; п. ми́лостыни; я прошу́ вáшего покрови́тельства; п. руки́ дѣ́вушки; прошу́ васъ убѣди́тельно сдѣ́лать э́то; я не хочу́ ни о чёмъ п. его́; п. кого́ на обѣ́дъ, на свáдьбу; п. снисхождéнія у пу́блики; я проси́лъ за васъ (*կմ* о васъ) мини́стра;

п. мѣ́ста; ми́лости про́симъ *շնորհք արէք, համեցէք.* прошу́ сади́ться; п. извине́нія; п. о хране́ніи та́йны; чего́ въ дѣ́тствѣ про́симъ, подъ ста́рость бро́симъ (*առծ.*). **-ся** *անդր.* [*իւր համար*] *խնդրել, հայցել.* п. въ о́тпускъ *արձակուրդ խնդրել.* п. въ отста́вку *հրաժարականը խնդրել.* п. на гуля́нье, въ теа́тръ *թոյլտուութիւն խնդրել զբօսնելու, թատրոն գնալու:*

Просі||ява́ть, -я́ть չ. *ցոլանալ, փայլել.* со́лнце просія́ло сквозь ту́чи; лицо́ его́ просія́ло отъ ра́дости—*փայլեց:*

Проска́бли||ваніе չ. *քերելով ծակելը.* **-вать,** проскобли́ть ն. *քերելով ծակել:*

Про||скака́ть (-скачу́ -а́чутъ; -чи́) չ. 1, *մի քանի ժամանակ թռչկոտել, 'ծուլծուլ ընել'.* 2, տ. Проска́кивать I; **-ска́киваніе** չ. *մի բանի միջից թռչելը, անցնելը.* **-ска́кивать** չ. I. (-скака́ть) *թռչկոտելով, ոստոստալով անցնել.* онъ проскака́лъ пе́редо мно́ю; II. (-скочи́ть, **-скакну́ть**) չ. 1, *մի բանի միջից թռչել.* 2, *արագութեամբ անցնել.* 3, *երեալ, յայտնուել, պատահել (արագութեամբ անցնելիս):*

Проскобли́ть (-лю́ -ля́тъ) տ. Проска́бливать.

Проскользну́ть չ. *արագութեամբ անցնել, խոյս տալ.* п. ми́мо глазъ *աչքից վրիպել:*

Проско||миді́йный ած. *եկղ.* *ընծայման.* **-ми́дія** է. (*յն.*) *եկղ.* *ընծայումն (սուրբ պատարագի առաջին մասը, երբ պատրաստում են նուէրները գինման համար):*

Проскочи́ть (-чу́ -ча́тъ) տ. Проска́кивать II.

Про||скреба́ть, -скре́сть (-скребу́ -бу́тъ; *անց.* -скре́бъ -бла́, о́; -би́) ն. *քերելով ծակել:*

Проскрипѣ́ть (-плю́ -пя́тъ; -пи́) չ. *ճռռալ, ճռճռալ (դռան մասին):*

Проскурня́къ, а́ ա. *բս.* Altaea officinalis, *տուղտ.* ро́зовый п., A. rosea, *մոլոշավարդ:*

Просла́бить (-блю -бятъ) ն. *մաքրել (մաքրողականի մասին).* лѣка́рство просла́било меня́; его́ просла́било *նա լուծեց:*

Просла́||вить (-влю -вятъ), **ся** տ. Прославля́ть, ся; **-вле́ніе** չ. *փառաբանելը, -նութիւն, փառաւորելը, -րութիւն.* **-вля́ть,** -вить ն. 1, *փառաւորել.* п. своё и́мя вели́кими дѣла́ми; 2, *փառաբանել, գովաբանել, գովասանել.* п. Бо́га; 3, *հռչակել.* п. кого́ скупы́мъ; **-ся** *անդր.* *փառաւորուիլ, հռչակուիլ.* п. побѣ́дами.

Прослези́ть (-жу́ -зя́тъ; -зи́) ն. кого́ *մէկին արտասուեցնել, լացացնել, ստիպել արտասուք թափելու.* **-ся** *անդր.* *արտասուել, մի քանի կաթիլ արտասուք թափել:*

Просло́екъ, о́йка ա. *միջախաւ, նուրբ, բարակ խաւ (հանածոների մէջ):*

Прослоня́ться տ. Прошата́ться.

Прослу́||живать, -жи́ть (-жу́ -жатъ) չ. 1, *որոշ ժամանակ ծառայել, ծառայելով անցկացնել.* я два́дцать лѣтъ прослужи́лъ моему́ госуда́рю, оте́честву; онъ де́сять лѣтъ прослужи́лъ въ одно́мъ чи́нѣ; 2, *դիմանալ (որոշ ժամանակ).* э́та шля́па прослужи́ла мнѣ пять лѣтъ; э́то пла́тье болѣе го́да вамъ не прослу́житъ.

Прослу́||шивать, -шать ն. *ցվերջ լսել, ունկնդրել.* онъ прослу́шалъ мой разска́зъ; 2, *լսել, ունկնդրել.* судъ прослу́шалъ моё дѣ́ло; учи́тель прослу́шалъ уро́къ ученика́; п. курсъ *դասընթացը վերջացնել:*

Про||слыва́ть, -слы́ть (-слыву́ -ву́тъ; -ви́) չ. *հռչակ ունենալ, համարուել.* п. учёнымъ, п. богачо́мъ *ուսումնականի, հարուստի համբաւ, հռչակ ունենալ:*

Прослы́шать տ. Услы́шать.

Прослѣ́довать (-дую -ютъ) 1, չ. *անցնել, անցկենալ.* 2, *քննել, զննել, հետախուզել:*

Просма́ли||ваніе տ. Смоле́ніе; **-вать,** просмоли́ть ն. *լաւ, ըստ հարկին խայծղանել, ձիւթել, կպրել:*

Просма́три||ваніе չ. *նայելը, տեսնելը, աչքի անցնելը.* **-вать,** просмотрѣ́ть ն. 1, *նայել, տեսնել, աչքի անցնել.* п. счётъ; п. сочине́ніе; докла́дчикъ ещё не п—валъ моего́ дѣ́ла; 2, *չնկատել, բաց թողնել.* п. нѣ́сколько опеча́токъ въ корректу́рѣ; 3, *նայելով, դիտելով անցնել, անցկացնել (որոշ ժամանակ).* я полчаса́ просмотрѣ́лъ на карти́ну.

Просмоли́ть (-лю́ -ля́тъ) տ. Просма́ливать.

Про||смо́тръ ա. 1, *նայելը, տեսնելը, աչքի անցնելը.* та́йный п. пи́семъ почто́вымъ вѣ́домствомъ; 2, *չնկատելը, բաց թողնելը.* **-смотрѣ́ть** (-рю́ -о́трятъ; -три́) տ. Просма́тривать.

Про||смѣ́ивать, -смѣя́ть տ. Осмѣ́ивать, -смѣя́ть; **-смѣ́иваться** չ. *երբեմն ծիծաղել, ժպտալ.* **-смѣя́ться** չ. *ծիծաղել (որոշ ժամանակ):*

Просну||ро́вываніе, -ро́вывать, -рова́ть տ. Прошнуро́вываніе, -ро́вывать, -рова́ть.

Просну́ться տ. Просыпа́ться II. 2.

Про́со չ. *բս.* Panicum miliaceum, *բուն կորեակ.* воробьи́ное п., Anagallis, *տզրուկխոտ (ծիծաղենի?).* ка́менное, со́лнечное п. Lithospermum officinale, *քարասերմիկ (կաքաւ կրկուտ):*

Просова́ть (-сую́ -ю́тъ) տ. Просо́вывать.

Просови́дный տ. Просообра́зный.

Про||со́вка է. *դերձկ.* *ողորկիչ տախտակ.* **-со́вывать,** -сова́ть, **-су́нуть** ն. *խցկել, խոթել, անցնել, անցկացնել (մի բանի մէջ կամ միջից).* п. верёвку въ кольцо́; п. ру́ку въ дыру́; **-ся** *անդր.* *ներս խցկուել, անցնել (մի բանի միջից):*

Про||соди́ческій ած. *վանկաչափական.* **-со́дія** է. (*յն.*) *վանկաչափութիւն, առոգանութիւն:*

Про||соли́ть (-лю́ -ля́тъ) տ. Проса́ливать II; **-со́лъ** ա. *աղելը, աղ անելը, աղ դնելը.* **-соль** է. 1, *թեթև կերպով աղելը, աղ անելը, աղ դնելը. աղապակասութիւն, անալիութիւն.* 2, *նոր աղ դրած, լաւ աղ չկերած ձուկ.* **-со́льный** ած. *աղապակաս, անալի.* **-солѣ́ть** չ. *լաւ, ըստ հարկին աղ ուտել, աղուել:*

Про||со́нки ա. յ. **-со́нье** չ. *քնաթաթախութիւն.* въ п—нкахъ, съ п—со́нья *քնաթաթախ, քնաթաթախ կերպով:*

Прособрáзный ած. կորեկակերպ, կորեկատես, կորեկաձև. п—ая сыпь բժ. կորեկատես ցան, կորեկացան։

Просопѣ́ть (-плю́ -пя́тъ) չ. մի քանի ժամանակ խորդալ, խռխռալ, խռխռացնել, թըռթռալ, թմթմացնել։

Просо‖сáть (-сý -сýтъ), **ся** տ. Просáсывать, ся; **-съ** ա. Չրից բացուած ծակ, ծերպ։

Просó‖хлый ած. չորացած, ցամաքած. **-хнуть** (անց. -хъ -хла, о) տ. Просыхáть.

Просочи́ться (-чýсь -чáтся) տ. Просáчиваться.

Проспáть (-сплю́ -спя́тъ) տ. Просыпáть II; **-ся** տ. Просыпáться II. 1.

Проспé‖ктикъ նւզ. **-ктъ** ա. (լտ.) պռօսպէկտ. 1, պլան, ընդարձակ ծանուցում (որ և է հրատարակելի գրքի, որ և է ձեռնարկութեան). 2, երկար, լայն և շքեղ պողոտայ, փողոց. Нéвскій, Головинскій п.

Проспóрить (-рю -рятъ) 1, չ. որոշ ժամանակ վիճել, վիճաբանել[ով անցնել, անցկացնել]. 2, տանել տալ, տարուել (վիճելով, գրաւ գալով)։

Проспрягáть չ. [բայը] խոնարհել, խոնարհելով անցկացնել (որոշ ժամանակ)։

Просрó‖чиваніе չ. տ. Просрóчка; **-чивать, -чить** (-чу -чатъ) ն. ժամանակը, պայմանաժամը, ‘վաղան’ անցկացնել. п. вéксель, пáспортъ; п. óтпускъ; п. пять дней հինգ օր նշանակուած ժամանակից ուշացնել. просрóченный вéксель, пáспортъ ժամանակն անցած մուրհակ, անցագիր. просрóченный долгъ յետաձգած պարտք. **-чка** ի. 1, ժամանակը, պայմանաժամը, ‘վաղան’ անցկացնելը. 2, յետաձգութիւն, յապաղում։

Про‖стáивать, -стоя́ть չ. 1, որոշ ժամանակ կանգնել, կանգնած անցկացնել. я простоя́лъ всю обѣ́дню; 2, մնալ, կենալ, անցկացնել (որոշ ժամանակ). полкъ простоя́лъ въ э́томъ гóродѣ всю зи́му; хорóшая погóда не дóлго простои́тъ լաւ եղանակը երկարատև չէ լինելու։

Прос‖тáкъ, á ա. **-тачóкъ**, чкá նւզ. պարզամիտ մարդ։

Про‖стёгиваніе չ. կարելը. **-стёгивать, -стегáть, -стегнýть** ն. 1, կարել (երկու կտորներ, որոնց մէջ բամբակ է դըրած). 2, ծակել (մարակի հարուածով). **-стёжка** ի. կարելը, կարում։

Простe‖регáть, -рéчь (-регý -жёшь -гýтъ; անց. -рёгъ -реглá, ó; -ги́) ն. չնկատել, ուշադրութիւնից վրիպել. **-рéть** (-стрý -стрýтъ; անց. -стёръ -рлá, ó; -стри́), **ся** տ. Простирáть, ся II. [մարդ։

Простéцъ, тцá ա. պարզ, պարզամիտ

Прости́ չ. ռմկ. ներիր, *հրաժեշտ. «я не могъ разстáться съ нéю, не сказáвъ ей послѣ́дняго п.».

Про‖стирáніе չ. տարածելը. **-стирáть** ն. I. լուանալով անցկացնել (որոշ ժամանակ. II. (-стерéть) ն. տարածել, ձգել, բացել. п. рýки къ нéбу; онъ сли́шкомъ далёкó простирáетъ своё честолю́біе նորա փառասիրութիւնը չափ չէ ճանաչում. онъ простёръ свою́ дéрзость до тогó, что удáрилъ егó նա իր յանդգնութիւնն այն աստիճանի հասցրեց էլն. **-ся** անդր. տարածուել, ձգուել. странá э́та простирáется до мóря; власть егó простирáется óчень далёкó; э́ти гóры простирáются съ сѣ́вера на югъ; вóйско э́то простирáется до сорокá ты́сячъ человѣ́къ այս զօրքի թիւը քառասուն հազարի է հասնում. долги́ егó простирáются до десяти́ ты́сячъ рублéй—հասնում են։

Прости́тель‖ность ի. ներելիութիւն, ներելի լինելը. **-ный** ած. ներելի, թողլի։

Прости‖туи́ровать չ. անառակութիւն, պոռնկութիւն անել, անառակութեամբ, պոռնկութեամբ զբաղուել (կանանց մասին). проституи́рующія жéнщины; **-тýтка** ի. (լտ.) անառակ կին կամ աղջիկ, բոզ։ [Прощáть, ся.

Прости́ть (-щý -стя́тъ; -сти́), **ся** տ.

Прóсто մ. պարզ, պարզ կերպով, պարզապէս. ուղղակի, առանց քաշուելու. п. одѣ́ваться; п. обходи́ться съ кѣмъ մէկի հետ պարզ կերպով վարուել. я, п., скажý емý, что я дýмаю; п. нáпросто ուղղակի, առանց այլայլութեան. э́то объясня́ется óчень п. այդ բացատրուում է շատ պարզ կերպով։

Просто‖вáто մ. պարզամտութեամբ. **-вáтость** ի. պարզամտութիւն. **-вáтый** ած. պարզամիտ. **-волóсый** ած. առանց սանտրուածքի, մազերը չհիւսած (կինարմատի մասին). **-дýшіе** չ. միամտութիւն, պարզասրտութիւն, անկեղծութիւն. **-дýшно** մ. միամտաբար, պարզ սրտով, անկեղծօրէն. **-дýшный** ած. միամիտ, պարզասիրտ, անկեղծ. простодýшенъ, какъ дитя́.

I. **Простóй** ած. 1, պարզ, հասարակ. п. человѣ́къ; п—óе плáтье; п—óе письмó; п—ы́мъ глáзомъ պարզ աչքով (առանց դիտակի). нѣтъ ничегó прóще աւելի պարզ բան չկայ. п—ы́я тѣлá; п—ы́я чи́сла; 2, պարզամիտ. онъ такъ простъ, что вся́кій мóжетъ обмануть егó; 3, պարզ, հասարակ. ստոր, ստորին. п. нарóдъ; п—áя жéнщина; п. товáръ; п—áя бумáга.

II. **Простó‖й** ա. 1, սահմանած ժամանակից աւելի մնալը. п. постоя́льца; заплати́ть извóзчику за п. կառապանին աւել սպասելու համար վճարել. 2, պարապ, առանց վարձի մընալը. անգործութիւն, պարապութիւն. п. дóма տան պարապ, առանց վարձի մնալը. п. рабóчихъ բանւորների պարապութիւն, անգործութիւն. п. вагóновъ երկթղ. երկաթուղու վագոնների դադար, չգործածութիւն. **-йный** ած. աւել մնալու, սպասելու համար վճարած. п—ыя дéньги.

Простоквáша ի. պռօստօկվաշա, թըթուեցրած կաթ (մածուն առանց մակարդի, ‘մէրանի’, ինքն իրան մակարդուած, ‘մէրուած’)։

Простолю‖ди́нка ի. ստոր դասակարգից կին, կինարմատ. **-ди́нство** չ, ամբոխ, ստորին դասակարգ, ստորին խաւ (մարդկանց). **-ди́нъ** ա. ռամիկ, ստոր դասակարգից մարդ, ամբոխական. **-діе** տ. Простолюди́нство; **-дный** տ. Простонарóдный.

Простонарó‖діе տ. Простонарóдье; **-дно** մ. ռամկաբար. **-дный** ած. ռամկական.

п—ое слово; п—ые обычаи; **-дье** չ. ռամիկ ժողովուրդ, ամբոխ։

Простонать չ. 1, հառաչել, հեծել, ախ քաշել. онъ ещё разъ п—налъ и скончался; 2, հառաչել, հեծել, ախ քաշել, անքանքալ (որոշ ժամանակ)։

Просторабочій, аго ա. հասարակ բանուոր։

Просто́‖рно մ. լայն, ընդարձակօրէն. онъ живётъ п. նա մեծ, ընդարձակ բնակարան ունի. փխբ. въ це́ркви было п. եկեղեցում քիչ ժողովուրդ կար, պարապ տեղ շատ կար. **-рность** ի. լայնութիւն, ընդարձակութիւն. **-рный** ած. լայն, արձակ, ընդարձակ. п—ое пла́тье; п—ые сапоги́; п—ая кварти́ра; **-ръ** ա. լայնութիւն, ընդարձակութիւն, լայն, ընդարձակ տեղ, տարածութիւն։

Просторѣчіе չ. ժողովրդաբարբառ. պարզ, ռամկական լեզու, բարբառ։

Простосерде́‖чіе չ. **-чность** ի. պարզասրտութիւն, անկեղծութիւն. **-чно** մ. պարզասրտութեամբ, անկեղծօրէն. **-чный** ած. պարզասիրտ, անկեղծ։

Просто‖та́ ի. 1, պարզութիւն, անկեղծութիւն. 2, պարզութիւն, խստակնութիւն. п. нра́вовъ; 3, պարզամտութիւն, միամտութիւն, ցանցառութիւն. **-фи́ля** հոր. պարզամիտ, միամիտ, ցանցառ մարդ։

Простоя́ть (-стою -я́тъ; -сто́й) տ. [Проста́ивать.

Простра́н‖но մ. ընդարձակօրէն. պարագայօրէն, հանգամանօրէն, մանրամասնաբար. **-ность** ի. լայնութիւն, ընդարձակութիւն. մանրամասնութիւն. **-ный** ած. 1, լայն, ընդարձակ, լայնածիր, լայնատարած, լայնածաւալ. п—ое по́ле; п—ое мѣ́сто; п—ое госуда́рство; 2, ընդարձակ, մանրամասն. п—ая рѣчь; п. разска́зъ; **-ство** չ. տարածութիւն. про́йденное п.; глубо́кое споко́йствіе цари́тъ въ возду́шномъ п—ѣ; пусто́е п.; п. ме́жду зда́ніемъ и огра́дою; **-ствовать** (-вую -ютъ) չ. մի քանի ժամանակ պանդխտել, պանդխտութիւն անել, ճանապարհորդել։

Простра́ція ի. (լտ.) շոքելը, շոքում, ծնրադրութիւն. ուժասպառութիւն, ուժասպառութիւն։

Простра́чи‖ваніе չ. կարելը, մեքենակարելը. **-вать**, прострочи́ть ն. կարել, մեքենակարել։

Про‖стрига́ніе չ. մէջէմէջ խուզելը. **-стрига́ть, -стри́чь** (-игу́ -жёшь -гу́тъ; անց. -и́гъ -гла, о; -ги́) ն. մէջէմէջ խուզել (մազերը)։

Про‖стро́ивать, -стро́ить (-ро́ю -ятъ) ն. 1, շինելու, կառուցանելու վերայ ծախսել, 'մսխել' (դրամ). 2, շինելով, կառուցանելով անցկացնել (որոշ ժամանակ). **-ся** անդր. շինութիւնների վերայ, շարունակ շինութիւններ շինելով սնանկանալ։ [стра́чивать.

Прострочи́ть (-очу́ -чатъ) տ. Про-

Простру́ տ. Простере́ть.

Прострѣ́‖ливаніе չ. գնդակով ծակելը. **-ливать, -ли́ть** (-лю́ -лятъ) ն. գնդակով ծակել. **-лина** ի. գնդակից ծակուած տեղ, ծակ, անցք. **-лъ** ա. 1, տ. Прострѣли́на; 2, բս. ա, Aconitum, պղպեղան, ընձախոտ (բէշ). բ, Pulsatilla vulgaris, զարկաշ կմ մանուշակագոյն փեննա. գ, Nuphar luteum, դեղին կոկոռ։

Простря́пать ն. մի քանի ժամանակ խոհարարութիւն անել, կերակուր պատրաստել։

Просту́‖да ի. ցրտառութիւն, ցրտահարութիւն, մրսածութիւն, մրսելուց առաջացած հիւանդութիւն, տկարութիւն. **-ди́ть** (-жу́ -у́дятъ; -ди́), **ся** տ. Простужа́ть, ся; **-дливый** ած. մրսկան, ցրտառու, շուտով մըրսող, մրսելուց հիւանդացող. **-дный** ած. ցըրտառութեան, ցրտահարութեան, մրսելուց, ցըրտառութիւնից առաջացած. **-жа́ніе** չ. 1, հովացնելը, պաղեցնելը. 2, մրսեցնելը. **-жа́ть**, -ди́ть ն. 1, հովացնել, պաղեցնել. 2, մրսեցնել. **-ся** անդր. 1, հովանալ, պաղիլ. 2, մրսել, մրսելուց, ցրտից, ցրտառութիւնից հիւանդանալ. **-живать, ся** տ. Простужа́ть, ся.

Просту‖па́ть, -пи́ть (-плю́ -у́пятъ; -пи́) չ. 1, միջից անցնել. 2, երեւալ, յայտնուել. ви́дишь, какъ на его́ лбу проступа́ютъ кру́пныя ка́пли по́та? **-ся** չ. սխալ քայլ անել, քայլելիս սխալուել, վրիպել. **-покъ**, пка ա. սխալ քայլ, յանցանք, մեղանչում, պարտազանցութիւն։ [խել, զարնել, ծեծել։

Простуча́ть չ. մի քանի ժամանակ բա-

Просту́шка ի. 1, պարզամիտ կին, աղջիկ. 2, միամիտ, պարզասիրտ կին, աղջիկ։

Просты‖ва́ніе չ. սառչելը, պաղելը, ուծանալը. **-ва́ть**, -(ы́)нуть, -(ы́)ть չ. սառչիլ, ուծանալ, պաղիլ (եւ փոխբ.). супъ п—ва́етъ; *любо́вь п—сты́ла; *усе́рдіе п—сты́ло; *и слѣдъ п—сты́лъ անհետ է եղել, 'հետն ու թողը' չկայ. **-лый** էյ. ած. սառած, ուծացած, պաղած։

Просты́нный ած. սաւանի, 'չարսաւի'։

Просты́нуть տ. Простыва́ть.

I. **Просты‖ня́** ի. **-нька** նւզ. սաւան, 'չարսաւ' (անկողնի)։ [ду́шіе.

II. **Просты́ня** ի. եկ. ու. տ. Просто-

Просты́ть (-сты́ну -нутъ) տ. Простыва́ть.

Простѣ́‖нокъ, нка ա. **-ночекъ**, чка նւզ. 1, միջապատ. 2, պատի միջամաս (երկու պատուհանների միջև գտնուող). **-ночный** ած. միջապատի. պատի միջամասի. п—ое зе́ркало երկու պատուհանների մէջ պատից կախած հայելի։

Прос‖тя́къ, а́ ա. **-тячо́къ**, чка́ նւզ. միամիտ, պարզամիտ, ցանցառ մարդ. прики́дываться п—ко́мъ անմեղ, միամիտ ձեւանալ։

Просуди́ть (-жу́ -у́дятъ) տ. Просу́живать; **-ся** անդր. դատական գործ վարել, դանդաղ ունենալ (որոշ ժամանակ)։

Просуети́ться (-чу́сь -тя́тся) անդր. մի քանի ժամանակ այս կողմ այն կողմ ընկնել, անհանգիստ լինել, անհանգստանալ։

Просу́‖живать, -ди́ть ն. որոշ ժամանակամիջոցում դատել, քննել, վերջացնել (գործը, դանդաղը)։

Просу́нуть, ся տ. Просо́вывать, ся.

Просутя́жить (-жу -жатъ) ն. դատական գործի վերայ, դատ վարելով ծախսել, վատնել։

Просучи́ть (-чу́ -чатъ) ն. որոշ ժամանակ ոլորել, ոլորելով անցնել, անցկացնել։

Просу́||шиваніе չ. բոլորովին ցամաքեցնելը, չորացնելը. **-шивать, -ши́ть** (-шу́ -шатъ) ն. բոլորովին ցամաքեցնել, չորացնել. **-шка** ի. բոլորովին ցամաքեցնելը, չորացնելը։

Просфо||ра́ ի. (յն.), **-рочка** նւզ. նշխար (սուրբ պատարագի). **-рный** ած. նշխարի, -րային։

Про||счи́тываніе չ. 1, թուելը, հաշուելը, համարելը. 2, սխալուելը (հաշուելիս). **-счи́тывать, -счита́ть** ն. 1, թուել, հաշուել, համարել. 2, և **-ся** անդր. հաշուի, համարի մէջ սխալուել, սխալ անել։

Про||сыпа́ніе չ. 1, շաղ տալը, թափելը. 2, զարթնելը, արթնանալը. I. **-сыпа́ть, -сы́пать** ն. շաղ տալ, թափել. п. соль на ска́терть; **-ся** անդր. ցրուել, թափուել. II. **-сыпа́ть**, -спа́ть 1, չ. քնել (որոշ ժամանակ). я проспа́лъ до обѣ́да; 2, քնելով չըհասնել, բաց թողնել. п—спа́ть заўтреню; 3, քնելով, քնի միջոցու անցկացնել. п. хмель քնելով գինովութիւնից ազատուել. **-сыпа́ть-ся** անդր. 1, (-спа́ться) քնելով անցկացնել. [գինովութիւնից] ազատուել. 2, (-сну́ться) զարթնել, արթնանալ. **-сы́пъ** ա. 1, զարթնելը, արթնանալը. спать безъ п—у; спать, проспа́ть всю ночь безъ п—у; 2, քնելով անցկացնելը (գինովութիւնը). онъ п—у не зна́етъ նորա գինովութիւնը չէ անցնում, նա միշտ հարբած է։

Про||сыха́ть, -со́хнуть չ. չորանալ, ցամաքել (բոլորովին)։

Про́сь||ба ի. խնդիր(ք). я къ вамъ съ п—ой կամ у меня́ къ вамъ п. ես ձեզ մօտ խնդիր ունեմ. онъ сдѣ́лалъ э́то по мое́й п—ѣ նա այդ արաւ իմ խնդրով. обрати́ться къ кому́ съ п—ой; испо́лнить чью́-либо п—у; пода́ть п—у խնդիր տալ. п. о поми́лованіи թողութեան խնդիր. **-бица** ի. թեթև, փոքրիկ խնդիր։

Про||сѣва́льный ած. մաղող, -ղելու, խարբալող, -լելու. **-сѣва́ніе** չ. մաղում, -ղելը, խարբալում, -լելը, ‘խալխալում‘, -լելը‘. **-сѣва́ть, -сѣ́ять** ն. մաղել, խարբալել, ‘խալխալել‘. п. че́резъ рѣшето́: **-сѣ́вка** ի. տ. Просѣва́ніе; **-сѣ́вочный** տ. Просѣва́льный.

Про||сѣда́ть, -сѣ́сть չ. անցնել (միջից). ծլել, դուրս գալ. **-сѣ́дина** ի. 1, պատառուածք, ճեղք, պատառուած, ճարուած տեղ (մորթի). 2, տ. Про́сѣдь; **-сѣ́дный** ած. պատառուածքի, ճաքի։

Про́сѣдь ի. մազամէջ սպիտակացած, ճերմակացած մազեր. у него́ борода́ съ п—ью նորա մօրուքը մազամէջ սպիտակել է, նորա մօրուքը ‘հատ է ընկել‘։

Просѣи||ваніе, -вать տ. Просѣва́ніе, -ва́ть.

Про́||сѣка ի. անտառում [ծառերը կտրելով] բացած տեղ, ճամբայ. **-сѣка́ніе** չ. կտրելը, կտրտելը. **-сѣка́ть, -сѣ́чь** ն. կտրել, կտրտել. п. про́сѣку անտառում [ծառերը կտրելով] տեղ, ճանապարհ բացել։

Просѣ́сть (-ся́ду -дутъ; անց. -сѣ́лъ -ла, -ло; հրմ. -ся́дь) տ. Просѣда́ть.

Просѣ́||чный ած. կտրած, կտրելով բացած. **-чь** (-ку́ -чёшь -ку́тъ; անց. -ѣ́къ -кла, о; -кú) տ. Просѣка́ть.

Про||сѣ́яніе տ. Просѣва́ніе; **-сѣ́ять** (-сѣ́ю -ютъ) տ. Просѣва́ть.

Просюсю́кать տ. Сюсю́кать.

Про||сяка́ніе չ. միջից կաթկթելով, ծորալով անցնելը. **-сяка́ть, -ся́кнуть** չ. միջից կաթկթելով, ծորալով անցնել։

Про||сяни́къ, а́ ա. բս. Holcus, հոլկ, մեղրախոտ. **-сяни́ца** ի. բժ. մանր, թեթև ցան (մարմնի վերայ). **-ся́нка** ի. կնդ. Emberiza miliaria, գորշ դրախտայան (երգեցիկ թռչուն սերինոսներից). **-сяно́й** ա. կորեկի(ց)։

Протаза́нъ ա. պատմ. պարտիզան (մի տեսակ կարճլիկ տէգ, որ մինչև 18-րդ դարը գործածական էր)։

Прота́||ивать, -ять 1, չ. հալուել, հալչել (տեղ-տեղ, մասամբ). 2, ն. հալել, հալեցնել. **-лина** ի. **-линка** նւզ. ձիւնից ազատուած տեղ (որի վերայ ձիւնը հալուել է)։

Про||та́лкиваніе չ. խթելով, հրնդելով քշելը, անցկացնելը. **-та́лкивать** ն. 1, (-толка́ть, -толкну́ть) խթելով, հրնդելով քշել, անցկացնել (մի բանի միջով, վերայով). 2, (-толо́чь) ծեծել, ջարդել, տրորել, լոսել, մանրել (օր. սանդի մէջ). **-ся** անդր. դուրս գալ, դուրս պրծնել (մի տեղից)։

Протанцова́ть (-цу́ю -ютъ) 1. ն. պարել, կաքաւել (սկսիցէ պար, կաքաւ). 2, չ. պարել, կաքաւել (որոշ ժամանակ)։

Прота́пли||ваніе չ. վառելը, տաքացնելը (երբեմն կամ մի փոքր). **-вать**, протопи́ть ն. վառել, տաքացնել (երբեմն կամ մի փոքր)։

Прота́пты||ваніе չ. 1, [երթևեկութեամբ] գցելը, բացելը (շաւիղ). 2, մաշելը (ոտնամանի տակի կողմը). **-вать**, протопта́ть ն. 1, [գնալով, անցուդարձ անելով] գցել, բացել (շաւիղ). 2, մաշել, քքքել (ոտնամանի տակի կողմը)։

Про||та́ривать, -тори́ть ն. հարթել, ծեծել (ճանապարհը)։

Про||таска́ть ն. մի քանի ժամանակ տանել կամ քարշել, քարշ տալ. **-ся** անդր. քարշ գալ, թրև գալ. **-та́скиваніе** չ. քաշելը, քարշելը, թրև տալը (միջով, միջից). **-та́скивать**, -тащи́ть ն. քաշել, քարշել, թրև տալ, թրև ածել (միջից, միջով). **-ся** անդր. զոռով, հազիւ հազ քարշ գալ, թրև գալ։

Протасова́ть (-су́ю -ютъ) ն. 1, լաւ, բաց հարկին խառնել (թուղթը). 2, թուղթ խառնելով անցկացնել (որոշ ժամանակ)։

Про||та́чиваніе չ. ուտելով, կրծելով ծակելը. I. **-та́чивать**, -точи́ть ն. 1, ուտելով, կրծելով ծակել. 2, սրել. յեսանել, սրելով, յեսանելով անցկացնել (որոշ ժամանակ). II. **-та́чивать**, -тача́ть 1, թելդակարել, ծայրակարել, եզրակարել (երկու կտորների եզրերը, թելը եզերքի վերայով անցկացնելով). 2, թելդակարելով անցկացնել (որոշ ժամանակ)։

Протащи́ть (-щу́ -щатъ), **ся** տ. Прота́скивать, ся.

Прота́ять (-та́ю -ют

Протве́р||живать

ն. կրկնել, սերտել (դա

Проте||же́ ա.

‘չրաղ արած‘. пр

свои́мъ п.; **-жи́р**

-ւորում, ‘չրաղ ան

-ютъ) ն. кому́ մէկին հովանաւորել, 'չրաղ անել': [ա. քիմ. պրոտէին։

Протеи́н‖овый ած. պրոտէինի. **-нъ**

Протéй ա. կնդ. Proteus anguineus, պլօտևս։

Про‖текáніе չ. հոսելը, անցնելը (միջից, միջով). **-текáть**, -тéчь չ. **1**, հոսել, անցնել (միջով, միջից). вода́ протекáетъ чéрезъ подзéмную трубу́; рѣка́ протекáетъ чéрезъ гóродъ; врéмя бы́стро протекло́ ժամանակն արագ անցաւ. **2**, ծծել. бумáга протекáетъ; **3**, տանել, իր միջից [ջուրը] անցկացնել. лóдка протекáетъ.

Проте‖кторáтъ ա. (լտ.) պրոտէկտորատ, թևարկութիւն. **-кторскій** ած. պրոտէկտորական. **-кторъ** ա. (լտ.) պրոտէկտոր, թևարկող, թևարկու. **-кціони́змъ** ա. հովանաւորողութիւն (ազգային տնտեսութեան), տնտեսական հովանաւորող քաղաքագիտութիւն. **-кціони́стъ** ա. պրոտէկցիոնիստ, ազգային տնտեսութիւնը հովանաւորող քաղաքագէտ. **-кція** է. (լտ.) հովանաւորութիւն. онъ всѣмъ обя́занъ п—іи, а не свои́мъ достóинствамъ նա ամէն բան ձեռք է բերել [ուրիշների] հովանաւորութեամբ և ոչ թէ իր արժանիքներով։

Про‖тéкшій ած. անցած, գնացած (ժամանակի մասին). **-тёкъ** ա. խոնաւանալը, թացուիլը (պարանքների)։ [фи́ровать.

Протелеграфи́ровать տ. Телегра-

Протерé‖бливать, -би́ть (-блю́ -éбятъ) ն. փետել (տեղ տեղ), փետտել։

Протерéть (-тру́ -ру́тъ; անց. -тёръ -рла, о; -три́), **ся** տ. Протирáть, ся.

Протерпѣ́ть (-плю́ -éрпятъ) չ. մի քանի ժամանակ տանել, համբերել, դիմանալ։

Протесáть (-шу́ -éшутъ) տ. Протёсывать.

Проте‖станти́змъ ա. (լտ.) բողոքականութիւն. **-стáнтка** է. բողոքականուհի. **-стáнтскій** ած. բողոքական. **-стáнтство** չ. տ. Протестанти́змъ; **-стáнтъ** ա. (լտ.) բողոքական. **-стáція** է. (լտ.), **-стовáніе** չ. բողոքելը, բողոքում. п. вéкселя մուրհակը պրոտեստելը. **-стовáть** (-ту́ю -ютъ) **1**, չ. բողոքել, բողոք բարձրացնել. п. прóтивъ рѣшéнія; **2**. ն. вéксель վճռկ. մուրհակը պրոտեստել. **-(é)стъ** ա. (լտ.) բողոք. п. вéкселя վճռկ. մուրհակի պրոտեստում։ [կել։

Про‖тёсывать, -тесáть ն. տաշել, կո-

Протéчь (-теку́ -чёшь -ку́тъ; անց. -тёкъ -клá, ó; -ки́) տ. Протекáть.

Прóтивень, вня ա. (գերմ.) տապակարան, 'թավա' (բառանկիւնի երկաթէ թերթից)։

Про‖тиви́тельный ած. ընդդիմանող, հակառակող, հակառակութեան. п. союзъ քերկ. ...ն չաղկապ. **-ти́виться** (-влюсь ... восп—, ...ւր. ընդդիմանալ, ... Գաթ անել'. кто мóжетъ ... óбщему желáнію; п. ... си́лами п. чему́-либо; ...ութիւն, հակառակու- ...**ти́вница** է. հակա- ...ն. имѣ́ть дѣ́ло съ ... **-ти́внически́й**,

-ти́вничій, ья, ье ած. հակառակորդի, ախոյեանի[ն յատուկ, պատկանող]. **-ти́вно** մ. **1**, հակառակութեամբ. э́то п. чéсти այդ պատուի դէմ է. **2**, զզուելի կերպով. мнѣ п. смотрѣ́ть на э́то ինձ համար զզուելի է դորա վերայ նայել. **-ти́вность** է. **1**, հակառակութիւն, ներհակութիւն. въ п. закóну հակառակ, ընդդէմ օրէնքի. **2**, հակառակութիւն, հակառակասիրութիւն, ընդդիմութիւն. **3**, զզուելիութիւն. **-ти́вный** ած. **1**, հակառակ, ներհակ, ընդդէմ. п. вѣ́теръ; посту́покъ п. здрáвому разсу́дку; въ п—омъ слу́чаѣ հակառակ դէպքում. вы сдѣ́лаете э́то, въ п—омъ слу́чаѣ вы бу́дете накáзаны; п—ое мнѣ́ніе; п—ая сторона́ հակառակ կողմ. **2**, զզուելի, ատելի, գարշելի, նողկալի, զազրալի, պժգալի. п. человѣ́къ; э́тотъ человѣ́къ проти́венъ мнѣ; онъ проти́венъ Бóгу и лю́дямъ; п—ая физіонóмія; п—ое лѣкáрство զազրալի, սիրտ խառնեցնող դեղ. п. вкусъ, зáпахъ զզուելի, գարշելի համ, հոտ։

Противобóр‖никъ ա. **-ница** է. ընդդիմամարտ, հակառակամարտ այր, կին. **-ный** ած. հակառակող, -կութեան. **-ствіе, -ство, -ствованіе** չ. ընդդիմամարտութիւն, հակառակամարտութիւն, ընդդիմադրութիւն. **-ствователь, -ствовательница** տ. Противобóрникъ, -ница; **-ствовать** (-вую -ютъ) չ. кому́, чему́ մէկին, մի բանի ընդդիմանալ, ընդդիմադրել, հակառակել, մէկի, մի բանի դէմ կռուել, մաքառել։

Противо‖воспали́тельный ած. բժ. բորբոքումը, տաքը խափանող, արգելող. **-гни́лостный** ած. բժ. հականեխական, նեխումը, փտումը խափանող, արգելող։

Противодѣй‖ственный ած. հականերգործող, -ծական, հակառակ ներգործող, ազդող. **-ствіе** չ. հականերգործում, -ծութիւն, հակառակ ներգործութիւն, ընդդիմադրութիւն. оказáть п. դիմադրել, ընդդիմանալ, ընդդիմադրել, հակառակել. **-ствовать** (-вую -ютъ) ն. հակառակ գործել, հակառակ ներգործել, ընդդիմանալ, դիմադրել, ընդդիմադրել. **-ствующій** բյ. ած. հականերգործական, հակառակ ներգործող, հակառակ. п—ая си́ла; п—ее срéдство.

Противозакó‖ніе չ. ապօրինութիւն, ապօրինի գործ. **-нно** մ. ապօրինաբար, հակառակ, ընդդէմ օրէնքի. **-нность** է. ապօրինութիւն, օրինազանցութիւն. **-нный** ած. ապօրինի, օրինազանց, օրէնքին հակառակ, ընդդէմ. п. посту́покъ.

Противо‖козёлокъ, лка ա. կզմխ. antitragus, յետին ունկնանկին. **-лежáщій** ած. հակադիր, հակառակ, դէմ յանդիման դրտնուող, եղող. **-лихорáдочный** ած. հակատենդային, հակաջերմախտային. **-пожáрный** ած. հակահրդեհային. п—ыя приспособлéнія; **-показáніе** չ. հակառակ ցուցում։

Противопо‖лагáніе չ. հակադրելը. տարբերելը. **-лагáть**, -ложи́ть ն. հակադրել. տարբերել. **-ложéніе** չ. հակադրութիւն. ճրտս. հակառակադրութիւն. **-ложи́ть** (-жу́ -жатъ) տ. Противополагáть; **-лóжно** մ. հակառակաբար, ներհակաբար, 'թարս'. э́то совсѣ́мъ п. այդ բոլորովին հակառակ, 'թարս'

է. **-ло́жность** է. հակադրութիւն. հակապատկեր. это двѣ п—и; **-ло́жный** ած. հակառակ, հակադիր, ներհակ. п. бе́регъ; хо́лодъ и тепло́ п—ло́жны; п—ое направле́ніе; имѣ́ть п—ые интере́сы.

Противо||поставля́ть, -поста́вить (-влю -вятъ) ն. հակադրել, դիմացը դնել, կանգնեցնել. ему́ п—ста́вили опа́снаго сопе́рника; **-рво́тный** ած. բժ. հակափսխական, փսխումն արգելող. **-рѣчи́вый** ած. հակասական, հակաճառական. **-рѣ́чить** (-чу -чатъ) չ. հակաճառել, հակասել. онъ лю́битъ п.; его́ посту́пки п—рѣ́чатъ его́ рѣча́мъ; онъ п—рѣ́читъ самъ себѣ́; это п—рѣ́читъ здра́вому смы́слу; это противорѣ́читъ положе́ніямъ меха́ники; **-рѣ́чіе** չ. հակաճառութիւն, հակասութիւն. **-ста́ть** (-ста́ну -нутъ) տ. Противостоя́ть; **-стоя́ніе** չ. 1, դիմաց, դէմ յանդիման կանգնելը, դիմակայութիւն. 2, դիմադրութիւն. **-стоя́ть** (-стою́ -я́тъ; -сто́й) չ. 1, դիմաց, դէմ յանդիման կանգնել. 2, դիմադրել. **-су́дорожный** ած. բժ. ցնցումը, ջղաձգութիւնը մեղմող, արգելող. **-цынго́тный** ած. բժ. լնդացաւի դէմ գործածուող. լնդացաւը բուժող. **-чу́мный** ած. հակաժանտախտային. **-я́діе** չ. հակաթոյն, հակառակ թոյն. դեղթափ. **-я́дный** ած. թոյնի դէմ ներգործող:

Проти́ву... տ. Противо...

Противу||броди́льный ած. հակախմորիչ, խմորումը, եռացումը արգելող. **-глі́стный** բժ. որդահան, փորի որդը քշող, հանող. **-гни́лостный** ած. հականեխիչ. **-давле́ніе** չ. հակառակ ճնշում. **-есте́ственный** ած. 1, անբնական, բնութեան հակառակ. 2, գերբնական. **-зако́нный** տ. Противозако́нный; **-поло́жность** տ. Противополо́жность; **-прави́тельственный** ած. հակապետական. **-разрѣ́зъ** ա. վիրբ. հակառակ բացուածք. **-сидя́чій** ած. բս. հակադիր. п—іе ли́стья; **-я́діе** տ. Противоя́діе.

Про́тивъ նխդ. (սեռ. հոլ.) 1, դէմ, դէմ յանդիման, դիմաց. я живу́ п. це́ркви; она́ сидѣ́ла п. меня́; стоя́ть пря́мо п. свѣ́та, п. со́лнца; 2, դէմ, ընդդէմ, հակառակ. итти́ п. вѣ́тра; поста́вить что п. огня́; итти́ п. непрія́теля; поступа́ть п. со́вѣсти: онъ вооружи́лъ сы́на п. отца́; оши́бка п. грамма́тики քերականական սխալ. лѣка́рство п. лихора́дки տենդի դեղ. быть за и́ли п. предложе́нія թեր կամ դէմ լինել առաջարկութեան. 3, համեմատութեամբ, համեմատելով, բաղդատութեամբ, -տելով. болѣ́знь ва́ша п. его́ болѣ́зни ничего́ не зна́читъ.

Проти́вящійся ած. հակառակուող, դիմադրող, ընդդիմանող. п. во́лѣ госуда́ря.

Про||тира́ніе չ. 1, շփելով ծակելը. 2, ճնշելով անցկացնելը (միջից). 3, շփելով սրբելը, մաքրելը (պատուհանները). **-тира́ть, -тере́ть** ն. 1, շփելով ծակել, մաշել (օր. ոտնամանը). 2, ճնշելով անցկացնել (միջից). 3, շփելով սրբել, մաքրել. п. глаза́ աչքերը տրորել, 'աղաղել' (քնից յետոյ). *п. глаза́ деньгамъ դրամը վատնել, ռամիկ 'գլխին քար դնել'. п. кому́ бока́ մէկի կողքերը ջարդել. **-ся** անդր. 1, ծակուել, մաշուել (շփուելուց). это пла́тье протёрлось; 2, զօռով անցնել. 3, խորամանկութեամբ ներս մտնել, աշխատել մի բան ձեռք բերել. **-ти́рка** է. 1, տ. Протира́ніе; 2, մի բան սրբելու փալաս:

Проти́||скиваніе չ. խթելով ճեղքելը, պատռելը. **-скивать, -ска́ть, -сну́ть** ն. խթելով ծակել, պատռել. **-ся** անդր. զօռով անցնել (ամբոխը պատռելով, ճեղքելով).

Про||тка́ть (-тку́ -тчёшь -тку́тъ) տ. Протыка́ть 2; **-ткну́ть** տ. Протыка́ть 1.

Про||тлѣва́ть, -тлѣ́ть չ. 1, այրուել, փչանալ. 2, փտել, հոտել, ապականուել:

Протодіа́ко||нскій ած. աւագ սարկաւագի. **-нство** չ. աւագ սարկաւագութիւն. **-нъ** ա. (յն.) աւագ սարկաւագ:

Протоіере́й|| ա. (յն.) աւագ երէց, աւագ քահանայ. **-скій** ած. աւագ երիցի, աւագ քահանայի. **-ство** չ. աւագ երիցութիւն, աւագ քահանայութիւն:

Протоко||ли́стъ ա. պրոտոկոլիստ, արձանագիր. **-лъ** ա. (ֆր.) պրոտոկոլ, արձանագրութիւն. внесе́ніе въ п. արձանագրութեան մէջ մտցնելը. составле́ніе должностны́ми ли́цами п—овъ объ извѣ́стномъ фа́ктѣ; **-льный** ած. պրոտոկոլի, -լային, արձանագրութեան:

Прото́къ ա. 1, հաղորդակցող (երկու ջրամբարներ միմեանց հետ միացնող) գետ, գետակ. 2, կզմխ. անցք, խողովակ:

Прото||лка́ть, ся, -лкну́ть, ся տ. Прота́лкивать, ся 1.

Протолкова́ть (-ку́ю -ютъ) չ. о чёмъ մի քանի ժամանակ որ և է բանի մասին խօսել, դատել:

Протоло́чь (-лку́ -лчёшь -лку́тъ; անց. -ло́къ -лкла́, -лкло́; -лки́) տ. Прота́лкивать 2.

Протоми́ть (-млю́ -мя́тъ; -ми́) ն. մի քանի ժամանակ չարչարել, նեղացնել, սպասել տալ. **-ся** անդր. մի քանի ժամանակ չարչարուել, նեղանալ, տառապել:

Протопи́ть (-плю́ -о́пятъ; -пи́) տ. Прота́пливать.

Протопла́з||ма է. (յն.) բնագ. նախանիւթ. **-мовый** ած. նախանիւթի, -թային:

Прото||по́пица է. աւագ քահանայի կին. **-по́пскій** ած. աւագ քահանայի. **-по́пъ** ա. (յն.). **-пресви́теръ** (յն.) տ. Протоіере́й.

Протопта́ть (-пчу́ -о́пчутъ; -пчи́) տ. Прота́птывать.

Протор||га́ться, -гнуться չ. պատռել, փչել. կորել:

Протор||го́вывать, -гова́ть (-гу́ю -ютъ) 1, չ. մի քանի ժամանակ առուտուր, վաճառականութիւն անել. 2. ն. առուտուրի մէջ վնասուել, վնաս կրել, վնաս անել. **-ся** անդր. վատ. անյաջող առուտուրից սնանկանալ. **-жка** է. վնաս, կորուստ, զեան (առուտուրից):

Про́то||ри է. յ. վնաս, զեան, ծախս. դատական ծախսեր. его́ присуди́ли къ упла́тѣ п—ей и убы́тковъ դատական ծախսերը նորա վերայ են դրել. **-(о́)рина** է. [շփուելուց, քսուելուց] մաշուած, ծակուած տեղ. **-ри́ть** (-рю́ -ря́тъ) տ. Прота́ривать; проторённая доро́га հարթուած, ծեծուած, նըստած ճանապարհ:

Протоскова́ть (-ку́ю -ютъ) չ. по комъ, о чёмъ մի քանի ժամանակ մէկի, մի

բանի վրայ [կմ համար] տխրել, տրտմել, վըշտանալ։

Прототи́пъ ա. (յն.) նախատիպ։

Прото́||чина ի. **-чинка** նւզ. 1, կրծելով, ուտելով ծակած տեղ, ծակ, անցք. 2, գետակ, առու. 3, գիծ շան, ձիու ճակատին. **-чи́ть** (-чу́ -ча́тъ) տ. Прота́чивать 1; **-чный** ած. հոսող, հոսան, ոչ կանգնած. п—ая вода́.

Про||тра́ва ի. 1, այրելը, արծնելը. 2, այրիչ, ուտիչ, արծնիչ նիւթ. **-трави́ть** (-влю́ -а́вятъ) տ. Протра́вливать; **-тра́вка** ի. 1, տ. Протра́вливаніе; 2, տ. Протра́вникъ; **-тра́вливаніе** չ. այրելը, արծնելը. **-тра́вливать**, -трави́ть ն. 1, այրել, արծնել. 2, ուտեցնել (անասունին), սպառել (անասունի կերը). **-тра́вникъ** ա. հրեան. թնդանօթի պզզօթու ծակը մաքրելու ասեղ, հերիւն։

Протрез||ви́ть (-влю́ -вя́тъ), **ся** տ. Протрезвля́ть, ся; **-вле́ніе** չ. 1, սթափեցնելը, զգաստացնելը. 2, սթափուելը, -փում, զգաստանալը, -տացում. **-вливать, -вля́ть**, -ви́ть ն. սթափեցնել, զգաստացնել. **-ся** անդր. սթափուել, զգաստանալ։

Протре́||пливать, -па́ть (-плю́ -е́-
плютъ; -пли́) ն. ծեծել, քըքրել (կանեփ, կըտաւ)։

Протру́ տ. Протере́ть.

Протруби́ть (-блю́ -у́бятъ) 1, չ. որոշ ժամանակ փող ածել, փողհարել. 2,* տարփողել, տարածել, ‘շաւ անել’։

Протря́||сывать, -сти́ (-су́ -су́тъ; անց. -я́съ -сла́, о́; -си́) ն. 1, մի քանի ժամանակ շարժել, թափահարել. 2, լաւ, լաւ հարկին ցնցել, թափահարել։

Про||тря́хивать, -тряхну́ть ն. թափ տալ, թափ տալով մաքրել (մուշտակ, շոր)։

Протубера́нцъ ա. (լտ.) աստղբ. գաւառանդ, քուարդ։

Протури́ть (-рю́ -ря́тъ) ն. վռնտել, խրկել, հալածել։

Про||туха́ть, -ту́хнуть չ. փտել, հոտել, նեխել, փչանալ (ձուի, ձկան մասին). **-ту́хлый** ած. փտած, հոտած, նեխած, ծթռած, փչացած. **-ту́хнуть** (անց. -ту́хъ -хла, о) տ. Протуха́ть.

Про||тыка́ніе չ. ծակելը, ծակում. **-тыка́ть** ն. 1, (-ткну́ть) ծակել, խոցել. 2, (-тка́ть) [օր. գուլպայ] գործել, գործելով անցկացնել (որոշ ժամանակ)։

Протѣ||сня́ться, -сни́ться (-ню́сь -ня́тся) անդր. զօռով, ամբոխը պատռելով, ճեղքելով անցնել, անցկենալ։

Протяга́ть ն. դատի, դատական գործի վրայ ծախսել, ‘մսխել’, վատնել. **-ся** անդր. 1, մի քանի ժամանակ դատ, դանդաղ մղել. 2, դատ, դանդաղ մղելով աղքատանալ, սնանկանալ։

Протя́||гивать, -ну́ть ն. 1, մեկնել, ձգել, տարածել, երկարացնել. п—ну́ть верёвку թօկը ձգել. п. ру́ку, но́гу — մեկնել. п. ше́ю վիզն երկարացնել. п. кому́ ру́ку մէկին ձեռք մեկնել. *п—ну́ть но́ги ոտները ձգել, մեռնել. по одёжкѣ протя́гивай но́жки (առծ.) ոտներդ վերմակիդ համեմատ մեկնիր. п. слова́ խօսքերն երկարացնել, ‘ծոր տալ’. 2, ուշացնել, յետաձգել, ձգձգել. п. дѣ́ло; **-ся** անդր. ձգուել, տարածուել. ուշանալ, ձգձգուել. это дѣ́ло протя́нется այս գործը պիտի ձըգձգուի. дурна́я пого́да протя́нется до конца́ мѣ́сяца մինչև ամսի վերջը պէտք է վատ եղանակը տևէ. **-же́ніе** չ. տարածութիւն. твёрдыя тѣла́ имѣ́ютъ три п—ія: длину́, ширину́ и высоту́; на всёмъ п—іи э́той доро́ги; на п—іи ста вёрстъ հարիւր վերստ տարածութեամբ. **-жённо** մ. ծանր, դանդաղ կերպով, երկարացնելով. **-жённость** ի. տարածականութիւն. **-жка** ի. ուշացնելը, ձգձգելը (գործը). **-жно** մ. երկարացնելով, ‘ծոր տալով’, դանդաղ կերպով. говори́ть, пѣть п.; **-жность** ի. երկարութիւն, երկարաձգութիւն, յապաղում, դանդաղութիւն. п. произноше́нія ծանր, դանդաղ արտասանութիւն, ‘ծոր տալը’. **-жный** ած. երկարանող, ուշանող, ծանր, դանդաղ, ‘ծոր տուող’. **-ну́ть, ся** տ. Протя́гивать, ся.

Проуди́ть (-жу́ -у́дятъ) ն. որոշ ժամանակ կարթով ձուկ որսալ[ով անցկացնել]։

Проу́жинать չ. ընթրել, ընթրելով անցկացնել [որոշ ժամանակ]։

Про||у́локъ, -лка, **-у́лочекъ**, -чка տ. Переу́локъ, -лочекъ.

Проу́жать ն. ռմկ. վատնել, փչացնել։

Проу́||чиваніе չ. զգաստացնելը, խելքի բերելը. **-чивать, -чи́ть** (-чу́ -чатъ) ն. 1, կրկնել, սերտել (դասը). 2, *խրատել, ըզգաստացնել, խելքի բերել. васъ на́до п—чи́ть; молодца́ п—чи́ли նորան խելքի են բերել. **-чи́ться** անդր. որոշ ժամանակ սովորել, ուսանել։

Проу́ши||на ի. **-нка** նւզ. ծակ, անցք [(տապարի, մըճի)։

Профа||на́ція ի. (լտ.) պղծում, անպատւում. **-ни́ровать** (-рую -ютъ) ն. պըղծել, անպատուել. **-нъ** ա. **-нка** ի. պրոֆան, պարզ, հասարակ, տգէտ, ռամիկ այր, կին։

Про||фессіона́льный ած. պրոֆէսիոնել, կոչման, արհեստի, ‘փէշակի’. կրթական-արուեստագիտական. п. воръ պրոֆէսիոնել գող, արհեստով գող. п—ая та́йна պաշտօնական գաղտնիք. **-фе́ссія** ի. (լտ.) գործ, արհեստ, ‘փէշակ’, կոչում։

Профе́с||сорскій ած. պրոֆէսորական, «ուսուցչապետական». **-сорство** չ. պրոֆէսորութիւն, «ուսուցչապետութիւն». **-сорша** ի. պրոֆէսորի կին, պրոֆէսորակին. **-соръ** ա. (լտ.) պրոֆէսոր, «ուսուցչապետ». **-су́ра** ի. պրոֆէսորական պաշտօն, ամբիոն։

Профила́||ктика ի. (յն.) բժ. նախազգուշացում, -շութիւն (հիւանդութեան, վարակման դէմ). **-кти́ческій** ած. բժ. նախազգուշական, հիւանդութիւնը, վարակումը խափանող։

Про́фи||ль ա. (ֆր.) պրոֆիլ, կիսադէմ, կիսապատկեր, կողապատկեր. **-льный** ած. պրոֆիլի, կիսադէմի, կիսապատկերի, կողապատկերի։

Профиль||тро́вывать, -трова́ть (-ру́ю -ютъ) ն. (ֆր.) քամել[ով մաքրել, զտել]։

Профинти́ть (-нчу́ -тя́тъ) ն. ծախսել, վատնել։

Профо́рма ի. ձևականութիւն. это для [одно́й п—ы.

Профо́||сскій ած. պրոֆոսի. **-ссъ** ա. (լտ.) հնց. պրոֆոս, զինուորական ոստիկանական պաշտօնեայ, ենթասպայ, որ հսկում էր կալանաւորների վրայ։

Про‖ха́живаніе չ. գնալը, ման գալը. **-ха́живать**, -ходи́ть չ. գնալ, քայլել, ման գալ (որոշ ժամանակ). **-ха́живаться**, -ходи́ться, -йти́сь չ. զբօսնել, ճեմել, շրջել, ման գալ. п. по алле́ѣ.

Прохва‖ти́ть (-чу́ -а́тятъ) տ. Прохва́тывать; **-тываніе** չ. ծակելը, խրելը. ընկճելը. **-тывать**, -ти́ть ն. 1, ամրապէս բռնել, ծակել, խրել (ատամները, ճիրանները). 2, փխբ. թափանցել, ջանն ընկնել, ընկճել (ցրտի մասին): [րոշ ժամանակ):

Прохвора́ть չ. հիւանդ, տկար լինել (ո-

Прохво́стъ ա. գձուծ, զզուելի մարդ, «դեսպա», անզգամ:

Прохла́‖да է. զովութիւն, հովութիւն, բարեխառնութիւն. иска́ть п—ы զով, հով, բարեխառն, լաւ օդ որոնել. **-ди́тельный** ած. զովացուցիչ, զովարար. п. напи́токъ; **-ди́ть** (-жу́ -дя́тъ), **ся** տ. Прохлажда́ть, ся; **-дно** մ. զովարար կերպով, զովացնելով. փխբ. զովարար, բարեխառն է. **-дность** տ. Прохла́да; **-дный** ած. բարեխառն, զով, հով, զովարար, զովացուցիչ. **-жа́ть**, **-жда́ть**, -ди́ть ն. բարեխառնել. թողնել որ հովանայ, սառչի. հովացնել, զովացնել. э́то питьё прохлажда́етъ; **-ся** ներգ. 1, հովանալ, զովանալ, հանգստանալ. 2, տ. Проклажа́ться; **-жда́ющій** ած. զովացուցիչ, զովարար, հովացնող. **-жде́ніе** չ. զովացնելը, հովացնելը, բարեխառնելը:

Про‖хлесну́ть տ. Прохлёстывать; **-хлеста́ть** (-хлещу́ -е́щутъ) ն. մտրակել, զարկել (ճիպոտով կամ մտրակով՝ որոշ ժամանակ). **-хлёстывать**, -хлесну́ть ն. մտրակով կամ ճիպոտով զարկելով ծակել, պատառել:

Прохлопота́ть (-очу́ -о́чутъ; -чи́) չ. մի քանի ժամանակ շարշարուել, դէս ու դէն ընկնել, հողալ: [հեկեկալ, լալ:

Прохны́кать չ. մի քանի ժամանակ

Про‖хо́децъ, дца նւզ. տ. Прохо́дъ; **-ходи́мецъ**, мца ա. տ. Пройдо́ха; **-ходи́мый** ած. անցանելի. **-ходи́ть** (-жу́ -о́дятъ; -ди́), -йти́ 1, չ, անցնել. войска́ прошли́ че́резъ го́родъ; п. по́ мосту կամրջից, կամրջով անցնել. п. по у́лицѣ; онъ прошёлъ ми́мо меня́, ми́мо мои́хъ о́конъ, въ двухъ шага́хъ отъ меня́ նա անցաւ իմ կշտով, իմ պատուհանների կշտով կամ մօտով, երկու քայլ ինձնից հեռու. п. изъ пере́дней въ гости́ную; доро́га прохо́дитъ че́резъ лѣсъ; Нева́ прошла́ Նեվան ընթացաւ (սառցից ազատուեց). э́та мо́да прошла́; вре́мя прохо́дитъ незамѣ́тно; вся его́ жизнь прохо́дитъ въ пра́здности; зима́ ско́ро пройдётъ; болѣ́знь его́ прохо́дитъ; дива́нъ не прохо́дитъ въ дверь; прошла́ моя́ мо́лодость; э́то не пройдётъ ему́ да́ромъ այդ նորան աժան չի նստի, նա դորա համար կը տուժէ. статья́ моя́ прошла́, не прошла́ че́резъ цензу́ру իմ յօդուածը գրաքննութիւնը թոյլատրեց, չթոյլատրեց. пье́са прошла́ ху́до; 2, չ. անցնել, թափանցնել. черни́ла прохо́дятъ сквозь бума́гу; свѣтъ прохо́дитъ сквозь стекло́; 3, ն. անցնել. гдѣ домъ господи́на N?—Вы его́ прошли́; п. де́сять вёрстъ пѣшко́мъ; п. исто́рію, фи́зику; п. зва́ніе, до́лжность իր պաշտօնը, պարտականութիւնը կատարել. 4, (միայն проходи́ть, որ կատարեալ ձևի բայ է) չ. գնալ, քայլել, ման գալ (որոշ ժամանակ). онъ цѣ́лый день проходи́лъ попусто́му; человѣ́къ два́ часа́ проходи́лъ за лѣка́рствомъ; **-ходи́ться** տ. Проха́живаться; **-ходно́й** ած. միջանցիկ, որի միջից կարելի է անցնել, անցկենալ. п. домъ միջանցիկ տուն (երկու փողոցի մէջ գտնուող, որով կարելի է մի փողոցից միւսն անցնել). **-хо́дъ** ա. 1, անցնելը. անց. անցք. п. во́йска զօրքի անցնելը, զօրանց. *онъ не даётъ мнѣ п—а, отъ него́ нѣтъ п—а նորա ձեռքից անցնել չէ լինում, նա ինձ դադար չէ տալիս. п. въ га́вань, въ портъ նաւահանգստի անցք. 2, կզմխ. անցք, խողովակ. слухово́й п. լսելեաց անցք. за́дній п. յետոյքի անցք. **-хожде́ніе** չ. անցնելը, անցկենալը. **-хо́жій** ած. 1, անցնող. прохо́жій, аго ա. անցորդ, անցուոր, անցուորական. 2, անցորդի, անցուորի. п. слѣдъ; **-хожу́** տ. Проходи́ть.

Прохо‖ла́живать, **-лоди́ть** (-жу́ -дя́тъ) ն. պաղեցնել, հովացնել. սառեցնել սառցնել. **-ся** ներգ. պաղիլ, հովանալ. սառչիլ. **-(о)ло́дъ** է. հովութիւն, զովութիւն:

Прохрапѣ́ть (-плю́ -пя́тъ) չ. մի քանի ժամանակ խռռալ, «խռմփալ»:

Прохрипѣ́ть (-плю́ -пя́тъ) չ. մի քանի ժամանակ խռպոտ լինել, խռպոտ ձայն ունենալ: [ղալ:

Прохрома́ть չ. մի քանի ժամանակ կա-

Процара́‖пываніе չ. ճանկռելը, ճանկռտելը, պրճոկելը. **-пывать**, **-пать** ն. ճանկռել, ճանկռտել, պրճոկել:

Процвѣ‖сти́, **-сть** (-ту́ -ту́тъ; անց. -ѣ́лъ -ла́, о́; -ти́) տ. Процвѣта́ть; **-та́ніе** չ. ծաղկելը, ծաղկում. ծաղկեալ, բարգաւաճ դրութիւն, վիճակ. **-та́ть**, -сти́, -сть չ. 1, ծաղկել. 2,* ծաղկել, բարգաւաճել. 3, (միայն процвѣсти́) որոշ ժամանակ ծաղկել. **-ту́** տ. Процвѣ́сть.

Процеду́ра է. (լտ.) 1, գործավարութիւն, գործավարութեան կարգ. դատավարութիւն, դատավարութեան կարգ. 2, երկար, երկարատև, ձգձգուող գործ:

Проце́‖нтикъ ա. նւզ. թեթև, փոքր տոկոս, «շահ». **-нтный** ած. տոկոսի, -սների, տոկոսային. п—ая бума́га տոկոսաբեր թուղթ. п—ое отноше́ніе տոկոսային յարաբերութիւն. **-нтъ** ա. (յն.) տոկոս, «շահ». дава́ть де́ньги на п. տոկոսով, «շահով» փող տալ. помѣсти́ть капита́лъ на п—ы դրամագլուխը շահեցնել. онъ берётъ по десяти́ проце́нтовъ; занима́ть за больші́е п—ы մեծ տոկոսներով [փող] փոխ առնել, պարտք վերցնել. п. съ фра́хта въ по́льзу шки́пера; э́то дѣ́ло да́ло мнѣ два́дцать п—овъ чи́стаго бары́ша; п—ы счита́ются съ тако́го-то дня.

Про‖це́ссія է. (լտ.) հանդիսաւոր գնաց., թափոր. **-це́ссъ** ա. (լտ.) պրոցէս. 1, [դատական] գործ, դատ. гражда́нскій, уголо́вный п. քաղաքացիական, քրէական գործ. затѣ́ять про́тивъ кого́ [կամ съ кѣмъ] п.

մէկի դէմ գործ, գանգատ սկսել. 2, գործի ընթացք, եղանակ, գործողութիւն. п. разложе́нія լուծման, քայքայման պռօցէս. химическій п. քիմիական պռօցէս։

Процѣ|живаніе չ. քամելը, զտելը, մաքրելը. **-живать**, -ди́ть ն. [հեղուկեղէնը օր. մաղի միջից անցկացնելով] քամել, զտել, մաքրել. **-жу** տ. Процѣди́ть.

Проча́хнуть (-ча́хъ -хла, о) չ. մի քանի ժամանակ ծիւրել, հիւծել, հալուել, մաշուել, հալումաշ լինել։

Про́чее տ. Про́чій. [ը, նշանակում։

Про́ченіе չ. ոչահելը, պարում. նշանակե-

Про|чёркивать, -черкну́ть ն. 1, քաշել (գիծ). 2, ջնջել։

Про|чеса́ть (-чешу́ -е́шутъ; -ши́) տ. Прочёсывать; **-чёска** է. 1, խնամքով սան(տ)րելը, (կտաւ) գզելը, սան(տ)րելը. 2, պինճօկելը, պատռտելը (սան(տ)րելիս)։

Проче́сть (-чту́ -чту́тъ; -чёлъ -чла́, о́; -чти́) տ. Прочи́тывать.

Про|чёсываніе չ. տ. Прочёска; **-чёсывать**, -чеса́ть ն. 1, խնամքով սան(տ)րել, (կտաւ) գզել, սան(տ)րել. 2, պինճօկել, պատառոտել (սան(տ)րելիս)։

Прочё|тный ած. սխալ հաշուած. **-тъ** ա. սխալ, թիւր հաշիւ. սխալ, վրիպակ հաշուի։

Прочи́|нивать, -ни́ть (-ню́ -ня́тъ) ն. 1, կարկատել, ուղղել. 2, որոշ ժամանակ կարկատել, ուղղելով անցկացնել։

Прочи́|стить (-щу -стятъ), **ся** տ. Прочища́ть, ся; **-стка** է. տ. Прочище́ніе.

Про|чи́тываніе տ. Прочте́ніе; **-чи́тывать, -чита́ть**, -че́сть 1, ն. կարդալ, ընթեռնուլ (ծայրէ ծայր, բոլորը), կարդալ վերջացնել. я прочита́лъ [կմ -чёлъ] его́ письмо́; я ещё не прочита́лъ э́ту кни́гу; заложи́ть въ кни́гѣ ле́нточкою, по кото́рое мѣ́сто прочи́тано ժապաւէն դնելով նշանակել գրքում այն տեղը, մինչև ուր կարդացուած է. прочита́ть гро́мко докуме́нтъ բարձրաձայն գոկումէնտը կարդալ. п. кому́ наставле́ніе մէկին խրատել, խրատներ տալ. 2, (առանց проче́сть-ի) չ. կարդալով անցկացնել (որոշ ժամանակ). онъ прочита́лъ всю ночь.

Про́чить (-чу -чатъ) ն. պահել (որոշ նպատակի համար). хоро́шія сѣмена́ про́чать для посѣ́ва; 2, что кому́ մի բան մէկին նշանակել, թողնել ուզել. онъ про́читъ всё своё состоя́ніе племя́ннику.

Прочиха́ть չ. մի քանի ժամանակ փըռնգտալ, 'փռշտալ', 'սորբ գալ'։

Про|чища́ть, -чи́стить ն. սրբել, մաքրել (օր. ծխամորճի, չիբուխի փողը, ջրի խողովակները եւն). **-ся** անդր. պարզուել (երկնքի մասին). **-чище́ніе** չ. սրբելը, մաքրելը։

Про́чій ած. ուրիշ, այլ. միւս. нѣ́которыя суда́ спасли́сь, а п—ія потону́ли — իսկ միւսները յատակ իջան. ме́жду п—имъ 'ի միջի այլոց. п—іе лю́ди այլ մարդիկ. и про́чее և այլն. и про́чее и про́чее (и пр. и пр.) և այլն և այլն. не въ примѣ́ръ п—имъ ոչ յօրինակ այլոց։

Про́ч|но մ. հաստատապէս, հաստատ, ամուր, պինդ կերպով. стро́ить п.; **-ность** է. ամրութիւն, պնդութիւն, հաստատութիւն, դիմացկունութիւն. **-ный** ած. ամուր, պինդ, հաստատուն, դիմացկուն. п. домъ; п—ая ме́бель; п—ая рабо́та; э́ти матеріи не про́чны; п. миръ հաստատուն, անվրդով խաղաղութիւն։

Про|чте́ніе չ. կարդալ[ըպրծնելը], վերջացնել[ը]. **-чту́** տ. Проче́сть.

Прочу́вствовать (-ствую -ютъ) չ. խորապէս զգալ, համակուել. глубоко́ прочу́вствованная рѣчь խիստ սրտառուչ ճառ։

Прочь մ. և ձք. հեռու, հեռի. п. отсю́да! п. отъ меня́! п. убі́йца! п. отъ меня́, сатана́! поди́ п., поди́те п. [գնա] կորիր, [գնացէք] կորէք. п. съ доро́ги հեռու ճանապարհից, ճանապարհ տուէք, տուր. п. съ глазъ мои́хъ; п. забо́ты, печа́ль հեռու, կորէք հոգսեր, տրտմութիւն. я не п. отъ э́того ես դորան հակառակ չեմ, ես պատրաստ եմ այդ անելու։ [գող'։

Проша́къ, а́ ա. աղքատ, մուրացկան, 'ու-

Прошали́ть (-лю́ -ля́тъ) չ. մի քանի ժամանակ չարութիւն, չարաճճի բաներ անել։

Прошата́ться անդր. մի քանի ժամանակ թափառել, ման գալ, քարշ գալ։

Про́шва է. ռմռձկ. 1, բոլորք, եզերք, 'զըրազ' (զգեստի). 2, զգեստի մէջ գցած նեղլիկ կտոր։

Проше́дшій ած. անցեալ, անցած. въ п—емъ году́ հերու, անցեալ տարի. въ проше́дшемъ мѣ́сяцѣ; на п—ей недѣ́лѣ անցեալ շաբաթ. п—ее вре́мя քերկ. անցեալ ժամանակ. проше́дшее, аго չ. անցեալ. п. э́того человѣ́ка говори́тъ не въ его́ по́льзу; взглядъ на проше́дшее; п—аго не вороти́шь (առծ.) անցեալն է անց։

Проше́ніе չ. 1, խնդրելը. 2, [գրաւոր] խնդիր, խնդրագիր. исково́е п. դատական պահանջի խնդրագիր. пода́ть п. на Высоча́йшее 'Имя Բարձրագոյն անունով խնդիր տալ. увольня́ться въ отста́вку по п—ію համաձայն խնդրի պաշտօնից արձակուել։

Про|шёптывать, -шепта́ть (-пчу́ -е́пчутъ; -пчи́) ն. և չ. շշնջելով ասել, քչփըչալ, փսփսալ։

Проше́ствіе չ. անցնել[պրծնել]ը, վերջանալը. по п—іи двухъ мѣ́сяцевъ, двухъ дней երկու ամսից, երկու օրից յետոյ. по п—іи го́да; по п—іи сро́ка պայմանաժամի, 'վադայի' անցնելուց յետոյ. по п—іи э́того вре́мени, до́лгаго вре́мени.

Проши|ба́ть, -би́ть (-бу́ -бу́тъ; անց. -ши́бъ -бла, о; -шиби́) ն. [զարկելով, հարուածելով] ծակել, պատռել. п. стѣ́ну ядро́мъ; п. го́лову գլուխը պատռել. *его́ слеза́ прошибла արտասուքներից նորա սիրտը մորմոքուեց. **-ся** անդր. 1, ռմկ. [ձգելիս, նետելիս] սխալուել, վրիպել, շփրցնել. 2, սխալուել, սխալ անել (խօսելիս)։

Про|шива́ніе չ. կարելը (միջից, ընդթափ). **-шива́ть**, -ши́ть ն. 1, կարել (միջից, ընդթափ). 2, մի քանի ժամանակ կարել, կար անել. **-ши́вка** է. 1, կարում, կարելը (միջից, ընդթափ). 2, զարդ, դրուագ (շապկի, կրծկալի վերայ յօրինած). п. на мани́шкѣ; **-шивно́й** ած. միջից, ընդթափ կարած. **-ши́вочка** նւզ. տ. Проши́вка.

Прошипѣть (-плю́ -пя́тъ) չ. **1**, շաչել, ՙֆշշալ՚ (օր. օձի մասին). **2**, մի քանի ժամանակ շաչել, ՙֆշշալ՚:

Прошить (-шью́ -ю́тъ; -ше́й) տ. Прошивать.

Прошко́‖ливать, -лить (-лю -лятъ) ն. [լաւ] դաս տալ, խրատել, խելքի բերել. **-ся** անդր. դաս վերցնել, խրատուել, խելքի գալ:

Про‖шлого́дній ած. հերուայ, անցեալ տարուայ. п. снѣгъ; п—ее вино́; **-(ó)шлый** ած. անցած, անցեալ:

Прошмыгну́ть չ. արագութեամբ անցնել, սլկուել:

Прошну‖ро́вываніе չ. կարելը (ընդ-թափ). **-ро́вывать, -рова́ть** (-ру́ю -ютъ) ն. [օր. գրքի թերթերի] միջից թել անցկացնել, կարել:

Прошпикова́ть (-ку́ю -ютъ) ն. խոզլրել (օր. որսի մսի մէջ խոզի խոզի կտորներ խրատել, դնել):

Проштукату́рить (-рю -рятъ) ն. մի քանի ժամանակ շտուկատուրել, ծեփել (պատը, առաստաղը ևլն):

Прошумѣть (-млю́ -мя́тъ) չ. մի քանի ժամանակ աղմկել, աղմուկ հանել, աղմուկ, ՙղալմաղալ՚ բարձրացնել:

Прошурша́ть չ. խշխշալ. «же́нское пла́тье прошурша́ло слегка́».

Про‖шу́чивать, -шути́ть (-чу́ -тятъ) ն. կատակներ, հանաքներ անելով անցկացնել. «вы всё смѣётесь да шу́тите, и прошу́тите такъ всю ва́шу жизнь».

Про‖шушу́кать ն. մի քանի ժամանակ քչփչալ, փսփսալ. **-шью́** տ. Прошить.

Про‖ща́льный ած. հրաժեշտի. п. обѣдъ; п—ые дни վերջին, ՙյետի օրեր՚ (մեծ պահքից առաջ). п—ая гра́мота եկղ. թողութեան գիր, թուղթ (մեռելին տուած). **-ща́ніе** չ. հրաժեշտ. **-ща́ть**, -сти́ть ն. ներել, թողնել. п. кому́ оби́ду մէկի հասցրած վիրաւորանքը ներել. я э́того ему́ не -щу́; э́тотъ учени́къ заслужи́лъ наказа́ніе, но учи́тель -сти́лъ его́; -сти́те мою́ откровѐнность [կմ -сти́те меня́ за открове́нность]; п. престу́пника; п. небре́жность; на́до прости́ть э́ту вину́; когда́ разъ его́ разсе́рдятъ, онъ никогда́ не -сти́тъ; онъ до́лженъ мнѣ сто рубле́й, но полови́ну я ему́ -ща́ю; я -ща́ю вамъ вашъ долгъ; п. кому́ грѣхи́; проща́й, -ща́йте մնաս, մնաք բարով, ողջ լեր, ողջ լերուք. **-ся** անդր. **1**, съ кѣмъ մէկից հրաժեշտ առնել. уѣ́хать не -сти́вшись; **2**, կր. ներուել, ներողութեան արժանի լինել. насмѣ́шка рѣ́дко -ща́ется.

Про́ще ած. և մ. բաղդտ. աւելի պարզ, աւելի հասարակ. всего́ п. [կմ п. всего́] отказа́ть ему́ ամենից լաւն այն է նորա խնդիրը մերժել:

Прощеголя́ть չ. մի քանի ժամանակ պճնամոլել, պճնամոլութիւն անել:

Прощелы́га տ. Пройдо́ха.

Проще́ніе չ. ներելը, ներում, ներողութիւն, թողութիւն. п. грѣхо́въ; проси́ть п—ія ներողութիւն խնդրել:

Про‖щи́пывать, -щипа́ть (-плю́ -и́плютъ; -пли́) ն. մէջէմէջ փետել, փետտել, պոկել, պոկոտել (օր խիտ բուսած տանկերը):

Про‖ѣда́ть, -ѣсть ն. **1**, ուտել, ուտելու վրայ ծախսել, ՙմսխել՚ (դրամը). **2**, ուտել, կրծելով ծակել. (ուտիչ նիւթերի մասին) ուտել, ծակել, մաշել. крѣ́пкая во́дка проѣда́етъ желѣ́зо; **-ся** անդր. ունեցած չունեցածն ուտել պրծնել, ուտել վերջացնել. **-ѣдина** է. **-ѣдинка** նւզ. ծակ, ծակուած տեղ (կրծելուց կամ ուտիչ նիւթերից առաջացած):

Проѣ́ду տ. Проѣ́хать.

Про‖ѣздить (-зжу -здятъ) **1**, չ. մի քանի ժամանակ շրջել (կառքով, ձիով ևլն). я цѣ́лый день -ѣ́здилъ попусто́му; **2**, ն. ծախսել, ՙմսխել՚ (կառքի, ձիու ևլն վերայ). я -ѣ́здилъ два рубля́; я -ѣ́здилъ на изво́зчиковъ бо́лѣе трёхъ рубле́й ես երեք ռուբլուց աւել կառքի փող եմ տուել. **3**, տ. Проѣзживать; **-ся** անդր. [ճանապարհորդելով, ձիու, կառքի ևլն վերայ ծախսելով] աղքատանալ, սնանկանալ. **-ѣздка** է. **1**, [մչ տռով, այլ կառքով, ձիով ևլն] անցնելը. **2**, վարժելը (ձիուն). **-ѣздно́й** ած. անցնելու[ն ծառայող]. **-ѣздомъ** ար. [ձիով, կառքով ևլն] անցնելիս, անցնելու ժամանակ, ճանապարհորդելիս. я былъ въ Москвѣ́ то́лько п.; **-ѣздъ** ա. **1**, [մչ տռով] անց, անցնելը, ճանապարհորդելը. де́ньги на п. ուղեգրամ. п. [по у́лицѣ] запрещёнъ [փողոցից] անցուղարձը արգելուած է. по э́той доро́гѣ большо́й п. այդ ճանապարհը խիստ բանուկ է. по э́той доро́гѣ нѣтъ п—у այդ ճանապարհով չէ կարելի անցնել. **2**, անցարան, անցնելու տեղ. **-ѣзжа́ніе** չ. անցնելը, ճանապարհորդելը (մչ տռով). **-ѣзжа́ть**, ѣ́хать **1**, չ. անցնել, շրջել (մչ տռով). п. въ каре́тѣ, верхо́мъ; п. че́резъ го́родъ; п. по у́лицѣ; п. по́ мосту; онъ проѣ́халъ ми́мо насъ; онъ проѣ́халъ по всей Евро́пѣ նա ամբողջ Եւրոպան շրջել, ման է եկել. проѣ́хать [կմ проѣ́хаться] по го́роду քաղաքով անցնել, քաղաքում զբօսանք կատարել. **2**, ն. անցնել (որոշ տարածութիւն). я проѣ́халъ сто вёрстъ въ день; **-ѣзживаніе** չ. հեծնելով վարժելը (ձիուն). **-ѣзживать**, -ѣзжа́ть, ·ѣздить ն. հեծնելով մարզել, վարժել, ընտելացնել (խամ ձիուն). ծեծել, նստեցնել (ճանապարհը). **-ѣзживаться** տ. Проѣ́хаться; **-ѣзжій** ած. անցնելու, անցուդարձի. п—ая доро́га անցուդարձի, բանուկ ճամբայ. проѣ́зжій, аго ա. անցուոր, անցուորական, անցորդ. **-ѣзжу** տ. Проѣ́здить.

Проѣ́сть (-ѣ́мъ -ѣ́шь -ѣ́стъ; -ѣди́мъ -ди́те -дя́тъ; անց. -ѣ́лъ -ла, о; հրմ. -ѣ́шь), **ся** տ. Проѣда́ть, ся.

Проѣ́хать (-ѣ́ду -дутъ; -ѣзжа́й) տ. Проѣзжа́ть; **-ся** չ. զբօսնել, շրջել, ման գալ (մչ տռով). п. по го́роду.

Проэкзаменова́ть (-ну́ю -ютъ) ն. քննել, հարցաքննել [պրծնել, վերջացնել]:

Проюрдо́нить (-ню -нятъ) ն. գւռկ. վատնել, փչացնել (թղթախաղում, վիզախաղում). **-ся** անդր. սնանկանալ:

Проя‖ви́ть (-влю́ -я́вятъ), **ся** տ. Проявля́ть, ся; **-вле́ніе** չ. **1**, ցոյց տալը, յայտնելը. արտայայտելը. п. ра́дости; **2**, յայտնուելը, յայտնութիւն. **-вля́ть**, -ви́ть ն. յայտնել, ցոյց տալ, արտայայտել. Богъ прояви́лъ своё всемогу́щество; п. свой ге́ній,

свою́ во́лю; онъ прояви́лъ большу́ю твёрдость; **-ся** անդր. յայտնուել, երեւալ, երեւան գալ. во́ля Бо́жія прояви́лась въ э́томъ собы́тіи; въ наро́дѣ проявля́ется всеобщее неудово́льствіе; по времена́мъ у него́ проявля́ются припа́дки сумасше́ствія; честолю́біе его́ проякля́ется во всѣхъ его́ дѣ́йствіяхъ; въ го́родѣ прояви́лись подозри́тельные лю́ди; отку́да онъ прояви́лся նա ո՞րտեղից լոյս ընկաւ. рука́ Созда́теля проявля́ется повсю́ду.

Про||я́сненіе, -я́сниваніе չ. պարզուելը (երկնքի). **-я́снивать,** -яснѣ́ть չ. **-я́сниваться,** -я́сниться անդր. պարզուել, պայծառանալ (երկնքի մասին). **-ясни́ть** (-ню́ -ня́тъ), **ся** տ. Проясня́ть, ся; **-яснѣ́ть** տ. Проя́снивать; **-ясня́ть,** -ясни́ть ն. պարզել. պարզաբանել, մեկնել, բացատրել (մի բանի միտքը, իմաստը). вѣ́теръ проясни́лъ пого́ду—պարզեց. **-ясня́ться, -я́сниться** անդր. պարզուել, պայծառանալ. чело́ его́ проя́снилось; пого́да проя́снилась.

Пру տ. Пере́ть և Прать 2.

Пругъ ա. ձկ. սւ. մարախ, մորեխ։

Пру́||дикъ ա. նւզ. լճակ, պստիկ աւազան. **-ди́ть** (-жу́ -дя́тъ), запр—, ն. կապել, կանգնեցնել (ջուրը, առաջը պատ, ամբարտակ քաշելով). э́тимъ хоть прудъ пруди́ այդ անթիւ անհամար է, դորան թիւ, համար չկայ, այդ հազարներով է հաշւում. **-дово́й** ած. լճակի. աւազանի. **-дъ** ա. լճակ, աւազան։

Пружи́||на ի. 1, զսպանակ. ‹ձգալար›. 2,* պատճառ, շարժառիթ. ղեկավար. *онъ былъ гла́вною п—ою въ э́томъ дѣ́лѣ; **-нить** (-ню -нятъ) չ. առաձգական լինել. наклонённый сучо́къ пружи́нитъ կորացրած շիւղըն առաձգական է. **-ника** նւզ. տ. Пружи́на; **-нный** ած. զսպանակի. **-ночка** նւզ. տ. Пружи́на.

Пру||са́къ, а́ ա. **-сачо́къ,** чка́ նւզ. կնդ. Blatta germanica, գերմանական խաւարասէր [միջատ]։

Пру́сикъ ա. կնդ. իտալական մարախ։

Прус||са́къ, а́. ա. **-са́чка** ի. պրուսացի այր, կին. **-скій** ած. պրուսական։

Пру́||тецъ, тца ա. կոկուղ ոստ կտաւատ կապելու. **-тикъ** նւզ. տ. Прутъ; **-тко́вый** ած. ձողի, ոստի, ճիպոտի ձեւով. п—ая сталь պողպատի ձող. п—ая ры́ба ճեղքած և չորացրած ձուկ. п—ая икра́ չմաքրած ձուազ, ձըկընկիթ. **-тня́къ,** а́ ա. մացառուտ փայտ, ոստ, ճիպոտ. մացառուտ անտառ. **-то́къ,** тка́ նւզ. տ. Прутъ; **-тъ** ա. (յ. пру́тья, ьевъ) 1, ոստ (առանց տերեւների), բարակ գաւազան, ճիպոտ. 2, մետաղեայ ձող, ձողիկ. **-тяно́й** ած. ոստերի, ճիպոտների[ց շինած, պատրաստած]։

Пры́||ганіе չ. թռչելը, թռչկոտելը, ոստնում. **-гать, -гивать, -гнуть** չ. թռչել, թռչկոտել, ոստնուլ, ոստոստալ, ցատկել, ցատկոտել. **-гу́нъ,** а́ ա. 1, թռչող, թռչկոտող, ցատկող, ցատկոտող, ոստնող. 2, կնդ. Pedetes, ցատկող նապաստակ. **-гу́нья** ի. թռչող, թռչկոտող, ցատկող, ցատկոտող, ոստնող կին, աղջիկ. **-гъ** (փոխնկ пры́гнулъ) բայ. թռաւ, դը՛րմփ. разбѣжа́лся да п п. въ во́ду փախեց և դը՛րմփ ջուրն ընկաւ. **-жо́къ,** жка́ ա. թըռչում, ցատկում, ոստնում. перескочи́ть одни́мъ п—жко́мъ միանգամից թռչել, անցնել։

Пры||скалка ի. սրսկիչ [խողովակ կամ վրձին]. սրսկիչ խողովակ. **-сканіе** չ. սրսկելը, վրան ջուր ցանելը. **-скать** (-скаю -ютъ կամ -щу -щутъ), **-снуть** 1, ն. սրսկել, վրան ջուր ցանել. п. бѣльё; 2, չ. ցայտել, ժայթքել, դուրս թափուել. *пры́снуть со смѣ́ху փռթկալ, սկսել հռհռալ. **-ся** 1, անդր. սըրսկուել, իր վերայ [ջուր, հեղուկեղէն] ցանել. 2, փոխ. միմեանց սրսկել, թացել, միմեանց վերայ ջուր ցանել. **-скъ** ա. 1, տ. Пры́сканіе; 2, մի տեսակ մշտիկ ծաղիկներ ջրելու. 3, մարմարիոնակերպ յօրինուածք, նաշխ. 4, կրպլուծոյթ (յատակի ճեղքերը լցնելու). 5, ծաղիկ, առոյգ հասակ. ба́ба въ п—у́ խիստ առոյգ կին. 6, (փոխանակ пры́снулъ) բայ. շըը՛մփ, շըը՛փ. водо́ю п. ему́ въ лицо́ ջուրը շըը՛մփ նորա երեսին, ջուրը ցայտեցրեց նորա երեսին. **-снуть, ся** տ. Пры́скать, ся.

Пры́||ткій ած. արագ, արագաշարժ, սըրընթաց, դիւրաշարժ, ժիր, ճարպիկ. **-тко** մ. արագութեամբ, արագ, ժիր, ճարտար կերպով. **-ткость** ի. արագութիւն, արագաշարժութիւն, սրընթացութիւն, դիւրաշարժութիւն, ժրութիւն, ճարպկութիւն. **-тче** մ. բաղդ. աւելի արագ, աւելի ժիր կերպով. **-ть** ի. 1, արագութիւն, արագաշարժութիւն. արագ, սուր ընթացք. վազ. во всю п. խիստ արագ. скака́ть во всю п. խիստ արագ վազել, չափ գնել, սլանալ. пусти́ть ло́шадь во всю п. ձիու սանձը բոլորովին արձակել, արձակ թողնել, ձիով սաստկապէս չափ գնել. 2, ժրութիւն, ճարպկութիւն. արիութիւն, քաջութիւն. отъ него́ не ожида́ли тако́й п—и նորանից այդպիսի քաջութիւն չէին սպասում։

Пры||щева́тый ած. ելունդներով, խոցերով, շաերով ծածկուած, դուրս տուած (դէմքի մասին). **-щева́тѣть, -щевѣ́ть,** опрыщевѣ́ть չ. ելունդներով, խոցերով, շաերով ծածկուել, խոցոտիլ, դուրս տալ (դէմքի մասին). **-щене́цъ,** нца́ ա. բս. Ranunculus flammula, ճահճային հրանունկ. **-щикъ** նւզ. **-щъ,** а́ ա. բշտիկ, ելունդ, խոց, շիտ, պտիկ պալար։

Прѣ́||лость տ. Прѣль; **-лый** բյ. ած. 1, քնտնահար. 2, փտած, հոտած, փչացած. п. холстъ; **-ль** ի. 1, հոտածութիւն, փտածութիւն. 2, քրտնահար տեղ (մարմնի). **-ніе** չ. քրտնելը, քրտնահար լինելը։

Прѣ́с||ненькій ած. քաղցրաւուն. **-ново́дный** ած. քաղցր ջրի. քաղցր (գետի) ջրի մէջ եղող, պատահող. **-ность, -нота́** ի. քաղցրութիւն (ջրի). **-ный** ած. 1, քաղցր (ջրի մասին). 2, անխմոր, բաղարջ (հաց). **-ня́къ,** а́ ա. ռմկ. բաղարջ, անխմոր հաց։

Прѣть չ. 1, (взопр—) քրտնել (վազելիս, աշխատելիս, բաղանիքում). окно́, стѣна́ прѣ́етъ պատուհանը, պատը խոնաւութիւնից քրտնում է. 2, քրտնահարիլ, քրտնքից կարմրիլ, խաշուիլ, գրգռուիլ (մարթի մասին). 3, (сопр—) հոտիլ, փտիլ, փչանալ. 4, (կերակրեղէնի մասին) խաշուիլ, եփուիլ։

Прюне́||левый ած. պրիւնէլեայ, -լէ. п—ыя боти́нки; **-ль** ի. (Ֆր.) պրիւնէլ (բըր-

դէ գործուած, որ գործածւում է գլխաւորապէս ատամնանիւերի վերայ):

Пря||дáть, -нуть չ. ռմկ. թռչել, թըռչկոտել, ցատկել, ցատկոտել, ոստոստել:

Пря||дéніе չ. մանելը. **-деный** ած. մանած. **-диво** չ. մանելու համար պատրաստած կտաւ. **-дíльный** ած. մանող, մանելու. п—ая мáшина; **-дíльня** ի. մանարան, մանելու գործարան. **-дíльщикъ** ա. **-дíльщица** ի. մանող այր, կին. **-дý** տ. Прясть; **-дь** ի. 1, մանած, թել, դերձան, քուղ (կտաւի, բամբակի). 2, փունջ. п. волóсъ; п. канáтная պարանաթել. **-жа** ի. թել, մանած:

Пря́||женецъ, нца ա. իւղով թխած, տապակած լաւաշ, շոթ, 'չըրասի'. **-женіе** չ. իւղով թխելը, տապակելը. **-женцовый** ած. իւղով թխած, տապակած լաւաշի, շոթի, 'չըրասու'. **-женчикъ** նւզ. տ. Пря́женецъ.

Пря́же||чка ի. պստիկ ճարմանդ, 'չափռաստ'. **-чный** ած. ճարմանդի, 'չափռաստի':

Пря́жить (-жу -жать) ն. իւղով թխել, տապակել (լաւաշ, շոթ), 'չըրասի թխել':

Пря́жка ի. ճարմանդ, 'չափռաստ', 'կեռ', 'չանղ': [խարակ, աղէկատ, լոք, 'ջահրա':

Пря́||лка ի. **-лочка** նւզ. մանելու ճա-

Пря́||менькій փղքր. տ. Прямóй; **-мéнько** փղքր. տ. Пря́мо; **-мёхонекъ**, нька, о ած. **-мёхонько** մ. խիստ ուղիղ, 'դուզ'. **-мизнá** ի. ուղղութիւն, 'դզութիւն', ուղիղ, ուղղաձիգ, 'դուզ' դրութիւն. п. тáліи ուղիղ, ուղղաձիգ իրան. **-ми́къ**, á ա. անկեղծ, պարզասիրտ մարդ. на п. տ. Напрями́къ; прямикóмъ մ. ուղիղ ճանապարհով, ուղիղ, 'դուզ'. **-минá** ի. հորիզոնական գիծ, դրութիւն. **-ми́ть** (-млю -мя́тъ), спр—, ն. ուղղել, 'դզել', 'դրստել'. **-ся** անդր. ուղղուել, 'դզուել', 'դրստուել'. **-млéніе** չ. ուղղելը, 'դըզելը', 'դրստելը'. **-мо** մ. 1, ուղիղ, ուղղակի, 'դուզ', 'դրուստ'. стоя́ть, итти́ п.; смотрѣ́ть комý п. въ глазá; я ѣ́ду п. въ Пари́жъ; я пришёлъ п. и́зъ дому; э́то относи́тся п. ко мнѣ; 2, ուղղակի, 'դուզ', 'դրուստ', անկեղծօրէն. я п. вы́сказалъ емý всю прáвду; поступáть п., безъ хи́тростей; 3, յիրաւի. онъ п. чéстный человѣ́къ; 4, ուղղակի, անմիջապէս. пить п. изъ буты́лки, изъ ведрá.

Прямодýш||іе չ. անկեղծութիւն. պարզութիւն, պարզասրտութիւն. **-но** մ. անկեղծօրէն, պարզաբար, պարզասրտութեամբ, 'դուզ'. **-ный** ած. անկեղծ, պարզ, պարզասիրտ, 'դուզ'. э́то п. человѣ́къ.

Прямо||жи́льный ած. ուղիղ երակներով, 'ամարներով' (տերև). **-зýбый** ած. ուղղատամ, ուղիղ ատամներով:

Прямóй ած. 1, ուղիղ, 'դուզ', 'դրուստ'. п. станъ; п—áя ли́нія; п. ýголъ ուղղանկիւնի. п—áя дорóга; п—áя кишкá կզմխ. ուղիղ աղիք. 2, անկեղծ, ճշմարիտ, պարզասիրտ, 'դուզ', 'դրուստ'. իրաւացի, արդարացի. человѣ́къ п.; п. христіани́нъ; 3, անմիջական. п. наслѣ́дникъ; п—ы́е налóги.

Прямокры́лый ած. կնդ. ուղղաթև. п—ыя насѣкóмыя ուղղաթևեր:

Прямолинéй||ность ի. ուղղագծութիւն. *անողոքութիւն. **-ный** ած. 1, ուղիղ գծի. ուղղագիծ. п—ая тригономéтрія մաթմ. հարթ եռանկիւնաչափութիւն. 2,* անողոք, անողոքելի:

Прямо||рóгій ած. ուղիղ, 'դուզ' եղջիւրներով, 'պոզերով'. **-тá** ի. ուղղութիւն, 'դզութիւն', անկեղծութիւն, ճշմարտութիւն:

Прямоугóль||никъ ա. ուղղանկիւնի. **-ный** ած. ուղղանկիւն. п. треугóльникъ.

Прямь ի. ուղղութիւն, ուղիղ գիծ:

Пря́||никъ ա. **-ничекъ**, чка նւզ. քաղցր հացեղէն, թխուածք. **-ничникъ** ա. **-ничница** ի. քաղցր հացեղէն թխող կամ վաճառող այր, կին. **-ничный** ած. քաղցր հացեղէնի, թխուածքի. **-ность** ի. 1, սաստիկ, թունդ համեմոյին համ. 2, пря́ности յ. համեմներ, համեմունք:

Пря́нуть տ. Прядáть.

Пря́ный ած. սուր, թունդ, սաստիկ համով և հոտով. տեխպ. համեմային. п—ыя корéнья համեմներ, համեմունք: [լախտ:

Пря́сельникъ ա. բս. Atractylis, ի-

Пря́||слица ի. մանելու ճախարակ, աղէկատ, լոք, 'ջահրա'. **-сло** չ. 1, ցանկի, ցանկապատի, 'չափարի' մաս (երկու բոբերի արանքում գտնուող). 2, քառակուսի (բարած, սալարկած տեղի):

Прясть (-ядý -дýтъ; -ди́) ն. մանել, (գր.) նիւթել. *п. ушáми ականջները խլշացնել (ձիերի մասին), тóнко п., дóлго ждать (դարձ.) վայ բարակ մանողին:

Пря́||таніе չ. պահելը. п. дéнегъ въ кошелёкъ; **-тать** (-я́чу -чутъ; -чь), спр— ն. պահել, ծածկել, թաքցնել, գաղել. онá пря́четъ свои́ дéньги отъ мýжа; неизвѣ́стно, гдѣ [կմ кудá] онъ пря́четъ свои́ дéньги; спр— когó մէկին պահել, թաքցնել. спр— ýзелъ подъ шинéль; спр— плáтье въ сундýкъ; спр— рýки въ кармáнѣ; **-ся** անդր. 1, պահուել, ծածկուել, թաքնուել. п. отъ когó; спр— подъ кровáть; 2, հեռանալ. **-тки**, токъ ի. յ. թաքչելուկ, 'տապանուկի'. игрáть въ п. թաքչելուկ խաղալ, 'տապանուկի տալ' կմ խաղալ:

Пря́ха ի. 1, մանող, մանուած անող կին. 2, գւռկ. տ. Пря́лка.

Пря́чу տ. Пря́тать.

Пса||лмопѣ́вецъ, вца ա. սաղմոսերգու. **-лмопѣ́ніе** չ. սաղմոսերգութիւն. **-лóмникъ** ա. սաղմոսերգու. **-лóмническій** ած. սաղմոսերգուի. **-лóмщикъ** ա. սաղմոսասաց, տիրացու. **-лóмъ**, лмá ա. (յն.) սաղմոս. **-лти́рный** ած. սաղմոսարանի. **-лти́рь** ի. 1, սաղմոսարան. 2, տաւիղ, սաղմոսարան. **-лты́рный** տ. Псалти́рный; **-лты́рь**, я́ ա. ռմկ. տ. Псалти́рь.

Псá||рный ած. շնանոցի, շնա—. п. дворъ շնանոց. **-рня** ի. շնանոց, բարականոց, տեղ որսորդական շների համար. **-рскій** ած. շընպահի, շնպանի. **-рь**, я́ ա. շնպան, շնպահ:

Псевдони́мъ ա. (յն.) կեղծանուն, կեղծանուն:

Пси չ. անհ. (յն.) պսի (եկ. սլա. այբբենի 40-րդ տառը): [շող ոջիլ:

Пси́лла ի. կնդ. Psylla, տերևալու, թըռ-

Пси́||на ի. 1, գզուելի, զարշելի շնահոտ. здѣсь пáхнетъ п—ою; 2, շան միս. **-нка**

է. բս. ա, Solanum dulcamara, կոզուկ կմ քաղցրադառն մորմ. բ, S. nigrum, սև մորմ (աղուեսու խաղող?)։

Пси‖хи́ческій ած. հոգեկան. п—ая болѣ́знь; **-хіа́трія** է. (յն.) հոգեբուժութիւն. հոգեկան հիւանդութիւնների բժշկութիւն. **-хіа́тръ** ա. (յն.) հոգեբոյժ, հոգեկան հիւանդութիւնների բժիշկ. **-хо́зъ** ա. (յն.) բժ. հոգեկան հիւանդութիւն. **-хологи́ческій** ած. հոգեբանական. **-холо́гія** է. (յն.) հոգեբանութիւն. **-холо́гъ** ա. հոգեբան։

Психро́ме́тръ ա. (յն.) տ. Влагомѣ́ръ.

Пси́ца է. քած շուն, ‘դանչըր’։

Псо́‖вина է. շան մազ. **-вый** ած. շան. п—ая охо́та որս բարակներով. поѣ́хать на п—ую охо́ту; п. охо́тникъ բարակներով որս անող, որսող. п—ая соба́ка երկարամազ դամփռ մի. **-обра́зный** ած. շան նման, շնատես, շնակերպ։

Псо́ра է. բժ. (յն.) քոր, քոս։

Псо́фія է. կնդ. Psophia, ագամի (թռչ.)։

Пта́‖ха է. թռչուն. **-шечій**, ья, ье ած. թռչնի, թռչնային. **-шечка** նւզ. տ. Пта́шка; **-шій**, ья, ье տ. Пта́шечій; **-шка** է. նւզ. թռչնիկ։

Пте‖не́цъ, нца́ ա. **-нчикъ** նւզ. ճուտ, ճուտիկ. *ճուտ, ճուտիկ (պստիկ տղայ, աղջիկ)։

Пти́ца է. թռչուն, ‘դուշ’. дворо́выя, дома́шнія п—ы ընտանի թռչուններ. пѣ́вчія, хи́щныя п—ы; перелётныя п—ы տարափոխիկ թռչուններ. *обстрѣ́ленная п. խորամանկ, ‘յետ եկած’ ամն։

Птице‖во́дство չ. թռչնաբուծութիւն. **-во́дъ** ա. թռչնաբոյծ. **-гада́ніе** չ. հաւահմայութիւն. **-гада́тель** ա. **-гада́тельница** է. հաւահարց, հաւահմայ այր, կին. **-звѣ́ри** ա. յ. կնդ. Monotremata, ցռկեղներ կմ կոյսաւոր անասուններ. **-ло́вный** ած. թռչնորսութեան, թռչուններ որսալու. **-ло́вство** չ. թռչնորսութիւն. **-ло́въ** ա. թռչնորս, հաւորս. **-млѣ́чникъ** ա. բս. Ornithogalum, հաւկաթ. **-се́рдъ** ա. բս. Anacardium, հնդիկ շագանակենի. пау́къ **-ѣдъ**, **-я́децъ**, дца ա. կնդ. Mygale avicularia, հաւորսակ կմ թռչնակեր սարդ։

Пти́‖чій, ья, ье ած. թռչնի, թռչնա—. п. дворъ հաւանոց. п—ье гнѣздо́; п. клей բս. Viscum album, սպիտակ ճագոմ (ճուշ). **-чка** է. նւզ. թռչնիկ. не вели́чка п., да посо́къ остёръ (առծ.) պստիկ ու ճստիկ. **-чникъ** ա. 1, թռչնորս, հաւորս, թռչնավաճառ, հաւավաճառ. 2, թռչնապահ, հաւապահ. 3, հաւանոց. **-чница** է. 1, թռչնորս, հաւորս կմ թռչնավաճառ, հաւավաճառ կին, աղջիկ. 2, թռչնապահ, հաւապահ կին։

Птоломе́ева систе́ма, աստղբ. Պտղոմէոսեան սիստեմ։

Птомаи́нъ ա. քիմ. պտոմային։

Пу́блика է. (լտ.) հասարակութիւն, ‘խալխ’։

Публи‖ка́ція է. (լտ.) յայտարարութիւն, ազդ, ազդարարութիւն. **-кова́ніе** չ. յայտարարում, ազդարարում. **-кова́ть** (-ку́ю -ютъ), расп—, ն. յայտարարել, ազդարարել, յայտարարութիւն տալ, հրատարակել. **-ци́стика** է. (լտ.) հրապարակախօսութիւն. **-ци́стъ** ա. հրապարակախօս. **-чно** մ. հրապարակօրէն. **-чность** է. հրապարակականութիւն, հանրականութիւն. **-чный** ած. հրապարակական, հանրական, հասարակական. п—ое гуля́нье; п—ыя увеселе́нія; продава́ть съ п—аго то́рга հրապարակային աճուրդով ծախել. п—ая же́нщина հասարակաց կին, հանրակին. п. домъ հասարակաց տուն, հանրատուն։

Пу́га է. ձուի հատ, բութ ծայրը։

Пу́‖галище, -гало չ. խրտուիլակ (թռչուններին խրտնեցնելու). поста́вить въ саду́ п.; *экое п.! ինչ գազրալի դէմք է. *она́ дурна́, какъ п. նա չատտիկ տգեղ է, զզուելի, զարշելի դէմք ունի. **-га́ніе** չ. վախեցնելը. **-ганный**, **-ганый** ած. վախեցրած, վախեցած, սիրտն ահ ընկած. **-га́ть**, -гну́ть, испуга́ть ն. վախեցնել, սիրտն ահ, երկիւղ գցել. п. дѣте́й наказа́ніемъ; вы меня́ испуга́ли э́тимъ извѣ́стіемъ; я поря́дкомъ пугну́лъ его́; **-ся** ներգ. чего́ մի բանից վախել, վախենալ. онъ всего́ пуга́ется.

Пугачёвщина է. Պուգաչովի խռովութիւնը. Պուգաչովի խռովութեան ժամանակը։

Пуга́чъ, а́ ա. կնդ. Strix bubo, բուէճ, եղջե- [րաւոր բու։

Пу́гвица տ. Пу́говица.

Пу‖гли́во մ. վախենալով, երկիւղ քաշելով. **-гли́вость** է. վախկոտութիւն, երկչոտութիւն, վեհերոտութիւն. **-гли́вый** ած. վախկոտ, երկչոտ, վեհերոտ. п—ая ло́шадь խրտնուկ ձի. **-гну́ть, ся** տ. Пуга́ть, ся.

Пу́го‖вица է. **-вичка**, **-вка**, **-вочка** նւզ. կոճակ. п—цы золоты́я, шёлковыя; **-вочникъ** ա. **-вочница** է. կոճակագործ, կոճակավաճառ այր, կին. **-вочный** ած. կոճակի, կոճակների. п. ма́стеръ.

Пу́дель ա. (գերմ.) 1, գանգրիկ շուն կմ ջրաշուն. 2, որս. սխալ հարուած, վրիպում։

Пу́дикъ ա. նւզ. մի թեթև պուդ, ‘փութ’։

Пу́дин‖говый ка́мень հնք. պուդինգաքար. **-гъ** ա. (անգլ.) 1, պուդինգ (քաղցր և թեթև կերակուր մի). 2, տ. Пу́динговый ка́мень.

Пуди́шко ա. նխտ. մի ողորմելի պուդ, [‘փութ’։

Пудо‖ви́къ, а́ ա. պուդանոց (կշիռ, կըշռաքար). **-во́й**, **-вый** ած. պուդանոց, մի պուդ քաշող, կշռող. п—а́я ги́ря պուդանոց կշռաքար։

Пу́‖дра է. (Фр.) [երեսի, մազերի] փոշի, շպար. ри́совая п. բրնձի փոշի, շպար. **-дрема́нтель** ա. շպարազգեստ, տուալետեան ըզգեստ. **-дреница** է. շպարատուփ. **-дреніе** չ. շպարելը, -րում. **-дре́тъ** ա. (Фр.) գիւղա. կղկղանաց փոշի, քակորափոշի. **-дрить** (-рю -рятъ). нап— ն. շպարել, փոշի քսել (երեսին, մազերին). *напу́дрить кому́ го́лову մէկի գլուխը լուանալ, մէկին նեղել, չչպրել. **-ся** ներգ. շպարուիլ, քսուիլ։

Пудъ, а́ ա. պուդ, ‘փութ’։

Пу‖за́нъ ա. ռմկ. **-за́нчикъ** նւզ. հաստափոր, լայնափոր մարդ. **-за́стый**, **-за́тый** հաստափոր, լայնափոր. **-зи́ще** չ. յւկլ. մեծ, ահագին, լայն փոր, որովայն. **-зо** չ. ռմկ. փոր, որովայն։

Пузы‖рева́тый ած. փամփշտանման. **-рёкъ**, рька́ ա. 1, փամփշտիկ. պղպջակուկ. բշտիկ. 2, պստիկ և կլոր ապակէ անօթ, շշիկ, դեղանօթ. **-рехво́стъ** ա. կզմխ. բըշըջի պոչ,

տղի. **-рёчекъ**, чка *նւզ.* *տ.* Пузырёкъ; **-ристый** *ած.* բշտիկաւոր, բշտիկաշատ, շատ փամփշտիկներով. **-риться** (-рюсь -рятся) *չէզ.* 1, փամփշտիկներ արձակել (օր. եռացող, 'խլխլացող' ջրի մասին). 2, ուռչել, այտնուլ. *ուռչել, փքուել. **-рище** *ա.* *յեղ.* *տ.* Пузы́рь; **-рникъ** *ա.* *բս.* *ա,* Cucubalus, պղպջախոտ. *բ,* Colutea arboresceus, ծառաձև պալթակե-նի. **-рный** *ած.* բշտիկաւոր. փամփշտի, -տա-յին. п—ое де́рево *տ.* Пузы́рникъ; **-рча́тка** *է.* *բս.* Utricularia, ջրատիկ. **-рчатый** *ած.* բշտիկաձև, փամփշտաձև. բշտիկաւոր, փամփշտաւոր. п—ая глиста́ *կնդ.* Coenurus cerebralis, ըղեղորդ. **-(ы́)рь**, я́ *ա.* 1, փամփուշտ. мочево́й п. միզափամփուշտ. жёлчный п. լեղապարկ, լեղափամփուշտ, մաղձընկալ փամփուշտ. мы́льный п. սապնի փամփուշտ կամ պղպջակ. 2, բշտիկ, ուռեցք:

Пу́|калка *է.* մանկական հրացան, 'շրխկան'. **-кать**, -кнуть *չ.* 1, տրաքել, պայթել (շխկալով, խուլ ձայն հանելով). 2, տռել:

Пу́кля *տ.* Бу́кля.

Пу́кнуть *տ.* Пу́кать.

Пу́|ковый *ած.* կապոցի. **-ковя́зъ** *ա.* կապիչ (ցախ, խոտ եւն կապելու):

Пу́колька *նւզ.* *տ.* Пу́кля.

Пукъ, а́ *ա.* (пучо́къ *նւզ.*) կապոց. փունջ, տրցակ. п. соло́мы մի խուրձ ծղոտ. п. спа́ржи մի կապոց կամ մի բուռն ծնեբեկ. пучо́къ цвѣто́въ մի փունջ ծաղիկներ. пучо́къ воло́съ մի փունջ մազեր, ծամեր. свя́зывать въ пуки́ [կապոց կապոց, խուրձ խուրձ] կապել:

Пу|лево́й *ած.* գնդակի, գնդակա—. **-леми́тня** *է.* գնդակաձուլում, -լութիւն. **-лемётъ** *ա.* հրեւոն. գնդա[կա]ցիր. **-лечка** *է.* *նւզ.* գնդակիկ, գնդակուկ:

Пульвери|за́торъ *ա.* (*ֆր.*) հեղացիր, «ցնցուղ» (գործիք, որ իւր մէջ լցրած հեղուկը ցրում, շաղ է տալիս). **-за́ція** *է.* հեղացրում, -ցրութիւն. **-зи́ровать** (-рую -ютъ) *ն.* հեղացրել, շաղ տալ (հեղուկեղէնը):

Пульзоме́тръ *ա.* (*գերմ.*) պուլսօմետր, շոգեջրհան (շոգով ջուր բարձրացնող գործիք):

Пу́лька *է.* 1, *նւզ.* պստիկ գնդակ, գնդակիկ. 2, գրած, եկած քանակութիւն (գրամախաղի մէջ). 3, *տ.* Па́ртія 4.

Пульма́новскій *ած.* երկթղ. պուլմանեան. п—іе ваго́ны պուլմանեան վագօններ (որոնք ծառայում են լոյն ննջարան, սեղանատուն և զահլիճ):

Пуль|са́ція *է.* (*լտ.*) երակազարկ, -րկութիւն. **-си́ровать** (-рую -ютъ) *չ.* (երակի մասին) զարկել, խփել, (սրտի մասին) եռալ, շնչել, պայթ դալ. **-со́вый** *ած.* երակի, երակային զարկի. **-съ** *ա.* (*լտ.*) երակ, երակի զարկ, բախիւն, երակազարկ. біе́ніе п—а երակի զարկում. щу́пать п. երակը շօշափել, երակի զարկումն, երակազարկին խնամել:

Пультъ *ա.* (*լտ.*) 1, թեք գրասեղան, ծըռասեղան. 2, գրքակալ:

Пу́ля *է.* գնդակ, 'գիւլլա' (հրացանի, ատրճանակի, բայց ոչ թնդանօթի). поражённый пу́лею գնդակահար. *отли́ть пу́лю յիմար, անճահ բան ասել, զուրս տալ:

Пуля́р|да, **-дка** *է.* **-дочка** *նւզ.* **-ка** *է.* (*լտ.*) բտած վառեկ:

Пу́ма *է.* *կնդ.* Felis concolor, պումա, կուգուար, Ամերիկայի կատուառիւծ: [во́йны.

Пуни́ческій *ած.* պունիկական. п—ія

Ультрамари́||новый ած. ծովագուարթի. **-нъ** ա. (նոր. լտ.) ծովագուարթ (թանկագին նկարչական դեղ, ներկ մի)։

Ультрамонта||ни́змъ ա. անդրալեռնականութիւն. **-нскій** ած. անդրալեռնական. **-нъ** ա. (լտ.) անդրալեռնական (ծայրայեղ պապական, կղերական, պապական շահերի ու ձգտումների չարաչար պաշտպան)։

Ультра-радика́лъ ա. (լտ.) ծայրայեղ արմատական։

Улью́ տ. Ули́ть.

Улѣ||пля́ть, -пи́ть (-плю́ -ѣпятъ) ն. կպցնել, փակցնել, մածուցանել[ով ծածկել, պատել]. у. кого́ гря́зью մէկին ցեխոտել։

Улюлю́|| ձ. որս. հայ, հույ, հէյ. **-кать** չ. որս. հայ, հույ կանչել, հարայ, հուրայ կանչել (որսին հետամուտ լինելիս)։

Уля́гусь տ. Уле́чься.

Ума́||зываніе չ. իւղելը, օծելը, քսելը. **-зывать, -зать** (-жу -жутъ; -жь) ն. 1, իւղել, օծել, քսել. 2, *անուշ խօսքերով աշխատել համոզել, ‘գլուխը եղել‘։

Ума́||ивать, -ять ն. ռմկ. նուաղեցնել, յոգնեցնել, հալից գցել. **-ся** անդր. նուաղել, յոգնել, հալից ընկնել։

Ума||ле́ніе չ. նուաղեցնելը, փոքրացնելը, պակասեցնելը. նուաղելը, -գում, պակասելը, -սում. **-лить** (лю -лятъ), **ся** տ. Умаля́ть,ся.

Умалишённый ած. և գոյ. խելագար։

Ума́лчи||ваніе չ. լռելը, չասելը. **-вать**, умолча́ть ն. о чёмъ մի բանի մասին լռել, մի բան չ՚ասել. լռութեամբ անցնել. исто́рики -ваютъ объ э́томъ собы́тіи; я умолча́лъ о сме́рти его́ сы́на; онъ хорошо́ сдѣ́лалъ; умолча́въ о томъ, что хотѣ́лъ сказа́ть; у. о подро́бностяхъ; у. о фа́ктѣ.

Ума́лывать, умоло́ть ն. աղալ։

Ума||ля́ть, -лить ն. փոքրացնել, նուաղեցնել, պակասեցնել. у. чьи досто́инства; **-ся** անդր. նուաղել, փոքրանալ, պակասել։

Ума́нъ ա. բս. Jnula, կղմուխ։

Ума́с||ливаніе չ. 1, իւղելը, օծելը. 2, *կակուղ, անուշ խօսքերով համոզելը, ‘գլուխը եղելը‘. **-ливать, -лить** (-лю -лятъ) ն. 1, իւղել, օծել. 2, *կակուղ, անուշ խօսքերով համոզել, ‘գլուխը եղել‘։

Ума́тывать, умота́ть ն. что чѣмъ մի բան միւսի մէջ կմ միւսով փաթաթել. что на что մի բան միւսի շուրջը, միւսի վերայ փաթաթել, պատատել. **-ся** անդր. մի բանի մէջ. մի բանով փաթաթուել։

Ума||ща́ть, -сти́ть (-щу́ -стя́тъ) ն. եկ. ու. օծել, իւղել (գլուխը, ոտները)։

Ума́щивать, умости́ть ն. քարել, խճել, սալարկել (փողոցը)։

Ума́||яніе չ. ռմկ. յոգնեցնելը, հալից գցելը. **-ять** (-ю -ютъ), **ся** տ. Ума́ивать,ся.

У'м||бра է. հնք. terre d'ombre, տաճիկ շքաքար (ումբրահող)։

У'мбрія է. ենդ. ombrine, ումբրին (ձուկ մի)

Умелю́ տ. Умоло́ть.

Умень||ша́емое, аго չ. թւբ. նուազելի. **-ша́ть**, -ши́ть ն. փոքրացնել, նուաղեցնել, պակասեցնել, քչացնել, կրճատել. у. кому́ жа́лованье; у. свои́ расхо́ды; у. высоту́ зда́нія; разстоя́ніе -ша́етъ предме́ты; раская́ніе -ша́етъ вину́—նուաղեցնում, մեղմացնում է. у. нало́ги; **-ся** անդր. փոքրանալ, նուաղել, պակասել, քչանալ, կրճատուել. состоя́ніе его́ всё бо́лѣе и бо́лѣе -ша́ется; у. въ вѣсѣ քաշից, կշռից կորցնել. **-ше́ніе** չ. փոքրացնելը, -ցում, նուաղեցնելը, -ցում, պակասեցնելը, -սում, քչացնելը, քչանալը. у. нало́говъ, пода́тей; у. цѣны́; у. жа́лованія; у. вины́; у. цѣ́нности иму́щества; **-ши́тельный** ած. փոքրացնող, -ցուցիչ, նուաղեցնող, -ղական. у—ое и́мя քերկ. նուաղական անուն. у—ое стекло́ փոքրացուցիչ, մանրացոյց ապակի. **-ши́ть** (-шу́ -ша́тъ); **ся** տ. Уменьша́ть, ся.

Умере́ть (умру́ -ру́тъ; անց. у́меръ -рла́, о́; յ. у́мерли; հրմ. умри́) տ. Умира́ть.

Умер||тви́ть (-щвлю́ -твя́тъ) տ. Умерщвля́ть.

Уме́ршій ը. ած. մեռած, վախճանուած. ду́ши у—ихъ; моли́тва объ у—ихъ; пла́кать, рыда́ть по у—емъ му́жѣ.

Умер||щвле́ніе չ. սպանելը, -նում, մեռ-

ցնելը, -ցնում. у. плóти; **-щвля́ть**, -тви́ть ն. սպանել, մեռցնել. грѣхъ -щвля́етъ ду́шу; у. плоть.

Уме||та́ть (-ечу́ -е́чутъ; -чи́) **-тну́ть** տ. Умётывать; **-(ё)тъ** ա. խրճիթ. իջևան, պանդուխ ճանապարհորդների համար. **-(ё)тывать**, -та́ть, -тну́ть ն. ռմկ. 1, ածել, թափել, ծածկել (օր. աւազով). 2, ածել, թափել, կիտել, դիզել. տանել, կրել:

Уми||лéніе չ. 1, յուզում. 2, զգածում. գորով. **-лённо** մ. յուզուած, յուզուելով, խանդաղատանօք. **-ли́тельно** մ. յուզիչ, սրտառուչ կերպով. э́то у. այդ յուզիչ, սրտառուչ է. **-ли́тельность** ի. խանդաղատանք, սրտառչութիւն, զգածմունք. **-ли́тельный** ած. յուզիչ, սրտառուչ, խանդաղատական. **-ли́ть** (-лю́ -ля́тъ), **ся** տ. Умиля́ть, ся.

Умилосéрдить (-ржу -дятъ) ն. кого́ մէկի գութը շարժել. **-ся** ան չ. надъ кѣмъ մէկի վերայ խղճալ, մէկին գթալ:

Умилости||ви́тельный ած. գթութեան, հաշտութեան. **-(уми́ло-)вить** (-влю -вятъ), **ся** տ. Умилостивля́ть, ся; **-влéніе** չ. գութը, ողորմութիւնը շարժելը. **-вля́ть**, -(-ил-)вить ն. кого́ մէկի գութը, ողորմութիւնը շարժել. հաշտեցնել. **-ся** ան չ. գթալ, ողորմիլ:

Уми́ль||но մ. առանձին հաճութեամբ, սրտի յուզումով, քնքշութեամբ. у. глядѣ́ть на кого́; **-ность** ի. յոյզ, յուզում, հաճութիւն, քնքշութիւն. **-ный** ած. սրտառուչ, հաճելի, հաճոյական, ցանկալի, զուրեկան, քնքոյշ, փաղաքշական. у. го́лосъ.

Уми||ля́ть, -ли́ть ն. кого́ մէկին յուզել, մէկի գութը շարժել. **-ся** ան չ. յուզուել, խղճալ:

Уми||нáніе չ. 1, լաւ, ըստ հարկին տրորելը, տափտափելը. 2, սեղմելը, սխմելը, սեղմելով, սխմելով ներս կոխելը. **-нáть**, умя́ть ն. 1, լաւ, ըստ հարկին տրորել, տափտափել. 2, սեղմել, սխմել, սեղմելով, սխմելով ներս կոխել:

Умира́ть, умерéть չ. մեռնել, վախճանուել. онъ умира́етъ, у́меръ; у. съ го́лоду; у. отъ ста́рости, отъ болѣ́зни, отъ ранъ; *у. со́ смѣ́ху; у. своéю, не своéю смéртію իւր մահով, բռնի մահով մեռնել. *у. для мíра աշխարհի համար մեռնել, աշխարհից հեռանալ:

Умиротво||рéніе չ. 1, խաղաղացնելը, հաշտեցնելը. 2, հաշտութիւն, խաղաղութիւն. **-ри́тель** ա. **-ри́тельница** ի. խաղաղարար, -ուհի, հաշտարար, -ուհի. **-ри́тельный** ած. խաղաղարար, հաշտարար, խաղաղացնող, հաշտեցնող. **-ря́ть**, -ри́ть ն. խաղաղացնել, հաշտեցնել:

Ум||и́шко ա. նւստ. յիմար միտք, խելք. **-и́ще** ա. յւնլ. մեծ, ահագին խելք, միտք. **-ненькій** ած. փղքշ. խելօք, խելացի. **-нéнько** փղքշ. տ. Умно́; **-никъ** ա. **-ница** ի. խելօք, խելացի, մտացի, հասկացող, իմաստուն այր, կին, տղայ, աղջիկ, երեխայ. **-ничáніе** չ. խելքին զոռ տալը. **-ничать** չ. խելքին զոռ տալ. прошу́ не у́.; **-но́** մ. խելացի կերպով, իմաստութեամբ. говори́ть, отвѣча́ть, писа́ть, поступа́ть у.; онъ ведётъ себя́ о́чень у.

Умно||жáть, -жить ն. բազմապատկել, բազմացնել. у. шесть на три; **-ся** ան չ. բազմապատկուել, բազմանալ. его́ семья́ о́чень умно́жилась; **-жéніе** չ. բազմապատկելը, -տկում, բազմացնելը, -ցնում. табли́ца у—ія բազմապատկման աղիւսակ. *къ -нію несча́стій; **-жи́тельный** ած. բազմապատկող, -տկելու, բազմացնող, -ցնելու. **-жить** (-жу -жатъ), **ся** տ. Умножа́ть, ся.

Умну́ տ. Умя́ть.

У́м||ный ած. խելօք. խելացի, մտացի, իմաստուն, հասկացող. у́. человѣ́къ; онъ умёнъ, о́чень умёнъ; у́—ая голова́; у́—ая соба́ка; у́—ое сочинéніе խելացի, մտացի շարադրութիւն. у́—ые глаза́; у́—ое лицо́; у́. отвѣ́тъ; у́—ая рѣчь; у́. совѣ́тъ; у́ м н ы й, аго ա. խելօք, խելացի, իմաստուն, հասկացող մարդ. **-нѣть**, поумн— չ. խելօքանալ, խելքի գալ, զգաստանալ:

Умовéніе չ. լուանալը, լուացում. у. ногъ въ вели́кій четвéргъ ոտնալուայ:

Умо||заключéніе չ. տ. Силлоги́змъ; **-зри́тельно** մ. տեսականապէս, վերացականապէս. **-зри́тельность** ի. տեսականութիւն, վերացականութիւն. **-зри́тельный** ած. տեսական, վերացական, մտաւոր. **-зрѣ́ніе** չ. տեսութիւն, տեսականութիւն, վերացականութիւն. **-изступлéніе** չ. մտամոլութիւն, մտաբախութիւն, խելացնորութիւն:

Умо||кáть, **-кнуть** չ. (անց. -къ -кла, о) թրջուել, թրմուել, ջրի մէջ կակղել, փափկել:

Умо́къ, -мка́ ա. նւզ. կարճ խելք, միտք:

Умо||ла́чивать, -лоти́ть ն. ա, լաւ, ըստ հարկին, բ, որոշ քանակութեամբ կա(լ)սել (հացահատիկ):

Умо||лéніе չ. աղաչելը, -չանք, պաղատելը, -տանք, աղերսելը, -սանք. **-ли́ть** (-лю́ -ля́тъ) տ. Умоля́ть.

Умол||кáть, **-кнуть** չ. լռել, ձայնը, սասը կտրել, 'տաղ անել'. соловéй умо́лкъ; -(у́мо́л)**къ** ա. լռելը, լռութիւն. б е з ъ-у́ м о́ л к у մ. առանց լռելու, անընդհատ, անդադար. говори́ть безъ-у́мо́лку.

Умоло||ти́ть (-чу́ -о́тятъ) տ. Умола́чивать; **-тъ** ա. կա(լ)սած հացահատիկ[ի քանակութիւն, արդիւնք]. ны́нѣшній у. хоро́шъ այժմ խուրձը շատ, առատ հատիկ է տալիս:

Умоло́ть (умелю́ -éлютъ; -ли́) տ. Ума́лывать.

Умолчá||ніе չ. լռելը, լռութիւն պահելը, չ'ասելը. **-ть** տ. Ума́лчивать.

Умо́лъ ա. 1, աղալը, աղացում. 2, աղալիս, աղալուց պակասած մաս, քանակութիւն:

Умо||ля́ть, -ли́ть ն. [кого́ о чёмъ մէկին մի բանի համար] աղաչել, պաղատել, թախանձագին խնդրել, աղերսել. у. кого́ о по́мощи, о поми́лованіи; -ля́ю васъ не дѣ́лать э́того; я не могъ -ли́ть его́ որքան էլ աղաչեցի, պաղատեցի, նա չհամոզուեց, չարաւ:

Умопомра||чáющій ած. մարդու խելագարեցնող, զարհուրելի, սոսկալի. у—ая карти́на; **-чéніе** չ. 1, թանձրամտութիւն, խենթութիւն, 'խեւութիւն'. 2, տ. Сумасшé-ствіе; **-чи́тельный** ած. յիմարական, մարդու խելագարեցնող, 'գժուեցնող', ապշեցուցիչ. *у—ая ро́скошь.

Умо||помѣшáтельство չ. խելագարութիւն, ցնորում, խելացնորութիւն. **-представлéніе** չ. մտապատկեր, գաղափար. у.,

понятіе о бѣломъ *գաղափար, հասկացողութիւն սպիտակ գոյնի մասին։*

Умо́‖ра *ի. խիստ ծաղրալի, ծիծաղից մեռցնող բան.* это просто у. *մարդ ծիծաղից մեռնում կմ թուլանում է.* смотрѣть на него у. *անկարելի է առանց ծիծաղի նորան նայել.* **-ри́тельно** *մ. խիստ ծաղրալի կերպով, ծիծաղից սպանելով.* **-ри́тельный** *ած. խիստ ծաղրալի, ծիծաղելի, ծիծաղից թուլացնող, սպանող.* **-ри́ть** (-рю́ -ря́тъ) *ն.* 1, *սպանել.* *горе уморило его; 2, у. кого́ со смѣху *մէկին ծիծաղից թուլացնել, սպանել։*

Умости́ть(-ощу́ -стя́тъ) *տ.* Ума́щивать.

Умота́ть, ся *տ.* Ума́тывать, ся.

Умо́чка *ի. թրջուելուց, թրմուելուց փոք-*

Умо́ю *տ.* Умы́ть. *[լուանալը, պակասելը։*

У'мст‖венно *մ. մտաւորապէս, իմացականապէս.* **-венный** *ած. մտքի, մտաւոր, իմացական.* у́. складъ *մտաւոր կազմ.* у́—ое движе́ніе; **-вова́ніе** *չ. մտածելը, խորհելը, փիլիսոփայութիւն անելը.* **-вова́тель** *ա. մտածող, խորհող, փիլիսոփայութիւն անող.* **-вова́ть** (-вую -ютъ) *չ. մտածել, խորհել, փիլիսոփայութիւն անել։*

Умуд‖ря́ть, -ри́ть (-рю́ -ря́тъ) *ն.* кого́ *մէկին խրատել, հրահանգել, իմաստութիւն սովորեցնել, իմաստացնել.* **-ся** *անդր. իմաստանալ, իմաստուն, հնարիմաց, ճարտարամիտ դառնալ.* **մի բան մտածել, հնարել, որևէ մտքի գալ։*

Умча́ть, ся *տ.* Мчать, ся.

Умъ, á *ա. միտք, խելք, հասկացողութիւն.* ограни́ченный у. *սահմանափակ խելք, միտք.* онъ одарёнъ высо́кимъ умо́мъ *նա մեծ խելքի տէր է, օժտուած է մեծ ձիրքերով.* обши́рный у. *մեծ խելք, բազմակողմանի մտաւոր կարողութիւն.* мнѣ пришло́ на у. *միտքս ընկաւ, միտքս եկաւ. մտածեցի.* въ э́той кни́гѣ мно́го ума́ *այդ գրքում մեծ իմաստութիւն կայ.* въ умѣ́ ли ты? *խելքդ գլխի՞դ է.* сойти́ съ ума́ *խելագարուել, ցնորուել, խելքը կորցնել.* свести́ съ ума́ *խելքը առնել, յիմարացնել, 'գժուացնել'.* э́то у меня́ изъ ума́ вонъ *այդ բոլորովին մտիցս ընկել էր, մոռացել էի.* у него́ не то на умѣ́ *նա մտքումն ուրիշ բան ունի.* у него́ то́лько му́зыка на умѣ́ *նորա ուշքն ու միտքը երաժշտութեան վերայ է.* у него́ зло на умѣ́ *նա մտքում վատ, չար դիտաւորութիւն ունի.* э́то у меня́ съ ума́ не идётъ *այդ ես չեմ կարողանում մոռանալ կմ չեմ կարողանում մտահան անել, մտիցս գցել.* *онъ себѣ́ на умѣ́ *նա իր բանը լաւ գիտէ, շատ 'յետ եկածնէ'.* взя́ться за умъ *խելքը հաւաքել, ուշքի գալ, զգաստանալ.* ума́ не приложу́, какъ э́то сдѣ́лать, какъ быть *ես գորանից ամենևին ոչինչ չեմ հասկանում.* за́дній у. *յետին միտք.* *волне́ніе умо́въ *մըտքերի յուզում.* у. него́ что на умѣ́, то и на языкѣ́ *նա պարզամիտ մարդ է. ինչ մտածում է, այն էլ պարզապէս յայտնում է.* у. хорошо́, а два лу́чше (*առծ.*) *վատ չէ ուրիշի հետ խորհրդակցելը.* у него́ захо́дитъ, зашёлъ у. за ра́зумъ *նա ցնորուելուն մօտ է։*

Умы‖ва́льникъ *ա. լուացուելու կոնք, լուացարան.* **-ва́льница** *ի. լուացարան.* у. въ ри́зницѣ; **-ва́льный** *ած. լուացուելու.* у. сто́ликъ, у. тазъ *լագան, լուացուելու կոնք.* **-ва́ніе** *չ. լուանալը, լուացում.* **-ва́нье** *չ. գեղաջուր (որով կանայք գեղեցկութեան համար լուացւում են).* **-ва́ть,** -ть *ն. լուանալ.* *я -ва́ю ру́ки; **-ся** *անդր. լուացուել։*

I. **Умы‖ка́ніе** *չ. փախցնելը, -ցնում, առևանգելը, -գում, յափշտակելը, -կում.* **-ка́ть** *ն. փախցնել, առևանգել, յափշտակել, զոռով տանել։*

II. **Умыка́ть** *ն. ռմկ. յոգնեցնել, հալից գցել.* **-ся** *անդր. յոգնել, հալից ընկնել։*

У'мы‖селъ, сла *ա. [չար] դիտաւորութիւն, մտադրութիւն, դաւ.* съ у́—слу *դիտաւորութեամբ.* злой у́. *չար դիտաւորութիւն, չարամտութիւն.* имѣ́ть злой у́.; **-(умы)сли́ть** (-слю -ля́тъ) *տ.* Умышля́ть.

Умы́ть (умо́ю -ютъ; *անց.* умы́лъ -ла, о; *հրմ.* умо́й), **ся** *տ.* Умыва́ть, ся.

Умы‖шле́ніе *չ. չար մտադրութիւն, դիտաւորութիւն, դաւ. հմմ.* У'мыселъ; **-шленно** *մ. դիտմամբ, չար դիտաւորութեամբ.* **-шленность** *ի. նախօրօք մտածուած լինելը, կանխամտածութիւն.* **-шленный** *ած. նախամտածուած, կանխամտածուած, դիտաւորեալ, դիտմամբ, չար դիտաւորութեամբ արած, գործած.* убі́йство не у—ое, по неосторо́жности; **-шля́ть,** -слить *ն. նիւթել, չարիք, վատ բան մտածել, հնարել, մեքենայել, դաւել.* у. на чью-либо жизнь *մտածել մէկին սպանելու, մէկին կենազրկ անելու։*

Умѣ‖ется, умѣ́лось *դէմք. ռմկ. կարելի է, կարելի էր, հնարաւոր է, հն. էր.* какъ умѣ́ется, такъ и дѣ́лаю *ինչպէս կարելի է, ինչպէս կարող եմ, այնպէս էլ անում եմ.* какъ умѣ́лось, такъ и сдѣ́лалъ *ինչպէս կարողացայ, այնպէս էլ արի.* **-ло** *տ.* Иску́сно; **-лый** *տ.* Иску́сный; **-ні(ь)е** *չ. հմտութիւն, կարողանալը, հասկանալը, գիտենալը, գիտութիւն.* у. жить въ свѣ́тѣ.

Умѣ‖ренно *մ. չափաւոր կերպով.* **-ренность** *ի. չափաւորութիւն, բարեխառնութիւն.* **-ренный** *ած. չափաւոր, մեղմ, բարեխառն.* у. жаръ; у—ое жела́ніе; у. кли́матъ; у. человѣ́къ; *у—ая цѣна́; у. по́ясъ *աշխ. բարեխառն գօտի.* **-ря́ть, -ри́ть** (-рю -ря́тъ) *ն. չափաւորել, մեղմացնել.* у. свой гнѣвъ, свой стра́сти; у. жаръ *ջերմութիւնը բարեխառնել.* у. свой жела́нія; у. свой расхо́ды *իր ծախսերը չափաւորել, կրճատել։*

Умѣси́ть(-ѣшу́ -ѣсятъ) *տ.* Умѣ́шивать.

Умѣ‖сти́тельный *ած. արձակ, ընդարձակ, շատատար, մեծատարած, շատ պարունակող, 'տանող'.* **-сти́ть** (-щу́ -стя́тъ), **ся** *տ.* Умѣща́ть, ся; **-стность** *ի. պատշաճութիւն, ճահաւորութիւն, յիրաւացիութիւն.* **-стный** *ած. պատշաճ, յիրաւացի, ճահաւոր։*

Умѣ́ть, сум— *չ. կարողանալ, կարել, գիտենալ, իմանալ, հասկանալ.* у. пѣть, чита́ть, танцова́ть; не сумѣ́ю э́того сдѣ́лать *չեմ կարող այդ անել.* вы не умѣ́ете шути́ть *դուք հանաք անել չգիտէք.* я сдѣ́лалъ, какъ умѣ́лъ; *у. концы́ хорони́ть *հասկանալ բանը կոծկել։*

Умѣ‖шивать, -си́ть *ն. լաւ, լաւ հարկին հունցել (խմորը), տրորել (կաւը)։*

Умѣ‖ща́ть, -сти́ть *ն.* что въ чёмъ

մի բան միւսի մէջ տեղաւորել, զետեղել. **-ся** անդր. տեղաւորուել, զետեղուել։

Умяг‖ча́ть, -чи́ть ն. **1**, փափկացնել, կակղացնել. **2**,* մեղմացնել. у. нра́вы; **-ся** անդր. փափկել, փափկանալ, կակղել, կակղանալ. խղճալ. **-че́ніе** չ. **1**, փափկացնելը, -ցում, կակղացնելը, -ցում. **2**, մեղմացնելը, -ցում. **-чи́ть** (-чу́ -ча́тъ), **ся** տ. Умягча́ть, ся.

Умя́ть (умну́ -ну́тъ) տ. Умина́ть.

Унаво́‖женіе չ. աղբելը, -բում, 'փէյնելը', պարարտացնելը, -ցնում. **-живать**, **-зить** (-жу -зятъ) ն. աղբել, 'փէյնել', պարարտացնել (հողը)։

Унаслѣ‖дованіе չ. ժառանգելը, -գում. **-довать** (-дую -ютъ) ն. ժառանգել. онъ застѣ́нчивъ, онъ -довалъ э́то отъ отца́.

Унди́на ի. (լտ.) դիցբ. ջրահարսն։

Уне‖се́ніе չ. տանելը, քշելը. **-сть** (-су́ -су́тъ; անց. унёсъ -сла́, о́) տ. Уноси́ть.

Универса́‖лъ ա. (լտ.) հրովարտակ, հրամանագիր, ուկազ (փոքր ռուսական հետմաններից.) **-льно** մ. հանրապէս, ընդհանրապէս. **-льность** ի. հանրականութիւն, ընդհանրականութիւն. **-льный** ած. հանուր, ընդհանուր. у—ое сре́дство հանրադեղ (բոլոր ցաւերը, հիւանդութիւնները բժշկող միջոց)։

Университе́‖тскій ած. համալսարանի. **-тъ** ա. (լտ.) համալսարան։

Уни‖жа́ть, -зить ն. **1**, ցածրացնել, ցածացնել. **2**,* ստորացնել. նուաստացնել. Богъ -жа́етъ го́рдыхъ; пья́нство -жа́етъ человѣ́ка հարբեցողութիւնը մարդուս արժանիքը ձգում է. у. чужо́е досто́инство ուրիշի արժանիքը ձգել. **-ся** անդր. ստորանալ, նուաստանալ, խոնարհուել. я не -жу́сь до того́, что́бы опра́вдываться; ему́ бы хотѣ́лось, что́бы всё -жа́лось пе́редъ нимъ; **-же́ніе** չ. **1**, ստորացնելը, -ցնում, նուաստացնելը, -ցնում. **2**, ստորանալը, -րացում, ստորութիւն, ցածութիւն, նուաստանալը, -տացում, վիրաւորանք. переноси́ть огорче́нія, -нія դառնութիւններ, վիրաւորանքներ կրել. **-же́нно** մ. նուաստութեամբ. **-же́нность** ի. նուաստութիւն, ցածութիւն. **-же́нный** ած. նուաստ, խոնարհ, նուաստացած, ստորացած, ցած. **-жу** տ. Уни́зить.

Униза́ть (-жу́ -и́жутъ; -жи́) տ. Уни́зывать.

Уни‖зи́тельно մ. ստորացուցիչ, նուաստացուցիչ կերպով, եղանակով. դէմ. նուաստացուցիչ, անպատուաբեր է. **-зи́тельность** ի. ստորացուցիչ, նուաստացուցիչ, վիրաւորական լինելը. **-зи́тельный** ած. ստորացուցիչ, նուաստացուցիչ, անպատուաբեր, վիրաւորական. **-зить** (-жу -зятъ), **ся** տ. Унижа́ть, ся.

Уни́‖зываніе չ. ընդելուզելը, -զում, յեռուլը, զարդարելը, պաճուճելը. **-зывать**, **-зать** ն. ընդելուզել, յեռուլ, զարդարել, պաճուճել (մարգարիտներով, թանգագին քարերով ելն). *его́ рѣчь -зана антите́зами նորա ճառը խճողուած է հակադրութիւններով։

Уни‖ма́ніе չ. հանգստացնելը, խաղաղացնելը, սաստելը, զսպելը, դադարեցնելը, կտրելը, մեղմացնելը, ամոքելը. **-ма́ть**, уня́ть ն. հանգստացնել, խաղաղացնել, սաստել, զսպել, դադարեցնել, կտրել, մեղմացնել, ամոքել. у. бу́йство կատաղութիւնը զսպել. дѣ́ти шумя́тъ, уйми́те ихъ; уйми́те соба́къ լռեցրէք շներին. я ужъ уйму́ васъ ես ձեր ձայնը, ձեր 'սասը' կը կտրեմ. у. боль ցաւը կտրել, հանգստացնել, ամոքել. у. кровотече́ніе արիւնհոսութիւնը կտրել, դադարեցնել. **-ся** անդր. հանգստանալ, հանդարտուել, թուլանալ, լռել, դադարել, ձայնը, 'սասը' կտրել. уйми́тесь дѣ́ти, по́лно шали́ть; зубна́я боль уняла́сь—կտրեց. кровотече́ніе уняло́сь—կտրեց, դադարեց. когда́ ты уймёшься երբ պիտի դու խելքի գաս։

Унисо́нъ ա. (իտ.) երժ. միաձայնութիւն, միանուագ (միենոյն տոնը կամ եղանակը միաժամանակ շատ ձայներով կամ նուագարաններով երգելը կամ ածելը). въ у. մ. միաձայն։

Унита́‖рій ա. (լտ.) հակաերրորդական, ս. Երրորդութիւնը ժխտող աղանդաւոր. **-ри́змъ** ա. ունիտարիզմ, միապետական ուղղութիւն, ձգտում (հակառակը տ. Федерали́змъ); **-рный** ած. միացական։

Унифо́рма ի. (գերմ.) համազգեստ։

Уничи‖жа́ть, -жи́ть ն. ստորացնել, նուաստացնել, անարգել. **-ся** անդր. ստորանալ, նուաստանալ, խոնարհուել. у. пе́редъ Бо́гомъ Աստծու առաջ խոնարհուել, իր ոչնչութիւնը խոստովանել. **-же́ніе** չ. ստորացնելը, -ցում, նուաստացնելը, -նում. խոնարհութիւն, նուաստութիւն, կորանք. у. па́че го́рдости նուաստութիւնն աւելի գովելի է, քան հպարտութիւնը. **-же́нно** մ. ստորացուցիչ, նուաստացուցիչ կերպով, եղանակով. **-же́нность** ի. տ. Уничиже́ніе; **-жи́тельно**, **-жи́тельность** տ. Уничиже́нно, -нность; **-жи́тельный** ած. ստորացնող, -ցուցիչ, նուաստացնող, -ցուցիչ, անարգական. **-жи́ть** (-жу́ -жа́тъ), **ся** տ. Уничижа́ть, ся.

Уничто‖жа́ть, -(о́)жить ն. ոչնչացնել, կործանել, ջնջել. ва́рвары -о́жили ри́мскую импе́рію; у. могу́щество; у. а́рмію, непрія́теля; у. крысъ—ոչնչացնել, ջնջել. попрёки -жа́ютъ всю цѣ́ну благодѣя́нія; у. ве́ксель, контра́ктъ, завѣ́щаніе—ոչնչացնել, պատռել. у. зако́нъ, обы́чай, до́лжность—ոչնչացնել, վերացնել. у. дурно́й за́пахъ; года́ -о́жили ея́ красоту́; у. пригово́ръ суда́ դատարանի վճիռը ոչնչացնել, փոխել. **-ся** անդր. ոչնչանալ, կործանուել. **-же́ніе** չ. ոչնչացնելը, կործանելը, ջնջելը. **-жи́мость** ի. կործանելիութիւն, ոչնչացնելի, կործանելի լինելը. **-жи́мый** ած. ոչնչացնելի, կործանելի, ջնջելի. **-жи́тельный** ած. ոչնչացնող, կործանող, ջնջող. **-жить** (-жу -жатъ), **ся** տ. Уничтожа́ть, ся.

У‖ніа́тка ի. միացեալ, միաբանեալ կամ պապական ուղղափառուհի. **-ніа́тскій** ած. միաբանական. **-ніа́тъ** ա. միաբարական, միացեալ, միաբանեալ կամ պապական ուղղափառ. **-ніо-ни́стъ** ա. միաբանական. **-нія** ի. (նոր լտ.) **1**, քղքկ. միութիւն, միաբանութիւն (երկու կամ աւել տէրութիւնների, որոնք սակայն իրենց ներքին գործերը վարում են միմեանցից անկախ կերպով). **2**, եկղ. պատմ. միութիւն, միացեալ, միաբանեալ կամ պապական ուղղափառներ (որոնք պապի հեղինակութիւնն ընդունում են)։

Уно‖ра́вливать, **-ровля́ть**, **-рови́ть** (-влю́ -вя́тъ) ն. **1**, համաձայն ցանկու-

թեան անել, հաճոյանալ, դուր գալ, գոհացնել. 2, յարմար, պատեհ ժամանակ, դէպք գտնել. -ся անդր. յարմարուել, յարմարանալ:

Уно||си́ть(-шу́-о́сятъ), унéсть ն. 1, տանել (իւր հետ). возвращáйтесь домóй и -си́те свои́ вéщи назáдъ; егó унеслí покрытаго рáнами; *потóкъ врéмени унóситъ насъ ժամանակի հոսանքը մեզ իւր հետ քշում տանում է. 2, ծածուկ տանել, գողանալ, ‘վեցնել‘, յափշտակել. **-ся** անդր. տարուել, թռչել, գնալ, հեռանալ. **-сный** ած. 1, քաշող, քաշելու. у—ые ремни́ ձիափոկեր, կառափոկեր. у—ая лóшадь առջևից լծած ձի. 2, գողացած, գողունի. у—ыя вéщи; **-съ** ա. 1, իւր հետ տանելը, վերցնելը. побѣ́гъ съ у—омъ казённыхъ вещéй ռզմ. փախուստ զէնքով, զինուորական պիտոյքներով հանդերձ. 2, գողանալը, գողութիւն:

У́нтеръ|| ռմկ., **-офицéръ** ա. (գերմ.) ենթասպայ, փոխսպայ. **-офицéрскій** ած. ենթասպայի, -յական, փոխսպայի, -յական:

У́н||цевой ած. ունկու, ունծայի, մի ունկի, ունծայ ծանրութեամբ. **-ція** է. (լտ.) ունկի, ունծայ (քաշ, կշիռ=$^1/_{12}$ դեղատան ֆունտի):

Уны||вáть, -ть չ. վհատել, լքանել, յուսահատուել. въ счáстіи не возноси́ся, въ несчáстіи не -вáй; не у. въ бѣдѣ́; **-ло** մ. վհատուած, տխրութեամբ, տրտմութեամբ. **-лость** է. վհատութիւն, լքում, տխրութիւն, տրտմութիւն. **-лый** ած. վհատ[ուած], լքած, յուսահատ[ուած], ընկճուած, տխուր, տրտում. похудѣ́вшее, у—ое лицó; у—ое молчáніе; **-ніе** չ. վհատութիւն, լքում, յուսահատութիւն, ընկճուածութիւն, տխրութիւն, տրտմութիւն:

Уны́||ривать, -рну́ть չ. 1, սուզուել, ըն կղմուել[ով խուսափել, ազատուել վտանգից]. 2, отъ чегó մի բանից խուսափել, խոյս տալ, խորշել:

Уны́ть (унóю -ютъ) տ. Унывáть.

Уня́||тіе չ. հանդստացնելը,-ցնում, խաղաղացնելը, -ցնում, դադարեցնելը, կտրելը, մեղմացնելը, -ցնում, ամոքելը, -քում. у. бóли; **-ть** (уйму́ -му́тъ; անց. уня́лъ -лá, ó; հրմ. уйми́), **ся** տ. Унимáть, ся.

Упа||дáніе տ. Упадéніе **-дáть**, упáсть չ. 1, ընկնել, վայր ընկնել, վայր գլորուել. у. нá полъ; онъ поскользну́лся и упáлъ; у. съ лóшади; дéрево упáло; у. на колѣ́ни пéредъ óбразомъ սուրբ պատկերի առաջ ծունկ չոքել. *у. ду́хомъ վհատուել, լքանել. у. въ óбморокъ նուաղել. он упáлъ въ общéственномъ мнѣ́ніи—ընկաւ. довѣ́ріе къ нéму упáло նորա վարկն ընկաւ. 2, իջնել, ցածրանալ, ցածանալ, նուազել. водá въ рѣкѣ́ упáла գետը բարակել է. цѣнá на хлѣбъ упáла հացի գինը ընկել, իջել է. барóметръ упáлъ, ртуть въ баромéтрѣ упáла; 3, պակասել, նուազել, թուլանալ, տըկարանալ. си́лы больнóго упáли; торгóвля упáла առուտուրն ընկել, նուազել է. **-дéніе** չ. ընկնելը, վայր ընկնելը, վայր գլորուելը անկում. **-докъ**, дка ա. անկում. у. креди́та; у. ду́ха վհատութիւն, լքում. притти́ въ у. ընկնել, ամերուել, քայքայուել. торгóвля въ -дкѣ առուտուրն ընկած է. у. силъ ոյժերի թուլութիւն, տկարացում. *счáстье егó клóнится къ -дку; **-ду́** տ. Упáсть; **-дъ** ա. անկում, թուլութիւն, ուժասպառութիւն. ходи́ть, танцовáть до -ду երկար մանգալուց հալից ընկնել. смѣ́яться до -ду ծիծաղից թուլանալ:

Упáивать, упои́ть խմեցնել, հարբեցնել:

Упа||ковáніе չ. դնելը, դարսելը, զետեղելը, ծրարելը (իրերը). **ковáть** (-ку́ю -ютъ) տ. Упакóвывать; **-кóвка** է. **-кóвываніе** չ. դնելը, դարսելը, զետեղելը, ծրարելը. у. въ я́щики արկղներում դարսելը, զետեղելը, արկղելը (ապրանքը). **-кóвщикъ** ա. [իրեր, ապրանք] դարսող, զետեղող, արկղող, ծրարող այր, կին. **-кóвывать**, -ковáть ն. դնել, դարսել, զետեղել, ծրարել, արկղել(իրերը, ապրանքը):

Упáлзывать. տ. Уползáть.

Упáмя||тывать, -товáть(-тую -ютъ) ն. 1, մտքում պահել, չմոռանալ. 2, ռմկ. մոռանալ. մտից գցել:

Упá||ривать, -рить (-рю -рятъ) ն. լաւ, բաւ հարկին խաշել, եփել, փափկացնել (գոլորշով, բղով). 2, քշելով քրտնեցնել. у. лóшадь; **-ся** անդր. քրտնել, քափ քրտինք կտրել:

Упа||сáть, -сти́ (-су́ -су́тъ; անց. -съ -слá, ó; հրմ. -си́) պահել, պահպանել. Бóже упаси́! Աստուած հեռու պահէ, Աստուած մի արասցէ:

Упá||сть (-аду́ -ду́тъ; անց. -лъ -ла, о; հրմ. ди́) տ. Упадáть.

У́пасъ ա. բս. Antiaris toxicaria, ուպասենի:

Упá||живать, -жáть(-шу́-шутъ;-ши) ն. խոր, բաւ հարկին, խնամքով վարել, հերկել, գործել (հողը):

Упе||кáніе չ. լաւ, բաւ հարկին եփելը, թխելը. **-кáть**, -чь ն. 1, լաւ, բաւ հարկին թխել. 2,* когó մէկին հեռացնել, գլխից ‘ռադ անել‘. *у. когó въ солдáты, подъ крáсную шáпку մէկին զօռով, բանի կերպով զինուոր դարձնել, զինուորագրել. егó упекли́ подъ судъ նորան զօռով դատարան քարշեցին:

Упе||лёныванie չ. լաւ, բաւ հարկին խանձարրելը, ‘բալուլելը‘, ‘բարրելը‘. **-лёнывать, -ленáть** ն. լաւ, բաւ հարկին խանձարրել, ‘բալուլել‘, ‘բարրել‘. у. ребёнка.

Уперé||живать, -ди́ть (-жу́ -дя́тъ) տ. Предварять, -ри́ть.

Уперéть (упру́ -ру́тъ; անց. упёръ -рлá, ó; հրմ. упри́), **ся** տ. Упирáть, ся.

Упéчь (-еку́ -чёшь -ку́тъ; անց. -пёкъ -пеклá, ó; ки́) տ. Упекáть.

Упи||вáться, -ться անդր. չափազանց շատ խմել, հարբել. у. крóвью արիւնով կշտանալ, արեան ծարաւը յագեցնել:

Упи́||ливаніе չ. տ. բայը. **-ливать, -ли́ть** (-лю́ -ля́тъ) ն. սղոցել, ‘խէրխել‘, սղոցելով կարճացնել:

Упи||рáніе չ. յենելը, յեցուցանելը, կըռթնեցնելը, ‘դէմ տալը‘. **-рáть**, уперéть ն. 1, յենել, յեցուցանել, կռթնեցնել, ‘դէմ տալ‘. у. бревнó въ стѣ́ну; у. лѣ́стницу ни́жнимъ концóмъ շարժական սանդուխի (‘նարդիվանի‘) ստորին ծայրն ամրացնել. 2, ուղղել, դարձնել. у. глазá въ зéмлю աչքերը գետնին յառել.

3, պնդել. **-ся** ներգ. 1, во что մի բանի յենուել, մի բանի վերայ կռթնել. прáвый флангъ áрміи -рáлся въ лѣсъ; 2,* հակառակուել, ընդդիմանալ. онъ -рáлся сдѣлать это.

Упи‖сáть (-шý -шутъ; -ши́) տ. Упи́сывать; **-систо** մ. սխմուած կերպով. **-си́стый** ած. սխմուած, քնքոյշ (գրի մասին). **-сывáніе** չ. տ. բայը. **-сывáть**, -сáть ն. 1, գրելով տեղաւորել, զետեղել, ամփոփել, այնպէս գրել, արտագրել, որ տեղաւորուի, զետեղուի, ամփոփուի. я. -сáлъ прошéніе на однóй страни́цѣ; у. страни́цу въ страни́цу այնպէս արտագրել, որ երեսն երեսի վերայ գայ կամ զետեղուի. 2, ռմկ. ագահաբար ուտել, կլանել, լափել. въ одинъ мигъ мы -сáли зáднюю часть барáнины; **-ся** ներգ. զետեղուել, տեղաւորուել (գրուելով)։

Упи́‖тываніе չ. ըմելը. у. живóтныхъ; **-тывать, -тáть** ն. ըմել, պարարտացնել։

Упи́ться (упью́сь -ю́тся; անց. -и́лся -лáсь -лóсь; հրմ. упéйся) տ. Упивáться.

Упи́‖хиваніе չ. ներս կոխելը, ներս խըցկելը, զետեղելը. **-хивать, -хáть, -хну́ть** ն. ներս կոխել, ներս խցկել, զետեղել։

Упишу́ տ. Уписáть.

Уплá‖та է. վճարելը, -րում, հատուցանելը, -ցում. въ у—у 'ի հատուցում. присуди́ть къ у—ѣ судéбныхъ издéржекъ; **-чивать, -ти́ть** (-чý -áтятъ) ն. վճարել, հատուցանել, 'տալ'. у. долгъ; я уплати́лъ емý сто рублéй; у. недóданное պակասիկը վճարել. у. по вéкселю մուրհակը թափել. у. заимодáвцу.

Уппе‖тáніе չ. տ. բայը. **-тáть, -сти́, -сть** (-тý -тýтъ; անց. -лёлъ -елá. ó; հրմ. -ти́) ն. 1, ամուր, խիտ կերպով հիւսել. 2,* ռմկ. ագահաբար ուտել, լափել, կլանել. 3, չ. արագ, շուտ հեռանալ, փախչել, կծիկը դնել, 'սրել տալ'. **-ся** ներգ. հեռանալ, մեկնել։

Уплотни́ть տ. Плотни́ть.

Уплы‖ваніе չ. հեռանալը, մեկնիլը. **-вáть, -ть** (-вý -вýтъ; անց. лъ -лá, ó; հրմ. -ви́) չ. 1, հեռանալ, մեկնիլ (ջրով). корáбль уплы́лъ, уплы́лъ изъ ви́ду; 2, անցնել, անց կենալ. уплы́лъ годъ.

Упо‖вáніе չ. յոյս, ակնկալութիւն. возложи́ть своё у. на Бóга, на монáршее милосéрдіе; **-вáтельно** դէմք. յուսալի է, պէտք է յուսալ. **-вáть** (-вáю -ютъ) չ. на когó մէկի վերայ յուսալ, յոյսը դնել, յոյս տածել, մէկին ապաւինել. у. на Бóга.

Уподо‖би́тельно մ. նմանութեամբ, համեմատութեամբ, բաղդատմամբ. **-би́тельный** ած. նման, համեմատական, բաղդատական. **-(ó)бить** (-блю -бятъ), **ся** տ. Уподобля́ть, ся; **-блéніе** չ. նմանեցնելը, -նեցնում. -համեմատելը, -տում. բաղդատելը, -տում, **-бля́ть**, -бить ն. նմանեցնել, համեմատել. բաղդատել. посты́дныя наклóнности -бля́ютъ человѣ́ка скотý—մարդուս նմանեցնում են անասունին. нѣтъ никогó, комý мóжно бы́ло -бы -бить егó ոչոք չկայ, որի հետ կարելի լինէր նորան համեմատել. **-ся** ներգ. նմանուել. смерть -бля́ется сну.

Упо‖éніе չ. յափշտակութիւն, զմայլում, բերկրութիւն, յղփութիւն, վայելք. у. чýвствъ զգայական վայելքներ. минýты слáдкаго -нія զմայլման քաղցր րոպէներ. въ -ніи любви́, слáвы սիրուց, փառքից յղփացած, յափշտակուած. **-ённый** ած. յղփացած, յափշտակուած. у. гóрдостію հպարտութիւնից շշմած. у. слáвою փառքից յղփացած. у. любóвію սիրուց յափշտակուած. у. рáдостію բերկրալից. у. востóргомъ զմայլուած, սքանչացած. **-и́тельный** ած. յափշտակիչ, զմայլիչ, շշմեցնող, -ցուցիչ։

Упо‖коéніе չ. **-кóй** ա. հանգիստ, հանգստութիւն, խաղաղութիւն. моли́ться о упокоéніи կամ за упокóй души́ умéршаго; **-кóивать**, -кóить ն. հանգստացնել, խաղաղացնել, հանգստութիւն տալ կամ բերել. -кóй Гóсподи дýшу егó; **-ся** ներգ. հանգստանալ, հանգարտուել. **-кои́тельный** ած. հանգստացնող, հանդարտեցնող, խաղաղացնող. **-кóить** (-кóю -ятъ), **ся** տ. Упокóивать, ся.

Упол‖зáніе չ. սողալով գնալը, հեռանալը. **-зáть, -зти́** (-зý -зýтъ; անց. -зъ -злá, ó; հրմ. -зи́) չ. սողալով գնալ, հեռանալ։

Уполномó‖ченіе չ. 1, լիազօրութիւն տալը. 2, լիազօրութիւն. передáча -нія; **-ченный**, аго ա. լիազօր. **-чиваніе** տ. Уполномóченіе; **-чивать, -чить** (-чу -чатъ) ն. когó մէկին լիազօրութիւն տալ. у. послáнника при инострáнномъ дворѣ́; **-чіе** չ. լիազօրութիւն։

Упо‖лóвникъ ա. **-лóвничекъ**, чка նւզ. կերակրի աղտափրփուրը, քափը քաշելու շերեփ. **-лъ** ա. աղտափրփուր, քափ (կերակրի)։

Упо‖минáніе չ. յիշելը. **-минáть**, -мянýть ն. о чёмъ մի բանի մասին յիշել (հարեանցի, անցողակի կերպով). объ э́томъ -минáютъ истóрики; онъ ни слóва не -мянýлъ объ э́томъ; **-ся** էր. դէմք. յիշուել. въ э́томъ сочинéніи -минáется объ нёмъ; объ васъ ни слóва не -минáется съ э́томъ письмѣ́; объ э́томъ обстоя́тельствѣ -минáется въ протокóлѣ.

Упóмнить (-ню -нятъ) ն. յիշել, մտաբերել, մտքում պահել, չմոռանալ. э́того не -мню այդ ես չեմ յիշում. всегó не -мнишь չէ կարելի ամէն բան յիշել. не -мню хорошéнько всѣхъ подрóбностей բոլոր մանրամասնութիւններր լաւ չեմ յիշում։

Упомяну́ть (-нý -мя́нутъ; -ни́), **ся** տ. Упоминáть, ся.

Упóр‖ка ն. նեցուկ. արգելիչ. **-но** մ. յամառութեամբ, հաստատակամութեանբ. онъ у. настáиваетъ на своёмъ трéбованіи, у. преслѣ́довать когó; у. храни́ть молчáніе; **-ность** է. յամառութիւն, հաստատակամութիւն. **-ный** ած. յամառ, հաստատ, հաստատակամ. у. предразсýдокъ: у—ая болѣ́знь սաստիկ, յարատեւ հիւանդութիւն. у. трудъ տոկուն աշխատութիւն. **-ство** չ. յամառութիւն, հաստատակամութիւն. **-ствовать** (-вую -ютъ) չ. въ чёмъ մի բանի մէջ յամառիլ, յամառութիւն անել, մի բան յամառութեամբ պնդել, մի բանի հաստատ մնալ. у. въ своёмъ мнѣ́ніи իր կարծիքը յամառութեամբ պաշտպանել. у. въ своёмъ намѣ́реніи յամառութեամբ իր մտադրութեանը հաստատ մնալ. ты -ствуешь въ ги́бельномъ заблуждéніи դու յամառում. ես կորստաբեր

մոլորութեան մէջ. у. противъ очевидности ակնայայտնի ճշմարտութեանն ընդդիմանալ։

Упор‖ха́ть, -хну́ть չ. ճախրելով թըռչել, գնալ, հեռանալ։

Упо́ръ ա. 1, դիմադրութիւն, ընդդիմադրութիւն. вы́стрѣлить въ у. հրացանը դօշին դնելով արձակել. 2, նեցուկ, յենարան։

Упоря́до‖ченіе չ. կարգաւորելը, -րում, կանոնաւորելը, -րում. **-чить** (-чу -чатъ) ն. կարգաւորել, կանոնաւորել, կարգի ու կանոնի բերել։

Употре‖би́тельность ի. գործածականութիւն. **-би́тельный** ած. գործածական, գործածելի. у—ое сло́во, выраже́ніе; **-би́ть** (-блю́ -бя́тъ), **ся** տ. Употребля́ть, ся; **-бле́ніе** չ. գործածելը, գործածութիւն. կիրառութիւն, գործադրելը, -դրութիւն. у. желѣ́за въ постро́йкахъ; сдѣ́лать изъ чего́ хоро́шее, дурно́е у. մի բան լաւ, վատ գործադրել. э́то сло́во въ большо́мъ у—іи այդ խօսքը խիստ գործածական է. э́то сло́во вы́шло изъ у—ія, э́тотъ зако́нъ вы́шелъ изъ т—ія այդ խօսքը, օրէնքը գործածութիւնից ընկել է. изли́шнее, чрезмѣ́рное у. горя́чихъ напи́тковъ; у. су́ммы де́негъ на расхо́ды по назначе́нію; ввести́ въ у. գործածական դարձնել. войти́ въ у. գործածական դառնալ. **-бля́ть**, -би́ть ն. գործածել. գործադրել. у. де́ньги на пусты́я изде́ржки; у. лѣка́рства; у. очки́ ակնոցներ գործ ածել. у. всѣ сре́дства къ достиже́нію цѣ́ли; я -би́лъ два́ го́да на э́то сочине́ніе; у. угро́зы, наси́ліе սպառնալիք, բռնութիւն գործադրել. съ по́льзою у. своё время իւր ժամանակը օգտաւէտ կերպով գործադրել. на что-би́те вы э́ту су́мму; у. что́-либо во зло մի բան ՚ի չարը գործադրել. у. во зло чью дovѣ́ренность, доброту́, чьё снисхожде́ніе; у. друзе́й для успѣ́ха свои́хъ дѣлъ բարեկամներին իւր գործերի յաջողութեանը ծառայեցնել **-ся** կր. գործածուել. գործադրուել. э́то расте́ніе -ля́ется въ медици́нѣ; э́то сло́во -ля́ется въ перено́сномъ смы́слѣ.

Упо́тчивать (-чую -ютъ; -чуй) ն. լաւ, փառաւոր կերպով հիւրասիրել, մեծարել։

Упра́ва ի. 1, դատ, դատաստան, արդարադատութիւն, բաւարարութիւն. проси́ть себѣ́ у—ы դատաստան, իրաւունք, արդարադատութիւն, բաւարարութիւն խնդրել. 2, վարչութիւն. городска́я у.; у. благочи́нія ոստիկանական վարչութիւն. ремéсленная у.

Управи́тель‖ ա. կառավարիչ. у. имѣ́нія; **-ница** ի. կառավարչուհի. **-скій** ած. կառավարչի. **-ство** չ. կառավարչի պաշտօն. **-ша** ի. կառավարչի կին։

Упра́‖вить (-влю -вятъ), **ся** տ. Управля́ть, ся; **-вле́ніе** չ. կառավարչութիւն, վարչութիւն. кавка́зское у. կովկասեան կառավարութիւնը. имѣ́ть гла́вное у. дѣла́ми գործերի գլխաւոր կառավարութիւնն իւր ձեռքում ունենալ. у. рабо́тами գործերի, աշխատանքների վարչութիւն. 2, քերկ. խնդրառութիւն. у. таки́мъ-то падежо́мъ այս ինչ հոլովով խնդրառութիւն. **-вля́ть**, -вить ն. кѣмъ, чѣмъ 1, մէկին, մի բան, մի գործ կառավարել, վարել. у. госуда́рствомъ, наро́домъ պետութիւնը, ժողովուրդը կառավարել. у. до́момъ տունը կառավարել, տան գործերը վարել. она́ -вля́етъ свои́мъ му́жемъ նա իւր մարդու քթից բռնած ման է ածում. у. имѣ́ніемъ կալուածքը կառավարել. у. дѣла́ми գործերը վարել. у. министе́рствомъ մինիստրութեան գործերը վարել. у. фа́брикою, заво́домъ գործարանը, դավօդը կառավարել. у. кораблёмъ նաւը վարել, ղեկավարել. 2, քերկ. խնդիր առնել կամ պահանջել. э́тотъ глаго́лъ -вля́етъ вини́тельнымъ падежо́мъ; у п р а в л я́ ю щ і й, аго ա. կառավարիչ у. министе́рствомъ մինիստրութեան գործերը վարող, կառավարող. у. до́момъ, имѣ́ніемъ, ба́нкомъ տան կալուածքի, բանկի կառավարիչ. **-ся** կր. съ кѣмъ, съ чѣмъ մէկին, մի բանի յաղթել, ՝հախից գալ՝, մի բան գլուխ բերել. у. съ мяте́жниками; ему́ одному́ съ э́тимъ дѣ́ломъ не -виться նա մենակ չպիտի կարողանայ այդ գործը գլուխ բերել։

Упраж‖не́ніе չ. վարժելը, -ժուելը, վարժութիւն, պարապմունք. у. въ гимна́стикѣ; учени́ческія у—ія; **-ня́ть** ն. վարժել, վարժեցնել, մարզել. у. ученико́въ перево́дами; **-ся** կր. վարժուել. у. въ пѣ́ніи, въ танцова́ніи; у. въ му́зыкѣ; у. въ чте́ніи; у. въ нау́кахъ, въ рукодѣ́ліяхъ.

Упразд‖не́ніе չ. 1, պարապ կացուցանելը. 2, վերացնելը, ոչնչացնելը. **-ня́ть, -ни́ть** (-ню́ -ня́тъ) ն. 1, պարապ կացուցանել. 2, վերացնել, ոչնչացնել. у. до́лжность; у. привиле́гіи.

Упра́ши‖ваніе չ. Թախանձելը, -ձանք. աղերսելը, -սանք. **-вать**, упроси́ть ն. 1, Թախանձել, աղերսել, աղաչել, պաղատել, Թախանձելով համոզել. ско́лько ни -вали его́, онъ не согласи́лся; наси́лу упроси́ли его́ сдѣ́лать э́то զօռով նորան համոզեցին եւն։

Упре‖жда́ть, -ди́ть տ. Предупрежда́ть, -преди́ть; **-жде́ніе** ռմկ. տ. Предупрежде́ніе

Упре‖ка́ніе չ. կշտամբելը, -բանք, յանդիմանելը, -նութիւն, անգոսնելը, -նում, ստգտանք. **-ка́тель** ա., **-ка́тельница** ի. կշտամբող, յանդիմանող այր, կին. **-ка́тельный** տ. Упрёчный; **-ка́ть. -кну́ть** ն. կշտամբել, յանդիմանել, ստգտանել, անգոսնել, մեղադրել, պախարակել. у. кого́ въ нерадѣ́ніи (կամ нерадѣ́ніемъ) մէկին անհոգութեան համար կշտամբել, անհոգութեան մէջ մեղադրել. въ э́томъ и́менно его́ ни́какъ нельзя́ -кну́ть; **-(ё)къ** կշտամբում, -բանք, յանդիմանութիւն, ստգտանք. մեղադրութիւն. взаи́мные у—и; **-(ё)чный** ած. կշտամբիչ, կշտամբալից. յանդիմանական։

Упроси́ть (-шу́ -о́сятъ) տ. Упра́шивать.

Упрости́ть (-ощу́ -стя́тъ), **ся** տ. Упро́щивать, ся.

Упро‖че́ніе չ. հաստատելը, -տում, ամրապնդելը, -դում, ապահովելը, -վում. **-чивать, -чить** (-чу -чатъ) ն. հաստատել. ամրապնդել. ապահովել. у. власть. споко́йствіе госуда́рства պետական իշխանութիւնը ամրապնդել, հանգստութիւնը ապահովել. у. сою́зъ; у. имѣ́ніе сы́ну կամ за сы́номъ; у.

свой кредитъ, свою репутацію.

Упро‖щéніе չ. պարզ, հասարակ դարձնելը. **-щивать**, -стúть ն. պարզ, հասարակ դարձնել. **-ся** անդր. պարզ, հասարակ դառնալ:

Упрý ա. Уперéть.

Упрý‖гій ած. առաձգական. սխմական. **-гость** է. առաձգականութիւն. սխմականութիւն. у. вóздуха.

Упры‖гаться անդր. թռչելուց, ցատկելուց, թռչկոտելուց, ցատկոտելուց յոգնիլ. **-гиваніе** չ. տ. բայր. **-гивать, -гнýть** չ. թռչելով, թռչկոտելով, ցատկելով, ցատկոտելով գնալ, հեռանալ, մեկնիլ:

Упры‖скивать, -скать, -снуть ն. 1, լաւ բոլորովին թրջել. թացել (սրսկելով). 2, չ. ռմկ. արագ կերպով փախչել. կծիկը դնել, 'պոկ տալ'. **-ся** անդր. ինքն իրան բոլորովին թրջել, թացել (սրսկելով):

Упрѣ‖вáніе չ. 1, լաւ, բաւ հարկին եփուելը, խաշուելը. 2, լաւ քրտնելը, քափ քրտինք կտրելը. **-вáть**, -ть չ. 1, լաւ, բաւ հարկին եփուել, խաշուել. 2, լաւ քրտնել, քափ քրտինք կտրել. **-лый** բյ. ած. 1, լաւ, բաւ հարկին եփուած. խաշուած. 2, լաւ քրտնած, քափ քրտինք կտրած. **-ть** ա. Упрѣвáть.

Упря́‖жка է. 1, միանգամ լծած ձիաներով անցած տարածութիւնը, ճանապարհը. эту дорóгу я сдѣлалъ въ однý у—у այդ ճանապարհն ես անցայ առանց ձիաները փոխելու, 'մի շնչում'. въ двѣ у—и միանգամ միայն ձիաները փոխելով. 2, ա. У́пряжь; **-жнóй** ած. լծի, լծա—, լծելու. у—áя лóшадь; **-жь** է. լծասարք. надѣвáніе ý—и լծելը:

Упря́‖мецъ, мца ա. յամառ, կամակոր, իր ասածի մարդ, տղայ. **-миться** (-млюсь -мятся) անդր. յամառիլ, կամակորիլ, յամառութիւն, կամակորութիւն անել. **-мица** է. յամառ, կամակոր, իր ասածի եին, աղջիկ. **-мо** մ. յամառութեամբ, կամակորութեամբ. **-мство** չ. յամառութիւն, կամակորութիւն. **-мствовать** (-вую -ютъ) ա. Упря́миться; **-мый** ած. յամառ, կամակոր, իր ասածի. у. харáктеръ; у. ребёнокъ, человѣ́къ, старúкъ; у—ая лóшадь խեռ. հերձոտ, 'պպին կանգնող' ձի. на у—аго дубúна (առծ.) յամառին միայն գաղտնակը խելքի կը բերէ:

Упря́‖тываніе չ. մի տեղ դնելը, պահելը, թագցնելը. **-тывать, -тать** (-чу -чутъ; -чь) ն. մի տեղ դնել, պահել, թագցնել. у. вóра въ тюрьмý գողին բանտ դնել. **-ся** անդր. պահուել, թաքնուել, թագ կենալ:

Упу‖скáніе չ. 1, բաց թողնելը. 2, զլանալը. դանդաղ գտնուելը. **-скáть, -стúть** (-щý -стятъ) ն. 1, բաց թողնել. у. птúчку; у. вóду изъ пруда; у. слýчай; у. изъ виду աչքաթող անել. աչքից գցել. онъ не упýститъ своегó. своúхъ выгодъ նա իր շահը, իր շահերը մոռացող պտուղ չէ. 2, զլանալ, դանդաղ գտնուել. не нáдо у. своúхъ обязанностей.

Упý‖тывать, -тать ն. լաւ, բաւ հարկին փաթաթել, պատատել:

Упущéніе չ. զլանում. զլացում. դանդաղութիւն, անհոգութիւն. у. обязанности պարտքը, պարտականութիւնը զլանալը, պարտազանցութիւն. съ негó взыщутъ за у—ія по слýжбѣ.

Упы́рь, я́ ա. Вампúръ 1 և 3.

Упѣ́‖нивать, -нить (-ню -нятъ) ն. քրտնեցնել, քափ քրտինք կտրեցնել (ձին):

Упью́ ա. Упúть.

Упяте‖ря́ть, -рúть (-рю́ -ря́тъ) ն. հնգապատկել:

Ура́ ձ. հուռա՜, կեցցէ՜:

Урав‖нéніе չ. 1, հաւասարեցնելը, հաւասարելը, -րում, կանոնաւորելը, -րում. у. подáтей հարկերը կանոնաւորելը, միակերպելը. у. крестья́нъ съ другúми сослóвіями въ правáхъ; 2, ալգ. հաւասարութիւն. состáвить, рѣшúть у.; **-ниваніе** չ. 1, հաւասարելը. -րում. 2, հարթելը, -թում, 'դզելը'. **-нивать** ն. I. (уравня́ть) հաւասարել, հաւասարեցնել. смерть урáвниваетъ всѣхъ людéй: сúла -вающая движéніе մեքենգ. շարժումը կանոնաւորող ույժ. II. (уровня́ть) հարթել, 'դզել'. **-ся** անդր. հաւասարուել. **-нúтель** ա. հաւասարիչ. մեքենգ. կանոնաւորիչ. **-нúтельность** է. հաւասարութիւն, կանոնաւորում (հարկերի). **-нúтельный** ած. հաւասարիչ, կանոնաւորիչ, հաւասարակշռող. у. мáятникъ ժող. կանոնաւորիչ ճօճանակ:

Уравновѣ́‖сить (-шу -сятъ) ա. Уравновѣ́шивать; **-шеніе** չ. հաւասարակշռում. **-шенность** է. հաւասարակշռութիւն. **-шивать**, -сить ն. հաւասարակշռել. -сить свой расхóды съ дохóдами իր ծախսերի և հասոյթների մէջ հաւասարակշռութիւն, համապատասխանութիւն հաստատել:

Уравня́ть, ся ա. Урáвнивать, ся.

Урагáнъ ա. (ֆր.) սաստիկ հողմ, փոթորիկ. մրրիկ, թաթառ, պտտուն քամի, 'քաջքարամի':

Уразу‖мѣвáть, -мѣть ն. իմանալ, հասկանալ, հասու լինել. 'գլխի ընկնել'. **-ся** անդր. հասկացուել. **-мѣніе** չ. իմանալը, հասկանալը, -կացողութիւն. **-мѣть, ся** ա. Уразумѣвáть, ся.

Ура‖нúтъ ա. հնք. ուրանիտ. **-новый** ած. ուրանիոնի:

Ураногра‖фúческій ած. երկնագրական. **-фія** է. (յն.) երկնագրութիւն:

Уранолúтъ ա. Аэролúтъ.

Урáнъ ա. (յն.) 1, աստղբ. Ուրանոս (մոլորակ). 2, քիմ. ուրանիոն:

Урáтъ ա (յն.) քիմ. միզաթթուային աղ:

Урвáть (урвý -вýтъ; -рвú), **ся** ա. Урывáть, ся.

Урегулú‖рованіе չ. կանոնաւորելը. -րում, կարգաւորելը, -րում. у. рабóчаго дня; **-ровать** (-рую -ютъ) չ. (գերմ.) կանոնաւորել. կարգաւորել:

Урезó‖ниваніе չ. զգաստացնելը, հասկացնելը, խելամուտ անելը. գլխին խելք դնելը. **-нивать. -нить** (-ню -нятъ) ն. (ֆր.) когó մէկին զգաստացնել. մէկին բան հասկացնել. մէկին խելամուտ անել. մէկի գլխին խելք դնել, մէկին համոզել. егó не -нишь նա բան հասկացող պտուղ չէ:

Уремá է. անտառ կամ թփուտ գետի ափին կամ ճահճուտում:

Уремія է. (յն.) բժ. ուրէմիա, միզախտութիւն:

Уре‖тра է. (յտ.) բժ. միզանցք. **-тритъ** ա. (յն.) բժ. միզանցքի բորբոքում:

Урúль‖никъ ա. **-ничекъ**, чка նւզ. միզաման, կարուբայ:

Ури́на ի. (լտ.) մէզ, գող, 'չեռ', 'ցէթ',։

У'рна ի. (լտ.) սափոր. неплохранительная у́. աճիւնապահ կմ աճիւնակալ սափոր։

У'ровень, вня ա. 1, մակերևոյթ. у́. воды́, мо́ря; въ у́. съ пове́рхностью воды́ ջրի մակերևոյթին հաւասար, 'բարէբար'. *итти́ въ у́. съ вѣ́комъ իր դարու գաղափարներով յառաջադիմել. 2, հարթաչափ. հմմ. Ватерпа́съ.

Уро́|дина հ-ր. ա. Уро́дъ; I. **-дить** (-жу -дятъ) ա. Уро́довать; II. **-ди́ть** (-жу́ -дя́тъ) ա. Урожа́ть; **-ди́ться** ան-ր. 1, (հացի, բանջարեղէնի մասին) առատութեամբ բուսնել, 'գալ'. хлѣ́ба -ди́лось мно́го հացը լաւ եկաւ, առատ հունձ տուեց. 2, въ кого́ մէկի նման ծնուել, մէկի 'կուռը գցել'. онъ уроди́лся въ отца́; **-дище** ա. յեղ. ահագին, զզուելի հրէշ, այլանդակ էակ. **-дливо** մ. հրէշօրէն, հրէշաւոր, այլանդակ կերպով, եղանակով. **-дливость** ի. հրէշաւորութիւն, այլանդակութիւն, հրէշային, այլանդակ կազմութիւն. **-дливый** ած. հրէշային, այլանդակ, զզուելի, գարշելի. **-довать** (-дую -ютъ), изур—ն. այլանդակել. о́спа ча́сто -дуетъ лицо́; **-ся** ան-ր. ինքն իրան այլանդակել. **-дство** չ. ա. Уро́дливость; **-дъ** ա. 1, հրէշ, այլանդակ, հրէշաւոր անձ, էակ. 2,* խենթ, 'խեւ', այլանդակ մարդ, մարդու. въ семьѣ́ не безъ уро́да (առծ.)

Урожа́й‖ ա. 1, հունձ, բերք. сре́дній у. միջակ հունձ, բերք. 2, առատ հունձ, բերք. въ э́томъ году́ бу́детъ у. хлѣ́ба; въ про́шломъ году́ былъ плохо́й у ржи անցեալ տարի հաճարի հունձը կմ բերքը վատ էր, հաճարը չ'եկաւ. во вре́мя -жа́я յու. բերքի տարին. **-ный** ած. հնձի, բերքի. [հնձով, բերքով] առատ. у. годъ.

Уро|ждённый ած. ծնուած, ծնեալ, ծննդով, ծագումով. графи́ня М., урождённая княжна́ N. կոմսուհի Մ., ծնուած կմ ծննդով իշխանուհի Ն. жена́ его́ бра́та у—ая ру́сская; **-жёнецъ**, нца ա. բնիկ [երկրացի]. онъ здѣ́шній у. նա այստեղի բնակիչ. այստեղ ծնուած է. тифли́сскій у. բուն Թիֆլիսեցի. **-жёнка** ի. բնիկ [երկրացի] կին, աղջիկ. она́ здѣ́шняя у. նա այստեղի բնակիչ, այստեղ է ծնուած։

Уро́къ ա. 1, դաս. учи́ть у.; дава́ть, брать у—и му́зыки; бѣ́гать отъ кла́ссныхъ у—овъ; 2, որոշ ժամանակամիջոց, որոշ ժամանակով տուած, յանձնած գործ, աշխատանք. отда́ть рабо́ту на у. որոշ ժամանակով գործ յանձնել (օր. արհեստաւորին)։

Уро|ни́ть (-ню́ -нятъ) ն. 1, վայր ձգել, վայր գցել, վայր նետել. у. кни́гу на́ полъ; 2,* ձգել, գցել, ստորացնել. э́то мо́жетъ у. васъ въ обще́ственномъ мнѣ́ніи այդ կարող է հասարակութեան աչքում ձեր վարկը ձգել. *онъ не уро́нитъ себя́, не уро́нитъ своего́ досто́инства նա իր վարկը չի ձգի, իր արժանապատուութիւնը չի մոռանայ. **-нъ** ա. կորուստ, վնաս, դեան. *непрія́тель понёсъ большо́й у., былъ отражёнъ съ большимъ у—омъ.

Уро́|чище չ. բնական սահման, սահմանանիշ (գետ. լեառ, անտառ ելն), սահմանագլուխ, սահմանաորոշ տեղ, վայր. **-чный** ած. 1, որոշուած, նշանակուած, սահմանուած. у—ое вре́мя; 2, որոշ ժամանակով տուած, յանձնած. у—ая рабо́та.

Уру́съ ա. (աղճատուած ձև է) ռուս։

Ур|ча́ніе չ. կարկաչելը, գռգռալը, ղռռալը, կռկռալը. **-ча́ть** (-чу́ -ча́тъ; -чи́) չ. կարկաչել, գռգռալ, ղռռալ, կռկռալ (փորի մասին)։

Ургы|ва́ть, урва́ть ն. քաղել, պլոկել, 'պոկել', խլել, (ժամանակի մասին) տնտեսել. урви́ мину́ту отъ твои́хъ заня́тій, и побыва́й у меня́ մի րոպէ տնտեսիր քո պարապմունքներից և ինձ հանդիպիր. у. вре́мя отъ прогу́лки, о́тдыха и сна; **-ся** ան-ր. ազատ րոպէ, ժամ, ժամանակ գտնել. **-вка** ի. 1, կարճ ժամանակով պարապմունքներից անջատում, ազատ րոպէ, ժամանակ. у—ами ազատ րոպէներին, ժամերին. 2, ընդհատում, ընդմիջում. телегра́фъ рабо́таетъ у—ами; **-вокъ**, вка ա. պլոկած, կտրած, 'պոկած' կտոր, հատուած. **-вочный** ած. ազատ րոպէներին, ժամերին արած, կատարած։

Уры́льникъ ա. Ури́льникъ.

Урыхля́ть ա. Разрыхля́ть.

Урѣ́|зать (-жу -жутъ; -жь) ա. Урѣ́зывать; **-зываніе** չ. կտրելը, կտրելով կարճելը, կարճացնելը. **-зывать**, -зать ն. 1, կտրել, կտրելով կարճել, կրճատել. *у. кому́ его́ дохо́ды մէկի հասոյթները կրճատել, պակասեցնել. *вы его́ хорошо́ -зали դուք նորան լաւ լռեցրիք, լաւ ըմբերանեցիք. 2,* ռմկ. խմել, հարբել։

Урю́къ, а́ ա. չորացրած ծիրան։

Уря|ди́ть (-жу́ -дятъ), **ся** ա. Уряжа́ть, ся; **-дникъ** ա. 1, ենթասպայ (կազակների). 2, ուրեադնիկ, վերակացու. полице́йскій у.; **-дъ** ա. կարգ, կարգաւորութիւն. за у. ժամանակաւորապէս. **-жа́ть**, -ди́ть ն. կարգաւորել, կարգադրել, տնօրինել. **-ся** ան-ր. պատրաստուել։

Уса́деб|ка նւզ. ա. Уса́дьба; **-ный** ած. հողի, կալուածի, ագարակի. գիւղական տան, տնտեսութեան։

Уса́дка ի. 1, տնկելը, տնկում. 2, ցածրանալը, նստելը (ածովի հող մասին). պակասելը, փոքրանալը (չորանալուց)։

Уса́дь|ба ի. 1, հող, կալուածք, ագարակ. 2, կալուածատիրական տուն, տնտեսութիւն գիւղում. 3, գիւղական, դեղջկական տուն, 'մահալ', տնտեսութիւն. **-бенный** ա. Уса́дебный; **-бище** չ. ա. Уса́дьба.

Уса́|живаніе չ. 1, նստեցնելը, բազմեցնելը, տեղաւորելը. 2, տնկելը, տնկոտելը. **-живать**, -ди́ть ն. 1, նստեցնել, բազմեցնել, տեղաւորել. у. госте́й за столъ; у. пассажи́ровъ въ дилижа́нсъ; у. кого́ въ тюрьму́; 2, տնկել, տնկոտել, տնկերով, ծառերով զարդարել. у. садъ ли́пами; **-живаться**, усѣ́сться ան-ր. նստել, բազմել, տեղաւորուել. у. за столъ; мы усѣ́лись; здѣ́сь мы всѣ́ не уся́лемся այստեղ մենք բոլորս չէ՛նք տեղաւորուիլ. сады́ -живаются (կր!) дере́вьями պարտէզներում ծառեր են տնկուում։

Уса́|ливать, **-лить** (-лю лятъ) ն. իւղել, ճարպել, իւղով ճարպով տորոել, մերսել։

Уса́|тый ած. ընչացքաւոր, բեխաւոր. **-чка** ա. У'мбрія; **-чъ** ա. 1, մեծ, երկար

ընչացքներով, բեխերով մարդ. **2,** կնդ. Cyprinus barbatus, կարմրաձուկ կմ գետի արքայաձուկ, ‘ճանար‘. **3,** կնդ. Cerambix, կաղնէքաղ (միջատ մի)։

Ус||ва́иваніе, -ва́ивать տ. Усвоиваніе, -вать; **-воéніе** չ. իւրացնելը, -ցնում. սեփականացնելը, -ցնում. **-во́ивать, -во́ить** (-ою -ятъ) ն. իւրացնել, սեփականացնել. у. привычку; ясно изложено можетъ быть лишь то, что вполнѣ усвоено; **-воéмый** -ձ. իւրացնելի. **-во́ять** տ. Усвоивать.

Усеме||ря́ть, -ри́ть (-рю -рятъ) ն. եօթնապատկել։

Усёнокъ, нка -. գեհ, սուր եզր (օրթառակուսի տաշած գերանի, կոփած քարի)։

Усе́рд||іе չ. եռանդ, ջերմեռանդութիւն, ջանք, փոյթ. у. по службѣ եռանդ, ջանք պաշտօնի, ծառայութեան մէջ. выказывать у. въ чёмъ-либо; молиться съ у—іемъ ջերմեռանդութեամբ աղօթել. оказывать у. ближнему դէպի մերձաւորը սրտայաւ գտնուել. **-но** մ. եռանդով, ջերմեռանդութեամբ, ջանքով. փութով. у. молиться; у. служить, работать; **-ность** է. տ. Усердіе; **-ный** -ձ. եռանդոտ, ջերմեռանդ, ջերմ, նախանձախնդիր, եռանդագին. у. слуга ջերմեռանդ, պարտաճանաչ ծառայ. у. къ должности ջերմեռանդ պաշտօնի մէջ, նախանձախնդիր պաշտօնին. у—ая молитва ջերմ, ջերմեռանդ աղօթք. **-ствова́ть** (-вую -ютъ) չ. եռանդ, ջանք ցոյց տալ, եռանդով, ջերմեռանդութեամբ ծառայել, գործել։

Уси́дчи||вость է. տոկունութիւն. **-вый** -ձ. **1,** տոկուն. у. человѣкъ; **2,** ծանր, հողեմաշ, մեծ համբերութիւն պահանջող։

Уси́||живать, -дѣть (-жу -дятъ) չ. նստած մնալ, իր տեղում մնալ, յարատեւել. лошадь подъ нимъ споткнулась, но онъ усидѣлъ նորա ձին սայթաքեց, բայց նա նստած մնաց, վայր չընկաւ. онъ не -дѣлъ на лошади նա ձիուց վայր ընկաւ. ему не -дѣть на этомъ мѣстѣ նա չպիտի կարողանայ այդ տեղում, այդ պաշտօնի մէջ մնալ, յարատեւել։

У́сикъ -. **1,** պստիկ ընչացք, բեխ, բեխիկ, բեխուկ. **2,** ընչացք, բեխ (կատուի. շան եւն). **3,** բողկուկ, շօշափելիք (միջատների). **4,** մազմզուկ, թել (բոյսերի)։

Уси||ле́ніе, -лива́ніе չ. **1,** սաստկացնելը, -ցնում, զօրեղացնելը, զօրացնելը. **2,** սաստկանալը, զօրանալը. у. болѣзни; **-лива́ть, -ли́ть** (-лю -лятъ) ն. սաստկացնել, զօրեղացնել. у. армію զօրքը շատացնել, զօրեղացնել. у. пріёмъ лѣкарства դեղի ընդունելութիւնը սաստկացնել, ընդունելութեան քանակը մեծացնել. у. болѣзнь; *у. подозрѣнія; **-ся** -ներ. **1,** զօրեղանալ, զօրանալ, մեծանալ, սաստկանալ. армія усилилась; непріятель -ливается; буря -ливается; болѣзнь -лилась; зло -ливается; холодъ -ливается; **2,** ոյժերը լարել, ջանք, ճիգ թափել. у. приподнять ношу; онъ -ливался доказать это: усиленная охрана սաստկացրած պահպանութիւն. **-ліе** չ. ջանք, ճիգ, ոյժերի լարում *сдѣлать чрезвычайное у. արտակարգ ճիգ թափել. **-льно** մ. ոյժերը լարելով, ճիգ թափելով, թախանձագին. **-льный** -ձ. սաստիկ, թախանձագին, ստիպողական, հարկադրիչ։

Уска́||киваніе չ. հեռանալը, մեկնելը (ձիով եւ կամ թռչկոտելով, ոստոստալով, ցատկոտելով). **-кивать** չ. **1,** (**-ка́ть**) հեռանալ, մեկնել (ձիով, ‘չափ գնելով‘). **2,** (**-кну́ть**) հեռանալ, մեկնել (թռչելով, թռչկոտելով, ցատկելով, ցատկոտելով, ոստոստալով)։

Усколь||за́ніе չ. խուսափելը, -փում, խոյս տալը, ծածուկ հեռանալը, թաքնուելը. **-за́ть, -зну́ть** չ. խուսափել, խոյս տալ, ծածուկ հեռանալ, թաքնուել. причина этого явленія -заетъ отъ всѣхъ изысканій այդ երեւոյթի պատճառը խոյս է տալիս ամեն տեսակ խոյզերից. *слово, выраженіе -заетъ отъ меня խօսքը, դարձուածքը միտս չէ գալիս։

Уско||ре́ніе չ. արագացնելը, արագացում, շտապեցնելը. у. пульса բժ. երակի զարկի արագացումը. **-ри́тельный** -ձ. արագացնող, -ցուցիչ. у—ая сила; **-ря́ть, -ри́ть** (-рю -ятъ) ն. արագացնել, շտապեցնել. у. ѣзду, движеніе; у. шагъ; у. отъѣздъ; у. чью-либо кончину; у. окончаніе работы; **-ся** -ներ. արագանալ։

Усла́да է. քաղցրութիւն, վայելք, սփոփանք, բերկրութիւն, բերկրանք, ուրախութիւն, խնդութիւն. музыка мнѣ у.; этотъ ребёнокъ у. моей старости.

Услади́тель||но մ. քաղցրութիւն, վայելք, սփոփանք, բերկրութիւն պատճառելով. **-ность** է. քաղցրութիւն, հաճոյականութիւն. **-ный** -ձ. քաղցրութիւն, վայելք պատճառող, սփոփիչ, բերկրալից, հաճոյական, զմայլիչ։

Усла||жда́ть, -ди́ть (-жду -дятъ) ն. քաղցրացնել, քաղցրութիւն, հաճոյք, վայելք պատճառել, հրճուեցնել, խնդացնել, սփոփել, մխիթարել, բերկրեցնել, զմայլեցնել, սքանչացնել. у. скуку чтеніемъ ձանձրութիւնը ընթերցանութեամբ փարատել. у. слухъ музыкою լսելիքն երաժշտութեամբ հրճուեցնել. это -ждаетъ сердце այդ մարդու սիրտ է բերկրեցնում. она -ждаетъ его жизнь նա նորա կեանքը քաղցրացնում է, նորա սփոփանքն է. *у. льстивыми словами что-либо непріятное—ամոքել, մեղմացնել. **-ся** -ներ. чѣмъ մի բանով ուրախանալ. հրճուել, խնդալ, զմայլուել, բերկրել, մխիթարուել, սփոփուել, մի բանի մէջ վայելք, հաճոյք, սփոփանք գտնել. онъ -ждается музыкой նա հրճուում է երաժշտութեամբ, երաժշտութիւնը նորա սփոփանքն է. **-жде́ніе** չ. **1,** տ. Услада; **2,** քաղցրացնելը, քաղցրութիւն, վայելք պատճառելը, հրճուեցնելը, սփոփելը, բերկրեցնելը. **-жду́** տ. Усладить. [вать.

Усласти́ть (-щу -стятъ) տ. услащи-

Усла́ть (ушлю -ютъ) տ. Усылать.

Усла́||щивать, -стить տ. Подслащивать, -стить.

Усло́||виться (-влюсь -вятся) տ. Условливаться; **-віе** չ. պայման, պայմանադրութիւն. письменное, словесное у.; я нанялъ домъ на слѣдующихъ -віяхъ— հետեւեալ պայմաններով. на выгодныхъ -віяхъ ձեռնտու, շահաւէտ պայմաններով. съ -віемъ, чтобы... այն պայմանով, որ... сдѣлать, заключить у.; по -вію ըստ պայմանի. соблюдать -вія договора; **-вленный** -ձ. պայմանաւորուած, պայմանով որոշուած. պայմա-

նական. у—ая сумма; у. знакъ; **-вливаться,** -виться ներգ. պայմանաւորուել, պայման կապել, պայմանով որոշել. у. въ цѣнѣ գինը որոշել. у. о времени и о мѣстѣ; я -вился съ нимъ ѣхать въ театръ; **-вно** մ. պայմանական եղանակով, պայմանով. **-вность** է. պայմանականութիւն. **-вный** ած. պայմանի, -նային, պայմանական. у—ія статьи въ договорѣ; у—ая цѣнность; у—ое наклоненіе քեր. պայմանական եղանակ։

Услож‖неніе չ. բարդում, -դելը, բարդութիւն, խճճում. **-нять, -нить** (-ню -нятъ) ն. բարդել, խճճել. **-ся** ներգ. բարդուել, խճճուել։

